ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու

2(2) 2018

Երևան
2019

Հրատարակության է երաշխավորել Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ս. Ղազինյան

Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Հ. Գաբուզյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Գ. Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Մ. Հայկյանց
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Վ. Ստեփանյան
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Կ. Ա. Գևորգյան
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Ս. Գ. Մեղրյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
Երևանի պետական
համալսարան

Խմբագրության հասցեն՝ ՀՀ,
0025, Երևան, Ալեք
Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության
ֆակուլտետ
Հեռ.՝ 060-71-02-43

Էլ. կայք՝ publications.ysu.am
publishing.ysu.am

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝
համամիտ չլինելով
հեղինակների
տեսակետներին:

e-mail: law@ysu.am
Տպագրական 26,25 մամուլ:

Տպաքանակը՝ 100
Հանձնված է շարվածքի՝
15.01.2019
Հանձնված է տպագրության՝
02.05.2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գևորգ Վիրաբյան

ՊՐԵԶՈՒՄՊՑԻԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 7

Ռոզա Աբաջյան

«ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՍԵՐՆԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1918-1926 ԹԹ.).....42

Տաթևիկ Նահապետյան

ԴԻՄՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՀԻՄՔ 52

Սոսե Բարսեղյան

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ՝ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՔԱՅԻՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ.....63

Արմինե Դանիելյան

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 77

Սոսի Ալեքսանյան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ.....88

Քրիստինե Գաբուզյան

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ.....101

Արթուր Վարդանյան

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՏԵՍԱԿ.....122

Եվա Սաղոյան

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ 137

Ռուբինա Պետրոսյան

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆՏԱՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ (ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) 153

Սամինե Պետրոսյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ 178

Աշխեն Սողոմոնյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ 192

Էդգար Կարապետյան

ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ԲՌՆԻ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՎԻՃԱԿԸ ԵՎ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ՀՀ-ՈՒՄ 210

Նունե Հայրապետյան

ՄԵԴԻԱՑԻԱՅԻ (ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ) ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊՐՈԲԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՑԹ.....222

Լիանա Եդիգարյան

ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼԻՍ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ.....233

Ռոզա Աբրահամյան

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՋԱՏԱԶՐԿՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.....247

Սրբուհի Գալյան

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....259

Տիգրան Ղազարյան

ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....269

Անի Դանիելյան

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....293

Առնոլդ Վարդանյան

ԲԺՇԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ.....310

Անի Չիլինգարյան

ՊԱՐՏԱՎՈՐԵՑՄԱՆ ԵՎ ՈՉ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՎԻՃԱՐԿՄԱՆ ՀԱՅՑԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.....327

Լիլիթ Պետրոսյան

«EX OFFICIO» ՄԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ.....340

Անի Միքայելյան

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ.....354

Տիգրան Դադունց

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 370

Տաթևիկ Սարուխանյան

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 386

Գրիգոր Չոբանյան

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԼՈԲԱԼԻԶԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ 405

ՊՐԵԶՈՒՄՊՑԻԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գևորգ Վիրաբյան[1]

Անժխտելի է այն իրողությունը, որ վերջին տասնամյակներում իրավագետների շրջանում հետզհետե ավելանում են այն հետազոտողների անունները, ովքեր յուրովի իրենց ջանքերն են գործադրում հարյուրամյակների պատմություն ունեցող պրեզումպցիաների դերն ու նշանակությունն իրավունքում վեր հանելու և այն զարգացվածության նոր մակարդակի հասցնելու ուղղությամբ: Ավելին, առանձին գիտական հոդվածների շրջանակներում իրականացված հետազոտություններից զատ, այդ ուղղությամբ պատրաստվել են նաև մենագրություններ[2], այդ թվում իրավունքի տարբեր ճյուղերի շրջանակներում թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների մակարդակով կատարվել են հետազոտություններ[3]: Այլ կերպ ասած՝ պրեզումպցիաների նկատմամբ առանձնահատուկ հետաքրքրությունը ներկայումս գնալով միայն ու միայն մեծանում է, որն ինքնաբերաբար իրավագետներից պահանջում է գիտական բացատրություն:

---

[1] ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ իր գ. դ., պրոֆեսոր Արթուր Վաղարշյան:

[2] Տե՛ս, օրինակ, **Кузнецова О.А.,** Презумпции в гражданском праве, СПБ, 2004, **Сериков Ю.А.,** Презумпции в гражданском судопроизводстве / науч. ред. Ярков В.В., М., 2006, **Мосин С.А.,** Презумпции и принципы в конституционном праве Российской Федерации, М., 2009, **Булаевский Б.А.,** Вопросы общей теории правовых презумпций, М., 2012:

[3] Տե՛ս, օրինակ, **Зуев Ю.Г.,** Презумпции в уголовном праве: дисс. канд. юрид. наук, Ярославль, 2000, **Цуканов М.Н.,** Правовые презумпции в административной деятельности милиции: дисс. канд. юрид. наук, Омск, 2001, **Шекин Д.М.,** Юридические презумпции в налоговом праве: дисс. канд. юрид. наук, М., 2001, **Сухинина И.В.,** Презумпции в конституционном праве Российской Федерации: дисс. канд. юрид. наук, М., 2003, **Бронникова М.Н.,** Гражданско-правовая презумпция по российскому законодательству: содержание, правовые формы и применение: канд. дисс. юрид. наук, Казань, 2006, **Пронина М.П.,** Презумпции в современном российском праве: дисс. канд. юрид. наук, Н. Новгород, 2010:

Մի քանի տասնամյակների կտրվածքով իրականացված գիտական աշխատանքների բարեխիղճ դիտարկումը թույլ է տալիս բարձրաձայնել, որ ձեռնարկված ջանքերը դեռևս չեն ապահովում պրեզումպցիաների վերաբերյալ ներդաշնակ իրավական ուսմունքի, համալիր և գործուն տեսության ձևավորման արդյունավետ ու արագ առաջընթացը: Ավելին՝ իրավունքի տարբեր ճյուղերի ներկայացուցիչների կողմից իրականացված գիտահետազոտական միջոցառումները փաստում են այն մասին, որ իրավաբանական պրեզումպցիաների վերաբերյալ առկա խնդիրները ոչ թե ստացել են իրենց հանգուցալուծումը, այլ ընդհակառակը՝ վերջիններիս ավելացել են նորերը:

Եվ ահա, հաշվի առնելով այս և մի շարք այլ հանգամանքներ, հեղինակը սույն հոդվածը նվիրել է պրեզումպցիաների համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտության իմաստավորմանը, վերջիններիս վերաբերյալ առկա հակասությունների վերհանմանը և միասնական տեսություն ստեղծելու գաղափարի հիմնավորմանը:

Գիտական մեթոդաբանության մեջ ընդունված է, որ գոյություն ունեցող խնդիրների վերհանումը գիտահետազոտական գործունեության իրականացման լավագույն սկիզբն է[1]: Իրավաբանական դոկտրինայում պրեզումպցիաների շուրջ առկա խնդիրների լուծմանն ուղղված մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն միմյանցից էականորեն տարբերվող երկու մեթոդաբանական մոտեցումներ, ինչն իրավագիտության մեջ փաստ է: Ն. Ն. Յուկանովը, ընդհանրացնելով իր կողմից կատարված ուսումնասիրությունները, գրում է. «Պրեզումպցիայի ոչ բավարար գիտական մշակվածության հիմնական պատճառը վերջինիս ուսումնասիրության երկու ինքնուրույն, այն է՝ փիլիսոփայական և իրավաբանական մոտեցումների չհիմնավորված միախառնումն է»[2]: Ավելին՝ խնդիրը մեկ աստիճանով ևս բարդանում է, երբ բարձրաձայնում ենք, որ այս ամենն ուղեկցվում է միասնական եզրու-

[1] Տե՛ս **Микешина Л.А.,** Философия науки: Современная эпистемология. Научное знание в динамике культуры. Методология научного исследования: Учебное пособие, М., 2005, 261 էջ:

[2] Տե՛ս **Цуканов Н.Н.,** Правовые презумпции в административной деятельности милиции, Красноярск, 2003, 143 էջ:

թաբանության բացակայությամբ[1]: Հետևաբար այս պարագայում մեզ ոչինչ չի մնում անելու, քան անդրադառնալու փիլիսոփայական և իրավաբանական մոտեցումներից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

Իրավաբանական պրեզումպցիաների վերաբերյալ փիլիսոփայական մոտեցումը մշակվել է իրավունքի ռուսական դպրոցի ներկայացուցիչ Վ. Կ. Բաբաևի կողմից և թղթին հանձնվել «Պրեզումպցիաները խորհրդային իրավունքում» աշխատությունում: Արդարությունից ելնելով՝ պետք է արձանագրել, որ հեղինակի փիլիսոփայական տեսլականը տասնյակ իրավագետների համար հիմք է ծառայել այդ ուղղությամբ ուսումնասիրություններ կատարելիս: Տ. Վ. Կաշանինան, ըստ արժանվույն գնահատելով պրեզումպցիաների տեսական ուսումնասիրության ուղղությամբ Վ. Կ. Բաբաևի կատարած ներդրումը, գրում է. «Վերջինիս կողմից առաջ քաշված գաղափարները վերջապես ընկալված են գիտության կողմից: Մենք այդ գաղափարները նույնպես ընդունում ենք որպես ելակետային դրույթներ»[2]: Մ. Վ. Կարասևան, ցիտելով Վ. Կ. Բաբաևի կողմից տրված՝ պրեզումպցիայի տեսական սահմանումը, նկատում է, որ այն ներկայումս օգտագործվում է ոչ միայն նեղ գիտական, այլ նաև ուսումնական գրականության մեջ[3]: Պրեզումպցիայի տվյալ բնորոշման մեջ, ըստ Ե. Յու. Վեդենևայի, արտացոլված են այդ ինստիտուտի (պրեզումպցիայի) վերաբերյալ ժամանակակից պատկերացումները[4]:

---

[1] Խոսքը վերաբերում է նրան, որ իրավունքում պրեզումպցիաների նշանակությունը բացատրելու համար օգտագործվում են զանազան եզրույթներ: Օրինակ՝ Յու. Սերկիկովը վեր է հանել համանման եզրույթների՝ թվով 13 դրսևորումներ: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Сериков Ю.А.,** Презумпции в гражданском судопроизводстве / науч. ред. Ярков В.В., М., 2006, էջ 6-8:

[2] Տե՛ս **Кашанина Т.В.,** Юридическая техника: Учебник, М., 2007, էջ 184:

[3] Տե՛ս **Карасева М.В.,** Презумпции и фикции в части первой Налогового кодекса РФ // Журнал российского права, 2002, էջ 9:

[4] Տե՛ս **Веденеева Е.Ю.,** Роль презумпции в гражданском праве, арбитражном и гражданском судопроизводстве // Государство и право, 1998, № 2, էջ 43:

Այսքանից հետո, անշուշտ, ընթերցողի մոտ պետք է հարց ծագի՝ որն է փիլիսոփայական տեսլականի, որի հետևում կանգնած է Վ. Կ. Բաբաևը, ողջ էությունը:

Փիլիսոփայական մոտեցման էությունը, որը շարադրված է պրեզումպցիաներին նվիրված աշխատություններում, հետևյալն է: Մասնավորապես Վ. Կ. Բաբաևի կողմնակիցներն ընդունում են ընդհանուր պրեզումպցիաների գոյությունը, որոնք կազմում են «պրեզումպցիա» կոչվող փիլիսոփայական-տրամաբանական հասկացության հիմքը: Այդպիսի պրեզումպցիան բնորոշվում է որպես փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ ենթադրություն, որը հիմնված է վերջիններիս և գոյություն ունեցող փաստերի միջև առկա կապի վրա[1]: Իսկ եթե ավելի պարզ, ապա փիլիսոփայական մոտեցման շրջանակներում կարևորվում է այն հանգամանքը, որ պրեզումպցիաներն արտացոլում են նյութական աշխարհի առարկաների ու երևույթների առօրեական կարգը և ներկայացնում են հավանականության բարձր աստիճանի համընդհանրացում: Վ. Ա. Օյգենզիխտը նույնպես ուշադրությունը սևեռում է այն փաստի վրա, ըստ որի՝ պրեզումպցիան բոլոր դեպքերում հետևություն է, որը պայմանավորված է կենսափորձի, առօրյա պրակտիկայի թելադրանքով և բխում է հավանականության բարձր աստիճանից[2]:

Եթե ընդհանրացնելու լինենք վերոգրյալը, ապա կարող ենք արձանագրել, որ փիլիսոփայական մոտեցման շրջանակներում պրեզումպցիաները ոչ այլ ինչ են, քան պրեզումպցիաների առանձին տարատեսակներ, որոնք ձեռք են բերում պրեզումպցիայի՝ որպես ընդհանուր հասկացության տեսակային հատկանիշներ և լրացվում այն հատկանիշներով, որոնք բնորոշ են այս կամ այն իրավաբանական պրեզումպցիային՝ ըստ իրավունքի համապատասխան ճյուղի պատկանելության: Այսպիսի դատողությունը լիովին համապատասխանում է տրամաբանությանն այն առումով, որ տեսակային հասկացությունն իր բովանդակության մեջ ներառում է այդ հասկացությանը ստորադասվող սեռային հասկացության հատկանիշներ: Հետևաբար Վ. Կ. Բաբաևը, այդպիսի տրամա-

---

[1] Տե՛ս **Бабаев В.К.,** Презумпции в советском праве - Горький, 1974, էջ 12:

[2] Տե՛ս **Ойгензихт В.А.,** Понятие гражданско-правовой презумпции // Советское государство и право, 1975, № 10, էջ 26:

բանական նախադրյալը հիմք ընդունելով, առաջարկել է իրավական պրեզումպցիաների հետևյալ բնորոշումը. «Իրավաբանական պրեզումպցիան,- գրում է հեղինակը,- կարելի է բնորոշել որպես իրավաբանական փաստի առկայության կամ բացակայության վերաբերյալ իրավանորմում ամրագրված ենթադրություն, որը հիմնված է ենթադրվող ու առկա փաստերի վրա և հաստատված է նախորդող փորձով»[1]:

Հեղինակի հիշյալ բնորոշումն ընթերցելուց հետո կարծում ենք, որ շատերը կարող են համակարծիք լինել մեր այն տեսակետին, որ այն կարելի է քննարկման առարկա դարձնել տարբեր հարթություններում: Սակայն այս պահին առաջարկում ենք ուշադրությունը սևեռել այն փաստի վրա, որ փիլիսոփայական մոտեցման կողմնակիցները գտնում են, որ բոլոր այն դեպքերում, երբ ենթադրվող փաստը կրում է ոչ թե մշտական, այլ բացառիկ բնույթ, հետևաբար ձեռք չի բերում հավանականության բարձր աստիճան, չի կարող դիտվել որպես պրեզումպցիա[2]: Եթե դա այդպես է, ապա նշանակում է, որ քննարկվող մոտեցումը հակասության մեջ է մտնում էմպիրիկ գիտելիքների հետ:

Սկզբնական շրջանում Վ. Կ. Բաբանն այդ հակասությունը բացատրում էր այն հանգամանքով, որ որոշ պրեզումպցիաների քաղաքական կողմնորոշումներն այնքան ակնհայտ են, որ երբեմն բացառվում է նաև վերջիններիս տրամաբանական բնույթը[3]: Հեղինակը որպես օրինակ մատնանշում է վնաս պատճառողի մեղքի պրեզումպցիան, պետական սոցիալիստական սեփականության իրավունքի պրեզումպցիան, անմեղության պրեզումպցիան:

Ավելի ուշ Վ. Կ. Բաբանը, ամենայն հավանականությամբ հաշվի առնելով քննարկվող հարցի գիտագործնական նշանակությունը, վերջինիս կրկին անդրադարձել է մեկ այլ աշխատանքի շրջանակներում և արտահայտել «Պրեզումպցիաները խորհրդային իրավունքում» աշխատությունում տեղ գտած մոտեցմանն ուղղակիորեն հակասող կարծիք: Այսպես՝ հեղինակը գրել է. «Կցանկանայի հատուկ ուշադրություն դարձնել պրեզումպցիայի տրամաբանական բնույթին և այդ տեսանկյունից քննարկել իրավադրույթ-

[1] **Бабаев В.К.,** Презумпции в советском праве - Горький, с. 12.

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 16:

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 15:

ներ, որոնք իրավագիտության մեջ անվանվում են պրեզումպցիաներ, և որոնք, սակայն, բոլոր դեպքերում այդպիսին չեն»[1]: Իսկ եթե ավելի պարզ, ապա այդ հոդվածում հեղինակը խոսել է անմեղության պրեզումպցիայի մասին և կատարել միանշանակ հետևություն, այն է՝ տրամաբանական բնույթի տեսանկյունից այդ ինստիտուտը պրեզումպցիա չէ[2]:

Փիլիսոփայական մոտեցման հիմնադրի այդպիսի տեսլականը ոչ այլ ինչ է, քան քննարկվող հայեցակարգի ներքին հակասությունն արտացոլող վառ ապացույց: Իսկ այդ հակասությունը միայն տվյալ մոտեցման այսպես կոչված «ներքին գործը» չէ: Վերջինս կամա թե ակամա իր հետքն է թողնելու, ընդ որում՝ բացասական առումով, իրավաբանական դոկտրինայում և իրավակիրառ պրակտիկայում: Այդ դեպքում ի՞նչ անել:

Մեր կարծիքով՝ պետք է միանշանակ ընդունել, որ օբյեկտիվ իրականության մեջ, այո՛, առկա են պրեզումպցիաներ, որոնց գոյությունը պայմանավորված է քաղաքական, տնտեսական խնդիրներով և նպատակներով: Չնայած այն բանին, որ այդպիսի պրեզումպցիաները չեն արտացոլում առարկաների և երևույթների առօրեական կարգը, այնուամենայնիվ դասվում են իրավաբանական պրեզումպցիաների շարքին հետևյալ պարզ պատճառաբանությամբ. վերջիններս ևս ենթադրություններ են և կատարում են այն նույն դերը, ինչ մյուս իրավաբանական պրեզումպցիաները:

Փիլիսոփայական մոտեցման կողմնակիցներն իրենց տրամադրության տակ ունեն նշված հակասությունը հաղթահարելու երկու ճանապարհ: Այսպես, եթե վերջիններս հավատում են այն մտքին, որ պրեզումպցիաների շուրջ առկա խնդիրները հնարավոր է լուծել միայն փիլիսոփայական մոտեցման շրջանակներում, ապա այդ հայեցակարգի կողմնակիցները կա՛մ պետք է հրաժարվեն պրեզումպցիայի՝ «հավանականության բարձր աստիճանի ենթադրություն» հատկանիշից, կա՛մ պետք է բացառեն այն պրեզումպցիաների գոյությունը, որոնք օժտված չեն այդ հատկանիշով, և վերջիններիս համար հիմնավորեն նոր «եզրույթի» ներդրման անհրաժեշտությունը: Այլ կերպ պարզապես հնարավոր չէ: Առիթը բաց

[1] **Бабаев В.К.,** Презумпции в российском праве и юридической практике // Проблемы юридической техники, Н. Новгород, 2000, с. 323:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 327:

չթողնելով՝ ցանկանում ենք հավելել, որ փիլիսոփայական մոտեցման կողմնակիցները մինչ օրս լուրջ քայլեր չեն ձեռնարկում այդ խնդիրները հարթելու ուղղությամբ: Այլ խոսքով ասած՝ իրերի այդպիսի դասավորվածության պայմաններում պրեզումպցիաների ուսումնասիրության համար մեկ միասնական տեսություն ստեղծելու գաղափարը ոչ թե դառնում է արդիական, այլ պարզապես վերածվում է իրավագիտությանն ուղղված մարտահրավերի:

Ի լրումն վերոգրյալի՝ առաջարկում ենք բարձրաձայնել մեկ այլ մեթոդաբանական խնդիր: Այսպես՝ փիլիսոփայական մոտեցումը չի տալիս այն հարցի պատասխանը, թե արդյոք կարո՞ղ ենք միանշանակ պնդել, որ, օրինակ, քաղաքացիական իրավունքում բարեխղճության պրեզումպցիան կարող է մեկնաբանվել և՛ որպես սկզբունք, և՛ որպես պրեզումպցիա: Ավելին՝ խնդիրը թևակոխում է նոր փուլ, երբ այդ ամենին զուգահեռ պահանջում ենք նաև բարեխճության՝ որպես գնահատողական հասկացություն լինելու փաստի բացատրությունը: Ի՞նչ անել…Կարծում ենք՝ դժվար չէ կռահել, որ սրանք այն հարցադրումներն են, որոնք մանրամասն քննարկման առարկա են դառնալու մեր մեկ այլ հետազոտության շրջանակներում, որը նախատեսվում է թղթին հանձնել մոտ ապագայում:

Այժմ, եթե փորձենք լակոնիկ լինել, ապա կարող ենք ընդամենը ասել, որ սկզբունքը և պրեզումպցիան օբյեկտիվ երևույթների ընդհանրացման տարբեր ձևեր են, և որ իրավական կարգավորման մեխանիզմում իրավական սկզբունքի դերակատարությունը, ի համեմատություն իրավական պրեզումպցիայի դերակտարության, մեծ է, ինչը երբևէ կասկած չի կարող հարուցել: Հետևաբար որոշ պրեզումպցիաների՝ որպես իրավական սկզբունքի դիտարկումը կա՛մ վերջիններիս իրավական բնույթը ոչ ճիշտ պատկերացնելու, կա՛մ նրանց դերը գերագնահատելու, կա՛մ իրավական կարգավորման փուլերի գործառույթները շփոթելու արդյունք է: Այլ է հարցը, որ իրավական սկզբունքը՝ որպես ելակետային դրույթ, կարող է և հաճախ ընկած է մեկ կամ նույնիսկ մի քանի իրավական պրեզումպցիաների հիմքում, որը միանգամայն օրինաչափ է: Սակայն դա չի նշանակում, որ իրավական սկզբունքն իրավական կարգավորման մեխանիզմի մի փուլում կարող է հանդես գալ որ-

պես սկզբունք, իսկ մյուս փուլում՝ վերածվել պրեզումպցիայի: Համենայն դեպս, մեր սկզբնական պատկերացումներն են այդպիսին:

Ավելին, եթե ՀՀ-ում որոշ քաղաքացիագետներ կարծում են, որ մոտ ապագայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (այսուհետ՝ նաև «ՀՀ ՔՕ») բարեխղճության պրեզումպցիայի մեխանիկական ձևափոխությունը տալու է բոլոր հարցերի պատասխանը, և դրանով վերանալու է վերջինիս շուրջ լուրջ գիտական հետազոտություններ կատարելու անհրաժեշտությունը, որը, ցավոք սրտի, ներկայումս ևս բացակայում է, ապա այդ դեպքում մեզ ոչինչ չի մնում անելու, քան ընդամենը բարձրաձայնելու օբյեկտիվ իրականության մասին. հայրենական քաղաքացիական իրավունքի տրամաբանական-գնոսեոլոգիական կարգավիճակն ապագայում մեթոդաբանական լուրջ հարված ստանալու վտանգի տակ է: Ընդ որում՝ այդ վտանգին ի վիճակի չեն հակազդելու նաև փիլիսոփայական մոտեցման կողմնակիցները, որոնք, սակայն, շարունակում են «հետևողական կերպով» լռել այդ մասին:

Այսպես՝ խնդիրը, ըստ որոշ տեսաբանների, այն է, որ բարեխղճության պրեզումպցիան մաքուր տեսքով «պրեզումպցիա» դիտարկելը բավական վիճելի է, քանի որ այն կարող է ձեռք բերել իրավական աքսիոմայի հատկանիշ, և հնարավոր է, որ ժամանակի ընթացքում բարեխղճության պրեզումպցիայի կիրարկումը հանգեցնի նրան, որ այդ իրավական ինստիտուտը աղերսվի իրավական աքսիոմա ինստիտուտի հետ՝ իր հետևից թողնելով միայն իրավական պրեզումպցիայի ձևական հատկանիշներ:

Հետևաբար հարց է առաջանում. «պրեզումպցիա» կոչված երևույթն արդյո՞ք այնքան ճկուն է, որ հեշտությամբ, իհարկե ըստ անհրաժեշտության, մի դեպքում կարող է հանդես գալ որպես «իրավական պրեզումպցիա», իսկ մյուս դեպքում՝ որպես «իրավական աքսիոմա»: Այս հարցադրումն անպատասխան թողնելը պարզապես անհնարին է: Հակառակ դեպքում մեթոդաբանական որոգայթից հնարավոր չէ խուսափել: Ընդ որում՝ իրավակիրառը նույնպես կհայտնվի անելանելի իրավիճակում, իսկ հարցադրումը վերջինիս համար կլինի հետևյալը. բոլոր դեպքերում ո՞րի իրավաիրացումն ապահովել՝ սկզբունքի՞, պրեզումպցիայի՞, թե՞ աքսիոմայի: Հիշյալ հարցադրմանը պատասխանենք «պրեզումպցիա» և «աքսիոմա» երևույթների հարաբերակցության տեսանկյունից:

Այսպես՝ բարեխղճության պրեզումպցիան բոլոր դեպքերում չպետք է շփոթել իրավաբանական աքսիոմայի հետ հետևյալ պարզ պատճառաբանությամբ: Ցանկացած իրավաբանական աքսիոմա, ի տարբերություն իրավաբանական պրեզումպցիայի, ոչ թե իրավական ենթադրություն է, այլ երկարատև և արժանահավատ սոցիալական պրակտիկայի արդյունքների վրա հիմնված, բազում անգամներ փորձություններ անցած կանոն, որը տվյալ ժամանակահատվածում հիմնավորում է իրավունքում բարեխղճության պրեզումպցիայի գոյության անվիճելի ճշմարտությունը: Իսկ եթե ավելի պարզ, ապա իրավաբանական աքսիոմատիկ դրույթները սերտ կապի մեջ են պրակտիկայի հետ այն առումով, որ չեն հակասում վերջինիս, և ոչ ոք չի կարող այն հերքել՝ հիմնվելով իր սեփական փորձի վրա[1]: Քանի որ իրավաբանական պրեզումպցիան ենթադրություն է, ուստի իրավունքում վերջինիս առկայության հիմնավորվածությունը ըստ անհրաժեշտության կարող է պարզվել ճշմարիտ հիմքի, այն է՝ իրավաբանական աքսիոմայի միջոցով: Ենթադրությունը բնորոշվում է որպես երևույթի, նրա հատկանիշների, այլ երևույթների հետ վերջիններիս հարաբերակցության և օրինաչափ կապի հնարավոր գոյության կամ բացակայության մասին հանելուկ[2]: Իսկ ահա այն փաստը, որ իրավունքը լի է հանելուկներով, ոչ այլ ինչ է, քան աքսիոմա:

Եթե ընդհանրացնելու լինենք վերոգրյալը, ապա կարող ենք եզրահանգել, որ եթե որևէ իրավահարաբերության շրջանակներում բարեխղճության պրեզումպցիան կարող է որոշ փաստերի առկայության դեպքում հաստատվել կամ հերքվել, ապա առհասարակ իրավունքում բարեխղճության պրեզումպցիայի անհրաժեշտության վերաբերյալ գոյություն ունեցող իրավաբանական աքսիոման ոչ մի պարագայում չի կարող այդ կերպ հերքվել: Եթե դա տեղի ունենա, ապա կնշանակի, որ իրականում հերքվել է այլ երևույթ, բայց ոչ իրավաբանական աքսիոման[3]: Թերևս սա է լինելու այն մոտեցումը, որը հետագայում մեզ հնարավորություն է ըն-

---

[1] Տե՛ս **Лукич Р.,** Методология права, М., 1981, էջ 77:

[2] Տե՛ս **Мандрыка В.А.,** Гносеологическая природа предположения и его роль в научном поиске: Автореф. дисс. канд. филос. наук, М., 1981, էջ 14:

[3] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Афанасьев В.Г.,** Общество: системность, познание, управление, М., 1981, էջ 82-83:

ձեռելու ճիշտ հետևություններ կատարելու պրեզումպցիաների ուսումնասիրության համար միասնական տեսություն ստեղծելու հիմնադրույթների ձևակերպման ժամանակ:

Ի մի բերելով վերոշարադրյալում տեղ գտած մտքերը, որոնք վերաբերում էին պրեզումպցիաների ուսումնասիրության փիլիսոփայական հայեցակարգին, կցանկանայինք ամփոփ կերպով արտահայտվել այսպես:

Գիտական մեթոդաբանության մեջ ընդունված է, որ այս կամ այն մոտեցման արդյունավետ գործառնության անհրաժեշտ պայման կարող է համարվել վերջինիս դրույթների համապատասխանությունն էմպիրիկ հիմքին կամ, որ նույնն է, էմպիրիկ մեկնաբանությանը[1]: Հետևաբար, եթե խնդիրը դիտարկում ենք այդ հարթությունից, ապա փիլիսոփայական մոտեցման տեսական դրույթների հակասությունն առանձին էմպիրիկ փաստերին դեռևս չի նշանակում, որ դա բավարար պայման է այդ հայեցակարգից հրաժարվելու համար: Իսկ ինչու՞:

Իրականում այդպիսի հակասությունները և հակադրությունները փիլիսոփայական հայեցակարգի կատարելագործման անհրաժեշտ պայմաններ են, որոնք կարող են հանգեցնել ընդհուպ մինչև սկզբունքային և արմատական փոփոխությունների տվյալ մոտեցման շրջանակներում: Այլ է հարցը, որ այն իրավագետները, ովքեր հիմնվում են փիլիսոփայական մոտեցման վրա, կարծես թե հաշտվում են իրավաբանական դոկտրինայում պրեզումպցիայի վերաբերյալ գոյություն ունեցող տրամաբանական ու իրավական հակասությունների և հակադրությունների հետ: Եթե դա այդպես է, ապա նշանակում է, որ փիլիսոփայական մոտեցումը հասել է իր զարգացման գագաթնակետին և այլս չի կարող իրավագիտությանը տալ ավելին, քան մենք ենք պահանջում: Հետևաբար ստացվում է, որ պետք է ընդամենը ըստ արժանվույն գնահատել փիլիսոփայական մոտեցման նվաճումները, կարողանալ այն ճիշտ կիրառել և փորձել վերջինիս հիման վրա ստեղծել նորը: Պարզապես հարիր չէ խոսել ուսումնասիրության օբյեկտի զանազան կողմերը, տարրերը արտացոլող փիլիսոփայական մոտեցման ամբողջական

[1] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Сырых В.М.,** История и методология юридической науки: Учебник, М., 2012, էջ 50-64:

լինելու պահանջի՝ որպես բացարձակ ավարտուն գիտելիքների առակայության մասին: Հակառակ դեպքում ստիպված պետք է լինենք կասկածի տակ դնել իմացության անվերջանալիության սկզբունքը: Իսկ եթե պնդեինք, որ, առանց բացարձակ և ամբողջական գիտելիքի առկայության, անհնար է խոսել փիլիսոփայական մոտեցման շրջանակներում պրեզումպցիաների հնարավոր դրսևորման մասին, ապա պետք է հանգեինք այն հետևությանը, որ ոչ մի տեսություն կամ մոտեցում ժամանակակից գիտության մեջ ոչ միայն գոյություն չունի, այլ նաև չի կարող ձևավորվել ապագայում: Այդպիսի մոտեցումը, սակայն, դժվար թե տեսաբանների կողմից դիտվեր հիմնավոր, քանի որ խնդրի նման դիտարկումը, շփոթությունից բացի, ոչինչ չէր կարող տալ գիտությանը:

Այլ խոսքով ասած՝ մեր դիրքորոշումը հետևյալն է: Հենվելով փիլիսոփայական մոտեցման գիտական նվաճումների վրա՝ լուծել իրավագիտության առջև ծառացած նոր խնդիրը, այն է՝ ստեղծել պրեզումպցիաների ուսումնասիրության մասնավոր տեսություն, որը կունենա սեփական իր կառուցվածքը, մեթոդաբանությունը, գործառույթները՝ պահպանելով այն կանոնը, համաձայն որի՝ իրավունքը չպետք է հակասության մեջ մտնի տրամաբանական օրենքների հետ:

Այսքանը փիլիսոփայական մոտեցման մասին: Այժմ խոսենք իրավաբանական մոտեցման մասին, որից հետո կանդրադառնանք այն հիմքերին, որոնք մեզ հնարավորություն կտան ձևակերպելու մասնավոր տեսություն ստեղծելու հիմնադրույթները:

Իրավաբանական մոտեցման կողմնակիցները, ուսումնասիրության օբյեկտը հնարավորինս նեղացնելով[1], փորձում են հաղթահարել այն բոլոր հակասությունները, որոնք, ըստ վերջիններիս, առկա են փիլիսոփայական մոտեցման շրջանակներում: Մասնավորապես այդ հակասությունները հաղթահարելու ելքը նրանք համարում են փաստացի պրեզումպցիաների ուսումնասիրության հարցը բացառելը[2]: Օրինակ՝ Ն. Ն. Յուկանովը, ով հարում է իրավաբանական -

[1] Տե՛ս, օրինակ, **Каранина Н.С.,** Правовые презумпции в теории права и российском законодательстве: Автореф. дисс. канд. юрид. наук, М., 2006, էջ 10:
[2] Տե՛ս, օրինակ, **Смирнов А.В.,** Презумпции в уголовном процессе / А.В. Смирнов, К.Б. Калиновский // Российское правосудие, 2008, № 4 (24), էջ 68:

մոտեցմանը[1], խոսելով պրեզումպցիաների տեսության հեռանկարների մասին, գրում է. «Պրեզումպցիան իրավական կատեգորիա է: Ըստ կարգավորման եղանակի՝ յուրաքանչյուր պրեզումպցիա իրավունքի սուբյեկտի՝ ելակետային փաստի հաստատման դեպքում ենթադրվող փաստի՝ որպես իր գործունեության իրավական պայմաններից մեկի ճանաչման իրավաբանական պարտականություն է, քանի դեռ այլ բան ապացուցված չէ»[2]: Ընդ որում՝ հարկ ենք համարում նշել, որ Ն. Ն. Յուկանովի այս տեսակետը ելակետային է իրավաբանական մոտեցման կողմնակիցների համար:

Եթե մի պահ կանգ առնենք և հետադարձ հայացք գցենք, ապա կտեսնենք, որ իրավաբանական մոտեցման կողմնակիցները, ըստ էության, եթե նույնիսկ չեն բարձրաձայնում, այնուամենայնիվ, «հոգու խորքում» համամիտ են պրեզումպցիաների ուսումնասիրության համար միասնական տեսություն ստեղծելու գաղափարին[3]: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ, այդքանով հանդերձ, իրավաբանական մոտեցման կողմնակիցների այդ գաղափարը խարսխվում է օնտոլոգիական առումով ոչ ճիշտ հենքի վրա: Փորձենք հիմնավորել վերջիններիս հասցեագրված կշտամբանքը:

Այսպես, եթե պրեզումպցիան դիտարկում ենք որպես բացառապես իրավական հասկացություն, ապա պետք է ընդունենք, որ այդ մոտեցումը կարող է բովանդակային առումով տարատեսակ մեկնաբանությունների տեղիք տալ: Համոզվելու համար բավարար է ընդամենը բարեխիղճ կերպով ուսումնասիրել Վ. Ա. Օյգենզիխտի՝ պրեզումպցիաներին նվիրված աշխատանքները, որոնք հեղինակը սկսել է շարադրել գրեթե հետևյալ տողերով. «Պրեզումպցիա ասելով՝ հասկանում ենք առարկաների առօրեական ընթացքից բխող ենթադրություն, փիլիսոփայական-տրամաբանական հաս-

[1] Տե՛ս **Цуканов Н.Н.,** Правовые презумпции в административной деятельности милиции, 2003, էջ 15:

[2] **Цуканов Н.Н.,** Правовые презумпции в административной деятельности милиции: дисс. канд. юрид. наук, 2001, с. 7-8.

[3] Տե՛ս այդ մասին, օրինակ, **Давыдова М.Л.,** Юридическая техника: проблемы теории и методологии: монография, Волгоград, 2009, էջ 236-239:

կացություն…»[1]: Ի հավելումն այս մտքին՝ կարող ենք որպես օրինակ վկայակոչել Քվեբեկի քաղաքացիական օրենսգրքի 2846-րդ հոդվածը, որում ասված է. «Պրեզումպցիաներն օրենքի կամ դատարանի կողմից հայտնի փաստից անհայտի վերաբերյալ կատարվող հետևություններ են»[2]:

Ամբողջ ցավն այն է, որ իրավաբանական մոտեցման ներկայացուցիչները, խոսելով միասնական տեսություն ստեղծելու հեռանկարների մասին, ելնում են բացառապես այն գաղափարախոսությունից, որ պրեզումպցիան ի սկզբանե իրավական կատեգորիա է[3]՝ անտեսելով այն իրողությունը, որի հետ բոլորս պետք է ստիպված հաշվի նստենք, որ պրեզումպցիան, բացի իրավականից, ունի նախևառաջ սոցիալական և տրամաբանական ասպեկտներ[4]:

Այլ խոսքով ասած՝ իրավաբանական մոտեցման կողմնակիցները համառորեն անտեսում են այն փաստը, որ իրավական պրեզումպցիան, միևնույն է, ամենից առաջ տրամաբանական միջոց է[5], ճանաչողության միջոց[6], և որի արդյունավետության չափանիշն իրականությունը (շրջապատող աշխարհը) արտացոլելու ունակությունն է: Ավելին՝ վերջիններս նույնիսկ իրենք իրենց հետ են մտնում լուրջ հակասությունների մեջ: Օրինակ՝ Ն. Ն. Յուկանովը գրում է, որ պրեզումպցիայի էական հատկանիշ պետք է համարել հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ժամանակ վերջինիս կիրառման ունակությունը: Կլինենք հակիրճ:

---

[1] Տե՛ս **Ойгензихт В.А.,** Понятие гражданско-правовой презумпции // Советское государство и право, էջ 25, Презумпции в советском гражданском праве, Душамбе, 1976, էջ 6:

[2] Տե՛ս Гражданский кодекс Квебека, М., 1999, էջ 416:

[3] Տե՛ս **Цуканов Н.Н.,** Правовые презумпции в административной деятельности милиции, էջ 20:

[4] Տե՛ս այդ մասին, օրինակ, **Давыдова М.Л.,** Теоретические и методологические проблемы понятия и состава юридической техники: Автореф. дисс. докт. юрид. наук, Волгоград, 2010, http://www.dissercat.com/content:

[5] Տե՛ս այդ մասին, օրինակ, **Булаевский Б.А.,** Презумпции как средства правовой охраны интересов участников гражданских правоотношений: монография, էջ 26-30:

[6] Տե՛ս, օրինակ, **Штутин Я.Л.,** Предмет доказывания в советском гражданском процессе, М., 1963, էջ 84:

Նախ՝ չենք կարծում, որ հեղինակի կողմից նշվածը հատկանիշ է, և երկրորդ՝ հասկանալու համար, թե արդյոք իրավական միջոցն ունա՞կ է իր ուրույն տեղը զբաղեցնելու իրավական կարգավորման մեխանիզմում, թե՞ ոչ, պետք է ամենից առաջ բացահայտել վերջինիս էությունը: Բացի այդ՝ մեզ մոտ տպավորություն է, որ հեղինակը թեև խոսում է տեսություն ստեղծելու գաղափարի մասին, սակայն կարծես հակված է պրեզումպցիայի դրսևորումը տեսնելու իրավական կարգավորման միայն մեկ փուլում՝ անտեսելով մյուս փուլերի համար վերջինիս դերն ու նշանակությունը[1]:

Այնուհետև հեղինակը, շարունակելով նախորդ միտքը, գրում է, որ իրավունքից դուրս պրեզումպցիան դադարում է պրեզումպցիա լինելուց. «պրեզումպցիա» եզրույթը խոսում է իրավունքի մասնակցության, իսկ «իրավական» եզրույթը՝ պրեզումպցիայի տեսակային պատկանելիության մասին[2]: Այլ խոսքով ասած՝ հեղինակն այս կերպ արտահայտում է իրավունքից դուրս պրեզումպցիայի գոյության անհնարինության վերաբերյալ իր հայեցակարգային մոտեցումը: Եթե դա այդպես է, ապա խնդիրն ավելի բարդ է, քան կարող ենք պատկերացնել: Այսպես՝ այդպիսի մոտեցումը պարզապես բացառում է փաստացի պրեզումպցիաների առկայությունը իրավունքում[3], որոնք, անկախ այս կամ այն իրավանորմում ամրագրված լինելու փաստից, գոյություն ունեն օրենսդրի և իրավակիրառի գիտակցության մեջ, գիտական աղբյուրներում: Բացի այդ՝ իրավաբանական մոտեցման կողմնակիցներն անուշադրության են մատնում այն փաստը, որ իրավաբանական պրեզումպցիայի արդյունավետության չափանիշը կարելի է ճիշտ արժևորել միայն փաստացի պրեզումպցիաների չափանիշների ներքո, այն չափանիշների, որոնք թույլ են տալիս այդ նույն փաստացի

---

[1] Իրավական կարգավորման մեխանիզմների մասին տե՛ս, օրինակ, **Сырых В.М.,** Социология права. Учебник, 4-е изд., доп. и перераб, М., 2012, էջ 83-89:

[2] Տե՛ս **Цуканов Н.Н.,** Правовые презумпции в административной деятельности милиции, էջ 20:

[3] Տե՛ս, օրինակ, **Кузнецова О.А.,** Презумпции в российском гражданском праве: дисс. канд. юрид. наук, Екатеринбург, 2001, էջ 69-71:

պրեզումպցիաների հաշվին իրավական ակտերը հարստացնել նոր պրեզումպցիաներով[1], բնականաբար ըստ անհրաժեշտության:

Ավելին՝ իրավունքից դուրս պրեզումպցիաների գոյությունը մերժելու իրավաբանական մոտեցման գաղափարը առհասարակ չի համապատասխանում գիտության տարբեր բնագավառներում կիրառվող «պրեզումպցիա» եզրույթի ավանդույթին: Ընդ որում՝ իրավագետները չեն կարող հաշվի չնստել այդ փաստի հետ: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ Վ. Կ. Բաբաևը, այս և մի շարք այլ հանգամանքներ հաշվի առնելով, միանգամայն արդարացի կերպով բոլորի ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա (խոսքը «պրեզումպցիա» եզրույթի ստուգաբանության մասին է), որ պրեզումպցիան կատեգորիա է, որի ծագումը, թեև կարելի է ասել, որ ամենևին էլ կապված չէ իրավունքի հետ, բայց արի՛ ու տե՛ս, որ այն առավել լայնորեն կիրառվում է իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության մեջ[2]: Համոզվելու համար, որ պրեզումպցիան ի սկզբանե գոյություն ունի հենց իրավունքից դուրս, պետք է ընդամենը հիշեցնել, որ «պրեզումպցիա» եզրույթը կիրառում է ֆիզիկոս Վ. Հեյզենբերգը[3], սոցիալ-փիլիսոփայական և պատմական համատեքստում պրեզումպցիաների վերլուծությանն է նվիրված Յու. Ա. Չիստյակովայի ատենախոսությունը[4] և այդպես շարունակ:

Ուստի այսքանից հետո մեզ համար տարօրինակ է թվում, որ իրավաբանական մոտեցման հետևորդները շարունակում են խոսել այն մասին, որ իրավունքից դուրս օնտոլոգիական առումով պրեզումպցիաներ գոյություն ունենալ չեն կարող: Ինչ արած, երևի թե այդ ամենին պետք է դրական աչքերով նայել. եթե չլիներ այդպիսի տեսլականը, այսօր չէինք ունենա այն գաղափարները, որոնք ուղղված են պրեզումպցիաների ուսումնասիրության հա-

---

[1] Տե՛ս, օրինակ, **Булаевский Б.А.,** Презумпции как средства правовой охраны интересов участников гражданских правоотношений: монография, М., 2014, էջ 56-65:

[2] Տե՛ս **Бабаев В.К.,** Презумпции в российском праве и юридической практике // Проблемы юридической техники, էջ 323:

[3] Տե՛ս **Гейзенберг В.,** Шаги за горизонт, 1987, էջ 252:

[4] Տե՛ս **Чистякова Ю.А.,** Социальные презумпции как регулятор общественных отношений: Автореф. дисс. канд. филос. наук, 2008, էջ 23:

մար միասնական տեսություն ստեղծելու հիմնադրույթների ճիշտ արժևորմանը:

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք մեր դատողությունները, ապա կարող ենք փաստել, որ իրավաբանական մոտեցումը ներկայումս նույնպես չի կարողանում լուծել իր առջև դրված խնդիրները: Ուստի միանգամայն բնական է, որ այդ ամենը գիտնականից պահանջում է վերջիններիս լուծման ուղղությամբ մշակել նոր մոտեցումներ: Իհարկե ճիշտ չի լինի հերքել այն իրողությունը, որ իրավագետներն առկա խնդիրները հաղթահարելու նպատակով առաջարկում են լուծումներ: Խնդիրն այն է, թե որքանով են այդ լուծումներն արդյունավետ: Փորձենք այդ ամենը հասկանալ ներքոշարադրյալում:

Այսպես՝ Օ. Ա. Կուզնեցովան համոզված է, որ առկա խնդիրները հնարավոր է լուծել պրեզումպցիայի ընդհանուր հասկացություն մշակելու միջոցով (ընդ որում՝ հեղինակն իր այս մոտեցումը պաշտպանում է ինչպես թեկնածուական, այնպես էլ դոկտորական ատենախոսությունների շրջանակներում)[1]: Անշուշտ, մենք համամիտ ենք Օլգա Անատոլևնայի այս տեսակետին: Սակայն հեղինակը, երևի թե լինելով քաղաքացիական իրավունքի մասնագետ, բոլոր դեպքերում չի գնում այն քայլին, որ ընդհանուր հասկացություն մշակելը պետք է ծառայի մեկ նպատակի, այն է՝ փիլիսոփայական և իրավաբանական մոտեցումների ունիֆիկացմանը հասնելուն, որը, բնականաբար, թույլ կտա արդեն առանց հակասությունների մեջ ընկնելու նկարագրել այն երևույթների բազմազանությունը, որոնք դասվում են պրեզումպցիաների շարքին:

Այն, որ ի վերջո պետք է գնալ այդ քայլին, իրականություն է: Սակայն նախքան այդ իրականության մեջ որևէ գործողություն ձեռնարկելը, այն է՝ պրեզումպցիայի ընդհանուր հասկացություն մշակելը, հարկ է առավել ուշադրություն դարձնել հետևյալ փաստին, որը կարծես թե վրիպել կամ ավելի ճիշտ ուշադրության առարկա չի դարձել իրավագետների կողմից:

---

[1] Տե՛ս **Кузнецова О. А.,** Презумпции в российском гражданском праве: дисс. канд. юрид. наук, էջ 8, 28, **Кузнецова О. А.,** Специализированные нормы российского гражданского права: теоретические проблемы: дисс. докт. юрид. наук, Екатеринбург, 2007, էջ 12-13:

Համաձայն հասկացության ծավալի և բովանդակության հակադարձ հարաբերականության օրենքի՝ մեկնաբանվող եզրույթին համապատասխանում է առարկաների էական հատկանիշներն արձանագրող և այդ հատկանիշներով օժտված առարկաների բազմազանության հարաբերակցությունը[1]: Ընդ որում՝ այդ հարաբերակցության մեկ անդամի փոխարինումը, անշուշտ, առաջ է բերում նաև երկրորդի փոխարինում: Ի՞նչ է այս ամենը նշանակում: Բերենք օրինակներ և ասվածը քննարկենք առավել առարկայական ձևով:

Այսպես՝ Օ. Ն. Սիչևան, խոսելով դատավճռի ճշմարտացիության պրեզումպցիայի հասկացության մասին[2], հանգում է այն մտքին, որ պրեզումպցիան՝ որպես երևույթ, բոլոր դեպքերում դասվում է տրամաբանական երևույթների շարքին[3]: Այնուհետև հեղինակը պրեզումպցիան բնորոշում է որպես փաստի առկայության վերաբերյալ ենթադրություն, որի դեպքում օրենքը իրավակիրառ մարմիններին կարգադրում է վերջինս կիրառել որպես հաստատված փաստ՝ այդ կարգադրությունից բխող բոլոր իրավական հետևանքներով հանդերձ[4]: Պատկերը նույնն է նաև Օ. Ա. Կուզնեցովայի մոտեցմամբ[5]: Առավել նորարարական մոտեցում է ցուցաբերում Մ. Ն. Բրոննիկովան: Վերջինս, պրեզումպցիայի ընդհանուր հատկանիշները թվարկելով, եզրահանգում է, որ քաղաքացիական իրավական պրեզումպցիայի ներքո պետք է հասկանալ քաղաքացիաիրավական նորմում կամ պայմանագրի պայմանում ամրագրված կանոն, որը պարունակում է կա՛մ քաղաքացիական իրա-

[1] Տե՛ս այդ մասին, օրինակ, **Кириллов В.И., Старченко А.А.,** Логика: Учебник для юридических вузов. изд. 6-е, перераб. и доп., М., 2008, էջ 36:

[2] Տե՛ս **Сычева О.Н.,** Презумпции истинности приговора в современном уголовном процессе: дисс. канд. юрид. наук, Н. Новгород, 2008, էջ 23:

[3] Տե՛ս **Сычева О.Н.,** նույն տեղը, էջ 24:

[4] Տե՛ս **Сычева О.Н.,** նույն տեղը:

[5] Տե՛ս **Кузнецова О. А.,** Презумпции в российском гражданском праве: дисс. канд. юрид. наук, էջ 8, 12-28:

վահարաբերության սուբյեկտը կամ օբյեկտը, կա՛մ իրավաբանական փաստը բնութագրող ենթադրություն, որը կարող է հերքվել[1]:

Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, որ ամեն ինչ կատարյալ է: Իրականում վերոշարադրյալը տրամաբանական առումով կարող է հակասությունների տեղիք տալ: Ինչպե՞ս դա կարող է դրսևորվել…

Ամբողջ խնդիրն այն է, որ եթե առկա մոտեցումների ունիֆիկացման նպատակով փորձելու ենք տալ մի այնպիսի բարդ երևույթի, այն է՝ իրավաբանական պրեզումպցիայի ընդհանուր հասկացությունը, որը ներառում է այդ երևութի առանձին տարատեսակներ, հետևաբար և վերջիններիս համապատասխան հասկացություններ, ապա պետք է ընդունել, որ այդ հասկացությունները միմյանց նկատմամբ պետք է գտնվեն սեռի և տեսակի փոխհարաբերության մեջ: Միևնույն հասկացությունը մի հասկացության նկատմամբ կարող է լինել սեռային, մեկ այլ հասկացության նկատմամբ՝ տեսակային: Ընդ որում՝ հասկացությունների բաժանումը սեռայինի և տեսակայինի բացարձակ չէ, այլ ընդհակառակը՝ խիստ հարաբերական է[2]: Օրինակ՝ «պրեզումպցիա» հասկացությունը տեսակային հասկացություն է «միջոց» հասկացության նկատմամբ և սեռային է «իրավական պրեզումպցիա» հասկացության նկատմամբ: Միևնույն ժամանակ «քաղաքացիաիրավական պրեզումպցիա» հասկացությունը տեսակային հասկացություն է «իրավական պրեզումպցիա» հասկացության նկատմամբ և սեռային հասկացություն՝ «բարեխղճության պրեզումպցիա» հասկացության նկատմամբ: Այլ խոսքով ասած՝ նշված հասկացությունների ծավալները և բովանդակությունները գտնվում են հակադարձ հարաբերականության մեջ, այն է՝ որքան լայն է հասկացության բովանդակությունը, այնքան նեղ է նրա ծավալը, և ընդհակառակը՝ որքան նեղ է հասկացության բովանդակությունը, այնքան լայն է նրա ծավալը: Իրոք, «բարեխղճության պրեզումպցիա» հասկացության բովանդակությունը շատ ավելի լայն պետք է լինի, քան «իրա-

---

[1] Տե՛ս **Бронникова М.Н.,** Гражданско-правовая презумпция по российскому законодательству: содержание, правовые формы и применение: канд. дисс. юрид. наук, Казань, 2006, էջ 9:

[2] Տե՛ս, օրինակ, **Բրուտյան Գ.Ա.,** Տրամաբանության դասընթաց: Դասագիրք բուհերի համար: ԵՊՀ, 4-րդ վերամշ. և լրաց. հրատ., Եր., 1987, էջ 59:

վական միջոց» հասկացության բովանդակությունը: «Բարեխղճության պրեզումպցիա» հասկացությունը պետք է պարունակի այն բոլոր հատկանիշները, որոնք հատուկ են և՛ իրավական միջոցին, և՛ իրավական պրեզումպցիային, և՛ քաղաքացիաիրավական պրեզումպցիային: Միևնույն ժամանակ «բարեխղճության պրեզումպցիա» հասկացության ծավալը շատ ավելի նեղ պետք է լինի, քան «իրավական միջոց» հասկացության ծավալը: «Բարեխղճության պրեզումպցիա» հասկացությունն անհամամետ շատ ավելի քիչ թվով իրավական միջոցների վրա պետք է տարածվի, քան «իրավական միջոց» հասկացությունը: Ընդ որում՝ ասվածը լիովին կիրառելի է նաև իրավաբանական պրեզումպցիաների մյուս տեսակների նկատմամբ:

Եթե ընդհանրացնելու լինենք վերոգրյալը, ապա կարող ենք ասել, որ հասկացությունների ծավալների և բովանդակությունների միջև հակադարձ հարաբերականության օրենքը խիստ սահմանափակ իմացական արժեք ունի և վերաբերում է միայն սեռի ու տեսակի հարաբերության մեջ գտնվող հասկացություններին: Այդ օրենքի բացարձակացումը կարող է հանգեցնել իմացաբանական լուրջ սխալների: Այլ կերպ ասած՝ սա այն առանձնահատկություններից մեկն է, որը պետք է հաշվի առնել իրավաբանական պրեզումպցիաների ուսումնասիրության մոտեցումների ունիֆիկացման նպատակով միասնական հասկացություն մշակելիս: Իրականում իրավաբանական պրեզումպցիայի ընդհանուր հասկացություն սահմանելու գաղափարը պետք է հետապնդի մեկ նպատակ, այն է՝ վերջինիս միջոցով սահմանափակել, հստակեցնել ուսումնասիրվող օբյեկտի և առարկայի շրջանակները[1], որը, իհարկե, կարող է իրականություն դառնալ այդ երևույթի էական և տարբերակիչ հատկանիշները վեր հանելու միջոցով: Իսկ եթե ավելի պարզ, ապա պետք է համարձակություն ունենալ և բարձրաձայնել, որ, այո՛, իրավունքում պրեզումպցիաների ուսումնասիրության շուրջ առկա կոլիզիոն մոտեցումների առկայությունը ոչ այլ ինչ է, քան համընդհանուր հասկացության բացակայության հետևանք ու դրսևորում, որի շուրջ իրավագետները չեն կարողանում մինչ օրս

[1] Տե՛ս, օրինակ, **Пугинский Б.И.,** Гражданско-правовые средства в хозяйственных отношениях, М., 1984, էջ 8-12:

հասնել փոխզիջման: Այսքանը պրեզումպցիայի ընդհանուր հասկացություն մշակելու վերաբերյալ:

Կան տեսաբաններ, ովքեր ստեղծված իրավիճակից դուրս գալու համար առաջարկում են տրամաբանական և իրավաբանական դրույթները զուգակցելու միջոցով միմյանց միավորել փիլիսոփայական և իրավաբանական մոտեցումները[1]: Սակայն, ըստ որոշ տեսաբանների, առկա խնդիրներն էկլեկտիկ եղանակով հարթելու մոտեցումը հիմնավոր կասկածի տեղիք է տալիս: Համենայն դեպս, վերջիններս այն կարծիքին են, որ այդ ճանապարհով շոշափելի հաջողություններ դեռևս չեն արձանագրվել:

Իրավաբանական կողմնակիցների համար առավել ուշադրության է արժանի Ն. Ն. Յուկանովի տեսակետը: Հեղինակի կարծիքով՝ ճիշտ չի լինի ասել, որ փիլիսոփայական և իրավաբանական մոտեցումներն ուսումնասիրում են միևնույն երևույթի տարբեր կողմերը: Իրականում նրանք տարբերվում են իրենց առարկայով[2]: Քննարկվող հարցի վերաբերյալ առանձին-առանձին դիտարկելով տեսաբանների մոտեցումները՝ Ն. Ն. Յուկանովը նկատում է, որ պրեզումպցիաների ուսումնասիրության վերաբերյալ իրավաբանական և փիլիսոփայական մոտեցումների հարաբերակցության հարցը մնում է անավարտ, և այդ ուղղությամբ հետազոտությունները, ինչպես նախկինում, իրականացվում են զուգահեռաբար: Իրավունքում երկու ինքնուրույն մոտեցումների միաժամանակյա առկայության պատճառը հեղինակը համարում է պրեզումպցիաների անմիատեսակությունը և վերջիններիս տարանջատումն իրավականի ու փաստականի: Փաստացի պրեզումպցիաների ուսումնասիրությունը կազմում է փիլիսոփայական ուղղության հիմնական բովանդակությունը: Մինչդեռ իրավաբանական մոտեցումը միտված է ուսումնասիրելու իրավական պրեզումպցիան՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորման ինքնուրույն միջոց: Հետևաբար երկրորդ մոտեցման պարագայում պետք է հիմք ընդունել ոչ թե ենթադրվող փաստի մեծ հա-

---

[1] Տե՛ս **Давыдова М.Л.,** Теоретические и методологические проблемы понятия и состава юридической техники: дисс. докт. юрид. наук, էջ 240:

[2] Տե՛ս **Цуканов Н.Н.,** Правовые презумпции в административной деятельности милиции: дисс. канд. юрид. наук, էջ 13:

վանականությունը, այլ պրեզումպցիայի՝ որպես արդյունավետ իրավական միջոցի հանդես գալու ունակությունը[1]:

Կրկին այդ «չարաբաստիկ» փաստացի պրեզումպցիաները: Այս հարցում ևս պետք է արձանագրել, որ Ն. Ն. Յուկանովի տեսական-մեթոդաբանական մոտեցումը, միևնույն է, թերի է: Եթե ընդունենք, որ փաստացի պրեզումպցիաները դուրս են գտնվում իրավաբանական հետազոտության շրջանակներից, ապա ինչպե՞ս պետք է բացատրել այն իրողությունը, որ բազմաթիվ գիտական աշխատանքներում, այդ թվում նաև՝ Նիկոլայ Նիկոլաևիչի մենագրությունում, վերջիններիս հատկացվել և հատկացվում է բավական մեծ ուշադրություն: Մնում է ենթադրել ամենավատը, այն է՝ այդ ամենն առանձին հեղինակների կողմից կատարվում է ընդամենն իրենց նախորդներից հետ չմնալու նպատակով, և ոչ ավելին: Ինչպես նախորդները, այնպես էլ նրանք կուսումնասիրեն փաստացի պրեզումպցիաները և կապացուցեն, որ վերջիններս համարվում են ոչ իրավական, հետևաբար իրավաբանի համար ո՛չ ճանաչողական, ո՛չ էլ իրավական առումներով որևէ հետաքրքրություն չեն ներկայացնում:

Ամենազավեշտալին, որը չի կարող պարզապես զարմանքի, իսկ ինչու՞ չէ նաև տարակուսանքի տեղիք չտալ, հեղինակի հետևյալ դատողությունն է: Իր մենագրության մեջ բազմիցս վկայակոչելով փիլիսոփայական մոտեցման հիմքում դրված պրեզումպցիայի հասկացության սահմանափակվածությունը, անարդյունավետությունը և անընդունելիությունը՝ վերջում կատարում է եզրահանգում հետևյալի մասին: Ըստ ուսումնասիրության օբյեկտի փիլիսոփայական և իրավաբանական մոտեցումների տարանջատումը պրեզումպցիաների տեսությանը կհաղորդի պարզություն, կպարզաբանի վերջինիս վերաբերյալ առկա հայացքների բազմազանությունը՝ թույլ տալով տարբեր հայեցակարգերի կողմնակիցներին «հաղորդակցվել մեկ լեզվով»՝ միևնույն ժամանակ նրանց ներկայացնելով այդ երկու մոտեցումների միավորման փորձ[2]: Իսկ եթե ավելի պարզ, ապա մեզ մոտ տպավորությունը հետևյալն է: Ն. Ն. Յուկանովը, ամեն անգամ մերժելով փիլիսոփայական մոտեցումը

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 13:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 15:

և վերջինիս կողմնակիցների կողմից տրված՝ պրեզումպցիայի ընդհանուր հասկացությունը, փոխարենը չի առաջարկում այլ հասկացություն: Ուստի, տեսնելով, որ ինքն արդեն իսկ հայտնվել է ծուղակում, փորձում է այդ որոգայթից դուրս գալ հետևյալ ճանապարհով. իրավունքում փիլիսոփայական տեսլականը՝ որպես ուսումնասիրության հիմք, կարող է ընդունվել պրեզումպցիայի բացառապես մեկ տեսակի, այն է՝ փաստացի պրեզումպցիայի համար: Իսկ սա արդեն խոսում է այն մասին, որ, այո՛, իրավաբանական մոտեցումն ի սկզբանե ձևավորվել է օնտոլոգիական սխալ հիմքի վրա: Եվ դա է պատճառը, որ առկա խնդիրները լուծելու ուղղությամբ իրավաբանական մոտեցման կողմնակիցների ձեռնարկած ջանքերը մինչ օրս անցել են ապարդյուն: Ինչ արած, իրականում ունենք այն, ինչ որ ունենք. նմանատիպ իրավիճակում այսպես կարտահայտվեր քաղաքացիական իրավունքի հայտնի մասնագետ Վադիմ Անատոլևիչը[1]:

Ստեղծված իրավիճակում, մեր պատկերացմամբ, մեթոդաբանական այլընտրանքային մոտեցումների առճակատումը բացառող միասնական տեսություն ստեղծելու գաղափարը կարող է իրատեսական համարվել: Սակայն այդ գաղափարի կենսագործման համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք կարևոր փաստեր:

Նախ պետք է ամբողջական պատկերացում ունենալ ուսումնասիրության օբյեկտի և հետազոտության իրականացման մեթոդաբանական մոտեցումների մասին: Իրավաբանական դոկտրինայում պրեզումպցիաների ուսումնասիրության փիլիսոփայական և իրավաբանական հոսանքների ջրբաժան կարող է ծառայել այն հանգամանքը, որ նրանցից յուրաքանչյուրը պրեզումպցիան ուսումնասիրում է իր առարկայի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ իրավունքում ցանկացած պրեզումպցիա ենթակա է ինչպես իրավական, այնպես էլ փիլիսոփայական դիտարկման: Պարզապես նրանցից յուրաքանչյուրն այն քննարկում է իրեն ներհատուկ պրիզմայով: Օրինակ՝ փիլիսոփայական մոտեցման հիմնական նպատակը պրեզումպցիայի ընդհանուր էությունը վեր հանելն է, իսկ իրավաբանական մոտեցմանը՝ վերջինիս էության ճիշտ ար-

[1] Տե՛ս օրինակ **Белов В.А.,** Международное торговое право и право ВТО: В 2 т. 1, Учебник, М., 2015, էջ 87:

ժխորումն իրավունքի տարբեր ճյուղերի շրջանակներում, տրամաբանական առումով այդ էության հարստացումն իրավունքի ճյուղերին ներհատուկ տեսակային և սեռային հատկանիշներով, որոնք բնորոշ են պրեզումպցիային այդ կարգավիճակում: Այլ կերպ ասած՝ քննարկվող մոտեցումների միայն այսպիսի սահմանազատումն է, որ ունակ է վերջիններիս փոխլրացման, փոխներգործության և միասնական տեսության ձևավորման նախադրյալ հանդիսանալու:

Երկրորդ. միասնական տեսություն ստեղծելու գլխավոր պայմաններից մեկը (ի լրումն վերոշարադրյալ պարբերության), որը պետք է վերջապես ընկալվի իրավագետների կողմից, այն է, թե ինչ պետք է հասկանանք իրավունքում պրեզումպցիա ասելով[1]:

Այսպես, եթե մենք ընդունում ենք, որ պրեզումպցիաներն առհասարակ օժտված են փիլիսոփայական և տրամաբանական ասպեկտներով, ապա նաև ենթադրում ենք, որ իրավունքում վերջիններս համալրվում են իրավականով: Հետևաբար իրավաբանական պրեզումպցիաների կառուցվածքում փիլիսոփայական-տրամաբանական և իրավական ասպեկտների առկայության վերաբերյալ մեր ենթադրությունները հիմք են տալիս անցում կատարելու առավել խորքային վերլուծության և ամենից առաջ քննարկման սեղանին դնելու ընդհանուր բնույթի հարցադրում, այն է՝ ի՞նչ է պրեզումպցիան: Տրամաբանական կլինի, որ այս փուլում ոչ թե փորձենք տալ հիշյալ հարցադրման վերաբերյալ ամփոփ և ամբողջական պատասխան, այլ ուրվագծենք այն ընդհանուր գաղափարը, որով ղեկավարվելով՝ հնարավոր կլինի հետագայում հանգուցալուծման հասցնել պրեզումպցիաների վերաբերյալ առկա հիմնախնդիրները մեկ միասնության մեջ:

Այսպես, եթե առաջնորդվենք «պրեզումպցիա» եզրույթի համար ելակետային համարվող հատկանիշներով, ապա կարող ենք արձանագրել հետևյալը.

- **Առաջին.** պետք է ընդունել, որ «պրեզումպցիա» կոչվող երևույթ գոյություն ունի ոչ միայն իրավունքում, այլ ամենից առաջ վերջինից դուրս:

---

[1] Տե՛ս **Сычева О.Н.,** Презумпция истинности приговора в современном уголовном процессе: Автореф. дисс. канд. юрид. наук, 2008, էջ 15:

● **Երկրորդ.** միանգամայն հնարավոր է պրեզումպցիան իրավունքում դիտարկել առանձին տեսքով, օրինակ՝ ճյուղային իրավունքների տեսանկյունից: Սակայն այդ դեպքում պետք է ընդունել, որ կոնկրետ ճյուղային իրավունքի շրջանակներում ուսումնասիրվող պրեզումպցիան պետք է օժտված լինի պրեզումպցիայի ընդհանուր հասկացությունից ստորադասվող հատկանիշներով:

● **Երրորդ**. իրավունքում գոյություն ունեն պրեզումպցիաներ, որոնք ենթադրյալ փաստի վերաբերյալ չունեն հավանականության բարձր աստիճան: Սակայն դա չի նշանակում, որ հիշյալ պրեզումպցիաները պետք է համարել արհեստական, կվազի գոյացություններ: Ավելին՝ վերջիններս ամբողջությամբ համապատասխանում են պրեզումպցիաների գաղափարին:

● **Չորրորդ.** պրեզումպցիայի թերևս ամենաէական հատկանիշը ենթադրվող փաստի արժանահավատությունն է, իսկ գնոսեոլոգիական հիմքը՝ հավանականությունը: Ի՞նչ է սա նշանակում…

Եթե անձն իր տրամադրության տակ ունենում է արժանահավատ տեղեկատվություն, որը բավարար է որոշում ընդունելու և այն իրացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար, ուստի միանգամայն բնական է, որ նա կարիք չունի ապավինելու պրեզումպցիայի օգնությանը, քանի որ խոսքը վերաբերում է արժանահավատին: Հետևաբար պրեզումպցիայի հնամենիությունը պայմանավորված է այն գաղափարով, որ վերջինս վրա է հասնում այնտեղ և այն ժամանակ, որտեղ առկա է անորոշություն, որտեղ ժամանակագրական առումով բացակայում են արժանահավատ տեղեկությունները: Այլ կերպ ասած՝ ճշմարտության հասնելու անհնարինության դեպքում պրեզումպցիան թույլ է տալիս հավանականության վրա հիմնված տվյալների հիման վրա կատարել արժանահավատ դատողություն[1]:

Հավանական տեղեկատվությունը պրեզումպցիայի գնոսեոլոգիական հիմքն է: Վերջինիս դրսևորման հիմնական տրամաբանական ձևը փաստի գոյության վերաբերյալ արժանահավատ դատողությունն է, որը ներկայացվում է հետևյալ բանաձևով, այն է՝ S-ը միանշանակ P է, քանի դեռ հակառակը չի հաստատվում: Հե-

[1] Համանման կարծիք է արտայատել Ս. Ա. Մուրոմցևը: Այդ մասին տե՛ս **Муромцев С.А.,** О консерватизме римской юриспруденции: Опыт по истории римского права, М., 1875, էջ 100-101:

տևաբար միայն ենթադրվող փաստի ստուգման միջոցով կարող է պարզվել, թե այդ դատողությունն արժանահավա՞տ է, թե՞ ոչ: Իսկ եթե ավելի պարզ, ապա հավանականության փիլիսոփայական գաղափարն անորոշության պայմաններում որոշակի իրադարձություն տեղի ունեցած համարելու մեջ է[1]: Ավելին՝ ժամանակակից փիլիսոփայության մեջ գոյություն ունեն հավանականության որոշակի հայեցակարգեր, որոնցից մեկն էլ տրամաբանական հայեցակարգն է[2]:

Ասվածի լույսի ներքո անդրադառնանք պրեզումպցիայի հավանականության՝ որպես տրամաբանական-գնոսեոլոգիական հասկացության և որպես արժանահավատ դատողության (ենթադրության) հարաբերակցության հարցին: Այսպես՝ Վ. Կ. Բաբաևը, պատասխանելով այն հարցին, թե ինչ է նշանակում պրեզումպցիայի «տրամաբանական բնույթ» բառակապակցությունը, գրում է. «....տրամաբանական տեսանկյունից պրեզումպցիայի ձևավորումն ինդուկտիվ բնույթ կրող երևույթ է»[3]: Այլ կերպ ասած՝ պրեզումպցիան՝ որպես երևույթ, ունի ձևավորման այնպիսի մեխանիզմ, որն ապահովում է տրամաբանական-գնոսեոլոգիական բաղադրատարրի առկայությունը վերջինիս բովանդակության մեջ:

Ենթադրությունը ձևավորվում է փաստի վերաբերյալ հավանական տեղեկատվության հիման վրա, որը, ի համեմատություն արժանահավատ դատողության, օժտված է որակական առումով այլ կառուցվածքով: Ենթադրությունը հավասարազոր չէ հավանական գիտելիքին. այն կրում է նաև այդ տեղեկատվությունը կիրառող սուբյեկտի որոշակի վերաբերմունքը վերջինիս նկատմամբ: Ենթադրությունը դրույթ է, որը ժամանակավորապես կիրառվում է որպես ճշմարտություն, քանի դեռ ճշմարտությունը չի հերքվել[4]:

Այդ ճանապարհով ենթադրությունը ձեռք է բերում կարգավորիչ նշանակություն: Տվյալ իրավիճակում այն ճանաչողական գոր-

---

[1] Տե՛ս, օրինակ, **Лебедев С.А.,** Философия науки: Словарь основных терминов, М., 2004, էջ 33:

[2] Տե՛ս **Рузавин Г.И.,** Вероятность // Философский энциклопедический словарь, М., 1983, էջ 79:

[3] Տե՛ս **Бабаев В.К.,** Презумпции в советском праве, էջ 6:

[4] Տե՛ս, օրինակ, **Кондактов Н.И.**, Логический словарь-справочник, М., 1974, էջ 474:

ծունեության տրամաբանական հատուկ եղանակ չէ, չնայած կարող է արտահայտված լինել տրամաբանական հատուկ միջոցներով: Այդ իսկ պատճառով էլ պրեզումպցիան մեկնաբանվում է որպես հավանականության վրա հիմնված ենթադրություն, որի շրջանակներում փաստն իրավաբանորեն «համարվում է» արժանահավատ, քանի դեռ հակառակն ապացուցված չէ[1]: Այլ կերպ ասած՝ իրավաբանական պրեզումպցիայի համար կողմնորոշիչը ոչ թե վերջինիս՝ ենթադրություն լինելու հանգամանքն է, այլ այդ ենթադրության շրջանակներում գոյություն չունեցող փաստը հավաստի (արժանահավատ) համարելն այնքան ժամանակ, քանի դեռ այլ բան հաստատված չէ: Իսկ այդ դեպքում պրակսեոլոգիական առումով ո՞րն է «համարվում է» եզրույթի նշանակությունը:

Յուրաքանչյուր ոք, ով թեկուզև դասագրքային մակարդակով երբևէ առնչվել է պրեզումպցիային, համամիտ կլինի այն մոտեցմանը, որ լեզվական-տրամաբանական տեսանկյունից պրեզումպցիայի կառուցվածքում «համարվում է» եզրույթի կարգավիճակը պարզաբանելն ունի կարևոր նշանակություն, քանի որ այդ նույն եզրույթի միջոցով օրենսդիրը կարող է նաև արտահայտել իրավական ֆիկցիա: Մեզ համար հատկապես անընդունելի է իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, ըստ որի՝ պրեզումպցիայի ենթադրյալ բնույթն անհամատեղելի է «համարվում է» եզրույթի հետ: Որպես ասվածի հիմնավորում՝ Վ. Կ. Բաբաևը, խոսելով մեղադրյալի անմեղության պրեզումպցիայի մասին, նշում է, որ այն քրեական և քրեական դատավարության իրավունքի սկզբունքներից մեկն է, այլ ոչ թե պրեզումպցիա ընդհանրապես, և որ վերջինիս օգտին է խոսում նաև այդ ինստիտուտի օրենսդրական ձևակերպումը, համաձայն որի՝ հանցագործության մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ[2]: Այլ կերպ ասած՝ ստացվում է, որ պրեզումպցիայի ողջ էությունն այն է, որ իրականում անձը ենթադրության հիման վրա համարվում է անմեղ, այլ ոչ թե վերջինիս անմեղությունը ենթադրության հիման վրա ենթադրվում է: Հետևաբար պրեզումպցիայում «համարվում է» եզրույթի առաքելությունը հետևյալն է՝ ոչ թե

[1] Տե՛ս, օրինակ, Современный словарь иностранных слов, М., 1999, էջ 486:

[2] Տե՛ս **Бабаев В.К.,** Презумпции в российском праве и юридической практике // Проблемы юридической техники, էջ 327:

պնդել, այլ կարգադրել փաստի գոյությունն այնքան ժամանակ, քանի դեռ հակառակը չի ապացուցվել, որպես ելակետ ընդունել այն հանգամանքը, որ ենթադրյալ փաստի վերաբերյալ տեղեկատվությունը, որով իրավունքի սուբյեկտն առաջնորդվում է, ոչ թե հավանական է, այլ արժանահավատ: Ահա այսպիսին է պրեզումպցիան իր տրամաբանական բնույթով: Սա է այն մեկնաբանությունը, որի հենքի վրա պետք է կառուցվի պրեզումպցիայի հասկացությունը և հանդիսանա իրավաբանական պրեզումպցիաների ուսումնասիրության համար միասնական տեսություն ստեղծելու հիմնադրույթներից մեկը:

Ինչ վերաբերում է այն իրողությանը, որ օրենսդիրը հնարավոր է համարել նորմատիվ իրավական ակտում «համարվում է» եզրույթի դերում որպես վերջինիս հավասարազորի կիրառել «ենթադրվում է» ձևակերպումը, ապա պետք է ասել հետևյալը: Եթե ընտրում ենք այն ճանապարհը, համաձայն որի՝ պրեզումպցիայի հիմքում ընկած է առկա փաստի հիման վրա այլ փաստի արժանահավատ գոյության վերաբերյալ ենթադրություն կատարելու գաղափարը, ապա օրենսդրի հիշյալ մոտեցումը լիովին ընդունելի է, և չենք ուզում հավատալ այն մտքին, որ լեզվական առումով պայմանավորված խնդիրներ կարող են ի հայտ գալ իրավական պրեզումպցիան այլ իրավական երևույթներից տարանջատելու հարցում:

Ասվածը քննարկենք առավել առարկայական ձևով: Այսպես, եթե, օրինակ, օրենսդիրը քաղաքացիաիրավական պայմանագրերի հատուցելիության տեսանկյունից ցանկացել է ընդգծել քաղաքացիական իրավունքի կարգավորման առարկայի առանձնահատկություններից մեկը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 439-րդ հոդվածի 3-րդ մասում նշել, որ քաղաքացիական իրավունքի սուբյեկտների միջև կնքված պայմանագիրը **ենթադրվում է** հատուցելի…, ապա մեկ այլ դեպքում, երբ փորձ է արվել առավել արդյունավետ լուծում առաջարկելու փաստացի տիրապետման եղանակով ժառանգություն ընդունելու հարցի վերաբերյալ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասում այս անգամ տեղ է գտել նորմ առ այն, որ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից **ընդունված է համարվում...** Այլ կերպ ասած, եթե քաղաքացիաիրավական պայմանագրի հատուցելի լի-

նելու պրեզումպցիան արտահայտվել է «ենթադրվում է» եզրույթի միջոցով, ապա ժառանգությունն ընդունած լինելու պրեզումպցիան՝ «համարվում է» եզրույթի: Սակայն դա չի նշանակում, որ որևէ մեկը կարող է կասկածի տակ դնել այդ երկու պրեզումպցիաների գոյությունը քաղաքացիական իրավունքում՝ անկախ նրանից, թե վերջիններս ինչպես են արտահայտված նորմատիվ իրավական ակտում:

Այժմ անդրադառնանք հաջորդ խնդրին:

Միասնական տեսություն ձևավորելու ճանապարհին, անշուշտ, պրեզումպցիայի տրամաբանական-գնոսեոլոգիական ասպեկտները հաշվի առնելու փաստի վերաբերյալ երբևիցե երկմտանք չպետք է առաջանա: Սակայն դա չպետք է հասնի այնպիսի ծայրահեղության, որ պրեզումպցիան մեկնաբանելիս տրամաբանական-գնոսեոլոգիական ասպեկտները դիտարկվեն որպես միակ կողմնորոշիչներ: Բոլոր դեպքերում իրականությունը մեկն է. պետք է ընդունել, որ պրեզումպցիան, փիլիսոփայական-տրամաբանական առումով, առկա իրականության արժանահավատ արտացոլումն ապահովող ճանաչողության միջոց է, իսկ իրավաբանական առումով՝ գործիք, որի նպատակն է լուծել իրավական խնդիրները՝ ապահովելով իրավունքի դինամիկ զարգացումը: Միևնույն ժամանակ, որպեսզի պրեզումպցիան մեկնաբանելիս հնարավոր լինի խուսափել հակասություններից, պետք է հասկանալ, որ այս ամենի հետ մեկտեղ պրեզումպցիան միայն գիտելիքի ձև չէ և ոչ էլ ճանաչողական գործունեության հատուկ եղանակ: Պրեզումպցիան նաև պրակսեոլոգիական հասկացություն է: Ի՞նչ է այս ամենը նշանակում: Կարծում ենք, որ արդարացված կլինի նախ մի քանի խոսքով ներկայացնել, թե ինչ ենք հասկանում «պրակսեոլոգիա» ասելով, այնուհետև քննարկել իրավաբանական պրեզումպցիայի հետ վերջինիս կապի օրինաչափության հարցը:

«Պրակսեոլոգիա» նշանակում է գործունեություն: Պրակսեոլոգիայի՝ որպես գործունեության ընդհանուր տեսության գաղափարը հիմնավորել է Տ. Կոտարբինսկին: «Трактъ о хорошей работе» գրքում հեղինակը այսպես է արտահայտել իր միտքը. «Դատողությունները, որոնք տեղ են գտել սույն աշխատանքում, վերաբերում են պրակսեոլոգիային կամ գործունեության կազմակերպման արդյունավետության ընդհանուր տեսությանը: Պրակսեոլոգիայի

նպատակը տեխնիկական բնույթ ունեցող առավել լայն ընդհանրացումների ուսումնասիրությունն է: Այստեղ խոսքը ռացիոնալ գործունեության տեխնիկայի, ցուցումների և նախազգուշացումների մասին է, որոնք կարևոր են ցանկացած գործունեության համար, որի արդյունավետությունը հարկավոր է բարձրացնել….: Պրակսեոլոգիայի գլխավոր խնդիրը ճշմարտացիությանը (արժանահավատությանը) վերաբերող հիմնավորված նորմեր մշակելն է»[1]:

Ի՞նչ է ստացվում. ստացվում է այն, որ հեղինակի կողմից առաջ քաշված նպատակները և խնդիրները միտված են եղել գիտական ճյուղի կարգավիճակ ունեցող գործունեության տեսության մշակմանը: Հետագայում վերջինիս ուղղությամբ կատարված հետազոտությունները հանգեցրին նրան, որ պրակսեոլոգիական ուսումնասիրությունները դարձան տրամաբանության և հետդասական գիտության հիմնարար թեմաները: Իսկ արդյունքն ավելի քան ակնհայտ էր. պրակսեոլոգիան վերածվեց ընդհանուր մեթոդաբանության:

Ընդհուպ մինչև վերջին ժամանակները գործունեության տեսության ուղղությամբ իրականացված հետազոտությունները նպաստեցին պրակսեոլոգիայի տարածմանը, և վերջինս սկսեց դիտարկվել որպես մարդկային գործունեության մասին ուսմունք: «Դա և՛ հոգեբանական, և՛ գործնական, և՛ գնահատողական, մեթոդաբանական, զգայական, և՛ տրամաբանական, նախագծային, և՛ իրագործելի, վերարտադրողական, և՛ նորարական գործունեություն է….»,- այսպես է պրակսեոլոգիայի վերաբերյալ արտահայտել իր գիտական վերաբերմունքը Լ. Ա. Զելենովը[2]: Այսօր պրակսեոլոգիան դիտարկվում է որպես գործունեության փիլիսոփայական հայեցակարգ, որն ունի ծրագրային կարգավիճակ[3]:

Ինչ վերաբերում է պրեզումպցիային, ապա պատկերը հետևյալն է: Պրակսեոլոգիայի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները տեսաբաններին թույլ են տվել հետևություն

---

[1] **Котарбинский Т.,** Тракт о хорошей работе, М., 1975, с. 20-21.

[2] Տե՛ս **Зеленов Л.А.,** Четыре лика философии: Учебное пособие, Н. Новгород, 1999, էջ 39-40:

[3] Տե՛ս **Абушенко В.Л.,** Праксеология // Социология: Энциклопедия, Минск, 2003, էջ 780:

անել առ այն, որ սոցիալական պրեզումպցիան ոչ այլ ինչ է, քան վարքագծի՝ մարդկային գործունեության տարբեր բնագավառներում գործող համընդհանուր կարգավորիչ: Սոցիալական պրեզումպցիայի գործողությունը չի կարող սահմանափակվել կենսագործունեության ինչ-որ մի մասով: Այն՝ որպես կարգավորիչ, իր ազդեցությունն է թողնում մարդու վարքագծի վրա ինչպես միջանձնային հարաբերություններում, այնպես էլ աշխատանքային, մշակութային, դաստիարակչական, գիտական, ճանաչողական և այլ ոլորտներում[1]:

Փիլիսոփայական-պրակսեոլոգիական տեսանկյունից պրեզումպցիայի համար կարևոր նշանակություն ունի Տ. Կոտարբինսկիի՝ ռացիոնալության վերաբերյալ վերջինիս՝ նյութական և մեթոդաբանական առումներով տարանջատման մոտեցումը: Առաջինը կիրառվում է սուբյեկտի՝ առկա փաստական հանգամանքներին ադապտացվելու մեխանիզմները հատկորոշելու համար: Այդ առումով խոսքը ռացիոնալության՝ որպես գործի իրական հանգամանքի հարմարեցման մեխանիզմի մասին է[2]: «Ռացիոնալության մեթոդաբանական գաղափարը,- ընդգծում է հեղինակը,- նկատի ենք ունենում այն ժամանակ, երբ անհատի վարքագիծը համարում ենք խելամիտ ու ռացիոնալ, և եթե անհատը գործում է իր գիտելիքներին համապատասխան, իսկ այդ գիտելիքների տակ նկատի ենք ունենում բոլոր այն տեղեկությունների հանրագումարը, որոնց շրջանակներում, հաշվի առնելով վերջինիս հիմնավորվածությունը, այդ անհատը պետք է դրսևորի իրականությանը հնարավորինս մոտ վարքագիծ կամ, որ նույնն է, իբրև թե իրական (համենայն դեպս միչև այն պահը, քանի դեռ հակառակը հիմնավորված չէ)»[3]:

Դժվար չէ նկատել, որ Տ. Կոտարբինսկին հիշյալ դատողության մեջ պրեզումպցիա եզրույթն ամենևին էլ չի կիրառել: Սակայն միանգամայն պարզ է, որ այդ դատողության մեջ մտածողը խոսել է պրեզումպցիայի՝ որպես գործունեության կազմակերպման և իրականացման տեխնիկական եղանակներից մեկի մասին, որը կիրառվում է անորոշ իրավիճակներում: Կանխատեսվող ենթադրու-

[1] Տե՛ս **Чистякова Ю.А.,** Социальные презумпции как регулятор общественных отношений: Автореф. канд. филос. наук, Н. Новгород, 2004, էջ 17:

[2] Տե՛ս **Котарбинский Т.,** նշված աշխատությունը, էջ 120:

[3] Նույն տեղում:

թյունների վերաբերյալ այդպիսի գաղափար արտահայտվել է նաև իրավագետներից մեկի կողմից, համաձայն որի՝ ենթադրությունը ոչ այլ ինչ է, քան որոշակի նպատակների, այն է՝ հուսալիության, արագության, իրավունքի իրականացման (այն պայմաններում, երբ ճշմարտությունն այլ եղանակով հնարավոր չէ հաստատել) հասնելու համար տեխնիկական միջոց[1]:

Եթե սեղանը մաքրենք, ապա կստանանք հետևյալ պատկերը: Սուբյեկտը, օբյեկտի մասին չունենալով տեղեկություն, կարող է վերջինիս վերաբերյալ արտահայտել մի քանի դատողություններ, իսկ համապատասխան գործողություն կատարելու անհրաժեշտության դեպքում՝ հիմնվել դրանցից որևէ մեկի վրա: Այլ կերպ ասած՝ իրավունքի սուբյեկտը, հաղորդակից լինելով օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի փաստերին, ռացիոնալ կերպով հավատում է կատարած ընտրությանը՝ բնականաբար ենթադրելով տվյալ իրավիճակում տվյալ դատողության արժանահավատությունը, որին նա տվել է նախապատվություն: Այդպիսին է պրեզումպցիայի և պրակսեոլոգիայի միջև առկա կապի օրինաչափությունը:

Այժմ հասկանանք, թե իրավունքում պրեզումպցիան, ըստ պրակսեոլոգիական տեսության, վերջին հաշվով ինչ է իրենից ներկայացնում: Պրեզումպցիան, ինչպես արդեն նշվեց, իրավական գործիք է, որը կիրառվում է ոլորտներում: Ուստի հասկանալի է, որ իրավունքում այն բացառապես գնոսեոլոգիական հասկացություն դիտելը կնշանակեր հրաժարվել իրավունքի ինստրումենտալ տեսությունից, հետևաբար նաև պրեզումպցիայի՝ որպես իրավական միջոցի ինստրումենտալ մեկնաբանումից: Միչդեռ պրեզումպցիան իրավունքի ինստրումենտալ տեսության շրջանակներում ուսումնասիրելու դեպքում հնարավոր կլինի վեր հանել նրա էությունը, այն դերն ու նշանակությունը, որին կոչված է պրեզումպցիան իրավունքում: Այլ կերպ ասած՝ այն փիլիսոփայական գաղափարները, որոնք ընկած են իրավունքի ինստրումենտալ տեսության հիմքում, հնարավորություն կընձեռեն հետևության կատարելու պրեզումպցիայի էության վերաբերյալ, այն ընկալելու որպես հասարակա-

[1] Տե՛ս **Баранов В.М.,** Истинность норм советского права, Саратов, 1988, էջ 379:

կան հարաբերությունների համընդհանուր կարգավորիչ[1] և ոչ միայն:

Ավելին՝ ինստրումենտալ տեսությունն է, թույլ է տալիս իրավունքում պրեզումպցիաների շուրջ ծավալվող խնդիրներին մոտենալ ճիշտ մեթոդաբանական դիրքերից: Այսպես՝ վերջինս, ելնելով օբյեկտիվ անհրաժեշտությունից, կարող է պրեզումպցիան մի դեպքում դիտել որպես իրավական կարգավորման միջոց[2], մեկ այլ դեպքում՝ որպես իրավաբանական տեխնիկայի կանոն[3], իսկ երրորդ դեպքում՝ որպես ընդհանուր և հատուկ իրավաբանական մեկնաբանման կանոն[4]: Այլ կերպ ասած՝ չափազանց բազմազան են այն մեթոդաբանական հնարքները, որոնք առաջարկում է իրավունքի ինստրումենտալ տեսությունը պրեզումպցիաների շուրջ առկա տարաձայնությունները հարթելու, ինստրումենտալ տեսության հարթակում պրեզումպցիաների ուսումնասիրության մեկ միասնական մոտեցում (մասնավոր տեսություն) ձևավորելու, այդ մոտեցման շրջանակներում առկա խնդիրները հերթականությամբ լուծելու և ամենակարևորը իրավունքի ու վերջինիս կենսագործման միջոցի, այն է՝ պրեզումպցիայի գիտական զարգացվածությունը նոր մակարդակի հասցնելու ուղղությամբ: Պրեզումպցիայի ուսումնասիրության վերաբերյալ այս տեսլականը լիովին համապատասխանում է վերջինս որպես փիլիսոփայական-պրակսեոլոգիական հասկացություն դիտարկելու գաղափարին, այն գաղափարին, որի հենքի վրա կառուցված է նաև իրավունքի ինստրումենտալ տեսությունը: Այլ կերպ ասած, իրավունքի ինստրումենտալ տեսությունը ելակետ ընդունելով, առաջարկվում է վերջինիս միջոցով փնտրել ու գտնել պրեզումպցիաների ուսումնասիրության բնագավառում ձևավորված խնդրահարույց իրավիճակներից դուրս գալու ելքեր:

Ավելին՝ ներկայումս իրավաբանական դոկտրինայում հաճախ է խոսվում նաև այնպիսի պրեզումպցիաների մասին, ինչպիսիք են ծնողի՝ որպես օրինակ ներկայացուցիչ հանդես գալու պրե-

---

[1] Տե՛ս **Кашанина Т.В.,** Юридическая техника: Учебник, М., էջ 184:

[2] Տե՛ս **Нашиц А.,** Правотворчество. Теория и законодательная техника, М., 1974, էջ 216-2017:

[3] Տե՛ս **Дедов Д.И.,** Юридический метод: Научное эссе, М., 2008, էջ 10:

[4] Տե՛ս **Сандевуар П.,** Введение в право, М., 1994, էջ 184-185:

զումպցիան, ում խնամքի ներքո գտնվում է երեխան[1], դատական ծախսերի նվազագույն լինելու պրեզումպցիան[2], շուկայական գնին պայմանագրային գնի համապատասխանության պրեզումպցիան, պահանջի պրեզումպցիան[3] և այլն[4], որոնք բոլորին չէ, որ հայտնի են և ունեն առավել վերացական նորմատիվային ամրագրում: Իհարկե, ասվածը չպետք է տպավորություն ստեղծի, որ առաջարկում ենք գիտակցությունից ջնջել վերջիններիս գոյության և գործառնության արդարացիությունը և տեսական նպատակաուղղվածությունը: Փոխարենը ցանկանում ենք հավաստիացնել, որ հիշյալ մոտեցումը կնպաստի յուրաքանչյուր պրեզումպցիայի, այդ թվում նաև՝ հիշատակված պրեզումպցիաների գոյության, բովանդակության և ձևի վերաբերյալ հիմնավորումները առավելապես ինստրումենտալ-պրակսեոլոգիական դիրքերից դիտարկելուն: Ընդ որում, որպես եզրափակիչ խոսք, կցանկանայինք հավելել, որ այդպիսի դիտարկումն ամենից առաջ ցանկալի է իրականացնել այն պրեզումպցիաների մակարդակով, որոնք իրավաբանական դոկտրինայում և իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանվում են ոչ համարժեք, երբեմն՝ նույնիսկ հակասական կերպով: Ասվածի վառ ապացույց կարող է ծառայել օրենքի իմացության պրեզումպցիան, երբ որոշ տեսաբաններ այն դիտարկում են որպես բացարձակ ճշմարտություն[5], մյուսները՝ որպես անհասանելի իրավական գաղափար[6], երրորդները՝ որպես իրավաբանական ֆիկցիա[1], իսկ

---

[1] Տե՛ս **Михеева Л.Ю.,** Развитие кодификации семейного права // Кодификация российского частного права / Под ред. Д.А. Медведева, М., 2008, էջ 225:

[2] Տե՛ս **Смирнов А.В.,** Презумпции в уголовном процессе // Российское правосудие, 2008, № 4 (24), էջ 74:

[3] Տե՛ս **Старых Ю.В.,** Презумпции как средство ограничения усмотрения в налоговом праве // Правовая наука и реформа юридического образования, Воронеж, 2006, էջ 202:

[4] Տե՛ս **Садурский В.,** Разумность и плюрализм ценностей в праве и политике // Сравнительное конституционное обозрение, 2008, № 4 (65), էջ 23:

[5] Տե՛ս **Вавилова А.А.,** Презумпция законов // Вестник Московского университета, Сер. 11: Право, 2006, էջ № (1):

[6] Տե՛ս **Иванова А.А., Иванова В.П.,** Теория государства и права, М., 2007, էջ 123:

չորրորդներն էլ՝ որպես գործոն, որով պայմանավորված է իրավունքի առաջացումը[2]:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը, կարող ենք փաստել, որ եթե ընտրում ենք առկա խնդիրները պրեզումպցիաների ուսումնասիրության համար միասնական տեսություն ստեղծելու միջոցով հաղթահարելու ճանապարհը, ապա այդ տեսությունը պետք է վերջին հաշվով հիմնված լինի հետևյալ գաղափարի վրա, այն է՝ տեսության բովանդակությունը պետք է կազմեն հետազոտվող օբյեկտի և առարկայի մասին գիտելիքները, այդ գիտելիքները պետք է հիմնված լինեն էմպիրիկ և տեսական մակարդակների վրա՝ հաշվի առնելով մարդկային գործունեությունը, այդ մակարդակների վրա հիմնված գիտելիքները պետք է լինեն հնարավորինս ամբողջական և ծառայեն որպես նոր գիտելիքների ձեռքբերման միջոց, նոր գիտելիքներն էլ իրենց հերթին պետք է առաջարկեն առավել արդյունավետ եղանակներ, որոնք մի կողմից հնարավորություն կընձեռեն վեր հանելու նոր պրեզումպցիաների առաջացման և կիրառման պայմանները, հետևաբար նաև նրանց ներհատուկ հատկանիշները, իսկ մյուս կողմից էլ՝ վերջիններիս գոյության օբյեկտիվ գործոնները:

ОСНОВНЫЕ МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ИССЛЕДОВАНИЯ ПРЕЗУМПЦИЙ

Геворг Вирабян

Аспирант кафедры теории и истории государства и права ЕГУ

В данной статье проводится разностороннее изучение понятия «презумпция», выявляются существующие противоречия в определении понятия «презумпция» и обосновывается идея создания единой теории.

Проводимое нами исследование разделено на две части. В первой части нами делается попытка изучения существующих в армянском правоведении проблем, связанных с презумпцией в юри-

---

[1] Տե՛ս **Червяковский А.В.,** Спорные вопросы презумпции знания законов // Право и политика: история и современность, Омск, 2007, էջ 82-84:

[2] Տե՛ս **Табарин И.В.,** Современная теория права, М., 2008, էջ 295-302:

дической доктрине, а также проанализированы те методологические вопросы, которые на протяжении многих лет не получили конкретных ответов.

Во второй части исследования мы обратили внимание на проблему преодоления существующих «барьеров» и определение предпосылок для создания единой теории изучения презумпций.

PRINCIPAL METHODOLOGICAL PROBLEMS OF PRESUMPTIONS STUDY

Gevorg Virabyan
PhD student of YSU Chair of Theory and History of State and Law

The author has devoted this article to the substantiation of the necessity of multisided study of presumption, revealing of existing discrepancies of the latter and the substantiation of creating of idea of unified theory.

Factually, the study is divided in two parts. In the first part there was made an attempt to involve the Armenian jurisprudence for resolving the existing problems on presumption in judicial doctrine and discussing of those methodological issues not receiving the possible answers during a long period of time.

In the second part the author underlined the issues of overcoming the existing "barriers" and revealing the preconditions of creating the unified theory for presumption study.

Բանալի բառեր՝ *պրեզումպցիա, իրավաբանական և փիլիսոփայական մոտեցումներ, իրավական ենթադրություն, անմեղության պրեզումպցիա, բարեխղճության պրեզումպցիա, իրավական սկզբունք, իրավական աքսիոմա, պրակսեոլոգիա, իրավունքի ինստրումենտալ տեսություն, իրավական միջոց:*

Ключевые слова: *презумпция, юридические и философские подходы, правовое предположение, презумпция невиновности, презумпция добросовестности, правовой принцип, правовая аксиома, праксиология, инструментальная теория права, правовое средство.*

Key words: *Presumption, legal and philosophical approaches, legal presumption, presumption of innocence, presumption of good faith, legal principle, legal axiom, praxiology, instrumental theory of law, legal arrangements.*

«ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՍԵՐՆԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1918-1926 ԹԹ.)

Ռոզա Աբաջյան [1]

Առաջին հանրապետությունից հետո XX դարում հայոց պետականության հաջորդ փուլը Հայկական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունն է (1920-1990 թթ.), որն արդի քաղաքական իրավական բառապաշարում ընդունված է անվանել Հայաստանի երկրորդ հանրապետություն: Մինչ այս հանրապետությունում անմիջական ժողովրդաիշխանության ձևերի հիմնահարցի ուսումնասիրությանն անցնելը և դրանց համատեքստում երկրորդ հանրապետությունում իշխանության իրականացման կառուցակարգը գնահատելն ու տիպաբանելը փորձենք պարզել մեր հետազոտական խնդրի համար նախադրյալի դեր կատարող որոշ տեսական հիմնահարցեր:

Դրանցից հատկապես կարևոր են՝

ա) ժողովրդավարության զանազան տեսությունները (տեսլականները),

բ) սոցիալիստական կոչված ժողովրդավարության էությունը,

գ) անմիջական ժողովրդաիշխանության ձևերի սահմանադրական-իրավական ամրագրման նորմատիվ պատմությունը և դրա տեղի ու դերի գնահատականը համապատասխան մասնագիտական գրականության մեջ:

Հանրաքվեի և անմիջական ժողովրդաիշխանության այլ ձևերի նկատմամբ մարքսիստական մոտեցման առանձնահատկությունները հասկանալու համար պետք է նախ իմանալ, որ կառավարման անմիջական ձևերն անխզելիորեն կապված են ավելի լայն ու խորքային երևույթի՝ ժողովրդավարության և այդ երևույթն արտահայտող տեսական մոտեցման հետ: Այստեղ բարդություններն առաջանում են այն պատճառով, որ նախ «ժողովրդավարություն» եզրույթը կամ հասկացությունը պատմականորեն միանշա-

[1] ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հայցորդ, գիտական ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Ա. Գ. Վաղարշյան:

նակ չէ և աչքի է ընկնում բազմիմաստությամբ: Մյուս կողմից՝ խնդիրն էլ ավելի է խճճվում, որովհետև և՛ պատմականորեն, և՛ արդի շրջանում բազմազան են նաև այն տեսությունները, որոնք փորձում են արտացոլել, մեկնաբանել ու բացատրել ժողովրդավարությունը: Այսինքն՝ արդի քաղաքական տեսության մեջ գոյություն ունեն ժողովրդավարության բազմաթիվ հայեցակարգեր, իսկ այդ բազմազանությունն էական ազդեցություն է թողնում հանրաքվեի և անմիջական ժողովրդավարության այլ ձևերի նկատմամբ տեսական վերաբերմունքի վրա, որն էլ իր հերթին առաջացնում է գործնական կիրառման ընդունելի կամ անընդունելի լինելու խնդիրը: Այստեղից բխում է, որ հասկացությունները հիմնարար նշանակություն ունեն տեսության և պրակտիկայի համար: Եթե այս դատողությունն անալոգիայի կարգով տեղափոխենք մեր հետազոտության ոլորտ, ապա կարող ենք ասել. «Ասե՛ք՝ ինչ է ժողովրդավարությունը, և դուք կստանաք «ի՞նչ է հանրաքվեն՝ որպես սոցիալական և իրավական ինստիտուտ» հարցի պատասխանը»:

Ժողովրդավարության ամեն մի տեսլական յուրահատուկ վերաբերմունք ունի ժողովրդավարության ինստիտուտների նկատմամբ, որոնք կարող են համընկնել, բայց կարող են նաև չհամընկնել, նույնիսկ հակասել: Արդի աշխարհում գոյություն ունեն ժողովրդավարության բազմաթիվ տեսություններ[1]: Դրանցից մեկն էլ մարքսիստական քաղաքական-իրավական գաղափարախոսության կողմից մշակված ժողովրդավարության տեսությունն է, որը իրենք՝ մարքսիստները, կոչեցին սոցիալիստական ժողովրդավարություն:

Սոցիալիստական ժողովրդավարությունը մարքսիստական հեղինակների կողմից բնութագրվում էր որպես պատմական նոր տիպի ժողովրդավարություն, որն էականորեն տարբերվում է ժողովրդավարության այլ տեսակներից: Մեծամասնականները, մերաժարելով ժողովրդաիշխանության ազատական տեսությանը ժողովրդաիշխանության անմիջական ձևերը, հատկապես հանրաքվեն բուրժուազիայի իշխանության քաղաքական-իրավական գործիքի վերածելու մեջ, իրենք ևս դրանք դարձրին քաղաքական պայ-

[1] Տե՛ս **Бегунов Ю., Лукашев А., Пониделко А**., 13 теории демократии, М., ozon.ru, 2002, 240 էջ:

քարի մարտավարական խնդիրներ լուծելու միջոց: Այսպես՝ նրանք ընդհանուր առմամբ մերժում էին հանրաքվեն՝ որպես պետաիրավական ինստիտուտ, սակայն սկսեցին լայնորեն կիրառել հարմար իրադրություններում՝ իրենց քաղաքական խնդիրները լուծելու համար: Վ. Լենինն իր «Սոցիալիստական հեղափոխությունը և ազգերի ինքնորոշման իրավունքը» աշխատության մեջ ճանաչում էր ազգի ինքնորոշման իրավունքը, որը նշանակում էր «աջատվելու համար քարոզչության լրիվ ազատություն և անջատման հարցի լուծումն անջատվող ազգի հանրաքվեի միջոցով»[1]:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին անցկացվել են ինքնորոշման մի քանի հանրաքվեներ: Խորհրդային առաջին հանրաքվեները միջազգային համաձայնագրերի արդյունք էին: Այդպիսի համաձայնագրերի օրինակ է խորհրդա-ֆինլանդական պայմանագիրը՝ կնքված 1918 թ. մարտի 1-ին, որը նախատեսում էր Պեչենգայի տեղական բնակչության ազատ հարցումը[2]: Ներքին, այսինքն՝ խորհրդային միության ժողովուրդների փոխհարաբերություններում ևս կիրառվում էր տեղական հարցումների ինստիտուտը: «Բնակչության տեղական հարցումները կատարվում էին ազգային-տարածքային խնդիրների լուծման համար: Դրանք լայնորեն կիրառվում էին խորհրդային իշխանության առաջին տարիներին»[3]:

Այսպիսով՝ ակնհայտ է հանրաքվեի նկատմամբ մեծամասնական տեսությանը և քաղաքական պրակտիկային բնորոշ հակասականությունը՝ առաջինի կողմից դրա մերժողականակությունը, իսկ

---

[1] Տե՛ս **Ленин В.И.,** Полн. собр. соч., т. 27, էջ 255:

[2] Հանրաքվեի անցկացման պահանջ մեծամասնականները դրել են նաև գերմանացիների հետ 1918 թ. վարած բանակցություններում: Հետաքրքիր է, որ խորհրդային հեղինակները որպես հանրաքվեի օրինակ մատնանշում են նաև ՌՍՖՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի՝ 1918 թ. հունվարի 11-ին ընդունված «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որով ճանաչում էին Արևմտյան Հայաստանի լրիվ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև քաղաքական անջատումը (տե՛ս Советское государственное право/Под ред. А.И. Лепешкина, М., 1971, էջ 174):

[3] Խոսքը 1919-1921 թթ. ընթացքում անցկացված խորհրդատվական հանրաքվե-հարցումների մասին է (տե՛ս Советское государственное право /Под ред. А.И. Лепешкина, էջ 174):

երկրորդի կողմից գործնական լայն կիրառումը: Այդ երևույթը հաստատում է, որ մեծամասնականները հանրաքվեն դիտարկում էին որպես քաղաքական-դասակարգային պայքարի միջոց, և դրա նկատմամբ նրանց վերաբերմունքը երկակի էր. հանրաքվեի մերժում այնտեղ, որտեղ իրենց այն հարմար չէ քաղաքական խնդիրները լուծելու համար, ճանաչում և կիրառում այն դեպքերում ու պայմաններում, երբ դա իրենց հարմար է:

Այսպիսով՝ «սոցիալիստական ժողովրդավարության» տեսության ազդեցությամբ բացասական էր նաև վերաբերմունքը ժողովրդաիշխանության, ինչպես նաև դրանից բխող անմիջական կառավարման ձևերի նկատմամբ: Այդ ձևերից սոցիալիստական առաջին սերնդի սահմանադրությունները ճանաչեցին միայն ընտրությունները, այն էլ՝ աղճատված կերպով: Հանրաքվեի նկատմամբ իրենց բացասական քաղաքական-իրավական վերաբերմունքն արտահայտելիս մեծամասնական տեսաբանները միշտ վկայակոչում էին Լենինի խոսքերը, որոնք նա ասել էր երկաթուղայինների 1918 թ. համագումարում: Համագումարների մասնակիցների հարցերին պատասխանելիս, թե «արդյոք արդա՞ր էր հիմնադիր ժողովի ցրումն առանց նախնական հանրաքվեի անցկացման», Լենինն ասել էր. «Ո՛չ, ընկերնե՛ր, ո՛չ հանրաքվեով, ո՛չ նոր հիմնադիր ժողովով գործին օգնել հնարավոր չէ… Խորհրդային իշխանությունը չի ստեղծվել ինչ-որ մեկի դեկրետով, ինչ-որ մի կուսակցության որոշմամբ, որովհետև այն կազմվել է հեղափոխական փորձով, միլիոնավոր մարդկանց փորձով…»[1]:

Այսպիսի մերժողական վերաբերմունքը հանրաքվեի նկատմամբ իր հիմքում ուներ Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության ռազմական, բռնի ձևը, դրանով պայմանավորված քաղաքացիական պատերազմը, ինչի պատճառով մեծամասնականները վախենում էին ազատ և համընդհանուր ընտրություններից ու հանրաքվեներից[2]: Դրա վառ ապացույցը համառուսական սահ-

---

[1] Տե՛ս **Ленин В.И.,** Полн. собр. соч., т. 35, էջ 306: Բացի այս ելույթից՝ Լենինի բացասական վերաբերմունքը հանրաքվեի նկատմամբ արտահայտվել է նրա այլ ելույթներում ու աշխատություններում (տե՛ս **Ленин В.И.,** Полн. собр. соч., т. 30, էջ 201; т. 44, էջ 399):

[2] Ընդ որում՝ բոլշևիկները չէին թաքցնում այդ հանգամանքը, այլ բացահայտորեն բացատրում էին դա այն ժամանակվա պատմական իրադրու-

մանադիր ժողովի ընտրության փորձն էր, որում մեծամասնականները կազմեցին փոքրամասնություն:

Խորհրդային իշխանության ձևավորման ուղին առաջ բերեց աննախադեպ դիմադրություն բնակչության կողմից, որի բարձրագույն դրսևորումը քաղաքացիական պատերազմն էր: «Այդ դիմադրության մասշտաբների ու սրության մասին կարելի է դատել, օրինակ, 1918 թ. տվյալներով. երեք ամսվա ընթացքում (հուլիս-սեպտեմբեր) հակամեծամասնական ուժերի կողմից գնդակահարվել են խորհրդային իշխանության 10.499 աշխատողներ ու ակտիվիստներ, իսկ երկու ամսվա ընթացքում (հուլիս-օգոստոս) տեղի են ունեցել 73 ապստամբություն, 154 բախումներ, խորհրդային իշխանության դեմ ուղղված 130 այլ ելույթներ»[1]:

Կոնկրետ պատմական իրադրության մեջ խորհրդային իշխանության համար ժողովրդավարության անմիջական ձևերից ելնող վտանգը մեծամասնական տեսաբանները վերածեցին սոցիալիստական ժողովրդավարության տեսության դրույթի: Ե՛վ մեծամասնականների տեսական նիհիլիզմը, և՛ ստեղծված քաղաքական իրավիճակը հանգեցրին նրան, որ ՌՍՖՍՀ 1918 թ. Սահմանադրությունը հռչակեց. «Ամբողջ իշխանությունը կենտրոնում և տեղերում պատկանում է բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների պատգամավորների խորհուրդներին»: Ի տարբերություն ազատական «ժողովրդաիշխանության» հայեցակարգի, որի հիմքում ընկած էր ժողովրդի ինքնիշխանության սկզբունքը, «ամբողջ իշխանությունը խորհուրդներին» սահմանադրական դրույթը հիմք հանդիսացավ «խորհուրդների լիիշխանության» սկզբունքի ձևակերպման համար[2]:

թյամբ՝ «….Դասակարգային սուր պայքարով, քաղաքացիական պատերազմով, օտարերկրյա ռազմական ինտերվենցիայով: Այդպիսի պայմաններում տապալված շահագործողական դասակարգերը կձգտեին հանրաքվեն օգտագործելու իրենց կորցրած դիրքերը ետ վերցնելու համար» (տե՛ս Советское конституционное право/Под ред. С.И. Русановой, В.А. Рянжина, изд. Ленинградского университета, Ленинград, 1975, էջ 174):

[1] Власть Советов, 1918, ном. 25, с. 8 (հղումն ըստ Советское государственное право/Под ред. А.И. Лепешкина, էջ 130-132):

[2] «Խորհուրդների լիիշխանություն» հասկացության մեջ խորհրդային իրավագիտությունը դնում էր մի քանի առումներ: Նախ՝ խորհուրդները պե-

Խորհրդային նոր ձևավորվող սահմանադրական միտքը չգիտեր «ժողովուրդ» հասկացությունը: Հասարակության դասակարգային կառուցվածքի հայեցակարգի հիման վրա հասարակությունը բաժանելով շահագործող և շահագործվող դասակարգերի՝ այն ժողովրդի միայն մի հատվածին՝ բանվորներին, գյուղացիներին և կարմիրբանակայիններին էր վերապահում «իշխանության» իրավազորություն՝ մնացածներին դուրս թողնելով «իշխանության սուբյեկտ» հասկացության շրջանակներից: Այսպիսի սահմանադրական տեսական հայեցակարգն ուղղակիորեն վերարտադրվեց ՀԽՍՀ 1922 թ. Սահմանադրության մեջ, որի 5-րդ հոդվածը հռչակեց. «Բանվորների և աշխատավոր գյուղացիների հեղափոխական դիկտատուրայի իրականացման նպատակով՝

ա) իշխանությունն ամբողջովին և բացառապես վերապահվում է բանվորներին ու գյուղացիներին և նրանց ընտրած մարմիններին.

բ) շահագործող դասակարգերը զրկվում են ընդհանրապես քաղաքական իրավունքներից և հատկապես քաղաքական պաշտոնակալության իրավունքից»:

Այսպիսի սահմանադրական կարգավորումը ենթադրում էր հասարակական խնդիրների լուծման ու կառավարման միայն մեկ ձև՝ խորհուրդների՝ որպես միջնորդավորված ներկայացուցչական մարմինների և նրանց կողմից հիմնադրված պետական կառավարման այլ մարմինների միջոցով: Անմիջական-ուղղակի կառավարման հնարավոր բոլոր ձևերից այդ Սահմանադրությունը ճանաչում էր միայն ընտրությունը, այն էլ՝ աղճատված, խտրական հիմքերով կառուցված: Եթե հնարավոր լիներ գտնել իշխանությունը

տության քաղաքական հիմքն են, իրականացնում են ժողովրդին պատկանող իշխանությունը, ղեկավարում են իրենց տարածքի հանրային բոլոր գործերը: Երկրորդ՝ խորհուրդներին ենթակա և հաշվետու են բոլոր գործադիր կարգադրիչ մարմինները: Երրորդ՝ գերագույն խորհուրդների ընդունած օրենքները գերակա են այլ նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ: Այդ սկզբունքով կոմունիստները մերժում էին իշխանությունների բաժանման բուրժուական գաղափարը և հաստատում պետական իշխանության կենտրոնացում (տե՛ս Советское конституционное право/Под ред. С.И. Русановой, В.А. Рянжина, изд. Ленинградского университета, Ленинград, 1975, էջ 79):

լեգիտիմացնելու և լեգալացնելու այլ ընդունելի եղանակ, մեծամասնականները երևի թե կհրաժարվեին նաև ընտրություններից:

Նույնիսկ ընտրական իրավունքը բոլշևիկները վերածեցին քաղաքական ընդդիմության խնդիրը լուծելու միջոցի՝ ամրագրելով ընտրական իրավունքի սահմանադրական սահմանափակումներ: ՀԽՍՀ 1922 թ. Սահմանադրության 71-րդ հոդվածը սահմանում էր, որ ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկվում են՝ ա) վարձու աշխատանքը շահագործողները, բ) անաշխատ եկամուտով ապրողները, գ) մասնավոր առևտրականները և առևտրական միջնորդները, դ) կրոնավորները և կրոնական պաշտամունքի հոգևոր սպասավորները, ե) տապալված կառավարության անդամները և քաղաքական հետախուզության ու ոստիկանության պատասխանատու պաշտոնյաները, խմբապետները ու մառւզերիստները, զ) սահմանված կարգով տկարամիտ և խելագար ճանաչված, ինչպես նաև խնամակալության տակ գտնվող անձինք, է) օրենքով կամ դատական դատավճռով իրավունքներից զրկման դատապարտված անձինք:

Այսպիսի ընտրական համակարգը դժվար է համարել իշխանության իրականացման անմիջական ձև, որովհետև դրանով ձևավորված ընտրական կորպուսը չէր համընկնում, օրինակ, Առաջին հանրապետության ընտրական կորպուսին, որում արական և իգական սեռի՝ 18 տարին լրացած բոլոր քաղաքացիներն ունեին ընտրելու և ընտրվելու իրավունք: Մյուս կողմից՝ այդ ընտրություններն անուղղակի և անհավասար էին: ՀՍԽՀ 1922 թ. Սահմանադրությունը քաղաքական իրավունքների ոլորտում բանվոր դասակարգին առավելություններ էր տալիս գյուղացիների նկատմամբ: Ընտրական համակարգը ամրապնդում էր բանվոր դասակարգի ղեկավար դերը երկրում: Սահմանադրության 51-րդ հոդվածը ամրագրում էր, որ պատգամավորների խորհուրդների գավառային համագումարը կազմվում է խորհուրդների գավառամասային համագումարների և քաղաքային խորհուրդների ներկայացուցիչներից, ըստ որում՝ թե՛ գյուղի 1000 բնակչից, թե՛ քաղաքի 200 ընտրողից ընտրվում էր մեկ պատգամավոր: Այդ Սահմանադրությունը սահմանում էր նաև ՀՍԽՀ բարձրագույն և միջին օղակի պետական իշխանության մարմինների (խորհուրդների) բազմաստիճան կամ անուղղակի ընտրական համակարգ, իսկ ընթացիկ օրենսդրությու-

նը՝ նաև բաց քվեարկություն՝ ձեռք բարձրացնելով կազմակերպվող: Գյուղական և քաղաքային խորհուրդների ընտրությունները ուղղակիորեն էին կատարվում: Այստեղ ընտրողները խորհուրդների պատգամավորներին ընտրում էին անմիջականորեն ժողովներում: Գյուղական և քաղաքային խորհուրդներն անմիջականորեն ընտրելուց հետո խորհրդում ընտրում էին գավառական խորհուրդների համագումարների պատգամավորներին, իսկ վերջիններս էլ՝ Հայաստանի խորհուրդների համագումարի պատգամավորներին նորից բաց քվեարկությամբ: Հեղափոխական տեռորի և դիկտատուրայի պայմաններում բաց քվեարկությունը բացառում էր ընտրողների կամքի ազատությունը[1]:

Նոր ձևավորվող «սոցիալիստական ժողովրդավարության» տեսության հիման վրա սահմանադրորեն ամրագրված իշխանության կառուցակարգը, ըստ էության, մոնիստական հանրային-պետական կառավարմամբ համակարգ էր, որում տեղ չկար կառավարման անմիջական կառուցակարգի (ձևերի) համար: Ռազմահեղափոխական պայմաններում հիմնադրված այդպիսի կառավարման համակարգում իշխանության իրականացման միակ սուբյեկտը պետությունն էր, որ կոչվում էր պրոլետարիատի դիկտատուրա: Կառավարման այս համակարգը որոշակի ձևափոխություններով պահպանեց իր գոյությունը խորհրդային հաջորդ սերնդի սահմանադրական կարգավորման մեջ:

[1] Բազմաստիճան ընտրական համակարգն ընտրյալներին օտար տարրերից զտելու և կոմկուսի դիկտատուրան ապահովելու յուրօրինակ իրավաբանական միջոց էր: Այդ մասին մանրամասն տե՛ս **Վաղարշյան Ա. Գ.**, Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, ԵՊՀ, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003, էջ 103-107:

КОНЦЕПЦИЯ «СОЦИАЛИСТИЧЕСКАЯ ДЕМОКРАТИЯ» И ПРОБЛЕМА НЕПОСРЕДСТВЕННЫХ ФОРМ НАРОДОВЛАСТИЯ В ПЕРВЫХ СОВЕТСКИХ КОНСТИТУЦИЙ (1918-1926 гг.)

Роза Абаджян

Соискатель кафедры теории и истории государства и права ЕГУ

В данной статье рассматривается система власти, основанная на новой формирующей теории «социалистическая демократия», конституционно закрепленной, которая по существу была моногосударственной системой государственного правления. В такой системе правления, созданной в революционных условиях, единственным субъектом власти было государство, называемое диктатурой пролетариата. Эта система правления в определенных модификациях сохранилась и в следующем поколении советского конституционного регулирования.

THE CONCEPT OF "SOCIALIST DEMOCRACY" AND THE PROBLEM OF DIRECT FORMS OF DEMOCRACY IN THE FIRST GENERATION OF SOVIET CONSTITUTIONS (1918-1926)

Roza Abajyan

PhD Student at the YSU Chair of Theory and History of State and Law

Based on the theory of the newly arising “socialist democracy”, the constitutionally confirmed system of power was essentially a mono-state system of government, in which there was no place for direct forms of government. In such a system of government created in revolutionary conditions, the only subject of power was the state, called the dictatorship of the proletariat. This system of government has retained its existence in the next generation of Soviet constitutional regulation in certain modifications.

Բանալի բառեր՝ *ժողովրդաիշխանություն, անմիջական ժողովրդաիշխանության ձևեր, ժողովրդաիշխանության ազատական տեսություն, սոցիալիստական դեմոկրատիա, սահմանադրություն,*

ընտրություններ, կառավարման համակարգ, հեղափոխական դիկտատուրա:

Ключевые слова: *народовластие, непосредственные формы народовластия, либеральная теория демократии, социалистическая демократия, конституция, выборы, система правления, революционная диктатура.*

Key words: *democracy, direct forms of democracy, liberal theory of democracy, socialist democracy, constitution, elections, system of government, revolutionary dictatorship.*

ԴԻՄՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՀԻՄՔ

Տաթևիկ Նահապետյան[1]

Հանրային կառավարման մարմիններին դիմելու իրավունքը անվերապահորեն ընկալվում է որպես ժողովրդավարական իրավական պետության քաղաքացու իրավական կարգավիճակի անօտարելի տարր: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (այսուհետ՝ Սահմանադրություն) Հայաստանը սահմանում է որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական իրավական պետություն, որում բարձրագույն արժեքը մարդն է, իսկ մարդու արժանապատվությունը՝ որպես իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք:

Յուրաքանչյուր իրավական պետություն կոչված է ապահովելու իր գերակայության ներքո գտնվող անձանց՝ հասարակության յուրաքանչյուր անդամի և պետական մարմինների կողմից մարդկային արժանապատվությանը համահունչ վերաբերմունքի արժանանալու իրավունքը: Կարելի է ասել, որ մարդն ամբողջ պատմության ընթացքում անընդմեջ պայքար է մղում հանրային իշխանության դեմ՝ առավել շատ իրավունքներ ու ազատություններ ձեռք բերելու համար, և այդ պայքարը հետզհետե ձեռք է բերում արդեն իսկ նվաճված իրավունքների պաշտպանության համար առավել գործուն գործիքակազմեր ձևավորելու միտում: Այս համատեքստում պետություն-անհատ կապի ամրապնդման ու մարդու սուբյեկտիվ իրավունքների ապահովման արդյունավետ կառուցակարգ ունենալու հարցը մշտապես առկա է ժողովրդավարական յուրաքանչյուր պետության օրակարգում: Թեև հանրային կառավարման մարմիններին դիմելու ինստիտուտի գիտատեսական ուսումնասիրության արդիականությունը ներկա ժամանակներում բավականին ակնհայտ ու անվիճելի է, այնուամենայնիվ, այս ինստիտուտն ու դրա բովանդակությունը ամբողջությամբ դեռևս բավարար խորությամբ ու ասպեկտներով ուսումնասիրված չեն:

Մարդու՝ հանրային կառավարման մարմիններին դիմելու իրավունքի բովանդակությունը բացահայտելիս առաջին հերթին ա-

[1] ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ Գ. Բ. Դանիելյան:

ռաջ է գալիս դրա փոխադարձ սերտ կապը՝ պետության գործերի կառավարմանը մարդու մասնակցություն ունենալու իրավունքի հետ: Վարչական մարմիններին ուղղված դիմումը հանրային կառավարմանը մասնակցելու անմիջական ձևերից է: Այն նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց կողմից իրականացվող հանրային կառավարման նկատմամբ կազմակերպվող հսկողության և վերահսկողության արդյունավետ միջոցներից է: Միևնույն ժամանակ անվիճելի է, որ հանրային կառավարման մարմիններին դիմելու իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության գործուն եղանակներից և իրավախախտումները կանխարգելող լծակներից է: Ըստ այդմ՝ կարող ենք պնդել, որ վարչական մարմիններին դիմելու ինստիտուտն ունի նաև իրավապաշտպան գործառույթ:

Այս համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ նշված հարաբերությունների կարևոր առանձնահատկությունը բխում է հանրային իշխանության մարմինների հետ փոխգործակցության անհրաժեշտությունից: Ընդ որում՝ ամեն անգամ հանրային իշխանության մարմինների հետ փոխհարաբերություններում անձը, անկախ իր կամքից, ստանձնում է «հայցող» կարգավիճակ և կախվածության մեջ է հայտնվում պաշտոնյայից: Եթե, օրինակ, մենք կարող ենք հրաժարվել վաճառքի կետում որևէ ապրանք գնելուց, կարող ենք սեփական հայեցողությամբ ընտրել ատամնաբույժին կամ դերձակին, ապա այդպիսի ընտրությունից մենք զրկված ենք հանրային իշխանությունը կրող մարմինների հետ փոխհարաբերություններում և հարկադրված ենք ենթարկվել հանրային իշխանության, հաճախ նաև բյուրոկրատական կանոններին և ընթացակարգերին: Ավելի հաճախ հայցող կողմը բավարար չափով չի տիրապետում իրեն հուզող խնդրի լուծման վերաբերյալ կիրառելի օրենքին, կանոններին ու հնարավորություններին, և այս «անհավասարության» պայմաններում ամբողջ առավելությունը «չինովնիկի» կողմն է[1]: Այդ իսկ պատճառով նշված հարաբերությունների հստակ կանոնակարգումը դիտարկվում է որպես անձանց իրավունքների կենսագործման և պաշտպանության արդյունավետ մի-

[1] Տե՛ս **Кнорринг В.И.,** Теория, практика и искусство управления: Учеб., М., изд. «Норма», 2004, էջ 310:

ջոց, հետևաբար մեծ է դրա դերը ժամանակակից իրավական պետության և քաղաքացիական հասարակության համար։

Մեր կարծիքով՝ հենց վերը նշված փաստացի փոխհարաբերության կողմերի իրական հնարավորությունների հաշվառմամբ օրենսդրությամբ վարչական դատավարության էական առանձնահատկություններ (ընդհուպ մրցակցության սկզբունքի բացառումը) սահմանելը նպատակահարմար է համաչափորեն նկատի ունենալ նաև վարչական վարույթի համատեքստում։ Վերջին հաշվով, եթե մենք ելակետ ենք ընդունում այն, որ վարչական դատավարության պարագայում հնարավոր և անհրաժեշտ է կողմերի համար հավասար դատավարական իրավունքներ սահմանելու համընդհանուր կանոնից որոշակի շեղում, ապա առնվազն տրամաբանական չէ այդ դիրքորոշումը վարչական վարույթի պարագայում անտեսելը։ Այդպիսի վերապահումով դիրքորոշումը ոչ միայն խախտում է իրավունքների պաշտպանության համաչափության սկզբունքը, այլև անհարկի ծանրաբեռնում է դատարաններին։

Կարծում ենք՝ վարչական վարույթում դիմող կողմի կարգավիճակի արմատական վերանայումը կնպաստի նաև հանրային իշխանության մարմիններում կատարողական կարգապահության ամրապնդմանը։

Անհատի ու պետության ամենօրյա փոխհարաբերություններում թափանցիկության, հստակության և պարզության ապահովումը, անկասկած, պետական իշխանության ամրապնդման ուղով տանող ճանապարհներից է։ Անհատի՝ պետության մասին պատկերացումը ամփոփվում է նրա և պաշտոնատար անձի փոխհարաբերության հիման վրա, ուստի վերջինիս գործողությունները չպետք է վարկաբեկեն պետությունը, այլ ուղղված լինեն մարդու իրավական վիճակի բարելավմանը, ինչը հնարավոր է միայն այս հարաբերությունները հստակորեն և ընդգրկուն կերպով կարգավորող օրենսդրություն ունենալու պարագայում։

Նախքան 2015 թ. սահմանադրական փոփոխությունները Սահմանադրության՝ 2005 թ. գործող խմբագրությամբ (հոդ. 27.1) ամրագրված էր յուրաքանչյուրի՝ անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու

իրավունքը: Ներկայումս Սահմանադրությամբ (հոդ. 53) ամրագրված է յուրաքանչյուրի՝ անհատապես կամ այլոց հետ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը:

Դիմումի կամ առաջարկության շարժառիթներ կարող են լինել անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումները: Հետևաբար Սահմանադրությամբ ամրագրված իրավունքն ունի եռակի նշանակություն: Դիմելը քաղաքական իրավունք է: Մարդիկ հասարակական շահերը շոշափող և պարտադիր քննարկման ենթակա դիմում-առաջարկների միջոցով ներազդում են իշխանության մարմինների գործունեության վրա, վերահսկում այն, նպաստում քաշքշուկի վերացմանը: Դիմելն ապահովում է հանրային իշխանությանը տեղեկույթով: Բնակչության դիմումները և առաջարկությունները տեղեկույթի կարևոր աղբյուր են հուզող խնդիրներն արագ, արդյունավետ լուծելու համար: Դիմելը երաշխիք է մարդու այլ իրավունքների համար: Դիմելու միջոցով գործի են դրվում այլ իրավունքները ոտնձգություններից, խախտումներից պաշտպանելու պետական կառուցակարգերը[1]:

Սահմանադրությամբ ամրագրված հանրագիր ներկայացնելու իրավունքի կենսագործման օրենսդրական կառուցակարգն ապահովելու նպատակով Ազգային ժողովն ընդունեց «Հանրագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը[2], որով (հոդ. 1) հանրագիրը բնորոշվում է որպես հանրային նշանակություն ունեցող հարցերով ներկայացվող գրություն կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց գործունեության թերությունների մասին հաղորդում, դրանց գործունեության բարելավման, տնտեսական, քաղաքական, սոցիալական և հասարակական կյանքի այլ ոլորտների վերաբերող հարցերի կարգավորման կամ գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկություն: Նույն օրենքը սահմանում է, որ եթե որպես հանրագիր ներկայացված գրությունը, հա-

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդ. խմբ.՝ Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյան, Եր., «Իրավունք», 2010, էջ 313:

[2] ՀՕ-15-Ն, ՀՀՊՏ 2018.01.17/4 (1362), հոդ. 33:

ղորդումը կամ առաջարկությունը պարունակում են վարչական վարույթ հարուցելու հիմք հանդիսացող դիմում կամ բողոք, ապա վարչական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, որին հասցեագրված է հանրագիրը, վարչական վարույթ հարուցելու հիմք հանդիսացող դիմումը կամ բողոքն առանձնացնում և ընթացք է տալիս օրենքով սահմանված կարգով (հոդ. 6):

Փաստորեն, նշված օրենքի կարգավորման ոլորտը չի ներառում անձանց կողմից ներկայացվող այն դիմումներին առնչվող հարաբերությունները, որոնք ենթակա են քննության վարչական վարույթի շրջանակներում, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ օրենքը, նեղացնելով «հանրագիր» տերմինի նշանակությունը դրա սահմանադրական բովանդակությունից, այն դիտարկում է միայն որպես իրավունքի կենսագործմանը նպաստելու միջոց (առաջարկության տեսքով)՝ տերմինի հասկացությունից դուրս թողնելով այն դիմումները և բողոքները, որոնք ուղղված են հենց իրավունքի կենսագործմանը կամ պաշտպանությանը:

«Առաջարկություն», «դիմում» և «բողոք» եզրույթների պարզ տարանջատումը պայմանավորված է դրանց դասակարգման չափանիշի ակնհայտությամբ, այն է՝ դրանց բնույթը պայմանավորվում է անձի սուբյեկտիվ իրավունքների հետ ունեցած կապով: Այսինքն, եթե առաջարկությունը ուղղակիորեն չի առնչվում անձի առանձին սուբյեկտիվ իրավունքներին, բացառությամբ սահմանադրաիրավական այնպիսի իրավունքների, ինչպիսիք են պետության գործերի կառավարմանը անմիջական մասնակցության, ազատ խոսքի և հանրագիր ներկայացնելու իրավունքները, ապա դիմումի ու բողոքի դեպքում պատկերն այլ է: Դիմումն ու բողոքն ուղղակի կապի մեջ են անձանց մի շարք սուբյեկտիվ իրավունքների հետ: Այսպես՝ դիմումը որոշակի վարքագծի արտահայտման, պարտավոր անձից համապատասխան վարքագիծ պահանջելու, որոշակի սոցիալական բարիքից օգտվելու հնարավորությունների իրականացման եղանակ է[1]: Հենց սա էլ սուբյեկտիվ իրավունքի և դիմումի միջև եղած ուղիղ կապն է, և հենց դրանով է պայմանավորված դի-

[1] Տե՛ս **Новиков А.В.,** Обращения граждан (административно-процедурные правовые аспекты): Дис. канд. юрид. наук: 12.00.14, В., 2006, էջ 22:

մումի անհատական բնույթի պարտադիր լինելը: Ինչ վերաբերում է բողոքին, ապա դրա և սուբյեկտիվ իրավունքի միջև եղած կապի հիմքում ընկած է սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության պահանջով իրավասու մարմնին դիմելու հնարավորությունը[1]:

Վերոգրյալը վկայում է այն մասին, որ դիմումն ու բողոքը որոշակի գործառութային միասնության մեջ են, որոնք հնարավորություն են տալիս կենսագործելու օրենսդրությամբ ամրագրված սուբյեկտիվ իրավունքները՝ ի տարբերություն առաջարկության, որը ընդամենը կարող է նպաստել հետագայում դրանց կենսագործմանը: Այսպես՝ մի կողմից մենք գործ ունենք դիմումի հետ, որը մարմնավորում է իրավունքի իրացման գործընթացը՝ փաստացի հանդիսանալով դրա սկիզբը, և միաժամանակ դրսևորվում է որպես այդ իրավունքի իրացումը գործի դնող իրավաբանական փաստ: Մյուս կողմից, ինչպես արդեն նշվել է, սուբյեկտիվ իրավունքը ենթադրում է դրա պաշտպանության հնարավորության առկայություն, ինչն էլ իրացվում է բողոքի միջոցով: Այլ կերպ ասած՝ հանրային իրավունքի բնագավառում անձի սուբյեկտիվ իրավունքը կկրի ընդամենը հռչակագրային բնույթ, եթե բացակայեն դրա իրացման և պաշտպանության իրական ընթացակարգային երաշխիքները: Այդ իսկ պատճառով էլ նկատում ենք, որ դիմումն ու բողոքը այն իրավաբանական երաշխիքներից են, որոնք հանրային իրավունքի բնագավառում ապահովում են մարդու իրավունքների իրացումն ու պաշտպանությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի[2] (այսուհետ՝ Օրենք) իրավակարգավորումների համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերից են դիմումը և բողոքը: Փաստորեն, այս պարագայում վարչական վարույթ հարուցելու հիմքը անձի նախաձեռնությունն է, որը պետք է արտահայտվի վարչական մարմին (վերադաս վարչական մարմին) գրավոր դիմում կամ բողոք ներկայացնելու ձևով[3]:

---

[1] Տե՛ս **Алехин А.П., Козлом Ю.М.**, Административное право РФ, М., 1999, էջ 35:

[2] ՀՕ-41-Ն, ՀՀՊՏ 2004.03.31/18 (317), հոդ. 413:

[3] «Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ», Եր., «Տիգրան Մեծ», 2015, էջ 86:

Հաշվի առնելով, որ Օրենքը չի սահմանում դիմումի ու բողոքի հասկացությունները՝ հետևաբար դիմումի բովանդակությունը բացահայտելու և օրենքով հանրագրին տրված հասկացությունից տարբերակելու համար նախ անհրաժեշտ է անդրադառնալ վարչական վարույթի էությանը:

Վարչական իրավունքի տեսության մեջ «վարչական վարույթ» եզրույթն օգտագործվում է մի քանի իմաստով, ինչը պայմանավորված է խնդիրների ու իրականացման ընթացակարգերով էապես տարբերվող վարչական գործընթացների բազմազանությամբ: Վարչական իրավունքում հիշյալ եզրույթին թերևս տրվում է առավել լայն բնորոշում. վերջինս օգտագործվում է որպես գործադիր իշխանության կողմից իրականացվող ցանկացած գործառույթի ընթացակարգ: Արտասահմանյան երկրների վարչական վարույթի համեմատական վերլուծությունը վկայում է այն մասին, որ վարչական իրավունքում «վարչական վարույթ» եզրույթը հիմնականում օգտագործվում է նեղ իմաստով: Մասնավորապես նկատի է առնվում գործադիր իշխանության մարմինների այն գործունեությունը, որն ուղղված է արտաքին ներգործություն ունեցող վարչական ակտ ընդունելուն: Հենց այս իմաստն է ամրագրված նաև Օրենքում[1]:

Օրենքի իմաստով՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և անձանց կամ որոշակի անհատական չափանիշներով առանձնացված որևէ խմբի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն, արտաքին ներգործություն ունեցող անհատական իրավական ակտ (վարչական ակտ) ընդունելուն ուղղված գործունեությունն է: Հետևաբար անձի որոշակի իրավունքների, երբեմն նաև դրանցից զուգահեռաբար բխող պարտականությունների սահմանմանը, փոփոխմանը, վերացմանը կամ ճանաչմանն ուղղված, հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ հարցի կարգավորման կամ ենթադրյալ խախտված իրավունքի վերականգնման ակնկալիքով վարչական մարմնին պահանջ (դիմումի

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուս. ձեռնարկ, ընդ. խմբ.՝ **Գ. Դանիելյան**, ԵՊՀ, 2012, էջ 360:

կամ բողոքի տեսքով) ներկայացնելն է Օրենքի իմաստով վարչական վարույթի հարուցման հիմքը։

Օրենքով կանոնակարգված են (հոդ. 31) դիմումին ներկայացվող ընդհանուր պահանջները, որոնց համաձայն՝ դիմումը պետք է պարունակի այն քննարկելու համար բավարար տեղեկատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում պետք է կցված լինի պետական կամ տեղական տուրք կամ այլ պարտադիր վճարում հավաստող փաստաթուղթ։ Այսպես՝ վարչական մարմնին դիմումը ներկայացվում է գրավոր ձևով և պետք է պարունակի դիմողի անձին ու նրա խնդրին առնչվող որոշակի տվյալներ։ Դիմումին հավասարեցվում է նաև անձի ընդունելության ժամանակ կազմված արձանագրությունը, եթե դրանում առկա են դիմողի անունը, ազգանունը (իրավաբանական անձի անվանումը), հասցեն կամ իրավաբանական անձի գտնվելու վայրի հասցեն, ներկայացվող պահանջը, եթե օրենքը չի պահանջում, որ դիմումը ներկայացվի սահմանված այլ կետերի պահպանմամբ։

Փաստորեն, Օրենքը, որպես կանոն, դիմումի ներկայացման հիմնական ձև է դիտարկում դրա գրավոր ձևը՝ այս ձևից միակ բացառությունը սահմանելով վարչական մարմնում իրականացվող ընդունելությունների ժամանակ պահանջի բանավոր ներկայացման հնարավորությունը, ինչը պետք է ամրագրվի կազմվող արձանագրությունում։ Նշվածի համատեքստում անդրադառնալով ընդունելության արձանագրությունը որպես դիմում դիտարկելու իրավակարգավորման նպատակներին՝ ակնհայտ է դառնում, որ քննարկվող կարգավորումը կոչված է ապահովելու անձի իրավունքների հետևողական և դյուրին իրացումը։ Միաժամանակ այն նպատակ է հետապնդում նվազագույնի հասցնելու ձևական, բյուրոկրատական պահանջները խնդրո առարկա գործընթացներում։ Նշված նպատակների իրականացման տեսանկյունից առավել քան հիմնավորված և արդիական է թվում վարչական մարմիններին դիմելու այլ ձևերի իրավական կարգավորումը։

Այս առումով հատկանշական է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների և առցանց հարթակների զարգացման արդի մակարդակը, այդ բնագավառի ձեռքբերումները նաև մարդու իրավունքների իրացման և պաշտպանության ոլորտում ներդնելու միտումները գործուն հիմքեր են ստեղծել անձ-վարչական մարմին շփումների ձևաչափերի ընդլայնման համար, որի հետևանքով մեր երկրում

ձևավորվում է անհատ-պետություն փոխադարձ կապի նոր մշակույթ՝ դրսևորվելով պաշտոնատար անձի հետ անհատի՝ իրական ժամանակում առցանց հաղորդակցության ձևով: Հետևաբար գտնում ենք, որ վարչական մարմիններին անձանց կողմից պահանջների ներկայացման միանգամայն օրինաչափ ձևաչափ կարող է համարվել իրական ժամանակում առցանց կապի (սոցիալական ցանցերի «լայվ» միացումները, հեռուստահաղորդակցության ու այլ եղանակներով կապը և այլն) օգտագործմամբ մեկնաբանությունների տեսքով կամ բանավոր ձևով ներկայացված պահանջները, որոնք, սակայն, դեռևս դուրս են գործող իրավակարգավորումների շրջանակներից:

Վերջին ժամանակահատվածում քաղաքական հարթակում համացանցի ակտիվ գործածության հետևանքով ձևավորվել է նոր մոտեցում՝ պաշտոնատար անձի շփում քաղաքացիների հետ սոցիալական ցանցերի հնարավորությունների լայն կիրառմամբ, որոնց միջոցով հնարավոր է դառնում իրական ժամանակում անմիջականորեն հաղորդակցվել հասարակության լայն շերտերի հետ: Ընդ որում՝ վերջին ամիսներին մեր երկրում հաղորդակցության այս ձևը կիրառվում է գործադիր իշխանության բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից, ինչի ընթացքում չի բացառվում առցանց հարթակում մեկնաբանությունների տեսքով քաղաքացիների կողմից իրենց սուբյեկտիվ իրավունքների իրացման կամ պաշտպանության նպատակով տվյալ պաշտոնյաներին դիմելու հնարավորությունը, և եթե քաղաքացիների ընդունելության ժամանակ կազմված արձանագրությունը Օրենքը հավասարեցնում է դիմումին՝ համարելով այն վարչական վարույթի հարուցման հիմք, ապա ինչո՞ւ իրական ժամանակում սոցիալական ցանցերի օգտատերերի՝ անհրաժեշտ տեղեկատվություն (անձնական տվյալներ, հասցե) պարունակող մեկնաբանությունների տեսքով առցանց հղված բովանդակային պահանջները չեն կարող հիմք դիտվել վարչական վարույթի հարուցման համար: Նշված առաջարկը անհրաժեշտ ենք համարում քննարկել պաշտոնատար անձանց կողմից իրականացվող «լայվ» հեռարձակումների նպատակի համատեքստում: Հարկ է նկատել, որ բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը մեդիա հարթակում հանդես է գալիս ի պաշտոնե, վերջինս նպատակ ունի ապահովելու պետական մարմին-անհատ անմիջական կապը, որն էլ իր հերթին մի կողմից ենթադ-

րում է անհատի իրավունքը՝ հանդես գալու իր իրավունքների իրացմամբ կամ պաշտպանությամբ՝ իսկ մյուս կողմից՝ պաշտոնատար անձանց պարտականությունը վարչական վարույթ հարուցելու միջոցով ապահովելու նշված հնարավորությունը, հետևաբար արդիական են նաև նշված երևույթին իրավական նշականություն տալն ու այս եղանակով իրավական հետևանքներ առաջացնելու փաստի արձանագրումը։

Օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ դիմումի միջոցով իրացվող սուբյեկտիվ իրավունքերը բազմաթիվ են՝ կենսաթոշակ ստանալու իրավունքից մինչև լիցենզավորում պահանջող գործունեությամբ զբաղվելու հնարավորության իրացում։

Դիմումի ներկայացմամբ պայմանավորված և դրա հիմքով հարուցվող վարչական վարույթի հիման վրա տրամադրվող իրավունքների լայն շրջանակը, դիմումի միջոցով անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումները ընդգծում են այս ինստիտուտի կարևոր դերը ժամանակակից հասարակության կյանքում, հետևաբար կարող ենք արձանագրել, որ պետություն-անհատ փոխհարաբերություններում անհատի սուբյեկտիվ իրավունքների իրացման և պաշտպանության կարևորագույն միջոց է այդպիսի պահանջով հանրային իշխանության մարմիններին դիմում ներկայացնելու օրենսդրորեն ապահովված հնարավորությունը, որի կանոնակարգումը, սակայն, կատարելագործման կարիք ունի։

Ամփոփելով կատարված վերլուծությունները՝ ակնհայտ է դառնում, որ հասարակական հարաբերությունների զարգացման արդի միտումները և պետություն-անհատ շփումների ժամանակակից ձևաչափերը թելադրում են դիմումին՝ որպես վարչական վարույթի հարուցման հիմքի, առնչվող կանոնակարգումների արդիականացման և կատարելագործման անհրաժեշտությունը, մասնավորապես՝ վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող դիմումի և բողոքի հասկացությունների հստակ սահմանումը, ինչպես նաև դիմումի ներկայացման օրենքով սահմանված գրավոր ձևից զատ այլ ձևերի ամրագրումը։

ЗАЯВЛЕНИЕ КАК ОСНОВА АДМИНИСТРАТИВНОГО ПРОИЗВОДСТВА

Татевик Нагапетян
Аспирант кафедры конституционного права ЕГУ

В данной статье приводятся результаты исследования, которые показали, что современные тенденции в общественных отношениях и современные форматы государственно-частных контактов диктуют необходимость модернизации и совершенствования существующих нормативных актов, связанных с заявлением как основой административного производства. В частности, считаем необходимым дать четкое определение понятий, а также закрепить другие формы заявления, отличные от письменной формы, установленной законом.

APPLICATION AS A GROUND FOR INITIATING ADMINISTRATIVE PROCEDURE

Tatevik Nahapetyan
PHD Student of the YSU Chair of Constitutional Law

The analysis of the author results in the conclusion that current trends in public relations and modern formats of public-private communication dictate the need to modernize and improve the regulations regarding the application as a ground for initiating administrative procedure, in particular, a clear definition of concepts, as well as consolidation of application forms other than the written form established by law.

Բանալի բառեր՝ *դիմում, բողոք, վարչական վարույթ, վարչարարություն, վարչական ակտ, անհատ-պետություն հարաբերություններ:*
Ключевые слова: *заявление, жалоба, административное производство, административный процесс, административный акт, государственно-частные отношения.*
Key words: *application, complaint, administrative proceedings, administrative process, administrative act, public-private relations.*

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ՝ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՔԱՅԻՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Սոսե Բարսեղյան[1]

Հանրային իշխանության՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով սահմանափակվածության գաղափարն անցել է որոշակի պատմահրավական էվոլյուցիա և պայմանավորված է իրավական մշակույթի զարգացման նախադրյալներով: Սահմանադրության՝ 2015 թվականին կատարված փոփոխությունների մեջ ևս ամրագրվեց այս դրույթը, սակայն իրավական մտքի ձևավորման արդի դարաշրջանում այն վերահիմաստավորման և սահմանադրական հիմունքների համակարգում նորովի արժևորման կարիք ունի: Սույն հոդվածում նպատակահարմար ենք համարում առանձնացնել Սահմանադրությամբ պետական մարմիններին վերապահված լիազորությունների սահմանափակման առանձնահատկությունների ուսումնասիրությունը՝ քննարկման առանցքում ունենալով նշված չափանիշը:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականությունն է. հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Ընդ որում՝ հիշյալ հիմնադրույթը այս կամ այն կերպ արտացոլվում է յուրաքանչյուր իրավունքի և ազատության իրացման համատեքստում: Այսպես, օրինակ, յուրաքանչյուրի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը փոխկապակցվում է պետական մարմնի՝ խնդրարկվող տեղեկատվությունը տրամադրելու պարտականության հետ և այլն:

Ինչևէ, իրավունքի իրացման բնականոն ընթացքը կարող է երաշխավորվել բացառապես այն դեպքում, երբ իրավասու պետա-

[1] ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Դանիելյան:

կան մարմնի կամ մարմինների համար սահմանվում են համարժեք պարտականություններ, և համաչափորեն սահմանափակվում են վերջիններիս լիազորությունները: Այս տեսակետը փորձենք վերլուծել օրենսդրական կարգավորում ստացած արտաքսման օրինակով: Սահմանադրության 55-րդ հոդվածը սահմանում է, որ ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Պետությունները «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի ուժով պարտավորություն են ստանձնել, անկախ արտաքսման հիմքերից, այդ թվում՝ ազգային անվտանգության սպառնալիքի առկայությունից, անձին չվերադարձնելու, եթե վերադարձվող երկրում մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի վտանգ է առկա[1]: Հիմնական իրավունքներով և ազատություններով առաջնորդվելու պահանջն առկա է նաև այն դեպքում, երբ թեև որոշակի ընթացակարգով գործելու ուղղակի հանձնարարական նախատեսված չէ ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ օրենքով, սակայն հիմնարար իրավունքներն ամրագրող սահմանադրական նորմերի անմիջական գործողության ուժով պետական մարմինները պարտավոր են հետևել այդ կանոնին: Այս պահանջը վերաբերում է իշխանության երեք թևերին էլ:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունքով սահմանափակված լինելը լուրջ մարտահրավեր է պետական մարմինների համար, որոնք ավանդաբար շարժվում են հետևյալ կանոնով՝ իրավասու են անել այն, ինչի համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքով: Սա նշանակում է, որ, օրինակ, պետական մարմինը վարչարարության փոխօգնության սկզբունքի հիման վրա պարտավոր է տեղեկություն տրամադրել մյուս պետական մարմնին, բայց, կաշկանդված լինելով անձի անձնական տվյալների պաշտպանությամբ, չի կարող այդ տեղեկությունը

[1] Տե՛ս **Chahal V.,** The United Kingdom, Application № 22414/93, 15 November, 1996:

տրամադրել, եթե այդպիսի հատուկ վերապահում չլինի օրենքով: Կամ անձը դիմել է պետական մարմնին՝ վարչական վարույթի ավարտից հետո վարչական վարույթի նյութերին ծանոթանալու համար: Քանի որ վարչական վարույթն ավարտվել է, անձի՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքը, ըստ էության, սպառվել է՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 39-րդ հոդվածի համաձայն: Սակայն, անձնական տվյալների վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունքը կամ տեղեկատվության ազատության իրավունքը հաշվի առնելով, պետական մարմինը պարտավորվում է տրամադրել այդ տվյալները, քանի որ պետք է առաջնորդվեն մարդու իրավունքներով՝ որպես անմիջապես գործողի: Ինչպես գիտենք, օրինականության սկզբունքի դրսևորման ձևերից մեկն այն է, որ, ի տարբերություն մարդու, ով ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սակայն, բացի պետական մարմնին վերապահվող հստակ սահմանված և կոնկրետ լիազորություններից, պետական մարմնի համար բնութագրական է լիազորությունների մի շրջանակ ևս՝ պայմանավորված պետական մարմնի հանրային իշխանության բնույթով:

Չնայած իրենց անմիանշանակությանը՝ մարդու իրավունքները հանդիսանում են պետական ինքնիշխանության ունիվերսալ սահմանափակող՝ կանխորոշելով հանրային իշխանության լիարժեքության և ուժի սահմանները[1]: Հանրային իշխանությունն օբյեկտիվորեն սահմանափակման անհրաժեշտություն ունի, հակառակ դեպքում վտանգ կա, որ այն կվերածվի անվերահսկելի երևույթի՝ զրկված իր հիմնական նպատակից՝ ծառայելու հասարակության և անհատի շահերին[2]:

---

[1] Տե՛ս **Красинский В.В.,** Защита государственного суверенитета. Монография, М., «Норма», 2017, էջ 223:

[2] Տե՛ս **Беляева Г.С.,** Необходимость и формы ограничения государственной власти: постановка проблемы, научная эл. библиотека «Киберленинка», Юго-Западный гос. университет, 2011, էջ 2:

Մարդու իրավունքների զարգացման պատմությունը անբաժանելիորեն կապված է սուվերեն պետության ինքնիշխանության սահմանափակման մշտական փորձերի, պետության և անձի փոխադարձ պատասխանատվության ներդրման և հասարակության գործերի ղեկավարման ոլորտում քաղաքացիական կառավարման դերի բարձրացման հետ[1]: Իրավական պետության հիմնարար սկզբունքը պոզիտիվ իրավունքի գերակայությունն է, որը հանդիսանում է հանրային իշխանության իրավական ինքնասահմանափակման գաղափարի դրսևորումը[2]:

Չնայած մոտեցումների որոշ տարբերություններին՝ տեսաբանները իրավունքին այնպիսի հատկանիշ են վերագրում, որը թույլ է տալիս իրավունքը դիտարկել որպես պետության կամ պաշտոնատար անձանց կողմից իշխանության չարաշահման յուրահատուկ «դարման»[3]:

Այսպիսով՝ վերը նշված մոտեցումներում արտահայտվում է այն կարծիքը, որ հանրային իշխանության՝ մարդու իրավունքներով սահմանափակվածությունը նպատակաուղղված է բռնատիրական ռեժիմի ձևավորումը կանխելուն և հանրային իշխանության մարմինների իրավասության իրավաչափ սահմանափակում է: Մենք գտնում ենք, որ արդեն իրավական նոր զարգացումների ժամանակաշրջանում անհրաժեշտություն է առաջացել ավելի պատասխանատու ու կենսունակ դարձնելու այս գաղափարը և մարդու իրավունքներով սահմանափակվածությունը դիտարկելու որպես հանրային իշխանության մարմինների լիազորության տեսակ:

Մարդու իրավունքի և ազատության՝ որպես գերագույն արժեքների հռչակումը հնարավոր չէ առանց պետության պարտականության՝ ոչ միայն ճանաչելու, այլև պահպանելու և պաշտպանե-

---

[1] Տե՛ս **Красинский В.В.,** Защита государственного суверенитета. монография, М., «Норма», 2017, էջ 215:

[2] Տե՛ս **Филиппова И.С.,** Концепции ограничения государственной власти: теоретикоправовое исследование. Дис., Университет Лобачевского, Н-Н., 2006, էջ 12:

[3] Տե՛ս **Монтескье Ш.Л.,** Размышления о причинах величия и падения римлян. О духе законов / Пер. с фр. избр. произв. М., 1955, էջ 429:

լու[1] այդ արժեքները: Եթե մարդու իրավունքների անձեռնմխելիությունը դիտարկվում է պետության կողմից արդյունավետ իրավական գործիքակազմ ստեղծելու պարտականության համատեքստում[2], ապա այն կարող է ընկալվել որպես լիազորություն, որը կնշանակի հանրային իշխանության մարմնի կողմից գործելու պահանջ ինչպես ընդհանրապես, այնպես էլ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ անկախ օրենսդրությամբ ամրագրված իրավական ընթացակարգերի առկայությունից: Այսպիսով, եթե հարցը իրավունքի տեսության մեջ սովորաբար դիտարկվում է պետության կողմից օրենքով որոշակի ընթացակարգերի ամրագրման անհրաժեշտության համատեքստում, ապա մենք այն այդպիսին դիտարկում ենք համապատասխան օրենսդրական կարգավորման բացակայության դեպքում ևս՝ հիմք ունենալով Սահմանադրության 3-րդ հոդվածը: Դրանով է պայմանավորված, որ սահմանադրական այս պահանջը կարող է մեկնաբանվել որպես հանրային իշխանության մարմնի՝ դասականից տարբերվող երկրորդ տիպի լիազորություն:

Նպատակահարմար ենք համարում ներկայացված մոտեցումը դիտարկել օրինակներով: Այսպես՝ փախստականներին բնակարանով ապահովելու պետության պարտավորությունը ինչպես միջազգային փաստաթղթերում, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ կոնկրետ իրավական ամրագրում չունի: Յուրաքանչյուր գործով հարաբերությունները կարող են կարգավորվել իրավական տարբեր ինստիտուտների կիրառմամբ: Սակայն յուրաքանչյուր գործով հարցի կարգավորումը պետք է դիտարկել հանրային իշխանության՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով սահմանափակվածությամբ: Այսպես՝ փախստականները բնակեցվել են պետական սեփականություն հանդիսացող և պետական մարմնի գույքի հաշվեկշռում ներառված տարածքներում, որտեղ պլանավորված էր շինարարություն իրականացնել: Փախստականները հայց են ներկայացրել դատարան՝ ձեռքբերման վաղեմության ուժով իրենց սեփականության իրավունքը նշված տարածքում ճանաչելու համար: Պե-

[1] Տե՛ս **Скоропупов Ю.И.**, Защита прав человека и гражданина – главная функция государства, Научная электронная библиотека «Киберленинка», Тула, մուտք՝ 01.12.2018, էջ 132:

[2] Տե՛ս նույն տեղը:

տական մարմինը հակընդդեմ հայց է ներկայացրել սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածքից փախստականների վտարման համար, որը բավարարվել է դատարանի կողմից: Թեև ձեռքբերման վաղեմության ինստիտուտի չկիրառումը դատարանի կողմից, մեր կարծիքով, իրավացի է, որովհետև ձեռքբերման վաղեմության ինստիտուտի կիրառման բոլոր տարրերը տվյալ դեպքում առկա չեն, սակայն միաժամանակ վտարման պահանջի բավարարումը բավականին խնդրահարույց է: Նախ՝ Սահմանադրությամբ ամրագրվում է, որ մարդու անօտարելի արժանապատվությունը իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Դա, բնականաբար, վերաբերում է նաև մարդու՝ արժանապատիվ կյանք ունենալու իրավունքին: Ոչ ոք չի կարող ենթարկվել անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի: Ուստի, թեև դատարանի այն դիրքորոշումը[1], ըստ որի՝ փախստականին բնակարան հատկացնելու իրավունքը բացարձակ իրավունք չէ, միգուցե արդարացված կարող է համարվել, սակայն բնակարանից նրա օտարումը կարող է որակվել անմարդկային և արժանապատվությունը խախտող վարքագիծ, ինչը չէր կարող անտեսվել դատարանի կողմից: Այստեղ գործում է հենց այդ հիմնարար իրավունքով սահմանափակված լինելու սահմանադրական պահանջը: Ուստի, մեր կարծիքով՝ պետական մարմինը չի կարող վտարել, իսկ դատարանը՝ բնակարանից վտարման պահանջը բավարարել, քանի դեռ հետևանքը անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արժանանալն է և արժանապատիվ կյանք ունենալու իրավունքից զրկվելը: Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, որից բխում է, որ, անկախ ներպետական օրենսդրությամբ հիմնական իրավունքի մեկնաբանությունից և կիրառությունից, հանրային իշխանության մարմինները պարտավորվում են հիմնական իրավունք-

[1] ՀՀ վարչական դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 18-ին թիվ ՎԴ/6923/05/14 գործով կայացրած որոշումը:

ներն ապահովել միջազգային պրակտիկային համահունչ: Ինչպես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր M.S.S. v Belgium and Greece, Application № 30696/09 գործով[1], դատարանը վերահաստատել է, որ չի կարող բացառվել այն հանգամանքը, որ պետությունը պատասխանատվություն է կրում Կոնվենցիայի 3-րդ հոդվածով, երբ դիմողը լիովին կախված է պետական աջակցությունից, հանդիպել է պաշտոնական անտարբերության՝ գտնվելով լուրջ զրկանքի վիճակում, կամ որն անհամատեղելի է մարդու արժանապատվության հետ: Այսպիսով, թեև տվյալ կացարանում փախստականի բնակվելու իրավական հիմքը չկա, այնուամենայնիվ, պետական մարմինը սահմանափակված է փախստականի հիմնարար իրավունքով և չի կարող նրա վտարման միջոցառումներ իրականացնել մինչև այն ժամանակ, քանի դեռ գործում է սահմանափակող արգելքը: Օրինակ՝ մինչև փախստականը նոր կացարան կստանա կամ բնակության այլ պայմաններ ձեռք կբերի: Իսկ անմիջական գործողությունն էլ դրսևորվում է նրանում, որ թեև օրենսդրական հստակ ամրագրում և կանոնակարգում պետական մարմնի համար չկա, սակայն այդ իրավունքի գործողության ուժով պարտականություն է առաջացնում պետական մարմնի համար: Այսպիսին է պետական մարմնի՝ հանրային իշխանության մարմին հանդիսանալու բնույթով պայմանավորված լիազորության դրսևորումը:

Նշվածի համատեքստում նպատակահարմար է բացահայտել նաև Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասով արտացոլված «սահմանափակվածություն» եզրույթը: Սահմանափակվածությունը առավելապես ենթադրում է գործելու արգելք, պասիվ վարքագիծ, կաշկանդում է որոշակի արարք դրսևորելու հնարավորությունը: Տեղեկատվական-հոգեբանական մակարդակում սահմանափակումը միայն բացասական ընկալում ունի (արգելք, պարտականություն, պատժի միջոց և այլն) և չի ներառում լիազորող միջոցները (թույլատրելիություն, խրախուսում և այլն), որոնք ղեկավարման գործընթացի իրավական խթաններ են[2]:

---

[1] Տե՛ս նաև *Budina v Russia,* Applicationno. 45603/05, 18 June 2009:

[2] Տե՛ս **Султыгов М.М.**, Конституционно-правовой режим ограничения государственной власти, Научная электронная библиотека диссертаций и авторефератов, Санкт-Петербург, 2005, էջ 364:

Անհրաժեշտ է, որ մարդու հիմնարար իրավունքներով և ազատություններով սահմանափակվածությունը դրսևորվի ոչ միայն անգործությամբ, այլ նաև գործողությամբ, իր մեջ գործելու պահանջ ներառի:

Այսպիսով, մեր կարծիքով, պետական մարմինների լիազորությունները հարկ է բաժանել երկու տեսակի՝

ա) լիազորություններ, որոնք պայմանավորված են տվյալ մարմնի կարգավիճակով և բխում են դրա գործառույթներից.

բ) լիազորություններ, որոնք բնութագրական են պետական մարմնին՝ պայմանավորված հանրային իշխանությունը ներկայացնելու հանգամանքով, և բնորոշ են հանրային իշխանությունը ներկայացնող մարմիններին:

Վերոնշյալ դասակարգումը կարող է իրականացվել ըստ հանրային իշխանության մարմինների սահմանադրաիրավական և վարչաիրավական գործառույթների: Այսպես՝ առանձնացվում են գործառույթներ, որոնք բխում են Սահմանադրությամբ հանրային իշխանության մարմնին վերապահված կարգավիճակից, և գործառույթներ, որոնք պայմանավորվում են վարչարարության իրականացմամբ: Ասվածի բնորոշ օրինակ թերևս կարող է լինել դատախազությունը, որի վեց ոլորտային լիազորությունները հստակ ամրագրված են Սահմանադրության 176-րդ հոդվածով: Սակայն դա արգելք չի հանդիսանում դատախազության համար իրականացնելու որոշակի գործառույթներ, որոնք պայմանավորված են սոսկ նրա՝ հանրային իշխանության մարմին լինելու փաստով: Այսպես՝ յուրաքանչյուր ոք կարող է դիմել դատախազություն և ստանալ իր մասին դատախազությունում առկա տեղեկությունները, համապատասխան պահանջներին բավարարող յուրաքանչյուր ոք կարող է դիմել դատախազություն՝ ծառայության անցնելու խնդրանքով և այլն: Այս դեպքում դատախազությունը ոչ թե դուրս է գալիս իր սահմանադրական լիազորությունների շրջանակից, այլ հանդես է գալիս որպես անձանց իրավունքների և ազատությունների իրացման մասով որոշակի պարտականություններ կրող հանրային իշխանության մարմին, ինչը դարձյալ նախատեսված է Սահմանադրությամբ:

Մեր կարծիքով՝ «սահմանափակված» տերմինը լիարժեք չի ամրագրում բերված օրինակի կարգավորումը, քանի որ տվյալ

դեպքում ներկայացվում էր ոչ թե իրավունքի խախտումից զերծ մնալու, այլ որոշակի գործողություն իրականացնելու պահանջ: Ուստի գտնում ենք, որ սահմանադրական իրավունքի տեսության զարգացումը պետք է ընթանա այն ուղղությամբ, որ ոչ թե օգտագործվի «սահմանափակվածություն» եզրույթը, այլ հիշյալ գաղափարը ձևակերպվի հետևյալ կերպ. «Հանրային իշխանությունը իր գործունեությունն իրականացնելիս գործում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների հիման վրա՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Նկատի ունենք, որ գերխնդիրը ոչ այնքան սահմանափակվածությունն է, որքան Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների երաշխավորված իրացումը:

Որպես օրինակ՝ քննարկման առարկա կարող է դառնալ ներկայումս աննախադեպ արդիականություն ձեռք բերած՝ Հանրապետության նախագահի անձեռնմխելիության իրավունքը, որը նշանակում է, որ Հանրապետության նախագահին իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել ու պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար: Սա Հանրապետության նախագահին վերագրվող սահմանադրական հատուկ պահանջ է: Եթե այլ երկրների սահմանադրություններում հիմնականում հանդիպում է այն դրույթը, ըստ որի՝ պետության նախագահը անձեռնմխելի է իր պաշտոնավարման ընթացքում[1], ապա մեր Սահմանադրությամբ Հանրապետության նախագահի անձեռնմխելիությունը շարունակվում է նաև պաշտոնաթողությունից հետո, սակայն միայն այն գործողությունների համար, որոնք բխել են իր կարգավիճակից:

Միաժամանակ հիշյալ կարգավորումը հիմք չէ ենթադրելու, որ Հանրապետության նախագահի գործողությունները, որոնք բխել են իր կարգավիճակից, կարող են հանգել սահմանադրական կարգի տապալմանը կամ սահմանադրական կարգի հիմունքների խախտմանը, այդ թվում՝ Սահմանադրության 3-րդ հոդվածի պա-

[1] Տե՛ս **Масловская С.**, Неприкосновенность как элемент конституционно-правового статуса президента в зарубежных странах, Журнал Белорусского государственного университета, Минск, Республика Беларусь, մուտք՝ 01.12.2018, էջ 4:

հանջների: Հանրապետության նախագահի համար ևս գործում է ընդհանուր կանոնը՝ սահմանափակվածությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով: Հետևաբար Հանրապետության նախագահի գործողության՝ վերջինիս կարգավիճակից բխելու հիմնավորումը չի կարող համարվել իրավաչափ, եթե այդ գործողությունն արդարացված չէ Սահմանադրության 3-րդ հոդվածի իմաստով: Իր կարգավիճակից բխող գործողությունները ևս սահմանափակված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով, ուստի գործողությունների իրավաչափությունը պետք է գնահատվի Հանրապետության նախագահի գործողության (հրամանագիր, կարգադրություն) հիմքում դրված հիմնավորմամբ: Այսպես՝ սահմանափակված լինելու կանոնը գործում է մինչև այն պահը, երբ անհրաժեշտություն է առաջանում կիրառելու մյուս կանոնը. արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով: Հետևաբար միայն այս հիմքերի առկայության դեպքում կարող է բացառություն նախատեսվել պետական մարմինների համար: Ուստի Հանրապետության նախագահի անձեռնմխելիությունը կարող է հիմնավորվել և կարգավիճակից բխող համարվել այս հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում միայն:

Անհրաժեշտ է նշել, որ եթե պետական մարմնի կարգավիճակով պայմանավորված և նրա գործառույթներից բխող լիազորությունները սովորաբար ամրագրում են ստանում համապատասխան պետական մարմնի վերաբերյալ հատուկ օրենքով, ապա մեր կողմից դիտարկվող երկրորդ տիպի լիազորությունների ամրագրման իրավական աղբյուրներն ավելի ցրված են և ավելի շատ ամրագրված կարող են լինել ընդհանուր օրենքներում:

Դիտարկենք պետական մարմնի կողմից մարդու և քաղաքացու իրավունքներով պայմանավորված ակտիվ գործողություն դրսևորելու հետևյալ երկու օրինակները:

1. Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես

նան Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: 2018 թվականին, երբ ՀՀ-ում վարչապետն ու ԱԺ-ն կուսակցական տարբեր շահեր էին ներկայացնում, և ԱԺ-ն չէր արտացոլում ժողովրդի իրական ներկայացուցչությունը, հրամայական է դառնում այն, թե ինչ անկախ իրավական լծակներ են առկա՝ ապահովելու ժողովրդաիշխանությունը: Նշվածի կապակցությամբ կարգավորում է առկա, օրինակ, Ֆրանսիայի՝ 1789 թվականի «Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների» հռչակագրում, այսպես՝ ցանկացած հասարակություն, *որը չի երաշխավորում իրավունքը* և չի իրականացնում իշխանությունների տարանջատում, գործնականում չունի սահմանադրություն և սահմանադրական օրինական կարգ[1]: Տվյալ դեպքում պետք է իրավաչափ համարել ԱԺ իրավասությունը՝ գործելու սահմանադրական կարգին համահունչ և ապահովելու ժողովրդի իրական ներկայացուցչությունը ԱԺ-ում: Հետևաբար Ազ-ն՝ որպես հանրային իշխանության կրող, լիազորված է գործելու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ ապահովելու իրական ներկայացուցչությունը ԱԺ-ում:

2. Սահմանադրության 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք: «**Հայաստանի Հանրապետության** քաղաքացիության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխան, անկախ այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքից, իրավունք ունի ձեռք բերելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ծնողների գրավոր համաձայնությամբ:

Մինչ «**Հայաստանի Հանրապետության** քաղաքացիության մասին» օրենքի 11-րդ հոդվածի՝ *06.12.17 թ.* **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապե-**

[1] Տե՛ս **Баглая М.В., Лейбо Ю.И.** и **Энтина Л.М.**, Конституционное право зарубежных стран, Москва, Издательство «Норма», 2004, էջ 447:

տության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» *ՀՕ-251-Ն օրենքով փոփոխությունները, այն դեպքում, երբ հնարավոր չէր ձեռք բերել երկու ծնողների համաձայնությունը, երեխայի ՀՀ քաղաքացիության ձեռքբերումը հնարավոր էր, եթե* երեխան ծնվել էր Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում էր քաղաքացիություն չունեցող անձ, կամ ծնողները մշտապես բնակվում էին Հայաստանի Հանրապետությունում: Կոնկրետ գործի շրջանակներում երեխայի հայրը Թուրքիայի քաղաքացի էր և բնակվում էր Թուրքիայում, իսկ մայրը ՀՀ քաղաքացի էր, սակայն երեխայի համար ՀՀ քաղաքացիություն չէր կարողանում ձեռք բերել, քանի որ երեխան ՀՀ-ում չէր ծնվել: Տվյալ դեպքում *լիազոր մարմինը կոնկրետ դեպքով հարցը լուծում է երեխայի՝ Սահմանադրության նորմով ամրագրված հիմնարար իրավունքի անմիջական կիրառման միջոցով՝ առաջնորդվելով երեխայի՝ քաղաքացիության ձեռքբերման իրավունքով: Թեև լիազոր պետական մարմինը իրավասու էր քաղաքացիության ձեռքբերման ընթացակարգն իրականացնելու երկու ծնողների համաձայնության դեպքում կամ «**Հայաստանի Հանրապետության** քաղաքացիության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքերով, սակայն, սահմանափակված լինելով երեխայի՝ քաղաքացիության ձեռքբերման սահմանադրական իրավունքով, լիազորված է ապահովելու այդ իրավունքի իրացումը:*

Եթե ուշադրություն դարձնենք բերված օրինակներին, ապա կտեսնենք, որ այդ օրինակներում առկա է որոշակի գործողություն իրականացնելու հանձնարարական, ինչպես, օրինակ, քաղաքացիության ձեռքբերման պահանջն էր:

Այսպիսով, ամփոփելով անմիջական ժողովրդաիշխանության առնչությամբ մեր դատողությունները, նպատակահարմար ենք համարում առաջադրել հետևյալ եզրահանգումները.

ա) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների հարգումն ու պաշտպանությունը և այդ իրավունքներով ու ազատություններով, որպես անմիջական գործող իրավունքի, սահմանափակված լինելը հնարավորություն է տալիս հանրային իշանության մարմնին իրականացնելու գործողությու-

ներ՝ կաշկանդված չլինելով Սահմանադրությամբ և օրենքով տվյալ մարմնի համար թվարկված լիազորությունների շրջանակով:

բ) Առանձին դեպքերում պետական մարմինը իրավասու է իրականացնելու լիազորություններ, որոնք բխում են ոչ թե իր գործառույթներից, այլ պայմանավորված են հանրային իշխանության մարմին հանդիսանալու հանգամանքով:

գ) Անհրաժեշտ է ավելի ընդգրկուն ձևակերպմամբ ամրագրել Սահմանդրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը՝ սահմանելով. «Հանրային իշխանությունը իր գործունեությունն իրականացնելիս գործում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների հիման վրա՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

НЕКОТОРЫЕ ОСНОВОПОЛАГАЮЩИЕ ВОПРОСЫ ОБ ОГРАНИЧЕНИИ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ ОСНОВНЫМИ ПРАВАМИ И СВОБОДАМИ ЧЕЛОВЕКА

Сосэ Барсегян

Аспирант кафедры конституционного права ЕГУ

Целью данной статьи является изучение полномочий органов государственной власти, закрепленных в Конституции, принимая во внимание основные права и свободы человека и гражданина. В статье рассмотрен теоретический подход к ограничению полномочий органов государственной власти и их практические проявления. По результатам проведенного исследования мы предлагаем ограничить полномочия органов государственной власти, а основные права и свободы человека, рассматривать как второй тип полномочий, что обусловлено характером публичной власти государственных органов. Это обеспечит гарантированную реализацию прав и свобод человека и гражданина государственными органами независимо от правовых механизмов.

SEVERAL FUNDAMENTAL QUESTIONS CONCERNING THE LIMITATION OF STATE POWER BY FUNDAMENTAL HUMAN RIGHTS AND FREEDOMS

Sose Barseghyan

PHD Student at the Chair of Constitutional Law, YSU

The purpose of the article is to discuss the peculiarities of the power of the state bodies defined in the Constitution, taking into account fundamental human rights and freedom. The article reveals the theoretical approach to the limitations of state power and their practical implementation. As a result, it is proposed to consider the limitation of state power by the basic human rights and freedom as a second type of the state body's authority different from the classic approaches, which conditioned by the nature of the state body representing public authority and ensure the guaranteed implementation of the basic human rights and freedom by the state bodies regardless of the legal mechanisms.

Բանալի բառեր՝ *հանրային իշխանության սահմանափակվածություն, մարդու հիմնարար իրավունքներ, պետական մարմինների լիազորություն, հիմնարար իրավունքներով և ազատություններով սահմանափակվածություն:*

Ключевые слова: *ограничение государственной власти, основные права человека, полномочия органов государственной власти, ограничение основными правами и свободами человека.*

Key words: *the limitation of state power, fundamental human rights, authority of the state body, the limitation of state power by fundamental human rights and freedoms.*

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Արմինե Դանիելյան[1]

Պետության պատասխանատվության տեսության հիմնադրույթները ժամանակակից իրավագիտության մեջ ընկալվում են որպես սկզբնաղբյուր՝ հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման արդի ինստիտուտի ձևավորման համար: Ինչպես Ռ. Իերինգի ուսմունքը՝ պետության ինքնասահմանափակման մասին[2], այնպես էլ Գ. Ելինեկի տեսակետը՝ պետության՝ սեփական իրավունքով սահմանափակված լինելու և սահմանադրական կարգավորումների ձգտելու մասին, ըստ որոնց՝ պետական իշխանության սահմանագիծը որոշվելու է ոչ միայն և ոչ այնքան պետության կամահայտնության նորմավորման միջոցով, այլև առավելապես անհատի իրավունքների երաշխավորված անխախտելիությունը ճանաչելով, իրենց արտացոլումն են գտնում պետության պատասխանատվության ժամանակակից տեսության մեջ[3]:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածը հռչակում է, որ Արցախի Հանարպետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է[4]: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների հարգումը և պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

Վերոգրյալ սահմանադրական նորմը պետության առաջնահերթ խնդիրն է համարում մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, որի լուծումն առավելապես

---

[1] ԱրՊՀ իրավունքի ամբիոնի հայցորդ, գիտական ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Գ. Բ. Դանիելյան:

[2] Տե՛ս **Ihering R.** von. Zweck im Recht. Erster Band. Leipzig: Verlag von Breitkopf & Haertel, 1877, հասանելի է հետևյալ հղումով՝ https://archive.org/details/ derzweckimrecht04jhergoog/page/n197:

[3] Տե՛ս **Еллинек Г.**, Общее учение о государстве, СПб., Юридический центр Пресс, 2004, էջ 359:

[4] Տե՛ս ԼՂՀՊՏ 2017.02.28/04 (318):

կարևորվում է այն դեպքում, երբ մարդու իրավունքները խախտվել են հանրային իշխանության մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների կամ անգործության հետևանքով:

Արցախի Հանրապետության՝ որպես իրավական պետության գլխավոր խնդիրներից մեկը պետք է լինի հենց պետական մարմինների գործողությունների հետևանքով անձանց խախտված իրավունքների վերականգնումը և հասցված վնասների հատուցումը: Սահմանադրական բարեփոխումների հետևանքով Սահմանադրության 62-րդ հոդվածով ամրագրվեց, որ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի փոխհատուցման իրավունք:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտի լիարժեք կիրառման համար անհրաժեշտ են համապատասխան օրենսդրական կարգավորումներ:

Նշված ոլորտի ուսումնասիրության շրջանակներում հետազոտության համալիրությունն ապահովելու նկատառումով հարկ է անդրադառնալ հետևյալ հարցադրումներին:

1. Ինչպիսի՞ն է պետության կամ համայնքի կողմից պատճառված վնասի հատուցման ոլորտում ծագող հարաբերությունների ընդհանուր բնութագիրը: Խորհրդային շրջանում պետության կողմից պատճառված վնասի համար նախատեսված պատասխանատվության հարցերը հետազոտողներից ոմանք այն տեսակետին էին, որ ցանկացած հակաիրավական գույքային վնասի պատճառում հանգեցնում է քաղաքացիաիրավական պատասխանատվության՝ անկախ նրանից, թե ինչ բնույթ ունի իրավախախտումը, իրավունքի որ ճյուղի նորմով է սահմանված այդպիսի գործողության կատարման արգելքը, որով պատճառվել է գույքային վնասը[1]:

---

[1] Տե՛ս, օրինակ, **Братусь С.Н.**, Юридическая ответственность и законность. Очерк теории, М., Юридическая литература, 1976, էջ 148, **Рахмилович В.А.**, О противоправности как основании гражданско-правовой ответственности // Советское государство и право, 1964, № 3, էջ 55:

Պետության կամ համայնքի կողմից պատճառված վնասի հատուցման հարաբերությունների բնույթի վերաբերյալ ներկայումս տեսական գրականության մեջ մեկ միասնական մոտեցում դեռևս չի ձևավորվել: Օրինակ՝ Օ. Վ. Միխայլենկոն քննադատել է հատուցման հանրային իրավական մոտեցումը, ըստ որի՝ պատճառված վնասի հատուցման հարաբերությունների իրավաբանական բնույթը որոշվում է ըստ վնասի պատճառման բնագավառի, և հիմնավորել է հետազոտվող հարաբերությունների միանշանակ մասնավոր իրավական (քաղաքացիաիրավական) պատկանելիությունը՝ հերքելով հանրային շահերի խախտումը և նորմատիվ կարգավորման կարգը որպես հարաբերությունների իրավական բնույթի որոշիչ չափանիշներ դիտարկելը[1]:

Յու. Ն. Անդրեևը ընդգծել է «հանրային իշխանության իրականացման բնագավառում պետական և մունիցիպալ մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից վնասի պատճառման համար»[2] քաղաքացիաիրավական պատասխանատվություն սահմանելու անհրաժեշտությունը: Իսկ որոշ հեղինակներ նշում են, որ ցիվիլիստական կառույցների բացարձականացումը օրինաստեղծ և իրավակիրառ պրակտիկայում դիմազրկում է պետության ոչ իրավաչափ գործողությունների հանրային բնույթը: Վերջիններս առաջարկում են տարանջատել վնասի հատուցման իրավական ռեժիմները՝ ըստ այն պատճառելու հիմքերի: Այսպես՝ պետության կողմից իր պայմանագրային պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը մասնավոր-իրավական ռեժիմի հիմք է, իսկ անօրինական հանրային գործողությունների կատարումը՝ հանրային-իրավականի[3]:

---

[1] Տե՛ս **Михайленко О.В.**, Имущественная ответственность за вред, причиненный осуществлением публичной власти: теоретические аспекты и проблемы ее реализации на практике, М., «Волтерс Клувер», 2007, էջ 38:

[2] Տե՛ս **Андреев Ю.Н.**, Ответственность государства за причинение вреда: цивилистические аспекты, Санкт-Петербург, Юридический центр Пресс, 2013, էջ 4:

[3] Տե՛ս **Городилова И.А., Соколова Т.Т.**, Возмещение вреда, причиненного гражданину государством: институт публичного права или частноправовая монополия? // Российский юридический журнал, 2016, № 1, էջ115–122:

Պետության (համայնքի) կառավարչական գործունեության հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ գիտական բանավեճը շարունակվում է երկու հակասական ճյուղային մոտեցումների պատճառով, որոնք արտահայտված են երկու հիմնարար կանխավարկածների հարթությամբ՝ գլխավոր դելիկտի կանխավարկածի, որը բնորոշ է քաղաքացիական իրավունքին, և հանրային վարչակարգի գործողությունների (որոշումների) իրավաչափության կանխավարկածի, որն արտացոլում է վարչական իրավունքի յուրահատկությունը: Հիմնական հակասությունը, որն էական նշանակություն ունի հատուցման ինստիտուտի համար, այն է, որ առաջին դեպքում վնասը ենթակա է հատուցման, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, իսկ երկրորդ դեպքում վնասը ենթակա է հատուցման օրենքով նախատեսված դեպքում: Դրա հետ մեկտեղ գլխավոր դելիկտի բանաձևը ենթադրում է, որ ցանկացած վնաս հակաիրավական և մեղավորությամբ պատճառված է, եթե այլ բան չի ապացուցվել: Իսկ հանրային-իրավական կարգավորման կանխավարկածը հիմնականում պահանջում է ապացուցել իրավասու սուբյեկտի այն գործողությունների հակաիրավական և մեղավոր լինելը, որոնցով վնաս է պատճառվել[1]:

Արցախի Հանրապետությունում վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հարաբերությունների կարգավորմանն են նվիրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[2] 18-րդ, 1066-րդ ու 1067-րդ հոդվածները և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԱՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)[3] 7-րդ բաժինն ամբողջությամբ: Այսպիսով՝ Արցախի Հանրապետությունում վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտը կարգավորվում է և՛ մասնավոր-իրավական (քաղաքացիական), և՛ հանրային-իրավական (վարչական) նորմերով, ինչը տարակարծությունների տեղիք է տալիս:

---

[1] Տե՛ս **И.И.Маскаева**, Проблемы возмещения вреда, причиненного действиями (бездействием) или решениями государственных органов их должностных лиц в рамках административного процесса, «Вестник РУДН», серия юридические науки, 2016 № 4, էջ 128:

[2] Տե՛ս ՀՀՊՏ 2016.04.22/04 (295):

[3] Տե՛ս ՀՀՊՊՏ 2015.05.25/09 (276):

Հայրենական իրավաբանական գրականության մեջ և դատական պրակտիկայում այս հարցին արդեն որոշ չափով անդրադարձ եղել է, մասնավորապես ՀՀ Վճռաբեկ դատարանը հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ»: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ նույն բաժնի դրույթներին համապատասխան:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վարչական մարմնի իրականացրած վարչարարության հետևանքով անձին պատճառված վնասի հատուցման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են բացառապես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնի նորմերով[1]:

Հետևաբար, մեր կարծիքով, վարչարարությամբ պատճառված վնասին առնչվող հարցերը հիմնականում քաղաքացիաիրավական կարգավորման առարկայի շրջանակներից դուրս են, քանի որ այս պարագայում խոսքը վերաբերում է վարչական մարմնի կողմից իր իրավազոր հանրային իշխանական գործառույթների իրականացմամբ պատճառված վնասի հատուցմանը:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հարցում և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Արցախի Հանրապետությունը որդեգրել են հանրային-իրավական կարգավորման մոդելը, և դա, մեր կարծիքով, իրավաչափ է: Միաժամանակ գտնում ենք, որ քննարկվող ոլորտում և՛ քաղաքացիաիրավական,

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N ԵՔԴ/0736/02/08 գործով որոշումը:

և՛ հանրային-իրավական կարգավորման մոդելները գոյության իրավունք ունեն, պարզապես հարկ է հստակեցնել, թե դրանցից որը ինչ չափով է առնչվում քննարկվող հարցադրումներին: Այսպես՝ պատճառված վնասի ընթացակարգը, դրա միջոցով կայացվող ակտերի գնահատականը հարկ է դիտարկել բացառապես վարչաիրավական հարթությամբ, մինչդեռ պատճառված վնասի չափի ու հատուցման եղանակներին առնչվող հարաբերությունների կարգավորման հիմքում նպատակահարմար է դնել քաղաքացիաիրավական կարգավորումները:

2. Ո՞վ է վնաս պատճառելու համար պատասխանատու սուբյեկտը: Առաջին հայացքից այս հարցի պատասխանը սպառիչ կերպով տրված է Օրենքի 95-րդ հոդվածով, որից հետևում է, որ ոչ իրավաչափ վարչարարության, իսկ օրենքով նախատեսված դեպքերում իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է Արցախի Հանրապետությունը, եթե վարչարարությունն իրականացրել է պետական վարչական մարմինը, այդ թվում՝ տարածքային կառավարման մարմինը կամ համայնքը, եթե վարչարարությունն իրականացնելու է տեղական ինքնակառավարման մարմնի կողմից: Ընդ որում՝ առաջին դեպքում վնասի հատուցումը կատարվում է պետական բյուջեի, իսկ երկրորդ դեպքում՝ համապատասխան համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Խնդիրն այն է, որ վարչական վարույթ իրականացնելու անքակտելի բաղադրիչը իշխանական լիազորության առկայությունն է, և այս տեսանկյունից խիստ խոցելի են այն դատողությունները, ըստ որոնց՝ տնտեսական գործունեության ոլորտում պետության միջամտությունը նվազագույնի հասցնելու, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերը բացառելու նկատառումով նպատակահարմար է պետական գործառույթների մի որոշ հատված վերապահել մասնավոր կազմակերպություններին: Այնպիսի պետական գործառույթներ, ինչպիսիք են հավատարմագրումը, որակի ստուգումը և այլն, մասնավոր կազմակերպությունների վերապահելը գործնականում հանգեցրել է մի այնպիսի իրավիճակի, երբ ակնհայտորեն խախտվում է տնտեսական մրցակցության սկզբունքը: Փաստորեն, մրցակցության մեջ գտնվող տնտեսական կազմակերպություններից մեկը անհեռատես պետական քաղաքականության շնորհիվ

մեկ այլ կազմակերպության նկատմամբ ձեռք է բերել իշխանական լիազորություններ[1]:

Հարց է առաջանում նշված կազմակերպությունների կողմից իրենց «իշխանական» լիազորությունների իրականացման կապակցությամբ՝ գործողության կամ անգործության հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցման հարաբերությունների նկատմամբ արդյոք կիրառելի՞ են Օրենքի դրույթները, և պետությունն արդյոք պատասխանատո՞ւ է նման կազմակերպությունների ոչ իրավաչափ գործողության համար:

Օրենսդրության համապատասխան դրույթների վերլուծությունից հետևում է, որ նման կազմակերպությունները, ըստ Օրենքի 3-րդ հոդվածում ամրագրված բնորոշման, վարչական մարմին չեն համարվում, հետևապես վարչարարություն իրականացնել չեն կարող, և, փաստորեն, պետությունը կամ համայնքը նման կազմակերպության ոչ իրավաչափ գործողության համար պատասխանատվություն չի կրում: Այդպիսի կազմակերպությունների կողմից անձին պատճառված վնասի հատուցման հարաբերությունները կարող են կարգավորվել քաղաքացիական իրավունքի նորմերով: Սակայն մասնավոր կազմակերպությունների կողմից «իշխանական» լիազորությունների իրականացման հետևանքով պատճառված վնասների հատուցման եղանակները խիստ սահմանափակված են, մասնավորապես՝ նախկին դրության կամ համարժեք այլ դրության վերականգնման հարցում, այսինքն՝ ռեստիտուցիան այս պարագայում անհնար է, քանի որ մասնավոր անձինք և մասնավոր կազմակերպությունները, որոնք գործում են պետության հանձնարարությամբ կամ իրականացնում են վերջինիս պատվիրակված լիազորությունը, կարող են շատ դեպքերում հատուցել վնասը միայն դրամական միջոցներով:

Այսպիսով՝ անձին պատճառված վնասի հատուցման ինստիտուտը, նախատեսված լինելով ինչպես քաղաքացիական, այնպես էլ վարչական օրենսդրությամբ, էապես իրարից տարբերվող նորմեր է բովանդակում: Վնասի հատուցումը՝ որպես քաղաքացիական պատասխանատվության միջոց, վրա է հասնում իրավախախ-

[1] Տե՛ս **Դանիելյան Գ.,** Վարչական վարույթ և դատավարություն (ուսումնական ձեռնարկ), Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2011, էջ 117:

տում կատարելու դեպքում, իսկ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում օրենքով սահմանված դեպքերում նախատեսված է նաև իրավաչափ վարչարարության իրականացման համար: Քաղաքացիական պատասխանատվության դեպքում անձը կարող է օգտվել իրավական պաշտպանության բոլոր միջոցներից, մինչդեռ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման դեպքում իրավունքի պաշտպանության ոչ բոլոր միջոցներն են կիրառելի (տույժ, տուգանք): Այդպիսի դիրքորոշում է հայտնել նաև ՌԴ Սահմանադրական դատարանը[1], ըստ որի՝ նշված հարաբերությունները հիմնականում կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ: Քաղաքացիական իրավահարաբերություններում վնասի հատուցման եղանակների որևէ առաջնահերթություն սահմանված չէ, մինչդեռ Օրենքի 98-րդ հոդվածն ամրագրում է վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման եղանակների առաջնահերթություն: Վնասի հատուցման եղանակներից օրենսդիրը առաջնայնությունը վերապահում է վարչարարությամբ առաջացած հետևանքների վերացմանը, և միայն դրա անհնարինության կամ ոչ բավարար լինելու, ինչպես նաև հետևանքների վերացման համար պատճառված գույքային վնասի չափը գերազանցող ծախսերի անհրաժեշտության դեպքում է, որ օրենսդիրը սահմանում է դրամական միջոցներով վնասի հատուցման եղանակին անցնելու հնարավորություն: Եղանակների նկատմամբ այսպիսի ընտրանքային մոտեցումը, ըստ պրոֆեսոր Գ. Դանիելյանի, միանգամայն հիմնավորված է, քանի որ այն նպաստում է կամայականությունների նվազմանը, վարչարարության որակի բարելավմանն ու կոռուպցիոն ռիսկերի բացառմանը, և տվյալ դեպքում ելակետ է ընդունվել այն, որ վարչական մարմինը պետք է զրկված լինի սոսկ դրամական միջոցներով վնասը հատուցելու միջոցով կամայական վարչարարությունը շարունակելու հնարավորությունից[2]:

Վերոգրյալից հետևում է, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցմանը, ի տարբերություն քաղաքացիական իրավա-

---

[1] Տե՛ս Определение Конституционного Суда РФ от 09 февраля 2016 г., № 213 - О «По запросу Верховного Суда РФ о проверке конституционности статьи 32.2 Кодекса РФ об административных правонарушениях» // Справочная правовая система Консультант Плюс:

[2] Տե՛ս **Դանիելյան Գ.**, նշված աշխատությունը, էջ 133:

հարաբերություններից բխող վնասի հատուցման, մեր կարծիքով, *բնորոշ է ոչ թե փոխհատուցման, այլ իրավավերականգնող գործառույթ*:

Պետության որոշ իշխանական լիազորությունների պատվիրակումը մասնավոր անձանց չպետք է հանգեցնի նրան, որ այս ճանապարհով պետությունը հնարավորություն ստանա խուսափելու Սահմանադրությամբ ստանձնած իր որոշ, այդ թվում՝ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պարտականությունների կատարումից: Ուստի անհրաժեշտ է Օրենքում սահմանել այնպիսի դրույթ, ինչպիսին սահմանված է, օրինակ, Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքի 208-րդ հոդվածով, ըստ որի, եթե մասնավոր անձը որոշակի գործունեություն է իրականացնում պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի հանձնարարությամբ կամ պատվիրակված լիազորությունների հիման վրա, ապա նման գործունեությամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրում են պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինները[1]:

Մեր օրենսդրության մեջ նույնաբովանդակ հոդվածի առկայությունը հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնելու անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, իսկ դրանց խախտվելու դեպքում՝ վերականգնումն ու հատուցումը:

Այսպիսով, ամփոփելով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավական հիմքերի բարելավման վերաբերյալ մեր դատողությունները, նպատակահարմար ենք գտնում ընդգծել, որ հարկ է տարբերակել պատասխանատվության հիմքերը՝ պայմանավորված այն հանգամանքով, թե կոնկրետ ինչ լիազորությամբ է իրականացվել վարչարարությունը՝ տվյալ վարչական մարմնի նախաձեռնությա՞մբ, թե՞ վերադաս մարմնի հանձնարարությամբ: Իհարկե, քննարկվող դեպքում հարկ կլինի համարժեքորեն հաշվի առնել նաև այն հանգամանքը, թե որքանով են

[1] Տե՛ս Законы об административном производстве Азербайджана, Армении и Грузии, GTZ, 2007, էջ 178:

պահպանվել ոչ իրավաչափ հանձնարարության կատարման վերաբերյալ իրավական նորմերը:

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ВОЗМЕЩЕНИЯ УЩЕРБА, ПРИЧИНЕННОГО АДМИНИСТРАТИВНОЙ ДЕЯТЕЛЬНОСТЬЮ

Армине Даниелян
Соискатель кафедры права АрГУ

Данная статья посвящена изучению проблемных аспектов компенсации ущерба, возникших в результате действий (бездействия) или решений органов государственного управления и должностных лиц. В статье анализируется система нормативного регулирования этих отношений, выявляется особенность реализации права на возмещение ущерба, причиненного государством в результате его административной деятельности. Особое внимание уделено дискуссионности вопроса о правовой природе регулируемых отношений, проблеме определения нормативной базы компенсации, а также поднимается вопрос об ответственности частных лиц и организаций, которые осуществляют какую-либо деятельность на основании делегирования или поручения органов государственного управления, или местного самоуправления (управления), и которые по своей сути являются властными. По итогам проведенного исследования мы предлагаем внести соответствующие изменения в законодательство, которые позволят закрепить особый порядок ответственности за деятельность подобных лиц и организаций.

ACTUAL PROBLEMS OF COMPENSATION FOR HARM CAUSED BY ADMINISTRATIVE ACTIVITIES

Armine Danielyan
Applicant of the ArSU Chair of Law

This article is devoted to problem aspects of indemnification which resulted from actions (inaction) or decisions of bodies of public administration and their public officials. The author analyzes system of standard regulation of these relations revealing features of realization of the right for compensation of the harm done by the state as a result of its administrative activity. The special attention is paid to debatability of a question of the legal nature of the adjustable relations, a problem of

definition of a standard basis of the indemnification. The article also raises the issue of the responsibility of individuals and organizations that carry out any activity on the basis of delegation or assignment of government bodies or local self-government (administration) and are essentially authoritative. The author makes a proposal to make the corresponding changes in the legislation, which would fix a special procedure for responsibility for the activities of such persons and organizations.

Բանալի բառեր՝ *վարչական պատասխանատվություն, քաղաքացիական պատասխանատվություն, վարչարարությամբ պատճառված վնաս, վնասի հատուցման եղանակ, պատվիրակված լիազորություն:*

Ключевые слова: *административная ответственность, гражданско-правовая ответственность, причиненный администрацией ущерб, способ компенсации, делегированные полномочия.*

Keywords: *administrative liability, civil liability, damage caused by the administration, compensation method, delegated authority.*

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ

Սոսի Ալեքսանյան[1]

Համաձայն Արցախի Հանրապետության[2] Սահմանադրության 87-րդ հոդվածի՝ Հանրապետության նախագահը[3] պետության գլուխն է: Հանրապետության նախագահը գործադիր իշխանության ղեկավարն է:

Անկախության ձեռքբերումից հետո /1991 թվականի սեպտեմբերի 2/ Նախագահի ինստիտուտն Արցախում հիմնվել է 1994 թվականի դեկտեմբերի 21-ին՝ Գերագույն խորհրդի որոշմամբ, և առաջին նախագահ է ընտրվել հանրապետության ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

2006 թվականի դեկտեմբերի 10-ին համաժողովրդական քվեարկությամբ նորանկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովուրդն ընդունել է իր առաջին Սահմանադրությունը, որը սահմանել էր կառավարման կիսանախագահական ձև: Գոյություն ուներ իշխանության տարանջատում, որտեղ օրենսդիր իշխանությունն իրականացնում էր Ազգային ժողովը, գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, իսկ դատական իշխանությունը՝ ընդհանուր իրավասության դատարանները: Հանրապետության նախագահը պետության գլուխն էր, հետևում էր Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը[4]:

---

[1] ԱրՊՀ իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Վ. Ն. Այվազյան:

[2] Համաձայն Արցախի Հանրապետության՝ 2017 թվականի փետրվարի 20-ի Սահմանադրության 1-ին հոդվածի 2-րդ կետի՝ *Արցախի Հանրապետություն* և *Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն* անվանումները նույնական են:

[3] Պետք է նկատել, որ ԼՂՀ՝ 2006 թվականի դեկտեմբերի 10-ի Սահմանադրության տեքստում երկրի «նախագահի» պաշտոնը գրված էր մեծատառով: Իսկ ահա 2017 թվականի փետրվարի 20-ի Սահմանադրության տեքստում «նախագահին» արդեն գրվում է փոքրատառով, որը համապատասխանում է հայոց լեզվի ուղղագրական կանոններին:

[4] ԼՂՀ՝ 2006 թվականի դեկտեմբերի 10-ի Սահմանադրության 61-րդ հոդված:

2017 թվականի փետրվարի 20-ին[1] կրկին համաժողովրդական քվեարկությամբ Արցախում ընդունվել է նոր Սահմանադրություն: Դժվար է հիմնավոր ու արդարացնող պատճառներ գտնել, թե ինչու են Արցախի իշխանությունները որոշել փոխել երկրի մայր օրենքն ու ընդունել նորը: Հնարավոր է՝ դա կապված է եղել ՀՀ-ում նոր Սահմանադրության ընդունման հետ, ինչն իներցիայի ուժով կիրառվել է նաև Արցախում: Սակայն, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, որտեղ կիսանախագահական կառավարման ձևը փոխարինվեց խորհրդարանականով, Արցախում տեղի ունեցավ հակառակ գործընթացը՝ կիսանախագահականից անցում կատարվեց նախագահական կառավարման: Պետական-քաղաքական ու հասարակական որոշ գործիչներ գտնում էին, որ հայկական երկու պետությունների համար չպետք է ընտրել կառավարման տարբեր ձևեր (մանավանդ որ ԱՀ-ի՝ որպես վարչա-քաղաքական առանձին միավորի վերջնական նպատակը ՀՀ-ին միանալն է), իսկ այլ փորձագետներ ՀՀ-ի համար վաղաժամ էին համարում կառավարման խորհրդարանական ձևի ընտրությունը (այն հատուկ է առավել բարձր իրավագիտակցություն ու զարգացման մակարդակ ունեցող պետություններին): Առավել փաստարկված էր հնչում այն տեսակետը, որ ԱՀ-ի համար կառավարման խորհրդարանական հանրապետական ձևը կարող է անարդյունավետ, պարզապես անհեռանկարային լինել՝ հաշվի առնելով ոչ միայն Արցախի տնտեսական ու իրավագիտակցության ցածր մակարդակը, այլև Ադրբեջանի հետ չդադարող ռազմական ընդհարումների առկայության փաստը, որը պահանջում է համապատասխան միջոցառումների օպերատիվ կազմակերպում, իսկ դա բավական դժվար է խորհրդարանական հանրապետության դեպքում:

Սահմանադրության փոփոխության մյուս հավանական պատճառն այն է, որ գործող իշխանությունները ցանկանում էին երեք տարով երկարաձգել իրենց գոյությունը. նոր Սահմանադրության հիմնական դրույթներն ուժի մեջ են մտնելու 2020 թվականից, ինչն իշխող ուժին հնարավորություն է տալիս նորից առա-

[1] Թե՛ առաջին, թե՛ երկրորդ Սահմանադրությունների ընդունման ամսաթվերը (համապատասխանաբար՝ դեկտեմբերի 10 և փետրվարի 20) ամենևին էլ պատահական չեն ընտրվել. դրանք արցախյան ժողովրդի համար ունեն պատմական նշանակություն:

ջադրվելու ընտրություններին, այս անգամ՝ որպես կառավարման նոր ձևի պետության իշխանական մարմինների ներկայացուցիչներ:

Նոր Սահմանադրությամբ երկիրը կիսանախագահական կառավարման ձևից անցում կատարեց դեպի նախագահականը, որը, փաստորեն, նորություն չէ արցախյան իրականության համար: Նկատելի է այն հանգամանքը, որ ԱՊՀ երկրներում նախագահը, ինչպես նախագահական, այնպես էլ կառավարման խառը ձեւ ունեցող հանրապետություններում, օժտված է բավականին լայն լիազորություններով: Դրա պատճառը, ըստ էության, այն անցումային ժամանակաշրջանն է, որում գտնվում են այդ պետական կազմավորումները ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ պետական իշխանության ինստիտուտների կայացման և իրականացվող տնտեսական ու քաղաքական բարեփոխումների պայմաններում անհրաժեշտ է գործուն նախագահական իշխանություն[1]:

Պետական կառավարման յուրաքանչյուր ձև ունի իր դրական ու բացասական կողմերը: Կառավարման ձևի ընտրությունը կախված է այնպիսի օբյեկտիվ գործոններից, ինչպիսիք են տվյալ պետության զարգացման և իրավագիտակցության մակարդակը, ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության, գաղափարախոսական բազմակարծության, ձևավորված քաղաքական ավանդույթների առկայությունը, պետության տարածքի չափը, բնակչության քանակն ու էթնիկ մեծամասնության առկայությունը և այլ կարևոր գործոններ: Կառավարման նախագահական ձև ունեցող հանրապետություններում նախագահը տիրապետում է բավականին լայն լիազորությունների. նա միաժամանակ և՛ պետության գլուխն է, և՛ գործադիր իշխանության գլուխը, և՛ զինված ուժերի գլխավոր հրամանատարը: Կառավարման այս ձևի հիմնական առավելությունն այն է, որ ապահովում է գործադիր իշխանության կայունությունը և իշխանությունների հստակ տարանջատումը: Գործադիր իշխանության կենտրոնացման շնորհիվ պետության ու հասարակության կառավարումն ավելի արդյունավետ է, քանի որ իրականացվում է մեկ կենտրոնի՝ նախագա-

[1] Տե՛ս Конституционное право зарубежных стран: Учебник для вузов, Под общ. ред. чл.-корр. РАН, проф. М.В. Баглая, д. ю. н., проф. Ю. И. Лейбо и д. ю. н., проф. Л. М. Энтина, 2-изд., перераб, М., «Норма», 2006, с. 857:

հի կողմից, ինչը հատկապես կարևորվում է ճգնաժամերի ժամանակ[1]: Սակայն պետք է նշել, որ վերջին տարիներին շատ երկրներում նկատվում է նախագահի լիազորությունների ընդլայնում, այդ թվում՝ ԱՄՆ-ում, որը կառավարման նախագահական հանրապետական ձևի հիմնադիր երկիրն է: Միաժամանակ նման միտումը Լատինական Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի և հետխորհրդային երկրներում քաղաքացիական հասարակության հասուն չլինելու, ժողովրդավարական ինստիտուտների բացակայության կամ ձևականության պայմաններում, որպես կանոն, վերածվում է անձնական դիկտատուրայի ռեժիմի[2]: ԱՀ-ում նույնպես կա այդ վտանգը, քանի որ երկրի գործող նախագահը արդեն երրորդ անգամն է ընտրվել նույն պաշտոնում, դեռ ավելին՝ սահմանադրական ոչ մի սահմանափակում չկա, որը նրան կարգելի մասնակցել նախագահական հաջորդ ընտրություններին, որը կկայանա 2020 թվականին:

Հանրապետության նախագահի՝ մարդու իրավունքներին անմիջականորեն վերաբերող լիազորությունների ցանկում են ԱՀ քաղաքացիություն շնորհելու և այն դադարեցնելու, քաղաքական ապաստան տալու, պետական պարգևներով պարգևատրելու, պատվավոր, բարձրագույն զինվորական և այլ կոչումներ շնորհելու, դատապարտյալներին ներում շնորհելու վերաբերյալ լիազորությունները[3]: Այս բոլոր գործառույթների իրականացումն ապահովելու համար ընդունվել են համապատասխան օրենքներ և այլ նորմատիվ ակտեր:

ԱՀ քաղաքացիության իրավահարաբերությունները կարգավորվում են ԱՀ Սահմանադրությամբ, ԼՂՀ «Քաղաքացիության

---

[1] Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Հեղ. խումբ, գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, 2-րդ լրամշակված հրատ., Եր., «Լուսաբաց» հրատարակչություն, 2016, էջ 105:

[2] Տե՛ս **Арутюнян А.Ш.**, Институт президента в постсоветских республиках: конституция и политическая реальность /сравнительно-правовой анализ/, Ереван, Изд-во «Петакан цараютюн», 2006, էջ 26:

[3] **Богданов А.**, Президент РФ. Гарант прав и свобод человека и гражданина, LAMBERT Academic Publishing, 2012, с. 29.

հիմնական սկզբունքների մասին» օրենքով[1], ԼՂՀ «Պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքով[2], «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիության հիմնական սկզբունքների մասին» ԼՂՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին ԼՂՀ կառավարության՝ 1996 թվականի սեպտեմբերի 27-ի N 210 որոշմամբ[3], «Փախստականների մասին» օրենքով[4], «Բռնադատվածների մասին» օրենքով[5], «ԼՂՀ-ում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» օրենքով[6]: Նշենք, որ մինչ օրս ԱՀ-ն չի ընդունել քաղաքացիության մասին օրենքը, որի ընդունված չլինելը ԱՀ պետական գործիչները հիմնականում կապում են Արցախի՝ միջազգային հանրության կողմից չճանաչված լինելու փաստի հետ: Քաղաքական ապաստանի մասին օրենքը նույնպես առ այսօր չի ընդունվել:

ԱՀ նախագահի սահմանադրական մյուս լիազորությունը՝ կապված մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման հետ, վերաբերում է պետական պարգևներով պարգևատրելուն և ԱՀ պատվավոր կոչումներ շնորհելուն: Այդ իրավահարաբերությունները կարգավորվում են «ԼՂՀ պետական

[1] ԼՂՀ «Քաղաքացիության հիմնական սկզբունքների մասին» օրենքը ընդունվել է 1995 թվականի նոյեմբերի 09-ին, Թ.Ն-0048-1. տե՛ս http://arlexis.am/ DocumentView.aspx?DocID=68 (23.04.2018-ի դրությամբ):

[2] ԼՂՀ «Պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքը ընդունվել է 1992 թվականի հունվարի 8-ին. տե՛ս http://arlexis.am/ (30.04.2018-ի դրությամբ):

[3] Տե՛ս http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=4504 (23.04.2018-ի դրությամբ):

[4] «Փախստականների մասին» ԼՂՀ օրենքը ընդունվել է 2003 թվականի նոյեմբերի 26-ին. տե՛ս /http://www.arlexis.am/DocumentView.aspx?DocID=782 (02.05.2018-ի դրությամբ):

[5] «Բռնադատվածների մասին» ԼՂՀ օրենքը ընդունվել է 1999 թվականի մարտի 30-ին. տե՛ս /http://www.nankr.am/hy/468 (02.05.2018-ի դրությամբ):

[6] «ԼՂՀ-ում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» ԼՂՀ օրենքը ընդունվել է 2001 թվականի օգոստոսի 31-ին. տե՛ս http://www.nankr.am/hy/1254 (07.05.2018-ի դրությամբ):

պարգևների մասին»[1], «ԼՂՀ պատվավոր կոչումների մասին» ԼՂՀ օրենքներով[2], «Արցախի մշակույթի պատվավոր դեսպանի կոչում հիմնելու մասին» ԼՂՀ նախագահի հրամանագրով[3] և այլ նորմատիվ իրավական ակտերով:

Պետության գլխի ամենահին լիազորություններից մեկը դատապարտյալներին ներում շնորհելն է: ԱՀ նախագահները բազմիցս կիրառել են այդ լիազորությունը: ԱՀ նախագահ Ա. Ղուկասյանի կողմից ներում է շնորհվել նաև նրա նկատմամբ մահափորձ իրականացրած պաշտպանության նախկին նախարար Ս. Բաբայանին[4]: Միևնույն ժամանակ նշենք, որ ո՛չ ԱՀ նախագահի պաշտոնական կայքէջում, ո՛չ էլ որևէ այլ պաշտոնական պարբերականում չկան պաշտոնական ստույգ տվյալներ՝ ԱՀ նախագահների կողմից դատապարտյալներին ներում շնորհելու իրավունքի, ներման համար դիմող անձանց քանակի, բավարարում ստացողների ու չստացողների վերաբերյալ քանակական կամ այլ տիպի տեղեկություններ: Այսինքն՝ հնարավոր չէ ստանալ ներում ստանալու խնդրանքով պետության գլխին դիմած դատապարտյալների և -հանցագործությունների մասին քանակական ու որակական կոնկրետ տվյալներ:

Նախագահի վերը նշված լիազորություններով երաշխավորվում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները: Նմանօրինակ լիազորությունների առանձնահատ-

---

[1] «ԼՂՀ պետական պարգևների մասին» ԼՂՀ օրենքը ընդունվել է 1996 թվականի հոկտեմբերի 23-ին. տե՛ս /http://www.nankr.am/hy/1015 (07.05.2018-ի դրությամբ):

[2] «ԼՂՀ պատվավոր կոչումների մասին» ԼՂՀ օրենքը ընդունվել է 2009 թվականի ապրիլի 29-ին. տե՛ս http://www.arlexis.am/DocumentView.aspx?DocID=1409 (07.05.2018-ի դրությամբ):

[3] «Արցախի մշակույթի պատվավոր դեսպանի կոչում հիմնելու մասին» ԼՂՀ նախագահի հրամանագիրն ընդունվել է 2006 թվականի հոկտեմբերի 28-ին. տե՛ս http://www.arlexis.am/DocumentView.aspx?DocID=3275 (07.05.2018-ի դրությամբ):

[4] 2004 թվականի սեպտեմբերի 17-ին ՆՀ-140 հրամանագրով ներում է շնորհվել ԼՂՀ պաշտպանության նախարար Սամվել Բաբայանին. վերջինիս նկատմամբ կայացվել էր 14 տարի ժամկետով ազատազրկման դատավճիռ, բայց ներման շնորհիվ կրել է միայն 4.5 տարի ժամկետով ազատազրկում:

կությունն այն է, որ դրանք կրում են անհատականացված բնույթ, այսինքն՝ ուղղված են կոնկրետ անձի կամ անձանց խմբի[1]:

Թվարկված լիազորությունները կյանքի կոչելու համար ԱՀ նախագահի աշխատակազմում գործում են համապատասխան բաժիններ: Սակայն արձանագրենք, որ ԱՀ գործող նախագահին այսքան տարիների ընթացքում իրեն կից ոչ մի խորհրդակցական մարմին չի ստեղծել (բացառությամբ Անվտանգության խորհրդի, որի հիմնումը սահմանադրական պահանջ է), որը կզբաղվեր մարդու իրավունքների պաշտպանությամբ: ԱՀ նախագահն անձամբ չի իրականացնում նաև քաղաքացիների ընդունելություն, ինչը մի կողմից կավելացներ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության արդյունավետությունը, մյուս կողմից կբարձրացներ նախագահի հեղինակությունը: Վերջին հաշվով, փոքրաքանակ բնակչություն ունեցող երկրի ղեկավարի կողմից քաղաքացիների հրատապ ընդունելությունը նրանից շատ ժամանակ ու էներգիա չի խլի, ավելին՝ կբարձրացնի նախագահի գործունեության արդյունավետությունը: Քաղաքացիները կարող են նախագահին նամակներ ուղարկել ինչպես ավանդական՝ փոստային առաքման միջոցով, այնպես էլ էլեկտրոնային փոստով[2]: Հավելենք նաև, որ ԱՀ նախագահի պաշտոնական կայքէջում տեղադրված չեն նախագահի ընդունած իրավական ակտերը՝ հրամանագրերն ու կարգադրությունները, որի անհրաժեշտությունը նույնպես զգացվում է[3]:

Գոյություն ունի ուշադրության արժանի ևս մի կարևոր հանգամանք. Արցախյան պատերազմի ավարտից հետո ԼՂՀ խորհրդարանն ու նախագահը, «Լեռնային Ղարաբաղի Հանրապե-

---

[1] Տե՛ս **Тихон Е.А.**, Президент Российской Федерации - гарант прав и свобод человека и гражданина, Под ред. Комкова Г.Н., Саратов, Изд-во Сарат. ун-та, 2008, էջ 89:

[2] ԱՀ նախագահի պաշտոնական կայքէջն է՝ http://www.president.nkr.am/am/home/:

[3] ԱՀ նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները ներկայացված են ԱՀ ԱՆ «Պաշտոնական տեղեկագրում», ԼՂՀ իրավական տեղեկատվական համակարգում՝ http://www.arlexis.am/, իսկ ահա նախագահի պաշտոնական կայքէջում դրա մասին միայն նշում է կատարվում, իսկ տեքստը չի տեղադրվում:

տության պաշտպանունակության, տարածքային ամբողջականության, նրա քաղաքացիների անվտանգության ապահովման նպատակով, հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վրա հարձակման և պատերազմական գործողությունների վերսկսման սպառնալիքի առկայության հանգամանքը, ղեկավարվելով «Ռազմական դրության մասին»[1] Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենք»-ով[2], ամեն տարի երկարաձգում են ռազմական դրության ռեժիմը: Ընդ որում, եթե 1994 թվականից մինչև 2004 թվականը ներառյալ յուրաքանչյուր տարի ԼՂՀ նախագահի կողմից ընդունվում էր հրամանագիր՝ երկրի ողջ տարածքում ռազմական դրության ռեժիմը ևս մեկ տարով երկարաձգելու վերաբերյալ, ապա, սկսած 2005 թվականից, ԼՂՀ Նախագահի՝ «Ռազմական դրության ռեժիմը երկարաձգելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 23-ի ՆՀ-254 հրամանագրին համապատասխան, ԼՂՀ ողջ տարածքում ռազմական դրության երկարաձգման կոնկրետ ժամկետ այլևս նշված չէ, և հարցի կարգավորումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի՝ 1997 թվականի հունվարի 7-ի թիվ 117 հրամանագրով: Ռազմական դրության հայտարարման ընդհանուր իմաստն այն է, որ, անվտանգության նկատառումներից ելնելով, տվյալ ժամանակահատվածում սահմանափակվում են մարդու և քաղաքացու մի շարք կարևոր քաղաքական ու քաղաքացիական իրավունքներ ու ազատություններ»[3]: Սակայն ԼՂՀ-ում ռազմական դրության ռեժիմն ունի գերազանցապես խորհրդանշական բնույթ և որևէ ձևով խոչընդոտ չի հանդիսացել ժողովրդավարական զարգացումներին: Մեր երկրի բնակչության մեծ մասը նույնիսկ անտեղյակ է այդ

[1] Ռազմական դրության մասին օրենքն ընդունվել է 1995 թվականի սեպտեմբերի 11-ին. տե՛ս / http://www.nankr.am/hy/1041 (29.05.2018-ի դրությամբ):

[2] Տե՛ս «Ռազմական դրության մասին» ԼՂՀ Նախագահի՝ 2004 թվականի դեկտեմբերի 30-ի ՆՀ-166 հրամանագիրը:

[3] Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերն ու կարգը (Սոսի Ալեքսանյան, ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՀ Դատախազություն, № 92), 2016, էջ 12:

օրենքի գործողության մասին[1]: Այնինչ բազմաթիվ զարգացող ու թույլ երկրներում (Աֆրիկայի, Ասիայի որոշ երկրներ) շարունակաբար ականատես ենք լինում ռազմական դրության ռեժիմի չարաշահման, այն պետական պաշտոնյաների շահերին ծառայեցնելու դեպքերի:

Արցախի Հանրապետության նոր Սահմանադրությամբ երկրի նախագահի լիազորությունների ցանկում առանձնանում է մի նոր լիազորություն, որն առավել հատուկ է նախագահական կառավարման ձև ունեցող հանրապետություններին: Խոսքը հիմնական օրենքի 93-րդ հոդվածի 17-րդ կետի մասին է, համաձայն որի՝ Հանրապետության նախագահն Ազգային ժողովի նիստում ամենամյա հաղորդում է ներկայացնում նախորդ տարվա ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների, ինչպես նաև հաջորդ տարվա ծրագրի վերաբերյալ: Ընդհանրապես բոլոր նախագահական հանրապետություններում, որտեղ նախագահը հանդես է գալիս տարեկան զեկույցով, նման փաստաթուղթը ռազմավարական նշանակության ունի. այն հստակեցնում է պետության ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: ԱՀ գործող նախագահ Բ. Սահակյանն արդեն հասցրել է իրականացնել իր այդ լիազորությունը Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ԱԺ-ի կողմից երկրի նախագահի պաշտոնում ընտրվելուց հետո: Հիշեցնենք, որ սա, փաստորեն, Բ. Սահակյանի երրորդ պաշտոնավարությունն է:

Նախագահը հանդես է եկել տարեկան զեկույցով, որտեղ նա իշխանության թևերին առաջարկել է ուշադրությունը սևեռել այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են՝

1. պետական կառավարման և իրավական համակարգը (պետական կառավարման արդիականացում, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բարեփոխումներ, մարդու իրավունքների պաշտպանություն և արդարադատություն, անվտանգություն և հասարակական կարգ, արտակարգ իրավիճակների և աղետների ռիսկերի նվազեցում, պետություն-եկեղեցի

[1] Տե՛ս **Ալեքսանյան Հ.,** Չճանաչված երկրի լրատվությունը: ԼՂՀ տեղեկատվական դաշտի համապատկերը և խնդիրները, Խմբ.՝ Դ. Պետրոսյան, Ստեփանակերտ, «Դիզակպլյուս», 2011, էջ 99:

կապերի հետագա խորացում).

2. արտաքին քաղաքականությունն ու պաշտպանությունը.

3. տնտեսական ոլորտը (տնտեսության առաջընթաց, գործարար միջավայր և փոքր ու միջին ձեռնարկատիրություն, հարկաբյուջետային քաղաքականություն, արտադրական ենթակառուցվածքներ, բնապահպանություն և բնօգտագործում, գյուղատնտեսություն, քաղաքաշինություն, պետական գույքի կառավարում, կադաստր).

4. սոցիալական ոլորտը (կրթություն և գիտություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն, ժողովրդագրություն և վերաբնակեցում, մշակույթ և զբոսաշրջություն, սպորտ և երիտասարդություն)[1]:

Ինչ վերաբերում է երկրի ղեկավարի կողմից մարդու իրավունքների պաշտպանությանը, որը ներկայացված է նրա տարեկան ծրագրի 1-ին կետի 3-րդ ենթակետով, նշենք, որ նախատեսվում է ընդունել մարդու իրավունքների համալիր ռազմավարություն. այն, փաստորեն, կազմում է ԱՀ նախագահի՝ 2017-2020 թվականների տարեկան ծրագրի առանցքային ուղղությունը: Համաձայն նշված կետի՝ «Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունը մշակելիս հիմք են ընդունվելու հետևյալ ելակետային դրույթները.

1) մարդու իրավունքների երաշխավորման ոլորտում իրական խնդիրների նախնական վերհանում և կարիքների մասնագիտական գնահատում.

2) քաղաքացիական հասարակության կառույցների ներգրավում.

3) միջազգային առաջավոր փորձի հաշվառում, այդ թվում՝ հրավիրված մասնագետների ներգրավման եղանակով.

4) ռազմավարության իրատեսականության ապահովում և դրա կենսագործման արդյունավետությունը գնահատելու նպատակով չափելի ցուցանիշների սահմանում.

5) հասարակության իրավական մշակույթի բարձրացմանն ուղղված միջոցառումների կարևորում.

[1] Տե՛ս Արցախի Հանրապետության նախագահի՝ 2017-2020 թվականների ծրագիրը, http://www.president.nkr.am/media/documents/constitution/2017-2020cragir07.10.17-doc.pdf (հղման ամսաթիվը՝ 15.11.2017):

6) երեխաների իրավունքների երաշխավորման հատուկ կարևորում.

7) հաշմանդամ անձանց իրավունքների երաշխավորման հատուկ կարևորում.

8) փակ հաստատություններում գտնվող անձանց իրավունքների հատուկ կարևորում»:

Արձանագրենք, որ Մարդու իրավունքների պաշտպանության մշակված ազգային ռազմավարություն ունի նաև Հայաստանի Հանրապետությունը, որն ընդունվել է 2012 թվականի հոկտեմբերի 29-ին: Ընդհանրապես, նմանատիպ ռազմավարության ու միջոցառումների ծրագրի ընդունումը պետք է շատ առաջադիմական համարել, մանավանդ ԱՀ-ի նման նորանկախ ու չճանաչված երկրի համար: Ավելացնենք, որ նման հաստատված ռազմավարություն չճանաչված երկրներից և ոչ մեկը չունի: Սակայն փաստենք, որ այդ միջոցառումների ծրագիրը ՀՀ-ում դեռևս, ինչպես հարկն է, չի գործում:

Անհրաժեշտ է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության ընդունումից հետո մշակել նաև դրանից բխող միջոցառումների ծրագիր որոշակի ժամանակահատվածի համար (պլանային կարգով), ինչպես նաև ստեղծել այդ ծրագրի կատարումը համակարգող խորհուրդ ու դրա գործունեության կարգը: Սխալներից խուսափելու և ակնկալվող արդյունքը ստանալու համար այդ ակտերում պետք է ըստ գործունեության ոլորտների հստակորեն սահմանել համապատասխան գործողությունը, ակնկալվող արդյունքը, պատասխանատու մարմինները, կատարման ժամկետները, ֆինանսավորման աղբյուրները և այլ տվյալներ: Ռազմավարության արդյունավետությունն անհամեմատ բարձր կլինի, եթե համապատասխան մարմիններից պարբերաբար ստացվի գործողությունների իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն: Կարևոր պայմաններ են նաև պատշաճ վերահսկողության իրականացումը, միջոցառումների իրականացման հրապարակայնությունը՝ տեղեկատվության բոլոր հնարավոր տարբերակներով, այդ թվում՝ համապատասխան մարմինների պաշտոնական կայքէջերով: Ծրագրի արդյունավետությունն առավել կբարձրանա դրան իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ, որոնք, սակայն, մեր երկրում շատ քիչ են, իսկ եղածներն էլ ակտիվ գործու-

նեություն չեն ծավալում[1]: Այդ ամբողջ ծրագրի համակարգող մարմինը պետք է լինի Մարդու իրավունքների պաշտպանը, որն առավել, քան որևէ մեկը, համապատասխանում է այդ գործառույթին: Սակայն նշենք, որ ԱՀ նախագահի կողմից մարդու իրավունքների վերաբերյալ ազգային ռազմավարության, դրան համապատասխան ծրագրերի ընդունման, խորհրդակցական մարմինների ստեղծման անհրաժեշտության մասին հայտարարելուց հետո արդեն մեկ տարուց ավելի ժամանակ է անցել, սակայն որևէ պետական մարմին կամ պաշտոնատար անձ, այդ թվում՝ հանրապետության նախագահը, ոչ մի քայլ չի ձեռնարկել նշված ծրագրերը ընդունելու ու կյանքի կոչելու համար: Այն կարծես թե մոռացության է մատնվել, ինչպես ընտրություններից առաջ տրված խոստումները…

Ընդհանուր առմամբ ԱՀ նախագահի՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը վերաբերող լիազորությունները «տեղավորվում են» պետության գլխին հատուկ «ստանդարտ» լիազորությունների մեջ: Սակայն, հաշվի առնելով մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններ, ինչպիսիք են մեր երկրի՝ ռազմա-քաղաքական բարդ իրավիճակում գտնվելը, տնտեսության ցածր մակարդակը, արտագաղթը, կոռուպցիան, միջազգային հանրության կողմից չճանաչված լինելը և այլ բացասական երևույթներ, որոնք անմիջականորեն կապ ունեն մարդու արժանապատիվ կյանքի իրավունքի հետ, ԱՀ իշխանությունները, մանավանդ պետության գլուխը, պարտավոր են բավարար ուշադրություն դարձնել նշված ու չնշված խնդիրներին, կյանքի կոչել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը ու դրանից բխող միջոցառումների ծրագիրը, հակառակ դեպքում Հայաստանի Հանրապետության օրինակով կարող է տեղի ունենալ «թավշյա» կամ այլ կարգի հեղափոխություն, որը կուղեկցվի հասարակական մեծ ցնցումներով: Մինչդեռ մեր երկրին անհրաժեշտ է խաղաղ ու սահուն զարգացում:

[1] ԱՀ-ում 2018 թվականի փետրվարի 1-ի դրությամբ գրանցված են 242 հասարակական կազմակերպություններ, որոնք հիմնականում գործունեություն են ծավալում բարեգործական, սոցիալական, առողջապահական, մարզամշակութային, կրթական-գիտական և այլ ուղղություններով. տե՛ս https://168.am/ 2018/02/05/903815.html (09.03.2018-ի դրությամբ):

ЗАЩИТА ПРАВ ЧЕЛОВЕКА ПРЕЗИДЕНТОМ РЕСПУБЛИКИ АРЦАХ

Соси Алексанян
Соискатель кафедры права АрГУ

Защита прав человека является одним из ключевых направлений политики любого государства, которое идет по пути демократического и правового управления. В этом вопросе важна роль государственных и негосударственных органов, организаций или должностных лиц. При защите прав и свобод человека и гражданина подчеркивается особая роль президента республики как высокопоставленного государственного чиновника, особенно для такой маленькой и непризнанной республики, как Республика Арцах, которая до сих пор находится в состоянии войны.

PROTECTION OF HUMAN RIGHTS BY THE PRESIDENT OF ARTSAKH REPUBLIC

Sosy Aleksanyan
Applicant of the ArSU Chair of Law

Human rights protection is one of the pivotal directions of any state holding a path of democratic and legal governance. The role of the bodies exercising state power is important, as is the activity of any state and non-state body, organization or official. In the protection of the rights and freedoms of the person and citizen, the President of the Republic as a high-ranking official of the state is especially important for the small country like us, who is in the unrecognized and ceaseless war situation.

Բանալի բառեր՝ *Մարդու և քաղաքացու իրավունքներ ու ազատություններ, պետության գլուխ, հանրապետության նախագահի լիազորություններ, կառավարման ձև, ռազմական դրություն, Մարդու իրավունքների համալիր ռազմավարություն*

Ключевые слова: *права и свободы человека и гражданина, глава государства, полномочия президента, форма правления, военное положение, комплексная стратегия прав человека.*

Keywords: Human and citizen's rights and freedoms, head of state, powers of the president, form of government, military situation, Integrated human rights strategy

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստինե Գաբուզյան[1]

Հայցային վաղեմությունը քաղաքացիական իրավունքի կենտրոնական ինստիտուտներից մեկն է, քանի որ սահմանում է դատական կարգով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության ժամանակային սահմանները, իսկ դատական պաշտպանությունը իրավունքների պաշտպանության հիմնական միջոցն է[2]:

Հայցային վաղեմության ինստիտուտի մասին առավել ամբողջական և ճշգրիտ պատկերացում կազմելու համար նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ հայցային վաղեմության ինստիտուտի էությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[3] 331-րդ հոդվածը հայցային վաղեմություն է համարում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

Համանման սահմանում է առկա նաև ՌԴ քաղաքացիական օրենսգրքում[4]:

Առհասարակ տարբեր երկրների օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ հայցային վաղեմության ժամկետի հասկացությունը բովանդակային տեսանկյունից հիմնականում համընկնում է:

Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրքը հայցային վաղեմության հասկացություն որպես այդպիսին չի տալիս, սակայն դրա էությունը պարզ է դառնում համապատասխան հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում: Այսպես, 194-րդ հոդվա-

---

[1] ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆ. Վ. Ավետիսյան:

[2] Տե՛ս **Բարսեղյան Տ. Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, 4-րդ հրատ., Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2014, էջ 279:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՀՊՏ 1998.08.10/17 (50), ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.:

[4] ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է անձի, որի իրավունքը խախտվել է, հայցով իրավունքի պաշտպանության ժամկետը: Տե՛ս Гражданский кодекс Российской Федерации (ГК РФ), 30 ноября 1994 года, N 51-ФЗ:

ծի 1-ին մասի համաձայն, իրավունքը՝ պահանջելու, որ մյուս անձը կատարի գործողություններ կամ ձեռնպահ մնա գործողություններից (հայցապահանջ), ենթակա է հայցային վաղեմության, իսկ 214-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի լրանալուց հետո պարտապանն իրավունք ունի հրաժարվելու կատարումից[1]:

Լիտվայի քաղաքացիական օրենսգրքի 1.124-րդ հոդվածը, տալով վաղեմության սահմանումը, նշում է՝ վաղեմությունը օրենքներով սահմանված ժամանակահատվածն է, որի ընթացքում անձը կարող է պաշտպանել իր խախտված իրավունքը հայց ներկայացնելու միջոցով[2]:

Միջազգային իրավական փաստաթղթերում նույնպես հայցային վաղեմության բնորոշման հարցում նույն մոտեցումն է առկա: Մասնավորապես Ունիդրուայի սկզբունքների[3] 10.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սկզբունքներով կարգավորվող իրավունքների իրականացումն արգելվում է այն ժամանակահատվածն անցնելուց հետո, որը, տվյալ գլխի կանոնների համաձայն, կոչվում է հայցային վաղեմություն: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վաղեմության ժամկետներին նվիրված գլուխը դատավարական գործընթացների նախաձեռնմանը առնչվող ժամկետներն է կարգավորում:

Սկզբունքների համաձայն՝ ժամանակի լրանալը չի վերացնում իրավունքները, և իրավունքը կարող է դեռ պաշտպանության ակնկալիք ունենալ, նույնիսկ եթե այդ իրավունքի համար հայցային վաղեմության ժամկետի անցած լինելը հաստատվել է (հոդված 10.9, մաս 1, 3):

---

[1] Տե՛ս Bürgerliches Gesetzbuch (Ursprüngliche Fassung vom: 18. August 1896 (RGBl. S. 195), Inkrafttreten am: 1. Januar 1900) in der Fassung der Bekanntmachung vom 2. Januar 2002, http://www.gesetze-im-internet.de/bgb/BJNR001950896.html#BJNR001950896BJNG023101377:

[2] Տե՛ս Civil Code of the Republic of Lithuania, of July 18, 2000, Law No. VIII-1864 (Last amended on April 12, 2011, No XI-1312), http://www.wipo.int/wipolex/ru/text.jsp?file_id=202088:

[3] Տե՛ս Unidroit Principles Of International Commercial Contracts 2016, https://www.unidroit.org/instruments/commercial-contracts/unidroit-principles-2016:

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ հայցային վաղեմությունը ժամանակային սահմանափակում է, որի սահմաններում հայցով ներկայացված պահանջը կարող է բավարարվել դատարանի կողմից[1]: Ընդ որում՝ հիմնական մոտեցումն այն է, որ հայցային վաղեմության ժամկետի անցնելը չի դադարեցնում սուբյեկտիվ իրավունքը, և վերջինս շարունակում է գոյություն ունենալ ու կարող է նաև իրականացվել:

Սակայն սա միակ մոտեցումը չէ: Այսպես, Լատվիայի քաղաքացիական օրենսգրքի 1910-րդ հոդվածի համաձայն, վաղեմության ժամկետի անցնելուց հետո դադարում է ոչ միայն հայցի իրավունքը, այլ նաև պարտավորական իրավունքն ինքնին[2]:

Առհասարակ բոլոր իրավական համակարգերը ճանաչում են իրավունքի վրա ժամանակի անցնելու ազդեցությունը: Գոյություն ունեն երկու հիմնական մոտեցումներ: Մի մոտեցման համաձայն՝ ժամանակի անցնելը վերացնում է իրավունքներն ու դատավարական գործընթացները: Իսկ մյուս համակարգի համաձայն՝ ժամանակի անցնելը գործում է միայն որպես պաշտպանություն դատարանում հայց հարուցելու դեմ[3]:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել հայցային վաղեմության ժամկետի ազդեցության հարցը հայցի իրավունքի և սուբյեկտիվ իրավունքի վրա:

Հայցային վաղեմության հասկացությունը սերտորեն կապված է հայցի իրավունքի հասկացության հետ: Տարբերակում են հայցի իրավունք՝ դատավարական իմաստով՝ որպես իրավունք դիմելու դատարան խախտված սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության համար, և հայցի իրավունք նյութական իմաստով՝ որպես իրա-

---

[1] Տե՛ս **Диденко А. Г.**, Гражданское право, Общая часть, Курс лекций, Алматы, изд. «Нур-Пресс», 722 с., 2006, https://lawbook.online/kniga-rossii-pravo-grajdanskoe/grajdanskoe-pravo-obschaya-chast-kurs-lektsiy.html:

[2] Տե՛ս The Civil Law of Latvia, adopted on 24 April 1997, (with amendments till 29.10.2015), http://vvc.gov.lv/index.php?route=product/search&search=civil%20law:

[3] Տե՛ս Unidroit Principles Of International Commercial Contracts 2016, https://www.unidroit.org/instruments/commercial-contracts/unidroit-principles-2016:

վունք՝ դատարանից ստանալու խախտված սուբյեկտիվ իրավունքի պաշտպանություն[1]:

Հայցային վաղեմության ժամկետի անցնելը հայցային վաղեմություն կիրառելու մասին վեճի կողմի հայտարարության հետ համակցությամբ մարում է միայն նյութական իմաստով հայցի իրավունքը, ինչը հիմք է հայցը մերժելու համար: Ինչ վերաբերում է դատավարական իմաստով հայցի իրավունքին, ապա այդ իրավունքը հայցային վաղեմության լրանալով չի մարում[2]:

Ակնհայտ է, որ հայցի դատավարական իրավունքի սահմանափակման մասին խոսք չի կարող լինել. դատական պաշտպանության իրավունքը սահմանափակման ենթակա չէ (Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մաս. յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:):

Հայցի իրավունքը ոչ թե հարկադիր պաշտպանության կարիք զգացող խախտված կամ վիճարկվող իրավունքն է ընդհանրապես, այլ այդ իրավունքն իրացնելու՝ օրենքով ապահովված երաշխիքն է և այն հայցային (դատավարական) ձևով հարկադրաբար իրականացնելու հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ հայցի իրավունքը ոչ թե հայցվորի խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքն է, այլ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը որոշակի դատավարական կարգով (հայցային ձևով) իրացնելու հնարավորությունը[3], հայցային վարույթի միջոցով այդ իրավունքի պաշտպանություն ստանալու հնարավորությունը[4]:

---

[1] Տե՛ս Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, части первой (постатейный), под ред. **Гришаева С.П., Эрделевского А.М.**, М., изд. «Юристъ», 2005, 892 с., https://www.lawmix.ru/commlaw/1318?page=62:

[2] Տե՛ս **Гришаев С.П., Эрделевский А.М.**, նշված աշխատությունը, https://www.lawmix.ru/commlaw/1318?page=62:

[3] Տե՛ս **Պետրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2012, 692 էջ, էջ 246, **Рязановский В. А.**, Единство процесса, М., изд. юрид. бюро «Городец», 1996, էջ 13-15, **Добровольский А. А.**, Исковая форма защиты права, М., изд-во Моск. ун-та, 1965, էջ 77:

[4] Տե՛ս **Диордиева О.Н.**, Гражданское процессуальное право, учебно-методический комплекс, М., изд. центр ЕАОИ, 2008, 284 с.,

Հայց ներկայացնելու իրավունքը կախված չէ շահագրգիռ անձի մոտ նյութահիրավական իմաստով հայցի իրավունքի (հայցի բավարարում ստանալու իրավունք) առկայությունից կամ բացակայությունից: Հայց ներկայացնելու պահին միայն ենթադրվում է, որ այդպիսի իրավունքը պատկանում է շահագրգիռ անձին: Այդ հարցը վերջնական որոշում է դատարանը գործն ըստ էության քննելիս և լուծելիս[1]:

Հայցային վաղեմության ժամկետը որպես նյութական իմաստով հայցի իրավունքը մարող ժամկետ լինելու հարցը միանշանակ է ընկալվում բոլոր հեղինակների կողմից և երբևէ վեճերի առարկա չի եղել:

Նույնը չի կարելի ասել սուբյեկտիվ իրավունքի վրա հայցային վաղեմության ժամկետի ազդեցության մասին, քանի որ այս հարցում հեղինակների մոտեցումները միատեսակ չեն:

Երկար տարիներ վեճի առարկա է այն հարցը, թե արդյոք հայցային վաղեմության ավարտմամբ մարո՞ւմ է ինքնին հայցվորին պատկանող սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքը, թե՞ ոչ: Գիտնականների մի խմբի կարծիքով վաղեմության ժամկետի ավարտմամբ դադարում է ինքնին սուբյեկտիվ իրավունքը, որն անքակտելիորեն կապված է նրա հարկադիր իրականացման հնարավորության հետ, որը տվյալ դեպքում վերանում է: Որոշ գիտնականների տեսանկյունից սուբյեկտիվ իրավունքը վերանում է միայն հայցվորի կողմից հայցային վաղեմությունը բաց թողնելու հիմքով հայցը մերժելու մասին դատարանի կողմից որոշում կայացվելու պահից: Վերջապես, շատ հեղինակների կարծիքով, հայցային վաղեմության ավարտմամբ սուբյեկտիվ իրավունքը չի մարում, այլ շարունակում է գոյություն ունենալ, չնայած չի կարող իրականացվել հարկադիր կարգով[2]:

---

http://lib.sale/protsess-grajdanskiy/diordieva-grajdanskoe-protsessualnoe-pravo.html:

[1] Տե՛ս **Тихиня В.Г.**, Гражданский процесс, учебник, 2-е изд., перераб., Минск, изд. ТетраСистемс, 2013, 496 с., https://studme.org/10441216/pravo/pravo_isk:

[2] Տե՛ս **Сергеев А. П.**, Гражданское право, 2010, http://be5.biz/pravo/g014/18.html#3:

Այսպես՝ Գ. Ֆ. Շերշեննևիչը[1], Դ. Ի. Մեյերը[2], Մ. Մ. Ագարկովը[3], Օ. Ս. Իոֆեն[4] այն դիրքորոշմանն էին, որ, հայցային վաղեմության ժամկետի լրանալով, սուբյեկտիվ իրավունքը դադարում է: Ի հակակշիռ նշված դիրքորոշմանը՝ Ի. Բ. Նովիցկին[5], Վ. Ա. Թարխովը[6], Ե. Ա. Սուխանովը[7], Ա. Պ. Սերգեևը[8] գտնում էին, որ, հայցային վաղեմության ժամկետի լրանալով, սուբյեկտիվ իրավունքը չի դադարում, այլ շարունակում է գոյություն ունենալ իրավաբանորեն ավելի թուլացած ձևով:

Տեսակետների նման տարբերությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ տարբեր են նաև հեղինակների մոտեցումները առհասարակ իրավահարաբերության, սուբյեկտիվ իրավունքի բովանդակության, իրավունքի պաշտպանության հարցերում: Ուստի անհրաժեշտ է նախ քննարկման առարկա դարձնել նշված հարցերը՝ պարզելու համար նրանց կապը հայցային վաղեմության ինստիտուտի հետ:

Սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքների բովանդակության բավականին մեծ զանազանության պայմաններում կարելի է հայտնաբերել, որ ցանկացած դեպքում այդպիսի իրավունքը հան-

---

[1] Տե՛ս **Шершеневич Г.Ф.**, Учебник русского гражданского права (по изданию 1907 г.), М., изд. «СПАРК», 1995, էջ 139:

[2] Տե՛ս **Мейер Д.И.**, Русское гражданское право, (в 2-х ч. Часть 1), 1902, по исправленному и дополненному 8-му изд., (в серии «Классика российской цивилистики»), М., изд. «Статут», 1997, էջ 282:

[3] Տե՛ս **Агарков М.М.**, Обязательства по советскому гражданскому праву, М., Юридическое издательство НКЮ СССР, 1940, էջ 56-59:

[4] Տե՛ս **Иоффе О.С.**, Советское гражданское право, М., Изд. Юрид. лит., 1967, էջ 352

[5] Տե՛ս **Новицкий И.Б.**, Сделки, исковая давность, М., Государственное издательство юридической литературы,1954, էջ 224:

[6] Տե՛ս **Тархов В.А.**. Гражданское право. Общая часть. Курс лекций, Чебоксары, Чув. кн. изд-во,1997, 331 с., էջ 246-247:

[7] Տե՛ս Гражданское право, в 4 т., том 1, Общая часть, учебник 3-е издание, переработанное и дополненное, под ред. **Е.А.Суханова**, М., «Волтерс Клувер», 2008, էջ 636-637:

[8] Տե՛ս **Сергеев А.П.**, Гражданское право, 2010, http://be5.biz/pravo/g014/18.html#3:

դիսանում է երեք իրավազորությունների տարատեսակ կոմբինացիաների արդյունք.

1. սեփական գործողություններ իրականացնելու իրավազորություն, ինչը նշանակում է սուբյեկտի կողմից փաստական և իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններ ինքնուրույն իրականացնելու հնարավորություն,

2. պահանջի իրավազորություն, որն իրենից ներկայացնում է պարտավոր անձից նրա վրա դրված պարտականությունների կատարում պահանջելու հնարավորություն,

3. պաշտպանության իրավազորություն, որը հանդես է գալիս որպես պաշտպանության տարբեր միջոցներ օգտագործելու կամ սուբյեկտիվ իրավունքի խախտման դեպքում պետական-հարկադրական միջոցների օգտագործում պահանջելու հնարավորություն[1]:

Տեսակետը, որ հայցային վաղեմության ժամկետի լրանալը հանգեցնում է սուբյեկտիվ իրավունքի դադարմանը, պայմանավորված է սուբյեկտիվ իրավունքի նշված երրորդ իրավազորության հանդեպ հեղինակների ունեցած մոտեցմամբ: Մասնավորապես, այդ տեսակետը պաշտպանող հեղինակները պաշտպանության իրավազորությունը համարում են սուբյեկտիվ իրավունքի պարտադիր տարր, առանց որի այդ իրավունքը չի կարող գոյություն ունենալ:

Այսպես՝ Դ. Ի. Մեյերը նշում է, որ վաղեմության գործողությունը՝ որպես իրավունքի դադարման միջոց, անմիջականորեն դրսևորվում է նրա պահպանության ընթացքում. իրավունքը դադարում է վաղեմության ուժով այն պատճառով, որ նրան հայտնի պայմաններում մերժվում է դատական պաշտպանությունը, իսկ առանց դրա գոյություն չունի նաև իրավունք[2]: Նույն մոտեցումն է արտահայտում նաև Օ. Ս. Իոֆֆեն. հայցային վաղեմության ժամկետի լրանալով վերանում է սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքը հարկադիր իրականացնելու հնարավորությունը, իսկ դա

[1] Տե՛ս Гражданское право, в 4 т., том 1, Общая часть, учебник 3-е издание, переработанное и дополненное, էջ 121, **Բարսեղյան Տ. Կ.**, նշված աշխատությունը, էջ 66, **Тархов В.А.**, նշված աշխատությունը, էջ 118:

[2] Տե՛ս **Мейер Д. И.**, նշված աշխատությունը, էջ 282:

նշանակում է, որ դադարում է գոյություն ունենալ նաև ինքնին սուբյեկտիվ իրավունքը[1]:

Նշված մոտեցման կողմնակից է նաև Պ. Գույվանը, որը նշում է, որ ժամկետը անձի սուբյեկտիվ նյութական իրավունքի բաղադրամաս է, իսկ նրա լրանալը, ինչպես նաև վերջինիս այլ բնութագրիչների սպառվելը հանգեցնում է սուբյեկտի իրավունքի դադարմանը: Այսպես՝ հայցային վաղեմության հոսքի սկիզբը ապահովում է անձի մոտ հայցային պահանջի պաշտպանողական իրավազորության հայտնվելը, իսկ նրա հոսքի ավարտը հայց չներկայացնելու փաստի հետ նշանակում է հայցի պաշտպանողական իրավունքի դադարում[2]:

Պետք է նկատի ունենալ, որ, ըստ էության, հայցային վաղեմության ժամկետի հասկացությունը նույնն է երկու խումբ հեղինակների մոտ: Այսպես՝ Մ. Ի. Բրագինսկին նշում էր, որ հայցային վաղեմության ժամկետը պարտապանի՝ պարտավոր անձի կողմից գործողություններ կատարելուն հարկադրելու միջոցով խախտված սուբյեկտիվ իրավունքների վերականգնման և պաշտպանության համար պետության կողմից երաշխավորված ժամկետ է: Դա ժամանակահատված է, որի ընթացքում հնարավոր է գործուն դատական պաշտպանություն[3]:

Ե. Ա. Սուխանովը հայցային վաղեմություն է համարում դատարան հայց ներկայացնելու միջոցով խախտված իրավունքի հարկադիր պաշտպանության ժամկետը[4]:

Ա. Պ. Սերգեևը հայցային վաղեմությունը բնորոշում է որպես ժամկետ, որի ընթացքում անձը, որի իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իր իրավունքի հարկադիր իրականացում կամ պաշտպանություն[5]:

---

[1] Տե՛ս **Иоффе О. С.**, նշված աշխատությունը, էջ 352:

[2] Տե՛ս **Гуйван П.**, Проблемы судебного применения исковой давности, Журнал «Legea şi viaţa» («Закон и Жизнь»), № 2\2, февраль 2016, էջ 36:

[3] Տե՛ս **Брагинский М.И.**, Гражданский кодекс Российской Федерации: Комментарий, М., изд. «Спарк», 1995, էջ 258:

[4] Տե՛ս Гражданское право, в 4 т., том 1, Общая часть, учебник 3-е издание, переработанное и дополненное, էջ 630:

[5] Տե՛ս **Сергеев А. П.**, նշված աշխատությունը, http://be5.biz/pravo/g014/18.html#3:

Վ. Ա. Թարխովը հայցային վաղեմություն է համարում այն ժամանակահատվածը, որից հետո վերանում է դատարանի օգնությամբ սուբյեկտիվ իրավունքը հարկադիր իրականացնելու իրավազորությունը[1]:

Հեղինակների նշված երկու խմբերն էլ հայցային վաղեմությունը բնորոշում են որպես սուբյեկտիվ իրավունքը հարկադիր իրականացնելու հնարավորությունը դադարեցնող ժամկետ, սակայն առաջին խումբը, հարկադիր իրականացնելու հնարավորությունը համարելով սուբյեկտիվ իրավունքի հատկանիշ, բնորոշում է հայցային վաղեմությունը նաև որպես սուբյեկտիվ իրավունքը դադարեցնող ժամկետ:

Վ. Ա. Թարխովը այդ դիրքորոշման թույլ կողմ է համարում սուբյեկտիվ իրավունքի գոյության վերականգնման անխուսափելի թույլատրումն այն դեպքերում, երբ դատարանը կվերականգնի բաց թողնված ժամկետը, կամ հենց պարտապանը կիրականացնի կատարումը, չնայած այդ գործողություններից ոչ մեկը չի կարող դիտվել որպես իրավահարաբերություն ծնող իրավաբանական փաստ[2]:

Իսկապես, հայցային վաղեմության՝ որպես սուբյեկտիվ իրավունքի գոյությունը դադարեցնող ժամկետի պարագայում անտրամաբանական կլիներ նախատեսել այդ ժամկետը վերականգնելու հնարավորություն. կստացվեր, որ հայցային վաղեմության ժամկետը իրավահարաբերության հատկանիշ է, նրա գոյության ժամկետը, և դրա լրանալն անխուսափելիորեն կհանգեցներ իրավունքի դադարման՝ անկախ ցանկացած հանգամանքից: Մինչդեռ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը, հնարավոր համարելով հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելը, վկայում է, որ հայցային վաղեմության ժամկետը սուբյեկտիվ իրավունքն իրականացնելու ժամկետ է: Հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու հիմքերն այնպիսին են, որ սահմանափակում են անձի՝ գործողություններ կատարելու հնարավորությունը: Այսինքն՝ ժամկետը լրացած համարելու հարցը կախվածության մեջ է դրված սուբյեկտին առնչվող այնպի-

[1] Տե՛ս **Тархов В. А.**, նշված աշխատությունը, էջ 241:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 247, **Кириллова М.Я.**, Исковая давность, М., изд. юрид. лит.,1966, էջ 21-29:

սի հանգամանքից, ինչպիսին անձի՝ գործողություններ կատարելու հնարավորությունն է:

Իսկ ինչ վերաբերում է անկախ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելուց պարտավորությունը կատարելուն, ապա նախ նշենք, որ առհասարակ հայցային վաղեմությունը որպես սուբյեկտիվ իրավունքը դադարեցնող ժամկետ դիտարկող հեղինակների աշխատություններում քիչ է անդրադարձը այն հարցին, թե ինչպիսի իրավահարաբերության շրջանակում է իրականացվում պարտավորությունը, եթե, այնուամենայնիվ, չնայած հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելուն, պարտապանը կատարում է այն:

Հայցային վաղեմության ժամկետի լրանալուց հետո պարտավորությունը կատարելու հարցին անդրադարձել է Դ. Ի. Մեյերը: Նա նշում է, որ եթե իրավունքը դադարում է վաղեմության ուժով, սակայն, չնայած դրան, պարտապանը կատարում է պարտավորության առարկան կազմող գործողություն, ապա պարտավորության առարկա կազմող գործողություն կատարելն ունի նվիրատվության նշանակություն: Սակայն նվիրատվությունը ենթադրում է նվիրելու մտադրություն, հետևաբար և տվյալ գործողության կատարումը այն դեպքում միայն կարելի է համարել իսկապես նվիրատվություն, երբ պարտապանը գիտակցում է, որ նա պարտավոր չէ կատարել գործողությունը: Իսկ եթե նա ունի հակառակ գիտակցումը և կատարել է վճարումը, ապա կարող է այն հետ պահանջել, և պարտքին հղում անելն իզուր կլինի, քանի որ վճարում կատարելու պահին պարտքն այլևս գոյություն չուներ[1]:

Հայցային վաղեմությունը որպես սուբյեկտիվ իրավունքը դադարեցնող ժամկետ դիտարկող հեղինակների ուժեղ փաստարկ Վ. Ա. Թարխովը համարում է իրավահարաբերության գոյության համար սանկցիայի անհրաժեշտությունը մատնանշելը: Սակայն հայցային վաղեմության ժամկետի լրանալուց հետո պարտավորությունը կատարելը, ըստ էության, գոյություն ունեցող իրավահարաբերության կատարում է, հակառակ դեպքում այն անհիմն կլիներ: Սակայն վաղեմության ենթարկված պարտավորությունը կատարած անձը իրավունք չունի հետ պահանջելու կատարումը, նույ-

[1] Տե՛ս **Мейер Д.И.**, նշված աշխատություն, էջ 285:

նիսկ եթե նա չգիտեր հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելու մասին[1]:

Նշված դրույթը, որը նույնական է քաղաքացիական օրենսգրքի 343-րդ հոդվածի (պարտապանը կամ այլ պարտավոր անձ, ով պարտականությունը կատարել է հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո, իրավունք չունի կատարածը հետ պահանջելու, թեկուզև կատարելու պահին նա չի իմացել վաղեմության ժամկետի լրանալու մասին) կարգավորմանը, որպես իրավահարաբերության գոյության հիմնավորում, միանշանակ չի ընկալվում: Ա. Մ. Էրդելևսկին այն դիտում է որպես հակառակի հիմնավորում. եթե սուբյեկտիվ իրավունքը և դրան համապատասխանող պարտականությունը պահպանվեին, ապա ինչու՞ պետք է օրենսդիրը հատուկ նշեր, որ կատարածը չի կարող հետ պահանջվել (ՌԴ ՔՕ, հոդված 206): Ի կատարումն գոյություն ունեցող պարտավորության իրականացրած կատարումը հետ պահանջելու անթույլատրելիությունը քաղաքացիական իրավունքի ընդհանուր կանոն է: Իսկ եթե պարտապանից համապատասխան պարտականության կատարում պահանջելու սուբյեկտիվ իրավունքը դադարել է, ապա այդ կանոնի սահմանման անհրաժեշտությունը հասկանալի է դառնում, քանի որ առանց դրա կարող էր անհիմն ստացածը հետ վերադարձնելու հարց ծագել:

Այնուհետև հեղինակը անդրադառնում է նաև չվերադարձվող անհիմն հարստացմանը. հայցային վաղեմության ժամկետի ավարտից հետո ի կատարումն պարտավորության տրված գույքը՝ որպես անհիմն հարստացում, վերադարձման ենթակա չէ: Հեղինակը նշում է, որ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 1109-րդ հոդվածի նշանակությունն այն է, որ այն հատուկ իրավական կարգավիճակ է ստեղծում անհիմն հարստացման որոշակի տեսակների համար: Եթե չլիներ այդ նորմը, դրանում նշված գույքը, ընդհանուր կանոնի համաձայն, ենթակա կլիներ վերադարձման՝ որպես անհիմն ստացած գույք, բայց այս հոդվածի շնորհիվ այդ անհիմն հարստացումը, մնալով անհիմն, ձեռք է բերում հատուկ կարգավիճակ. այն ենթակա չէ վերադարձման: Այս կերպ 1109-րդ հոդվածից կարելի է եզրակացնել, որ հայցային վաղեմության ժամկետի ա-

[1] Տե՛ս **Тархов В. А.**, նշված աշխատությունը, էջ 247:

վարտից հետո ի կատարումն պարտավորության տրված գույքը օրենսդիրը համարում է առանց իրավական հիմքի տրված և, ներդնելով 1109-րդ հոդվածի կանոնը, միայն խոչընդոտ է ստեղծում ստացածը հետ պահանջելու համար: Դրա համար էլ քաղաքացիական օրենսգրքի 1109-րդ և 206-րդ հոդվածները ավելի շուտ մատնանշում են հայցային վաղեմության ավարտից հետո սուբյեկտիվ իրավունքի դադարումը, քան դրա պահպանումը[1]:

Սակայն Ե. Ա. Սուխանովը դա բացատրում է նատուրալ պարտավորությունների գոյությամբ[2]՝ որպես նատուրալ (ոչ հայցային) պարտավորություններ սահմանելով պայմանագրերից ծագած, իրավական տեսանկյունից ուժի մեջ գտնվող պարտավորական հարաբերությունները, որոնցով պահանջները քաղաքացիական օրենքի ուղղակի նշման ուժով չեն կարող իրականացվել դատական (հայցային, այսինքն՝ հարկադիր) կարգով, բայց որոնցով կամավոր կատարումը չի համարվում անհիմն հարստացում[3]:

Մեր կարծիքով՝ Ա. Մ. Էրդելևսկու նշված դիրքորոշումն անհիմն է թվում հետևյալ պատճառաբանությամբ: Հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելու հանգամանքը դատարանը չի կարող սեփական նախաձեռնությամբ առաջ քաշել և կիրառում է միայն վիճող կողմի դիմումով: Այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետի ավարտվելն ինքնին իրավաբանական փաստ չէ և կարող է նշանակություն ձեռք բերել միայն համապատասխան դիմումի համակցությամբ: Եվ այն դեպքում, երբ նման դիմում առկա չէ, և պահանջը հիմնավոր է, ապա, չնայած վաղեմության ժամկետի անցած լինելուն, դատարանը բավարարում է հայցը, և այդ դեպքում, ի կատարումն դատական ակտի, պարտապանը պարտավոր է կատարել իր պարտավորությունը: Նման պարագայում դժվար թե կատարումը անհիմն համարվի, և եթե նույնիսկ օրենսդրական նշված դրույթը չլիներ, միևնույն է, անձը չէր կարողանա հետ պահանջել կատարումը:

---

[1] Տե՛ս **Эрделевский А. М.**, О последствиях истечения исковой давности, материал подготовлен с использованием правовых актов по состоянию на 1 мая 2004 года, https://www.lawmix.ru/comm/2929:

[2] Տե՛ս Гражданское право, в 4 т., том 1, Общая часть, учебник 3-е издание, переработанное и дополненное, էջ 713:

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 604:

Բացի այդ՝ եթե օրենսդիրը համարեր, որ իրավահարաբերությունը դադարում է հայցային վաղեմության ժամկետը լրանալով, դժվար թե դրույթ նախատեսեր, որ այն կիրառվում է միայն վիճող կողմի դիմումի առկայության դեպքում (եթե հայցային վաղեմության ժամկետի լրանալը ինքնուրույն իրավաբանական փաստ լիներ, որը դադարեցնում է իրավահարաբերությունը, ապա այդ դեպքում դատարանը դա ներառել տվյալ գործով ապացուցման առարկայում և իրավահարաբերության առկայության փաստը պարզելիս պարտավոր կլիներ ինքնուրույն անդրադառնալ այդ հարցին ու հաշվի առնել որոշում կայացնելիս), և դժվար թե քաղաքացիական դատավարության օրենսգիրքը այն նշեր որպես հայցը մերժելու առանձին հիմք, քանի որ այդ պարագայում հայցը կմերժվեր ոչ թե այն հիմքով, որ լրացել է հայցային վաղեմության ժամկետը, այլ այն պատճառաբանությամբ, որ հայցը հիմնավոր չէ, բացակայում է պաշտպանության ենթակա օբյեկտը (եթե դադարել է իրավահարաբերությունը, ապա չկա նաև սուբյեկտիվ իրավունքը, որի պաշտպանությունը հայցվում է դատարանում):

Քաղաքացիական գործը ճիշտ լուծելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք իրականում գոյություն ունե՞ն կողմի պնդած փաստերը, և դրանք իրավաբանական բնույթի՞ են, որոնք են դրա ապացույցները, և արդյոք կարելի՞ է դրանք համարել դատական, արդյոք կողմի ներկայացրած պահանջները բխո՞ւմ են այդ իրավաբանական փաստերից, և որն է վիճելի իրավահարաբերության իրական բնույթը, արդյոք հայցվորի նշած պատասխանողը այն սուբյե՞կտն է, որը պարտավոր է պատասխանող լինել տվյալ հայցով, և վերջապես իրականում հայցվորի մոտ առկա՞ է սուբյեկտիվ իրավունք, և արդյոք այն ենթակա՞ է պաշտպանության: Առանց նշված հարցերի պատասխանների՝ անհնար է լուծել գործը ըստ էության, անհնար է հասնել քաղաքացիական դատավարության նպատակին[1]:

[1] Տե՛ս **Сахнова Т.В.**, Курс гражданского процесса, 2-е изд., перераб. и доп., М., изд. «Статут», 2014, էջ 390:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի[1] 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով:

Որպես կանոն, ապացուցման առարկան որոշելու նորմատիվ աղբյուր նյութական իրավունքի նորմերն են: Քաղաքացիական գործով դատական ապացուցման նպատակը գործի փաստական հանգամանքները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ պարզելն է, այսինքն՝ ապացույցների օգնությամբ իսկությանը լրիվ համապատասխանող իրավաբանական փաստերը բացահայտելն է, որոնց հետ օրենքը կապում է կողմերի միջև վիճելի իրավահարաբերության ծագումը, փոփոխումն ու դադարումը, և այլ հանգամանքներ վեր հանելը, որոնք նշանակություն ունեն գործի ճիշտ լուծման համար[2]:

Այսինքն՝ ապացուցման առարկայի մեջ այնպիսի հարցեր են ներառվում, որոնք նշանակություն ունեն իրավահարաբերության գոյությունը պարզելու և, ըստ այդմ, ճիշտ որոշում կայացնելու համար: Օրենքը տալիս է այն հարցերի մոտավոր շրջանակը, որոնք քննարկելուց հետո կայացվում է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում՝ այդ ցանկում ներառելով նաև պատասխանողի առարկությունների փաստական և իրավական հիմքերը (քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ, 169-րդ հոդվածներ):

Ընդհանրապես, իրավաբանական նպատակից ելնելով, առարկությունները տարանջատում են իրավունքի գոյությունը ժխտող առարկությունների (перемпторные эксцепции) և իրավունքի իրականացման դեմ ուղղված առարկությունների (дилаторные эксцепции): Ինչպես արդարացիորեն նշում է Գ. Դերնբուրգը, այս

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ՀՀՊՏ 2018.03.05/16 (1374), ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ.:

[2] Տե՛ս **Васильев С.В.**, Гражданский процесс, курс лекций, Х., изд. «Эспада», 2010, http://pravo.studio/rf-grajdanskiy-protsess/ponyatie-tsel-sudebnogo-60439.html:

դասակարգման նշանակությունն այն է, որ իրավունքի գոյությունը ժխտող առարկությունները պետք է հետազոտվեն դատարանի կողմից և հաշվի առնվեն նրա կողմից՝ անկախ կողմերի նախաձեռնությունից: Հակառակ դեպքում դատարանի կողմից կայացված որոշումը կլինի անօրինական և անհիմն, քանի որ չի համապատասխանի գործի փաստական հանգամանքներին: Ինչ վերաբերում է առարկություններին, որոնք ինքնին իրավունքի նկատմամբ ոտնձգություն չեն ներկայացնում, սակայն ժխտում են իրավունքի իրականացման հնարավորությունը, ապա այդպիսինները կարող են դատարանի կողմից հաշվի առնվել միայն, եթե պատասխանողը ինքը հղում անի դրանց[1]: Այդպիսին են վաղեմության ժամկետի ավարտման, պարտավորության առաջացման հիմքի վիճարկման, պահանջի կատարման ժամկետը վրա հասած չլինելու, տվյալ հայցը տվյալ դատարանին ընդդատյա չլինելու և այլ հարցերի վերաբերյալ առարկությունները[2]:

Այսպիսով՝ հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելը պատասխանողի առարկությունների հիմքում ընկած փաստ է, սակայն դատարանը ապացուցման առարկան որոշելիս դրանում չի ներառում հայցային վաղեմության ժամկետի վերաբերյալ հարցը:

Դատարանի կողմից որոշվող ապացուցման առարկայի մեջ հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելու հարցը չներառելը այն պարագայում, երբ ապացուցման առարկայի մեջ մտնում են իրավահարաբերության գոյությունը կամ բացակայությունը հիմնավորող բոլոր հանգամանքները, նույնպես վկայում է, որ հայցային վաղեմությունը որևիցե ազդեցություն չունի իրավահարաբերության գոյության վրա:

Բացի այդ՝ հայցային վաղեմության ժամկետի լրանալուց հետո պարտավորության կատարումը իրավահարաբերության շրջանակներում կատարված լինելու հանգամանքը հիմնավորելու համար կարևոր ենք համարում անդրադառնալ նաև նյութահրավական վեճի վրա դատավարական իրավահարաբերությունների

---

[1] Տե՛ս **Дернбург Г.**, Пандекты: т. 1, Общая часть, пер. Г. фон Рехенберга, под рук. и ред. П. Соколовского. М., 1906, էջ 375, **Белов В. А.**, Вексельные возражения, Законодательство, № 7, 2000, http://5fan.ru/wievjob.php?id=16641:

[2] Տե՛ս **Белов В.А.**, նշված աշխատությունը, http://5fan.ru/wievjob.php?id=16641:

ազդեցությանն ու հայցային վաղեմությունը կիրառելու մասին դիմում ներկայացնելուն՝ որպես դատավարական գործողության:

Դատարանում քննվող քաղաքացիաիրավական վեճի վրա քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունների ազդեցությունը բնութագրվում է որպես կարգավորող ազդեցություն[1]: Այսինքն՝ այդ գործողությունները չեն կարող նյութաիրավական հարաբերություններ ծնող, փոփոխող կամ դադարեցնող իրավաբանական փաստեր լինել: Ուստի կարգավորող ազդեցություն պետք է ունենան նաև այն դատավարական գործողությունները, որոնք կազմում են դատավարական իրավահարաբերությունների բովանդակությունը:

Այստեղ կարևոր է նաև հասկանալ հայցային վաղեմությունը կիրառելու մասին դիմումի՝ որպես դատավարական գործողության բնույթը:

Դատավարական գործողությունների ներքո պետք է հասկանալ վարույթի մասնակից սուբյեկտի գործողությունները, որոնք նա իրականացնում է իր դատավարական իրավունքներն իրականացնելու նպատակով:

Դատավարական գործողությունների մի տեսակը կազմում են կամարտահայտությունները, որոնց նպատակը դատարանի գործունեության վրա ազդելն է, իսկ դրա միջոցով էլ՝ դատավարության ճակատագրի: Երկրորդ կատեգորիան ընդգրկում է փաստական գործողությունները՝ ուղղված դատարանին նյութ տրամադրելուն՝ որոշում կայացնելու համար, և նրան օգնություն ցույց տալուն գործի փաստական և իրավական կողմերը բացահայտելիս:

Առաջին կատեգորիայի դատավարական գործողությունների դեպքում երբեմն դատարանը մինչև կողմի պահանջը բավարարելը այն ենթարկում է ըստ էության ստուգման և միայն այն դեպքում, եթե այն համարի իրավաչափ և գործի հանգամանքներին համապատասխանող, բավարարում է այն: Նման դեպքերում դատավա-

[1] Տե՛ս **Тихиня В. Г.**, նշված աշխատությունը, https://studme.org/15780309/pravo/grazhdanskie_protsessualnye_pravootnosheniya_subekty:

րական հետևանքները միշտ չէ, որ վրա են հասնում այն տեսքով, ինչպես ցանկանում է կողմը[1]:

Հենց այս կատեգորիային պատկանող դատավարական գործողություն է հայցային վաղեմությունը կիրառելու մասին դատարանին ուղղված դիմումը, որին հատուկ են վերջինիս բնորոշ հատկանիշները. դատավարական գործողություններ կատարելը կամ չկատարելը կախված է բացառապես կողմերի կամքից, անձի դատավարական գործողությունները իրավաբանական հետևանքներ են առաջացնում միայն դատարանի միջոցով, ուստի միշտ չէ, որ անձը հասնում է այն նպատակին, որին ուղղված էր իր գործողությունը: Ընդ որում՝ կարող ենք նկատել, որ դատավարական գործողությունը այս հատկանիշներով նաև տարբերվում է նյութական իրավահարաբերության շրջանակում իրականացվող գործողություններից:

Այստեղ կարևոր է անդրադառնալ դատավարական իրավունքների մի կարևոր հատկանիշի. դատավարական իրավունքների գոյությունը սահմանափակվում է որոշակի ժամանակահատվածով, որի ընթացքում դրանք պետք է օգտագործվեն իրենց իրավատերերի կողմից: Հենց որ իրավունքը դադարում է ժամկետի ավարտմամբ, վերանում է նաև նրա վրա հիմնված գործողություններ կատարելու հնարավորությունը[2]:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը կարող է վկայակոչել հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը մինչև գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նա հիմնավորում է տվյալ փաստը մինչ այդ վկայակոչելու անհնարինությունն իրենից անկախ պատճառներով: Այդ դեպքում հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը կարող է վկայակոչվել ոչ ուշ, քան մինչև առաջին ատյանի դատարանում դատաքննության ավարտը:

---

[1] Տե՛ս **Васьковский Е.В.**, Курс гражданского процесса: Субъекты и объекты процесса, процессуальные отношения и действия, 1917, (Классика гражданского процесса.), М., изд. «Статут», 2016, էջ 594:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 591:

Այսինքն՝ այդ իրավունքի իրականացումը սահմանափակվում է որոշակի ժամանակահատվածով, առավելագույնը մինչև առաջին ատյանի դատարանում դատաքննության ավարտը: Այսպիսով՝ նշված գործողությունը միայն դատավարական իրավահարաբերությունների շրջանակում իրականացվող գործողություն է: Ուստի այդ դիմումը՝ որպես դատավարական գործողություն, նշանակություն է ձեռք բերում միայն դատավարական իրավահարաբերության շրջանակներում և ազդեցություն ունի միայն դատարանի կողմից կայացվող որոշման վրա, սակայն չի ազդում նյութահրավական հարաբերության գոյության վրա:

Վերոնշյալ հիմնավորումներից պարզ է դառնում, որ հայցային վաղեմության էությունը բացահայտելու համար կարևոր է այն դիտարկել դատավարական իրավահարաբերությունների հետ ունեցած կապի շրջանակում (հայց ներկայացնելու պահից ծագում են դատավարական իրավահարաբերություններ), մի հանգամանք, որին բավարար չափով ուշադրություն չի հատկացվել:

Սուբյեկտիվ իրավունքի գոյության վրա հայցային վաղեմության ժամկետի ազդեցությունը ժխտելու տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում այն հեղինակների տեսակետը, որոնք իրավահարաբերությունները տարանջատում են կարգավորողի և պահպանողականի:

Ա. Պ. Սերգեևը, տարանջատելով կարգավորող և պահպանողական իրավունքները, նշում է, որ հայցային վաղեմության ենթակա է ոչ թե ինքնին կարգավորող իրավունքը, այլ միայն պաշտպանության պահպանողական իրավունքը, որն առաջանում է տուժողի մոտ նրա իրավունքի խախտման հետևանքով: Դրա համար էլ հայցային վաղեմության ավարտվելը որևիցե ազդեցություն անմիջականորեն հենց կարգավորող քաղաքացիական իրավունքի վրա չունի և սկզբունքորեն չի կարող ունենալ:

Բոլոր քաղաքացիական իրավունքները կարգավորողի և պահպանողականի բաժանելու ուսմունքի տեսանկյունից հայցային վաղեմությունը տարածվում է միայն խախտված իրավունքի պաշտպանությունն իրականացնելու հնարավորության վրա: Ընդ որում՝ քանի դեռ պահպանվում է վաղեմության ենթարկված պահանջները արտադատական կարգով իրականացնելու հնարավո-

րությունը, շարունակում են գոյություն ունենալ նաև խախտված կարգավորող իրավունքները[1]:

Ե. Ա. Կրաշենինիկովի, որը նույնպես իրավահարաբերությունները կարգավորողի և պահպանողականի բաժանելու տեսության հետևորդ է, մոտեցումն այս հարցի կապակցությամբ առավել ճշգրիտ է թվում: Նա նշում է, որ հայցային վաղեմությունը որպես իր առարկա կարող է ունենալ միայն այն սուբյեկտիվ իրավունքը, որին հատուկ է իրավասու մարմնի կողմից հարկադիր իրականացվելու նյութաիրավական հնարավորությունը, քանի որ նրա գործողությունը ոչ այլ ինչ է, քան այդ հնարավորությունը մարելը: Նշված հնարավորությունը բնորոշ է միայն հայցապահանջին, որը կոչված է միջնորդավորելու կարգավորող սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքի կամ օրենքով պահպանվող շահի պաշտպանությունը[2]:

Մեր կարծիքով, չվերադարձվող անհիմն հարստացման մեջ վաղեմության ժամկետի ավարտից հետո ի կատարումն պարտավորության տրված գույքը ներառելով, օրենսդիրը նպատակ է հետապնդում հստակեցնելու, որ պահպանողական իրավահարաբերության դադարումը չի հանգեցնում կարգավորող իրավահարաբերության դադարման:

Ամփոփելով նշված դիրքորոշումներն ու հիմնավորումները՝ գտնում ենք, որ հայցային վաղեմության ժամկետը դադարեցնում է սուբյեկտիվ իրավունքը իրավազոր մարմնի միջոցով հարկադիր իրականացնելու հնարավորությունը՝ ազդեցություն չունենալով ինքնին սուբյեկտիվ իրավունքի գոյության վրա:

Սուբյեկտիվ իրավունքը բնորոշվում է որպես հնարավոր վարքագծի՝ օրենքով ապահովված չափ՝ ուղղված շահերի բավարարման հետ կապված նպատակին հասնելուն[3]: Այսինքն՝ այստեղ կարևորվում է նպատակը, որի համար անձը մտել է իրավահարաբերության մեջ: Եթե սուբյեկտիվ իրավունքը հնարավոր վարքագծի

---

[1] Տե՛ս **Сергеев А.П.**, նշված աշխատություն, http://be5.biz/pravo/g014/18.html#3:

[2] Տե՛ս **Крашенинников Е. А.**, Понятие и предмет исковой давности, Ярославль, изд. ОАО «Ярославский Полиграфкомбинат», 1997, էջ 51:

[3] Տե՛ս Большой юридический словарь, **Сухарев А.Я., Крутских В.Е., Сухарева А.Я.**, М., изд. Инфра-М, 2003, 703 с., https://dic.academic.ru/dic.nsf/lower/18556:

չափ է, ապա իրավունքի իրականացման ներքո հասկացվում է այն հնարավորությունների իրագործումը, որոնք օրենքով կամ պայմանագրով տրամադրվում են սուբյեկտիվ իրավունքը կրողին[1]: Միայն իրականացնելով իր սուբյեկտիվ իրավունքը՝ անձը կարող է հասնել այդ նպատակին, իսկ այն, որ իրավունքը կարող է իրականացվել թե՛ դատական և թե՛ արտադատական կարգով, թե՛ հայցային վաղեմության ժամկետի սահմաններում և թե՛ դրանից դուրս, անվիճելի է: Ուստի այնքան ժամանակ, քանի դեռ հնարավոր է հասնել սուբյեկտիվ իրավունքում պարփակված նպատակին, այն գոյություն ունի:

СУЩНОСТЬ ИНСТИТУТА ИСКОВОЙ ДАВНОСТИ

Кристине Габузян
Аспирант кафедры гражданского права ЕГУ

В данной статье анализируется вопрос, имеющий важное значение для выявления сущности института исковой давности: прекращается ли существование самого субъективного гражданского права, принадлежащего истцу, с истечением срока исковой давности или нет. Для получения ответа на этот вопрос в данной статье мы изучаем связь института исковой давности с правом на иск и с субъективным правом, а также рассматриваем этот институт в рамках его связи с процессуальными правоотношениями.

THE NATURE OF THE INSTITUTE OF THE STATUTE OF LIMITATIONS

Kristine Gabuzyan
PhD Student at the YSU Chair of Civil Law

The current article discusses issue whether the plaintiff's subjective civil right ceases to exist with the expiration of the term for statute of limitations. The issue under discussion has a significant importance for revealing the nature of the institute of the statute of limitations. In order to answer this question the article discusses the connection of the institute of the statute of limitations with the right to claim and the

[1] Տե՛ս **Сергеев А.П.**, նշված աշխատություն, http://be5.biz/pravo/g014/15.html:

subjective right and also considers this institute in the frame of connection with the procedural legal relations.

Բանալի բառեր՝ *հայցային վաղեմություն, սուբյեկտիվ իրավունք, իրավահարաբերություն, հայց, իրավունքների իրականացում, իրավունքների պաշտպանություն, իրավունքի հարկադիր իրականացում, պարտավորության կատարում, հայցային վաղեմություն ժամկետի ավարտ:*

Ключевые слова: *исковая давность, субъективное право, правоотношение, иск, осуществление прав, защита прав, принудительное осуществление прав, выполнение обязательства, истечение срока исковой давности.*

Key words: *statute of limitations, subjective right, legal relation, claim, exercise of rights, protection of rights, enforcement of a right, fulfillment of obligation, expiration of the term for statute of limitations.*

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՏԵՍԱԿ

Արթուր Վարդանյան[1]

Հայաստանում կատարվող տնտեսաիրավական բարեփոխումները, համաշխարհային տնտեսության վրա ավելի ու ավելի ազդող գլոբալացումը հարկադրում են նորովի գնահատել տնտեսական կյանքի ավանդական թվացող գործընթացները, փորձել կանխատեսել դրանց դերն ու նշանակությունը արագ փոփոխվող աշխարհում:

Այդպիսի երևույթներից մեկն էլ կարելի է համարել կոոպերատիվ շարժումը, որն արդեն թևակոխել է իր գոյության երեքհարյուրամյակը և որպես տնտեսավարման համակարգ ոչ միայն հաստատում է իր ավանդական առավելությունները, այլև դրսևորում է նոր որակներ, որոնք աշխատանքային և սոցիալական հարաբերությունների այդ ձևը դարձնում են առավել հումանիստական և հասարակության կողմից պահանջարկ վայելող[2]: Կոոպերատիվ շարժումն ունի ավելի քան երկուհարյուրամյա պատմություն: Այս ընթացքում միջազգային կոոպերատիվ շարժումը անցել է դժվարին ուղի՝ կուտակելով հսկայական փորձ, ձեռք է բերել նոր հատկանիշներ և գործունեության նոր սկզբունքներ՝ տալով կոոպերատիվներին յուրօրինակ կազմակերպաիրավական կարգավիճակ[3]: Այս փորձի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի հայկական կոոպերատիվ շարժմանը զարկ տալու և զարգացնելու համար: Մանավանդ ներկա շրջանում, երբ կառավարությունը քայլեր է ձեռնարկում կոոպերատիվների (առավել ևս գյուղատնտեսական) ստեղծմանը աջակցելու ուղղությամբ: Վերջինիս մասին է վկայում ՀՀ կառավարության որոշումը՝ կառավարության 2017 թ. գործունեության ծրագիրը հաստատելու մասին[4]: Գյուղի և

---

[1] ԵՊՀ, քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆ. Վ. Ավետիսյան:

[2] Տե՛ս **Гутман Г.В., Дилигина О.Б.** и др., Формы кооперативного движения в условиях рыночных реформ, М., 2006, էջ 1:

[3] Տե՛ս ՄԱԿ, Գլխավոր վեհաժողով, Տնտեսական և սոցիալական խորհուրդ, բանաձև A/47/216, E/2000/43, http://un.com/International_Laws.cfm:

[4] Տե՛ս ՀՀՊՏ 2017.02.24/13 (1288).1:

գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին կառավարության որոշմամբ[1] 2012 թվականից գյուղատնտեսության ոլորտում գերակա խնդիր է համարվում կոոպերատիվների ստեղծումը: ՀՀ կառավարության՝ 2016 թվականի գերակա խնդիրների շարքում առանձնանում է գյուղական համայնքներում կոոպերատիվների ձևավորման շարունակականության ապահովումը[2]:

Կոոպերատիվների ստեղծումը պայմանավորված է օբյեկտիվ պատճառներով և որոշակի խնդիրներ հաղթահարելու անհրաժեշտությամբ: Կոոպերատիվների ստեղծման հիմքում ընկած են հետևյալ անհրաժեշտ պայմանները.

1. Գոյություն ունեն խնդիրներ, որոնք նպատակահարմար չէ լուծել միայնակ կամ անհատապես: Այլ կերպ ասած՝ կոոպերատիվը միևնույն խնդիրներն ունեցող մարդկանց խումբ է:

2. Կոոպերատիվն այլընտրանք չունի, այսինքն՝ այդ խնդիրները չեն կարող լուծվել այլ կերպ:

3. Անդամությամբ ընձեռված առավելությունները գերակշռում են անդամության հետ կապված պարտավորություններին[3]:

Իտալիայում այնքան է կարևորվում կոոպերատիվների նշանակությունը պետության և բնակչության կյանքում, որ անգամ գործում է կոոպերատիվների վերաբերյալ սահմանադրորեն ամրագրված դրույթ: Համաձայն, որի պետությունը ճանաչում է կոոպերատիվների սոցիալական ֆունկցիան, օրենքը պետք է նպաստի կոոպերատիվների աճին[4]: Կոոպերատիվները բնութագրվում են որպես կազմակերպություններ, որոնք ստեղծվել են իրենց անդամների կենսամակարդակը բարձրացնելու, նրանց բարեկեցության համար:

Մեծ Բրիտանիայում, կարևորելով կոոպերատիվների դերը երկրի տնտեսական և սոցիալական կյանքում, ընդունվել և բոլորովին վերջերս ուժի մեջ է մտել կոոպերատիվների մասին առանձին օրենքը: Օրենքի ամբողջական անվանումը հետևյալն է՝ «Կոոպե-

---

[1] Տե՛ս ՀՀՊՏ 2010.12.01/60 (794):

[2] Տե՛ս http://minagro.am/, 15.02.2018:

[3] Տե՛ս **Ուռուտյան Վ., Ավետիսյան Ս.,** Գյուղատնտեսական կոոպերատիվներ, Երևան, 2012, էջ 18:

[4] Տե՛ս Article 45 of the Italian Constitution:

րատիվների և համայնքի զարգացմանը նպաստող ընկերությունների» մասին օրենք[1]: Օրենքի անվանումն արդեն իսկ վկայում է այն մասին, որ Անգլիայում ևս ընդգծվում են կոոպերատիվների սոցիալական նշանակությունը և նրանց առանձնահատուկ դերը գյուղական ու քաղաքային համայնքների զարգացման գործում:

Իրոք, կոոպերատիվներում գործունեության արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է տնտեսական և սոցիալական պահանջմունքների բավարարման նպատակների ներդաշնակմամբ: Կոոպերատիվը ոչ միայն արտադրական միավոր է, այլև ժողովրդավարական սկզբունքներով կառավարվող ու իր անդամների շահերին ծառայող և կապիտալիստական-մոնոպոլիստական ընկերություններին հակադրվող իրավաբանական անձ[2]: Կոոպերատիվներում կապիտալը ծառան է, այլ ոչ թե տերը[3]: Կոոպերատիվները ստեղծվում են անդամների աշխատանքային գործունեությունը համախմբելու և նրանց տնտեսական պահանջմունքները բավարարելու նպատակով: Միավորված ազգերի կազմակերպությունը այնքան բարձ է գնահատել կոոպերատիվների դերը պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման, սննդի անվտանգության և գյուղատնտեսության զարգացման գործում, որ 2012 թվականը հայտարարել է կոոպերատիվների տարի՝ կոոպերատիվների զարգացմանը ամբողջ աշխարհում զարկ տալու համար[4]:

Կոոպերատիվների գործունեությունը հիմնված է այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են անդամների կողմից աջակցությունը միմյանց, ժողովրդավարությունը, հավասարությունը, անաչառությունը, սոցիալական պատասխանատվությունը, միասնությունը[5]: Հենց այս հատկանիշներով էլ կոոպերատիվները տարբերվում են իրավաբանական անձանց այլ տեսակներից:

---

[1] Տե՛ս Co-operative and Community Benefit Societies Act 2014:

[2] Տե՛ս **Гутман Г. В., Дилигина О.Б.** и др. նշվաշ աշխատությունը, էջ 150:

[3] Տե՛ս **Чаянов А.В.**, Основные идеи и формы организации сельскохозяйственной кооперации, М., 1999, էջ 18:

[4] Տե՛ս UN, February 2010, Cooperatives in Social Development, A/RES/64/136:

[5] Տե՛ս The U.S. Department of Agriculture (USDA) Research Report 231, Comparing Cooperative Principles of the U.S. Department of Agriculture and the International Cooperative Alliance, June 2014, էջ 4:

Կոոպերատիվը իրավաբանական անձանց ինքնատիպ տեսակ է, որը չի կարելի փոխարինել այլ կազմակերպաիրավական ձևով: Կան տասնյակ բնորոշումներ, որոնք ներկայացնում են կոոպերատիվների հասկացությունը. դրանցից մի քանիսը կազմվել են մեկ դար առաջ, մի քանիսը՝ բոլորովին վերջերս:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի[1] (այսուհետ՝ նաև Քաղ. օր.) 117-րդ հոդվածը տալիս է կոոպերատիվների հետևյալ բնորոշումը.

«Կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը»:

Ողջունելի է, երբ օրենսգրքում ամրագրվում է կոոպերատիվների ընդհանուր հասկացությունը, որն էլ հիմք է դառնում առանձին տեսակի կոոպերատիվների բնորոշումը տալու համար ինչպես օրենսգրքում, այնպես էլ այլ իրավական ակտերում: Բայց մեր օրենսդիրը բավարարվել է այդքանով՝ չտարանջատելով արտադրական և սպառողական կոոպերատիվները, նույն հոդվածներով կարգավորելով թե՛ սպառողական և թե՛ արտադրական կոոպերատիվների ստեղծմանն ու գործունեությանն առընչվող հարաբերությունները: Միաժամանակ նշված բնորոշումը խիստ թերի է, քանի որ իրավաբանական անձինք կարող են լինել միայն սպառողական կոոպերատիվի անդամ. մասնակիցների նյութական կարիքների բավարարումը առաջնային է արտադրական կոոպերատիվների համար: Նման իրավական բնորոշումը չի համապատասխանում կոոպերատիվների դերին և նշանակությանը, որոնք նրանք պետք է խաղան պետության տնտեսական և սոցիալական կյանքում, ինչպես նաև չի արտահայտում կոոպերատիվների հիմնական, տիպային հատկանիշը, որը բնորոշ է բոլոր տեսակի կոոպերատիվներին, այն է՝ կոոպերատիվների ժողովրդավարական կառավարումը, այսինքն՝ «մեկ անդամ՝ մեկ ձայն» սկզբունքը. սա այն հիմնարար հատկանիշներից է, որով կոոպերատիվները տարբերվում են բաժնետիրական ընկերություններից:

[1] Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք ՀՀՊՏ 1998.08.10/17 (50):

Մեր կարծիքով՝ առավել լայն և ժամանակակից կոոպերատիվների համար տիպական բնորոշումը տրվել է Կոոպերատիվների միջազգային դաշինքի կոնգրեսում, որը կայացել է Անգլիայի Մանչեսթր քաղաքում 1995 թ.-ին: Այդ բնորոշումն ունի հետևյալ բովանդակությունը.

«Կոոպերատիվը սեփական կամքով միավորված անձանց և նրանց կապիտալի միավորումն է, որոնք միավորվել են իրենց տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ կարիքները բավարարելու նպատակով: Կոոպերատիվը գտնվում է անդամների սեփականության ներքո և ղեկավարվում է ժողովրդավարության սկզբունքով»: [1]

Կարծում ենք՝ մեր քաղաքացիական օրենսգրքի 117-րդ հոդվածը անհրաժեշտ է խմբագրել՝ ամրագրելով կոոպերատիվների վերը նշված բնորոշումը, միաժամանակ ամրագրելով, որ «կոոպերատիվները կարող են ստեղծվել շահույթ ստանալու նպատակ հետապնդող՝ առևտրային կոոպերատիվների և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող՝ ոչ առևտրային կոոպերատիվների ձևով»: Նման փոփոխության առաջարկը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ներկայումս Միավորված ազգերի կազմակերպության[2] կողմից փորձ է արվում ներդաշնակեցնելու տարբեր երկրների՝ կոոպերատիվներին վերաբերող օրենսդրությունը՝ առնվազն հասկացությունների մակարդակում, ինչի մասին է վկայում նաև Եվրոպական Միությունում ստեղծված, իրավաբան-գիտնականներից կազմված աշխատանքային խումբը, որի նպատակը կոոպերատիվներին վերաբերող մոդելային օրենքի մշակումն է ԵՄ անդամ պետությունների համար[3] :

Օրենսգրքի 117-րդ հոդվածի բովանդակությունից էլ անհրաժեշտ է բխեցնել արտադրական և սպառողական կոոպերատիվնե-

---

[1] Տե՛ս 31-ый конгресс Международного кооперативного альянса: Повестка дня и доклады // Обзор международной кооперации, 1995, т. 88, № 3, էջ 26:

[2] Տե՛ս the United Nations Guidelines aimed at creating a supportive environment for the development of cooperatives, and the 2002 ILO Recommendation № 193 on the promotion of cooperatives, CH-1211 Geneva 22, Switzerland, էջ 44:

[3] SGECOL. Study Group On European Cooperative Law-Draft principles of European cooperative law.PECOL-May 2015:

րի առանձին բնորոշումներ, ինչպես նաև կոոպերատիվների առանձին տեսակների սահմանումները:

Առաջարկում ենք նաև քաղաքացիական օրենսգրքով ամրագրել արտադրական և սպառողական կոոպերատիվների հասկացությունները: Մասնավորապես առաջարկում ենք Քաղ. օր.-ում ամրագրել արտադրական կոոպերատիվների հետևյալ բնորոշումը.

«Արտադրական կոոպերատիվը (արտել) համատեղ արտադրական կամ այլ գործունեություն իրականացնելու համար անդամության հիման վրա կամովին միավորված քաղաքացիների միություն է, որի անդամները, անձնական, աշխատանքային կամ այլ մասնակցությունից զատ, միավորում են իրենց փայավճարները: Արտադրական կոոպերատիվը առևտրային կազմակերպություն է»:

Որոշ հեղինակներ, տալով արտադրական կոոպերատիվների բնորոշումը, հնարավոր են համարում նաև իրավաբանական անձանց անդամությունը[1]: Մենք համակարծիք չենք այս տեսակետին, քանի որ արտադրական կոոպերատիվներում պարտադիր է անդամների անձնական մասնակցությունը աշխատանքներին, ինչը բնութագրական է արտադրական կոոպերատիվներին, և, կախված աշխատանքներին մասնակցելու չափից, որոշվում է անդամի եկամտի չափը: Սա այն հիմնարար հատկանիշներից է, որով արտադրական կոոպերատիվները տարբերվում են բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից: Ասվածի մասին է վկայում նաև Գերմանիայի՝ դեռևս 19-րդ դարում ընդունված օրենքը, որը սահմանում էր, որ արտադրական կոոպերատիվներում եկամուտը բաշխվում է հետևյալ կերպ՝ 4% ըստ փայի, 96% ըստ աշխատանքային մասնակցության[2]: Հենց աշխատանքային մասնակցությամբ է պայմանավորված, որ կոոպերատիվները դրսևորում են իրենց արդյունավետությունը այլ կազմակերպությունների նկատմամբ, և, ինչպես արդարացիորեն նշում է շվեյցարացի գիտնական Սիսմոնդին, գյուղատնտեսական կոոպերատիվները գյուղատնտեսության ոլորտում ամենահաջողվածն են

[1] Տե՛ս **Гутман Г.В., Дилигина О.Б.** и др., նշված աշխատությունը, էջ 15:

[2] Տե՛ս **Рист Ш., Жид Ш.,** История экономических учений, М., «Экономика», 1995, էջ 374:

հետևյալ հիմնավորմամբ. «Եթե գյուղատնտեսությամբ զբաղվեն այն մարդիկ, որոնք օգտվում են նրա պտուղներից, ապա նրանք ընդունակություն ձեռք կբերեն բավարարելու բազմաքանակ բնակչության պահանջմունքները: Գյուղացի սեփականատերը միակն է բոլոր սեփականատերերից, ով ամենից շատ է ստանում հողից, քանի որ նա ամենից շատ է մտածում իր ապագայի մասին և ամենից լավ է ուսումնասիրել իր գործը: Բացի դրանից՝ միայն նա է առավելագույն նպատակահարմարությամբ օգտագործում մարդկային ուժը, քանի որ ընդհանուր գործը բաժանում է իր ընտանիքի անդամների միջև այնպես, որ երբեք ոչ ոք առանց գործի չի մնում: Բոլոր կարգի հողագործներից նա ամենաերջանիկն է, քանի որ ոչ մի այլ պայմաններում հողն այդքան մարդկանց համար զբաղմունք չի ստեղծում և այդչափ առատորեն կերակրում նրանց, ինչպես այնտեղ, որտեղ հողագործը հողի սեփականատերն է»[1]:

Գործող շուկայական տնտեսության պայմաններում արտադրական կոոպերատիվների կենսունակությունը ապահովելու համար առանձին պետություններ (այդ թվում՝ ՀՀ գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենքը) իրենց օրենքներում ամրագրել են, որ կոոպերատիվները կարող են ֆինանսական միջոցներ ներգրավել այլ կազմակերպություններից կամ անձանցից, որոնք միայն ֆինանսական մասնակցություն են ունենում կոոպերատիվների կյանքում, այլ ոչ աշխատանքային, և ձեռք են բերում աֆիլացված (փոխկապակցված) կամ ներդրող անձի կարգավիճակ: Երևի սա է հիմք հանդիսացել հեղինակների համար իրավաբանական անձանց համարելու արտադրական կոոպերատիվների մասնակիցներ: Բաժնետիրական ընկերությունների և կոոպերատիվների հիմնական տարբերություններից մեկն էլ այն է, որ բաժնետիրական ընկերությունները ընդլայնվում են ներդրողներ ներգրավելու հաշվին, իսկ կոոպերատիվները՝ հորիզոնական համագործակցության կամ միություններ կազմելու միջոցով՝ պահպանելով միությունների անդամների ինքնավարությունը և պաշտպանելով կոոպերատիվների անդամների շահերը: Կոոպերատիվը պետք է դիտել որպես մասնավոր ձեռնարկատիրության այնպիսի ձև, որը

[1] Տե՛ս Mill John Stuart, Principles of Political Economy with some of their Applications to Social Philosophy, London, Longmans, Green and Co., 1909, էջ 13:

պատկանում է իր անդամներին, համատեղ վերահսկվում է նրանց կողմից և ծառայություններ է մատուցում նրանց համար:

«Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքի[1] 1-ին հոդվածի 1-ին մասը տալիս է սպառողական կոոպերատիվների հետևյալ բնորոշումը.

«Հայաստանի Հանրապետությունում սպառողական կոոպերատիվը 5-ից ոչ պակաս անդամների (մասնակիցների) կարիքներն ապրանքներով և ծառայություններով բավարարելու, նրանց շահերը ներկայացնելու և դրանք պաշտպանելու նպատակով կամավոր հիմունքներով ձևավորված շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է»:

Նույն օրենքի 2-րդ հովածի համաձայն.

«Սպառողական կոոպերատիվի մասնակիցներ (անդամներ) կարող են լինել քաղաքացիները և (կամ) համատեղ գործունեության պայմանագիր կնքած անհատ ձեռնարկատերերն ու գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիները»:

Հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ սպառողական կոոպերատիվի անդամ կարող են լինել միայն քաղաքացիները, մինչդեռ սպառողական կոոպերատիվների հիմնական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սպառողական կոոպերատիվի անդամ կարող են դառնալ նաև իրավաբանական անձինք: Այդ մասին է ինչպես օտարերկրյա օրենսդրության, այնպես էլ իրավաբանական գրականության ուսումնասիրությունը: Եվ ի վերջո կոոպերատիվների միությունները ստեղծվում են ոչ առևտրային կոոպերատիվների՝ սպառողական կոոպերատիվների ձևով, որից հետևում է, որ իրավաբանական անձանց անդամությունը սպառողական կոոպերատիվներին օրինաչափ է: Առհասարակ օրենքը բավականին հին է, և առկա են բազում սխալներ, այդ իսկ պատճառով, մեր կարծիքով, հարկ է ուժը կորցրած ճանաչել սպառողական կոոպերացիայի մասին ՀՀ օրենքը և ընդունել նոր օրենք: Առաջարկում ենք քաղաքացիական օրենսգրքում ամրագրել սպառողական կոոպերատիվների հետևյալ բնորոշումը. «Սպառողական կոոպերատիվը քաղաքացիների և իրավաբանա-

[1] Տե՛ս ՀՀԳԽՏ 1993/24:

կան անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորումն է, որը ղեկավարվում է իր անդամների կողմից, և նրա գործունեությունը ուղղված է մասնակիցների նյութական և այլ՝ ոչ նյութական պահանջմունքների բավարարմանը: Սպառողական կոոպերատիվը ոչ առևտրային կազմակերպություն է»:

Անհրաժեշտ է նշել նաև «կոոպերացիա» և «կոոպերատիվ» բառերի տարբերությունը, որոնք շատ հաճախ նույնացվում են: «Կոոպերացիան» ավելի լայն հասկացություն է. այն կոոպերատիվների համագործակցություն է, նրանց գործողությունների համաձայնեցում, կոոպերատիվների միություն, համագործակցություն կոոպերատիվների անդամների միջև: Մինչդեռ մեր իրավական համակարգը չի տարանջատում նշված հասկացությունները, ինչը պարզ է դառնում «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքից, որը պետք է լիներ ոչ թե «կոոպերացիայի» այլ «կոոպերատիվների» մասին: Միայն վերջերս ընդունված՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին»[1] ՀՀ օրենքը տվեց կոոպերացիայի բնորոշումը, որի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գյուղատնտեսական կոոպերացիան գյուղատնտեսական կոոպերատիվների, կոոպերատիվների միությունների և դրանց անդամների համագործակցություն է, որն իրականացվում է ագրոպարենային համակարգում գործող տնտեսավարողների նյութական, սոցիալական և այլ կարիքների առավել արդյունավետ բավարարման նպատակով:

Կոոպերատիվները այլ իրավաբանական անձանց շարքում ունեն ուրույն դեր: Դրանք գտնվում են իրենց անդամների սեփականության ներքո, ղեկավարվում են նրանց կողմից և ծառայություններ են մատուցում իրենց անդամներին: Կոոպերատիվների յուրահատուկ դերի մասին է վկայում նաև արտասահմանյան երկրների օրենսդրության ուսումնասիրությունը: Այսպես, օրինակ, Սլովակիայի Հանրապետության առևտրային օրենսգրքի 2-րդ բաժինը ունի հետևյալ անվանումը՝ «Ընկերություններ, ընկերակցություններ և կոոպերատիվներ»[2]: Սա վկայում է այն մասին, որ կոո-

[1] Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.30/91(1180):

[2] Տե՛ս Commercial Code of Slovakia ("Obchodnízákoník") (full translation), № 513/1991, title 2, section 56:

պերատիվները (դրուժստվո) իրենց կազմակերպաիրավական յուրահատուկ կառուցվածքով տարբերվում են այլ ընկերություններից և ընկերակցություններից: Այդպիսի մոտեցում է որդեգրել նաև մեր օրենսդիրը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխի 2-րդ պարագրաֆը նվիրված է տնտեսական ընկերություններին և ընկերակցություններին, իսկ 3-րդ պարագրաֆը՝ կոոպերատիվներին, ինչը վկայում է, որ կոոպերատիվները իրենց կազմակերպաիրավական ձևով և առանձնահատկություններով չեն նույնանում այլ տնտեսական ընկերություններին և ընկերակցություններին:

Կոոպերատիվների յուրահատուկ բնույթի մասին է վկայում նաև քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածը: Հոդվածի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը. իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ: Համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի՝ առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով: Իսկ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ կոոպերատիվները, կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ: Վերոգրյալ հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ կոոպերատիվները իրավաբանական անձանց մեջ զբաղեցնում են իրենց յուրահատուկ տեղը: Կոոպերատիվները կազմակերպաիրավական յուրահատուկ միավորումներ են: Դրանք առաջին հերթին անձանց, այնուհետև կապիտալի միավորումներ են: Կոոպերատիվները այլընտրանքային կազմակերպություններ են, որոնք պաշտպանում են և՛ արտադրողների, և՛ սպառողների շահերը[1]:

Կոոպերատիվը իրավաբանական անձ է, հետևաբար բավարարում է իրավաբանական անձանց ներկայացվող որոշակի պահանջների՝ իհարկե մի շարք առանձնահատկություններով: Այդ

[1] Տե՛ս Доклад Генерального секретаря ООН, представленном 49-й сессии Генеральной Ассамблеи ООН (1994 г.), http://un.com/UN_Journal.cfm?fp:

առանձնահատկությունները բնորոշ են միայն կոոպերատիվներին, որոնք կներկայացնենք ստորև:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի՝ «Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող»: Տեսական գրականության[1] և գործող օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել իրավաբանական անձանց, այդ թվում նաև՝ կոոպերատիվին բնորոշ մի շարք հատկանիշներ: Ստորև կներկայացնենք այդ հատկանիշները՝ ընդգծելով դրանց՝ կոոպերատիվներին վերաբերող առանձնահատկությունները:

Առաջին հատկանիշը կազմակերպական միասնությունն է, այսինքն՝ կոոպերատիվ կարող է ճանաչվել ոչ թե անձանց ցանկացած միություն, այլ այնպիսի միասնությունը, որն ունի կազմակերպական կառուցվածք, միասնական նպատակ, և որի անդամները ենթարկվում են միևնույն կազմակերպական կարգ ու կանոնին: Իրավաբանական անձի կազմակերպական միասնությունն ամրագրվում է տվյալ կազմակերպության կանոնադրության կամ հիմնադրման պայմանագրում և այն նորմատիվ ակտերում, որոնք կարգավորում են իրավաբանական անձանց այս կամ այն տեսակի իրավական դրությունը: Քաղաքացիական օրենսգրքի 117-րդ հոդվածի երկրորդ կետը սահմանում է կոոպերատիվի կանոնադրությանը ներկայացվող պահանջները: Ի թիվս տնտեսական ընկերությունների կանոնադրությանը 55-րդ հոդվածով ներկայացվող պահանջների՝ կոոպերատիվի կանոնադրությունը պետք է տեղեկություններ պարունակի անդամների փայավճարների չափի, դրանք վճարելու կարգի և այդ պարտավորությունը խախտելու համար կոոպերատիվի անդամի պատասխանատվության, կոոպերատիվի կառավարման մարմինների կազմի և այլ տեղեկությունների մասին: Այսինքն՝ սրանք այն ռեկվիզիտներն են, որոնք պարտադիր

[1] Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.**, Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2013, էջ 38:

պետք է նախատեսվեն կոոպերատիվի կանոնադրությամբ, և որոնց բացակայության դեպքում կազմակերպությունը կոոպերատիվ համարվել և որպես կոոպերատիվ գրանցվել չի կարող:

Իրավաբանական անձանց **երկրորդ հատկանիշը** նրանց գույքային առանձնացվածությունն է, որը ապահովում է նրանց գործունեության նյութական բազան: Կոոպերատիվի գույքի ստեղծման հիմնական եղանակը անդամների կողմից փայերի միավորումն է: Կոոպերատիվներին՝ որպես իրավաբանական անձի, բնորոշ է գույքային առանձնացվածությունը, որի դրսևորումներից մեկը կոոպերատիվներում անբաժանելի ֆոնդերի ստեղծումն է: Հարկ է նկատել, որ կոոպերատիվներում, ի տարբերություն բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, կանոնադրական կապիտալ չի ստեղծվում, և կանոնադրական կապիտալի նպատակը վերապահված է անբաժանելի ֆոնդերին: Կոոպերատիվներում ստեղծվում են նաև պահուստային ֆոնդեր, որը հավատ է ներշնչում կոոպերատիվի գործունեության նկատմամբ և երաշխավորում է կոոպերատիվի կողմից իր պարտավորությունների կատարումը՝ ի տարբերություն մյուս առևտրային կազմակերպությունների, որտեղ նման դեր ունի կանոնադրական կապիտալը: Անբաժանելի ֆոնդերը ձևավորվում են անդամների փայերից, իսկ պահուստային ֆոնդերը՝ կոոպերատիվի եկամուտի մի մասից կամ անդամների լրացուցիչ վճարներից: Որպես կանոն, կոոպերատիվներում ստեղծվում են նաև բնեղեն և (կամ) դրամական հատուկ ֆոնդեր: Դրամական հատուկ ֆոնդերը ծառայում են կոոպերատիվի մասնակիցների վերապատրաստմանը, կրթությանը, ինչպես նաև կանոնադրությամբ նախատեսված այլ նպատակների: Կոոպերատիվների տարեկան եկամուտի 4-20%-ը ուղղվում է նման ֆոնդերի ստեղծմանը, հստակ չափը նախատեսվում է կանոնադրությամբ[1]:

Իրավաբանական անձի **հաջորդ հատկանիշը** քաղաքացիական շրջանառությունում հանդես գալու իրավունքն է: Իրավաբանական անձինք քաղաքացիական շրջանառությունում հանդես են

[1] Տե՛ս The United Nations Guidelines aimed at creating a supportive environment for the development of cooperatives, and the 2002 ILO Recommendation № 193 on the promotion of cooperatives, CH-1211 Geneva 22, Switzerland, էջ 44:

գալիս իրենց մարմինների միջոցով: Այս հատկանիշը նրանց թույլ է տալիս ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում, միջնորդ դատարանում, այսինքն՝ հանդես գալ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ: Կոոպերատիվը՝ որպես իրավաբանական անձ, ունի իր կառավարման մարմինները, որոնց միջոցով էլ հանդես է գալիս քաղաքացիական շրջանառությունում: Կոոպերատիվների կառավարման մարմիններ են ընդհանուր ժողովը՝ որպես կառավարման բարձրագույն մարմին, որի միջոցով իրացվում է կառավարման՝ «Մեկ անդամ՝ մեկ ձայն» սկզբունքը, և գործադիր մարմինը՝ վարչությունը և (կամ) նախագահը, որն իրացնում է ընթացիկ ղեկավարումը: Կոոպերատիվները քաղաքացիական շրջանառությանը մասնակցում են նաև գործարքներ կնքելու միջոցով: Ի տարբերություն իրավաբանական անձանց այլ տեսակների կողմից կնքվող գործարքների՝ կոոպերատիվների դեպքում առանձնացվում է կնքվող գործարքների երկու տեսակ՝ ներքին և արտաքին: Կոոպերատիվների կառավարմանը և նրանց կողմից կնքվող գործարքների առանձնահատկություններին չենք անդրադառնում աշխատանքի սեղմության պատճառով:

Իրավաբանական անձի **չորրորդ հատկանիշը** նրա ինքնուրույն գույքային պատասխանատվությունն է: Իրավաբանական անձի գույքը առանձնացված է նրա հիմնադիրների, մասնակիցների, մյուս կազմակերպությունների գույքից, որպեսզի պարտատերերը իրենց պահանջները ներկայացնեն միայն այդ գույքի նկատմամբ, և յուրաքանչյուր իրավաբանական անձ պատասխանատվություն կրի իրեն պատկանող կամ հանձնված ամբողջ գույքով: Որպես կանոն, իրավաբանական անձի հիմնադիրները կամ մասնակիցները պատասխանատու չեն իրավաբանական անձի պարտավորություններով, իրավաբանական անձն էլ պատասխանատու չէ սեփականատիրոջ կամ հիմնադիրների պարտավորություններով:

Բայց հարկ է նկատել, որ Քաղ. օր.-ը կոոպերատիվների դեպքում նախատեսում է այս կանոնից որոշակի շեղում: Այսպես, 118-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Կոոպերատիվի անդամները պարտավոր են տարեկան հաշվեկշռի հաստատումից հետո՝ երկու ամսվա ընթացքում, լրացուցիչ վճարների միջոցով փակել

առաջացած վնասները: {…}: Կոոպերատիվի անդամները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում կոոպերատիվի յուրաքանչյուր անդամի լրացուցիչ վճարի չմուծված մասի սահմաններում»: Հետևաբար կոոպերատիվի անդամը կրում է լրացուցիչ պարտավորություն կոոպերատիվի պարտավորություններով՝ կոոպերատիվի այլ անդամի կողմից չմուծած լրացուցիչ վճարի սահմաններում: Այս առումով հետաքրքիր մոտեցում է դրսևորվել Եվրոպական Միության՝ կոոպերատիվներին վերաբերող միասնական կարգավորման շրջանակներում[1], որը նախատեսում է, որ կոոպերատիվի անդամը պարտավորություն է կրում կոոպերատիվի պարտավորությունների համար իր փայի արժեքի սահմաններում, եթե այլ բան նախատեսված չէ կանոնադրությամբ: Այն դեպքում, երբ կոոպերատիվի անդամի պատասխանատվությունը սահմանափակված է իր փայամասնակցության չափով, կոոպերատիվի անվանման վերջում պետք է գրվի սահմանափակ (limited) բառը:

Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ տեսնում ենք, որ առանձին օրենքներ սահմանում են կոոպերատիվների ստեղծման համար նվազագույն կապիտալի առկայություն[2], որը միտված է ապահովելու կոոպերատիվի պարտատերերի պահանջները, ինչը, սակայն, մեր պարագայում ընդունելի չենք համարում, քանի որ այն կարող է խոչընդոտ հանդիսանալ կոոպերատիվների ստեղծման համար:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ չնայած կոոպերատիվները ունեն իրավաբանական անձանց բոլոր հատկանիշները և համարվում են իրավաբանական անձ, այդուհանդերձ, նրանք օժտված են միայն իրենց բնորոշ առանձնահատկություններով, որոնցով պայմանավորված էլ իրավաբանական անձանց տեսակների շարքում ունեն իրենց ուրույն տեղը:

---

[1] Տե՛ս 18.2.2003 Official Journal of the European Union L 207/1 Council Regulation 1435/2003 of July 2003 on the Statute for a European Cooperative Society (SCE), հոդված 1, մաս 2-րդ:

[2] Տե՛ս Law 4/1993, 24 June, Cooperatives of Basque Country, modified by Law 1/2000, 29 June, Law 8/2006, 1 December, and Law 6/2008, 25 June: Օրենքը կոոպերատիվների ստեղծման համար նախատեսում է 3000 եվրո նվազագույն կապիտալ:

КООПЕРАТИВЫ КАК ОСОБЫЙ ВИД ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ

Артур Варданян
Аспирант кафедры гражданского права ЕГУ

В данной статье анализируется правовая сущность кооперативов, изучается понятие «юридическое лицо» и особенности кооператива как юридического лица. В статье также рассматриваются проблемы правового регулирования понятия «кооператив» в гражданском кодексе, международная практика и правовые концепции кооперативов в странах ЕС, в США и в других странах. Учитывая важность новых правовых регулирований, мы предлагаем ряд концепций, направленных на повышение эффективности правового регулирования деятельности кооперативов.

COOPERATIVE AS A SPECIAL TYPE OF LEGAL ENTITIES

Artur Vardanyan
PhD student of YSU Chair of Civil Law

The Article analyzes legal substance of cooperatives. The common characters of legal entities are presented and the special features of cooperatives are highlighted in that context. In the article the problems of present regulations in Civil Code are also mentioned. International practice and legal definition of cooperatives in different countries of EU, and also in US and other countries are presented. Considering the importance of new legal definitions we have tried to offer a number of concepts tended to improve effectiveness of the legal definition of cooperatives.

Բանալի բառեր՝ *կոոպերատիվ, իրավաբանական անձինք, արտադրական կոոպերատիվներ, սպառողական կոոպերատիվներ, կոոպերացիա, իրավաբանական անձանց հատկանիշներ։*
Ключевые слова: *кооператив, юридические лица, производственные кооперативы, потребительские кооперативы, кооперация, признаки юридических лиц.*
Key words- *cooperative, legal entities, manufacturing cooperatives, consumer cooperatives, cooperation, features of legal entities.*

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԸ

Եվա Սաղոյան[1]

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը[2], ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի իրավական կարգավորմանը նվիրելով առանձին գլուխ, ամրագրում է, որ այդ գլխի կանոնները, ի թիվս Օրենսգրքում թվարկված այլ ծառայությունների, տարածվում են նաև զբոսաշրջիկության ծառայությունների պայմանագրերի նկատմամբ (Քաղ. օր., հոդված 777, մաս 3)։ Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով մի կողմը՝ կատարողը, պարտավորվում է մյուս կողմի՝ պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար (Քաղ. օր., հոդված 777, մաս 1)։ Քաղաքացիներին մատուցվող տարատեսակ ծառայությունների համար ընդհանուր այս կանոնը զբոսաշրջային[3] ծառայությունների դեպքում ունի մի շարք առանձնահատկություններ։ Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ զբոսաշրջության բնագավառին առնչվող, այդ թվում՝ զբոսաշրջային գործունեության իրականացման կապակցությամբ ծագող իրավահարաբերությունները կանոնակարգվում են հատուկ օրենքով, այն է՝ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով[4]։

---

[1] ԵՊՀ, քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆ. Արմեն Հայկյանց։

[2] Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք (05.05.1998), ՀՀՊՏ 1998.08.10/17(50), 01.01.1999, այսուհետ՝ նաև Օրենսգիրք, Քաղ. օր.։

[3] Թեև քաղաքացիական օրենսգիրքն օգտագործում է «զբոսաշրջիկության ծառայություններ» եզրույթը, սույն աշխատանքի շրջանակներում մենք նպատակահարմար ենք գտնում օգտագործել «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «զբոսաշրջային ծառայություններ» եզրույթը։

[4] «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության՝ 2003 թվականի դեկտեմբերի 17-ի օրենք, ՀՀՏՊ 2004.01.29/6 (305)։

Այս օրենքը, սակայն, լինելով քաղաքացիների հանգստի, շրջագայության և ազատ տեղաշարժման իրավունքների իրականացման գործընթացը կանոնակարգող հիմնական իրավական ակտը, միայն հպանցիկ է անդրադառնում այս բնագավառում ծագող պայմանագրային հարաբերությունների իրավական կարգավորմանը: Այսպես՝ օրենքը չի մատնանշում զբոսաշրջության կազմակերպման նպատակով քաղաքացու հետ կնքվող պայմանագրի տեսակը, այլ միայն ամրագրում է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից զբոսաշրջային արդյունքը տրամադրվում է սպառողի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր պայմանագրի կնքմամբ (հոդված 16, մաս 1): Միևնույն ժամանակ օրենքը, սահմանելով զբոսաշրջային գործունեության սուբյեկտների գործունեության բովանդակությունը, զբոսաշրջային օպերատորի դեպքում այն բնորոշում է որպես զբոսաշրջային արդյունքի ձևավորման, խթանման և իրացման, գործակալի դեպքում՝ զբոսաշրջային արդյունքի խթանման և իրացման գործունեություն, ինչի արդյունքում տրամադրվում է զբոսաշրջային փաթեթ:

Այս կարգավորումներից կարելի է ենթադրել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագիրը հենց ՀՀ քաղաքացիական օրենսգրքում հիշատակվող՝ զբոսաշրջիկության ծառայությունների մատուցման պայմանագիրն է (այդ մասին են վկայում նաև օրենքի մի շարք դրույթներ, որոնցում օգտագործվում է «զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագիր» եզրույթը), սակայն օրենքում այդ մասին ուղղակի հիշատակման բացակայությունը, փոխարենը՝ զբոսաշրջային արդյունքի «տրամադրում» և «իրացում» եզրույթների օգտագործումն առաջացնում են կնքվող պայմանագրի իրավական բնույթի վերաբերյալ անորոշություն:

Քաղաքացիաիրավական ցանկացած պայմանագիր, որոշակի իրավահարաբերություն առաջացնելուց, փոփոխելուց կամ դադարեցնելուց բացի, օրենքով որոշված շրջանակներում մինչև գործողության դադարման պահը կարգավորում է նաև այդ իրավահարաբերության մասնակիցների վարքագիծը՝ հանդիսանալով կող-

մերի իրավաչափ վարքագծի չափանիշ[1]: Զբոսաշրջության բնագավառում կնքվող պայմանագրերն այս առումով բացառություն չեն: Թեև քաղաքացիների զբոսաշրջության կազմակերպման գործընթացը միջնորդավորվում է պայմանագրային հարաբերությունների բարդ շղթայով, բայցևայնպես այդ հարաբերություններում կենտրոնական տեղ է զբաղեցնում զբոսաշրջիկի հետ կնքվող պայմանագիրը, քանի որ հենց վերջինս է այն առանցքային իրավական գործիքը, որից սկիզբ է առնում ճանապարհորդության կազմակերպման ողջ գործընթացը: Այդ պայմանագիրը ոչ միայն որոշակի արդյունքի հասնելուն ուղղված իրավական միջոց է, այլև զբոսաշրջության ընթացքում սպառողների իրավունքների պաշտպանության հիմնական միջոցը[2], և պատահական չէ, որ դրա ուսումնասիրությունը մասնագիտական գրականության մեջ հատուկ ուշադրության է արժանացել:

Հարկ է նշել, որ զբոսաշրջիկի (այլ պատվիրատուի) և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի միջև կնքվող պայմանագրի տեսակի հարցում թե՛ միջազգային իրավական փաստաթղթերում, թե՛ տարբեր երկրների օրենսդրություններում և թե՛ իրավաբանական գրականության մեջ միասնական մոտեցում գոյություն չունի: Այսպես՝ «Ճանապարհորդության վերաբերյալ գործարքի մասին» Բրյուսելի 1970 թ. կոնվենցիան օգտագործում է «ճանապարհորդության կազմակերպման գործարք» եզրույթը, որի ներքո հասկացվում է ցանկացած գործարք, որով ճանապարհորդության կազմակերպիչը, հանդես գալով իր անունից, պարտավորվում է ճանապարհորդին տրամադրել ճանապարհորդության ընթացքում վերջինիս պահանջմունքների բավարարմանն ուղղված համախմբված ծառայությունների ամբողջություն[3]: Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրքն այդ պայմանագիրը բնորոշում է որպես «զբո-

[1] Տե՛ս **Բարսեղյան Տ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, Եր., 2006, էջ 436:

[2] Տե՛ս **Сирик Н.**, **Кусков А.**, Правовая природа договора о реализации туристкого продукта // Вестник Харьковского национального университета, № 1042, Харьков, 2013, էջ 132:

[3] Տե՛ս International convention on travel contracts, Brussels, April 23, 1970, կետ 1:

սաշրջային փաթեթի պայմանագիր»[1], «Ռուսաստանի Դաշնությունում զբոսաշրջության հիմունքների մասին» ՌԴ ֆեդերալ օրենքը[2]՝ որպես «զբոսաշրջային արդյունքի տրամադրման պայմանագիր», «Զբոսաշրջության մասին» Ուկրաինայի օրենքը՝ որպես «զբոսաշրջային սպասարկման պայմանագիր»,[3] «Զբոսաշրջության մասին» Լիտվայի օրենքը՝ որպես «վաճառողի և զբոսաշրջիկի միջև կնքվող պայմանագիր»[4]: Ամերիկյան իրավունքում զբոսաշրջային գործունեության սուբյեկտները հայտնի են որպես «ճանապարհորդություն վաճառողներ» («seller of travel»), ովքեր շուկայում իրացնում են պատրաստի զբոսաշրջային փաթեթներ[5]:

Զբոսաշրջիկի հետ կնքվող պայմանագրի իրավական բնույթի վերաբերյալ տեսակետներն իրարամերժ են նաև իրավաբանական գրականության մեջ: Դրանք կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին տեսակետի կողմնակիցները քննարկվող պայմանագիրը համարում են առուծախի պայմանագիր, քանի որ, ըստ այս խումբ հեղինակների, զբոսաշրջային արդյունքը գույք է[6] կամ զբոսաշրջիկի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ չգտնվող երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ զբոսաշրջիկի իրավունք[7], ուստի դրա տրամադրման կապակցությամբ կնքվող պայմանագիրը ոչ այլ ինչ է, քան առուծախի պայմանագիր: Թեև այս տեսակետը իրավաբանական գրականության մեջ ունի լայն տարածում, այդուհանդերձ, հեղինակների ճնշող մեծամասնությունն այլ տեսակետի կողմնակից է: Վերջինիս էությունն այն է, որ զբոսաշրջիկի և զբոսաշրջային գործու-

---

[1] Տե՛ս German civil code of 18 August 1896, հոդված 651:

[2] Տե՛ս Федеральный закон «Об основах туристической деятельности в Российской Федерации» от 4 октября 1996 г.:

[3] Տե՛ս Закон Украины «О туризме» от 15 сентября 1995 г., հոդված 15:

[4] Տե՛ս “Tourism Law” of Lithuania, of 7 October 1997, հոդված 15:

[5] Տե՛ս http://www.atorus.ru/press-centre/new/39791.html:

[6] Տե՛ս **Гордеева М.**, Юридическая природа договора о реализации туристского продукта/ http://www.yurclub.ru/docs/civil/article350.html :

[7] Տե՛ս **Сергеев В.**, Договор об оказании международных туристских услуг: Теоритические проблемы и практические аспекты правоотношений туриста и туристской фирмы в процессе заключения договора/ http://center-bereg.ru/f2022.html:

նեության սուբյեկտի միջև կնքվող պայմանագիրը ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր է: Այդ պայմանագրի էությունը մի կողմի (զբոսաշրջիկի)՝ իր կոնտրագենտից որոշակի ծառայությունների մատուցում պահանջելու իրավունքն է[1], իսկ զբոսաշրջային արդյունքի տրամադրման պայմանագիրը որպես որոշակի գույքի (գույքային իրավունքների) հատուցելի փոխանցման պայմանագիր բնորոշելը ոչ միայն չի բխում այդ պայմանագրի և, առհասարակ, զբոսաշրջային գործունեության էությունից, այլև փաստացի աղավաղում է այդ հասկացությունների հարաբերակցությունը[2]:

Իրավաբանական գրականության մեջ քննարկվող հարցի վերաբերյալ հանդիպում են այլ տեսակետներ ևս: Այսպես՝ կան հեղինակներ, ովքեր զբոսաշրջիկի հետ կնքվող պայմանագրի տեսակը պայմանավորում են նրանով, թե ով է հանդես գալիս զբոսաշրջիկի կոնտրագենտի դերում՝ զբոսաշրջային օպերատո՞րը, թե՞ գործակալը: Եվ եթե, օրինակ, Ե. Լոմակինան գտնում է, որ զբոսաշրջիկի և զբոսաշրջային գործակալի միջև կնքվող պայմանագիրը, ըստ էության, տեղեկատվա-խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր է, իսկ զբոսաշրջային օպերատորի հետ կնքվող պայմանագիրը՝ զբոսաշրջային արդյունքի (վաուչեր, զբոսաշրջային փաթեթ) առուծախի պայմանագիր[3], ապա Օ. Պիկուցկայան և Ա. Աբդուրախմանովն արտահայտում են տրամագծորեն հակառակ տեսակետ, ըստ որի՝ զբոսաշրջային օպերատորները կնքում են ծառայությունների մատուցման պայմանագրեր, իսկ զբոսաշրջային միջնորդները (նկատի են առնվում զբոսաշրջային գործակալները)՝ օպերատորի կողմից ձևավորված զբոսաշրջային արդյունքի առուծախի պայմանագրեր[4]: Ուշագրավ է Օ. Վիկուլո-

---

[1] Տե՛ս **Писаревский Е.**, Еще раз о правовой природе договора на туристическое обслуживание, М., 2000, էջեր 4-8, http://www.juristlib.ru/book_1863.html:

[2] Տե՛ս նույն տեղը:

[3] Տե՛ս **Ломакина Е.**, Содержание туристских правоотношений // Европейские перспективы, № 4, Харьков, 2013, էջ 138-139:

[4] Տե՛ս **Абдурахманов А.**, **Пикуцкая О.**, К вопросу о договорных отношениях в туризме // Вестник ассоциации вузов туризма и сервиса, № 1, М., 2010, էջ 44:

վայի տեսակետը, ով, ուսումնասիրելով զբոսաշրջային արդյունքի տրամադրման պայմանագրի առարկան, եզրակացնում է, որ օրենսդիրը, օգտագործելով «քողարկված» ձևակերպում, կողմերին հնարավորություն է ընձեռել սեփական հայեցողությամբ ընտրելու պայմանագրի նախընտրելի տեսակը. դա կարող է լինել ինչպես ծառայությունների վճարովի մատուցման, այնպես էլ առուծախի պայմանագիր[1]:

Կարծում ենք՝ զբոսաշրջիկի հետ կնքվող պայմանագրի իրավական բնույթի պարզաբանման համար նախևառաջ անհրաժեշտ է ուսումնասիրել վերջինիս առարկան: Օրենքի մի շարք դրույթների համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ այդ պայմանագրի առարկան զբոսաշրջային արդյունքն է: Զբոսաշրջային արդյունքն օրենքը բնորոշում է որպես զբոսաշրջային ծառայությունների ամբողջական համալիր, իսկ զբոսաշրջային արդյունքը կազմող ծառայություններն են զբոսաշրջիկներին մատուցվող և նրանց պահանջմունքների բավարարմանն ուղղված տեղաբաշխման, հյուրանոցային, տեղափոխման, էքսկուրսային, սննդի կազմակերպման և մատուցման, մշակութային, մարզական բնույթի միջոցառումների, հանգստի, զվարճանքի կազմակերպման և այլ ծառայությունները (հոդված 2): Վերոշարադրյալ կարգավորումներից բխում է, որ զբոսաշրջային արդյունքը, որպես այդպիսին, որոշակի ծառայությունների ամբողջություն է:

Հարկ է նշել, որ զբոսաշրջիկի և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի միջև կնքվող պայմանագիրը ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր համարող շատ հեղինակներ իրենց տեսակետը հիմնավորում են նրանով, որ քաղաքացիական օրենսդրությամբ գույքը և ծառայություններն առանձնացվում են որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտների առանձին տեսակներ: Եթե գույքը (այդ թվում՝ գույքային իրավունքները) քաղաքացիական շրջանառության մի մասնակցից մյուսին որոշակի վճարի դիմաց որպես սեփականություն հանձնելն առաջացնում է առուծախի իրավահարաբերություն, ապա մի անձի կողմից մեկ այլ անձի պատվերով որոշակի գործողությունների կատարումը

[1] Տե՛ս **Викулова О.**, Комментарий к Федеральному закону «Об основах туристикой деятельности в Российской Федерации», М., 2008, էջ 83:

կամ որոշակի գործունեության իրականացումը՝ ծառայությունների մատուցման իրավահարաբերություն[1]: Այսինքն, եթե առուծախի պայմանագրի առարկան գույքը կամ գույքային իրավունքներն են, ապա ծառայությունները ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առարկան են, ուստի զբոսաշրջային արդյունքը՝ որպես ծառայությունների ամբողջություն, չի կարող համարվել գույք, քանի որ այն չի ընդգկվում իրերի դասակարգման՝ քաղաքացիական օրենսգրքում թվարկված կատեգորիաներից և ոչ մեկում[2]: Ավելին՝ զբոսաշրջային արդյունքը որպես գույք դիտարկելը կնշանակի, որ այն ձեռք բերած զբոսաշրջիկն իր հերթին կարող է զբոսաշրջային արդյունքը վաճառել, նվիրել, փոխանակել կամ ժառանգաբար փոխանցել այլ անձի, ինչն առհասարակ հակասում է ծառայությունների էությանը[3]:

Մեր կարծիքով՝ այս տեսակետը վիճելի է, քանի որ վերջինս հետևանք է «գույք» և «իր» հասկացությունների շփոթի: Մինչդեռ այդ եզրույթներն էապես տարբերվում են միմյանցից: «Գույքը» հավաքական հասկացություն է, որը ներառում է տարատեսակ իրեր, իրերի համակցություն, նյութական արժեքներ, գույքային իրավունքներ և անգամ պարտականություններ, իսկ «իր» ասելով հասկացվում է առարկա, ապրանք, այլ կերպ ասած՝ նյութական աշխարհի այն բոլոր առարկաները, որոնք նախատեսված են որոշակի կարիքների բավարարման համար և կարող են գտնվել մարդու տիրապետության ներքո[4]: Այսինքն՝ «գույք» կատեգորիան շատ ավելի ընդգրկուն է, քան միայն նյութական աշխարհի օբյեկտներն ընդգրկող «իր» կատեգորիան:

Հատկանշական է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներում նույնպես կոնվենցիայի իմաստով պաշտպանության ենթակա գույքի շրջանակին տրվել է բավականին լայն մեկնաբանություն: Այսպես՝ սեփակա-

---

[1] Տե՛ս **Барабанова П.**, Гражданско-правовое регулирование договорных отношений в сфере туризма в России и Англии, М., 2017, էջ 38:

[2] Տե՛ս **Писаревский Е.**, նշված աշխատություն, նույն տեղում:

[3] Տե՛ս **Накушнова Е., Кириченко О.**, Вопросы гражданско-правового регулирования туристких услуг в Российской Федерации http://lexandbusiness.ru/view-article.php?id=7609:

[4] Տե՛ս **Բարսեղյան Տ.**, նշված աշխատությունը, էջ 179, 192-193:

նության պաշտպանության կոնվենցիոն իրավունքի բովանդակությունը կազմող՝ յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձի կողմից իր գույքից անարգել օգտվելու իրավունքին առնչվող մի շարք գործերի շրջանակներում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պաշտպանության ենթակա գույքի շրջանակը շատ ավելի լայն է, քան միայն նյութական սեփականությունը. սեփականության պաշպանության իրավունքը հավասարապես վերաբերում է նաև ոչ նյութական սեփականությանը, օրինակ՝ պայմանագրային իրավունքներին: ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայից հայտնի են դեպքեր, երբ Դատարանը կոնվենցիայի իմաստով «գույք» հասկացության մեջ ընդգրկել է պայմանագրից բխող պահանջի իրավունքը: Այսպես՝ Kin-Stib-ը և Majkic-ն ընդդեմ Սերբիայի գործով Դատարանը գտել է, որ արբիտրաժային դատարանի որոշմամբ հաստատված պահանջի իրավունքը գույք է, որից անձը զրկվել է որոշմամբ չկատարելու պատճառով[1]: Ի դեպ, նմանատիպ դիրքորոշում թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում արտահայտել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ գրավի իրավունքը դիտարկելով որպես «գույք»՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով[2]:

Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով զբոսաշրջային արդյունքի էությանը՝ գտնում ենք, որ թեև այն չի կարող դասվել իրերի՝ որպես նյութական օբյեկտների շարքին, սակայն դա չի բացառում վերջինս գույք որակելու հնարավորությունը, քանի որ այն դեպքում, երբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտն ապահովում է երրորդ անձի կողմից համապատասխան ծառայությունների մատուցումը, նա զբոսաշրջիկին ոչ թե մատուցում է այդ ծառայություններն ինքնին, այլ տրամադրում է դրանց նկատմամբ պահանջի իրավունքը, իսկ վերջինս լիովին ընդգրկվում է «գույք» հասկացության մեջ: Միևնույն ժամանակ մենք համակարծիք չենք այն հեղինակներին,

[1] Տե՛ս Kin-Stib & Majkic v. Serbia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2010 թվականի ապրիլի 20-ի վճիռը:

[2] Տե՛ս թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը:

ովքեր զբոսաշրջային արդյունքը դիտարկում են սոսկ որպես երրորդ անձի կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից զբոսաշրջիկին փոխանցված պահանջի իրավունք, հետևաբար գտնում, որ զբոսաշրջային արդյունքի տրամադրման պայմանագիրն առուծախի պայմանագիր է[1]: Կարծում ենք՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի գործունեության բովանդակությունը շատ ավելի լայն է, քան միայն որոշ ծառայություններ մատուցող երրորդ անձանց, մասնավորապես՝ փոխադրողի կամ հյուրանոցի կողմից համապատասխան ծառայությունների մատուցման ապահովումը: Զբոսաշրջային գործունեության սուբյեկտն ինքը հաճախ մատուցում է առանձին զբոսաշրջային ծառայություններ: Ինչպես արդարացիորեն նշում են Մ. Բրագինսկին և Վ. Վիտրյանսկին, զբոսաշրջիկի և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի միջև կնքվող պայմանագրի իմաստն այն է, որ ծառայությունների մատուցման պահանջ ներկայացնելու իրավունքը զբոսաշրջիկին չի փոխանցվում, այլ ծագում է հենց վերջինիս մոտ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի նկատմամբ: Այս առումով զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագիրը չի տարբերվում, օրինակ, աուդիտորական ընկերության և վերջինիս ծառայությունների պատվիրատուի միջև առաջացող հարաբերություններից: Երկու դեպքում էլ պայմանագրի էությունը կողմերից մեկի (զբոսաշրջիկ, աուդիտորական ընկերության հաճախորդ) իրավունքն է՝ մյուս կողմից պահանջելու որոշակի ծառայությունների մատուցում[2]: Բացի այդ՝ շատ հաճախ երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ զբոսաշրջիկի պահանջի իրավունքը բխում է հենց անմիջականորեն վերջիններիս հետ, օրինակ՝ ավիափոխադրողի հետ, կնքված պայմանագրից, ինչը ենթադրում է պարտավորության խախտման համար հենց ծառայություն մատուցողի պատասխանատվությունը: Դ. Շնչուկի կարծիքով՝ դա

[1] Տե՛ս **Сергеев В.**, Договор об оказании международных туристских услуг: Теоретические проблемы и практические аспекты правоотношений туриста и туристской фирмы в процессе заключения договора//Право и экономика, М., 1998, http://center-bereg.ru/f2022.html:

[2] Տե՛ս **Брагинский М., Витрянский В.**, Договорное право, Книга третья, Договоры о выполнении работ и оказании услуг, М., 2002, 124:

միանգամայն արդարացված է, քանի որ անհնար է թռչել ինքնաթիռով՝ առանց ավիափոխադրողի հետ փոխադրման պայմանագրի կնքման[1]: Ուրեմն զբոսաշրջային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանությանը առնչվող հարցերը քննարկելիս անհրաժեշտ է նկատի ունենալ նաև տրանսպորտային օրենսդրության առանձնահատկությունները[2]:

Այս կապակցությամբ ավելորդ չենք համարում ներկայացնել Լիտվայի օրինակը, որի «Զբոսաշրջության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասը, սահմանելով «զբոսաշրջության կազմակերպման ծառայության» հասկացությունը, այն բնորոշում է որպես զբոսաշրջային ծառայությունների ձեռքբերման և վաճառքի, զբոսաշրջային փաթեթի ձևավորման, գովազդի և վաճառքի, ինչպես նաև ***ճանապարհորդության կազմակերպմանն ուղղված լրացուցիչ զբոսաշրջային ծառայությունների մատուցմանն ուղղված գործունեություն:*** Այս նորմի վերլուծությունից բխում է, որ Լիտվայի օրենսդրությամբ հստակ ամրագրված է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի գործունեությունն ընդգրկում է ոչ միայն երրորդ անձանցից համապատասխան ծառայությունների ձեռքբերումն ու տրամադրումը զբոսաշրջիկին, այլև ճանապարհորդության կազմակերպման համար անհրաժեշտ այլ ծառայությունների մատուցումը: Նմանատիպ կարգավորումներ հանդիպում են նաև այլ երկրների օրենսդրություններում[3]:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ զբոսաշրջիկի և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի միջև ծագող իրավահարաբերությունների բովանդակությունը միայն երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ պահանջի իրավունքի փոխանցումը չէ: Օրենքն իր հերթին, զբոսաշրջային գործունեությունը բնորոշելով որպես զբոսաշրջային ծառայությունների մատուցման գործունեություն, կարծես ելնում է հենց այդ կանխավար-

---

[1] Տե՛ս **Шевчук Д.**, Договорные отношения приминительно к туризму// Финансовая газета. Региональный выпуск, № 21, М., 2009 https://wiseeconomist.ru/ poleznoe/54110-dogovornye-otnosheniya-primenitelno-turizmu:

[2] Տե՛ս **Гордеева М.**, Юридическая природа договора о реализации туристкого продукта http://www.yurclub.ru/docs/civil/article350.html:

[3] Տե՛ս, օրինակ, «Զբոսաշրջության մասին» Ուկրաինայի 1995 թ. օրենքը:

կածից: Սա նշանակում է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների գործունեության բովանդակությունը որոշակի ծառայությունների մատուցումն է, ինչը պետք է իրականացվի հենց ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում: Այդ մասին ուղղակիորեն ազդարարում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը: Սակայն հարց է ծագում՝ որոնք են, ի վերջո, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից զբոսաշրջիկին մատուցվող ծառայությունները:

Հարկ է նշել, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի և զբոսաշրջիկի միջև կնքվող պայմանագիրը ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր որակող բազմաթիվ հեղինակներ պնդում են, որ այդ պայմանագրի առարկան զբոսաշրջիկին մատուցվող տեղափոխման, տեղաբաշխման, հյուրանոցային, սննդի, էքսկուրսային և այլ ծառայություններն են[1], և այս դեպքում գործ ունենք քաղաքացիական շրջանառության մեջ լայն տարածում ունեցող՝ պարտապանի կողմից պարտավորության կատարումը երրորդ անձի վրա դնելու իրավական մեխանիզմի հետ: Օրինակ՝ Մ. Բրագինսկին և Վ. Վիտրյանսկին գտնում են, որ զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի նկատմամբ այդ մեխանիզմի կիրառման հնարավորությունն ուղղակիորեն բխում է քաղաքացիական օրենսգրքից՝ հենց միայն այդ իրավահարաբերության սուբյեկտային կազմի ուժով. զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտապան է, զբոսաշրջիկը՝ պարտատեր, իսկ անմիջականորեն ծառայություններ մատուցողներն այն երրորդ անձինք են, ովքեր կապում են պարտապանին և պարտատիրոջը: Հետևաբար պարտավորության մեջ երրորդ անձի ներգրավման հնարավորությունը չի կարող հիմնական պարտավորության բնույթի վրա որևէ ազդեցություն ունենալ[2]: Մ. Մուտալինան նշում է, որ զբոսաշրջային արդյունքը կազմող ծառայությունները մեծ մասամբ մատուցվում են այլ անձի կողմից, ուստի զբոսաշրջային գործունեության սուբյեկտի և զբոսաշրջիկի միջև

[1] Տե՛ս Туристический бизнес. Турбизнес. Какова сущность и специфика туристических услуг? //http:tourfaq.net/travel-buisness/kakova-sushnost-specifika-turisticheskix-uslug, **Накушнова Е., Кириченко О.В**, նշված աշխատությունը, նույն տեղում:

[2] Տե՛ս **Брагинский М. И., Витрянский В.В.,** նշված աշխատությունը, էջ 124:

կնքվող պայմանագիրը կարող է համարվել երրորդ անձանց կողմից կատարվող պայմանագիր[1]: Պարտապանի կողմից պարտավորության կատարումը երրորդ անձի վրա դնելու իրավական մեխանիզմը՝ որպես զբոսաշրջիկի և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի միջև առաջացող հարաբերությունների նախընտրելի իրավական ձև, ընդգծում են նաև այլ հեղինակներ՝ կարևորելով այն, որ այդ դեպքում պարտապանը՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտը, երրորդ անձանց՝ ծառայություններ մատուցողների գործողությունների համար պատասխանատվություն կկրի պարտատիրոջ՝ զբոսաշրջիկի առջև[2]: Կարծում ենք՝ այս տեսակետին դժվար է համաձայնել: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ երրորդ անձի կողմից պարտավորության կատարումը կանոնակարգող 351-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ պարտապանը կարող է երրորդ անձի վրա դնել այն պարտավորության կատարումը, որը կատարելու պարտականությունը կրում է ինքը՝ պարտապանը: Թեև զբոսաշրջային գործունեության սուբյեկտի և զբոսաշրջիկի միջև կնքվող պայմանագրի վերջնական նպատակը ճանապարհորդության ընթացքում զբոսաշրջիկի պահանջմունքների բավարարմանն ուղղված անհրաժեշտ ծառայությունների մատուցումն է, այնուամենայնիվ, զբոսաշրջային գործունեության սուբյեկտի պարտականությունը ոչ թե ինքնին զբոսաշրջային արդյունքը կազմող բոլոր ծառայությունների մատուցումն է, այլ երրորդ անձանց կողմից համապատասխան ծառայությունների մատուցման ապահովումը, ինչպես նաև ճանապարհորդության կազմակերպման համար անհրաժեշտ այլ լրացուցիչ ծառայությունների մատուցումը: Կարծում ենք՝ միանգամայն իրավացի է Օ. Վիկուլովան, ով գտնում է, որ ճանապարհորդության կազմակերպմանն ուղղված գործունեությունն անհրաժեշտ է տարբերել զբոսաշրջային ծառայությունների մատուցման գործունեությունից, քանի որ զբոսաշրջային ծառայությունը գործունեություն է, որն ուղղված է անմիջականորեն ճանապարհորդության ընթացքում զբոսաշրջի-

[1] Տե՛ս **Муталиева А.**, Гражданско-правовая характеристика договора о реализации туристского продукта: https://cyberleninka.ru/article/n/grazhdansko-pravovaya-harakteristika-dogovora-o-realizatsii-turistskogo-produkta:

[2] Տե՛ս **Писревский Е.**, նշված աշխատությունը, նույն տեղում:

կի պահանջմունքների բավարարմանը, ուստի «զբոսաշրջության կազմակերպմանն ուղղված գործունեություն» և «զբոսաշրջային ծառայությունների մատուցման գործունեություն» հասկացությունները տարբեր են[1]: Այս առումով հատկանշական է Ուկրաինայի «Զբոսաշրջության մասին» օրենքը, որը զբոսաշրջային արդյունք ձևավորողներին հստակ տարանջատում է զբոսաշրջային ծառայություններ մատուցողներից[2]: «Ռուսաստանի Դաշնությունում զբոսաշրջության հիմունքների մասին» օրենքը, սահմանելով «զբոսաշրջային գործունեություն» հասկացությունը, այն բնորոշում է որպես զբոսաշրջային օպերատորի և գործակալի, ինչպես նաև ճանապահորդությունների կազմակերպման այլ գործունեություն[3]: Նշված նորմի վերլուծությունից բխում է, որ զբոսաշրջային գործունեության էությունը հենց ճանապարհորդությունների կազմակերպումն է: Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրքը զբոսաշրջային ծառայությունների մատուցման իրավական կարգավորմանը վերաբերող հոդվածներում օգտագործում է «ճանապարհորդության կազմակերպիչ» եզրույթը: Նույն եզրույթն է օգտագործվում նաև «Ճանապարհորդության գործարքի մասին» Բրյուսելի կոնվենցիայում:

Զբոսաշրջային արդյունքը կազմող զբոսաշրջային ծառայությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանց հիմնական մասը գործնականում չի կարող մատուցվել ո՛չ զբոսաշրջային օպերատորի, ո՛չ էլ առավել ևս գործակալի կողմից, քանի որ այդ ծառայությունների մատուցումը ենթադրում է համապատասխան գործունեությամբ զբաղվելու թույլտվության առկայություն: Ակնհայտ է, որ, օրինակ, զբոսաշրջիկի տեղափոխման ծառայություն կարող են մատուցել միայն փոխադրողները, հյուրանոցային ծառայություն՝ հյուրանոցները և այլն: Այդուհանդերձ, որոշ զբոսաշրջային ծառայություններ (օրինակ՝ տրանսֆերային ծառայությունները, վիզա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը և այլն) կարող են անմիջականորեն մատուցել նաև զբոսաշրջային գործունեության սուբյեկտները: Մեր կարծի-

[1] Տե՛ս **Викулова О.**, նշված աշխատությունը, էջ 12:

[2] Տե՛ս «Զբոսաշրջության մասին» Ուկրաինայի 1995 թ. օրենք, հոդված 5:

[3] Տե՛ս Федеральный закон «Об основах туристической деятельности в Российской Федерации» от 4 октября 1996 г., հոդված 1:

քով՝ թե՛ երրորդ անձանց կողմից համապատասխան ծառայությունների մատուցման ապահովումը, մասնավորապես՝ ավիատոմսերի, հյուրանոցային համարների ամրագրումը, թե՛ անմիջականորեն զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից մատուցվող ծառայություններն ունեն կազմակերպչական բնույթ և ուղղված են զբոսաշրջիկի պահանջներին համապատասխան վերջինիս ճանապարհորդության կազմակերպմանը: Այդ մասին են վկայում նաև մեր կողմից ուսումնասիրված մի շարք զբոսաշրջային ընկերությունների կողմից մշակված, սպառողի հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևերը, որոնց բովանդակությունից ակնհայտ է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի հիմնական գործառույթը պատվիրատուի պատվերին համապատասխան ճանապարհորդության կազմակերպումն է[1]:

Վերոշարադրյալի լույսի ներքո անդրադառնալով «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով զբոսաշրջային գործունեության սուբյեկտի և զբոսաշրջիկի պայմանագրային հարաբերությունների կարգավորմանը՝ կարելի է արձանագրել, որ օրենսդիրը, սահմանափակվելով սպառողի հետ կնքվող պայմանագրի ձևը և էական պայմանները սահմանելով, չի տվել այդ պայմանագրի իրավական բնորոշումը կամ դասել այն քաղաքացիական օրենսգրքով նախատեսված որևէ պայմանագրի շարքին: Թեև քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 3-րդ մասից ուղղակիորեն բխում է այդ պայմանագրի՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր լինելու հանգամանքը, սակայն Օրենքում այդ մասին հիշատակման բացակայությունը, փոխարենը՝ զբոսաշրջային արդյունքի «տրամադրում» և «իրացում» ձևակերպումների ամրագրումը թույլ չի տալիս կնքվող պայմանագիրը միանշանակ բնորոշել որպես ծառայությունների մատուցման պայմանագիր: Գործնականում այդ պայմանագրին միանշա-

[1] Տե՛ս Приказ министерства культуры Российской Федерации от 31 октября 2016 г., № 2386, Об утверждении типовых форм договора о реализации туристкого продукта, заключаемого между туроператором и туристом и (или) иным заказчиком, и договора о реализации туристского продукта, заключаемого между турагентом и туристом и (или) иным заказчиком, http://www.balkanintour.by/turistam/dokumenty/dokumenty/dogovor-okazaniya-turisticheskikh-uslug/; //www.hotels.am/Files/F9Z_Contract.pdf :

նակ բնորոշում տալը բավականին բարդ է, քանի որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, կախված սպառողի պատվերից, վերջինիս մատուցվող ծառայությունների շրջանակը կարող է միանգամայն տարբեր լինել. սպառողին կարող է տրամադրվել ինչպես զբոսաշրջային ծառայությունների ամբողջական համալիր, այնպես էլ այդ ծառայություններից մի քանիսը միայն: Զբոսաշրջային գործունեության սուբյեկտը կարող է ինչպես սոսկ ապահովել ծառայություններ մատուցող այլ անձանց կողմից համապատասխան ծառայության մատուցումը, այնպես էլ անձամբ մատուցել ճանապարհորդության կազմակերպմանն ուղղված որոշ ծառայություններ: Այդուհանդերձ, մեր կարծիքով, դրանից զբոսաշրջային գործունեության սուբյեկտի գործունեության էությունը չի փոխվում: Չնայած տարբեր երկրների օրենսդրություններով և միջազգային իրավական փաստաթղթերով զբոսաշրջիկի հետ կնքվող պայմանագրի և զբոսաշրջիկի կոնտրագենտի բնորոշման հարցում հակասական մոտեցումներին՝ թե՛ մի շարք արտասահմանյան երկրների օրենսդրությունների, թե՛ պրակտիկայում գործող բազմաթիվ զբոսաշրջային ընկերությունների գործունեության վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ դա սպառողի պատվերի հիման վրա և դրան համապատասխան վերջինիս ճանապահորդության կազմակերպմանն ուղղված գործունեություն է: Կարծում ենք՝ հենց այս ծառայությունն է զբոսաշրջիկի և զբոսաշրջային գործունեության սուբյեկտի միջև կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրի առարկան:

ПРАВОВАЯ ПРИРОДА ДОГОВОРА ОКАЗАНИЯ ТУРИСТСКИХ УСЛУГ

Ева Сагоян

Аспирант кафедры гражданского права ЕГУ

В статье рассматриваются некоторые проблемы определения юридической природы договора о реализации туристского продукта, в частности, анализируются сущность туристского продукта как предмета договора и особенности услуг, оказываемых в рамках данного договора. Нами выявлены некоторые несоответствия норм в Гражданском кодексе РА с нормами в Законе «О туризме и туристской деятельности». В результате проведенного исследования мы пришли к выводу, что договор, заключаемый между туристом и су-

бъектом туристской деятельности, – это договор на оказание услуг, и его предметом является организация путешествия в соответствие с заказом потребителя.

LEGAL NATURE OF THE CONTRACT FOR TOURIST SERVICES PROVISION

Eva Saghoyan
PhD student of the Chair of Civil law at YSU

The article discusses some issues of the legal nature of the contract on the sale of a tourism product, in particular, the author analyzes the essence of a tourism product as a subject of the contract, features of services provided under this contract, and as a result the author identifies some inconsistencies between the provisions of the Civil Code of the RA and the provisions of the Law on "Tourism and tourism activities". The author comes to the conclusion that the agreement between the tourist and tour operator/agent is a contract for rendering services, and its subject is the organization of the trip in accordance with the order of the consumer.

Բանալի բառեր՝ *զբոսաշրջային ծառայություններ, զբոսաշրջային արդյունք, զբոսաշրջային օպերատոր, զբոսաշրջային գործակալ, ճանապարհորդության կազմակերպում:*
Ключевые слова: *туристские услуги, туристский продукт, туроператор, турагент, организация путешествия.*
Key words: *tourist services, tourism product, tour operator, tour agent, organization of travel.*

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԱՄՍԱՏԱՐ ԸՆՏԱՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ (ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Ռուբինա Պետրոսյան[1]

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպմանն ուղղված խնամակալության և հոգաբարձության ու խնամատար ընտանիքի ինստիտուտների համակողմանի բացահայտումն անհրաժեշտ է կատարել վերջիններիս կարգավորման առարկա հանդիսացող հարաբերությունների իրավահամեմատական վերլուծության միջոցով:

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի[2] համաձայն՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բացահայտում են խնամակալության և հոգաբարձության մարմինները, վարում են նման երեխաների հաշվառումը և, ելնելով ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից, ընտրում են այդ երեխաների խնամքի ու դաստիարակության կազմակերպման ձևերը: Կազմակերպությունների (նախադպրոցական կրթական, հանրակրթական, բժշկական կամ նմանատիպ այլ կազմակերպությունների) պաշտոնատար անձինք, որոնք տեղեկություններ ունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին, պարտավոր են այդ մասին հաղորդել խնամակալության և հոգաբարձության մարմիններին՝ ըստ երեխաների փաստացի գտնվելու վայրի (ՀՀ ընտանեկան օրենսգիրք, 109-րդ հոդվ., 1-ին մաս, 110-րդ հոդվ., ինչպես նաև ՀՀ կառավարության՝ 2016 թ. հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 9-րդ կետ, 5-րդ ենթակետ): Քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խնամակալ կամ հոգաբարձու նշանակում է խնամակա-

---

[1] ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Վահրամ Ավետիսյան:

[2] ՀՀ ընտանեկան օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 09.11.2004 թ., ուժի մեջ է մտել 19.04.2005 թ.: ՀՀՊՏ 2005.01.19/4 (376), հոդվ. 60:

լության ու հոգաբարձության կարիք ունեցող անձի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը մեկ ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ նշված մարմնին հայտնի է դարձել քաղաքացու նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու անհրաժեշտությունը: Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները տեղական ինքնակառավարման մարմիններն են: «Տեղական ինքնակառավարման մարմնի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշվում է, որ պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորություններն են խնամակալության, հոգաբարձության սահմանումը և խնամակալության ու հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորությունների իրականացումը: Ինչպես տեսնում ենք, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կարգավիճակի ճանաչման և նրանց նկատմամբ խնամքի ձևի ընտրության գործընթացի իրար փոխկապված փուլերում՝ բացահայտման, հաշվառման, կարգավիճակի ճանաչման և խնամքի ձևի որոշման գործընթացներում, ներգրավված են և առանցքային դերակատարում ունեն խնամակալության և հոգաբարձության մարմինները: Այստեղ հատկանշական է ներկայացնել ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)[1] հնչեցրած մտահոգությունը՝ կապված մեր երկրում գործող խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ: Մասնավորապես, դրական գնահատելով ազգային, մարզային և տեղական մակարդակներում ստեղծված՝ երեխայի պաշտպանության եռաստիճան համակարգը, այդուհանդերձ, Կոմիտեն մտահոգիչ է համարել այն, որ տեղական մակարդակում երեխայի պաշտպանությունը հիմնականում իրականացվում է անհրաժեշտ որակավորում և մասնագիտական պատրաստվածություն չունեցող կամավորների կողմից: Կոմիտեն առաջարկել է միջոցներ ձեռնարկել տեղական մակարդակում երեխաների պաշտպանության գործում երեխաների

[1] ՀՀ-ի կողմից 1993 թվականին վավերացված՝ երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի և հետագայում լրացված կոնվենցիային կից երկու արձանագրությունների՝ անդամ պետությունների կողմից կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեն:

հետ աշխատանքի փորձ ունեցող մասնագետների ներգրավելու համար, երեխաների այլընտրանքային խնամքի մասին ՄԱԿ-ի կողմից 2009 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված ուղենիշներին համապատասխան՝ ընտանեկան միջավայրից զրկված երեխաների համար ապահովել ընտանիքահենք և համայնքահենք խնամքի այլընտրանքային բավարար տարբերակներ (կետ 30)[1]: Արդարացի և հիմնավորված համարելով Կոմիտեի մտահոգությունը՝ ցանկանում ենք ուշադրություն հրավիրել ներքոհիշյալ օրենսդրական կարգավորումների վրա:

1. Ընտանեկան օրենսգրքի համաձայն՝ երեխաների խնամակալներ (հոգաբարձուներ) կարող են նշանակվել միայն չափահաս գործունակ անձինք՝ իրենց համաձայնությամբ: Երեխայի խնամակալ (հոգաբարձու) նշանակելիս հաշվի են առնվում խնամակալի (հոգաբարձուի) բարոյական և անձնական այլ հատկանիշներ, խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունները կատարելու նրա ունակությունները, խնամակալի (հոգաբարձուի) և երեխայի փոխհարաբերությունները, երեխայի նկատմամբ խնամակալի (հոգաբարձուի) ընտանիքի անդամների վերաբերմունքը, ինչպես նաև երեխայի ցանկությունը, եթե դա հնարավոր է: Այնուհետև սպառիչ թվարկվում են այն հանգամանքները (քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ հիվանդ անձինք, կյանքի և առողջության նկատմամբ դիտավորյալ հանցագործություններ կատարած անձինք, խնամակալների (հոգաբարձուների) պարտականություններից հեռացված անձինք և այլն), որոնց առկայության փաստը բացառում է վերջիններիս՝ խնամակալ (հոգաբարձու) նշանակվելու հնարավորությունը (Ընտ. օր., 135-րդ հոդվ.): Եթե բացառող հանգամանքները հավաստվում են համապատասխան տեղեկանքներով և փաստաթղթերով (բժշկական հաստատությունների կողմից տրված տեղեկանք, խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշում, դատարանի վճիռ և այլն), ապա տրամաբանական հարց է առաջանում, թե, ի դեմս խնամակալության և հոգաբարձության մարմնի, ով պետք է կատարի, օրինակ, հնարավոր խնամակալի (հոգաբարձուի) բարոյա-

[1] Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.ohchr.org/en/hrbodies/crc/pages/crcindex.aspx: 02.12.2017 թ. դրությամբ:

կան և անձնական այլ հատկանիշները, խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունները կատարելու նրա ունակությունները պարզելու, դրանք «երեխայի լավագույն շահերի» լույսի ներքո գնահատելու մնացյալ բոլոր գործողությունները, որոնք, մեր համոզմամբ, միայն լուրջ մասնագիտական խմբի կողմից իրականացված ուսումնասիրության և ըստ դրա կազմված եզրակացության հիման վրա կարող են կատարվել, երբ ՀՀ-ում բացակայում է քննարկվող բնագավառում պարտադիր կատարման ենթակա որոշումներ ընդունելու իրավասություն ունեցող մասնագիտացված մարմինը[1]: Չնայած այն հանգամանքին, որ խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ (այսուհետ՝ Հանձնաժողով), միևնույն է, դա որևէ լուրջ ազդեցություն չի կարող ունենալ խնամակալության և հոգաբարձության մարմնի պրոֆեսիոնալիզմի ձևավորման և գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից՝ պայմանավորված հետևյալ պատճառներով. նախ՝ այդ հանձնաժողովը՝ հասարակական հիմունքներով գործող, խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվող *խորհրդակցական մարմին է*, երկրորդ՝ հանձնաժողովի կազմում *կարող են ընդգրկվել* մարզպետարանների (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համա-

[1] Սույն ուսումնասիրության շրջանակներում ամենևին նպատակ չունենալով մուտք գործելու հանրային իրավունքի կարգավորման բնագավառ՝ այդուհանդերձ չենք կարող չանդրադառնալ խնամակալության և հոգաբարձության՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության հարցում բացառիկ լիազորություններով օժտված մարմնի մասնագիտական պատրաստվածությանը, իրավասություններին, կայացվող որոշումների հիմնավորվածությանը, որքանով դրանք անմիջականորեն առչնվում են մեր կողմից կատարվող ուսումնասիրությանը:

ձայնությամբ), *երրորդ՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի առաջարկով* հանձնաժողովը կազմում ու խնամակալության և հոգաբարձության մարմնին է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող, *բացառապես խորհրդատվական բնույթ ունեցող համապատասխան եզրակացություն* (Ընտ. օր., 109-րդ հոդվածի 2-րդ մաս, ՀՀ կառավարության՝ 2016 թվականի հունիսի 2-ի «**Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-ն ուրոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**» N 631-Ն որոշման (այսուհետ՝ Կանոնադրություն) 11-րդ, 14-րդ, 18-րդ կետեր: Բացի այս՝ 2005 թվականին ստեղծվել է կրկին խորհրդակցական մարմին հանդիսացող՝ Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը[1], որի գործառույթներից է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանության պետական ծրագրերի իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը (4-րդ կետի 9-րդ ենթակետ): Հանձնաժողովի որոշումներն ունեն երաշխավորական բնույթ (11-րդ կետ): Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հանձնաժողովում կրկին գերակշռում են ոչ այս ոլորտում գործունեություն իրականացնող մասնագետները:

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը մի կողմից կարծես իմպերատիվ կերպով ամրագրել է խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից այս հանձնաժողովների ստեղծումը, մյուս կողմից վերջիններիս համար քննարկվող հարաբերությունների ոլորտում գործող համապատասխան մասնագետներից բաղկացած մասնագիտացված կազմ ունենալու և իրենց գործունեության արդյունքում խնամակալության և հոգաբարձության մարմնի համար պարտադիր որոշումներ կայացնելու իրավասություն չվերապահող դրույթների ամրագրմամբ, ըստ էության, հանձնաժողովի գոյությունն ու գործունեությունը դարձնում է ֆունկցիոնալությունից

[1] Տե՛ս ՀՀ վարչապետի՝ 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի՝ 2005 թվականի հոկտեմբերի 28-ի N 835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1295-Ն որոշումը:

զուրկ և ձևական: Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարիքները գնահատելու, ուսումնասիրելու գործառույթների հատվածը վերապահված է նաև սոցիալական աջակցության տարածքային մարմիններին[1], որոնք խնամակալության և հոգաբարձության մարմնին տալիս են եզրակացություններ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության հանձնելու, ինչպես նաև խնամակալ ճանաչելու կամ խնամատար ծնող հաշվառելու մասին («Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք[2], 17-րդ հոդված, 1-ին մաս, 4-րդ կետ), որոնք, իհարկե, կրկին պարտադիր և վերջնական չեն կարող լինել խնամակալության և հոգաբարձության մարմնի համար՝ չնայած այս մարմինների բավականին մասնագիտացված բնույթին: Գործող իրավակարգավորումների պայմաններում խնամակալության և հոգաբարձության մարմինը, ըստ էության, խնամակալի (հոգաբարձուի) ընտրությունը կատարում է՝ ղեկավարվելով օրենքով ամրագրված բացառող հանգամանքներով, իսկ այլ հանգամանքներ գնահատում է սեփական հայեցողությամբ: Խնամակալության և հոգաբարձության սահմանման մի շարք որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնամակալ (հոգաբարձու) են նշանակվում հիմնականում երեխայի հարազատները:

[1] ՀՀ-ում սոցիալական աջակցության տարածքային մարմինները գործում են հիմնականում մարզկենտրոնում և քաղաքներում: Օրինակ՝ Վայոց ձորի մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինը գտնվում է Ջերմուկ քաղաքում: Այստեղ կրկին բարձրանում է այս մարմնի գործունեության արդյունավետության հարցը, քանի որ կենտրոնից զգալի հեռավորության վրա գտնվող որևէ համայնքում անհրաժեշտ ուսումնասիրությունների կատարումը բավականին ժամանակատար կարող է լինել, և մեկ-երկու այցի կամ հանդիպման շրջանակներում հնարավոր չի լինի համապարփակ եզրակացություն կազմել, ինչն էլ համայնքներում համապատասխան մասնագետների ներգրավմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունն է առաջ բերում: Սոցիալական աջակցության մարմինների սպասարկման տարածքները տե՛ս ՀՀ կառավարության՝ 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշման մեջ:

[2] «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 17.12.2014 թ., ուժի մեջ է մտել 01.01.2015 թ., ՀՀՊՏ 2014.12.30/76 (1089).1, Հոդ. 1253.20:

Խնամակալ (հոգաբարձու) նշանակելու որոշումների հիմքում դրվում են խնամակալ դառնալ ցանկացող անձի դիմումը և անձի համաձայնությունն ու պատրաստակամությունը՝ խնամակալի և հոգաբարձուի պարտականությունները կատարելու, հիմնականում բժշկական և նարկոլոգիական կենտրոնների համապատասխան տեղեկանքները, երբեմն Հանձնաժողովի եզրակացությունը, տարբեր անձանց վկայությունները[1]: Նշենք, որ դրանցում առհասարակ բացակայում են ապագա խնամակալի գույքային, ընտանեկան դրության և զբաղվածության՝ խնամակալի պարտականությունների հետ համատեղելիության վերաբերյալ դրույթները, մինչդեռ դրանք հավասարապես կարևոր են երեխայի պատշաճ ընտանեկան դաստիարակության, ֆիզիկական և հոգեկան լիարժեք զարգացման ապահովման առումներով: Դրանց գերակշռող մասում բացակայում է նշում՝ հանձնաժողովի՝ թեկուզև խորհրդատվական բնույթ կրող եզրակացության մասին, բայց դրանցում կարմիր թելի նման առկա է «ելնելով անչափահասների շահերից» ձևակերպումը, սակայն թե հատուկ մասնագիտական ինչ գիտելիքների տիրապետող մասնագետը և երեխայի ու խնամակալի (հոգաբարձուի) համադրելիության ինչ չափանիշներից ելնելով է կայացնում «երեխայի լավագույն շահերից» բխող որոշում, ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չէ: Ուշագրավ է Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն առ այն, որ խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացությունը, որը տրվել է առանց երեխայի՝ նրա դաստիարակությանը հավակնող ծնողներից մեկի կյանքի հետազոտության, չի կարող գնահատվել որպես վեճի լուծման համար պատշաճ ապացույց[2]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) **Օլսոնն (թիվ 2) ընդդեմ Շվեդիայի գործով** ընդգծել է երեխային առնչվող հարցերում պետական իշ-

[1] Տե՛ս, օրինակ, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի՝ 27.10. 2009 թ. N 1, 03. 05.2010 թ. թիվ 120, 01.02.2010 թ.թիվ 04 որոշումները, Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետի՝ 2016 թվականի 11. 03.2016 թ., № 119 որոշումը:

[2] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԱՔԴ/0474/02/11 գործով 23.03.2012 թ. որոշումը:

խանությունների դերը[1]: **P. C.- ն և S-ն ընդդեմ Միացյալ Թագավորության** և **W-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործերով** ՄԻԵԴ-ը կրկին ընդգծել է, որ երեխայի՝ կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորման անհնարինության որոշումները պետք է հիմնված լինեն համապատասխան նկատառումների վրա և չպետք է լինեն միակողմանի, դրանք չպետք է լինեն կամ երևան կամայական (**P. C.- ն և S-ը**): Միևնույն ժամանակ ՄԻԵԴ-ը երեխային երկարաժամկետ խնամակալության հանձնելու առնչությամբ նշել է, որ որոշումների կայացման գործընթացը պետք է այնպիսին լինի, որ տեղական իրավասու մարմնի կողմից պարզվեն և պատշաճ կերպով հաշվի առնվեն ծնողների տեսակետներն ու շահերը, և ծնողները կարողանան պատշաճ ժամկետում օգտվել իրենց հասանելի իրավական պաշտպանության միջոցներից **(W-ն)**[2]:

Պրակտիկայում խնամակալ կամ հոգաբարձու հիմնականում նշանակվում է երեխայի տատիկը կամ պապիկը[3], ովքեր հաճախ իրենք ունեն խնամքի և աջակցության կարիք, ինչը, սակայն, խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից ոչ միշտ է հաշվի առնվում, և երեխան հանձնվում է նրանց խնամքին՝ փաստացի շարունակելով ունենալ խնամքի կարիք: Կարծում ենք՝ խնամակալի անձի ընտրությունը հատկապես բարդ է հաշմանդամություն կամ առողջական ծանր խնդիրներ, դաստիարակության դժվարություններ ունեցող, հոգեկան կամ վարքի խանգարումով տառապող երեխայի դեպքում, երբ կրկին օբյեկտիվորեն առաջ է գալիս նեղ մասնագիտական գիտելիքների կիրառմամբ և խնամակալին ներկայացվող հստակ պահանջների առաջադրման, դրանցում համոզվելու և «երեխայի լավագույն շահի» հաշվառման հիման վրա վերջինիս նշանակելու խնդիրը: Կոմիտեն, **«երեխայի**

---

[1] Տե՛ս **Olsson v. Sweden (№ 2),** 27/11/1992, app no (s). /գանգատ թիվ/ 13441/87:

[2] Տե՛ս **P., C. and S. v. The United Kingdom, 16/07/2002, App. No(s). 56547/00:**

[3] Տարեց՝ 65 տարին լրացած անձինք առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հետ հավասարապես «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի իմաստով պետության կողմից տրամադրվող խնամքի սուբյեկտներ են: Այսինքն՝ խնամակալ և հոգաբարձու կարող են նշանակվել անձինք, ովքեր իրենք հաճախ պետության խնամքի և հոգածության կարիքն ունեն:

լավագույն շահ» հասկացությունը մեկնաբանելով որպես ընդգրկուն և ճկուն հասկացություն, որի բովանդակությունը որոշվում և գնահատվում է կոնկրետ գործի՝ երեխային առնչվող անձնական հանգամանքների, նրա գտնված իրավիճակի և կարիքների լույսի ներքո, արձանագրել է, որ նման մոտեցումը չարաշահումների հնարավորություն է տալիս մասնագետներին, հատկապես՝ խնամակալությանը վերաբերող վեճերում, ովքեր հրաժարվում են երեխայի լավագույն շահերը գնահատելուց՝ դրանք համարելով անկարևոր կամ ոչ վերաբերելի[1]: Նշենք, որ 20-րդ դարի կեսին ԱՄՆ-ում խնամակալության և հոգաբարձության վերաբերյալ որոշումներ կայացնելու լրջության և դժվարության պատճառով ընտանեկան դատարաններն ու օրենսդիրները ձևավորեցին guardian *ad litem*[2]-ի ինստիտուտը[3] (վերջինս դատարանի կողմից նշանակված խնամակալ է, ով դատավարական գործընթացներում ներկա-

[1] ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն 14 երեխայի լավագույն շահերը առանջնահերթորեն հաշվի առնելու իրավունքի վերաբերյալ, հոդված 3, մաս 1, 29 մայիսի 2013. CRC/C/GC/14, կետեր 32-34:

[2] Հարկ է նշել, որ մասնագիտական շրջանակներում բազմաթիվ ուսումնասիրություններ եղան երեխայի խնամակալությանը վերաբերող վեճերում guardian ad litem-ի անորոշ ու հակասական դերի մասին, և guardian *ad litem-ի* պարտականությունների ու այս ձևի օգտագործմամբ երեխայի շահերի պաշտպանության առնչությամբ ընդունված միասնական մոտեցում չկա: Այս մասին տե՛ս **Jean Koh Peters,** Representing children in child protective proceedings: ethical and practical dimensions, (3rd ed., 2007), էջ 40-41: **Barbara A. Atwood,** Representing Children Who Can't or Won't Direct Counsel: Best Interests Lawyering or No Lawyer at All?, 53 ARIZ. L. REV., 2011, էջ 381, 386-403: **Linda D. Elrod,** Client-Directed Lawyers for Children: It Is the "Right" Thing To Do, 27 PACE L. REV., 2007, էջ 869, 876:
Guardian ad litem-ը կարճ ժամկետով նշանակված է քննիչ, որը դատարանին առաջարկներ է ներկայացնում խնամակալության կարիք ունեցող անձանց մասին, իրավաբան, որը ներկայացնում է երեխային, փաստաբան՝ «երեխայի լավագույն շահերի» ապահովման համար, օգնական:

[3] Առավել մանրամասն տե՛ս **Richard Ducote**, Guardians Ad Litem in Private Custody Litigation: The Case for Abolition, 3 LOY. J. PUB. INT. L. 106, 109-12 (2002) (discussing the history and background of guardians ad litem):

յացնում է անչափահասի շահերը[1]): Նրանց երբեմն կոչում են «դատարանի աչքեր և ականջներ»[2]:

Իրավիճակը փոքր-ինչ այլ է երեխային խնամատար ծնողին հանձնելու դեպքում: 2017 թվականի դեկտեմբերի 21-ին «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի[3] ընդունմամբ հիմնարար փոփոխության ենթարկվեց խնամատար ընտանիքի ինստիտուտը: Խնամատարությունը կազմակերպվում է իրավասու մարմինների կողմից ընտրված, հաշվառված, վերապատրաստված, որակավորված անձի միջոցով մինչև երեխայի՝ ընտանիքում խնամատարության կիրառման հիմք հանդիսացած իրավիճակի վերացումը: Այդ անձանց ընտրության, հաշվառման, որակավորման և վերապատրաստման կարգը, ինչպես նաև երեխայի՝ ընտանիքում խնամատարության կիրառման հիմք հանդիսացող վիճակի փոփոխումն ու դրա չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը[4]: Այս դեպքում արդեն իրա-

---

[1] Տե՛ս https://dictionary.findlaw.com/definition/guardian.html:

[2] Տե՛ս **Raven C. Lidman & Betsy R. Hollingsworth**, The Guardian Ad Litem in Child Custody Cases: The Contours of our Judicial System Stretched Beyond Recognition, 6 GEO. MASON L. REV., 1998, էջ 257:

[3] «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 21.12.2017 թ., ուժի մեջ է մտել 12.01.2018 թ., ՀՕ-10-Ն, ՀՀՊՏ 2018.01.17/4 (1362), հոդ. 28:

[4] Ներկայումս շրջանառության մեջ է գտնվում **«Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց հաշվառման, որակավորման և երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու, խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց վերապատրաստման, խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողության կարգերը, խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով դրամական միջոցների վճարման կարգը և չափը, խնամատարության պայմանագրի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»** ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով մանրամասն կարգավորված են խնամատար ծնող դառնալու հայտ ներկայացրած անձանց առաջադրվող պահանջները, նրանց հաշվառման, վերապատրաստման, հոգեզավակի խնամքի նկատմամբ վե-

վասու մարմին է հանդիսանում մարզպետարանը, Երևան քաղաքում՝ քաղաքապետարանը, որոնք էլ իրականացնում են խնամատար ընտանիքի ընտրությունը՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը (Ընտ. օր., 137-րդ հոդվ., 1-ին և 11-րդ մասեր)։ Այս կարգավորմամբ օրենսդիրը խնամատարության կազմակերպման գործընթացից դուրս է մղել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության, նրանց խնամքի և դաստիարակության կազմակերպման ձևի ընտրություն կատարելու բացառիկ իրավասություն ունեցող խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ այդ իրավունքը, ի դեմս մարզպետարանի (քաղաքապետարանի), կրկին վերապահելով ոչ մասնագիտացված մեկ այլ մարմնի, սակայն այս դեպքում մարզպետարանը խնամատար ծնողի ընտրությունը կատարում է օրենսդրական մակարդակում ամրագրված՝ խնամատար ծնողի անձին ներկայացվող խիստ հստակ պահանջների հիման վրա։ Օրենսդրական նորամուծություն հանդիսացող խնամատար ծնողի ուսուցման, որակավորման ու վերապատրաստման պարտադիր գործընթացները նվազագույնի են հասցնում ոչ մասնագիտացված մարմնի՝ **խնամատար ծնողի համար պահանջվող համապատասխան գիտելիքներ և գործնական հմտություններ չունեցող անձին խնամատար ծնող ընտրելու հնարավորությունը: Հատկապես դրական պետք է գնահատել մասնագիտացված, ճգնաժամային և արձակուրդային խնամատար ընտանիքների ներդնումը, որոնց շնորհիվ իրականացվում է առանց ծնողական խնամքի մնացած և որոշակի առողջական ու ընտանեկան խնդիրներ ունեցող երեխաների թիրախային խնամք և դաստիարակություն (Ընտ. օր., 139-րդ հոդվ., 1-4-րդ մասեր):** Օրինակ՝ սուր կամ քրոնիկ վարակիչ հիվանդությամբ տառապող երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կարող են կազմակերպվել, եթե վերջինս անցել է հաշմանդամություն կամ այլ հատուկ կարիք կամ դաստիարակության դժվարություն ունեցող երեխային խնամելու և դաստիարակելու համապատասխան վերապատրաստում, ինչպես նաև ունի երեխայի կարիքներին համապատասխանող կենցաղա-

---

րահսկողության, խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով դրամական միջոցների վճարման կարգը և այլն։

յին և այլ անհրաժեշտ պայմաններ **(Ընտ. օր., 137-րդ հոդվ., 4-րդ մաս)**: Այս ամենից ակնհայտորեն հետևում է մեկ բան, որ օրենսդիրը ընդգծված ուշադրություն է հրավիրել խնամատարության հանձնվող երեխաների խնամքով և դաստիարակությամբ զբաղվող անձանց նկատմամբ, սակայն անտարբեր վերաբերմունք ցուցաբերել խնամակալության (հոգաբարձության) հանձնված երեխաների նկատմամբ: Ներկայումս արդեն իսկ գործող սոցիալական աշխատողի[1] և դեպք վարողի ինստիտուտները հնարավորություն են ընձեռում համայնքներում բարձրացնելու խնամակալության և հոգաբարձության մարմնի գործունեության արդյունավետությունը: Ուստի խնամատար ընտանիքի առնչությամբ կատարված համակարգային բարեփոխումների համատեքստում անհրաժեշտ է գաղափարական ու բովանդակային բարեփոխումներ կատարել նաև խնամակալության և հոգաբարձության ինստիտուտում՝ ներպետական իրավական դաշտում համապատասխան կանոնակարգումներ կատարելով: Մասնավորապես՝ ընտանեկան օրենսգրքում լրացում կատարել՝ ամրագրելով համապատասխան լիազորող նորմ[2], որին համապատասխան կընդունվի ՀՀ կառավա-

[1] 5000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի աշխատակազմում ստեղծվում է համայնքի սոցիալական աշխատողի հաստիք («Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենք, 48-րդ հոդվ., 3-րդ մաս), որն իրավունք ունի կատարելու տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրելու սոցիալական աջակցություն ստանալու նպատակով կամ խնամակալ ճանաչվելու կամ խնամատար ծնող հաշվառվելու համար դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները: Սոցիալական դեպք վարողը պարտավոր է գնահատել սոցիալական աջակցություն հայցողի, խնամակալ ճանաչվելու կամ խնամատար ծնող կամ որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու համար դիմողի (ընտանիքի), սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական խնդիրները, գույքային և ոչ գույքային ռեսուրսները, սոցիալական կարիքները («Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, 40-րդ հոդվ.): Սակայն ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չեն այն չափանիշները, որոնք նրանց համար ուղենիշ պետք է լինել իրենց այս գործառույթներն իրականացնելիս:

[2] ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության ու օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կա-

րության որոշում, որով հստակ կսահմանվեն խնամակալին (հոգաբարձուին) ներկայացվող պահանջները, դրանց գնահատման կարգն ու իրավասու մարմինը, ինչպես նաև խնամակալի (հոգաբարձուի) և խնամարկյալի համադրելիության չափանիշները:

2. Միևնույն նպատակին ուղղված այս երկու ինստիտուտների հաջորդ տարբերությունը հետևյալն է. խնամակալի և հոգաբարձուի պարտականություններն առաջանում են խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից խնամակալին (հոգաբարձուին) նշանակելու որոշում՝ վարչական ակտ կայացնելու պահից, իսկ խնամատարության հիմքում ընկած է երեխայի խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու մասին պայմանագիրը (այսուհետ՝ խնամատարության պայմանագիր): Մեր կարծիքով՝ խնամակալ նշանակելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումը, չնայած նրա հանրային իրավական բնույթին, կարելի է դիտարկել ոչ միայն որպես վարչաիրավական ակտ: Այս ակտի ընդունմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինն իրականացնում է սոցիալական խնամքի կարիք ունեցող անձի տեղավորման, խնամքի և դաստիարակության կազմակերպման՝ իր վրա դրված պարտավորությունը: Խնամակալության և հոգաբարձության մարմինը չի գործում որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, այլ որպես հանրային սուբյեկտի անունից հանդես եկող ՀՀ տեղական ինքնակառավարման մարմին: Պետք է համաձայնել Լ. Յու. Միխեևայի այն դիրքորոշմանը, որ խնամակալության և հոգաբարձության մարմնի կայացրած ակտն ունի գործարքին բնորոշ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են երրորդ անձի առնչությամբ խնամակալի (հոգաբարձուի), ինչպես նաև հանրային իշխանության մարմնի իրավունքների և պարտականությունների առաջացումը, խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից կոնտրագենտի ազատ ընտրությունը, կամքի ազատության արտահայտումը, իրավահարաբերության մասնակիցների հավասարությունը[1]: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրա-

---

րող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

[1] Տե՛ս **Михеева Л.Ю.,** Опека и попечительство: теория и практика, М., «Волтерс Клувер», 2004, էջ 150:

վաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն: Այս հոդվածի դրույթները կիրառելի են նաև խնամակալության (հոգաբարձության) իրավահարաբերությունների նկատմամբ, որքանով որ խնամակալի (հոգաբարձուի) և խնամակալության (հոգաբարձության) մարմնի միջև որոշակի պայմանների շուրջ ձեռք բերված համաձայնությամբ առաջանում է խնամակալի (հոգաբարձուի) կողմից երրոդ անձի օգտին մի շարք գործողություններ կատարելու պարտավորությունը, իսկ սա կարող է դասվել քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտների այնպիսի տեսակների շարքին, ինչպիսիք ծառայություններն են: Համեմատելով պայմանագիրը և անհատական վարչական ակտը՝ Ի Բ. Նովիցկին գրում է, որ «….վարչական ակտում սկզբում արտահայտվում է իշխանական կամքը, որով պայմանավորված էլ՝ ստեղծվող իրավահարաբերություններում չկա կողմերի հավասարություն: Պետական հիմնարկը այդպիսի դեպքերում հանդես է գալիս որպես պետական կառավարման մարմին, ուստի նրա կամքը պարտադիր է նրանց համար, ում այն ուղղված է»[1]: Այս իրավահարաբերությունների հիմքում անպայմանորեն միշտ ընկած է խնամակալի (հոգաբարձուի) համաձայնությունը, որով վարչական ակտը, մեր համոզմամբ, նույնանում է խնամատարության պայմանագրի հետ: Միայն վերջին դեպքում այն երեխայի օրինական ներկայացուցչի, մարզպետարանի (քաղաքապետարանի) և խնամատար ծնողի եռակողմ համաձայնության արդյունք է, որը, կարծում ենք, նպաստում է ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ կողմերից յուրաքանչյուրի պատասխանատվության զգացումի բարձրացմանը, սակայն երկու դեպքում էլ բացակայում է իրավասու մարմնի կողմից պայմանագիր կնքելուն հարկադրելու որևէ տարր: Տեղին է մեջբերել հետյալ միտքը. «Պայմանագիրը կողմերի համաձայնություն է, իսկ համաձայնությունը կամային ակտ է, անձանց կամարտահայտություն, կամային գործընթացի արդյունք: Համաձայնության մեջ հիմնականը «կամքի» դրվագն է….»[2]: Ուստի

[1] **Новицкий И.Б.** , Сделки. Исковая давность, М., «Госъюриздат», 1954, с. 13.

[2] **Огензихт В.А,** Воля и волеизъявление, Очерки теории, философии и психологии права, Душанбе, «Дошли», 1983, с. 123.

կարող ենք ասել, որ խնամակալության (հոգաբարձության) սահմանմամբ խնամակալի (հոգաբարձուի) ու խնամակալության և հոգաբարձության մարմնի միջև հարաբերությունները պայմանագրային բնույթ ունեն, և այս իրավահարաբերությունների հիմքը խնամակալի (հոգաբարձուի) ու պետական իշխանության մարմնի միջև որոշակի ժամանակ կամ մինչև խնամակալության (հոգաբարձության) սահմանման հիմք հանդիսացած հանգամանքների վերանալը անհատույց կերպով խնամակալություն (հոգաբարձություն) իրականացնելու մասին համաձայնությունն է: Երկու ինստիտուտների դեպքում էլ համաձայնության առարկան որոշակի գործողությունների կատարումն է, որոնք պետք է հանգեցնեն ոչ նյութական արդյունքի հասնելուն (երեխային դաստիարակելուն և ինքնուրույն կյանքի համար նրան անհրաժեշտ սոցիալական մակարդակի հասցնելուն), և երկու դեպքում էլ պահանջվում է պայմանագրից բխող պարտավորությունների անմիջական կատարում: Միևնույն ժամանակ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների նկատմամբ կիրառվող խնամակալության (հոգաբարձության) ինստիտուտը չի կարող դիտարկվել որպես բացառապես քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորվող իրավահարաբերությունների ամբողջություն: Այս ինստիտուտի հիմքում ընկած է անձի պաշտպանված լինելու սոցիալական անհրաժեշտությունը: Ուստի խնամակալության (հոգաբարձության) սահմանման շուրջ կողմերի միջև ձեռք բերվող համաձայնության մասին նորմերը պետք է ուրվագծեն այս հարաբերությունների՝ խնամատարության օրինակով պայմանագրային դաշտում կարգավորման տեսլականը՝ դրանք, իհարկե, ենթարկելով ընտանեկան իրավունքի սկզբունքներին:

3. Խնամակալն ու հոգաբարձուն խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող երեխայի նկատմամբ խնամակալության և հոգաբարձության պարտականությունները կատարում են անհատույց: Խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով վճարվում են դրամական միջոցներ, որոնք կազմված են երեխայի խնամքի և դաստիարակության համար նախատեսված միջոցներից և երեխայի խնամքի ու դաստիարակության դիմաց տրվող վարձատրությունից (Ընտ. օր., 136-րդ հոդվ., 4-րդ մաս, 140-րդ հոդվ., 1-ին և 2-րդ մասեր): Այստեղից օբյեկտիվ հարց է ա-

ռաջանում՝ արդյոք անհավասար գույքային դրություն չի՞ ստեղծվում ինչպես միևնույն կարգավիճակն ունեցող երեխաների, այնպես էլ նրանց հանդեպ պարտավորությունների միևնույն ծավալն ունեցող անձանց հանդեպ: Անհատույց խնամակալություն (հոգաբարձություն) սահմանելու որոշման կայացումը խնամակալության և հոգաբարձության մարմնի համար չի ենթադրում որևէ լրացուցիչ պարտականություն կամ խնամակալական ընտանիքի համար արտոնություն, մինչդեռ խնամատարության պայմանագրի կնքումը դրա մասնակիցներին հնարավորություն է տալիս, բացի խնամակալական ընտանիքների համար ընդհանուր երաշխիքներից, նախատեսելու լրացուցիչ, այսինքն՝ խնամատար երեխաների համար դաստիարակության և ապրելու առավել լավ պայմաններ՝ նրանց առողջական վիճակի այս կամ այն հանգամանքների հաշվառմամբ: Խնամատարության պայմանագրով սահմանվում են երեխայի խնամքի, դաստիարակության և կրթության պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, մինչդեռ խնամակալ (հոգաբարձու) նշանակելու մասին որոշման բովանդակությունն օրենքով կանխորոշված չէ (Ընտ. օր., 137.1-ին հոդվ., 5-րդ մաս): Այս իրավիճակում առաջ է գալիս նաև խնամակալի (հոգաբարձուի)՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի առջև հաշվետվողականության հարցը: Կոմիտեն խնամակալության (հոգաբարձության) ինստիտուտի գործունեության գլխավոր սկզբունքներից է համարում հաշվետվողականությունը, իսկ դրա առավելագույնս ապահովումը կապում ազգային օրենքներում խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունների ու գործառույթների հստակ ամրագրման հետ [1]: Գործող իրավակարգավորումների պայմաններում կարող ենք ասել, որ, նախ, նյութական տեսանկյունից խնամատար ընտանիքում երեխայի համար ստեղծվում են դաստիարակության առավել բարենպաստ պայ-

[1] Տե՛ս **Guardianship for children deprived of parental care,** A handbook to reinforce guardianship systems to cater for the specific needs of child victims of trafficking, Luxembourg: Publications Office of the European Union, 2014, **ISBN 978-92-9239-464-6doi:10.2811/7016 © European Union Agency for Fundamental Rights, 2014, էջ 27:**

մաններ[1], իսկ խնամակալական ընտանիքների նյութական ծանր դրությունը հաճախ թույլ չի տալիս երեխաների դաստիարակության կամ զարգացման համար ապահովել լիարժեք պայմաններ[2], երկրորդ՝ խնամակալի (հոգաբարձուի)՝ օրենքով ամրագրված պարտականությունների հստակ ծավալի բացակայությունը իջեցնում է խնամակալության և հոգաբարձության մարմնի առջև վերջինիս հաշվետվողականության աստիճանը: Ի հավելումն նշենք, որ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի[3] 13-րդ հոդվածի համատեքստում խնամակալը (հոգաբարձուն) ընտանեկան նպաստ կարող է ստանալ ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տարեկան անդամ ունենալու և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային միավորից բարձր անապահովության միավոր ունենալու դեպքում, իսկ «Պետական կենսաթո-

---

[1] ՌԴ տարբեր շրջանների 800 խնամակալական ընտանիքների՝ մի քանի տարիների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ճնշող մեծամասնությամբ խնամակալներ են դառնում երեխայի տատիկները (88%), պապիկները՝ ավելի քիչ (12%), օտար անձինք խնամակալների մեջ 2%-ից ավել չեն կազմում: Խնամակալությունը ձևավորվել է որպես հարազատների ընտանիքներում տեղավորման ձև, ովքեր թույլ չեն տալիս երեխային թողնել դժբախտության մեջ, տալ ինտերնատ: Առավել հաճախ խնամակալները թոշակառուներն են (20%-ը՝ 70 տարեկանից մեծ, 40%-ը՝ 50-ից մինչև 60 տարեկան), ինչն էլ նշանակում է, որ մեծ մասամբ խնամակալական ընտանիքները մշտական անհատական օժանդակության և օգնության կարիք ունեն, նույնիսկ եթե այդ մասին չեն բարձրաձայնում. միայն խնամակալների 30%-ն է ասել, որ օգնության կարիք չունի: Այս մասին տե՛ս www.usynovite.ru., հասանելի է 24.10.2018:

[2] Ն. Ա. Պալիևան իր աշխատության մեջ նշում է, որ ուսումնասիրված խնամակալական ընտանիքների 40%-ը աղքատության մեջ է ապրում: Այս մասին տե՛ս **Палиева Н. А.,** Воспитание и личностное развитие детей-сирот в условиях альтернативных форм жизнеустройства: дис. .... д-ра пед. наук, Ставрополь, 2008, էջ 260:

[3] «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 12.12.2013 թ., ուժի մեջ է մտել 28.12.2014 թ., **ՀՕ-154-Ն,** ՀՀՊՏ 2013.12.28/73 (1013).1, հոդ. 1186.16:

շակների մասին» ՀՀ օրենքի[1] 13-րդ հոդվածի համատեքստում կերակրողին կորցնելու հետևանքով խնամակալության (հոգաբարձության) հանձնվելու դեպքում 18 տարին չլրացած երեխան ունի **աշխատանքային կենսաթոշակի իրավունք: Այսինքն՝ ՀՀ օրենսդրությունը խնամակալության (հոգաբարձության) հանձնված երեխային, իր կարգավիճակով պայմանավորված, որևէ սոցիալական օժանդակություն չի տրամադրում, ինչն արդարացված չէ:** Բացի այդ՝ մեր երկրում ներկայումս իրականացվող, խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացմանն ուղղված միջոցառումներին զուգահեռ՝ խնամակալության և հոգաբարձության ինստիտուտին նոր երաշխիքներով չզինելը կհանգեցնի վերջինիս նվազագույն կիրառության[2]: Ուստի, կարծում ենք, չշեղվելով առանց ծնողական խնամքի մնացած երեխայի նկատմամբ անհատույց իրականացվող խնամակալության (հոգաբարձության) գաղափարից, խնամակալներին (հոգաբարձուներին) երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ է վճարել խնամատար ընտանիքում գտնվող երեխաներին տրամադրվող միջոցներին հավասար դրամական միջոցներ:

4. Վերահսկողությունը խնամքի և դաստիարակության երկու ձևերի դեպքում էլ իրականացնում է կրկին ոչ մասնագիտացված մարմինը, սակայն եթե խնամատարության դեպքում խնամատարի գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող ոչ մասնագիտացված մարմինը պայմանագրի մյուս կողմն է, մարզում՝ մարզպետարանը, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանը, ապա խնամակալության (հոգաբարձության) դեպքում ևս վերահսկողություն իրականացնելու իրավասության վերապահումն անհասկանալի է, քանի որ խնամակալ (հոգաբարձու) նշա-

[1] «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 22.12.2010 թ., ուժի մեջ է մտել 30.12.2010 թ., ՀՕ-243-Ն, ՀՀՊՏ 2010.12.30/69 (803).1, Հոդ.1634.17:

[2] Անձինք, ովքեր ցանկություն կունենան ստանձնելու առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամակալությունը (հոգաբաձությունը), կդիմեն իրավասու մարմին՝ խնամատար ծնող հաշվառվելու, համապատասխան ուսուցում անցնելու և խնամատարության պայմանագրի հիման վրա առավել բարենպաստ նյութական դրության պայմաններում երեխայի խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելու համար:

նակում է խնամակալության և հոգաբարձության մարմինը: Բացի այդ, եթե խնամատարության դեպքում ոչ մասնագիտացված մարմինը հստակ ամրագրված պայմանագրային պարտավորությունների և դրանց գնահատման համար նախատեսված չափանիշների դեպքում կարող է իրականացնել վերահսկողություն, ապա արդյոք խնամատար ծնողի գործունության գնահատման համար նախատեսված չափանիշները բացարձակ կերպով կիրառելի՞ են խնամակալի (հոգաբարձուի) գործունեությունը գնահատելիս, երբ օրենսդիրը նրանց չի տրամադրում իրավունքների, արտոնությունների և երաշխիքների միևնույն ծավալը:

Ուսումնասիրության առարկայի առնչությամբ տեղին է ներկայացնել միջազգային փորձի՝ մեր կողմից կատարված ուսումնասիրությունը: Այսպես՝ ԱՄՆ Լուիզիանա նահանգի «Երեխաների մասին» օրենքի 721-րդ և 723-րդ հոդվածների ուսումնասիրությունից հետևում է, որ այստեղ գործում է Լուիզիանայի՝ երեխաների և ընտանիքի աջակցության դեպարտամենտը, որը պարտավոր է առաջարկվող խնամակալի տնային ուսումնասիրության և գնահատման մասին խորհրդակցական բնույթի զեկույց ներկայացնել դատարանին, որում արտացոլվում են տեղեկություններ՝ առաջարկված խնամակալի բարոյական և ֆինանսական համապատասխանության, առողջության համար վերջինիս ունեցած տնային պայմանների, երեխայի հոգեկան ու ֆիզիկական վիճակի և առաջարկված խնամակալության նկատմամբ նրա արձագանքի, երեխայի խնամքն ապահովելու անհնարինության դեպքում երեխայի համար նախատեսված ծրագրի մասին: Դատարանը ընդունում է երեխայի համար խնամակալ նշանակելու մասին առաջարկը և խնամակալ է նշանակում, երբ ակնհայտ և համոզիչ ապացույցների առկայության պայմաններում հանգում է այն եզրակացության, որ առկա են օրենքով սահմանված պահանջները (պայմանները) առ այն, որ ո՛չ որդեգրումը, ո՛չ ընտանիքի հետ վերամիավորումը չեն բխում երեխայի լավագույն շահերից, վերջին 6 ամիսներին երեխան բնակվել է առաջարկվող խնամակալի հետ, առաջարկվող խնամակալը կարող է երեխայի համար նրա անչափահասության ընթացքում ապահովել կայուն, ապահով ու առողջ ընտանեկան միջավայր, և առաջարկվող խնամակալությունը

բխում է երեխայի լավագույն շահերից[1]: Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքում ամրագրված է, որ երեխայի նկատմամբ խնամակալությունը, նրա պատշաճ պաշտպանությունը պետության գործն են: Դրանք դրվում են ընտանիքի և տեղական ինքնակառավարման մարմինների վրա (Ֆրանսիայի քաղ. օր., հոդվ. 394): Այստեղ գործում է խնամակալի նշանակման երեք եղանակ՝ խնամակալություն՝ օրենքի ուժով, կտակով կամ ընտանեկան խորհրդի որոշմամբ: Երեխայի նկատմամբ խնամակալության գործընթացի ապահովման իրավունքը պատկանում է ընտանեկան խորհրդին, և միայն առավել կարևոր դեպքերում է անհրաժեշտ դատարանի կողմից հաստատումը: Առանձնացվում են խնամակալության գործերով զբաղվող դատարաններ, որոնք անչափահասի նկատմամբ խնամակալություն սահմանելիս, խնամակալությանն առնչվող հարցեր վճռելիս պարտադիր մասնակից պետք է դարձնեն ընտանեկան խորհրդին (Ֆրանսիայի քաղ. օր., հոդվ. 391), որի անդամներ կարող են լինել անչափահասների հարազատները և մոր կամ հոր կողմից խնամիները, ինչպես նաև Ֆրանսիայում կամ նրա սահմաններում գտնվող ցանկացած այլ անձ, ով հետաքրքրություն է ցուցաբերում անչափահասի նկատմամբ (Ֆրանսիայի քաղ. օր., հոդվ. 399): Ընտանեկան խորհուրդը սահմանում է անչափահասի ապրելու և դաստիարակության ընդհանուր պայմանները և այն փոխհատուցումը, որը կարող է տրվել խնամակալին (Ֆրանսիայի քաղ. օր., հոդվ. 401): Վերջին դրույթից պարզ է դառնում, որ սկզբունքորեն առկա է խնամակալի վարձատրության իրական հնարավորություն: Ուշադրության է արժանի խնամակալի վերահսկչի ինստիտուտը: Խնամակալ-վերահսկիչը հսկողություն է իրականացնում խնամակալական պարտականությունների կատարման նկատմամբ և անչափահասի շահերն է ներկայացնում բոլոր այն դեպքերում, երբ խնամարկյալի և խնամակալի շահերը հակասության մեջ են գտնվում (Ֆրանսիայի քաղ. օր., հոդվ. 409)[2]:

---

[1] Տե՛ս Louisiana Children's code: Louisiana State Legislature - Legislative Law: Updated through the 2018 Third Extraordinary Session: http://www.legis.la.gov/legis/Laws_Toc.aspx?folder=71&level=Parent:

[2] Տե՛ս Гражданский кодекс Франции (Кодекс Наполеона), (предисловие, комментарии, примечания **В. Н. Захватаева**), Москва, Берлин, Инфотропик Медиа, 2012, էջ 148-153:

Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այնտեղ գործում են ինչպես ընտանեկան, այնպես էլ հատուկ՝ խնամակալության գործերով դատարաններ[1]: Ընդ որում՝ վերջիններիս սեփական նախաձեռնությամբ երեխայի նկատմամբ խնամակալ նշանակելու հնարավորութուն է տրված այն դեպքերում, երբ հարկ է ենթադրել, որ ծննդյան պահից երեխայի համար խնամակալ է պահանջվում[2] (Գերմանիայի քաղ. օր., 1773-րդ, 1774-րդ հոդվ.): Խնամակալության գործերով դատարանը պարտավոր է խնամակալ ընտրել անձի, ով, իր անձնական հատկանիշներով կամ գույքային դրությամբ կամ այլ հանգամանքների համապատասխանությամբ պայմանավորված, ի վիճակի է իրականացնելու խնամակալի պարտականություններ: Մի քանի համապատասխան թեկնածուներից ընտրություն կատարելիս անհրաժեշտ է ուշադրություն հրավիրել խնամարկյալի հետ անձնական կապվածություն, ազգակցություն, խնամիություն կամ կրոնական (դավանաբանական) ընդհանրություն ունենալու հանգամանքների վրա: (Գերմանիայի քաղ. օր., 1779-րդ հոդված, 2-րդ մաս): Ուշագրավ է, որ խնամակալության գործերով դատարանի կողմից խնամակալ ընտրվելու դեպքում խնամակալի պարտականությունների ստանձնումը գերմանացու համար պարտականություն է դիտարկվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կան այնպիսի խոչընդոտող հանգամանքներ, ինչպիսիք են տվյալ անձի անգործունակությունը, անչափահասությունը, ծնողների կողմից կոնկրետ անձին բացառելը, պետական պաշտոնյաների կամ հոգևոր ծառայողի համար նախատեսված սահմանափակումները (նրանք պետք է հատուկ թույլտվություն ստանան, հակառակ դեպքում չեն կարող խնամակալ նշանակվել) (Գերմանիայի քաղ. օր., 1785-րդ հոդված): Խնամակալի պարտականություններից հրաժարվելու իրավունքը վերապահված է անձին, ում 60 տարին լրացել է, ով երեքից ոչ պակաս անչափահասների խնամքով է զբաղվում, ով գույքային դրությամբ կամ ծանր հիվանդության պատճա-

[1] Հարկ է նշել, որ Գերմանիայի քաղաքացիական օրենսդրությամբ խնամակալություն սահմանվում է անչափահասների, իսկ հոգաբարձություն՝ չափահաս անձանց նկատմամբ:

[2] Տե՛ս Гражданское уложение Германии, 2-е издание, дополненное, Москва, «Волтерс Клувер», 2006, էջ 448:

ռով ի վիճակի չէ պատշաճ կերպով իրականացնելու խնամակալի իր պարտականությունները և այլն (Գերմանիայի քաղ. օր., 1786-րդ հոդվ.): Ինչպես տեսնում ենք, Գերմանիայի օրենսդիրը անձին խնամակալ նշանակելը կախվածության մեջ չի դնում վերջինիս կամքից և նախատեսում է դրանից հրաժարման հստակ ու սահմանափակ դեպքեր: Հետաքրքրական է վերահսկող խնամակալի ինստիտուտը, որը կիրառվում է, եթե խնամակալության իրականացումը կապված է գույքի կառավարման հետ, (Գերմանիայի քաղ. օր., 1792-րդ հոդված): Վերահսկող խնամակալը պարտավոր է հետևել խնամակալության պատշաճ իրականացմանը, անհապաղ խնամակալության գործերով դատարանին հայտնել խնամակալի կողմից թույլ տրված պարտականությունների խախտման մասին (Գերմանիայի քաղ. օր., 1799-րդ հոդվ., 1-ին մաս): Սա փաստում է Գերմանիայում առավելագույնս մասնագիտացված մարմնի առկայության մասին:

Լատվիայի քաղաքացիական օրենսգրքի[1]՝ «Ընտանեկան իրավունք» վերտառությունը կրող 1-ին մասում նշվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վերաբերող գործերով զբաղվող «որբերի դատարանի» մասին: Տարանջատված են այն դեպքերը, երբ խնամակալությունը սահմանվում է մեխանիկորեն՝ առանց «որբերի դատարանի» կողմից դրա հաստատման (օրինակ՝ ծնողների կամ պապերի և տատերի կողմից կտակում նշանակված խնամակալներին իրենց խնամակալական պարտականությունների կատարումը թույլատրվում է առանց «որբերի դատարանի» կողմից հաստատման), և այն դեպքերը, երբ խնամակալության սահմանման՝ խնամակալի կողմից իր պարտականությունների կատարմանն անցնելու համար անհրաժեշտ է «որբերի դատարանի» հաստատումը (խնամարկյալին ինչ-որ բան կտակող բոլոր այլ անձինք կարող են կտակված գույքի համար խնամակալ նշանակել. այս իրավունքը պատկանում է յուրաքանչյուրին, ով կյանքի ընթացքում իր գույքից անչափահասին ինչ-որ բան է տալիս) (Լատվիայի քաղաքացիական օրենսգիրք, 230-րդ, 231-րդ հոդվածներ): Այնուհետև շեշտվում է, որ բոլոր դեպքերում կտակով նշանակված

[1] Տե՛ս Гражданский закон Латвийской Республики: http://www.pravo.lv/likumi/05_1_gz.html:

խնամակալները պետք է հաստատվեն «որբերի դատարանի» կողմից, և նրանք կարող են հաստատվել միայն այն բանից հետո, երբ դատարանը կհամոզվի խնամակալի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ նրանց հնարավորություններում և հատկանիշներում: Խնամակալության պարտականությունը հասարակական պարտականություն է, որից, առանց օրենքով ամրագրված սպառիչ հիմքերի առկայության (պետական ծառայությունը, որը դժվար է համատեղել խնամակալի պարտականությունների հետ, գրել-կարդալու չիմացությունը, 60 տարեկանից բարձր տարիքը, մեծ ընտանիքը, աղքատությունը, հիվանդությունը, որը խոչընդոտում է խնամակալի պարտականությունների պատշաճ իրականացմանը և այլն), ոչ ոք չի կարող հրաժարվել (Լատվիայի քաղաքացիական օրենսգիրք, 232-րդ, 245-րդ հոդվ.): Ներկայացված կարգավորումներից անառարկելիորեն հետևում է մի բան, որ խնամակալության ինստիտուտին առհասարակ և խնամակալի անձի ընտրությանը մասնավորապես առաջադրվում են խիստ և որոշակի պահանջներ: Իտալիայի օրենսդրությամբ խնամակալ նշանակվում է երեխայի գտնվելու վայրի՝ անչափահասների շահերի կենտրոնի պրետորի կողմից [1]: Ֆինլանդիայում խնամակալություն կարող են սահմանել դատական համակարգի ստորին օղակի ատյանները, իսկ Պորտուգալիայում այս գործառույթը վերապահված է մասնագիտացված ընտանեկան դատարաններին:

Ամփոփելով վերոգրյալը՝ հանգում ենք հետևյալին.

- **«Երեխայի լավագույն շահերին» հակասող հնարավոր որոշումների կայացումը բացառելու, երեխայի խնամքը և դաստիարակությունը առավել նպաստավոր միջավայրում կազմակերպելու տեսանկյունից հրամայական է խնամակալության և հոգաբարձության մասնագիտացված մարմնի ստեղծումը՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ, արդեն իսկ ներդրված սոցիալական աշխատողի ու դեպք վարողի գործունեության կոնսոլիդացմամբ և համապատասխան երաշխիքների տրամադրմամբ:**

[1] Տե՛ս Гражданское и торговое право зарубежных государств: учебник, Отв. ред. Е.А. Васильев, А.С. Комаров, 4-е изд., перераб. и доп., в 2-х т., т. II, М., «Международные отношения», 2006, էջ 263:

• Խնամատար ընտանիքի ինստիտուտի կատարելագործման ուղղությամբ ներկայումս կատարվող օրենսդրական բարեփոխումներին զուգահեռ՝ դրանցում ներդրված սկզբունքներին համահունչ հարկ է փոփոխություններ կատարել ընտանեկան օրենսգրքի՝ «*Խնամակալությունը և հոգաբարձությունը երեխաների նկատմամբ*» վերտառությունը կրող 19-րդ գլխում: Մասնավորապես՝ անհրաժեշտ է մշակել և ընդունել «Խնամակալի ընտրության, խնամակալին ներկայացվող (անձնային, ընտանեկան և գույքային) պահանջները, դրանց գնահատման կարգն ու իրավասու մարմինը, ինչպես նաև խնամակալի (հոգաբարձուի) և խնամարկյալի համադրելիության չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ այդպիսով բացառելով միայն ազգակցության փաստով առաջնորդվելու ներկայումս որդեգրված մոտեցումը և ապահովելով խնամակալի (հոգաբարձուի) գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի համար ուղենիշներ:

• Ընտանեկան օրենսգրքում խնամատարության համանմանությամբ նախատեսել խնամակալության (հոգաբարձության) հանձնված երեխայի խնամքի և դաստիարակության համար նախատեսված՝ խնամակալին (հոգաբարձուին) դրամական միջոցների տրամադրման հնարավորություն՝ երեխայի համար ապահովելով խնամքի և դաստիարակության առավել բարենպաստ պայմաններ՝ միևնույն ժամանակ նպաստելով խնամակալության (հոգաբարձության) ինստիտուտի հաշվետվողականության բարձրացմանը:

ПРИЕМНАЯ СЕМЬЯ, ОПЕКУНСТВО И ПОПЕЧИТЕЛЬСТВО КАК ИНСТИТУТЫ, НАПРАВЛЕННЫЕ НА ОРГАНИЗАЦИЮ ВОСПИТАНИЯ И УХОДА ЗА ДЕТЬМИ, ОСТАВШИМИСЯ БЕЗ РОДИТЕЛЬСКОГО ПОПЕЧЕНИЯ (СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ)

Рубина Петросян
Аспирант кафедры гражданского права ЕГУ

С точки зрения обеспечения интересов ребенка, оставшегося без родительского попечительства, в настоящее время, важно создать специализированные органы опекунства и попечительства, а

также направленный на осуществление тех же целей института опекунства (попечительства) и приемной семьи, законодательное предъявление равнозначных требований при осуществлении воспитания и ухода за детьми, имеющими данный статус, к лицам, имеющим равный объем обязательств – опекунам (попечителям) и приемным родителям.

GUARDIANSHIP AND CURATORSHIP AND FOSTER FAMILY AS INSTITUTIONS REFERRED TO THE ORGANIZATION OF THE CARE AND UPBRINGING OF THE CHILDREN LEFT WITHOUT PARENTAL CARE (COMPARATIVE-LEGAL ANALYSIS)

Rubina Petrosyan
Post-graduate student at the Chair of Civil Law, YSU

From the point of view of ensuring the best interests for the child left without parental care, at present it is essential to establish a specialized guardianship and curatorship body. Besides, for the same reason, it is also important to impose by legislation equal requirements to guardianship, curatorship and foster family institution, to the children with the same status, to the ones (that is the guardian (trustee) and foster parent) who have the same extent of obligations for the care and upbringing of the children.

Բանալի բառեր՝ *առանց ծնողական խնամքի մնացած երեխա, խնամակալություն, հոգաբարձություն, խնամակալ, հոգաբարձու, խնամատար ընտանիք, խնամատար ծնող, երեխայի լավագույն շահ:*
Ключевые слова: *ребенок, оставшийся без родительского попечения, опекунство, попечительство, опекун, попечитель, приемная семья, родитель-опекун, интересы ребенка.*
Key words: *a child left without parental care, guardianship, curatorship, fosterer, guardian, trustee, foster family, foster parent, the best interest of the child.*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ

Սամինե Պետրոսյան[1]

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 192-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ:

Գործող օրենսդրությամբ ընդունվում է ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի բոլոր մասնակիցների ընդհանուր համաձայնության սկզբունքը, մինչդեռ Հայկական ՍՍՀ քաղաքացիական օրենսդրությամբ գործում էր մասնակիցների ձայների մեծամասնության սկզբունքը. Մասնավորապես Հայկական ՍՍՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր սեփականության տնօրինումը կարող էր տեղի ունենալ բոլոր սեփականատերերի ընդհանուր համաձայնությամբ, իսկ տարաձայնության դեպքում՝ ձայների մեծամասնությամբ:

Ընդհանուր սեփականության մասնակիցների մեծամասնության շահերը ոչ միայն կարող են չհամապատասխանել մյուսների շահերին, այլև առանձին դեպքերում կարող են հակադրվել իրար: Ուստի չէր բացառվում, որ ընդհանուր գույքի շուրջ առաջացած որևէ հարց մասնակիցների ձայների մեծամասնությամբ որոշելը ակնհայտորեն ոտնահարեր որոշ մասնակիցների շահերն ու իրավունքները: Ուրեմն ընդհանուր գույքի տնօրինման հարցերը բոլոր մասնակիցների ընդհանուր համաձայնությամբ որոշելը ուղղված է ընդհանուր սեփականության մասնակիցների փոքրամասնության շահերի պաշտպանությանը[2]:

Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բաժնային սեփականության տնօրինումը կատարվում է նրա բոլոր համասեփականատերերի համաձայնությամբ, ընդ որում՝ ընդհանուր բաժնային սեփականության յուրաքանչյուր

---

[1] ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ, գիտական ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆ. Վ. Ավետիսյան:

[2] **Ղարախանյան Գ. Հ.,** Ընդհանուր սեփականության իրավունք, Ե., 1971, էջ 36-37:

սեփականատեր ունի մեկ ձայնի իրավունք: Տարաձայնության դեպքում վեճը լուծվում է դատական կարգով[1]:

Ընդհանուր բաժնային սեփականության ամեն մի մասնակից իրավունք ունի պահանջելու իր բաժնի անջատումն ընդհանուր գույքից: Երբ բաժնեհանման եղանակի շուրջ համաձայնություն չի կայացվում, ցանկացած մասնակցի հայցով գույքը բաժանվում է բնեղենով, եթե դա հնարավոր է առանց գույքի տնտեսական նշանակությանը վնաս հասցնելու: Եթե գույքի՝ բնեղենով բաժանումը հնարավոր չէ, բաժնեհանում պահանջող սեփականատերը ստանում է դրամական հատուցում[2]:

Վերոգրյալից հետևում է, որ ցանկացած դեպքում էական նշանակություն ունի բաժնային սեփականության յուրաքանչյուր մասնակցի կամարտահայտությունը, ինչը նշանակում է, որ չի կարող ընդհանուր գույքի ճակատագիրը որոշվել՝ անտեսելով համասեփականատերերի կարծիքները:

Ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի տնօրինման առանձնահատկությունները պայմանավորված են սեփականատերերի բազմակիությամբ (բազմասուբյեկտությամբ), որոնք համատեղ հանդես են գալիս իրավահարաբերության մի կողմում, օրինակ՝ ընդհանուր գույքը երրորդ անձի վաճառելիս: Դա ենթադրում է ընդհանուր գույքի իրավաբանական ճակատագրի վերաբերյալ ընդհանուր բաժնային սեփականության բոլոր մասնակիցների նախնական միաձայն որոշում՝ ընդհանուր տնտեսական կամ սոցիալական նպատակի հասնելու համար: Հակառակ դեպքում կատարվում է ընդհանուր բաժնային սեփականության բաժանում, կամ դրանից առանձնացվում է մասնակցի որոշակի բաժինը[3]:

Տվյալ դեպքում հարց է առաջանում՝ արդյոք օրենսդիրը նախատեսե՞լ է ընդհանուր բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինության դեպքում բաժնեմասի առանձնացման կարգ: ՀՀ օրենսդրության ուսումնա-

---

[1] Տե՛ս Гражданское право, под ред. А.П. Сергеев, Ю.К. Толстой, том 1, М., 2008, էջ 526-527:

[2] Հայկական ՍՍՀ քաղաքացիական իրավունք, Երևան, 1978, էջ 362:

[3] **Նազարյան Վ.,** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գիտագործնական մեկնաբանություններ, Ե., 2000, էջ 65:

սիրության հետևանքով պարզ է դառնում, որ նման դեպքերում օրենսդիրը նախատեսել է գնելու նախապատվության իրավունք և գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու հնարավորություն՝ ստացված գումարը հետագայում իրենց բաժիններին համաչափ բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև:

Օրենսգրքի 192-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի իր բաժինը վաճառելու, նվիրելու, կտակելու, գրավ դնել կամ այլ կերպ տնօրինելու՝ դրա հատուցելի օտարման դեպքում պահպանելով սույն օրենսգրքի 195-րդ հոդվածում նախատեսված կանոնները:

Օրենսգրքի 195-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր սեփականության իրավունքում բաժինը երրորդ անձի վաճառելիս բաժնային սեփականության մնացած մասնակիցները վաճառքի գնով և այլ հավասար պայմաններով վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունք ունեն՝ բացառությամբ հրապարակային սակարկություններով վաճառքի դեպքի: Բաժինը վաճառողը պարտավոր է իր բաժինը երրորդ անձի վաճառելու մտադրության մասին գրավոր տեղեկացնել բաժնային սեփականության մյուս մասնակիցներին՝ նշելով գինը և վաճառքի մյուս պայմանները: Եթե բաժնային սեփականության մյուս մասնակիցները հրաժարվում են վաճառվող բաժինը գնելուց կամ անշարժ գույքի սեփականության իրավունքում բաժինը ձեռք չեն բերում ծանուցումը ստանալու օրվանից մեկ ամսվա, իսկ շարժական գույքի սեփականության իրավունքում՝ տասն օրվա ընթացքում, ապա վաճառողն իրավունք ունի իր բաժինը վաճառելու ցանկացած անձի:

Գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնի վաճառքի դեպքում բաժնային սեփականության ցանկացած մասնակից իրավունք ունի երեք ամսվա ընթացքում դատական կարգով պահանջելու իրեն փոխանցել գնորդի իրավունքները և պարտականությունները:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ բաժնային սեփականության յուրաքանչյուր մասնակից ընդհանուր սեփականության իրավունքում այլ մասնակցի կողմից բաժինը երրորդ անձի վաճառելու դեպքում բաժինը գնելու նախապատվության

իրավունք ունի, ընդ որում՝ վաճառքի գնով և այլ հավասար պայմաններով:

Հարկ է նկատել, որ օրենսդիրը նախատեսել է նաև «գնելու» իրականացման ընթացակարգ, մասնավորապես բաժինը վաճառողը կրում է պարտականություն՝ իր բաժինը երրորդ անձի վաճառելու մտադրության մասին գրավոր տեղեկացնելու բաժնային սեփականության մյուս մասնակիցներին՝ նշելով գինը և վաճառքի մյուս պայմանները: Վաճառողն իրավունք ունի իր բաժինը վաճառելու ցանկացած անձի միայն այն դեպքում, երբ բաժնային սեփականության մյուս մասնակիցները հրաժարվում են վաճառվող բաժինը գնելուց կամ անշարժ գույքի սեփականության իրավունքում բաժինը ձեռք չեն բերում ծանուցումը ստանալու օրվանից մեկ ամսվա, իսկ շարժական գույքի սեփականության իրավունքում՝ տասն օրվա ընթացքում:

Ուշագրավ է, որ Օրենսգրքի 195-րդ հոդվածը նախատեսում է գնելու նախապատվության իրավունքի սահմանափակում, այն է՝ հրապարակային սակարկություններով վաճառքի դեպքում, իսկ ընդհանուր գույքը հրապարակային սակարկություններով հնարավոր է վաճառել միայն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

Օրենսգրքի 200-րդ հոդվածի համաձայն՝ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնելու՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է, կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջելու շուկայական գնով գնել պարտապանի բաժինը՝ պարտքը մարելու համար: Ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձումը տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ սույն օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան:

Վերոգրյալ հոդվածի մեկնաբանությունից հետևում է, որ բաժնային սեփականության մասնակցի գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, այն է՝ գույքի անբավարության դեպքում և պարտատիրոջ պահանջի հիման վրա:

Օրենսգրքի 197-րդ հոդվածի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը կարող է դրա մասնակիցների միջև բաժանվել նրանց համաձայնությամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջելու առանձնացնել իր բաժինն ընդհանուր գույքից:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից սույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնելու գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայու իրենց բաժիններին համաչափ բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև:

Տվյալ դեպքում դատարանը գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին վճիռ կարող է կայացնել այն դեպքում, երբ նշված հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով առկա է բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարություն, իսկ, Օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերի համաձայն, բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների շուրջ համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջելու ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել իր բաժինը: Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով, կամ դա անհնար է կատարել առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարել իր բաժնի արժեքը:

Բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն՝ մյուս սեփականատերերը կարող են այդ

մասնակցի համաձայնությամբ նրան փոխհատուցում վճարել: Այն դեպքերում, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել, և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի, դատարանը կարող է նաև այդ սեփականատիրոջ համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մյուս մասնակիցներին թույլատրել վճարելու փոխհատուցում:

Սույն հոդվածին համապատասխան՝ փոխհատուցումն ստանալու պահից սեփականատերը կորցնում է ընդհանուր գույքում բաժնի նկատմամբ իրավունքը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջելու ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել իր բաժինը միայն այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակիցների միջև բացակայում է ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների շուրջ համաձայնությունը: Միաժամանակ, այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով, կամ այդպիսի առանձնացումն անհնար է կատարել առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարել իր բաժնի արժեքը միայն նրանց համաձայնությամբ, քանի որ այդպիսի համաձայնության բացակայությունը կհանգեցնի կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության սկզբունքի, հետևաբար նաև անձի սեփականության իրավունքի խախտման: Վերոգրյալ համաձայնության պարտադիր լինելը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ, բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն, մյուս սեփականատերերը նրան փոխհատուցում վճարելու իրավունք ունեն նույնպես միայն նրա համաձայնությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել, և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի: Սույն գործով վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ դատարանը, նկատի ունե-

նալով, որ վիճելի բնակարանի բաժնային սեփականության մասնակիցների միջև բացակայում է բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելու վերաբերյալ համաձայնությունը, ինչպես նաև վիճելի բնակարանից տեխնիկապես հնարավոր չէ առանձնացնել հայցվորին հասանելիք 1/2 բաժնեմասը պատասխանողներին հասանելիք 1/5 բաժնեմասերից, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերով սահմանված հաջորդ նախապայմանը, որը վերաբերում է բաժնային սեփականության իրավունքում բաժնի դիմաց համապատասխան դրամական գումարի վճարմանը կամ այլ փոխհատուցման: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքները, որ վիճելի բնակարանի բաժնային սեփականության մասնակիցների միջև բացակայում է բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելու վերաբերյալ համաձայնությունը, ինչպես նաև վիճելի բնակարանից տեխնիկապես հնարավոր չէ առանձնացնել հայցվորին հասանելիք 1/2 բաժնեմասը պատասխանողներին հասանելիք 1/5 բաժնեմասերից, անտեսել է այն հանգամանքը, որ նման պայմաններում դատարանն իրավասու չէր պատասխանողներին պարտավորեցնելու փոխհատուցում տրամադրել հայցվորին, քանի որ այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով, կամ այդպիսի առանձնացումն անհնար է կատարել առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարել իր բաժնի արժեքը միայն նրանց համաձայնությամբ, ինչը տվյալ դեպքում առկա չէ: Միաժամանակ դատարանը վճռի եզրափակիչ մասի 2-րդ կետով հայցվորին թույլատրել է նույն մասի 1-ին կետում նշված ժամկետում և չափով փոխհատուցման՝ պատասխանողների կողմից չտրամադրվելու դեպքում նույն մասի 1-ին կետում նշված ժամկետի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում, փոխհատուցում վճարել պատասխանողներին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանը, կայացնելով պայմանով վճիռ, անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նման տեսակի վճիռ կայացնելու լիազորություն իրեն վերապահված չէ, քա-

նի որ այդ տեսակի վճռի կայացումը կարող է հանգեցնել դատական ակտի որոշակիության սկզբունքի խախտման. այդ սկզբունքը թեև քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված չէ, սակայն այն իրավական հասկացություն է ու միջազգայնորեն ճանաչված սկզբունք և ենթադրում է, որ դատական ակտը պետք է լինի որոշակի, այսինքն՝ այն պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի, դրա բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որ դատավարության մասնակիցների համար ակնառու և ակնհայտ լինի, թե իրենց ի՛նչ իրավունք է տրամադրվում, իրենց ո՛ր իրավունքն է սահմանափակվում, իրենց ի՛նչ իրավունքից են զրկում, կամ իրենց վրա ի՛նչ պարտականություն է դրվում[1]:

Օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է սեփականատիրոջ կամքին հակառակ նրա սեփականության իրավունքի դադարեցման մեխանիզմ, ինչն ուղղակիորեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի սկզբունքների և սահմանադրականության հարց է բարձրացնում: Տվյալ խնդրի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը նշել է, որ առանց սեփականատիրոջ համաձայնության դատարանի կողմից բաժնային սեփականության մասնակիցներին փոխհատուցում վճարելը թույլատրելու համար անհրաժեշտ է մի շարք նախապայմանների պարտադիր և միաժամանակյա առկայություն: Դրանք են՝

1. սեփականատիրոջ բաժնի աննշան լինելը,

2. դրա իրապես առանձնացվելու անհնարինությունը,

3. ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատիրոջ էական շահի բացակայությունը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ընդհանուր գույքի օգտագործման մեջ սեփականատիրոջ էական շահի առկայության կամ բացակայության հարցին անդրադառնալիս դատարանը պետք է հաշվի առնի սեփականատիրոջ շահագրգռվածության համաչափությունը բաժնային սեփականության իրավահարաբերություններում մյուս սեփականատերերին պատճառված անհարմարություններին, սեփականության իրավունքով համանման այլ ու-

[1] Դավիթ Ասատրյանն ընդդեմ Սվետլանա Ասատրյանի, Արթուր Գասպարյանի՝ թիվ ԵՄԴ/0199/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 29.07.2011 թվականի որոշումը:

նեցվածք ունենալը, այդ բաժնի նկատմամբ սեփականատիրոջ շահագրգռվածության առկայությունը և այլն[1]:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է նաև այն իրավական հարցին, թե երբ է կարելի պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով վաճառել: Այսպես՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը կարող է վաճառվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, եթե.

1. ընդհանուր սեփականության մասնակցի ունեցած այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ պարտավորությունները մարելու համար.

2. բաժինը բնեղենով առանձնացնելն անհնար է կատարել առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, կամ դրա դեմ առարկում են ընդհանուր սեփականության մյուս մասնակիցները.

3. պարտատերն ընդհանուր սեփականության մյուս մասնակիցներից պահանջել է շուկայական գնով գնել պարտապանի բաժինը.

4. ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները հրաժարվել են պարտապանի բաժին ձեռք բերելուց[2]:

Օրենսդիրը նախատեսել է հետևանքներ այն դեպքերի համար, երբ կոնկրետ տեսակի գույքը բաժանելու հնարավորությունը սահմանափակված է օրենքով, կամ այն անհնար է բաժանել առանց այդ գույքին անհամաչափ վնաս պատճառելու: Այդպիսիք կարող են համարվել այն դեպքերը, երբ կոնկրետ գույքի կամ գույքի որոշակի տեսակի համար օրենքով, իսկ եթե օրենքում հղում է կատարվում այլ իրավական ակտի, ապա այդ ակտով նախատես-

---

[1] **Թորոսյան Գ.,** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գործնական մեկնաբանություններ, Ե., 2014, էջ 285-286:

[2] «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Դերենիկ Մարգարյանի և մյուսների՝ թիվ ԳԴ4/0306/02/11 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 29.11.2013 թվականի որոշումը:

ված է բաժանման արգելք, կամ գույքն ունի պատմական նշանակություն կամ մշակութային արժեք, և բաժանման դեպքում այն կկորցնի իր նշանակությունը: Յուրաքանչյուր դեպքում, կոնկրետ գործի փաստերից ելնելով, դատարանները նշված պայմանների հաշվառմամբ պետք է գնահատեն գույքի բաժանման հնարավորությունը: Եվ միայն նշված պայմանների բացակայության դեպքում է առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից իրավունք ստանում պահանջելու վճարել իր բաժնի արժեքը: Ընդ որում՝ այդ արժեքի վճարումը հնարավոր է միայն բաժնային սեփականության մյուս մասնակիցների համաձայնությամբ, որի բացակայությունը կհանգեցնի կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության սկզբունքի, հետևաբար նաև անձի սեփականության իրավունքի խախտման:

Վերոգրյալ համաձայնության պարտադիր լինելը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ, բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն, մյուս սեփականատերերը նրան փոխհատուցում վճարելու իրավունք ունեն նույնպես միայն նրա համաձայնությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել, և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի: Սեփականատիրոջ բաժնի չափի աննշան լինելը որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն ոչ միայն այդ բաժնի և ընդհանուր գույքի մակերեսների չափերի հարաբերակցությունը, այլև այն հանգամանքը, թե արդյոք տվյալ բաժնեմասը հնարավո՞ր է օգտագործել ինքնուրույնաբար՝ իր նպատակային նշանակությանը համապատասխան: Բաժնեմասի հարաբերականորեն փոքր լինելը ինքնին չպետք է քննարկվող հոդվածի իմաստով մեկնաբանվի որպես աննշան[1]:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ընդհանուր գույքի օգտագործման մեջ սեփականատիրոջ էական շահի առկայության կամ բացակայության հարցին անդրադառնալիս դատարանը պետք է հաշվի առնի սեփականատիրոջ շահագրգռվածության համաչափությունը բաժնային սեփականության իրավահարաբերություններում մյուս սեփականատերերին պատճառված անհարմարութ-

[1] **Թորոսյան Գ.,** նշված աշխատությունը, էջ 289:

յուններին, սեփականության իրավունքով համանման այլ ունեցվածք ունենալը (այդպիսին կարող է լինել փաստացի բնակվելու համար պիտանի այլ բնակտարածության առկայությունը), այդ բաժնի նկատմամբ սեփականատիրոջ շահագրգռվածության առկայությունը և այլն[1]:

Այսպիսով՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ, իսկ մասնակիցների համաձայնության բացակայության դեպքում այդ սեփականության տնօրինման կարգը որոշում է դատարանը: Տվյալ դեպքում ակնհայտ է սեփականատիրոջ կամարտահայտության կարևորությունը:

ՀՀ օրենսդրությունը նախատեսել է բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն ինչպես բնեղենով, այնպես էլ դրամական հատուցմամբ առանձնացնելու հնարավորություն. բաժինը բնեղենով առանձնացնելու դեպքում անձը շարունակում է պահպանել իր սեփականության իրավունքը բնեղենով առանձնացված մասի նկատմամբ, մինչդեռ փոխհատուցման դեպքում անձի սեփականության իրավունքը բաժնեմասի նկատմամբ դադարում է:

ՀՀ օրենսդրությունը նաև նախատեսել է «գնելու» իրականացման ընթացակարգ, մասնավորապես բաժինը վաճառողը կրում է պարտականություն՝ իր բաժինը երրորդ անձի վաճառելու մտադրության մասին գրավոր տեղեկացնելու բաժնային սեփականության մյուս մասնակիցներին՝ նշելով գինը և վաճառքի մյուս պայմանները:

Տվյալ դեպքում ընդհանուր սեփականության իրավունքի ոլորտում առկա խնդիրների մասին է վկայում համասեփականատերերի իրավունքների հնարավոր և ենթադրյալ խախտումների առկայությունը, ինչը ենթադրում է որոշակի փոփոխությունների անհրաժեշտություն, մասնավորապես՝ ընդհանուր բաժնային սեփականությունը բաժանելու համար բարենպաստ պայմանների ստեղծում, օրենսդրության կատարելագործում և այլն: Հաշվի առնելով, որ ընդհանուր սեփականությանը վերաբերող իրավանոր-

[1] Մուրադ Խաչատրյանն ընդդեմ Դոնարա Խաչատրյանի՝ թիվ 3-249/ՎԴ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 30.03.2007 թ. որոշումը:

մերը կարգավորում են ինչպես համասեփականատերերի միջև առաջացած հարաբերությունները այնպես էլ համասեփականատերերի և այլ անձանց միջև, առաջացած հարաբերությունները, անհրաժեշտ է ինքնավար կամքի դրսևորման այնպիսի իրավակարգավորում նախատեսել, որ չխաթարվեն իրավահարաբերությունների որևէ սուբյեկտի իրավունքներն ու օրինական շահերը՝ կանոնակարգելով ընդհանուր բաժնային սեփականության հարաբերություններում համասեփականատերերի իրավունքներին, պարտականություններին և պատասխանատվությանը առնչվող հարցերը:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ թեև ՀՀ օրենսդրությամբ ամրագրված է, որ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ, այնուամենայնիվ, նախատեսված է խնդրի լուծման այլընտրանքային տարբերակ, այն է՝ ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը կարող է զրկվել իր սեփականությունից՝ ստանալով փոխհատուցում՝ անկախ իր կամքից: Ինչը նշանակում է, որ համաձայնության պարտադիր լինելու հանգամանքը կրում է ձևական բնույթ, որը վկայում է ոլորտում առկա խնդիրների մասին, որոնց լուծումը ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն:

Տվյալ խնդրի պարզաբանման համար անհրաժեշտ է պատասխանել այն իրավական հարցին, թե արդյոք ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նման կարգավորում նախատեսելը չի՞ խախտում սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունն իր հայեցողությամբ տնօրինելու սահմանադրական իրավունքը, ինչպես նաև քաղաքացիական հարաբերությունների մասնակիցների սեփականության անձեռնմխելիության սկզբունքը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, սեփականության անձեռնմխելիության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

Վերոգրյալ նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ սեփականատերն իր հայեցողությամբ կարող է տնօրինել իր սեփականությունը, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը կարող է նաև Օրենսգրքով նախատեսված կանոններով առանձնացվել, ընդ որում, եթե բաժնային սեփականության մասնակիցն առարկում է, ապա ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է այլընտրանքային տարբերակ, այն է՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջելու ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել իր բաժինը:

Տվյալ դեպքում ակնհայտ է, որ սեփականատիրոջ համաձայնությունը ձևական բնույթ է կրում, և բաժնային սեփականությունը ցանկացած դեպքում կարող է առանձնացվել, եթե սեփականության մասնակիցներից մեկը ցանկություն է հայտնում առանձնացնելու իր բաժինը: Միևնույն ժամանակ ՀՀ օրենսդրությունը նախատեսել է երաշխիքներ, օրինակ՝ բաժնային սեփականության մասնակիցը զրկվում է իր սեփականությունից միայն համապատասխան փոխհատուցում ստանալու դեպքում:

Փաստորեն, ՀՀ օրենսդրությունը նման կարգավորում է նախատեսել այն հիմնավորմամբ, որ սեփականության յուրաքանչյուր մասնակից (անկախ սեփականության ձևից) իրավունք ունի տնօրինելու իր գույքը, և սեփականատիրոջ նշված սահմանադրական իրավունքը չի կարող սահմանափակվել միայն այն պատճառով, որ համասեփականատերն առարկում է, այսինքն՝ բաժնային սե-

փականության մյուս մասնակիցների շահերը ևս կարևորվում են, և ՀՀ օրենսդրությունը, տալով խնդրի լուծման նման կարգավորում, ըստ էության չի սահմանափակում սեփականատերերից որևէ մեկի սահմանադրական իրավունքը, այլ ապահովում է հավասարակշռություն բաժնային սեփականության բոլոր մասնակիցների իրավունքների պաշտպանության համար:

РАСПОРЯЖЕНИЕ ИМУЩЕСТВОМ, НАХОДЯЩИМСЯ В ОБЩЕЙ ДОЛЕВОЙ СОБСТВЕННОСТИ

Саминэ Петросян

Аспирант кафедры гражданского права ЕГУ

В статье рассматриваются особенности владения имуществом, находящимся в общей долевой собственности, а также осуществляется анализ норм преимущественного права покупки имущества и возможности его продажи на публичных торгах, предусмотренных законодательством РА.

DISPOSAL OF PROPERTY UNDER SHARED OWNERSHIP

Samine Petrosyan

PhD student at YSU Chair of Civil Law

In the article considered feature of possession property in the common parts property, as well as analysis of norms of prior right of purchase of the property and opportunity of sale property from public tenders provided legislation RA is implemented.

Բանալի բառեր՝ *գույք, սեփականություն, բաժին, տնօրինում, համասեփականատեր, օրենսդրություն, դատական ակտեր:*

Ключевые слова: *имущество, собственность, доля, владение, совладелец, законодательство, судебные акты.*

Keywords: *property, own, share, possession, co-owner, legislation, juridical acts.*

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Աշխեն Սողոմոնյան[1]

Հայաստանի Հանրապետությունում մշտապես ստեղծվում են տնտեսական ընկերություններ, որոնք ակտիվորեն մասնակցում են քաղաքացիական շրջանառությանը: Սակայն այդ գործընթացին զուգահեռ տեղի է ունենում նաև այդ իրավաբանական անձանց մի մասի լուծարում՝ պայմանավորված տարբեր պատճառներով: Ընդ որում՝ դա տեղի է ունենում ինչպես նման ընկերությունների հիմնադիրների (մասնակիցների) կամքով, այնպես էլ անկախ նրանց կամքից: Ուստի այդ գործընթացի ճիշտ կազմակերպման հարցում ի սկզբանե անհրաժեշտ է հստակ սահմանել ընկերությունների լուծարման հիմքերը, որպեսզի հետագա ընթացքը կազմակերպվի օրենքով սահմանված ընթացակարգով՝ հաշվի առնելով բոլոր կողմերի իրավունքների պաշտպանության ապահովման կարևորությունը:

Իրավաբանական անձանց լուծարման հիմքերի քննարկման համատեքստում անհրաժեշտ է պարզել «հիմք» իրավաբանական հակացության էությունը: Ընդհանուր առմամբ այն կարելի է օգտագործել որպես իրավունքի որևէ օբյեկտի, սուբյեկտի կամ հենց իրավահարաբերության գոյության անհրաժեշտ և բավարար պայման: Բայց պարզ է, որ իրավունքի օբյեկտի կամ սուբյեկտի գոյության համար որևէ հիմքի առկայություն անհրաժեշտ չէ: Իրավագիտության համար դրանց գոյությունը պայմանավորված չէ որևէ հիմքի առկայությամբ: Հետևաբար միայն իրավահարաբերություններն ունեն առաջացման, դադարման կամ փոփոխման հիմքեր: Իրավահարաբերությունները մասնագիտական գրականության մեջ բնութագրվում են որպես իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերություններ, որոնց մասնակիցները վերածվում են պետության կողմից երաշխավորված և պահպանվող սուբյեկ-

[1] ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ, գիտական ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Դ. Մ. Սերոբյան:

տիվ իրավունքների ու պարտականությունների կրողների[1]: Իսկ իրավահարաբերության առաջացման հիմքերն այն իրավաբանական փաստերն են, որոնցով օրենքը պայմանավորում է դրանց առաջացումը: Իրենց հերթին իրավաբանական փաստերն այն իրական հանգամանքներն են, որոնց առկայության կամ բացակայության հետ օրենքը կապում է քաղաքացիական իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը[2]: Նման մտահանգումը հաստատում է այն փաստը, որ իրավաբանական անձի լուծարումը, հանդիսանալով իրավադադարեցնող իրավաբանական փաստ, ինքնին իրավահարաբերություն է, որի ծագման համար անհրաժեշտ է համապատասխան հիմքերի առկայություն: Հետևաբար իրավաբանական անձի լուծարման հիմք են այն իրավաբանական փաստերը, որոնք հանգեցնում են իրավաբանական անձի գոյության դադարման: Միևնույն ժամանակ ինչպես լուծարման՝ որպես իրավաբանական փաստի, այնպես էլ դրա՝ որպես իրավահարաբերության պարագայում անհրաժեշտ է ուսումնասիրել դրա ծագման հիմքերի իրավական բնույթը, ինչն ունի կարևոր տեսական, ինչո՞ւ չէ, նաև գործնական նշանակություն:

Անդրադառնալով լուծարման հիմքերի ուսումնասիրմանը՝ հարկ է ընդգծել, որ գրականության մեջ իրավաբանական անձի լուծարումը պատկերավոր ձևով համեմատվում է ֆիզիկական անձի մահվան հետ: Օրինակ՝ Վ. Ի. Սինայսկին, բացահայտելով իրավաբանական անձի լուծարման էությունը, նշել է, որ «հնարավոր է իրավաբանական անձի բնական մահ դրա նպատակին հասնելու հետևանքով, հնարավոր է նաև ինքնասպանություն, երբ իրավաբանական անձի հիմնադիրները բավարար միջոցներ չունենալու պատճառով կամավոր լուծարման մասին որոշում են ընդունում, հնարավոր է նաև բռնի սպանություն, երբ պետությունը դադարեց-

[1] Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.,** Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 18:

[2] Տե՛ս **Բարսեղյան Տ. Կ.,** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, ԵՊՀ հրատ., Երևան, 2006, էջ 67:

նում է իրավաբանական անձի գործունեությունը կանոնադրային նպատակներից շեղվելու պատճառով»[1]:

Տնտեսական ընկերությունների լուծարման մասին որոշում ընդունելու հիմք կարող են հանդիսանալ այն հանգամանքները, որոնք թվարկված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[2] (այսուհետ՝ Օրենսգիրք) 67-րդ հոդվածի 2-րդ կետում: Նման հանգամանքներ են այն ժամկետի լրանալը, որով իրավաբանական անձը ստեղծվել է, այն նպատակին հասնելը, որի համար այն ստեղծվել է, այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրինախախտումների կապակցությամբ իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելը, առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելը, օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումները և այլն: Հետևաբար Օրենսգիրքը նախատեսում է մի շարք հիմքեր, որոնց առկայության պայմաններում իրավաբանական անձը լուծարելու անհրաժեշտություն է առաջանում: Ի տարբերություն բոլոր իրավաբանական անձանց՝ տնտեսական ընկերությունները, հաշվի առնելով նրանց կազմակերպաիրավական ձևի առանձնահատկությունները, ունեն լուծարման առանձնահատուկ հիմքեր, որոնք բնութագրական են միայն նրանց: Ասվածը կարող ենք հիմնավորել հետևյալ օրինակով: «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի[3] 51-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ ընկերությունը կարող է դատական կարգով հարկադիր կերպով լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, իսկ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ ընկերության լուծարումն իրականացվում է Օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով: Ուստի դատարանը կարող է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը լուծարելու մասին վճիռ կայացնել, եթե առկա լինի Օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք: Բացի այդ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար որպես լուծար-

[1] Տե՛ս **Синайский В.И.,** Русское гражданское право, Выпуск 1, Общая часть и вещное право, Киев, 1914, էջ 329, կամ **Мейер Д.И.,** Русское гражданское право, էջ 153:

[2] Տե՛ս ՀՀՊՏ 1998/17 (50), 10.08.98:

[3] Տե՛ս ՀՀՊՏ 2001/38 (170), 07.12.01:

ման առանձնահատուկ հիմք համանուն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ ընկերության պետական գրանցումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կանոնադրական կապիտալն ամբողջությամբ չվճարելու դեպքում ընկերությունը պարտավոր է կա՛մ հայտարարել իր կանոնադրական կապիտալի նվազեցումը՝ մինչև կապիտալի փաստացի չվճարված չափը, և օրենքով սահմանված կարգով գրանցել կանոնադրական կապիտալի նվազեցումը, կա՛մ որոշում ընդունել ընկերության լուծարման մասին: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի[1] 38-րդ հոդվածի 7-րդ կետով լուծարման առանձնահատուկ հիմք է նախատեսված բաժնետիրական ընկերությունների համար, որի համաձայն՝ երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժինը չվճարելը կարող է հիմք հանդիսանալ ընկերությունը դատական կարգով լուծարելու համար: «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի[2] 72-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բանկը լուծարվում է լիցենզիան անվավեր ճանաչելու, լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու և այլ դեպքերում: Հետևաբար Կենտրոնական բանկը կարող է նախաձեռնել բանկը լուծարելու գործընթաց, եթե առկա է վերը թվարկված հիմքերից որևէ մեկը:

Ինչպես արդեն նշել ենք, ընկերության լուծարման հիմք են հանդիսանում այն հանգամանքները, որոնց հետ օրենքը կապում է իրաբանական անձը լուծարելու հնարավորությունը: Այդ հանգամանքները իրավաբանական փաստեր են, քանի որ դրանց հետ օրենքը կապում է որոշակի իրավական հետևանքներ[3]: Նման հետևանք է համարվում համապատասխան ընկերության լուծարումը: Ընդ որում՝ նշված հիմքերը (իրավաբանական փաստերը) կարող են լինել ինչպես իրավաբանական դեպքերը (օրինակ՝ ժամկետի լրանալը, որով ընկերությունը ստեղծվել է), այնպես էլ իրավաբանական գործողությունները (առանց թույլտվության գործունեություն իրականացնելը):

---

[1] Տե՛ս ՀՀՊՏ 2001/34 (166), 06.11.01:

[2] Տե՛ս ՀՀԱԺՏ 1996/12:

[3] Տե՛ս **Красавчиков О.А.,** Юридические факты в советском гражданском праве, «Госюриздат», 1958, էջ 19:

Լուծարման հիմք են համարվում այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում ընկերությունը կարող է լուծարվել, իսկ դրանց բացակայությունը բացառում է այդ գործընթացը: Այսպես ընկերությունը կարող է հարկադիր կարգով լուծարվել, եթե ապացուցվի, որ այն գործել է առանց համապատասխան թույլտվության: Հետևաբար՝ նման փաստի հաստատումն ընկերությունը լուծարելու գործընթաց սկսելու անհրաժեշտ նախապայման է: Սակայն միայն այդ հանգամանքի հաստատումը բավարար չէ: Անհրաժեշտ է ևս մեկ իրավաբանական փաստի առկայություն: Այսպես՝ ընկերության լուծարման գործընթացը սկսվում է համապատասխան իրավասու անձի (ընկերության մասնակիցներ (հիմնադիրներ) կամ կանոնադրության համաձայն նման լիազորություն ունեցող մարմին կամ դատարան) որոշման հիման վրա:

Օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձը կարող է լուծարվել նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի որոշմամբ՝ հիմք ունենալով այն ժամկետի լրանալը, որով ստեղծվել է իրավաբանական անձը, կամ այն նպատակին հասնելը, որի համար այն ստեղծվել է: Քանի որ Օրենսգրքով սահմանված չէ, որ ժամկետի լրանալու կամ նպատակին հասնելու պարագայում հիմնադիրները պարտավոր են ընդունել ընկերությունը լուծարելու վերաբերյալ որոշում, ուստի ենթադրվում է, որ լուծարումը նման դեպքում կախված է ընկերության մասնակիցների հայեցողությունից: Պրակտիկայում տնտեսական ընկերությունների կանոնադրությամբ գործունեության կոնկրետ ժամկետ չի սահմանվում, բայց եթե նույնիսկ սահմանվի էլ, ապա ընկերության մասնակիցները չեն պարտավորվում այդ ժամկետի լրանալու դեպքում ընկերությունը լուծարելու մասին որոշում կայացնել, այլ կարող եմ կանոնադրության մեջ փոփոխություններ կատարել, եթե նրանք ցանկանան շարունակել ընկերության գործունեությունը: Իսկ եթե նման փոփոխություններ չկատարվեն, միևնույն է, ընկերությունը կարող է շարունակել իր գործունեությունը, քանի որ այդ պարագայում միայն ընկերության մասնակիցները կարող են ընդունել ընկերությունը լուծարելու մասին որոշում:

Ասվածից ակնհայտ է, որ ընկերության լուծարման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է հետևյալ իրավաբանական փաստերի համակցություն՝ որոշակի հիմքերի առաջացում և լուծարման մասին իրավասու սուբյեկտի կամ մարմնի որոշման ընդունում: Վերջիններս իրավաբանական բարդ փաստակազմի առանձին տարրեր են, որոնց միաժամանակյա առկայության դեպքում միայն ընկերությունը կարող է լուծարվել:

Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել դեպքերի, երբ որպես ընկերության կամավոր լուծարման հիմք նշվում է ընկերության ընդհանուր ժողովի որոշումը[1]: Բնականաբար ընկերությունը լուծարվում է ընդհանուր ժողովի որոշման հիման վրա, սակայն նման որոշում ընդունելու առիթ, պատճառ է հանդիսանում որոշակի պայմանների առկայությունը, որոնք էլ հենց համարվում են լուծարման հիմքեր: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ ընկերության լուծարման հիմքերը իրավաբանական փաստեր են, որոնց առկայության դեպքում իրավասու մարմինը կարող է ընկերությունը լուծարելու մասին որոշում կայացնել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավաբանական անձանց լուծարման հիմքերը շատ բազմազան են, տեսական և գործնական առումով անհրաժեշտություն է առաջանում դրանք ենթարկելու որոշակի դասակարգման:

Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել իրավաբանական անձանց լուծարման հիմքերի տարբեր դասակարգումների: Այսպես, օրինակ, Ի. Գ. Կոբլենցը, հաշվի առնելով ընկերության գոյության վրա ազդող գործոնները, առաջարկել է իրավաբանական անձանց գոյության դադարեցման այնպիսի պատճառներ, որոնք կապված են ընկերության մասնակիցների անձի հետ, և այնպիսի հիմքեր, որոնք կապված են իրավաբանական անձի գործունեության հետ[2]: Վերջին դասակարգումը ՀՀ գործող օրենսդրության պայմաններում կիրառելի է Օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված հետևյալ դեպքերի նկատմամբ՝ ժամկետի

[1] Տե՛ս, օրինակ, **Шиткина И.С.,** Корпоративное право, «Волтерс Клувер», М., 2007, էջ 200:

[2] Տե՛ս Гражданский кодекс РСФСР Комментарий, Под. ред. А.Г. Гойхбарга и И.Г. Кобленца, Изд. 2-ое, М., 1925, էջ 348:

լրանալը, նպատակին հասնելը կամ էլ հենց իրավաբանական անձի մասնակիցների համաձայնությունը: Իսկ ինչ վերաբերում է այն հիմքերին, որոնք կապված են իրավաբանական անձի մասնակիցների անձի հետ, ապա դա կիրառելի է միայն ընկերակցություններ պարագայում: Քանի որ ընկերակցության գործունեության մեջ կարևոր է մասնակիցների ակտիվ համագործակցությունը, ուստի նրանց կազմում փոփոխություններ տեղի ունենալու դեպքում նախատեսվում է այն լուծարելու հնարավորություն: Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիակատար ընկերակցության մասնակիցներից որևէ մեկի դուրս գալու կամ մահվան, նրանցից մեկին անհայտ բացակայող, անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ սնանկ ճանաչելու, մասնակիցներից մեկի նկատմամբ դատարանի վճռով վերակազմակերպման ընթացակարգեր սկսելու և այլ դեպքերում ընկերակցությունը կարող է շարունակել իր գործունեությունը, եթե դա նախատեսված է ընկերակցության կանոնադրությամբ կամ մասնակիցների համաձայնությամբ, հակառակ դեպքում ընկերակցությունը պետք է լուծարվի:

Ս. Ն. Լանդկոֆը իրավաբանական անձանց կամավոր լուծարման հիմքերի շարքում առանձնացրել է այն դեպքերը, որոնք անառարկելիորեն հանգեցնում են ընկերության լուծարման, այսինքն՝ դրանք չեն կարող չեզոքացվել, օրինակ՝ ժամկետի լրանալը, կանոնադրային նպատակներին հասնելը կամ դրանց հասնելու անհնարինությունը[1]: Բայց պետք է նկատի ունենալ, որ իրավաբանական անձանց լուծարման նման հիմքերը (ժամկետի լրանալը կամ կանոնադրային նպատակներին հասնելը) ներկայիս օրենսդրությամբ հաղթահարելի են, քանի որ ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո ընկերությունը կարող է շարունակել իր գործունեությունը:

Ս. Ն. Բրատուսը իրավաբանական անձի համապատասխան պետական մարմինների կամ իրավաբանական անձի լիազոր մարմնի որոշմամբ իրականացվող լուծարման դեպքը առանձնացրել է օրենքով կամ կանոնադրությամբ նախատեսված այլ իրավաբանական փաստերի հետևանքով իրականացվող լուծարման դեպ-

[1] Տե՛ս **Ландкоф С.Н.,** Товарищества и акционерные общества. Теория и практика, Харьков, 1926, էջ 49:

քից: Նա վերջիններիս շարքին է դասել ժամկետը, որով իրավաբանական անձը հիմնադրվել է, կանոնադրությամբ նախատեսված նպատակներին հասնելը, ընկերության մասնակիցների թվի՝ օրենքով նախատեսված թվից նվազելը:

Իրավաբանական անձանց՝ Ս. Ն. Լանդկոֆի և Ս. Ն. Բրատուսի կողմից ներկայացված լուծարման հիմքերի դասակարգումը վերակառուցման շրջանում օրենսդրի կողմից որոշակիորեն ընդունվում էր: Օրինակ, ԽՍՀՄ և Հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության՝ 1991 թ. հիմունքների 17-րդ հոդվածի համաձայն, լուծման համար ժամկետի լրանալը և նպատակին հասնելը ներկայացվում են որպես ինքնուրույն հիմքեր[1]: Հետևաբար իրավաբանական անձանց՝ նման հիմքերով լուծարումը պայմանավորված չէր հիմնադիրների (մասնակիցների) կամ իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշմամբ:

Ակնհայտ է, որ նախկին խորհրդային քաղաքացիական օրենսդրությամբ նման փաստերի առկայությունը անվերապահորեն հանգեցրել է իրավաբանական անձանց լուծարման, և չի պահանջվել համապատասխան որոշում: Սակայն ներկայիս ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը նման անվերապահ պահանջներ չի նախատեսում: Ինչպես արդեն նշել ենք, օրենքով նախատեսված հիմքերի վրա հասնելը ինքնըստինքյան չի հանգեցնում իրավաբանական անձի լուծարման: Որպեսզի սկսվի իրավաբանական անձի լուծարման գործընթացը, լիազոր մարմնի կողմից պետք է համապատասխան որոշում ընդունվի: Այժմ նման անվերապահ հիմքի օրինակ կարելի է դիտարկել այն դեպքը, երբ դատարանի վճռով իրավաբանական անձի ստեղծման ժամանակ թույլ տրված օրինախախտումների պատճառով դրա գրանցումը անվավեր ճանաչելու հիմքով իրավաբանական անձը լուծարվում է:

Ներկայումս ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված են ոչ միայն այն պայմանները, որոնք կարող են հիմք հանդիսանալ ընկերությունը լուծարելու մասին որոշում կայացնելու համար, այլև թվարկված են այն սուբյեկտները, որոնք օժտված են նման որոշում կայացնելու իրավասությամբ: Ընդ որում՝

[1] Տե՛ս http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&prevDoc=102020039&backlink=1&&nd=102011632:

Օրենսգրքի 67-րդ հոդվածը մի դեպքում նախատեսում է, որ որոշակի իրավաբանական փաստերի առկայության դեպքում կարող է ընդունվել ընկերությունը լուծարելու մասին որոշում, մեկ այլ դեպքում պահանջվում է, որ որոշակի փաստերի առկայությունը (օրինակ՝ իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելը՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օինախախտումների հետ) նախևառաջ ապացուցվի դատական կարգով: Այսպիսով՝ տնտեսական ընկերությունը կարող է լուծարվել հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմնի կամ դատարանի որոշմամբ:

Կախված այն հանգամանքից, թե որ մարմինն իրավունք ունի կայացնելու ընկերությունը լուծարելու մասին որոշում, նախատեսված են իրավաբանական անձանց հարկադիր և կամավոր լուծարման տեսակները: Պետք է ընդգծել, որ և՛ կամավոր, և՛ հարկադիր լուծարման համար օրենսդրությամբ նախատեսված են նույն ընթացակարգերը: Ընկերությունը լուծարելու մասին որոշում կայացնելուց հետո սկսում է լուծարման գործընթացը, որը նույնական է բոլոր իրավաբանական անձանց համար՝ անկախ նրանից, թե ով է ընդունել նման որոշում:

Այս կապակցությամբ հեղինակներից մեկի կողմից արվել է այնպիսի եզրակացություն, որ գրականության մեջ տեղ գտած այն պնդումը, թե օրենսդրությամբ (կոնկրետ դեպքում՝ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ հոդվածով, որի բովանդակությունը համընկնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի բովանդակությանը) նախատեսված է իրավաբանական անձանց լուծարման երկու կարգ՝ կամավոր և պարտադիր[1], ընդունելի չէ, քանի որ նշված դեպքում նախևառաջ նախատեսված են այն մարմինները, որոնք լիազորություն ունեն կոնկրետ իրավաբանական փաստերի առկայության պարագայում կայացնելու իրավաբանական անձի լուծարման մասին որոշում: Հետևաբար իրավաբանական անձանց լուծարման տարանջատումը հարկադիրի և կամավորի պետք է իրականացվի ոչ թե լուծարման կարգի բնույթից ել-

[1] Տե՛ս Гражданское право, том 1, Учебник, Отв. ред. Е.А. Суханов, М., 2002, էջ 202-203; Гражданское право, часть 1, Учебник, Под. ред. Ю.К. Толстого, А.М. Сергеева, М., 1996, էջ 122-123:

նելով, այլ այն մարմնի լիազորությունների վրա հիմնվելով, որն իրավունք ունի կայացնելու նման որոշում[1]:

Իրավաբանական անձանց լուծարման հիմքերի քննարկման համատեքստում անհրաժեշտ է դիմել իրավաբանական փաստերի ավանդական դասակարգմանը, որի համաձայն՝ գործողությունները նախևառաջ լինում են իրավաչափ և ոչ իրավաչափ[2]: Իրավաբանական անձանց լուծարման հիմքերի սոսկ մակերեսային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցից մի քանիսը իրոք համարվում են իրավաչափ գործողություններ, իսկ մի քանիսն էլ՝ օբյեկտիվորեն ոչ իրավաչափ: Ուստի ինքնին լուծարումը մի դեպքում կարող է համարվել իրավաչափ գործողության հետևանք, մեկ այլ դեպքում այն կարող է կատարել միայն սանկցիայի գործառույթ: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ սանկցիաները քաղաքացիական իրավունքում կարող են լինել տարբեր իրավական բնույթի: Օրինակ՝ դրանք կարող են հանդես գալ որպես քաղաքացիական իրավունքների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանության միջոցներ՝ կատարելով դրանց վերականգնման կամ խախտման կանխարգելման գործառույթ: Մյուս կողմից էլ սանկցիաները քաղաքացիական իրավունքում կարող են հանդես գալ որպես պատասխանատվության միջոցներ՝ նպատակաուղղված ոչ միայն խախտված իրավունքների վերականգնմանը, այլև իրավախախտի իրավունքների սահմանափակմանը կամ նրա համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն:

Ինչպես հայտնի է, քաղաքացիական պատասխանատվության կիրառման հիմք է քաղաքացիական իրավախախտում կատարելու փաստը: Վերջինս ընդունված է համարել մեղավոր հակաիրավական արարք, որը վնաս է պատճառում այլ անձի գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքներին[3]: Սակայն երբեմն Օրենսգրքի որոշ նորմեր պատասխանատվության կիառման հնա-

---

[1] Տե՛ս **Слеоневская А.Ю.,** Ликвидация коммерческих организаций, Дисс. канд. юрид. наук: 12.00.03, СПб, 2004, էջ 70:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Մաս առաջին, խմբագիր՝ Տ. Կ. Բարսեղյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2006, էջ 69:

[3] Տե՛ս ՀՀ քաղաքացիական իրավունք, 3-րդ մաս, 4-րդ հրատ. (լրացումներով և փոփոխություններով), խմբագիրներ՝ Տ. Կ. Բարսեղյան, Գ. Հ. Ղարախանյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 12-20:

րավորություն են նախատեսում՝ անկախ մեղքի առկայությունից (օրինակ՝ գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտի պատասխանատվությունը), այդ իսկ պատճառով երբեմն քաղաքացիական իրավախախտման տարրեր են համարվում միայն հակաիրավական արարքը, վնասը և վերջիններիս միջև եղած պատճառահետևանքային կապը: Որոշ հեղինակներ փորձում են ապացուցել, որ իրավաբանական անձի լուծարման՝ որպես քաղաքացիական պատասխանատվության միջոցի կիրառումը կարող է նախորդել միայն քաղաքացիական իրավունքի նորմերի կիրառման փաստը (չնայած որ իրավաբանական անձինք մեծ մասամբ լուծարվում են հանրային իրավունքի նորմերի խախտման պատճառով)[1]:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ պատասխանատվության այս միջոցի կիրառման հիմքերի ուսումնասիրությանը: Այն իրավախախտումները, որոնք կարող են հանգեցնել իրավաբանական անձի լուծարմանը, թվարկված են Օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում: Դրանց թվին են պատկանում նաև առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելը, օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումները: Թվարկված բոլոր իրավախախտումների կազմին բնորոշ է այն փաստը, որ դրանք չեն պարունակում քաղաքացիական իրավախախտման կազմին բնորոշ այն տարրը, որ պետք է վնաս պատճառվի այլ անձանց գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներին, հետևաբար առկա չէ նաև պատճառահետևանքային կապ արարքի և նշված վնասի միջև: Այս դիտարկումը թվում է, թե կարող է հաստատել Դ. Ա. Էպինսկիի կողմից վերն արտահայտված դիրքորոշումը, թե լուծարման՝ որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցի կիրառման համար բավական է միայն քաղաքացիաիրավական նորմի խախտման փաստը, իսկ քաղաքացիական իրավախախտման կազմի մյուս բաղադրիչների առկայությունը նշանակություն չունի: Բայց այս դիտարկումը հանգեցնում է հակառակ եզրահանգմանը. չնայած որ նշված

[1] Տե՛ս **Липинский Д.А.,** Проблемы юридической ответственности, под ред. Р. А. Хачатырова, СПБ, 2003, էջ 341-342:

իրավախախտումները նախատեսված են քաղաքացիական օրենսդրությամբ, սակայն դրանք ընդհանուր առնչություն չունեն քաղաքացիական իրավախախտումների հետ՝ դասական իմաստով, և հանրային իրավունքի նորմերի խախտումներ են: Այսպես՝ նշված իրավախախտումներից առաջինը՝ առանց թույլտվության (լիցենզիայի) գործունեություն իրականացնելը, վարչաիրավական բնույթի դասական իրավախախտում է, մինչդեռ վարչական օրենսդրության նորմերի խախտման հետևանքով իրավաբանական անձի լուծարման հնարավորությունը նախատեսված է Օրենսգրքի 67-րդ հոդվածում, ինչը չի տեղավորվում քաղաքացիաիրավական պատասխանատվության շրջանակներում: Ասվածից բխում է, որ լուծարումը՝ որպես իրավաբանական անձի պատասխանատվության միջոց, որը կիրառվում է առանց թույլտվության գործունեություն իրականացնելու հետևանքով, պետք է համարվի հանրային իրավական սանկցիա և հանվի Օրենսգրքի նշված հոդվածից: Ասվածը կարելի է հիմնավորել նաև այն հանգամանքով, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի[1] 169-րդ հոդվածով (ապօրինի ձեռնարկատիրություն) արդեն իսկ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար նախատեսված է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից երեսնապատիկի չափով[2]:

Լուծարումը որպես պատասխանատվության միջոց կիրառելու հաջորդ հիմքերը թվարկված են Օրենսգրքի վերը նշված հոդվածում, ըստ որի՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելը, օրենքի կամ այլ իրավական ակտերի կոպիտ կամ բազմակի խախտումներ կատարելը ևս կարող են հիմք լինել իրավաբանական անձի լուծարման համար: Ի հեճուկս Օրենսգրքի 1-ին և 4-րդ հոդվածների՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումները, որոնք կարող են հանգեցնել իրավաբանական անձի լուծար-

[1] Տե՛ս ՀՍՍՀԳՍՏ 1985/23:

[2] Քանի որ նմանատիպ իրավակարգավորում է գործում նաև ՌԴ օրենսդրության համաձայն, ուստի այդ մասին կարող եք ավելի մանրամասն կարդալ **Мельничук Г.В.,** Административная ответственность за нарушение условий лицензирования // Право и экономика, 2003, № 3:

ման, առաջին հերթին ընկալվում են որպես հանրային-իրավական ոլորտի օրենսդրական ակտերի խախտումներ, օրինակ՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ տնտեսվարողների համար նախատեսված մի շարք կանոններ խախտելու կամ այդ արարքը կրկին կատարելու համար այդ ակտով արդեն իսկ նախատեսված են պատասխանատվության միջոցներ՝ տուգանքի տեսքով, և նման պայմաններով լուծարումը որպես լրացուցիչ պատասխանատվության միջոց նախատեսելը մեր կողմից արդարացի չի գնահատվում: Բացի այդ, եթե նման դեպքերում ընդունենն, որ լուծարումը քաղաքացիական պատասխանատվության միջոց է, կբախվեն մեկ այլ հակասության: Այսպես՝ քաղաքացիական պատասխանատվության հիմնական խնդիրներից մեկը իրավավերականգնող գործառույթ կատարելն է[1], բայց, լուծարելով իրավաբանական անձը, արդյո՞ք այդ խնդիրը կատարվում է: Իրավաբանական անձը լուծարելով՝ առաջին հերթին սահմանափակվում է դրա հիմնադիրների (մասնակիցների)՝ ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքը, հետևաբար այս դեպքում լուծարումը կրում է ավելի շատ պատժիչ բնույթ և բնավ ուղղված չէ խախտված իրավունքների վերականգնմանը, բացի այդ՝ այս բոլոր դեպքերում իրավաբանական անձը լուծարելու պահանջով դատարան իրավունք ունեն դիմելու միայն պետական իրավասու մարմինները: Հետևաբար գտնում են, որ նման դեպքերում իրավաբանական անձի լուծարումը չի կարող համարվել քաղաքացիական պատասխանատվության միջոց, այլ պետք է ճանաչվի որպես հանրային-իրավական պատասխանատվության միջոց: Այս առումով կարծում ենք, որ միանգամայն ողջունելի է ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի շրջանակներում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելիս հարկադիր լուծարումը որպես պատժատեսակ նախատեսելու փորձը[2]: Այդ նախագծի 135-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր լուծարումը բացառիկ պատիժ է, որը իրավաբանական անձի նկատմամբ սահմանվում է առանձնապես ծանր հանցագործության համար՝ հաշվի առնելով կատարված արարքի և պատճառված վնասի բնույթն ու

[1] Տե՛ս **Братусь С.Н.**, Юридическая ответственность и законность (очерк теории), էջ 121-161:

[2] Տե՛ս https://www.e-draft.am/projects/496/about:

չափը, հանցագործությանը դրդող պատճառներն ու պայմանները, որոնք վկայում են տվյալ իրավաբանական անձի կողմից հետագայում գործունեությունը շարունակելու անթույլատրելիության մասին:

Այժմ անդրադառնանք այն դեպքերին, երբ իրավաբանական անձի լուծարման որոշ հիմքեր կարող են դիտարկվել որպես պաշտպանության միջոցներ: Գործող քաղաքացիական օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ հարկադիր լուծարման ինստիտուտի գործադրման անհրաժեշտությունը պայմանավորված է նման իրավաբանական անձի թերություններով, քանի որ իրավակարգը չի կարող հանդուրժել նման սուբյեկտի գոյությունը և, նախատեսելով այդ իրավաբանական անձի լուծարման պահանջ, կանխում է դրա կողմից այլ անձանց իրավունքների և օրինական շահերի խախտման հնարավորությունը՝ դրանով իսկ ապահովելով այդ անձանց իրավունքների պաշտպանությունը: Ասվածի կապացությամբ կարելի է առանձնացնել իրավաբանական անձի լուծարման այնպիսի հիմքեր, որոնք ուղղված են քաղաքացիների իրավունքների և այլ իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը:

Այսպես, Օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն, իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը որպես սեփականություն ունի առանձնացված գույք: Ինչպես օրենքով, այնպես էլ տեսության մեջ[1] գույքային առանձնացվածությունը, այսինքն՝ սեփականության իրավունքով գույք ունենալը, դիտարկվում է իրավաբանական անձի կարևոր հատկանիշներից մեկը: Ուստի երբ ընկերությունն իր գործունեության հետևանքով զրկվում է սեփականությունից, տեսականորեն դադարում է իրավաբանական անձ համարվելուց: Սակայն պետք է նկատի ունենալ, որ իրավաբանական անձը դադարում է առանձնացված գույք ունանալուց ոչ միայն իր գույքի ֆիզիկական կորստի պարագայում, այլև երբ դրա ակտիվների արժեքը պակաս է իր պարտավորությունների չափից: Այդ իսկ պատճառով, Օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն, եթե լուծարվող իրավաբանական ան-

[1] Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Долинская В.В.**, Акционерное право основные положения и тенденции, М., «Волтерс Клувер», 2006, էջ 321-322:

ձի գույքի արժեքն անբավարար է իր պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով: Այս դեպքում իրավաբանական անձի լուծարումը տեղի է ունենում հատուկ ընթացակարգով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ արդեն նախօրոք հայտնի է, որ լուծարվող իրավաբանական անձի գույքը բավարար չէ բոլոր պարտատերերի պահանջները բավարարելու համար: Ուստի օրենսդիրը նախատեսել է նման պահանջների բավարարման հատուկ հերթականություն, ինչը համարվում է լուծարվող իրավաբանական անձի պարտատերերի իրավունքների պաշտպանության առանձնահատուկ միջոց: Այս համատեքստում գտնում ենք, որ ընդունելի չէ հեղինակների այն պնդումը, թե սնանկության հետևանքով իրավաբանական անձի լուծարումը պատասխանատվության միջոց է[1]. այս դեպքում լուծարման պատճառ է ոչ թե քաղաքացիական իրավախախտման կատարման, այլ պարտավորությունները օբյեկտիվորեն կատարելու անկարողության փաստը:

Միևնույն ժամանակ առևտրային իրավաբանական անձանց որոշ տեսակների համար լուծարման հիմք է հանդիսանում ոչ միայն անվճարունակությունը, այլև կանոնադրական կապիտալի՝ օրենքով նախատեսված չափից նվազումը: Այսպես, գործող օրենսդրության համաձայն, որոշակի առևտրային իրավաբանական անձանց համար նախատեսված են կանոնադրական կապիտալի նվազագույն չափեր[2]: Ի թիվս այլ հատկանիշների՝ հեղինակների կողմից կարևորվում է կանոնադրական կապիտալի երաշխավորողական գործառույթը, քանի որ այն երաշխավորում է երրորդ անձի նկատմամբ իրավաբանական անձի ունեցած պարտավորությունների կատարումը[3]: Այդ իսկ պատճառով նման իրավաբանական անձանց համար օրենքով նախատեսվում է կանոնա-

[1] Տե՛ս **Трофимов К.Т.**, Кредитные организации в банковской системе РФ (гражданско-правовые проблемы), дис. д-ра юрид. наук., М., 2005, էջ 196:

[2] Օրինակ՝ ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2007 թ. փետրվարի 9-ի թիվ 39 Ն որոշմամբ հաստատված բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները կանոնակարգ 2-ի համաձայն՝ առևտրային բանկերի համար ընդհանուր կանոնադրական կապիտալի չափը սահմանվում է 30.000.000.000 ՀՀ դրամ:

[3] Տե՛ս **Шиткина И.С.**, նշված աշխատությունը, էջ 225:

դրական կապիտալի նվազագույն չափ: Ուստի պատահական չէ, որ Օրենսգրքի 98-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվում է, որ եթե ընկերության զուտ ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն կամ պակաս է կանոնադրական կապիտալի՝ օրենքով սահմանված նվազագույն չափից, ընկերությունը ենթակա է լուծարման: Զուտ ակտիվների արժեքի պակասելն ինքնին չի համարվում այլ անձանց իրավունքների խախտում, քանի որ ընկերությունը դեռ ի վիճակի է բավարարելու իր պարտատերերի պահանջները և նույնիսկ դրանից հետո մնացած գույքը բաշխելու իր մասնակիցների միջև: Հետևաբար այս դեպքում ևս լուծարումը կատարում է ընկերության մասնակիցների և պարտատերերի իրավունքների պաշտպանության գործառույթ՝ կանխելով այլ անբարենպաստ հետևանքներ, այդ թվում՝ ընկերության հետագա անվճարունակությունը:

Այժմ քննարկենք այն իրավիճակները, երբ ընկերությունները լուծարվում են՝ ելնելով ոչ թե տնտեսական ցուցանիշներից, այլ մասնակիցների թվաքանակից: Այսպես, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը: Հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի: Եթե նշված ժամկետում ընկերությունը չվերակազմավորվի, կամ նրա մասնակիցների թվաքանակը չպակասի մինչև սահմանված քանակը, ապա ընկերությունը ենթակա է լուծարման: Նմանատիպ նորմեր նախատեսված են նաև փակ բաժնետիրական ընկերությունների համար: Քանի որ և՛ ՍՊԸ-ների, և՛ ՓԲԸ-ների դեպքում անչափ կարևորվում է մասնակիցների կազմը, ուստի իմպերատիվ կերպով նախատեսվել են թվաքանակի նման սահմանափակումներ՝ կանխելու համար հենց մասնակիցների իրավունքների հնարավոր խախտումները: Ուստի այս պարագայում ևս իրավաբանական անձանց լուծարման նշված հիմքերն ունեն իրավունքների պաշտպանության բնույթ:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, գտնում ենք, որ իրավաբանական անձանց լուծարման հիմքերի ուսումնասիրությունն ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն, քանի

որ դրա շնորհիվ կարելի է վեր հանել տնտեսական ընկերությունների լուծարման հիմքերի առանձնահատկությունները՝ հաշվի առնելով դրանց կազմակերպաիրավական ձևի և գործունեության ոլորտի առանձնահատկությունները: Բացի այդ, հստակեցնելով ընկերությունը լուծարելու հիմքերի նշանակությունը, մի դեպքում դրանք կարելի է դիտարկել որպես պատասխանատվության միջոցներ, մեկ այլ դեպքում՝ որպես այլ անձանց իրավունքների պաշտպանության միջոցներ՝ դրանցից բխող հետևանքներով: Դա կնպաստի նաև օրենսդրության կատարելագործմանը, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, լուծարման որոշ հիմքեր Օրենսգրքում զետեղելը չի բխում քաղաքացիական պատասխանատվության տրամաբանությունից:

ОСНОВАНИЯ ДЛЯ ЛИКВИДАЦИИ ХОЗЯЙСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ И ИХ КЛАССИФИКАЦИЯ

Ашхен Согомонян

Соискатель кафедры гражданского права ЕГУ

В статье изучаются основания для ликвидации юридических лиц. Данное исследование имеет важное теоретическое и практическое значение, поскольку полученные результаты позволяют определить особенности оснований для ликвидации хозяйственных организаций с учетом особенностей их организационно-правовой формы. В связи с этим мы разработали новую классификацию оснований для ликвидации юридических лиц и предложили исключить из Гражданского кодекса некоторые пункты, включающие основания, противоречащие сущности гражданской ответственности.

GROUNDS FOR LIQUIDATION A COMPANY AND THEIR CLASSIFICATION

Ashkhen Soghomonyan
PHD Student at YSU Chair of Civil law

The study of the grounds for the liquidation of legal entities has an important theoretical and practical significance, since as a result, it is possible to determine the features of the bases for the liquidation of economic organizations, taking into account the peculiarities of their organizational and legal form. In this regard, the author presented a new classification of the grounds for liquidation of legal entities and proposed to exclude some of the grounds from the civil code, since they contradict the meaning of civil liability.

Բանալի բառեր՝ *իրավաբանական անձի լուծարում, լուծարման հիմքեր, իրավաբանական փաստեր, քաղաքացիական իրավահարաբերություններ, հարկադիր լուծարում, կամավոր լուծարում, քաղաքացիական պատասխանատվություն, իրավունքների պաշտպանություն:*

Ключевые слова: *ликвидация юридического лица, основания для ликвидации, юридические факты, гражданско-правовые отношения, принудительная ликвидация, добровольная ликвидация, гражданская ответственность, защита прав.*

Key words: *liquidation of the legal entity, grounds for liquidation, legal facts, civil law relations, compulsory liquidation, voluntary liquidation, civil liability, protection of rights.*

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ԲՌՆԻ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՎԻՃԱԿԸ ԵՎ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ՀՀ-ՈՒՄ

Էդգար Կարապետյան[1]

Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, որ վերջին տարիներին ՀՀ-ում հանցավորության այս տեսակը ստացել է նոր որակներ, նոր դրսևորումներ, ինչն անմիջականորեն կապված է տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային փոփոխությունների հետ:

Անցումային շրջանում հանցավորությունը գրեթե միշտ դրսևորում է նոր միտումներ, և սա բնորոշ է տարածաշրջանի բոլոր երկրներին[2]:

Մինչ անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների շարժընթացի և կառուցվածքի ուսումնասիրությունը փորձենք վեր հանել ընդհանուր հանցավորության միտումները ՀՀ-ում վերջին տարիներին:

ՀՀ-ում հանցավորության շարժընթացը դիտարկենք հետևյալ աղյուսակում[3]:

Աղյուսակ 1

ՀՀ-ում հանցավորության շարժընթացը՝ ներկայացված բացարձակ թվերով, 2007-2016 թվականների ընթացքում

տարեթիվ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
գրանցված հանցագործություններ	8428	9271	14339	15477	16572	15776	18333	17546	17043	18764

[1] ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ, գիտական ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Տ. Սիմոնյան:

[2] Տե՛ս **Սիմոնյան Տ. Վ.,** Երիտասարդների հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, էջ 6:

[3] Տվյալները ներկայացվել են www.armstat.am կայքից:

Աղյուսակում ներկայացված տվյալները դիտարկենք նաև գրաֆիկական պատկերով:

Գրաֆիկական պատկեր 1



Ներկայացված աղյուսակի և գրաֆիկական պատկերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՀՀ-ում ընդհանուր հանցավորության միտումները բացասական բնույթ ունեն, ինչը թերևս օրինաչափ է՝ հաշվի առնելով սոցիալ-քաղաքական և տնտեսական բարդ իրավիճակը: Այստեղ, բնականաբար, ներկայացված չեն հանցավորության լատենտայնության ցուցանիշները, որոնք հաշվի առնելու պարագայում պատկերն էլ ավելի մտահոգիչ կլիներ: Ինչպես տեսնում ենք, ՀՀ-ում վերջին տարիներին նկատվում է հանցավորության շարունակական աճ, որոշ տարիների կտրվածքով նկատվում են չնչին նվազման միտումներ, սակայն ընդհանուր առմամբ հանցավորության աճի կայուն դինամիկան նկատելի է:

Պետք է նշել, որ, համաձայն ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոնի կողմից տրամադրված տեղեկատվության (08.12.2017) և դրան կից գրության, ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոնում գրանցված հանցագործություններից տուժած անձանց վերաբերյալ դեռևս առանձին հաշվառում չի իրականացվում: Սա, իհարկե, պետք է դիտել որպես բացթողում, քանի որ էականորեն խոչընդոտում է հանցավորության ցանկացած դրսևորման վիկտիմալոգիական ասպեկտի ուսումնասիրությունը, սակայն տրամադրված տեղեկատվության հիման վրա կփորձենք

հնարավորինս հանգամանալից ուսումնասիրել սեռական հանցագործությունների կառուցվածքը, ինչպես նաև ընդհանուր սեռական հանցագործությունների և անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների փոխհարաբերակցությունը:

Խնդրո առարկայի քրեաիրավական ուսումնասիրությունը ենթադրում է որոշակի վիճակագրական տվյալների հետազոտում, որի հիման վրա կատարված առաջարկություններն իրապես կարող են նպաստել այս հանցատեսակների դեմ առավել արդյունավետ պայքարին, ինչպես նաև թույլ կտան իրականացնել առավել թիրախավորված և հիմնավորված քրեական քաղաքականություն:

Ուսումնասիրելով վերջին տարիներին ՀՀ-ում սեռական հանցագործությունների կառուցվածքը՝ ստանում ենք հետևյալ պատկերը.

Աղյուսակ 2

ՀՀ-ում սեռական հանցագործությունների կառուցվածքը ըստ 2007-2016 թվականների ընթացքում ՀՀ քր. օր-ի 138-142 հոդվածների հատկանիշներով գրանցված և քննությունը ավարտված քրեական գործերով և նյութերով անցնող հանցագործությունների վերաբերյալ տվյալների[1]

ՀՀ քր. օր.-ի հոդված	Թվական									
	2007	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*	*2015*	*2016*
138 34-138	8	19	21	15	15	19	19	22	39	25
139	7	4	11	9	11	12	15	9	20	18
140	0	0	3	1	1	5	3	4	6	5
141	16	34	34	49	39	62	66	54	41	56
142	2	6	4	8	5	7	13	8	14	14

[1]Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ոստիկանության ԻԿ:

Գրաֆիկական պատկեր 2



Աղյուսակի և գրաֆիկական պատկերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ սեռական հանցագործությունները, ինչպես նաև ընդհանուր հանցավորությունը դրսևորում են աճի միտումներ, չնայած տարբեր տարիների կտրվածքով առանձին հանցատեսակներ դրսևորում են նաև նվազման շարժընթաց: Ըստ ներկայացված տվյալների՝ ՀՀ-ում առավել հազվադեպ կատարվող սեռական հանցագործությունը սեռական հարաբերությանը կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելն է (ՀՀ քր. օր., հոդված 140), իսկ առավել տարածվածը՝ սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ (ՀՀ քր. օր., հոդված 141): Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քր. օր. 141-րդ հոդվածով նախատեսված հանցատեսակը անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական

հանցագործություն չէ, այնուամենայնիվ, այն համարվում է անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործություն, և այս հանգամանքն ինքնին մտահոգիչ է, քանի որ պետք է փաստել, որ ՀՀ-ում առավել տարածված սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունը անչափահասների նկատմամբ կիրառվող սեռական հանցագործություն է: Հատկանշական է, որ սեքսուալ բնույթի բռնի և անառակաբարո գործողությունների հանցատեսակներն ունեն գրեթե նույնական շարժընթաց ու միտումներ: Այս հանգամանքը պատահական չէ, քանի որ այս հանցատեսակներն ունեն բազմաթիվ ընդհանրություններ, հատկապես երբ խոսքը վերաբերում է բռնությամբ զուգորդված անառակաբարո գործողությունների կատարմանը: Փոքր-ինչ տարօրինակ է այն հանգամանքը, որ 2015 թվականին բռնաբարությունների կատարման «պիկը» համընկել է 141-րդ հոդվածով նախատեսված «Սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ» հանցատեսակի՝ վերջին տարիների առավել նվազ ցուցանիշին: Այս հանգամանքին պատշաճ բացատրություն գտնելը բավականաչափ խրթին է. այն կարող է պայմանավորված լինել ինչպես ֆրուստրացնող մի շարք գործոնների ուժեղացմամբ, որոնք պայմանավորում են բռնի սեռական ակտիվությունը, այնպես էլ լատենտայնության սուբյեկտիվ գործոններով, ինչպիսիք են, օրինակ, հանցանքի մասին հայտնելու վախը, ամոթը և այլն:

ՀՀ ոստիկանության ԻԿ-ի կողմից տրամադրված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ կատարված սեռական հանցագործությունների գերակշիռ մեծամասնությունը իրականացվել է գործազուրկների կողմից, ինչը վկայում է այս գործոնի առավել մեծ հանցածին նշանակության մասին, հատկապես՝ բռնի և բռնի-սեռական հանցավորության առումով: Այսպես՝ 2007-2016 թվականների ընթացքում սեռական հանցագործությունների 90%-ից ավելին կատարվել է գործազուրկների կողմից: Այս հանգամանքն առավել քան մտահոգիչ է, և հիրավի մեծ ջանքեր պետք է գործադրվեն գործազրկության նվազեցման ուղղությամբ, քանի որ հատկապես սեռական հանցագործությունների համատեքստում այս հանցածին գործոնի ազդեցությունն ահռելի է:

ՀՀ-ում սեռական հանցագործություն կատարող անձանց սեռային կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս հանցագործությունների գերակշիռ մեծամասնությունը կատարվում է տղամարդկանց կողմից: Տարբեր տարիների կտրվածքով կանանց կողմից սեռական հանցագործությունների կատարման ցուցանիշները տատանվում են 0-10%-ի շրջանակներում, ընդ որում՝ վերջին տարիներին կանանց կողմից սեռական հանցագործությունների կատարման դեպքեր գրեթե չեն արձանագրվել: Այս հանգամանքը խիստ տարօրինակ է և մտահոգիչ, քանի որ կարող է վկայել կանանց կողմից սեռական հանցագործությունների կատարման լատենտայնության աճի մասին:

Ինչ վերաբերում է սեռական հանցագործություններ կատարող անձանց տարիքին, ապա հարկ է փաստել, որ այս հանցատեսակների առումով կրիմինալ առավել ակտիվ տարիքային խումբը կազմում են 18-24 տարեկանները, չնայած որոշ դեպքերում 30-49 տարեկանների կողմից կատարվել են ավելի շատ սեռական հանցագործություններ: Օրինակ՝ 2007 թվականին արձանագրված 40 սեռական հանցագործություններից 11-ը կատարվել են 18-24 տարեկան անձանց, իսկ 14-ը՝ 30-49 տարեկանների կողմից: Սա, իհարկե, բացառություն է, քանի որ 10 տարվա կտրվածքով սեռական հանցագործությունների գրեթե կեսը կատարվում է 18-24 տարեկանների տարիքային խմբի կողմից, ինչը թերևս օրինաչափ է՝ հաշվի առնելով սեռական հանցագործությունների առաձնահատկությունները և դրանց կախվածությունը անձի ֆիզիկական, հորմոնալ և մի շարք այլ ֆիզիոլոգիական գործոններից:

Ինչ վերաբերում է անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործություններին, ապա հանցավորության այս տեսակն ընդհանուր հանցավորության բաղկացուցիչ մասն է կազմում: Մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումները պրոյեկտելով ըստ հանցավորության այս դրսևորման՝ կարելի է փաստել, որ անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունները պատմականորեն փոփոխվող սոցիալ-իրավական երևույթներ են, որոնք ներկայացնում են որոշակի ժամանակահատվածում և տարածքում անչափահասների

սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների ամբողջություն[1]:

ՀՀ-ում անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների միտումները բացահայտելու նպատակով համադրենք դրանք ինչպես ընդհանուր հանցավորության, այնպես էլ սեռական հանցագործությունների միտումների հետ[2]:

Աղյուսակ 3.

Ընդհանուր հանցավորության, սեռական հանցագործությունների, անչափահասների նկատմամբ կատարված սեռական հանցագործությունների և բռնի սեռական հանցագործությունների միտումները

Տարեթիվ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Գրանցված հանցագործություններ	8428	9271	14339	15477	16572	15776	18333	17546	17043	18764
Անձի սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ քր. օր.-ի 138-142-րդ հոդվածներ)	33	63	73	82	71	105	116	97	120	118
Անչափահասների նկատմամբ կատարված սեռական հանցագործություններ	22	31	47	60	54	84	91	66	84	80
Անչափահասների նկատմամբ կատարված բռնի սեռական հանցագործություններ	7	8	15	14	17	21	25	13	41	22

Այս հարաբերակցությունը առավել պատկերավոր դարձնելու համար դիտարկենք այն գրաֆիկական պատկերի միջոցով:

[1] Տե՛ս Криминология: Учебник для вузов, под ред. В.Д. Малкова, 2-е изд., перераб. и доп., М., «Юстицинформ», 2006, էջ 32-33:

[2] Տվյալները տրամադրվել են ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից:

Գրաֆիկական պատկեր 2

Սեռական հանցագործությունների, անչափահասների նկատմամբ կատարված սեռական հանցագործությունների, ինչպես նաև անչափահասների նկատմամբ կատարված բռնի սեռական հանցագործությունների փոխհարաբերակցությունը



Ինչպես տեսնում ենք, անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները և անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունները դրսևորում են գրեթե նույնական միտումներ: Ինչ վերաբերում է անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների միտումներին, ապա նկատելի է, որ դրանք որոշակիորեն տարբերվում են ինչպես ընդհանուր սեռական հանցագործությունների, այնպես էլ անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների միտումներից: Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների վիճակագրությունն ունի ավելի կայուն և համաչափ պատկեր, իսկ դրա առավելագույն ցուցանիշները համեմատաբար թույլ են արտահայտված, ինչը նկատելի է նաև գրաֆիկական պատկերում: Առանձնանում է միայն 2015 թվականի ցուցանիշը, որից հետո կրկին գրանցվում է հանցավորության այս

դրսևորման նվազում: Ընդ որում՝ դրական պետք է համարել այն հանգամանքը, որ անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների նվազման միտումն ավելի արտահայտված է, քան ընդհանուր սեռական հանցագործությունների և անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների նվազման միտումները, եթե, իհարկե, դա կապված չէ անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների լատենտայնության աճի հետ:

Պատկերն ամբողջական դարձնելու նկատառումներով ուսումնասիրենք նաև ընդհանուր հանցավորության, անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների, անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների, ինչպես նաև անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների տոկոսային փոխհարաբերակցությունը:

Աղյուսակ 4

Ընդհանուր հանցավորության, անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների, անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների, ինչպես նաև անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների տոկոսային փոխհարաբերակցությունը

Տարեթիվ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Գրանցված հանցագործություններ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
Անձի սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ քր. օր.-ի 138-142-րդ հոդվածներ)	0.39%	0.67%	0.5 %	0.52%	0.42%	0.66%	0.63%	0.55%	0.7 %	0.62%
Անչափահասների նկատմամբ կատարված սեռական հանցագործություններ	0,26%	0,33%	0,32%	0,38%	0,32%	0,53%	0,49%	0,37%	0,49%	0,42%
Անչափահասների նկատմամբ կատարված բռնի սեռական հանցագործություններ	0,08%	0,08%	0,1 %	0,09%	0,1 %	0,13%	0,14%	0,07%	0,24%	0,11%

Ուսումնասիրելով ընդհանուր հանցավորության ծավալում սեռական հանցագործությունների, անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների, ինչպես նաև անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների տեսակարար կշիռը՝ տեսնում ենք, որ սեռական հանցագործությունները կազմում են ընդհանուր հանցավորության 0,4-0,7%-ը: Սակայն մտահոգիչ է, որ անչափահասների նկատմամբ կատարված սեռական հանցագործությունները կազմում են ընդհանուր հանցավորության 0.3-0.5%-ը: Այսինքն՝ կարելի է փաստել, որ սեռական հանցագործությունների մեծ մասը կատարվում է անչափահասների նկատմամբ: Սա խիստ բացասական միտում է, որի հաղթահարման համար պետությունը պետք է առավելագույն ջանքեր գործադրի:

Ինչ վերաբերում է անչափահասների նկատմամբ կատարված բռնի սեռական հանցագործություններին, ապա դրանց ծավալը կազմում է ընդհանուր հանցավորության տեսակարար կշռի 0.1-0.2%-ը, սակայն այս առումով ևս նկատելի են բացասական միտումներ, քանի որ ընդհանուր առմամբ դիտվում է հանցավորության այս դրսևորման աճ:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նկատել, որ, ի տարբերություն ԱՊՀ մի շարք երկրների, որտեղ սեռական հանցագործությունների տեսակարար կշիռն ընդհանուր հանցավորության ծավալում կազմում է 2-4%[1], ՀՀ-ում, ըստ պաշտոնական վիճակագրության, այս առումով պատկերն էապես և դրականորեն տարբերվում է, քանի որ, ինչպես վերը նշվեց, սեռական հանցագործությունները կազմում են ընդհանուր հանցավորության 0.4-0.7%-ը: Սակայն մեր կողմից կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ առկա են մի շարք բացասական միտումներ, որոնք կարող են հանցավորության այս դրսևորման ծավալը մոտեցնել տարածաշրջանի այլ երկրների ցուցանիշներին:

[1] Տե՛ս **Дьяченко А.П.,** Насильственные преступления против личности в государствах-участниках Содружества Независимых Государств в 2005-2008 гг. и в I полугодии 2009 г. (статистический анализ) // Уголовное право, 2009, № 6, էջ 97:

СТРУКТУРА, СОСТОЯНИЕ И ДИНАМИКА НАСИЛЬСТВЕННЫХ ПОЛОВЫХ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ

Эдгар Карапетян
Соискатель кафедры уголовного права ЕГУ

В статье изучаются структура, состояние и динамика насильственных половых преступлений против несовершеннолетних в РА. Мы констатируем, что насильственные половые преступления против несовершеннолетних в РА имеют тревожную тенденцию роста, что представляет опасность в свете нарастания влияния многих криминогенных факторов. Отмечается, что преступность в целом в РА имеет неблагоприятную тенденцию роста, а насильственная преступность и в особенности насильственные половые преступления против несовершеннолетних отражают эту негативную картину. Результаты исследования показывают, что почти половина всех половых преступлений в РА совершается в отношении несовершеннолетних, и при этом не учитывается уровень латентности. Мы пришли к выводу, что насильственные половые преступления против несовершеннолетних в РА имеют более благоприятную тенденцию, чем в других странах СНГ, однако наблюдается некоторая отрицательная динамика, что может приблизить показатели насильственных половых преступлений против несовершеннолетних в РА к показателям в соседних странах.

STRUCTURE, CONDITION AND DYNAMICS OF VIOLENT SEXUAL CRIMES AGAINST MINORS

Edgar Karapetyan
PhD Student at the chair of Criminal Law, YSU

The article analyzes the structure, state and dynamics of violent sexual crimes against minors in Armenia. It was stated that the violent sexual crimes of minors in Armenia have an alarming growth trend, which is very dangerous in light of the growing influence of many criminogenic factors. It is noted that crime in general in Armenia has an unfavorable tendency of growth, and violent crime and especially violent sex crimes against minors reflect this negative picture. The author's research shows that almost half of all sexual crimes in the RA

are committed against minors and the level of latency is not taken into account. The author states that violent sexual crimes against minors in Armenia have a more favorable trend than in other CIS countries, but there is some negative dynamics that can bring the rates of violent sexual crimes against minors in Armenia with other neighboring countries.

Բանալի բառեր՝ *անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործություններ, վիճակ, դինամիկա, միտումներ, կառուցվածք, ածի բացասական միտումներ, ցուցանիշներ:*
Ключевые слова: *насильственные половые преступления против несовершеннолетних, состояние, динамика, тенденция, структура, негативные факторы роста, показатели.*
Keywords: *Violent sexual crimes against minors, condition, dynamics, trend, structure, negative growth factors, indicators.*

ՄԵԴԻԱՑԻԱՅԻ (ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ) ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊՐՈԲԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Նունե Հայրապետյան[1]

Հանցանք կատարած անձի և տուժողի միջև հաշտարարության՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման եղանակի վերաբերյալ տեսական քննարկումները Եվրոպայում սկիզբ են առել դեռևս 1960-ական թթ.: Կանադայում և ԱՄՆ-ում 1970-ական թթ. կեսերին սկսեցին փորձարկվել մեդիացիայի առաջին ծրագրերը:

Իր ժամանակակից տեսքով մեդիացիան եվրոպական երկրներում ձևավորվել է 1980-ական թվականներին: Քրեական դատավարության ոլորտի տեսաբան մասնագետները և իրավակիրառողները սկզբում թերահավատորեն էին վերաբերում մեդիացիայի կիրառմանը քրեական գործերում, ինչի պատճառով մեդիացիայի կիրառման դեպքերը հազվադեպ էին: Մեդիացիայի օրենսդրական հիմքերը եվրոպական երկրներում ամրապնդվեցին 1990-ական թվականներին, ինչին զուգընթաց կտրուկ սկսեց աճել մեդիացիայի հանձնվող գործերի քանակը: Եթե նշված տասնամյակի սկզբին միայն մի քանի պետություններ էին ընդունել ոլորտը բազմակողմանիորեն կարգավորող օրենսդրական ակտեր (Գերմանիա, Նորվեգիա, Ֆրանսիա, Բելգիա), ապա տասնամյակի վերջին այդ երկրների շարքը զգալիորեն ընդլայնվեց (Մեծ Բրիտանիա, Ֆինլանդիա, Չեխիա, Լեհաստան և այլն): Նույն ժամանակահատվածում համազգային պիլոտային ծրագրի իրականացումից հետո Շվեդիան իր հերթին ձեռնամուխ եղավ ոլորտի նոր օրենսդրության մշակմանն ու ընդունմանը: Մեդիացիայի ինստիտուտի կիրարկումն ապահովող մի շարք ծրագրեր մշակվեցին և իրագործվեցին Ալբանիայում, Իսպանիայում, Դանիայում, Սլովենիայում և Ռուսաստանում: Չնավորված պրակտիկային համապատասխան՝ մեդիացիայի հիմնականում հանձնվում էին անչափահասների գործերը. աստիճանաբար մեդիացիան սկսեց ընդգրկել նաև չափահասների գործերի քննությունը[2]:

---

[1] ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Տ. Սիմոնյան:

[2] Տե՛ս IVO AERTSEN AND JOLIEN WILLEMSENS. THE EUROPEAN FORUM FOR VICTIM–OFFENDER MEDIATION AND RESTORATIVE JUSTICE,

Որպես վերականգնողական արդարադատության բաղկացուցիչ մաս՝ մեդիացիայի ինստիտուտն իր հետագա ամրագրումը ստացավ միջազգային ակտերում:

Տուժողի և հանցանք կատարած անձի միջև հաշտարարության վերաբերյալ առաջին կարևոր միջազգային փաստաղթղթերից է 1999 թ. սեպտեմբերի 15-ին ընդունված՝ *քրեական դատավարությունում մեդիացիայի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի № R (99)19 հանձնարարականը*[1]: Նշված փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին խրախուսում է ապահովել կամավոր և գաղտնի մեդիացիայի իրականացումը քրեական դատավարության բոլոր փուլերում, ամրագրում է այն ելակետային սկզբունքները, որոնց պետք է հետևեն անդամ պետությունները: Եվրոպական միությունն իր հերթին իր ներդրումն ունեցավ մեդիացիայի ինստիտուտի կայացման հարցում, և 2001 թ. մարտի 15-ին ԵՄ խորհուրդը ընդունեց շրջանակային որոշում՝ քրեական դատավարությունում տուժողի կարգավիճակի վերաբերյալ (այսուհետ՝ նաև Որոշում)[2]: Նշված փաստաթուղթը հատուկ դրույթներ է պարունակում քրեական դատավարությունում մեդիացիայի կիրառման վերաբերյալ: Որոշման 10-րդ հոդվածով նախատեսված է հետևյալը.

«1. Անդամ պետություններից յուրաքանչյուրը պետք է միջոցներ ձեռնարկի խթանելու մեդիացիայի կիրառումը այնպիսի հանցանքների առնչվող քրեական գործերով, որոնցով մեդիացիայի իրականացումը համապատասխանում է հանցանքի էությանը:

2. Անդամ պետություններից յուրաքանչյուրը պետք է ապահովի, որ տուժողի և հանցանք կատարած անձի միջև մեդիացիայի շնորհիվ ձեռք բերված համաձայնությունը հաշվի առնվի քրեական գործի քննության ընթացքում»:

Անդրադառնալով մեդիացիայի հասկացությանը ժամանակակից իրավունքում՝ հարկ է նշել, որ վերջինս իր ամրագրումը ստացել է նաև վերպետական մակարդակով՝ վերոգրյալ Որոշմամբ:

Article in *European Journal on Criminal Policy and Research* **9**, 291–300, 2001. © 2001 *Kluwer Academic Publishers. Printed in the Netherlands:*

[1] Տե՛ս https://rm.coe.int/1680706970:

[2] 2001/220/JHA: Council Framework Decision of 15 March 2001 on the standing of victims in criminal proceedings, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=celex%3A32001F0220.

Այսպես, նշված Որոշման 1-ին հոդվածի համաձայն, *քրեական գործերով մեդիացիան քրեական վարույթից առաջ կամ վերջինիս ընթացքում տուժողի և հանցանք կատարած անձի միջև համաձայնություն ձեռք բերելուն ուղղված գործընթացն է, որը համակարգվում է հատուկ որակավորված անձի կողմից:*

Առանձին պետությունների քրեական իրավունքի և քրեական դատավարության ոլորտի իրավական ակտերը ևս պարունակում են մեդիացիայի հասկացության վերաբերյալ դրույթներ: Այսպես՝ Գերմանիայի քրեական դատավարության օրենսգիրը թեև առանձին հոդվածով չի նկարագրում մեդիացիայի հասկացությունը, այնուամենայնիվ, օրենսգրքի 152-155-րդ հոդվածների բովանդակությունից ակնհայտ են դառնում մեդիացիայի («Täter-Opfer-Ausgleich». բառացի թարգմանությունն է՝ «տուժողի և իրավախախտի հավասարակշռում») պարտադիր տարրերը և հատկանիշները: Նշված հոդվածների համաձայն՝ վարույթ իրականացնող մարմնի (Գերմանիայում՝ դատախազը) պարտականությունն է վարույթի բոլոր փուլերում գնահատել մեդիացիայի նշանակման հնարավորությունը և նշանակել մեդիացիա, երբ կիրառելի է: Մեդիացիան կարող է նշանակվել միայն տուժողի համաձայնությամբ և իրականացվում է երրորդ կողմի (հաշտարարի) պարտադիր մասնակցությամբ[1]:

Ավստրալիայի քրեական օրենսդրության համաձայն՝ տուժողի և իրավախախտի միջև հաշտարարությունը գործընթաց է, որում մեկի կողմից մյուսի նկատմամբ հանցանք կատարելու պատճառով վեճի մեջ գտնվող անձինք բնորոշում են վիճելի հարցերը, փորձում գտնել լուծման ուղիներ և հասնել համաձայնության՝ որակավորված անկողմնակալ երրորդ կողմի օգնությամբ: Հաշտարարը վեճի բովանդակային լուծման տեսանկյունից խորհրդատվական կամ որոշիչ դեր չունի, սակայն կարող է խորհրդատվություն տրամադրել մեդիացիայի գործընթացին առընչվող ընթացակարգային հարցերի վերաբերյալ[2]:

---

[1] Տե՛ս Trenczek, Thomas (2001), Victim-Offender Mediation in Germany – ADR Under the Shadow of the Criminal Law?, Bond LawReview, vol. 13: iss. 2, article 6:

[2] Տե՛ս http://law.gov.au/aghome/advisory/nadrac/adrdefinitions.htm:

ՀՀ օրենսդրությունը ևս, հավատարիմ մնալով միջազգային պրակտիկային, ամրագրել է հաշտարարության հասկացությունը «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի[1] (այսուհետ՝ նաև Օրենք) 29-րդ հոդվածով: Վերջինիս 2-րդ մասի համաձայն՝ հաշտարարությունը դատական քննության փուլում դատարանի կողմից նշանակված, իսկ ազատազրկման հետ չկապված պատիժների կատարման կամ հետպատժյա փուլում պրոբացիայի ծառայության ղեկավարի կողմից սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ նշանակված բանակցությունների իրականացումն է, որն ուղղված է պրոբացիայի շահառուին և տուժողին (տուժողի իրավահաջորդին) հաշտեցնելուն:

Նշված հասկացությունը բավականին ընդգրկուն է: Վերջինից կարելի է բխեցնել ՀՀ-ում հաշտարարության իրականացման հիմնական չափանիշները: Թերևս ուշագրավ է այն հանգամանքը, որ, ինչպես բխում է նշված հասկացության բնորոշումից, մեդիացիան ՀՀ-ում կարող է իրականացվել միայն դատական քննության փուլում կամ ազատազրկման հետ չկապված պատիժների կատարման կամ հետպատժյա փուլում: Նման մոտեցումը ամրագրված էր դեռևս ՀՀ-ում պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգում, ինչը հիմնավորվում էր այն հանգամանքով, որ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծով մասնավոր մեղադրանքի վարույթն անմիջապես տեղափոխվում է դատական փուլ, որի պատճառով մեդիացիան, որը մի շարք երկրներում նախատեսված է որպես մինչդատական փուլում իրականացվող գործառույթ, մեր երկրում կարող է դիտվել որպես դատական փուլում իրականացվող գործառույթ (ինչպես, օրինակ, Մալտայում, Նորվեգիայում, Հյուսիսային Իռլանդիայում է)[2]: Նման մոտեցումը կարող է խնդրահարույց լինել հատկապես այն պատճառով, որ ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված է տուժողի հետ հաշտվելու ինստիտուտը, որը կիրառվում է նաև մինչդատական վարույթում: Մեր կար-

[1] Տե՛ս ՀՀ ՕՐԵՆՔԸ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ, ՀՕ-48-Ն, ՀՀՊՏ 2016.05.25/41 (1221), հոդ. 443:

[2] Տե՛ս ՀՀ-ում պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգ, http://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9158471282251_naxagic_1_.pdf:

ծիքով՝ ավելորդ շփոթմունքից խուսափելու նպատակով առավել տրամաբանական կլիներ տուժողի հետ հաշտվելու՝ արդեն իսկ գոյություն ունեցող ինստիտուտը որոշակի չափով ընդգրկել հաշտարարության հասկացության մեջ՝ նախատեսելով, որ մինչդատական վարույթի ընթացքում տուժողի և կասկածյալի կամ մեղադրյալի միջև հաշտարարության գործընթացը ևս կարող է իրականացվել պրոբացիայի ծառայության հաշտարարի կողմից:

Սույն աշխատանքի շրջանակներում անդրադարձ կկատարենք հաշտարարության իրականացման գործընթացին և այն մարմիններին, որոնց միջոցով այն կյանքի է կոչվում: ՀՀ-ի հետ համեմատականներ անցկացնելու նպատակով ուսումնասիրվել է Գերմանիայի օրինակը, որը ներկայացվում է ստորև:

Գերմանիայում դատախազը կամ դատավորը պարտականություն է կրում վարույթի բոլոր փուլերում ստուգելու տուժողի և հանցանք կատարած անձի միջև հաշտարարության իրականացման հնարավորությունը (Գերմանիայի քրեական օրենսգրքի 155(ա)-րդ հոդված): Եթե օրենքով նախատեսված պայմանները բավարարված են, դատախազը կամ դատավորը իրավասու է դիմելու համապատասխան մարմիններին՝ հաշտարարություն իրականացնելու նպատակով: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ, Գերմանիայի քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն, դատախազը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ գործերով իրավասու է հրաժարվելու քրեական հետապնդումից, եթե հանցանք կատարած անձը ակնհայտ միջոցներ է ձեռնարկել տուժողի հետ հաշտվելու գործընթաց սկսելու ուղղությամբ: Ինչ վերաբերում է այն հանցանքների շրջանակին, որոնց վերաբերող գործերով մեդիացիան թույլատրվում է, ապա կարելի է փաստել, որ Գերմանիայի օրենսդրությունը նման սահմանափակում չի պարունակում, թեպետ, ձևավորված ավանդույթին համապատասխան, մեդիացիա նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության գործերով: Ըստ տեսաբանների վերլուծության՝ Գերմանիայում հաշտարարության չափանիշներ են հանցագործության ոչ մեծ կամ միջին ծանրության բնույթը, անտեղի և ավելորդ պետական վերահսկողության բացառումը, տուժողի առկայությունը (կենդանի լինելը), հանցագործության դեպքի հստակ բացահայտված լինելը, հանցանք կատարած անձի զղջումը և հանցա-

գործության համար պատասխանատվության ընդունումը, ինչպես նաև տուժողի և հանցանք կատարած անձի համաձայնությունը[1]:

Գերմանիայում մեդիացիան իրականացվում է պրոբացիայի ծառայության կամ տուժողների և հանցանք կատարած անձանց հաշտեցման կենտրոնների միջոցով: Վերջիններս գտնվում են պետական մարմինների համակարգից դուրս և հասարակական կազմակերպությունների կարգավիճակ ունեն: Ամբողջ Գերմանիայում կան մոտ 400 նման կենտրոններ, որոնք ակտիվորեն ներգրավված են հաշտարարության ոլորտում:

Պրոբացիայի ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանումներում կան հատուկ բաժիններ, որոնք զբաղվում են բացառապես հաշտարարությամբ: Պրոբացիայի ծառայող հաշտարարները առանձին որակավորում ունեցող մասնագետներ են և բացառապես զբաղվում են հաշտարարությամբ:

Հաշտարարության գործընթացը Գերմանիայում ավարտվում է հաշտության համաձայնության կնքմամբ, որը, կախված դատավարական այն փուլից, որում իրականացվում է հաշտարարությունը, հաստատվում է դատարանի կամ վարույթ իրականացնող մարմնի կողմից:

Վերադառնալով ՀՀ-ին՝ նշենք, որ հաշտարարության ընթացակարգը, հաշտարարների գործառույթները նկարագրված են «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի շրջանակներում: Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ հաշտարարության կողմերն են պրոբացիայի շահառուն և տուժողը (տուժողի իրավահաջորդը): Հաշտարարը պրոբացիայի այն ծառայողն է, որին պրոբացիայի ծառայության ղեկավարը նշանակում է հաշտարարություն իրականացնելու համար: Օրենքի նշված հոդվածի վերլուծությունից և այլ հոդվածներում հաշտարարին ներկայացվող պահանջների բացակայությունից հետևում է, որ պրոբացիայի ծառայության ցանկացած ծառայող կարող է նշանակվել հաշտարարի դերում: Կարծում ենք, որ նման մոտեցումը բարելավման կարիք ունի: Այլ պետությունների պրակտիկան ցույց է տալիս, որ հաշտարարների ստորաբաժանումն առանձնացված է, վերջիններիս ներկայացվող պահանջները առավել խիստ են, համապատասխան մասնագի-

[1] Տե՛ս DeLattre 2010, էջ 93, Kury & Lerchenmüller 1981:

տական վերապատրաստման առկայությունը պարտադիր է: Ուստի համանման մոտեցման որդեգրումը կնպաստի հաշտարարության ինստիտուտի ճիշտ կազմակերպմանը ՀՀ-ում:

Օրենքի 30-րդ հոդվածը անդրադառնում է հաշտարարության գործընթացի նախաձեռնմանը: Վերջինիս համաձայն՝ հաշտարարության գործընթաց նշանակելու իրավասություն ունեն դատարանը՝ դատական քննության փուլում, իսկ պրոբացիայի ծառայության ղեկավարը՝ սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ՝ ազատազրկման հետ չկապված պատիժների կատարման կամ հետպատժյա փուլում: Հաշտարարություն նշանակելու մասին դատական ակտն ստանալուց հետո պրոբացիայի ծառայության ղեկավարն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշում է կայացնում հաշտարարություն և հաշտարար նշանակելու մասին և այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ծանուցում է կողմերին:

Ազատազրկման հետ չկապված պատիժների կատարման կամ հետպատժյա փուլում կողմի միջնորդության դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ծանուցում է մյուս կողմին: Ծանուցմանը զուգահեռ՝ պրոբացիայի ծառայողը կապ է հաստատում և հանդիպում հաշտարարություն նախաձեռնող կողմի հետ՝ ճշտելով նրա առաջարկները: Այնուհետև հանդիպում է մյուս կողմի հետ: Պրոբացիայի ծառայողը կողմերին բացատրում է հաշտարարության էությունը, նպատակը, առավելությունները, հետևանքները և անհրաժեշտ այլ պայմաններ: Երկու կողմերի հետ հանդիպումների արդյունքում պրոբացիայի ծառայողն այդ մասին կազմում է արձանագրություն, որը հաստատվում է պրոբացիայի ծառայողի և կողմերի ստորագրությամբ: Մյուս կողմը պարտավոր է արձանագրությունն ստորագրելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր կամ բանավոր դիրքորոշում հայտնել հաշտարարության գործընթաց սկսելու վերաբերյալ:

Կողմերի դիրքորոշումներին ծանոթանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պրոբացիայի ծառայության ղեկավարը որոշում է կայացնում հաշ-

տարարություն և հաշտարար նշանակելու կամ հաշտարարության նշանակումը մերժելու մասին:

Ազատազրկման հետ չկապված պատիժների կատարման կամ հետպատժյա փուլում պրոբացիայի ծառայության ղեկավարը մերժում է հաշտարարության նշանակումը, եթե բացակայում է հաշտարարության գործընթաց սկսելու վերաբերյալ կողմերից մեկի համաձայնությունը:

Պրոբացիայի ծառայության ղեկավարի՝ հաշտարարություն նշանակելու մասին որոշման մեջ նշվում են հաշտարարության կողմերը, գործի հանգամանքների հակիրճ նկարագրությունը, կողմերի պահանջները, հաշտարարության ժամկետները և այլ անհրաժեշտ տվյալներ: Պրոբացիայի ծառայության ղեկավարի որոշումն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պրոբացիայի ծառայությունն այդ մասին պատշաճ ծանուցում է կողմերին:

Հաշտարարության ընթացքում պրոբացիայի ծառայողի լիազորությունները ըստ Օրենքի 30-րդ հոդվածի հանգում են հետևյալին.

Դատական ակտի կամ պրոբացիայի ծառայության ղեկավարի որոշման հիման վրա նշանակված հաշտարարության դեպքում իր իրավասությունների սահմաններում հաշտարարը՝

1) ձեռնարկում է միջոցներ պրոբացիայի շահառուին և տուժողին (տուժողի իրավահաջորդին) հաշտեցնելու և նրանց միջև հաշտության վերաբերյալ գրավոր համաձայնություն կնքելու համար.

2) հաշտության համաձայնագրի տեքստը նախապատրաստելիս աջակցում է կողմերին.

3) հանդիպում է պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) հետ.

4) կազմակերպում է ընդհանուր հանդիպում:

Հարկ է նշել, որ պրոբացիայի շահառուի, տուժողի (տուժողի իրավահաջորդի) կամ նրանց հետ ընդհանուր հանդիպումների ժամանակ կարող են ներկա լինել պրոբացիայի ծառայության շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) փաստաբանները, ինչը, անշուշտ, լրացուցիչ երաշխիքներ է ապահովում հաշտարարության գործընթացում կողմերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանվածության տեսանկյունից:

Հաշտարարության արդյունավետության ապահովման կարևոր պայման է նաև ժամկետների սահմանափակվածությունը: Օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ հաշտարարության սկզբնական ժամկետը չի կարող գերազանցել երեք ամիսը: Կողմերի համատեղ միջնորդությամբ նշված ժամկետը կարող է երկարաձգվել միայն մեկ անգամ՝ մինչև մեկ ամիս ժամկետով: Հաշտարարության ժամկետի սկիզբ է համարվում հաշտարարի նշանակման օրը:

Հաշտարարության գործընթացն ավարտվում է՝

1) կողմերից առնվազն մեկի կամ հաշտարարի կողմից գործընթացը դադարեցնելու վերաբերյալ ներկայացված միջնորդության հիման վրա հաշտարարություն նշանակած մարմնի կողմից որոշման կայացմամբ.

2) հաշտարարության արդյունքում հաշտության համաձայնության կնքման դեպքում՝

ա. ազատազրկման հետ չկապված պատիժների կատարման կամ հետպատժյա փուլում՝ պրոբացիայի ծառայության ղեկավարի հաստատմամբ կամ մերժմամբ,

բ. դատական քննության փուլում՝ այն հաշտարարություն նշանակած դատարանին ներկայացնելով:

Կարևոր է, որ յուրաքանչյուր կողմ ցանկացած պահի կարող է դիմել պրոբացիայի ծառայության ղեկավարին հաշտարարության գործընթացը դադարեցնելու միջնորդությամբ: Հաշտության վերաբերյալ գրավոր համաձայնության մեջ կարող են նախատեսվել պրոբացիայի շահառուի կողմից տուժողին պատճառված վնասի հատուցման պարտականությունը, դրա ժամկետներն ու իրականացման կարգը:

Հաշտարարության արդյունքում հաշտության համաձայնություն կնքելու դեպքում հաշտարարը պարտավոր է հաշտության համաձայնությունն ստորագրելու պահից հետ՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ծանուցել պրոբացիայի ծառայության ղեկավարին՝ կցելով հաշտության համաձայնության բնօրինակը: Ստանալով հաշտարարի՝ վեճը հաշտարարությամբ լուծելու մասին պատշաճ ծանուցումը՝ պրոբացիայի ծառայության ղեկավարն անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում հաստատում կամ մերժում է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը, իսկ դատարանի նախա-

ձեռնությամբ նշանակված հաշտարարության դեպքում այն ներկայացնում է դատարան:

Դատարանը կամ պրոբացիայի ծառայության ղեկավարը մերժում է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը, եթե այն չի համապատասխանում օրենսդրության պահանջներին: Պրոբացիայի ծառայության ղեկավարի կողմից կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնության մերժումը չի կարող արգելք հանդիսանալ կողմերի միջև հաշտարարության նոր գործընթաց սկսելու համար:

Համակարգային վերլուծության ենթարկելով հաշտարարության ինստիտուտի օրենսդրական կարգավորումը ՀՀ-ում՝ կարելի է փաստել, որ ընդհանուր առմամբ վերջինս համապատասխանում է միջազգային իրավական ակտերում և արտասահմանյան երկրների օրենսդրական ակտերում տեղ գտած կարգավորումներին: Սակայն հարկ է նաև փաստել, որ վերջիններիս կիրարկման ընթացքում խնդիրների առաջացումը անխուսափելի է (այսպես, օրինակ, հարաբերակցությունը տուժողի հետ հաշտվելու վաղուց ամրագրված ինստիտուտի հետ): Ինչ վերաբերում է հաշտարարության՝ որպես պրոբացիայի ծառայության գործառույթի արդյունավետությանը, կարելի է կրկին անդրադառնալ Գերմանիայի օրինակին, որտեղ հաշտարարության հանձնված գործերի քանակը առավելագույնն է Եվրոպայում: Գերմանիայում 2013 թ. ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ հաշտարարներին հանձնված տարեկան 35 000 գործ ավարտվում է հաջողությամբ: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գերմանիայում հանցագործության դեպքերի թիվը հասնում է տարեկան 550 000-ի, նման ցուցանիշը այդքան էլ բարձր չէ[1]:

Այդուհանդերձ, կարծում ենք՝ մեդիացիայի ինստիտուտի՝ որպես պրոբացիայի ծառայության գործառույթի ներդրումը անխուսափելիորեն կարող է դրական ազդեցություն ունենալ քրեական գործերով արդարադատության իրականացման վրա, նպաստել վերականգնողական արդարադատության գաղափարների ամրապնդմանը մեր հանրապետությունում:

[1] Տե՛ս Schwind, H.-D. (2013). Kriminologie. Eine praxisorientierte Einführung mit Beispielen. Heidelberg: Kriminalistik Verlag:

МЕДИАЦИЯ КАК ФУНКЦИЯ СЛУЖБЫ ПРОБАЦИИ

Нуне Айрапетян
Аспирант кафедры уголовного права ЕГУ

Данная статья посвящена изучению пенитенциарной медиации между лицом, совершившим преступное деяние, и жертвой преступления как функции службы пробации. Рассматривается история становления института медиации, анализируется международный опыт медиации. Путем сопоставления правовых решений, зафиксированных в Законодательстве РА и в законодательствах других государств, мы выявили некоторые проблемы и предложили в статье соответствующие пути их решения.

EXECUTION OF MEDIATION AS A FUNCTION OF PROBATION SERVICES

Nune Hayrapetyan
PhD student of the chair of criminal law, YSU

The present article discusses the issues of victim offender mediation as a function implemented by the probation service.

The author has presented the history of the mediation institute, researched the best international practices. As a result of comparative analysis of the legal solutions found in Ra with such of the other countries certain problematic issues were raised and corresponding solutions suggested by the author.

Բանալի բառեր՝ *հաշտարարություն, պրոբացիա, պրոբացիայի ծառայության հաշտարար, պրոբացիայի ծառայություն, տուժողի հետ հաշտվելը:*
Ключевые слова: *медиация, пробация, служба пробации, медиатор службы пробации, примирение с жертвой преступления.*
Key words: *mediation, probation, mediator of the probation services, probation service, victim offender mediation*.

ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼԻՍ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԱՅՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Լիանա Եղիգարյան [1]

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, ինչպես նաև անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծում է դատարանը»:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Փորձաշրջանի ընթացքում անձի կողմից միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը և պատիժ նշանակում [ՀՀ քրեական] օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված կանոններով: Նույն կանոններով պատիժ է նշանակվում նաև նոր անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում, եթե դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը»:

Մեջբերված քրեաիրավական դրույթների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հետևյալ դեպքերը.

ա) երբ դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց.

բ) երբ դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք է կատարում.

---

[1] ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Ս. Վ. Առաքելյան:

գ) երբ դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք է կատարում:

Պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու վերոնշյալ հիմքերը սպառիչ են, ինչն էլ նշանակում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելը նշված հիմքերից բացի որևէ այլ հիմքով վերացվել չի կարող:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի վերլուծությունից երևում է նաև, որ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը գտնվում է **դատարանի հայեցողության շրջանակներում**, այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում դատարանն է որոշում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու կամ այն անփոփոխ թողնելու հարցը, երբ դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում՝

ա) չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց, կամ

բ) կատարում է անզգույշ նոր հանցանք, կամ

գ) կատարում է ոչ մեծ ծանրության դիտավորյալ նոր հանցանք:

Պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու՝ *դատապարտյալի կողմից փորձաշրջանի ընթացքում պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց չարամտորեն խուսափելու* հիմքի առումով հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգիրքը չի բացահայտում «չարամտորեն» հասկացության իրավական բովանդակությունը: Այդուհանդերձ, ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածների համեմատական վերլուծությունից բխում է, որ օրենսդիրն ընդհանրապես «չարամտություն» բառի տակ հասկանում է անձի դիտավորյալ գործողությունները: Այսինքն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում դատարանի կողմից անձի վրա դրված պարտականություններից չարամտորեն խուսափել ասելով պետք է հասկանալ վերջինիս կողմից իր վրա դրված պարտականությունները դիտավորյալ չկատարելը: Ավելին՝ հարկ է նաև նշել, որ «խուսափել» տերմինն արդեն իսկ ենթադրում է անձի դիտավորյալ գործողությունները, հետևաբար տվյալ պայմաններում նույնիսկ անիմաստ է «չարամտորեն» տերմինի օգտագործումը: Դրա հետ

մեկտեղ պետք է տարբերակել պարտականությունները կատարելուց «չարամտորեն խուսափելը» դրանք կատարելու անհնարինությունից: Պարտականությունները կատարելու անհնարինությունը կարող է առկա լինել կամ առաջանալ ինչպես օբյեկտիվ (օրինակ՝ տարերային աղետ), այնպես էլ սուբյեկտիվ (օրինակ՝ դատապարտյալի հիվանդություն) այնպիսի հանգամանքների բերումով, որոնք դատապարտյալին զրկում են իր վրա դրված պարտականությունները կատարելու հնարավորությունից: Կարծում ենք՝ պարտականությունները կատարելու անհնարինությունը չի կարող պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հիմք հանդիսանալ, քանի որ այդ դեպքում պարտականությունները չկատարելը կախված չէ անձի կամքից և ցանկությունից, մինչդեռ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու նպատակը դրա վերացումն է՝ պայմանավորված առանց պատիժը կրելու դատապարտյալի ուղղման և պատժի մյուս նպատակների իրագործման անարդյունավետությամբ:

Հատկանշական է, որ, ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի[1] (այսուհետ՝ նաև Նախագիծ) 90-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում **խուսափում է** դատարանի կողմից սահմանված պարտականությունները կատարելուց, ապա դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, վեց ամիս ժամկետով երկարացնում է անձի նկատմամբ նշանակված փորձաշրջանի ժամկետը: Այն դեպքում, երբ փորձաշրջանի ժամկետը երկարացնելուց հետո անձը շարունակում է խուսափել դատարանի կողմից սահմանված պարտականությունները կատարելուց, դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, վերացնում է անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշումը և անձին ուղարկում է պատիժ կրելու:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի մեջբերված կարգավորումները մեզ համար նույնպես ընդունելի են: Ինչ վերաբերում է պարտականությունները կատարելու անհնարինությանը, ապա

[1] ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծ՝ 2017 թվականի հոկտեմբերի 22-ի դրությամբ:

հարկ է նշել, որ այդ առումով Նախագիծը որևէ կարգավորում չի նախատեսում: Կարծում ենք, որ թեև պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում դատարանը չի կարող վերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը, այնուամենայնիվ, դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ դատարանը պետք է հնարավորություն ունենա քննարկելու պարտականությունները փոխելու հնարավորության հարցը. այդպիսի հնարավորություն նախատեսված է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով: Սակայն հնարավոր են դեպքեր, երբ այլ պարտականության սահմանումն ունակ չէ ապահովելու պատժի նպատակների իրականացումը: Նշված պայմաններում ստացվում է, որ դատարանը կա՛մ ձևականորեն պետք է սահմանի այլ պարտականություններ, կա՛մ գործող կարգավորման պայմաններում պետք է վերացնի պատիժը պայմանականորեն չկիրառելը, ինչը չի բխում այս ինստիտուտի էությունից: Հետևաբար կարծում ենք, որ եթե դատարանը որոշի չփոխել պարտականություններն այն պատճառաբանությամբ, որ որևէ այլ պարտականություն չի կարող ապահովել դատապարտյալի ուղղումը և պատժի մյուս նպատակների իրականացումը, կամ առկա է այնպիսի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ խոչընդոտ, որը դատապարտյալին ընդհանրապես զրկում է ցանկացած տեսակի պարտականություն կատարելու հնարավորությունից (օրինակ՝ դատապարտյալը գտնվում է անգիտակից վիճակում), ապա այդ դեպքում, կարծում ենք, մինչև պարտականությունները կատարելու խոչընդոտի վերացումը փորձաշրջանի ժամկետը պետք է կասեցվի, իսկ խոչընդոտի վերանալուց հետո դատապարտյալը պարտավոր է կատարել իր վրա դրված պարտականությունները, եթե իհարկե չեն անցել մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետները:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը դատարանն իր հայեցողությամբ է լուծում նաև այն դեպքում, երբ *դատապարտյալը կատարում է անզգույշ հանցանք*: Քանի որ նշված հոդվածն անզգուշությամբ կատարված հանցանքների դեպքում, ի տարբերություն դիտավորությամբ կատարվածների, հանցագործության տեսակներից կախված որևէ տարբերակում չի նախատեսում, հետևաբար այն հավասարապես վերաբերում է ինչ-

պես ոչ մեծ, այնպես էլ միջին ծանրության հանցագործություններին:

Տվյալ դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը դատարանի հայեցողությանը թողնելը, կարծում ենք, արդարացված է, քանի որ միշտ չէ, որ նոր անզգույշ հանցանքի կատարումը վկայում է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման անարդյունավետության մասին:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը դատարանն իր հայեցողությամբ է լուծում նաև այն դեպքում, երբ դատապարտյալը կատարում է ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք:

ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերից բխում է, որ հանցանքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է դրա՝ հանրության համար վտանգավոր հետևանքները և ցանկացել դրանց վրա հասնելը կամ նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել այդ հետևանքները, բայց գիտակցաբար թույլ է տվել դրանք: Այսինքն՝ դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում անձը գիտակցում է, որ կատարում է հանրորեն վտանգավոր և հակաիրավական արարք, ինչն էլ վկայում է այն մասին, որ դատապարտյալը չի ուղղվել և չի գտնվում ուղղման ճանապարհին, այլ հակառակը՝ պատիժը պայմանականորեն կիրառված չլինելու պայմաններում կրկին կատարել է հանցագործություն:

Հետևաբար փորձաշրջանի ընթացքում ցանկացած ծանրության դիտավորյալ հանցանք կատարելն ինքնին վկայում է դատապարտյալի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու անարդյունավետության մասին: Ուստի կարծում ենք՝ դիտավորյալ ցանկացած հանցանք կատարելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելը պետք է սահմանել որպես դատարանի պարտականություն: Նշված տրամաբանությունից իր հերթին ակնհայտորեն բխում է, որ, տվյալ պայմաններում նոր դիտավորյալ հանցագործության համար դատավճիռների համակցության կանոններով պատիժ նշանակելու դեպքում վերջնական

պատիժ սահմանելով, դատարանը վերջնական պատիժն ինքնըստինքյան չի կարող պայմանականորեն չկիրառել:

Հատկանշական է նաև, որ եթե դատարանը որոշում է պատիժը պայմանականորեն չկիրառելը չվերացնել, ապա փորձաշրջանի ընթացքում կատարված նոր հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելու առումով օրենսդիրը որևէ սահմանափակում չի նախատեսում, ինչի հետևանքով ստացվում է, որ, օրինակ, եթե դատարանը որոշում է պատիժը պայմանականորեն չկիրառելը չվերացնել, ապա կարող է նոր կատարած հանցագործության համար կրկին կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը: Սակայն այդ դեպքում անհասկանալի է, թե ինչպես պետք է հոսեն երկու հանցագործությունների համար սահմանված փորձաշրջանները: Ավելին, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգիրքը չի նախատեսում նաև փորձաշրջանների գումարման հնարավորություն, իսկ 67-րդ հոդվածի կանոններով պատիժ նշանակել թույլատրելի է համարում միայն, երբ դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը, ստացվում է, որ դատարանը նաև տվյալ դեպքում չի կարող նշանակված պատիժները գումարել և երկու արարքի համար սահմանել ընդհանուր փորձաշրջան: Մյուս կողմից, եթե դատարանը նոր կատարած հանցանքի համար չկիրառի ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, ապա տվյալ դեպքում անհասկանալի է, թե ինչպես պետք է ի կատար ածվի ազատազրկումը, և հոսի նախորդ արարքի համար սահմանված փորձաշրջանը, արդյոք դրանք պետք է ի կատար ածվեն զուգահեռաբա՞ր, թե՞ հերթականությամբ:

Նշված փակուղային իրավիճակներից խուսափելու համար, կարծում ենք, տվյալ խնդրի առավել արդյունավետ լուծումը կլինի, եթե ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում սահմանվի, որ «*Փորձաշրջանի ընթացքում անձի կողմից հանցանք կատարելու դեպքում դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը և պատիժ է նշանակում ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կանոններով: Փորձաշրջանի ընթացքում անձի կողմից անզգույշ հանցանք կատարելու դեպքում նշված կանոնի կիրառումն արգելք չէ վերջնական պատիժը պայմանականորեն չկիրառելու համար*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Փորձաշրջանի ընթացքում անձի կողմից միջին ծանրութ-

յան, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը(…)»: Մեջբերված քրեաիրավական նորմի վերլուծությունից երևում է, որ դատարանը **պարտավոր է** վերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը, եթե փորձաշրջանի ընթացքում դատապարտյալը կատարում է՝

ա) միջին ծանրության դիտավորյալ նոր հանցանք, կամ

բ) ծանր դիտավորյալ նոր հանցանք, կամ

գ) առանձնապես ծանր դիտավորյալ նոր հանցանք:

Այսինքն՝ այս դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելը դուրս է դատարանի հայեցողությունից, ուստի դատարանը վերոնշյալ յուրաքանչյուր դեպքում պարտավոր է անվերապահորեն վերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, նշված դեպքերում նույնպես դատարանը պատիժ է նշանակում ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված՝ դատավճիռների համակացությամբ պատիժ նշանակելու կանոններով:

Վերոգրյալի հիման վրա մեր կողմից առաջարկվող կարգավորման պայմաններում ստացվում է, որ դիտավորյալ նոր հանցագործություն կատարելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելիս վերջնական պատժի նկատմամբ դատարանը չի կարող կրկին կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

Հարկ է նշել, որ մինչև 2004 թվականի հունիսի 9-ին ընդունված ՀՕ-97-Ն ՀՀ օրենքով ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 7-րդ մասում նշված դեպքերում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը ևս գտնվում էր դատարանի հայեցողության շրջանակներում, և դատարանն էր որոշում այն վերացնելու կամ անփոփոխ թողնելու հարցը: Այդպիսի մոտեցումը, կարծում ենք, արդարացված չէր:

Հարկ է անդրադառնալ նաև պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու՝ քրեակատարողական օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումներին:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշյալ դրույթներից բացի, պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու առանձին

հիմքեր նախատեսում է նաև ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, որի 132-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի ընթացքում անձի կողմից դատարանի դատավճռով իր վրա դրված պարտականությունները պարբերաբար կամ չարամտորեն չկատարելու կամ վերահսկողությունից խուսափելու դեպքերում նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատավճռով նշանակված պատիժը կատարելու մասին»:

Փաստորեն, ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը նախատեսում է պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հետևյալ հիմքերը՝

ա) դատապարտյալի կողմից իր վրա դրված պարտականությունները պարբերաբար չկատարելը,

բ) դատապարտյալի կողմից իր վրա դրված պարտականությունները չարամտորեն չկատարելը,

գ) դատապարտյալի կողմից վերահսկողությունից խուսափելը:

Հատկանշական է, որ, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցով դատարան դիմելու հնարավորություն օրենսդիրը նախատեսում է **միայն** այն դեպքում, երբ դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում **չարամտորեն խուսափում** է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց:

Հատկանշական է նաև, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ օրենսդիրը տվյալ դեպքում նախատեսում է պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու երկու ինքնուրույն հիմք՝ պարտականությունները պարբերաբար չկատարելը և պարտականությունները չարամտորեն չկատարելը: Ընդ որում, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, պարտականությունները պարբերաբար չկատարել է համարվում անձի կողմից մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ արգելված գործողություննե-

րի կատարումը կամ պարտականությունների չկատարումը կամ իր վրա դատարանի կողմից դրված պարտականությունները երեսուն օրից ավելի չկատարելը: Հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգիրքն օգտագործում է ոչ թե «պարբերաբար չկատարել», այլ «չարամտորեն խուսափել» ձևակերպումը, ինչից էլ հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգիրքը պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հնարավորությունը կապում է պարտականությունները թեկուզ **մեկ անգամ չարամտորեն՝ դիտավորությամբ չկատարելու** հետ:

Մյուս կողմից՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասից երևում է նաև, որ պարտականությունները պարբերաբար չկատարելն օրենսդիրը չի կապում անձի դիտավորության՝ չարամտության հետ: Հետևաբար ստացվում է, որ նույնիսկ օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր պատճառներով տևական ժամանակ կամ մի քանի անգամ իր վրա դրված պարտականությունները չկատարելու անհնարինության դեպքում նույնպես պատիժը պայմանականորեն չկիրառելը կարող է վերացվել: Այդպիսի մոտեցումը, ինչպես արդեն նշվել է, արդարացված չէ և չի բխում քննարկվող ինստիտուտի դերից ու նշանակությունից:

Վերոգրյալի հիման վրա կարծում ենք՝ դատարանի կողմից նշանակված պարտականությունները նույնիսկ մեկ անգամ չկատարելը կարող է վկայել պատիժը պայմանականորեն չկիրառելու անարդյունավետության մասին:

Նշվածից բացի՝ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը որպես պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու ինքնուրույն հիմք նախատեսում է նաև դատապարտյալի կողմից վերահսկողությունից խուսափելը, ընդ որում, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձը վերահսկողությունից խուսափող է համարվում, եթե նրա գտնվելու վայրը չի բացահայտվում 30 օրվա ընթացքում: Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի նկատմամբ իրականացվում է վերահսկողություն: Այդ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության «Պրոբացիայի մասին» օրենքով սահմանված կարգով: Ընդ որում՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի

նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է պրոբացիայի ծառայության տարածքային մարմինը, իսկ զինծառայողի նկատմամբ՝ նրա զորամասի հրամանատարությունը:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում պրոբացիայի ծառայության տարածքային մարմինը, իսկ զինծառայողի պարագայում նրա զորամասի հրամանատարությունը փորձաշրջանի ընթացքում կատարում են անձի անհատական հաշվառում, համապատասխան ծառայությունների կամ հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ վերահսկողություն են իրականացնում այդ անձի կողմից հասարակական կարգը պահպանելու և դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելու նկատմամբ:

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգիրքը չի նախատեսում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հնարավորություն՝ դատապարտյալի կողմից վերահսկողությունից խուսափելու հիմքով: Ուստի նման հիմքով դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը թեև կարող է միջնորդություն ներկայացնել դատարան, սակայն ՀՀ քրեական օրենսգրքում նշված հիմքի նախատեսված չլինելու պատճառով ստացվում է, որ դատարանն այդ հիմքով չի կարող վերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը: Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսգրքերով նախատեսվում է, որ դատապարտյալի նկատմամբ պետք է սահմանվի վերահսկողություն, իսկ համապատասխան մարմիններին վրա դրված է վերահսկողություն իրականացնելու պարտականություն, կարծում ենք, որ պրակտիկայում հնարավոր տարբեր մեկնաբանություններից խուսափելու և միասնական պրակտիկա ձևավորելու տեսանկյունից անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում նախատեսել պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու՝ դատապարտյալի կողմից վերահսկողությունից խուսափելու հիմքը:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասը և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. *«Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի ընթացքում անձի կողմից դատարանի դատավճռով*

իր վրա դրված պարտականությունները կատարելուց կամ վերահսկողությունից խուսափելու դեպքերում նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատավճռով նշանակված պատիժը կատարելու մասին»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձը խուսափում է դատարանի դատավճռով իր վրա դրված պարտականությունները կատարելուց կամ թույլ է տալիս իրավախախտում, որի համար նրա նկատմամբ վարչական, իսկ զինծառայողի նկատմամբ կարգապահական տույժ է կիրառվում, ապա նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը գրավոր նախազգուշացնում է նրան պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հնարավորության մասին»:

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքը չեն նախատեսում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հնարավորություն՝ դատապարտյալի կողմից իրավախախտում կատարելու հիմքով, հետևաբար դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հնարավորության մասին նշված հիմքով գրավոր նախազգուշացնելու իրավասությունն իմաստազրկվում է:

Ավելին՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասում նշված է նաև «խուսափում է դատարանի դատավճռով իր վրա դրված պարտականությունները կատարելուց» ձևակերպումը, ինչը նշանակում է, որ օրենսդիրը տվյալ դեպքում նկատի ունի նաև դատապարտյալի կողմից իր վրա դրված պարտականությունները դիտավորությամբ չկատարելը, ինչի պատճառով դատապարտյալին նախազգուշացնելն իմաստազրկվում է, քանի որ այդ դեպքում դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը պետք է դիմի դատարան՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու միջնորդությամբ:

Ինչ վերաբերում է վարչական կամ կարգապահական խախտումներին, ապա ՀՀ քրեական և քրեակակատարողական օրենսգրքերից բխում է, որ փորձաշրջանի ընթացքում դատա-

պարտյալի կողմից իրավախախտում կատարելը չի կարող պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հիմք հանդիսանալ: Պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակն է առանց նշանակված պատիժը կրելու դատապարտյալի ուղղումը: Հանցանք կատարած անձի ուղղման նպատակը պատժի կրումից հետո հանցագործին այնպիսի քաղաքացի տեսնելն է, որն այլևս ընդունակ չէ հանցագործություն կատարելու: Հետևաբար, կարծում ենք, փորձաշրջանի ընթացքում իրավախախտում կատարելը (օրինակ՝ տրանսպորտային միջոցը սխալ կայանելը) չի նշանակում, որ դատապարտյալի ուղղումն անհնար է առանց նշանակված պատիժը իրապես կրելու: Միևնույն ժամանակ կարծում ենք, որ այն դեպքերում, երբ դատապարտյալը կատարում է նոր հանցագործություն, պատիժ նշանակելիս և պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս դատարանը կարող է հաշվի առնել դատապարտյալի՝ պատիժը պայմանականորեն չկիրառելուց հետո կատարած վարչական կամ կարգապահական իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկված լինելը՝ անկախ դրանց համար կիրառված տույժերի մարված կամ հանված լինելուց, ինչպես նաև իրավախախտումների բնույթը և դրանց կապը նախկինում կատարած արարքի հետ: Նշվածը հատկապես կարևորվում է այն դեպքերում, երբ, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցանքի համար դատապարտված անձը, ում նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, խուսափում է իր վրա դրված պարտականությունները կատարելուց կամ կատարել է նոր անզգույշ հանցագործություն, հետևաբար դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը լուծելիս (նոր անզգույշ հանցանքի դեպքում՝ մեր կողմից առաջարկվող կարգավորման պայմաններում վերջնական պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս) կարող է հաշվի առնել նաև ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար ենթարկված վարչական պատասխանատվությունները կամ զինվորական կարգի դեմ հանցանք կատարած դատապարտյալի դեպքում՝ ծառայության ընթացքում կարգապահական պատասխանատվության ենթարկվելը և այլն:

ПРАКТИЧЕСКИЕ ВОПРОСЫ ОСНОВ И УГОЛОВНО- ПРАВОВЫХ ПОСЛЕДСТВИЙ ОТМЕНЫ ИСПЫТАТЕЛЬНОГО СРОКА, УСТАНОВЛЕННОГО В СЛУЧАЕ УСЛОВНОГО НЕПРИМЕНЕНИЯ НАКАЗАНИЯ

Лиана Едигарян
Аспирант кафедры уголовного права ЕГУ

Данная статья посвящена исследованию основ и уголовно-правовых последствий отмены испытательного срока, установленного в случае условного неприменения наказания. В статье рассматривается ряд вопросов урегулирования данного вопроса в Уголовном и Уголовно-исполнительном кодексе РА. Мы предложили новые правила назначения наказания при отмене условного осуждения в случае совершения нового преступления в течение испытательного срока.

CERTAIN PRACTICAL ISSUES OF THE GROUNDS AND CRIMINAL- LEGAL CONSEQUENCES OF NULLIFICATIONOF THE PROBATION PERIOD SET IN CASES OF CONDITIONAL PUNISHMENT

Liana Yedigaryan
PhD student of the chair of criminal law, YSU

The present article is devoted to examining the grounds and criminal- legal consequences of cancellation of the probation period set in cases of conditional punishment. The article discusses the regulation of the issue in the Criminal and Penal Code of the Republic of Armenia. The author has given a suggestion on the rules for assigning a sentence in the case of committal of a crime by the convict during the probation period.

Բանալի բառեր՝ *պատիժը պայմանականորեն չկիրառելը, փորձաշրջան, պատիժ նշանակել, պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելը, դատապարտյալի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց խուսափելը, պարտականությունների կատարման անհնարինություն:*
Ключевые слова: *условное неприменение наказания, испытательный срок, назначение наказания, отмена условного неприменения*

наказания, уклонение от обязанностей, возложенных на осужденного в случае условного неприменения наказания, невозможность исполнения обязательств.

Key words: *conditional punishment, probation period, assignment of punishment, nullification of the conditional punishment, evading the implementation of the duties, impossibility to perform obligations.*

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ԵՎ ԱՆԱՀԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ռոզա Աբրահամյան[1]

Ամբողջ աշխարհում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առաջնային նշանակություն ունեն անչափահաս դատապարտյալների իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը[2]:

Նախ և առաջ ցանկանում ենք ներկայացնել անչափահաս դատապարտյալների նկատմամբ ազատազրկման ձևով պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու վերաբերյալ հարցերի իրավական կարգավորման զարգացումը՝ նշելով, որ ողջ պատմության ընթացքում Ռուսաստանում, այդ թվում՝ արտասահմանում /Բուլղարիայի, նախկին ԳԴՀ և Մեծ Բրիտանիայի օրինակով/, անչափահաս դատապարտյալների նկատմամբ ազատազրկման ձևով պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու վերաբերյալ հարցերը ենթարկվել են իրավական կարգավորման հետազոտության:

Անդրադառնալով անչափահաս դատապարտյալների նկատմամբ պատժի կատարման գործընթացում տարբերակում և անհատականացում կիրառելու պատմական փորձի մասին այլ աղբյուրների հետազոտությանը՝ նշենք, որ, օրինակ, մինչհեղափոխական Ռուսաստանի քրեական դատավարությամբ անչափահաս և չափահաս հանցագործների նկատմամբ կիրառվող հարկադիր ներգործության բնույթը և աստիճանն ունեցել են աննշան տարբերություններ: Անչափահաս կալանավորներին պահելու համար առանձին հաստատություններն ստեղծվել են մեծ դժվարությամբ, իսկ եղածներում չեն ապահովվել այդ կատեգորիայի անձանց նկատմամբ պատժի կատարման տարբերակումն ու անհատականացումը:

---

[1] ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ պրոֆ. Հ. Խաչիկյան:

[2] «Ազատազրկվածներ» հասկացությամբ մատնանշվում են անչափահաս կալանավորված անձինք և դատապարտյալները:

Խորհրդային պետության կազմավորման ժամանակաշրջանում ստեղծվել է անչափահասների համար մասնագիտացված ուղղիչ հաստատությունների համակարգ, և կատարվել է դատապարտյալների այդ կատեգորիայի նկատմամբ պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու ուղղիչ ներգործության տարբեր միջոցների փորձարկում։ Նշված հաստատությունների զարգացումն ընթացել է պատժի կատարումը տարբերակելու աստիճանական խորացման ուղղությամբ՝ առաջին հերթին հաշվի առնելով դատապարտյալների տարբեր կատեգորիաների հասարակական վտանգավորության աստիճանների միջև առկա տարբերությունները։ Այդ մասին են վկայում, մասնավորապես, ՌԽՖՍՀ՝ 1970 թվականի ուղղիչ-աշխատանքային օրենսգրքի այն դրույթները, որոնցով նախատեսվում էր անչափահասների դաստիարակչական-աշխատանքային գաղութների բաժանում՝ ըստ ընդհանուր և ուժեղացված ռեժիմների, որոնք տարբերվում էին կալանքի պայմաններով։

Այժմ ներկայացնենք նաև պատմական տվյալներ՝ արտասահմանյան մի շարք երկրներում անչափահասների նկատմամբ ազատազրկման ձևով պատժի կատարման իրավական կարգավորման վերաբերյալ։ Այսպես՝ 1997 թվականի հուլիսի 1-ին գործողության մեջ դրված և ներկայումս գործող ՌԴ ՔԴՕ-ն էականորեն ընդլայնել է ազատազրկման դատապարտված անչափահասների իրավական կարգավիճակը՝ դրանով իսկ ստեղծելով ավելի լայն հնարավորություններ այդ կատեգորիայի իրավախախտների նկատմամբ պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու համար։ Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Մեծ Բրիտանիայում պատժի համակարգի զարգացումը տեղի է ունեցել անչափահասների համար հատուկ հաստատությունների ստեղծման ուղղությամբ։

Անգլիական պատժիչ-ուղղիչ համակարգում հատուկ տեղ էին զբաղեցնում «դաստիարակչական կենտրոնները», որտեղ ուղարկվում էին հանցագործությունների համար 1-ից մինչև 6 տարի ժամկետով դատապարտված 14-ից մինչև 21 տարեկան պատանիները։ Դրանց տարատեսակ էին կալանատները, որոնցում կալանավորվածներին պահելու ժամանակն ավելի կարճ էր։ Հետաքրքրություն կարող է ներկայացնել անչափահաս իրավախախտների հետ

տարվող աշխատանքը, որը կառուցվում էր խիստ անհատական, ինքնատիպ և, ինչո՞ւ չէ, նաև առաջադեմ համակարգի հիման վրա։ Համակարգի էությունն այն էր, որ դատապարտյալներին տրվում էին, այսպես կոչված, «ստուգման բալեր», որոնց քանակությունն ավելանում կամ պակասում էր՝ կախված նրանց վարքագծից։ Բալերի որոշակի քանակի դեպքում կարող էր լուծվել կալանքի պայմանները բարելավելու կամ վաղաժամկետ ազատելու հարցը։

Պակաս հետաքրքիր չէ Արևելյան Եվրոպայի որոշ երկրներում անչափահասներին պահելու համար նախատեսված ազատազրկման վայրերի համակարգի փոխակերպումը, որոնցում անցած դարաշրջանի 60-70-ական թվականներին աստիճանաբար կյանքի է կոչվել «պատժի կրման կազմակերպումը» կամ «հատուկ հաստատություններում դաստիարակչական բնույթի հարկադիր միջոցների կիրառման» սկզբունքը։ Այս հաստատություններում անչափահասներին նախապատրաստել են հանրորեն օգտակար գործունեության, կատարվել է նրանց ուղղմանն ու վերադաստիարակությանն ուղղված բովանդակային աշխատանք։

Այսպես՝ Բուլղարիայի օրենսդրությունը (1968 թ. ՔՕ, 1969 թ. օրենքը՝ «Պատիժների կատարման մասին») հետապնդել է անչափահասներին վերադաստիարակելու և նրանց հանրորեն օգտակար աշխատանքի նախապատրաստելու նպատակ։ Անչափահաս դատապարտյալները պահվել են, այսպես կոչված, ընդհանուր և խիստ ռեժիմի ուղղիչ հիմնարկներում, որոնցում առանձնացվել են դատապարտյալների տարբեր կատեգորիաներ՝ ըստ կատարված հանցագործության ծանրության։ Ուղղիչ հիմնարկներում կիրառվել է երկու տեսակի ռեժիմ՝ ընդհանուր և խիստ, որոնցում նախատեսվել է առանձին պահում, այդ թվում՝ աշխատանքի, զբոսանքների և այլ ընդհանուր միջոցառումների ընթացքում՝ բացառությամբ ուսուցման։ Տարբերություններ են եղել նաև պահպանության և հսկողության բնույթի, արտաքին աշխարհից մեկուսացման աստիճանի և դատապարտյալների կյանքի պայմանների ու կենցաղի ինքնատիպության միջև՝ կախված պահելու ռեժիմի տեսակից։ Պատիժը կրելու ընթացքում ընդհանուր ռեժիմը կարող էր փոխարինվել խիստ ռեժիմով փախուստ /կամ փախուստ կատարելու փորձ/ կամ այլ դիտավորյալ հանցագործություն կատարելու, անչափահասին ռեժիմի չարամիտ խախտող ճանաչելու դեպքում։ Եվ հա-

կառակը՝ իրականացվել է անչափահասների տեղափոխում խիստ ռեժիմից ընդհանուր ռեժիմի երկու ամսվա ընթացքում լավ վարքագիծ ցուցաբերելու պայմանով[1]:

Ուղղիչ հիմնարկներ նոր տեղափոխված դատապարտյալների համար կազմակերպվել են ընդունելության բաժանմունքներ, որտեղ գտնվելու ժամանակ նրանք մեկ ամսվա ընթացքում հետազոտվել և վերահսկվել են հոգեբանի, դաստիարակչի և բժշկի կողմից: Ընդ որում՝ առաջին անգամ դատապարտյալները տեղավորվել են արդեն պատիժը կրած անձանցից առանձին: Հենց այդ ժամանակահատվածում էլ նրանք ազատազրկման ձևով պատիժ կրելու սկզբնական փուլում անցել են «սկզբնական տարբերակման և անհատականացման գործընթաց»: Նախատեսվել են վերոնշյալ դատապարտյալներից աշխատանքային խմբերի ստեղծում և նրանց կիսաազատ ռեժիմի տրամադրում: Լավ վարքագիծ դրսևորելու պայմանով նրանք կարող էին ուղարկվել աշխատանքի պետական արտադրական ձեռնարկություններում կամ շինարարական օբյեկտներում:

Մոտավորապես այդ ժամանակ (1968 թ. հունվար) ԳԴՀ-ում նույնպես ընդունվեցին նոր քրեական օրենսգիրք, քրեական դատավարության օրենսգիրք, ինչպես նաև «Ազատազրկման ձևով պատիժը կատարելու մասին» օրենքը: ԳԴՀ ՔՕ-ն նախատեսում էր ազատազրկման երեք տեսակ.

1. այսպես կոչված «երիտասարդական կալանք» (կարճաժամկետ կարգապահական միջոց, որն անհրաժեշտ է անչափահասի բացասական զարգացումը թույլ չտալու համար և կիրառվում է, եթե կատարվել է ոտնձգություն հասարակական և պետական կարգի դեմ),

2. «յուգենդխաուզում» տեղավորում (հատուկ «երիտասարդական տուն»)՝ քրեական պատժի միջոց, որը կապված է ազատազրկման հետ, բայց բառի ոչ ամբողջ իմաստով,

3. անչափահասների ազատազրկում (իրական իմաստով):

«Ազատազրկման ձևով պատիժը կրելու մասին» օրենքին համատասխան՝ անչափահասները կարող էին դատապարտվել

[1] Տե՛ս **Бриллиантов А.В.,** Дифференциация наказания и степень исправления осужденных к лишению свободы, М., ВНИИ МВД РФ, 1997, էջ 100:

պատժի 14 տարեկան հասակից, իսկ պատիժը կատարվում էր, այսպես կոչված, «հատուկ» և «ինքնուրույն պատժիչ-ուղղիչ հաստատություններում» պատժի կատարման մասին ընդհանուր կանոնների հիման վրա տարբերակված կերպով: Կարևոր է սահմանվող ռեժիմի տարբերակումը՝ ըստ խստության բնույթի կամ աստիճանի: Այսպես՝ առանձնացվել է ռեժիմի երեք տեսակ՝ թեթևացված, ընդհանուր և խիստ: ԳԴՀ-ում, ինչպես Բուլղարիայում, անչափահասների համար սահմանվում էր ուղղիչ հաստատություններում մնալու տարիքային և, կարելի է ասել, այսպես կոչված, «գործոնային» սահման, որը սահմանափակվում էր՝

ա) կրթական գործընթացի ցիկլի ավարտով,

բ) դատապարտյալի 21 տարին լրանալով,

գ) դպրոցական, մասնագիտական, ընտանեկան դաստիարակության, կրթության և անհատական զարգացման էական թերությունների վերացմամբ:

Ընդհանուր առմամբ նախկին ԳԴՀ-ում անչափահասների նկատմամբ ազատազրկման ձևով պատժի կատարման տարբերակման և անհատականացման փորձը կարող է բավականին հետաքրքիր ճանաչվել: Համաձայն «Ազատազրկման ձևով պատիժների կատարման մասին» օրենքի (1968 թ. հունիսի 15-ի խմբագրությամբ)՝ դատապարտյալները բաժանվում էին դաստիարակչական խմբեր կոչվող 20 հոգանոց խմբերի, որոնց ծրագրերը ներառում էին քաղաքացիահիրավական դաստիարակություն, ներգրավում աշխատանքի մեջ, դաստիարակչա-մշակութային ծրագիր, անհատական աշխատանք, ընդհանուր կրթական և մասնագիտական ուսուցում: Բացի այդ՝ լայնորեն կիրառվել է տույժերի համակարգը, որը վկայում է այն մասին, որ անչափահասների նկատմամբ պատիժը կատարելիս իսկապես պահպանվել է անհատական մոտեցումը: Դրանցից առավել խիստը կալանքն է, այդ թվում՝ մեկուսի: Յուրաքանչյուր ռեժիմի համար այն եղել է տարբեր (9-ից մինչև 18 օր):

Երկար ժամանակ Ռուսաստանում բացակայել է անչափահաս դատապարտյալների նկատմամբ պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու իրավական կարգավորումը: Դրա հետ մեկտեղ հասարակության և պետության մոտ անչափահաս դատապարտյալներին ուղղելու անհրաժեշտության և այդ

նպատակով ազատազրկման վայրերի համակարգը կատարելագործելու գիտակցության ձևավորումը XIX դարի երկրորդ կեսին հանգեցրեց Ռուսաստանում նշված կատեգորիայի դատապարտյալների նկատմամբ ազատազրկման ձևով պատժի կատարման համար նախատեսված առանձին ուղղիչ հաստատությունների ստեղծմանը, ինչպես նաև պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու այլ հիմքերի ամրապնդմանն ու իրագործմանը:

Ռուսաստանում, ինչպես նաև արտասահմանյան շատ երկրներում պատժիչ համակարգի զարգացումն ընթացել է անչափահասների համար ուղղիչ հաստատությունների զարգացման, դրանցում պահելու պայմանների կարգավորման և հետագա հումանիզացման, անչափահասների վրա ուղղիչ ազդեցության ուժեղացման, պատժի կատարման տարբերակումն ու անհատականացումը խորացնելու ուղղությամբ[1]:

Այժմ անդրադառնանք անչափահաս դատապարտյալների նկատմամբ ազատազրկման ձևով պատիժը կատարելու տարբերակման և անհատականացման սկզբունքների հիմնական դիրքորոշումներին՝ հաշվի առնելով սոցիալ-իրավական և քրեակատարողական չափանիշները:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների խմբավորում կատարելու շրջանակներում առաջին հերթին պետք է ելնել դեռահաս տարիքի յուրահատկություններից՝ հաշվի առնելով, որ դեռևս վերջնականորեն չի ձևավորվել անչափահասի հոգեկան աշխարհը, սոցիալական և բարոյական հիմքերը գտնվում են ձևավորման շրջանում, իսկ անչափահասների անձնային առանձնահատկությունների միջև էական տարբերություները շատ դեպքերում պայմանավորված են նրանց միջև եղած տարիքային տարբերությամբ:

Ուսումնասիրելով ՌԴ քրեական օրենսգիրքը՝ կարող ենք անդրադառնալ այն հոդվածներին, որոնք թույլ են տալիս դաստիարակչական գաղութներում պահվող դատապարտյալներին

[1] Տե՛ս **Телегин А.А.,** Правовые и организационные основы дифференциации лиц, содержащихся в местах лишения свободы, в период с 1917-1953 годы: Дис. канд. юрид. наук, М., Академия управления МВД РФ, 1997, էջ 123:

բաժանել երեք տարիքային խմբերի՝ 16-ից մինչև 18 տարեկան անչափահասներ և 18-ից մինչև 19 տարեկան անձինք, որոնք տարբերվում են քրեաիրավական ազդեցության միջոցների ընկալման առանձնահատկություններով՝ կապված հոգեկան և ֆիզիկական զարգացվածության տարբերությունների հետ, 14-ից մինչև 16 տարեկան անչափահասներ: Սակայն նշված խմբերի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժը կատարելու տարբերակումն իրականացվում է աննշան չափով: Ըստ կատարված հետազոտությունների արդյունքների՝ 18-ից մինչև 21 տարեկան անձանց թիվը կազմում է ԴԳ պահվող դատապարտյալների ընդհանուր թվի 25 %-ը, ինչը վկայում է ազատազրկման դատապարտված չափահաս և անչափահաս դատապարտյալներին առանձին պահելու վերաբերյալ օրենսդրական պահանջների խախտման մասին (ՌԴ ՔԴՕ 80-րդ հոդվածի 1-ին մաս)[1]:

Դրա հետ մեկտեղ բացասական ենք գնահատում ազատազրկման դատապարտված անչափահասների նկատմամբ պատժի կատարման տարբերակման այնպիսի պայմանի բացակայությունը, ինչպիսին է նրանց առանձին պահելը՝ կախված կատարած հանցագործության բնույթից և հանրային վտանգավորության աստիճանից, նշանակված պատժի ժամկետից, ազատազրկման ձևով պատիժ կրելու փորձի առկայությունից:

Վերոնշյալի հիման վրա դաստիարակչական գաղութներում դատապարտյալների դասակարգումը որոշելիս առաջարկում ենք ելնել դեռահաս տարիքի առանձնահատկություններից. ընդ որում՝ ուշադրություն դարձնել անչափահաս դատապարտյալների խմբավորման հիմքում դրված չափանիշներին, որոնց իրավական ամրագրումը թույլ կտա տարանջատել դատապարտյալների քննարկվող կատեգորիան հարաբերականորեն միասեռ խմբերի, որոնք կտարբերվեն հանրային վտանգավորության աստիճանով (ինչպես դատապարտման պահին, այնպես էլ պատիժը կրելու ընթացքում), նրանց նկատմամբ կիրառվող ուղղիչ ազդեցությունն ընկալելու առանձնահատկություններով և հնարավորություններով:

---

[1] Տե՛ս **Санташов А.Л.,** Исполнение лишения свободы в отношении несовершеннолетних: вопросы законодательной техники и дифференциации: Дис. канд. юрид. наук, Ярославль, 2006, էջ 201:

Ուշադրություն դարձնելով անչափահաս դատապարտյալների խմբավորման չափանիշներին, որոնց հիման վրա իրականացվում է ազատազրկման ձևով պատժի կիրառման տարբերակումը, ցանկանում ենք առանձնացնել անչափահասների խմբավորման չափանիշների երկու տեսակ՝ սոցիալ-իրավական և քրեակատարողական: Ընդ որում՝ սոցիալ-իրավական չափանիշների շարքին կարելի է դասել հետևյալ հատկանիշները՝ դատապարտյալի անձը, նրա սոցիալ-իրավական կարգավիճակը ինչպես պատժի նշանակման պահին, այնպես էլ այն կատարելու ընթացքում բնութագրող հատկանիշները, նրա կողմից կատարված հանցագործությունը բնութագրող հատկանիշները (տարիքը, սեռը, կատարած արարքի բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, կատարված հանցագործության մեղքի ձևը, նախկինում ազատազրկման ձևով պատիժ կրելը, դատվածությունը և այլն): Իսկ քրեաիրավական չափանիշների շարքին կարող ենք դասել պատիժը կրելու ընթացքում դատապարտյալների դրսևորած վարքագիծը, նրանց անձի փոփոխությունները բնութագրող հատկանիշները (աշխատանքի, ուսուցման, ինքնուրույն գործող կազմակերպությունների աշխատանքին մասնակցելու նկատմամբ վերաբերմունքը, պատիժը կրելու սահմանված կարգի խախտումների առկայությունը և այլն):

Քրեակատարողական չափանիշները թույլ են տալիս դատապարտյալներին խմբավորել ըստ դրական բնութագրվողների, բացասական բնութագրվողների և պատիժը կրելու սահմանված կարգը չարամտորեն խախտողների:

Մեր կարծիքով՝ տարբերակման տարբեր պայմանները կարևոր դեր են խաղում անչափահասների մոտ օրինապաշտ վարքագիծ խթանելու, նրանց ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու հարցում: Չնայած տարբերակման օրենսդրական ամրագրմանը, որն արտահայտվում է դատապարտյալների համար դաստիարակչական գաղութում պահելու տարբեր պայմանների փոփոխության մեջ, խրախուսանքի ու տույժի միջոցների համակարգում և դատապարտյալի վարքագծի հաշվառմամբ նրա իրավական կարգավիճակը փոփոխելու հնարավորություն ընձեռող այլ միջոցներում, այնուամենայնիվ, դեռևս առկա են մի շարք թե-

րություններ ինչպես այդ միջոցների իրավական կարգավորման, այնպես էլ դրանց գործնական կիրառության հարցում։

Դաստիարակչական գաղութներում պահելու արտոնյալ, թեթևացված, ընդհանուր և խիստ պայմանների միջև տարբերությունների իրավական կարգավորման թերությունները վերացնելու նպատակով, որոնք արտահայտվում են քանակական հատկանիշների անհամաչափ հարաբերակցության մեջ ։

Անդրադառնանք նաև կոնկրետ դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի և ուղղիչ ներգործության միջոցների բովանդակությունը սահմանող քրեական ու քրեադատավարական օրենսդրության առանձին դրույթներին՝ հաշվի առնելով դատապարտյալի անձի առանձնահատկությունները, պատիժը կրելու ընթացքում նրա դրսևորած վարքագիծը, ուղղիչ ներգործության միջոցների նկատմամբ նրա վերաբերմունքը, ցուցաբերվող ուղղիչ ներգործության ընկալման աստիճանը և հնարավորությունները։

Մեր կարծիքով՝ անչափահաս դատապարտյալների նկատմամբ ազատազրկման ձևով պատժի կատարման անհատականացում իրականացնելիս դժվարությունները շատ դեպքերում պայմանավորված են տվյալ կատեգորիայի անձանց նկատմամբ օրենքում պատժի կատարման տարբերակման ամրապնդման թերություններով, դաստիարակչական գաղութներում հանրային վտանգավորության տարբեր աստիճան ունեցող դատապարտյալներին առանձին պահելու հնարավորության բացակայությամբ։

Անչափահաս դատապարտյալների նկատմամբ ազատազրկման ձևով պատժի կատարման անհատականացումը պետք է հիմնված լինի ոչ միայն պատիժը կրելու ընթացքում դատապարտյալի անձի առանձնահատկությունների բազմակողմանի հետազոտության, այլև դատապարտյալի վարքագծի, նրա կողմից պատիժը կրելու պայմանների ընկալման առանձնահատկությունների, գործադրվող ուղղիչ ներգործության հետազոտության վրա։

Ելնելով ազատազրկման դատապարտված անչափահասների դաստիարակության նպատակներից՝ առաջարկում ենք նախատեսել տույժի պայմանական կիրառում՝ կարգապահական մեկուսարան տեղավորելու ձևով։ Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում նոր խախտում թույլ չտա, տույժը չպետք է կիրառվի։ Այն ժամկետը, որի լրանալուն պես պայմանական տույժի միջոցը կա-

րող է մարված համարվել, պետք է կազմի ոչ պակաս քան երեք, բայց ոչ ավել, քան վեց ամիս։ Նման ժամկետը հնարավորություն կտա դատապարտյալին լուրջ մտածելու իր վարքագծի մասին և փորձելու փոխել այն դեպի լավը։

Ամփոփելով վերոնշյալը՝ նշենք, որ փորձել ենք ներկայացնել աշխատանքի առավել կարևոր հետևությունները, որոնք հաստատում են հետազոտության արդյունքների նորությունը, տեսական և գործնական նշանակալիությունը։

Գիտական հոդվածի հիմնական ընդհանուր հետևությունների թվին կարելի է դասել հետևյալ դրույթները.

- Ազատազրկման ձևով պատժի կատարման տարբերակումը և անհատականացումը քրեակատարողական իրավունքի ինքնուրույն և միևնույն ժամանակ անխզելիորեն փոխկապակցված սկզբունքներ են, որոնք ենթադրում են ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ ոչ միայն տարբեր ծավալի և բնույթի ներգործության հարկադրական միջոցների, իրավունքների և ազատությունների սահմանափակումների, այլև ոչ պատժիչ նշանակության ուղղիչ ներգործության միջոցների իրավական ամրագրում ու գործնականում կենսագործում,

- Ազատազրկման ձևով պատժի կատարման տարբերակում՝ քրեակատարողական օրենսդրության նպատակներին հասնելու և խնդիրները լուծելու համար, ազատազրկման դատապարտված կոնկրետ առանձնացված խմբերի նկատմամբ ուղղիչ ներգործության տարբեր ծավալների իրավական կարգավորում՝ հաշվի առնելով նրանց հասարակական վտանգավորության աստիճանը, վարքագիծը և անձի առանձնահատկությունները, որոնցով պայմանավորվում է ուղղիչ ներգործության միջոցները նրանց կողմից ընկալելու աստիճանը,

- ազատազրկման ձևով պատժի կատարման անհատականացում, կոնկրետ դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի և ուղղիչ ներգործության միջոցների բովանդակությունը սահմանող քրեական և քրեադատավարական օրենսդրության դրույթների իրագործում՝ հաշվի առնելով դատապարտյալի անձի առանձնահատկությունները, պատիժը կրելու ընթացքում նրա դրսևորած վարքագիծը, ուղղիչ ներգործության միջոցների նկատմամբ վերա-

բերմունքը և նման ներգործությունն ընկալելու առանձնահատկությունները:

- ՀՀ քրեակատարողական համակարգի, ՌԴ, ինչպես նաև արտասահմանյան շատ երկրների պատժիչ հաստատությունների զարգացումն ընթացել է անչափահասների համար ուղղիչ հաստատությունների զարգացման, դրանցում կալանքի տակ պահելու պայմանների կարգավորման և հետագա հումանիզացման, անչափահասների նկատմամբ ուղղիչ ներգործության ուժեղացման, պատժի կատարման տարբերակումը և անհատականացումը խորացնելու ուղղությամբ: Ընդ որում՝ օրենսդրությունում ամրագրվող պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու կարևորագույն չափանիշներն էին դատապարտյալի հանրային վտանգավորության աստիճանը, նրա վարքագիծը պատիժը կրելու ընթացքում և ուղղվելու աստիճանը:

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ДИФФЕРЕНЦИАЦИИ И ИНДИВИДУАЛИЗАЦИИ ИСПОЛНЕНИЯ НАКАЗАНИЯ В ВИДЕ ЛИШЕНИЯ СВОБОДЫ В ОТНОШЕНИИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ ОСУЖДЕННЫХ

Роза Абраамян
Аспирант кафедры уголовного права ЕГУ

Актуальность данной научной статьи обусловлена теоретической и практической значимостью изучения неразрывно связанных между собой проблем дифференциации и индивидуализации исполнения наказания в виде лишения свободы в отношении несовершеннолетних осужденных.

Ввиду неоднородного состава несовершеннолетних осужденных, направляемых в воспитательные колонии, особую значимость приобретает проблема реализации правовых принципов, среди которых важное место занимает принцип дифференциации и индивидуализации исполнения наказания в виде лишения свободы. Вместе с тем следует подчеркнуть, что для достижения целей уголовного наказания данный принцип на современном этапе развития уголовно-исполнительной системы осуществляется недостаточно эффективно.

LEGAL REGULATION OF DIFFERENTIATION AND INDIVIDUALIZATION OF THE EXECUTION OF PUNISHMENT IN THE FORM OF DEPRIVATION OF LIBERTY IN RELATION TO JUVENILE CONVICTS

Roza Abrahamyan
PhD student of the chair of criminal law, YSU

The relevance of the study is due to the theoretical and practical significance of the inextricably interrelated problems of differentiation and individualization of the execution of the sentence of imprisonment for juvenile convicts.

Due to the heterogeneous composition of juvenile convicts sent to educational colonies, the implementation of legal principles is of particular importance, among which a special place belongs to the principle of differentiation and individualization of the execution of punishment in the form of imprisonment. At the same time, it should be emphasized that this principle at the present stage of development of the penitentiary system is not carried out sufficiently to achieve the goals of criminal punishment.

Բանալի բառեր՝ *պատժատեսակ, ուղղման միջոց, անչափահաս դատապարտյալ, քրեակատարողական հիմնարկ, պատժի նպատակ, ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակում, ազատազրկում պատժատեսակի կատարման անհատականացում, պատժի նպատակ, դատապարտյալների դասակարգում, ուղղման միջոց, պենիտենցիար քաղաքականություն:*

Ключевые слова: *наказание, средство исправления, несовершеннолетние осужденные, колония, цель наказания, дифференциация и индивидуализация исполнения наказания в виде лишения свободы, классификация заключенных, пенитенциарная политика.*

Keywords: *punishment, cure, juvenile convicts, colony, purpose of punishment, the differentiation and individualization of the penalty of imprisonment, classification of prisoners, the penal policy.*

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Սրբուհի Գալյան[1]

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի առանձնահատկություններից է այն, որ ֆիզիկական անձանց համար նախատեսվող պատիժների համակարգն ամբողջ ծավալով կիրառելի չէ կազմակերպությունների նկատմամբ: Ուստի իրավաբանական անձի՝ որպես քրեական պատասխանատվության սուբյեկտի յուրահատկությունը պահանջում է իրավաբանական անձանց համար մշակել պատժի ինքնուրույն համակարգ:

Միջազգային մի շարք կոնվենցիաներում հատուկ ընդգծված է, որ պայմանավորվող յուրաքանչյուր կողմ պարտավորվում է իրավաբանական անձանց նկատմամբ նշանակել արդյունավետ, համաչափ և կանխարգելիչ պատասխանատվության միջոցներ[2]:

Հատկանշական է, որ իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող պատիժները պետք է միտված լինեն նաև պատժի նպատակների իրականացմանը: Հետևաբար իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող պատիժների համակարգը պետք է այնպիսին լինի, որ կարողանա ապահովել և՛ վերը նշված կոնվենցիոն չափանիշների, և՛ պատժի նպատակների իրականացումը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արտասահմանյան երկրներում իրավաբանական անձանց համար նախատեսված պատիժների համակարգերն էապես տարբերվում են: Ընդ որում՝ դա վերաբերում է ինչպես պատիժների քանակին, այնպես էլ դրանց որակական հատկանիշներին: Ըստ էության, արտասահմանյան երկրներում իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվում են բոլոր դասական գույքային պատժատեսակ-

---

[1] ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. դ., դոցենտ Ա. Մարգարյան:

[2] Տե՛ս ՄԱԿ-ի՝ կոռուպցիայի դեմ կոնվենցիան, ՄԱԿ-ի՝ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիան, Եվրոպայի խորհրդի՝ ահաբեկչության կանխարգելման մասին կոնվենցիան:

ները: Բացի այդ՝ նշանակվում են այնպիսինները, որոնք կապված են իրավաբանական անձի բնույթի և նրա ծավալած գործունեության հետ[1]:

Իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող պատժատեսակների բազմազանությամբ աչքի է ընկնում Ֆրանսիայի օրենսդրությունը: Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 131-37-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձանց նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ պատիժները՝

1. տուգանք,

2. օրենքով հատկապես նախատեսված դեպքերում այլ պատիժներ, որոնք թվարկված են քրեական օրենսգրքի 131-39-րդ հոդվածում:

Պատժի հետ մեկտեղ իրավաբանական անձի վրա կարող է դրվել հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պարտականություն:

Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 131-39-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում իրավաբանական անձանց նկատմամբ կարող է նշանակվել հետևյալ պատժատեսակներից մեկը կամ մի քանիսը՝

1. իրավաբանական անձի գործունեության դադարեցում (նշանակվում է այն դեպքերում, երբ իրավաբանական անձը ստեղծվում է հանցագործություն կատարելու նպատակով, կամ այն դեպքերում, երբ ֆիզիկական անձի համար նախատեսված է 3 տարուց ավել ժամկետով ազատազրկում),

2. մասնագիտական կամ հասարակական գործունեության որոշակի տեսակով կամ մի քանի տեսակներով զբաղվելու ուղղակի կամ անուղղակի արգելք՝ մշտական կամ մինչև հինգ տարի ժամկետով,

3. դատական հսկողություն՝ մինչև հինգ տարի ժամկետով,

4. ներկայացուցչությունների, ձեռնարկությունների կամ մասնաճյուղերի գործունեության դադարեցում՝ վերջնական կամ մինչև հինգ տարի ժամկետով,

---

[1] Տե՛ս **Крылова Н.С.,** Уголовная ответственность юридических лиц во Франции: предпосылки возникновения и основные черты // Вестник Московского Университета, Серия П. Право, 1998, № 3, էջ 74:

5. պետական գնումներին, պետական պայմանագրերին մասնակցելու արգելք՝ մշտական կամ մինչև հինգ տարի ժամկետով,

6. դրամական միջոցների հրապարակային ներգրավման արգելք՝ մշտական կամ մինչև հինգ տարի ժամկետով,

7. վճարագրեր տրամադրելու կամ վճարային քարտեր օգտագործելու արգելք՝ մինչև հինգ տարի ժամկետով,

8. հանցագործության կատարման համար օգտագործված կամ նախատեսված գործիքի կամ հանցագործության կատարումից ստացված գույքի բռնագանձում,

9. դատարանի որոշման հրապարակայնացում, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների օգտագործմամբ,

10. հանցագործության կատարման համար օգտագործված կենդանու կամ այն կենդանու բռնագրավում, որի նկատմամբ կատարվել է իրավախախտումը,

11. կենդանիներ պահելու արգելք՝ մշտական կամ մինչև հինգ տարի ժամկետով:

Իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող պատիժների բավականին լայն շրջանակ է նախատեսված նաև Չեխիայի քրեական օրենսգրքով: Դրանք են՝

1. իրավաբանական անձի գործունեության դադարեցումը,
2. գույքի բռնագանձումը,
3. տուգանքը,
4. ակտիվների կամ անշարժ գույքի բռնագրավումը,
5. որոշակի գործունեությամբ զբաղվելու արգելքը,
6. պարգևներ ստանալու, պետական գնումներին մասնակցելու արգելքը,
7. հանգանակություններ կամ սուբսիդավորում ստանալու արգելքը,
8. դատարանի որոշման հրապարակումը:

Մոլդովայի քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց համար նախատեսված է պատժի 3 տեսակ՝

1. տուգանք,
2. որոշակի գործունեությամբ զբաղվելու արգելք,
3. լուծարում:

Ուկրաինայում ևս նախատեսված են 3 պատժատեսակներ՝

1. տուգանք,
2. գույքի բռնագրավում,
3. լուծարում:

Հետաքրքրական մոտեցում է որդեգրված Սերբիայի և Չեռնոգորիայի օրենսդրությամբ: Այս պետություններում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը նախատեսված է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին առանձին օրենքով:

Այդ օրենքների համաձայն՝ նշված պետություններում իրավաբանական անձանց համար նախատեսված է ընդամենը երկու պատժատեսակ՝ տուգանք և իրավաբանական անձի լուծարում: Պատժի հետ մեկտեղ, սակայն, իրավաբանական անձանց նկատմամբ կարող են նշանակվել երկու այլ բնույթի քրեաիրավական ներգործության միջոցներ՝ պայմանական դատապարտում և անվտանգության միջոցներ:

Պայմանական դատապարտման էությունն այն է, որ իրավաբանական անձի նկատմամբ նշանակված պատիժը չի կատարվում, և իրավաբանական անձը որոշակի ժամանակահատվածում գտնվում է հսկողության տակ՝ պարտավորվելով կատարել որոշակի գործողություններ: Այսպես, օրինակ, Սերբիայի «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին» օրենքի համաձայն, պայմանական դատապարտման դեպքում դատարանը կարող է իրավաբանական անձի նկատմամբ սահմանել որոշակի ժամկետով պաշտպանական հսկողություն:

Պաշտպանական հսկողությունը կարող է ներառել մեկ կամ մի քանի պարտականությունների սահմանում, որոնք են՝

1. հսկողություն սահմանել հետագայում հանցավոր արարքների կատարումը կանխելու նպատակով,
2. ձեռնպահ մնալ ձեռնարկատիրական գործունեության իրականացումից, եթե դա կարող է կրկին հանցագործություն կատարելու հնարավորություն ընձեռել,
3. հարթել հանցագործությամբ պատճառված վնասը,
4. աշխատանքներ կատարել հանրային շահի օգտին,

5. պաշտպանական հսկողություն իրականացնող պատշաճ մարմնին ներկայացնել պարբերական զեկույցներ՝ ծավալած ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ:

Ինչ վերաբերում է անվտանգության միջոցներին, ապա հարկ է նկատել, որ դրանք իրենց բովանդակությամբ, ըստ էության, նույնանում են այլ երկրներում իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող պատժատեսակներին՝ առարկաների առգրավում, դատավճռի հրապարակում, ձեռնարկատիրական կամ այլ գործունեությամբ զբաղվելու արգելք (Չեռնոգորիա), որոշակի գործունեությամբ զբաղվելու արգելք, միջոցների բռնագանձում, դատարանի որոշման հրապարակում (Սերբիա):

ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ նաև Նախագիծ) 131-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձանց նկատմամբ կարող են նշանակվել՝

1) տուգանքը,

2) գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը,

3) պետական գնումներին մասնակցելու արգելքը,

4) հարկադիր լուծարումը,

5) Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը:

Հարկ է նկատել, որ արտասահմանյան բոլոր երկրներում իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող պատիժներից ամենատարածվածը տուգանքն է: Տուգանքը՝ որպես պատիժ, նախատեսված է գրեթե բոլոր պետություններում, որտեղ առկա է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը: Ընդ որում՝ կան պետություններ, որտեղ տուգանքը իրավաբանական անձանց համար նախատեսված պատժի միակ տեսակն է (Ֆինլանդիա, Դանիա, Իսլանդիա): Մի շարք երկրներում տուգանքը կարող է նշանակվել և՛ որպես հիմնական, և՛ որպես լրացուցիչ պատիժ:

ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 59-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տուգանքը կիրառվում է որպես և՛ հիմնական, և՛ լրացուցիչ պատիժ: Սակայն այս դրույթը կարող է կիրառվել միայն ֆիզիկական անձանց նկատմամբ, քանի որ իրավաբանական անձանց համար գործում է պատիժների առանձին համակարգ, որում

զետեղված «տուգանք» պատժատեսակի վերաբերյալ նման կարգավորում չկա։

Փաստորեն, տուգանք պատժատեսակն իրավաբանական անձանց պարագայում կարող է նշանակվել միայն որպես հիմնական պատիժ։ Մեր կարծիքով՝ տուգանքը՝ որպես լրացուցիչ պատժամիջոց, իրավաբանական անձանց պարագայում ևս պետք է կիրառման հնարավորություն ունենա, մասնավորապես՝ իրավաբանական անձի կողմից այնպիսի ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու պարագայում, որը մեծ վնաս է պատճառել պետությանը, կազմակերպություններին կամ ֆիզիկական անձանց։

Իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող պատժատեսակներից հաջորդ՝ ամենահաճախ հանդիպողը գույքի բռնագրավումն է։ Այս պատժատեսակը կարող է կիրառվել հատուկ եղանակով, երբ բռնագրավվում են հանցագործության գործիքները կամ հանցագործության արդյունքում ստացված առարկաները կամ դրանց համարժեք առարկաները, մասնակիորեն, երբ բռնագրավվում է իրավաբանական անձին պատկանող գույքի մի մասը, որը կարող է անմիջականորեն կապ չունենալ հանցագործության հետ, կամ ընդհանուր կերպով, երբ բռնագրավումը տարածվում է իրավաբանական անձի ողջ գույքի վրա։ Վերջինը կիրառելի է բացառիկ դեպքերում՝ մարդկության, խաղաղության դեմ ուղղված հանցագործությունների պարագայում (Ալբանիա, Բելգիա, ԱՄՆ, Ֆրանսիա)։

Հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում բռնագրավումը՝ որպես պատժի տեսակ, նախատեսված չէ ո՛չ ֆիզիկական անձանց համար նախատեսված պատիժների համակարգում, ո՛չ իրավաբանական անձանց։ Միևնույն ժամանակ բռնագրավումը՝ որպես քրեաիրավական ներգործության միջոց, նախատեսված է Նախագծի 19-րդ գլխում (Անվտանգության միջոցներ և գույքի բռնագրավում)։

Նախագծի 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործության գործիքները, միջոցները, առարկաները կամ հանցագործությամբ ստացված գույքը կամ եկամուտը սույն հոդվածով նախատեսված կարգով ենթակա են պարտադիր բռնագրավման։ Նույն հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ գույքի բռնագրավումը կա-

րող է կիրառվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձի նկատմամբ:

Այսինքն՝ բռնագրավումը՝ որպես քրեաիրավական ներգործության լրացուցիչ միջոց, կարող է կիրառվել նաև իրավաբանական անձանց նկատմամբ, սակայն բռնագրավման սահմանները հստակ են՝ հանցագործությամբ ստացված գույք կամ եկամուտ, հանցագործության գործիքներ, միջոցներ կամ առարկաներ:

Գործունեության դադարեցումը և որոշակի գործունեությամբ զբաղվելու արգելքը ևս իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող տարածված պատժատեսակներ են: Տարբեր պետություններում տարբեր են այս պատժատեսակների կիրառման սահմաններն ու ժամկետները:

Նախագծի 133-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը ձեռնարկատիրական, տնտեսական կամ այլ գործունեության որոշակի տեսակով կամ մի քանի տեսակներով զբաղվելու արգելքն է՝ վեց ամսից մինչև երկու տարի ժամկետով: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը չի կարող նշանակվել հանրային ծառայություններ մատուցող իրավաբանական անձի նկատմամբ:

Կարծում ենք՝ ձեռնարկատիրական ընկերությունների մեծ մասի գործառույթը հանրությանը ծառայություն մատուցելն է: Ուստի այս առումով առաջարկվող կարգավորումը կարող է գործնականում քննարկվող պատժատեսակի կիրառման հնարավորության անհիմն սահմանափակման տեսանկյունից խնդրահարույց լինել:

Կարծում ենք, որ բացառությունը վերաբերում է այն իրավաբանական անձանց, որոնք հանրային ծառայությունների մատուցման որոշակի բնագավառում միակն են (օրինակ՝ Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ն):

Առաջարկում ենք Նախագծի 133-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը չի կարող նշանակվել որոշակի բնագավառում հանրային ծառայություններ մատուցող միակ իրավաբանական անձի նկատմամբ»:

Նպատակահարմար ենք համարում նույնաբովանդակ փոփոխություն կատարել նաև Նախագծի 133-րդ հոդվածի 3-րդ մասում։

Իրավաբանական անձի հարկադիր լուծարումը ևս նախատեսված է մի շարք երկրների քրեական օրենսդրություններով։ Այս պատժատեսակը բացառիկ է իր խստությամբ և կիրառվում է այն դեպքերում, երբ իրավաբանական անձն ի սկզբանե ստեղծվել է հանցագործություն կատարելու նպատակով կամ կատարել է ծանր կամ առանձապես ծանր հանցագործություն։

Ըստ Նախագծի կարգավորման՝ իրավաբանական անձի նկատմամբ հարկադիր լուծարում պատժատեսակը կարող է կիրառվել միայն առանձնապես ծանր հանցագործության դեպքում՝ հաշվի առնելով կատարված հանցանքի և պատճառված վնասի բնույթն ու չափը, հանցագործությանը նպաստող պատճառներն ու պայմանները, որոնք վկայում են տվյալ իրավաբանական անձի հետագա գործունեությունը շարունակելու անթույլատրելիության մասին։

Կարծում ենք, որ որոշ դեպքերում, անկախ հանցագործության ծանրության աստիճանից, իրավաբանական անձի նկատմամբ պետք է նշանակվի հարկադիր լուծարում պատժատեսակը, եթե այն ստեղծվել է հանցագործության կատարման նպատակով (օրինակ՝ փողերի լվացում, կեղծ ձեռնարկատիրություն և այլն)։

Իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող պատժի բավականին տարածված տեսակ է դատարանի որոշման կամ վճռի հրապարակումը։ Այն դատական ակտի եզրափակիչ մասի հրապարակումն է ԶԼՄ-ների միջոցով, որը կարող է հանգեցնել իրավաբանական անձի գործարար համբավի վնասմանը կամ կորստին՝ իր բոլոր անցանկալի հետևանքներով։ Դատական ակտի հրապարակումը բավականաչափ հիմնավորված պատժատեսակ է, հատկապես եթե կիրառվում է անբարեխիղճ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց նկատմամբ։ Նշված պատժատեսակն իր օրենսդրական ամրագրումն է ստացել արտասահմանյան մի շարք երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Շվեյցարիա, վերը քննարկված այլ երկրներ)։ Ընդ որում՝ Ֆրանսիայի և Շվեյցարիայի քրեական օրենսդրությունները հստակ սահմանում են, որ մեղադրական դատական ակտի հրապարակման ծախսերը հոգում է դատապարտյալը, իսկ արդարաց-

ման դատական ակտինը՝ պետությունը կամ այն անձը, ով հանդես է եկել հանցագործության մասին հաղորդմամբ:

Կարծում ենք, որ այս պատժատեսակի՝ ներպետական օրենսդրության մեջ ներդրման նպատակահարմարությունը կարող է քննարկման առարկա դառնալ:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, հարկ է նշել, որ անհրաժեշտություն է իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի այնպիսի պատժատեսակների սահմանումը, որոնք կհամապատասխանեն կոնվենցիոն չափանիշներին, կլինեն արդյունավետ ու համաչափ, կունենան կանխարգելիչ նշանակություն: Բացի դրանցից՝ այդ պատժատեսակները պետք է ունակ լինեն ապահովելու պատժի նպատակների (իրավաբանական անձանց դեպքում կարելի է խոսել սոցիալական արադարադատության վերականգնման և հանցագործությունների կանխման մասին) իրականացումը, իսկ դրա համար անհրաժեշտ է ապահովել պատժամիջոցների բազմազանություն:

Թեև, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, իրավաբանական անձանց նկատմամբ ամենահաճախ կիրառվող պատիժը տուգանքն է, այնուամենայնիվ ընդունելի չենք համարում, որ այն լինի միակ պատժատեսակը, ինչպես որոշ երկրներում է:

Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախագծով առաջարկված պատիժների համակարգը հիմնականում ընդգրկում է պատժի այն տեսակները, որոնք մեր պետության ներկայիս պայմաններում կարող են ունենալ վերը նշված նշանակությունը:

СИСТЕМА НАКАЗАНИЙ, ПРИМЕНЯЕМЫХ К ЮРИДИЧЕСКИМ ЛИЦАМ

Србуи Галян
Аспирант кафедры уголовного права ЕГУ

Данная статья посвящена исследованию системы наказаний, применяемых к юридическим лицам. В рамках статьи нами проведен анализ системы наказаний, предусмотренных для юридических лиц, в зарубежных странах, проанализированы наиболее распространенные виды наказаний в тех странах, где для юридических лиц предусмотрена уголовная ответственность. В связи с этим мы предложили способы совершенствования системы наказаний, применяе-

мых к юридическим лицам, в рамках проекта нового Уголовного кодекса РА.

THE SYSTEM OF PENALTIES APPLIED TO LEGAL ENTITIES

Srbuhi Galyan
PhD student of the chair of criminal law, YSU

The present article devoted to the study of the systems of penalties applied to legal entities. Within the framework of the article systems of penalties envisaged for legal entities in foreign countries have been discussed, the most common types of penalties in the states that envisage criminal liability for legal entities have been analyzed, as well as, proposals were made to improve the system of penalties imposed on legal entities proposed by the draft Criminal Code of the RA.

Բանալի բառեր՝ *իրավաբանական անձ, պատժի համակարգ, քրեաիրավական ներգործության միջոցներ, տուգանք, բռնագրավում, հարկադիր լուծարում, դատարանի որոշման հրապարակում:*

Ключевые слова: *юридическое лицо, система наказания, уголовно-правовые меры, штраф, конфискация, принудительная ликвидация, публикация судебного решения.*

Key words: *legal entity, penal system, criminal law measures, fine, confiscation, compulsory liquidation, publication of a court decision.*

ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Տիգրան Ղազարյան[1]

Հանցավորության դեմ պայքարի քաղաքականության առանցքային սկզբունքներից է այն, որ հանցանք կատարած յուրաքանչյուր անձ անխուսափելիորեն պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, ինչը հանցագործությունների կանխարգելման կարևորագույն միջոցներից է՝ թերևս առավել արդյունավետ, քան պատժի խստությունը: Պատասխանատվության անխուսափելիության սկզբունքն իր ամրագրումն է ստացել ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի կամ քրեաիրավական այլ ներգործության: Ակնհայտ իրողություն է, որ հանցագործության կանխման արդյունավետությունը կախված է ոչ թե պատժի խստությունից, այլ դրա անխուսափելիությունից, և նույնիսկ ամենաթեթև պատժի անխուսափելիության մեջ համոզված լինելը միշտ կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ, քան վախը մեկ այլ ավելի դաժան, բայց խուսափելու հույս ներշնչող պատժի նկատմամբ[2]:

Այդուհանդերձ, քրեական օրենսդրությունը նախատեսում է նաև չարդարացնող (ոչ ռեաբիլիտացիոն) հիմքով քրեական պատասխանատվությունից և պատժից ազատվելու մի շարք հնարավորություններ, որոնք, ըստ էության, շեղում են պատասխանատվության անխուսափելիության սկզբունքից, սակայն չեն խոչընդոտում հանցավոր ոտնձգությունից անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությանը և թույլ են տալիս հասնել քրեական օրենսդրության նպատակների իրագործմանը՝ առանց պատժի ռեալ կիրառման:

Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատվելու չարդարացնող հիմքերի շարքում առանցքային տեղ է զբաղեցնում

---

[1] ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ս. Ղազինյան:

[2] Տե՛ս՝ **Беккариа Ч.**, О преступлениях и наказаниях, М., 1939, էջ 308-309:

դիմողի բողոքի բացակայությունը, որը բացառում է մասնավոր մեղադրանքի կարգով քննվող քրեական գործերով վարույթը:

Քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրների համատեքստում կարևոր նշանակություն ունեն ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր մեղադրանքի գործերով առանձնահատկությունների ուսումնասիրությունը և իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրների վերհանումն ու դրանց համապատասխան արդյունավետ լուծումների հայտնաբերումը:

Քրեադատավարական օրենսդրությունը, կախված հանցագործության ծանրության աստիճանից և բնույթից, սահմանում է, որ քրեական հետապնդումը կարող է իրականացվել հանրային կամ մասնավոր կարգով: Մասնավոր մեղադրանքի կարգով քրեական գործեր հարուցելու դատավարական կարգի առանձնահատկություններից է այն, որ քրեական վարույթ իրականացնելու հարցը մեծապես կախված է անձի վերաբերմունքից, որը հանցագործությունից ֆիզիկական կամ բարոյական վնաս է կրել[1]:

Միաժամանակ հարկ է նշել, որ օրենքը մի շարք դեպքերում առաջնահերթությունը տալիս է ոչ թե հանրային, այլ մասնավոր շահերին, որի դրսևորումներից է նաև այն, որ որոշ դեպքերում հանցագործությունից տուժած անձի կամքով են պայմանավորված մասնավոր մեղադրանքի կարգով քննվող քրեական գործերով վարույթ նախաձեռնելը, քրեական հետապնդում սկսելը[2]:

Իրավաբանական գրականության մեջ հանցագործության մասին հաղորդման մի քանի սահմանումներ են տրվում: Այսպես՝ պրոֆեսոր Բ. Տ. Բեգլեպկինը հանցագործության մասին հաղորդումը սահմանում է որպես իրավապահ մարմիններին ներկայացված նախապատրաստվող կամ կատարված հանցագործության մասին տեղեկություններ պարունակող դիմում[3]: Ե. Ն. Արեստովան իր հերթին նշել է, որ հանցագործության մասին հաղորդումը նախա-

---

[1] Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 207:

[2] Տե՛ս **Божьев В.П.,** Предпосылки обеспечения интересов потерпевшего в уголовном процессе // Законность, 2005, № 11, էջ 8:

[3] Տե՛ս Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации, под ред. И.Л. Первухина, М., 2002, էջ 209 (автор комментария к гл. 19- Б.Т. Безлепкин).

պատրաստվող կամ կատարված հանցագործության մասին դիմում է, որը ենթադրում է տուժող կողմի միջորդությունը՝ մեղավորին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին[1]:

Գիտական գրականության մեջ արտահայտվում է այն գաղափարը, որ հանցագործության մասին հաղորդման մեջ պարտադիր պետք է նշվի, թե արդյոք հաղորդում ներկայացրած անձը ցանկանո՞ւմ է, որ մեղավորը ենթարկվի քրեական պատասխանատվության, թե՞ ոչ: Այս առիթով Ե. Ն. Արեստովան նշել է, որ եթե հանցագործության մասին հաղորդումը չի պարունակում դիմողի միջնորդությունը՝ մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու մասին, ապա այն պետք է համարել ոչ թե հանցագործության մասին հաղորդում, այլ հանցագործության մասին այլ աղբյուրներից ստացված հաղորդում[2]: Այդպիսի հաղորդումը, ըստ նրա, չի կարող քրեական գործ հարուցելու անմիջական հիմք դառնալ, սակայն դրա հիման վրա կարող են կատարվել դատավարական այլ գործողություններ, որոնց հետևանքով հանցագործության մասին առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում կարող է հարուցվել քրեական գործ, սակայն արդեն կատարված դատավարական այլ գործողությունների հիման վրա:

Նշված դիրքորոշմանը համաձայն չենք, քանի որ առաջարկվող մոտեցումը առանձին իրավապահ մարմինների կողմից կարող է օգտագործվել որպես հանցագործության դեպքերը թաքցնելու միջոց՝ ելնելով այն հանգամանքից, որ հանցագործության մասին հաղորդման մեջ բացակայում է մեղավորին քրեական պատասխանատվության ենթարկելու խնդրանքը: Որպես արդյունք, իրավապահ մարմինները կհրաժարվեն քրեական գործ հարուցելուց, եթե չկանխատեսեն բավարար հիմքեր գործի հետագա հեռանկարի կապակցությամբ:

Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ շատ դեպքերում հանցագործության մասին հաղորդում տվող անձը կարող է հանցագործությունից անմիջականորեն տուժած անձը չլինել, այլ ականատես վկան: Այս դեպքում մեղավորին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին խնդրանքը միշտ չէ, որ համա-

---

[1] Տե՛ս **Арестова Е.Н.,** Деятельность органов внутренних дел на этапе возбуждения уголовного дела // Российский следователь, 2003, № 5, էջ 27:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 27:

պատասխանում է իրական տուժողի կամահայտնությանը: Դեռ ավելին՝ տուժող չհանդիսացող անձը դժվար թե հանցագործության մասին հաղորդման մեջ ներառի իր ցանկություններն այն դեպքում, երբ գործով չշահագրգռված անձ է:

Հիշյալ դիրքորոշումն ամբողջությամբ ընդունելի կլինի միայն այն դեպքում, երբ ներկայացված հաղորդման մեջ նկարագրված առերևույթ հանցավոր արարքը վերաբերի մասնավոր մեղադրանքի ընթացակարգով քննվող գործերին:

Նշված հարցի վերաբերյալ Ս. Ֆ. Շումիլինը նշում է, որ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածում, որը սահմանում է հանցագործության մասին հաղորդմանը ներկայացվող պահանջները, չի սահմանվում մեղավորին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ խնդրանքի ամրագրման ուղղակի պահանջ նույնիսկ այն դեպքում, երբ հարցը վերաբերում է մասնավոր-հանրային մեղադրանքի գործերին[1]: Գտնում ենք, որ հիշյալ դիրքորոշումը վերաբերելի է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված մասնավոր մեղադրանքին վերաբերող իրավակարգավորումներին, որոնք ևս նման պահանջ չեն սահմանում: Ուստի առկա չեն հիմքեր՝ եզրակացնելու, որ մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործ կարող է հարուցվել միայն ու միայն տուժողի խնդրանքի դեպքում: Կարծում ենք, որ տվյալ դեպքում պարտադիր է միայն այն հանգամանքը, որ հաղորդում ներկայացրած անձը լինի հանցագործությունից ենթադրաբար տուժած անձը:

Իրավակիրառ պրակտիկայում յուրաքանչյուր դեպքում պարտադիր հստակեցվում է այն հարցը, թե արդյոք մասնավոր մեղադրանքի գործերով տուժողը ցանկանո՞ւմ է, որ մեղավորը ենթարկվի քրեական պատասխանատվության, թե՞ ոչ՝ դրանով պայմանավորելով նաև քրեական գործ հարուցելու հարցի լուծումը:

Համակարծիք ենք Ռ. Ռ. Կոլոմոյցևի այն դիրքորոշմանը, որ հանցագործության մասին հաղորդման մեջ մեղավորին քրեական պատասխանատվության ենթարկելու խնդրանքը չի կարող որոշիչ ազդեցություն ունենալ, առանցքային կարևորություն ունի միայն,

---

[1] Տե՛ս **Шумилин С.Ф.,** Полномочия следователя на возбуждение уголовного дела частно-публичного обвинения: проблемы реализации // Российский следователь, 2008, N 10, էջ 10:

թե հաղորդման բովանդակությունը որքանով է պարունակում կոնկրետ հանցակազմի հատկանիշներ[1]:

Չնայած մասնավոր մեղադրանքի կարգով քրեական գործերը հարուցվում են տուժողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն, սակայն դա չի նշանակում, որ նշված անձինք են քրեական գործ հարուցելու իրավունքի սուբյեկտները, քանի որ այդպիսիք են հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, որոնք դատավարական որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու վերաբերյալ՝ հիմնվելով նյութերի նախապատրաստման փուլի արդյունքների վրա: Ընդգծենք, որ խնդրո առարկա գործերով այլ համապատասխան պայմանների առկայության դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում կարող է կայացվել միայն, եթե հանցագործության մասին հաղորդման մեջ տուժողը կամ նրա օրինական ներկայացուցիչը հայտնել է իրենց դիրքորոշումը՝ մեղավորին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Տուժողի կամ նրա օրինական ներկայացուցչի տվյալ իրավունքը դիսպոզիտիվության սկզբունքի դրսևորումներից մեկն է (կամ, ինչպես անվանում են, մասնավոր մեղադրանք) քրեական դատավարության մեջ: Այդ հանգամանքը նշում է նաև Ի. Ս. Դիկարևը[2]: Հարուցման ընթացակարգի հենց այդ առանձնահատկությունների շնորհիվ դիտարկվող կատեգորիայի քրեական գործերը կոչվում են մասնավոր մեղադրանքի գործեր:

Գործող իրավակարգավորումների պայմաններում գտնում ենք, որ մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերով քրեական գործ հարուցելու հարցի լուծման հետ միաժամանակ անհրաժեշտ է անդրադառնալ նաև դիմում ներկայացնող անձին տուժողի դատավարական կարգավիճակ տալու հարցին:

Անձին որպես հանցագործությունից տուժած անձ ճանաչելը քրեական գործ հարուցելու հետ միաժամանակ պայմանավորված է նաև նրանով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածում հիշատակվում է տուժողի բողոքի մասին:

---

[1] Տե՛ս **Коломойцев Р.Р.,** Заявление о преступлении: проблемы правоприменения // Законность, 2006, № 8, էջ 8:

[2] Տե՛ս **Дикарев И.С.,** Диспозитивность в уголовном процессе России, под ред. проф. А.П. Кругликова, Волгоград, 2005, էջ 71-72:

Դրանով իսկ մասնավոր մեղադրանքի կարգով քրեական գործ հարուցելու մոդելը կառուցված է այնպես, որ տուժողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը հանդես գա որպես միակ առիթ տվյալ որոշումն ընդունելու համար: Նույնիսկ քրեական գործ հարուցելու համար հիմքի առկայությունը նշված (պատշաճ) առիթի բացակայության դեպքում այդպիսի որոշումը դարձնում է ապօրինի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ուղղակիորեն ամրագրված է դիմողի բողոքի բացակայությունը՝ որպես քրեական վարույթը բացառող հանգամանք:

Յ. Օ. Մոտովիլովկերը դեռևս 40 տարի առաջ տուժողի դիմումը անվանել է հանրային-մասնավոր մեղադրանքի գործերով քրեական դատավարության նախադրյալ՝ դրա տակ հասկանալով պայմանների ամբողջությունը, որոնք հնարավորություն են տալիս նախաձեռնելու քրեական վարույթ և ըստ էության անդրադառնալու քրեական դատավարության շրջանակներում լուծման ենթակա հարցերին: Այլ կերպ ասած՝ քրեական դատավարության նախադրյալները պայմաններ են, որոնց բացակայության դեպքում անթույլատրելի է համարվում դատավարությունն ընդհանուր առմամբ, այլ ոչ թե նրա առանձին փուլը կամ առանձին դատավարական գործողությունը: Հետևաբար դատավարության նախադրյալի բացակայությունը հանգեցնում է գործի վարույթի դադարեցմանը դատավարության ցանկացած փուլում, ինչը պահպանում է իր ուժը նաև գործող քրեադատավարական օրենքում[1]:

Դրան պետք է ավելացնել նաև այն, որ տուժողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումում պետք է ուղղակիորեն արտահայտված լինի մեղավորին քրեական պատասխանատվության ենթարկելու նրա ցանկությունը: «Այդպիսի բողոքը, - գրում է Ն. Ի. Գազետդինովը,- պետք է պարունակի իրավասու մարմիններին ուղղված ուղղակի խնդրանք՝ քրեական պատասխանատվության ենթարկելու մասին… Այդպիսի խնդրանք չպարունակող բողոքի կամ դիմումի հանձնումը չի կարող դիտարկվել որպես քրեական գործ հարուցելու մասին խնդրանք, ինչպես նաև փաստացի հան-

[1] Տե՛ս **Мотовиловкер Я.О.,** Основания предпосылки советского уголовного процесса // Правоведение, 1974, № 2, էջ 86, 88-89:

գամանքների շարադրմամբ բացատրությունը՝ տրված պաշտոնատար անձի պահանջով, կամ նմանատիպ ցուցմունքներ»[1]:

Վերոշարադրյալը թույլ է տալիս հանգել հետևության առ այն, որ օրենսդրի կողմից պաշտպանության օբյեկտ պետք է լինի տուժողի այն իրավունքը, որ նրա շահերին հակառակ մասնավոր մեղադրանքի կարգով քրեական գործ չհարուցվի: Տուժողի կողմից այդ իրավունքի կենսագործման պայմաններն են՝

- առաջին՝ այդ իրավունքի առկայության մասին նրա տեղեկացվածությունը.
- երկրորդ՝ տվյալ իրավունքի բովանդակության և կենսագործման հետևանքների գիտակցումը, որից հետևում է, որ պաշտոնատար անձը, որն ընդունում է հանցագործության մասին դիմումը, պարտավոր է ենթադրյալ հանցագործությունից տուժած անձին պարզաբանել հանցագործության մասին դիմում չտալու նրա իրավունքը, որը հետապնդվում է մասնավոր մեղադրանքի կարգով, ինչպես նաև այդպիսի դիմում հանձնելու հետևանքները: Այդ հանգամանքների վրա ուշադրություն է դարձնում նաև Ի. Ս, Դիկարևը[2]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված այն հանցագործությունների ցանկը, որոնց ենթադրյալ կատարման փաստի առթիվ չի կարող հարուցվել քրեական գործ, իսկ հարուցված քրեական գործը ենթակա է կարճման, եթե բացակայում է ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի բողոքը:

Քրեադատավարական օրենսդրությունը, հանրային նվազ վտանգավորության հանգամանքով պայմանավորված, առանձնացնում և հստակ սահմանում է մասնավոր հետապնդման գործերի շրջանակը, որոնց համար նախատեսում է քննության առանձնահատուկ դատավարական կարգ: Մասնավոր հետապնդման գործերը կարող են հարուցվել բացառապես տուժողի բողոքի հի-

---

[1] Տե՛ս **Газетдинов И.Н.,** О законодательной регламентации поводов и основания для возбуждения уголовного дела // Российский следователь, 2007, № 20, էջ 8;

[2] Տե՛ս **Дикарев И.С.** и **др.,** Сущность и актуальные проблемы стадии возбуждения уголовного дела, М., 2012, էջ 293:

ման վրա և ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Միևնույն ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է քրեական գործի հարուցումը բացառող և արդեն իսկ հարուցված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու անվերապահ հիմք, այն է՝ օրենքով նախատեսված դեպքերում դիմողի (տուժողի) բողոքը բացակայությունը:

Հիշյալ հարցին բազմիցս անդրադարձել է ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշումներում: Այսպես՝ Ա. Աբրահամյանի վերաբերյալ որոշմամբ իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ «….մասնավոր մեղադրանքով գործ հարուցելու և դրանով քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը լիովին կախված է դիմողի՝ հանցավորին քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար քրեական հետապնդման մարմնին դիմելու ցանկությունից և կամարտահայտությունից» (տե՛ս Արմեն Զախարի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2006 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-73/08 որոշումը):

Անձի կամահայտնության հիման վրա, այն է՝ մասնավոր մեղադրանքով քրեական գործ հարուցելու հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշում է հայտնել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի գործով (տե՛ս Jankovic v. Croatia, 2009 թվականի մարտի 5-ի գանգատ՝ թիվ 38478/05) վճռում: Նշված վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է. «….Խորվաթիայի քրեական իրավունքում այն քրեական հանցագործությունները, որոնք պետք է քննվեն Պետական մեղադրողի գրասենյակի կողմից կա՛մ սեփական նախաձեռնությամբ, կա՛մ մասնավոր հայտարարության հիման վրա, տարբերակվում են այն հանցագործություններից, որոնք պետք է քննվեն մասնավոր մեղադրանքի շրջանակներում» (տե՛ս Յանկովիչի վճռի 48-րդ կետը):

Պայմանավորված մասնավոր մեղադրանքի գործերով քննության առանձնահատկություններով՝ թե՛ տեսության մեջ և թե՛ իրավակիրառ պրակտիկայում առաջացել են մի շարք խնդիրներ, որոնք պահանջում են արդյունավետ լուծումներ՝ հավասա-

րակշռելով մի կողմից տուժողի, իսկ մյուս կողմից ենթադրյալ հանցանք կատարած անձի շահերը:

Մատնանշված խնդիրներից անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք դիմողի (տուժողի) բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելիս կամ քրեական հետապնդումը չիրականացնելիս անհրաժեշտ է պարզել ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը, թե՞ ոչ:

Իրավամբ կարելի է հիշատակել Ռ. Մ. Եվլոևի խոսքերը, որ «չի կարելի տարվել հանցանք գործելու մեջ կասկածվող և մեղադրվող անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությամբ, ինչպես ներկայումս, ի վնաս հանցագործություններից տուժած անձանց իրավունքների ու օրինական շահերի»[1]: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ յուրաքանչյուր անձ, անկախ իր դատավարական կարգավիճակից, պետք է ունենա իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու օբյեկտիվ հնարավորություն, որի ապահովման անհրաժեշտությունն առկա է մասնավոր մեղադրանքի գործերով վերոնշյալ հարցի առաջացման դեպքերում:

Խնդրո առարկա հարցն ուղղակիորեն առնչվում է այնպիսի հիմնարար սկզբունքների, ինչպիսիք են արդար դատաքննության իրավունքը, անմեղության կանխավարկածը, որոնց լույսի ներքո է հնարավոր միայն եզրահանգումներ կատարել, թե ի վերջո վարույթն իրականացնող մարմինը ունի՞ պարտականություն՝ պարզելու ենթադրյալ հանցանք կատարած անձի դիքրորոշումը, թե՞ ոչ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան: Միևնույն ժամանակ ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածով նախատեսված է, որ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ

[1] Տե՛ս **Евлоев Р.М.,** Процессуальные гарантии защиты прав и законных интересов лиц, потерпевших от преступлений (стадия предварительного расследования). Дисс. канд. юрид. наук, СПб., 2005, էջ 17:

մտած դատավճռով: Հիշյալ իրավակարգավորումներն իրենց ձևակերպումն են ստացել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Բարբերան, Մեսեգեն և Ջաբարդոն ընդդեմ Իսպանիայի գործով (Barbera, Messegue and Jabardo v. Spain 10590/83, կետ 77) 1988 թ. դեկտեմբերի 6-ի 10590/83 վճռում անմեղության կանխավարկածին հաղորդել է հետևյալ բովանդակությունը. «....անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է, ի թիվս այլոց, որ իրենց պարտականությունները կատարելիս դատարանի անդամները չպետք է ունենան կանխակալ կարծիք առ այն, որ մեղադրյալը կատարել է մեղսագրվող արարքը, ապացուցման պարտականությունը պետք է կրի մեղադրանքի կողմը, և ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով կրկնելով անմեղության կանխավարկածի սկզբունքի վերաբերյալ նախկինում ձևավորված իրավական մոտեցումները, շեշտել է, որ «....6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված անմեղության կանխավարկածը արդար քրեական դատավարության այն բաղադրիչներից մեկն է, որը պահանջվում է 6-րդ հոդվածի 1-ին կետով: Այն կխախտվի, եթե քրեական իրավախախտման մեջ մեղադրվող անձի վերաբերյալ պետական պաշտոնյայի ցուցմունքում կարծիք արտահայտվի այն մասին, որ նա մեղավոր է, նախքան դա ապացուցված կլինի օրենքի համաձայն (...):

Բացի դրանից, հայտարարությունն այն մասին, որ անձին պարզապես կասկածում են հանցագործություն կատարելու մեջ պետք է հստակորեն տարբերակվի այն բացահայտ արված հայտարարությունից, որ անհատը, թեպետ դեռ չի կայացվել վերջնական մեղադրական եզրակացություն, կատարել է տվյալ հանցագործությունը (...): Վերջինով խախտվում է անմեղության կանխավարկածի դրույթը» (տե՛ս Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ՝ թիվ 40094/05-րդ, կետեր 185-186):

Սույն իրավահարաբերությունները կարգավորող քրեադատավարական նորմերի վերլուծությունից կարելի է եզրահանգել,

որ դրանք չեն պարտավորեցնում վարույթն իրականացնող մարմնին քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելիս հաշվի առնել ենթադրյալ հանցանք կատարած անձի կարծիքը, այդ թվում՝ ստանալ նրա համաձայնությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով նրա նկատմամբ վարույթ չհարուցելու կամ հարուցված վարույթը կարճելու կապակցությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասը քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրում միայն վաղեմության ժամկետներն անցնելու և համաներման ակտ ընդունվելու հիմքով, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված քրեական գործի հարուցումը մերժելու, ինչպես նաև հարուցված քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքն ինքնին ենթադրում է, որ մեղսագրվող արարքի կատարումն անվիճելի փաստ է: Այս հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու համար ընդամենը պետք է, որ վարույթն իրականացնող մարմինը քննությամբ ձեռք բերված (փաստական) տվյալների հիման վրա հաստատված համարի, որ անձը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք է կատարել, և միևնույն ժամանակ բացակայում է դիմողի (տուժողի) բողոքը:

Գտնում ենք, որ նման իրավակարգավորումը թույլ չի տալիս անձին դատական պաշտպանության իրավունքի ուժով վիճարկել իրեն քրեական պատասխանատվության կանչելու փաստը, իր դեմ առաջադրված կասկածների, մեղադրանքի օրինականությունն ու հիմնավորվածությունը, չի նախատեսում անձի իրավունքների վերականգնման կարգ այն պայմաններում, երբ նրա մեղքը դեռ ապացուցված չէ:

Հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով քրեական գործի հարուցումը մերժելիս կամ քրեական հետապնդումը դադարեցնելիս ենթադրյալ հանցանք կատարած անձի կարծիքը հաշվի առնելու, այդ

թվում՝ նրա համաձայնությունը ստանալու օրենսդրական պահանջի բացակայությունը անմեղության կանխավարկածի սկզբունքի և արդար դատաքննության իրավունքի խախտում է: Այլ կերպ ասած՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրության նման կարգավորման պայմաններում չի ապահովվում անձի իրավունքը՝ դատական կարգով վիճարկելու այն դատավարական փաստաթղթի օրինականությունն ու հիմնավորվածությունը, որում, փաստորեն, քննարկվում է ենթադրյալ հանցանքի մեջ իր մեղավորության հարցը:

Հիշյալ հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՇԴ/0012/11/13 գործով 2014 թվականի մարտի 28-ի որոշմամբ՝ ձևավորելով այն մոտեցումը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է հաշվի առնել ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը: Այն դեպքում, երբ մասնավոր հետապնդման գործերով անձն առարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով վարույթը դադարեցնելու կամ քրեական վարույթ չսկսելու դեմ՝ անկախ դիմողի (տուժողի) բողոքի բացակայության հանգամանքից, գործի վարույթը պետք է շարունակվի սովորական կարգով՝ հնարավորություն տալով ենթադրյալ հանցանք կատարած անձին արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի առջև ապացուցելու իր անմեղությունը:

Գտնում ենք, որ գործող իրավակարգավորումները, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումներն անհարկի ծանրաբեռնում են իրավապահ մարմիններին, հանգեցնում քրեահրավական ռեսուրսների անհարկի վատնման, քանի որ վարույթն իրականացնող մարմնի վրա դնում են լրացուցիչ պարտականություն՝ պարզելու ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը: Դեռ ավելին՝ ստեղծվում է պարադոքսալ իրավիճակ, երբ քրեական գործ կարող է հարուցվել բացառապես տուժողի բողոքի առկայության պայմաններում, սակայն իրավակիրառ պրակտիկայում կարող են հանդիպել դեպքեր, երբ մասնա-

վոր մեղադրանքի կարգով կարող է հարուցվել քրեական գործ նաև դիմողի բողոքի բացակայության պայմաններում, երբ ենթադրյալ հանցանք կատարած անձը առարկում է դրա դեմ:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ ստեղծված իրավիճակը որևէ կերպ չի բխում օրենսդրի տրամաբանությունից և պայմանավորված չէ մասնավոր մեղադրանքի գործերով քննության կարգին ներկայացվող առանձնահատկություններով: Դեռ ավելին՝ այն գաղափարը, որը դրվել է մասնավոր մեղադրանքի գործերով քննության կարգի մեջ, այն է՝ հնարավորինս բեռնաթափել իրավապահ մարմիններին այն գործերը քննելուց, որոնցով ենթադրյալ հանցագործությունից տուժած անձը չի բողոքում, չի կենսագործվում:

Հիշյալ խնդրի լուծման համար առաջակում ենք առավել արդյունավետ լուծումներ, որոնք բխում են օրենսդրի տրամաբանությունից և որևէ կերպ չեն խախտում դատավարության հնարավոր մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը՝ կարճման կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու հետևանքով, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի մարտի 30-ի թիվ ՍԴՈ-871 որոշմամբ արձանագրել է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է հանցագործության կատարման մեջ մեղադրվողին համարել անմեղ այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այս սկզբունքի էությունն անձի մեղքը բացառապես դատական կարգով հաստատելու երաշխավորումն է, այսինքն՝ այս սկզբունքի ուժով անձի մեղքը կարող է հաստատվել բացառապես քրեական դատավարության արդյունքում և միայն դատական ակտով:

Ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքի իրավաբանական բովանդակությունից՝ սահմանադրական դատարանը գտել է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը, նպատակ

ունենալով պաշտպանել անձին հանիրավի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան քրեական հանցագործության մեջ կասկածելու հանգամանքը մինչև այն պահը, երբ այդ կասկածներն այդ մարմնի իրավաչափ գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հիմնավորել:

ՀՀ Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները (տե՛ս, օրինակ, Vassilios Stavropoulos v. Greece, 35522/04, 27.09.2007), արձանագրել է, որ որևէ որակական տարբերություն չպետք է դրվի ապացույցների բացակայության և անձի անմեղությունը կասկածի տակ չդնող արդարացման դատավճռի հիմքով քրեական գործի ավարտման միջև:

Գտնում ենք, որ մասնավոր մեղադրանքի գործերով տուժողի բողոքի բացակայության դեպքում որևէ դատավարական որոշում չպետք է կայացվի, իսկ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետները պետք է հոսեն բացառապես դիմողի բողոքի ներկայացման պահից: Հիշյալ մոտեցումը պայմանավորված է նաև հետևյալ հանգամանքներով.

1. Դիմողի բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման առկայության դեպքում հետագայում՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների շրջանակներում, դիմողի դիրքորոշման փոփոխության դեպքում անձը կխուսափի քրեական պատասխանատվությունից, և հնարավոր չի լինի քրեական վարույթ նախաձեռնել, քանի որ առկա կլինի չվերացված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

2. Մինչև ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի դիրքորոշումը պարզելը վարույթն իրականացնող մարմնի կողմից ցանկացած քննչական և/կամ դատավարական գործողության կատարումը օբյեկտիվորեն անհեռանկարային է և վտանգում է հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական միջոցները, քանի որ բողոքի բացակայության յուրաքանչյուր դեպքում դրանց կատարումը բովանդակազրկվում է:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նյութերի նախապատրաստման փուլի սկիզբը կհամարվի ոչ թե ենթադրյալ հանցագործության մասին իրավապահ մարմինների

կողմից տեղեկատվության ստացման, այլ ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի կողմից բողոքի ներկայացման պահը, որից հետո միայն վարույթն իրականացնող մարմինը հանցագործության բացահայտման ուղղությամբ կձեռնարկի համապատասխան միջոցներ:

4. Փակուղային իրավիճակ չի առաջանա այն ժամանակ, երբ մասնավոր մեղադրանքի կարգով քննության ենթակա գործերով վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն չունենա հայտնաբերելու ենթադրյալ հանցագործությունից տուժած անձին և պարզելու նրա դիրքորոշումը, քանի որ գործող իրավակարգավորումների պայմաններում բացակայում է հիշյալ հարցի որևէ իրավական լուծում՝ չզրկելով նաև ենթադրյալ հանցագործությունից տուժած անձին հետագայում պահանջելուց, որ հանցանք կատարած անձը ենթարկվի քրեական պատասխանատվության:

Ասվածը հիմնավորվում է նրանով, որ այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինը, չպարզելով ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի դիրքորոշումը, հարուցի քրեական գործ, ուղղակիորեն կխախտի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, այն է՝ մասնավոր մեղադրանքի գործերով դիմողի բողոքի բացակայությունը բացառում է քրեական գործով վարույթը: Ինչ վերաբերում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման կայացմանը, ապա այս լուծումը ևս հակասում է քրեադատավարական կարգավորումներին և ստեղծում չարդարացված իրավիճակ՝ մասնավորապես հետագայում դիմողի բողոքի առկայության դեպքում զրկելով քրեական վարույթ նախաձեռնելու հնարավորությունից՝ հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով ամրագրված կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը: Հիշյալ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կարող է չեղարկվել հսկող դատախազի կողմից որոշման պատճենը ստանալու պահից 7-օրյա ժամկետում:

Հիշյալ հարցի կապակցությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ռադչիկովն ընդդեմ Ռուսաստանի գործը քննելիս, որը, վերահաստատելով իրավական որոշակիության սկզբունքի կարևո-

րությունը, նշել է, որ քրեական գործերի վերանայման առանձնահատուկ համատեքստում իրավական որոշակիության սկզբունքի պահանջը բացարձակ չէ, և այս սկզբունքից շեղվող ցանկացած որոշում պետք է գնահատվի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետի լույսի ներքո, որն ուղղակիորեն թույլատրում է պետությանը նոր փաստերի կամ նախորդ վարույթում տեղ գտած՝ գործի ելքի վրա ազդող հիմնարար թերության հիմքով նորոգել գործի վարույթը (տե՛ս Radchikov v. Russia գործով 2007 թվականի մայիսի 24-ի վճռի 42-րդ կետը):

Մեջբերված իրավակարգավորումների և դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ իրավական որոշակիության (res judicata) և կրկին դատվելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքները մարդու իրավունքները երաշխավորող հիմնարար դրույթներ են: Միևնույն ժամանակ հիշյալ սկզբունքը կարող է հաղթահարվել միայն այնպիսի բացառիկ դեպքերում, երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (Կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետ): Ակնհայտ է, որ սույն դեպքում որևէ կերպ չենք կարող արձանագրել, որ հետագայում տուժողի՝ բողոք ներկայացնելը որևէ կերպ չի կարող համարվել նոր կամ նոր բացահայտված փաստ կամ էական թերություն, ուստի քրեական գործով վարույթը վերանայելու հիմք չի կարող դիտվել:

Դեռ ավելին՝ հիշյալ իրավակարգավորումն էականորեն կնպաստի քրեահրավական ռեսուրսների խնայմանը, քանի որ.

1. անհարկի պարտականություն չի դրվի վարույթն իրականացնող մարմնի վրա՝ պարզելու ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը այն դեպքում, երբ ի սկզբանե քրեական վարույթ նախաձեռնելու հիմքեր առկա չեն,

2. անհարկի պարտականություն չի դրվի ենթադրյալ հանցանք կատարած անձի վրա՝ տուժողի բողոքի բացակայության պայմաններում ապացուցելու իր անմեղությունը, այն դեպքում, երբ չապացուցված մեղավորությունը հավասարեցված է ապացուցված անմեղության,

3. կզրկի ենթադրյալ հանցագործությունից տուժած անձանց քրեաիրավական միջոցները վատնելուց այն դեպքում, երբ որևէ մտադրություն չունեն, որ ենթադրյալ հանցանք կատարած անձը ենթարկվի քրեական պատասխանատվության, սակայն հանցագործության մասին հաղորդում են ներկայացնում իրավապահ մարմիններին:

Հիշյալ հարցի կապակցությամբ առավել ընդունելի ենք համարում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի իրավակարգավորումները, որով արմատապես փոփոխվել է մասնավոր մեղադրանքի գործերով քրեական վարույթ նախաձեռնելու դատավարական կարգը՝ ամբողջությամբ բացառելով դրանցով նախաքննության իրականացման հնարավորությունը, դեռ ավելին՝ այն նման իրավասությամբ օժտել է ուղղակիորեն ենթադրյալ հանցագործությունից տուժած անձին: Առաջարկվող իրավակարգավորումներն առավել նման են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու դատավարական կարգին:

Մասնավորապես նախագծի 440-րդ հոդվածով սահմանվում է քրեական հայցի հասկացությունը, որի միջոցով ենթադրյալ հանցագործությունից տուժած անձը կարող է հասնել իր խախտված իրավունքների և օրինական շահերի վերականգնման: Քրեական հայցը պետք է բովանդակի ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի անունը, ազգանունը և բնակության կամ հաշվառման վայրը, այն անձի անունը, ազգանունը և բնակության կամ հաշվառման վայրը, որի դեմ ներկայացվել է քրեական հայցը, մեղադրանքի բովանդակությունը, այդ թվում՝ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը կամ հոդվածի մասը, այն անձանց անունները, ազգանուններն ու բնակության կամ հաշվառման վայրերը, որոնք պետք է կանչվեն դատական նիստին, մեղադրանքը հիմնավորող նյութերը:

Գտնում ենք, որ առաջարկվող կարգավորումների պայմաններում գործերի քննությունը առավել արդյունավետ կլինի, քանի որ ենթադրյալ հանցագործությունից տուժած անձն ինքը պարտականություն կկրի պահանջելու, որ իր խախտված իրավունքները վերականգնվեն, հակառակ դեպքում որևէ քրեական իրավահարաբերություն չի ծագի, դեռ ավելին, ձևական պահանջներից ելնելով,

ինչպես անհարկի չի սահմանափակվի ենթադրյալ հանցանք կատարած անձի անմեղության կանխավարկածը, այնպես էլ չեն ծանրաբեռնվի իրավապահ մարմինները:

Ավելին՝ իրավակիրառ պրակտիկայում խնդիրներ չեն առաջացնի այն իրավիճակները, թե արդյոք պե՞տք է քրեական գործով քննություն կատարվի, երբ ենթադրյալ հանցանք կատարած անձը հայտնի չէ, սակայն առկա է ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի բողոքը:

Շարունակելով մասնավոր մեղադրանքի կարգով քրեական գործերի հարուցման խնդիրների ուսումնասիրությունը՝ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ քրեական դատավարությունում դիսպոզիտիվության իրականացման անհրաժեշտ պայման է, ինչպես վերը նշվել է, քրեական գործով դատավարության մասնակիցների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իրենց տրված իրավունքները սեփական հայեցողությամբ տնօրինելու հնարավորությունը: Սակայն տուժողը կարող է իր վրա զգալ հակաօրինական ճնշում շահագրգիռ անձանց կողմից, որի հետևանքով նա չի կարող ազատ կերպով արտահայտել իր կամքը և դիմել իրավապահ մարմիններին՝ քրեական գործ հարուցելու մասին դիմումով: Տուժողը նույնպես կարող է հնարավորություն չունենալ կենսագործելու իր իրավունքները անօգնական կամ հանցավորից կախյալ վիճակում հայտնվելու պատճառով:

Նման իրավիճակներում տեղին է խոսել կամքի ազատ արտահայտման սահմանափակված լինելու մասին, որն արտահայտվում է սուբյեկտի՝ որոշում ընդունելու հնարավորության բացակայության ու իր օրինական շահերին համապատասխան գործելու մեջ և հանդես է գալիս որպես խոչընդոտ տուժողի՝ որպես քրեական դատավարության մասնակցի դիսպոզիտիվության իրավունքի կենսագործման համար:

Կամքի բացակայության դեպքում մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործ հարուցելու կարգի դիսպոզիտիվ կառուցումը չի կարող ապահովել անձի իրավունքների և օրինական շահերի լիարժեք պաշտպանություն, այդ իսկ պատճառով օրենսդիրը նրա՝ որպես քրեական դատավարության մասնակցի շահերի պաշտպանությունը հանձնարարում է պաշտոնատար անձանց՝ ի դեմս քրեական հետապնդման մարմինների: Դրա վրա ուշադրութ-

յուն են դարձնում Ի. Ս. Դիկարևը[1] և Ա. Մ. Լարինը: Վերջինս մասնավորապես նշում է, որ քրեական գործ հարուցելու ինստիտուտի նպատակը քրեական դատավարության օրինականության և մարդասիրության սկզբունքների կենսագործումն է, որը պայմանավորում է այն անձանց շահերում հանրային շահի հետևողական իրականացման անհրաժեշտությունը, որոնք չեն կարող ինքնուրույն պաշտպանել իրենց իրավունքները և այդ իսկ պատճառով կարիք ունեն հատուկ աջակցության ու պաշտպանության[2]՝ անօգնական կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվելու կամ այլ պատճառներով պայմանավորված (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ կետ):

Գտնում ենք, որ տուժողի՝ անօգնական կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվելու կամ այլ պատճառներով սեփական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհնարինության դեպքերին պետք է դասել այնպիսինները, երբ տուժողը ծեր է, հիվանդ է (հաշմանդամ է, հոգեկան հիվանդ է կամ տառապում է այլ ծանր հիվանդությամբ), վախենում է հանցավորի սպառնալիքներց, նյութական կամ այլ կախյալ վիճակում է, անչափահաս է կամ մանկահասակ և այլն:

Գտնում ենք, որ տուժող անձի՝ անօգնական վիճակում գտնվել պետք է դիտարկել այն դեպքերը, երբ նա, ֆիզիկական կամ հոգեկան վիճակից ելնելով (թուլամտություն կամ այլ հոգեկան խանգարում, ֆիզիկական թերություններ, այլ հիվանդագին կամ անգիտակից վիճակ, մանկահասակության կամ ծերության տարիք և այլն), չի կարող հասկանալ իր հետ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը, ինչպես նաև իր խախտված իրավունքների և օրինական շահերի վերականգնման ուղիները:

Կախյալ վիճակը առաջացնում են, որպես կանոն, տուժողի և այն անձի միջև հարաբերությունները, որը ենթադրաբար կատարել է հանցագործությունը, և որը հնարավորություն է ունեցել ազդելու տուժողի վիճակի վրա: Դա կարող է տեղի ունենալ, օրինակ,

---

[1] Տե՛ս **Дикарев И.С. и др.,** նշված աշխատությունը, էջ 298; **Дикарев И.С.,** Принцип диспозитивности в уголовном процессе России // Журнал российского права, 2008, № 6, էջ 78:

[2] Տե՛ս **Ларин А.М.,** Структура института возбуждения уголовного дела // Советское государство и право, 1978, № 5, էջ 78:

երբ հանցագործություն կատարած անձը կա՛մ տուժողի գործատուն է, կա՛մ տիրապետում է տուժողին վարկաբեկող տեղեկատվությանը և սպառնում է դրա տարածմամբ և այլն:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաև, որ հիշյալ հարցի կապակցությամբ արդյունավետ իրավակարգավորումներ են նախատեսված ինչպես գործող քրեական դատավարության օրենսգրքով, այնպես էլ Նախագծով: Այսպես՝ դրանք մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերի դեպքում ամբողջությամբ չեն մեկուսացրել դատախազին այս գործընթացից՝ հնարավորություն ընձեռելով ինքնուրույն հարուցելու քրեական գործ, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

Իրավակիրառ պրակտիկայում և տեսության մեջ հաճախ վեճերի տեղիք է տալիս նաև այն հարցը, թե արդյոք դիմողի բողոքի առկայությամբ քրեական գործ հարուցվելուց հետո անձը կարո՞ղ է փոխել իր դիրքորոշումը և հայտարարել, որ այլևս չի ցանկանում, որ ենթադրյալ հանցանք կատարած անձը ենթարկվի քրեական պատասխանատվության, և արդյոք վարույթն իրականացնող մարմինը պարտավո՞ր է դադարեցնել քրեական հետապնդումը և կարճել քրեական գործի վարույթը:

Գործող իրավակարգավորումների պայմաններում օրենսդիրը ենթադրյալ հանցագործությունից տուժած անձին իրավունք է վերապահում մասնավոր մեղադրանքի գործերով իր դիրքորոշումը արտահայտելու քրեական գործի հարուցման փուլում՝ մինչև դատավարական որոշման կայացումը: Ստացվում է, որ քրեական գործի հարուցումից հետո օբյեկտիվորեն քրեական գործի վարույթը չի կարող կարճվել տուժողի դիրքորոշման փոփոխության հետևանքով, հակառակ դեպքում կստեղծվեր մի իրավիճակ, երբ օրենսդիրն ուղղակիորեն հնարավորություն է ընձեռում տուժողին, օգտվելով իր իրավունքից, անհարկի վատնելու ծախսված քրեաիրավական միջոցները: Քրեական գործի հարուցումից հետո տուժողի դիրքորոշման փոփոխության հետևանքով քննարկման առարկա կարող է դառնալ կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու միջոցով քրեական գործի վարույթը կարճելու հարցը:

Համեմատական վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ (սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը) և 5-րդ (սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ) կետերի բովանդակությունը՝ կարող ենք եզրահանգել, որ, չնայած նրան, որ դրանք ունեն էական տարբերություններ, ունեն նաև մի շարք ընդհանրություններ, մասնավորապես՝ այն, որ երկու դեպքում էլ քրեական գործի վարույթի հետագա ընթացքը պայմանավորվում է ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի կամահայտնությամբ:

Չնայած դրան՝ որոշ դեպքերում քրեական հետապնդման հարուցման հարցի լուծման ժամանակ տուժողի դիրքորոշումը պարզելը դառնում է ձևական, քանի որ մի կողմից բախվում է հանրային շահին, որը ներառում է անսահմանափակ շրջանակի անձանց շահերը և պահանջում է մեղավորի նկատմամբ համապատասխան քրեաիրավական միջոցների ձեռնարկում, իսկ մյուս կողմից՝ մեղավորի պաշտպանության իրավունքին, քանի որ քրեական գործի հարուցումը մերժվում է չարդարացնող հիմքով, որի դեպքում պարտադիր պետք է պարզել մեղավորի դիրքորոշումը:

Գտնում ենք, որ սույն հարցի շուրջ առավել ընդունելի և առավել արդյունավետ լուծումներ է առաջարկում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, որը տուժողին մասնավոր մեղադրանքի գործերով դիտարկում է որպես մեղադրողի: Մասնավորապես Նախագծի 52-րդ հոդվածի համաձայն՝ մասնավոր մեղադրանքի կարգով իրականացվող վարույթում անձը ճանաչվում է տուժող, եթե նրա ներկայացրած քրեական հայցի հիման վրա բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան վնաս է պատճառվել կամ կարող էր պատճառվել ենթադրյալ հանցագործության ավարտման դեպքում: Միևնույն ժամանակ Նախագիծն ուղղակիորեն արձանագրում է, որ անձը տուժող է ճանաչվում քրեական վարույթ սկսելու մասին դատարանի որոշմամբ, դեռ ավելին՝ սահմանելով, որ մասնավոր մեղադրանքի գործերով քրեական հայց կարող է ներկայացվել միայն ավարտված հանցագործություններից տուժած անձանց կողմից: Այլ կերպ ասած՝ առաջարկվող քրեադատավարական կարգավորումներից կարելի է եզրա-

հանգել, որ հիշյալ հանցագործությունների փորձը և նախապատրաստությունը որևէ քրեադատավարական իրավահարաբերության ծագման հիմք չեն կարող դառնալ:

Ի վերջո կարող ենք եզրահանգել, որ գործող քրեադատավարական կագավորումների պայմաններում մասնավոր մեղադրանքի գործերով քրեական վարույթ նախաձեռնելու հարցի լուծման ժամանակ առաջանում են մի շարք խնդիրներ, որոնք փակուղային իրավիճակներ են ստեղծում վարույթն իրականացնող մարմնի համար՝ հանգեցնելով հանցավորության դեմ պայքարի միջոցների անարդյունավետ օգտագործման: Առաջարկվող լուծումները, պայմանավորված ենթադրյալ հանցանք կատարած անձի անմեղության կանխավարկածով և միևնույն ժամանակ հաշվի առնելով ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, բխում են մասնավոր մեղադրանքի գործերով քննության առանձնահատկություններից: Միևնույն ժամանակ առաջարկվող լուծումները կնպաստեն առավել արդյունավետ քննության կազմակերպմանը՝ յուրաքանչյուր դեպքում վարույթի նախաձեռնումը պայմանավորելով ենթադրյալ հանցագործությունից տուժած անձի կամահայտնությամբ:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով առաջարկվող մոտեցմանը, այն է՝ մասնավոր մեղադրանքի գործերով մինչդատական վարույթի չիրականացմանը, ապա գտնում ենք, որ այն ամբողջությամբ համապատասխանում է խնդրո առարկա հարցի բովանդակությանը և էականորեն կնպաստի քրեական հետապնդման մարմինների ծանրաբեռնվածության թեթևացմանն ու հանրային մեղադրանքի կարգով քննվող քրեական գործերի քննության որակի բարձրացմանը:

ПРОБЛЕМЫ ИНИЦИАТИВЫ УГОЛОВНОГО ПРОЦЕССА ПО ДЕЛАМ ЧАСТНОГО ОБВИНЕНИЯ

Тигран Казарян
Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

Одним из стержневых принципов политики предотвращения преступности является то, что каждое лицо, совершившее преступление, неминуемо должно быть привлечено к уголовной ответственности. Однако уголовная юриспруденция предусмотрела также ряд способов освобождения от уголовной ответственности и наказания по неоправдывающим (нереабилитирующим) основаниям, которые, по сути, являются отклонениями от принципа неотвратимости уголовно-правового воздействия.

Стержневое место в ряде неоправдывающих оснований освобождения от уголовной ответственности и наказания, занимают уголовные дела частного обвинения, которые составляют существенную часть в массе уголовных дел.

В контексте рассматриваемых проблем инициативы уголовного процесса важное значение имеет изучение особенностей как по уголовным делам публичного, так и частного обвинения, и выявление соответствующих эффективных решений, непосредственно связанных с принципом неотвратимости уголовно-правового воздействия.

ISSUES OF INITIATION OF CRIMINAL PROCEEDINGS IN THE PRIVATE PROSECUTION CASES

Tigran Ghazaryan
Post-graduate student of the Chair of Criminal Procedure and Criminalistics at YSU

One of the key principles of the crime control policy is that any person, who has committed a crime must be punished, however, criminal jurisprudence has established a number of possibilities for excluding criminal liability and punishment based on the not justifying (non-exculpatory) grounds, which are deflections from the principle of inevitability of the liability.

Based on the exclusion from criminal responsibility and liability on the grounds of non-justification, criminal cases under private prosecution take up key places, which make up considerable share in the range of investigated criminal cases.

In the context of initiation of criminal proceedings issues, significant importance has not only the study of the peculiarities of public but also the private prosecution cases and revealing the problems in the law enforcement practice, then identifying relevant effective solutions for them, that directly relate to the principle of inevitability of criminal liability.

Բանալի բառեր՝ *մասնավոր մեղադրանք, դիմողի (տուժողի) բողոք, քրեական վարույթ նախաձեռնել, քրեական գործ հարուցել, քրեական գործի հարուցումը մերժել, չարդարացնող հիմք, քրեական պատասխանատվությունից և պատժից ազատել, անմեղության կանխավարկած, տուժողի իրավունքներն ու օրինական շահերը:*

Ключевые слова: *частное обвинение, заявление подателя (жертвы), инициирование уголовного процесса, возбуждение уголовного дела, отказ в возбуждении уголовного дела, освобождение от уголовной ответственности и наказания на неоправдывающих основаниях, презумпция невиновности, законные права и интересы жертвы.*

Key words: *private prosecution, complaint of the applicant (victim), initiation of criminal proceedings, to institute criminal proceedings, to decline the institution of criminal proceedings, to exclude criminal liability and punishment based on the not justifying grounds, presumption of innocence, legitimate rights and interests.*

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Անի Դանիելյան[1]

Նախնական դատական վերահսկողության առարկայի շրջանակների հարցի կարևորությունը պայմանավորված է դրա հետ հարաբերակցվող մի շարք արժեքներով ու սկզբունքներով, ինչպիսիք են մի կողմից՝ անձի հիմնական իրավունքների շրջանակի, դրանց պաշպանվածության բավարար աստիճանի որոշումը, համապատասխան ոլորտներում պետության քաղաքականությունը և առաջնահերթությունների շրջանակը, մյուս կողմից՝ դատարանի ծանրաբեռնվածությունը, քննիչի դատավարական ինքնուրույնության արժևորման աստիճանը, քրեադատավարական գործառույթների տարանջատման սկզբունքի տեսանկյունից հսկողություն իրականացնող դատախազի փոխարինման անթույլատրելիությունը:

Որպես քննարկվող գործունեության **առարկա** կարող ենք դիտարկել անձի հիմնական իրավունքները սահմանափակող դատավարական և այլ գործողությունների կատարման թույլատրելիության հարցը: Այս կապակցությամբ նշենք, որ ՀՀ օրենսդրությամբ նախնական վերահսկողության առարկայի շրջանակներում ընդգրկված են հետևյալ խմբերի[2] գործողությունների կատարման թույլատրելիության հարցերը.

1. հարկադրանքի միջոցներ.

- կալանքը որպես խափանման միջոց կիրառելը, դրա ժամկետի երկարացումը (Օրենսգրքի 11-րդ հոդվածի 3-րդ մաս, 280-րդ հոդված),

- կասկածյալներին, մեղադրյալներին և այն անձանց, որոնց հոգեկան վիճակը թույլ չի տալիս նրանց ներգրավել որպես մեղադրյալ, բժշկական հաստատությունում տեղավորելը՝ դատահոգեբանական, դատահոգեբուժական կամ դատաբժշկական փորձաքննություն կա-

[1] ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ս. Ղազինյան:

[2] Որպես հիշյալ խմբերի առանձնացման չափանիշ հիմք ենք ընդունել գործողության տեսակը:

տարելու համար (Օրենսգրքի 11-րդ հոդվածի 3-րդ մաս, 280-րդ հոդված),

- որպես անվտանգության միջոց՝ անձին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը (Օրենսգրքի 459-րդ հոդված),

- որպես խափանման միջոց՝ գրավի գումարը պետության եկամուտ դարձնելը (Օրենսգրքի 13-րդ հոդվածի 3-րդ մաս, 143-րդ հոդվածի 6-րդ մաս),

2. քննչական գործողություններ.

- բնակարանի խուզարկությունը (Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մաս, 279-րդ հոդված),

- նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակմանը առնչվող քննչական գործողությունները (Օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մաս, 279-րդ հոդված), այն է՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներ վերահսկելը (Օրենսգրքի 239-րդ հոդված), հեռախոսային խոսակցությունները լսելը (Օրենսգրքի 241-րդ հոդված),

- բանկային, ապահովագրական, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունները և առգրավումները (Օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.1-3.2-րդ մասեր, 279-րդ հոդված),

3. այլ դատավարական գործողություններ.

- վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն ստանալը (Օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.3-րդ մաս),

- սեփականության հարկադիր օտարման հանգեցնող դատավարական գործողությունները (Օրենսգրքի 13-րդ հոդվածի 3-րդ մաս),

- լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաև լրագրողին տեղեկատվության աղբյուրի բացահայտումը պարտավորեցնելը («Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մաս),

4. օպերատիվ-հետախուզական միջոցառումներ.

- արտաքին դիտում, եթե արտաքին դիտման արդյունքների գրանցումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթա-

դրել դրա անցկացման հնարավորության մասին,

- ներքին դիտում,

- նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում,

- հեռախոսային խոսակցությունների վերահսկում,

- ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում,

- կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում («Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մաս)[1]:

5. իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը կամ նրան ազատությունից զրկելը[2]:

Նախնական դատական վերահսկողության ինստիտուտի ծագումը ավանդաբար կապվում է անգլիական Հաբեաս Կորպուս (Habeas Corpus) ինստիտուտի հետ, որն առաջին անգամ իր արտահայտությունն է գտել 1215 թվականի Մագնա կարտայում: Հիշյալ ինստիտուտն ուղղված էր անձի անձնական ազատության երաշխավորմանը և նախատեսում էր, որ որևէ ազատ անձ չի կարող բանտարկվել առանց «հաբեաս կորպուս» հրամանի, որով դատարանը կարգադրել է մեղադրյալին բերել իր մոտ: Այսինքն՝ ի սկզբանե նախնական դատական վերահսկողությունն ուղղված է եղել անձի անձնական ազատության իրավունքը երաշխավորելուն, և դրա առարկան կազմել է հիշյալ իրավունքը սահմանափակող գործողությունների թույլատրելիությունը: Առ այսօր էլ միջազգային իրավական փաստաթղթերի ծանրակշիռ մեծամասնությունը (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948 թ.), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (1950 թ.), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիր (1966

[1] Նախնական դատական վերահսկողության առարկայի տարրերը կքննարկվեն աշխատանքի հետագա շարադրանքում:

[2] Սույն աշխատության մեջ նախնական դատական վերահսկողության հիշյալ տեսակը չենք ուսումնասիրել, քանի որ այն առավելապես ընդգրկված է իրավունքի այլ ճյուղերի կարգավորման ոլորտում:

թ.) և այլն) նման կառուցակարգի առկայությունը պարտադիր է համարում վկայակոչված իրավունքի սահմանափակումների առանձին դեպքերի կապակցությամբ: Միջազգային փաստաթղթերի հիման վրա գործող միջազգային մարմինների (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի) գործունեության հետևանքով վերահսկողության առարկայի շրջանակներում է ընդգրկվել նաև լրագրողական գաղտնիքը բացահայտելուն պարտավորեցնելու պատճառով արտահայտվելու ազատության սահմանափակումը: Միևնույն ժամանակ նույն մարմինները շարունակաբար ընդգծում են նախնական դատական վերահսկողության՝ որպես անձի իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ միջոցի նշանակությունը նաև այլ հիմնական իրավունքների սահմանափակման հարցում: Այսինքն՝ անձի իրավունքների սահմանափակման մյուս դեպքերի նկատմամբ նախնական դատական վերահսկողության նախատեսումը թողնված է պետության հայեցողությանը: Հիշյալ դիտանկյունից կարող ենք փաստել, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է նախնական դատական վերահսողության առարկայի հարաբերականորեն ընդգրկուն շրջանակ՝ ներառելով նաև անձի անձնական կյանքի, այդ թվում՝ բնակարանի անձեռնմխելիության, սեփականության իրավունքների սահմանափակման դեպքերը:

Իրավաբանական գրականության մեջ առկա է մոտեցում՝ վերահսկողության առարկայի շրջանակների էլ ավելի ընդլայնման անհրաժեշտության մասին: Մասնավորապես, առաջարկներ են արվել դրա շրջանակներում ընդգրկել քննումը[1], հետազոտության համար նմուշներ վերցնելը[2], բնակարանում ցանկացած քննչական գործողության կատարումը, որն իրականացվում է դրանում բնակ-

[1] Տե՛ս ***Лазарева В.А.***, նշված աշխատությունը, էջ 24, ***Аширбекова М.Т., Кудин Ф.М.***, Принцип публичности в российском досудебном производстве по уголовным делам (содержание и формы реализации): Монография, Волгоград, 2007, էջ 143:

[2] Տե՛ս ***Булатов Б.Б.,*** Меры уголовно-процессуального принуждения, М., «Спарк», 2003, էջ 65:

վող անձանց կամքին հակառակ[1]: Հեղինակների մի մասն էլ հիշյալ քննչական գործողությունները նախնական դատական վերահսկողության առարկայի շրջանակներում դասելը սահմանափակում է դրանք անձի կամքին հակառակ իրականացվելու դեպքերով[2]:

Նախնական դատական վերահսկողության առարկայի շրջանակները որոշելու համար անհրաժեշտ է առանձնացնել հստակ չափանիշներ, հակառակ դեպքում դրա շրջանակներում այս կամ այն գործողության ներառումը կլինի ինքնանպատակ՝ հանգեցնելով մինչդատական վարույթն իրականացնող մարմինների լիազորությունների չարդարացված նեղացման, գործի քննության դատավարական ձևի անհարկի բարդացման, քրեական դատավարությունում դատարանի դերի խեղաթյուրման, պետական ռեսուրսների անտեղին ծախսի:

Տեսության մեջ որպես այդպիսի չափանիշներ առանձնացվում են.

ա) անձի սահմանադրական իրավունքների սահմանափակման էականությունը,

բ) այնպիսի հետևանքների առաջացման հնարավորությունը, որոնք դուրս են գալիս քրեադատավարական հարաբերությունների շրջանակներից,

գ) խախտված սահմանադրական իրավունքների վերականգնման անհնարինությունը հետագա դատական վերահսկողության կամ դատական քննության միջոցով[3]:

Վերոհիշյալի առնչությամբ նշենք, որ քրեադատավարական իրավահարաբերությունների շրջանակներում անձի սահմանադրական իրավունքներից յուրաքանչյուրի սահմանափակման հետևանքներն այսպես թե այնպես կարող են դուրս գալ այդ հա-

---

[1] Տե՛ս ***Матвиенко И.В.,*** Меры уголовно-процессуального принуждения, ограничивающие право на неприкосновенность жилища, при расследовании преступлений: Автореф. дис. канд. юрид. наук, М., 2000, էջ 20:

[2] Տե՛ս ***Петрухин И.Л.,*** Свобода личности и уголовно-процессуальное принуждение. Общая концепция. Неприкосновенность личности, М., 1985, էջ 3, ***Азаров В.А., Таричко И.Ю.,*** Функция судебного контроля в истории, теории и практике уголовного процесса России: Монография, Омск, Омский гос. университет, 2004, էջ 161-163:

[3] Տե՛ս ***Химичева О.В.***, նշված աշխատությունը, էջ 290-291:

բաբերությունների շրջանակներից՝ տարածվելով անձի անձնական կյանքի այլ բնագավառների վրա, քանի որ անձի իրավունքները փոխկապակցված և փոխպայմանավորված համակարգ են կազմում, իսկ նման համակարգի տարրերից մեկի փոփոխությունն անհրաժեշտաբար ազդում է մյուս տարրերի վրա: Ինչ վերաբերում է հետագա դատական վերահսկողության կամ դատական քննության շրջանակներում խախտված իրավունքի վերականգնման անհնարինությանը, ապա «իրավունքների վերականգնում» հասկացությունը հավասարապես կիրառելի է ինչպես մինչև իրավունքի խախտումը եղած վիճակի վերականգնման *(restitution in integrum)*, այնպես էլ արդարացի հատուցում տրամադրելու *(just satisfaction)* միջոցի նկատմամբ: Այսպիսով՝ անհնարին է պատկերացնել իրավունքների խախտման այնպիսի դեպք, որը հիշյալ միջոցներից որևէ մեկով հնարավոր չլինի վերականգնել: Բացի այդ՝ հարկ է նկատել, որ հիշյալ չափանիշներն ինքնին կախվածության մեջ են գտնվում այլ՝ ավելի ընդհանրական մակարդակի չափանիշներից, հետևաբար դրանք չեն կարող գնահատվել որպես սպառիչ չափանիշներ և պատշաճորեն ծառայել դատական վերահսկողության առարկայի շրջանակի ճիշտ որոշմանը:

Վերոհիշյալի հաշվառմամբ կարծում ենք, որ նախնական դատական վերահսկողության առարկայի չափանիշները պետք է առանձնացնել երկու հարթություններում՝ ընդհանուր (ռազմավարական) և մասնավոր:

Մեր պատկերացմամբ՝ առաջին հարթությունը պետք է ներառի.

ա) համապատասխան իրավունքի պաշտպանության ոլորտում միջազգային քաղաքականությունը, մասնավորապես՝ տվյալ ժամանակաշրջանում կոնկրետ իրավունքի՝ միջազգային հանրությունում արժևորման աստիճանը.

բ) համապատասխան իրավունքի պաշտպանության ոլորտում պետության քաղաքականությունը, մասնավորապես՝ տվյալ պետությունում կոնկրետ իրավունքի արժևորման աստիճանը և դրա սահմանափակման ոլորտում գործնականում թույլ տրվող չարաշահումների և կամայականությունների մակարդակը: Հիշյալ չափանիշի շրջանակներում ոչ պակաս կարևոր գործոն է պետության նյութական ռեսուրսների գնահատումը: Չնայած հիշյալ գործո-

նը չի կարող արդարացնել անձի իրավունքների ապահովման պարտականության կատարման տեսանկյունից պետության թերացումները, սակայն իրավունքների պաշտպանության նվազագույն չափանիշներից բարձր չափանիշներ նախատեսելու հարցը քննարկելիս այն պետք է պատշաճ գնահատականի արժանանա, որպեսզի չտուժի համապատասխան երաշխիքի արդյունավետությունը:

Երկրորդ հարթությունում պետք է առանձնացնել հետևյալ չափանիշները.

ա) սահմանափակման ենթակա իրավունքի բնույթը, մասնավորապես՝ որպես այդպիսին կարող են հանդես գալանձի հիմնական իրավունքները.

բ) իրավունքի սահմանափակման աստիճանը:

Վերջինիս գնահատման համգամանքներից են նաև սահմանափակման հնարավոր հետևանքները և դրանց ազդեցության հատույթը:

Ընդ որում անհրաժեշտ է նկատել, որ երկրորդ հարթությունում առանձնացված չափանիշները ուղղակիորեն պայմանավորված են առաջին հարթությունում խմբավորված չափանիշներով և պետք է գործեն համակարգային սկզբունքով: Այսպես՝ այս կամ այն իրավունքը հիմնական իրավունքների շարքին դասելը, ինչպես նաև կոնկրետ միջամտության տեսակը, իրավունքի սահմանափակման համապատասխան աստիճանի գնահատումը ուղղակիորեն պայմանավորված են ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական քաղաքականությամբ:

Վերոհիշյալ չափանիշներից ելնելով՝ նշենք, որ միազգային քաղաքականության իմպերատիվ պահանջն է անձի ազատության իրավունքի սահմանափակման առանձին դեպքերի, ինչպես նաև լրագրողական գաղտնիքի բացահայտմանը պարտավորեցնելու նկատմամբ նախնական դատական երաշխիքի նախատեսումը: Բացի այդ՝ նման երաշխիքի առկայությունը ողջունելի է հատկապես գաղտնի քննչական գործողությունների կատարման առումով:

Ինչ վերաբերում է ներպետական քաղաքականությանը, ապա Սահմանադրությամբ տվյալ հարթությունում առանձնացվում է ազատության իրավունքի, անձնական կյանքի, այդ թվում՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի, ինչպես նաև սեփակա-

նության իրավունքի սահմանափակման նկատմամբ նախնական դատական վերահսկողության նախատեսումը:

Այսինքն՝ գործող օրենսդրությունը նախնական դատական վերահսկողության առարկայի սահմանման տեսանկյունից համապատասխանում է միջազգային չափանիշներին, սակայն պետք է նշել, որ որոշ դեպքերում այն հակասում է Սահմանադրությանը (օրինակ՝ Օրենսգրքով նախատեսված չէ սեփականության իրավունքից զրկվելու դեպքերի նկատմամբ նախնական դատական վերահսկողություն) կամ չի համապատասխանում որոշակիության չափանիշին (օրինակ՝ Օրենսգրքով նախատեսված չեն անձին բժշկական հաստատությունում տեղավորելու հարկադրանքի միջոցի նկատմամբ դատական վերահսկողության ընթացակարգերը): Ընդգծենք նաև, որ օրենսդիրը կաշկանդված չէ հիշյալ իրավունքների, ինչպես նաև դրանց սահմանափակումների դրսևորումները ընդլայնելու հարցում:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախնական դատական վերահսկողության առարկայի շրջանակներում են ընդգրկվել հարկադրանքի միջոցներից տնային կալանք և վարչական վերահսկողություն խափանման միջոցները (284-րդ հոդված), ապացուցողական գործողություններից՝ բնակարանում առգրավումը և դեպքի վայրի՝ զննություն չհամարվող զննությունը, ինչպես նաև անձի համաձայնության բացակայության դեպքում բնակարանում կատարման ենթակա այլ քննչական գործողությունները (բացառությամբ դեպքի վայրի զննության), բժշկական գաղտնիք պարունակող փաստաթղթերի առգրավումը (26-րդ, 291-րդ հոդվածներ): Միևնույն ժամանակ նախնական դատական վերահսկողության առարկայի շրջանակներից դուրս են մնացել գրավի գումարը պետության եկամուտ դարձնելը և լրագրողական գաղտնիքի բացահայտմանը պարտավորեցնելը:

Գրավի գումարը պետության եկամուտ դարձնելու նկատմամբ նախնական դատական վերահսկողության բացառումը չի հակասում ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական քաղաքականությանը, քանի որ այն սեփականությունից զրկելու հասկացության շրջանակներում չի ներառվում: Ինչ վերաբերում է լրագրողական գաղտնիքի բացահայտմանը պարտավորեցնելուն, ապա դրա

կապակցությամբ միջազգային չափանիշների և փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն, որպես ընդհանուր կանոն, չի թույլատրվում, սակայն բացառիկ դեպքերում օրենքով սահմանված հիմքերով և կարգով կարող է թույլատրելի համարվել: Ընդ որում, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն, լրագրողական գաղտնիքի բացահայտմանը պարտավորեցնելը, որպես կանոն, պետք է լինի նախնական դատական վերահսկողության առարկա, հակառակ դեպքում քննարկվող արտոնության երաշխիքային բնույթը կլիմաստազրկվի[1]: Նման պայմաններում նախնական դատական վերահսկողության առարկայի շրջանակներից այն բացառելու մոտեցումն ընդունելի չենք համարում:

Նախագծի լրամշակման հետևանքով նախնական դատական վերահսկողության առարկայի շրջանակներում ներառվել է բժշկական գաղտնիք պարունակող փաստաթղթերի առգրավումը: Բժշկական գաղտնիք կազմող տեղեկատվության բացահայտման նկատմամբ նախնական դատական վերահսկողության պարտադիր պահանջ սահմանված չէ ինչպես Եվրոպական դատարանի[2], այնպես էլ միջազգային այլ կառույցների կողմից: Սակայն Ավիլկինան և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանը դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ դատախազի տիրապետության տակ անցնելուց հետո բժշկական գաղտնիք կազմող տեղեկատվության բացահայտման իրավաչափությունը բողոքարկելու հնարավորությունը դիմումատուին չի ապահովել հիշյալ տեղեկատվության անօրինական հրապարակման դեմ բավարար երաշխիք: Վերջին դիրքորոշումը հիմնված է համապատասխան ժամանակահատվածում ՌԴ-ում գործող այն օրենսդրական կարգավորման և դատական մեկնաբանման վրա, որ բժշկական գաղտնիք կազմող տեղեկատվություն պահանջելու դատախազի լիազորության և անձանց, որոնց վերաբերյալ կարող են ստացվել նման տեղեկություններ, շրջանակի սահմանափակումներ նախատեսված չեն: Նույն վճռով Եվրոպական դատարանը հաշ-

[1] Տե՛ս *Sanoma Uitgevers B.V. v. the Netherlands* գործով 14.09.2010 թ. վճիռը, կետեր 90-92:

[2] Տե՛ս, օրինակ, *Z v. Finland* գործով 25.02.1997 թ. վճիռը, գանգատ՝ թիվ 22009/93, կետ 108:

վի է առել նաև այն, որ մինչև բժշկական գաղտնիքի բացահայտմանը պարտավորեցնելու որոշում կայացնելը դիմումատուին հնարավորություն չի տրվել առարկելու կամ համաձայնելու դրան[1]: Չնայած հիշյալ վճռով Եվրոպական դատարանը ուղղակիորեն չի նշել նախնական դատական վերահսկողության երաշխիքի պարտադիրությունը, սակայն դրանից կարելի է կանխատեսումներ անել նման երաշխիքի անհրաժեշտության վերաբերյալ: Վերջինս բխում է նաև համասեռ հարաբերությունների կարգավորման դատավարական ձևի միասնականության ապահովման անհրաժեշտությունից, քանի որ անձի անձնական կյանքի անձեռնմխելիության և վստահության վրա հիմնված կոնկրետ գործունեություն իրականացնող մարմինների բնականոն աշխատանքի ապահովմանն ուղղված նոտարական, ապահովագրական, բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության դեպքում նախատեսված է նախնական դատական վերահսկողություն:

Անդրադառնալով տնային կալանք խափանման միջոցի նկատմամբ նախնական դատական վերահսկողության սահմանմանը՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունից հետևում է, որ տնային կալանքը դիտարկվում է ազատությունից զրկելու կալանքին համահավասար դրսևորում[2], հետևաբար դրա նկատմամբ նախնական դատական վերահսկողությունը նույնպես պարտադիր է: Ինչ վերաբերում է վարչական հսկողությանը, ընդհանուր առմամբ այն անձի ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման միջոց է, սակայն որոշակի հանգամանքների առկայության դեպքում կարող է վերաճել նաև ազատության իրավունքի սահմանափակման, մասնավորապես՝ օրվա որոշակի ժամերին բնակության տարածքը լքելու արգելքի սահմանման դեպքում: Ավելին՝ Նախագծով նախատեսվում է էլեկտրոնային հատուկ միջոցներով վերահսկողություն իրականացնելու հնարավորություն, որն իրավունքի սահմանափակման հարաբերականորեն խիստ միջոց է: Վերջինիս վերաբերյալ ձևավորված միջազգային չափանիշներով ընդունելի է համարվում դրա

[1] Տե՛ս *Avilkina and others v. Russia* գործով 06.06.2013 թ. վճիռը, գանգատ՝ թիվ 1585/09, կետեր 48-52:

[2] Տե՛ս, օրինակ, *Buzadji v. the Republic of Moldova* գործով 05.07.2016 թ. վճիռը, գանգատ՝ թիվ 23755/07:

նկատմամբ ինչպես նախնական, այնպես էլ հետագա դատական վերահսկողությունը[1]: Սակայն, հաշվի առնելով, որ էլեկտրոնային վերահսկողության կիրառումը՝ որպես խափանման միջոցի տարր, նորույթ պետք է լինի հայ իրականության համար, հետևաբար դրա չափանիշների մշակման և իրավաչափ կիրառման տեսանկյունից ընդունելի է այն նախնական դատական վերահսկողության առարկայի շրջանակներում ներառելու մոտեցումը:

Բնակարանում կատարվող առգրավման և այլ քննչական գործողությունների նկատմամբ նախնական դատական վերահսկողություն նախատեսելու Նախագծի մոտեցումը ՀՀ-ում առկա իրականության, հատկապես դատարանների ծանրաբեռնվածության խնդրի, դրա լուծման գործուն ռազմավարության և նյութական ռեսուրսների բացակայության պայմաններում արդարացված չենք համարում: Վերջինս կարող է ունենալ հակառակ ազդեցությունը՝ հանգեցնելով դատական վերահսկողության ձևականացման և այլ իրավունքների երաշխավորման տեսանկյունից դրա որակի անկման:

Անդարադառնալով օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ նախնական դատական վերահսկողությանը՝ նշենք, որ ՕՀՄ-ների քննարկվող շրջանակի ուսումնասիրությունից հետևում է, որ դրանք հիմնականում անձի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի, այդ թվում՝ նամակագրության գաղտնիության և բնակարանի անձեռնմխելիության իրավունքների միջամտության միջոցներ են: Այս տեսանկյունից անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե արդյոք կաշառք տալու կամ կաշառք ստանալու ՕՀՄ-ն համապատասխանո՞ւմ է քննարկվող չափանիշին:

«ՕՀԳ-ի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ կաշառք տալու կամ կաշառք ստանալու նմանակում օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները հավաստվում են բացառապես տեսանկարահանման կամ ձայնագրման միջոցով, ընդ որում՝ տեսանկարահանումը կամ ձայնագրումը անձի բնակարանում իրականացվում է բացառապես դատարանի որոշմամբ:

[1] Տե՛ս Նախարարների կոմիտեի՝ 19.02.2014 թ. «Էլեկտրոնային մոնիթորինգի վերաբերյալ» թիվ CM/Rec(2014)4 հանձնարարականի 3-րդ սկզբունքի 2-րդ մասը:

Ստացվում է, որ որոշ դեպքերում կաշառքի նմանակում ՕՀՄ բացկացուցիչ մաս է նաև ներքին դիտում ՕՀՄ-ն, ընդ որում՝ հատուկ ընդգծվում է բացառապես դատարանի որոշմամբ անձի բնակարանում տեսանկարահանում կամ ձայնագրում իրականացնելու մասին: *Փաստորեն, այն դեպքերում, երբ կաշառքի նմանակում ՕՀՄ բացկացուցիչ մաս է ներքին դիտում ՕՀՄ-ն, դատարանի թույլտվությունը պետք է վերաբերի ինչպես կաշառքի նմանակում, այնպես էլ ներքին դիտում ՕՀՄ-ներին:* Այս պայմաններում ակնհայտ է, որ տվյալ ՕՀՄ-ի նախատեսումը կապված չէ անձի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի երաշխավորման հետ:

Հետաքրքրական է, որ Եվրոպական դատարանը, ընդգծելով կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտությունը և այդ գործում քննության հատուկ մեթոդների, մասնավորապես՝ գաղտնի գործակալների մասնակցությամբ գաղտնի միջոցառումների իրականացման թույլատրելիությունը, միևնույն ժամանակ գտել է, որ ոստիկանական սադրանքի դեպքերի բացառման նպատակով այդ մեթոդների կիրառումը պետք է իրականացվի հստակ սահմաններում՝ ողջամիտ և բավարար երաշխիքների ապահովմամբ, ինչպիսին է համապատասխան միջոցառման կատարումը թույլատրելու, այն իրականացնելու և դրա նկատմամբ վերահսկողության հստակ ու կանխատեսելի ընթացակարգերի նախատեսումը[1]: Մի շարք գործերով Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում է արձանագրել, մասնավորապես՝ այն հիմքով, որ գաղտնի միջոցառումը թույլատրվել է այն մարմնի հասարակ վարչական որոշմամբ, որը հետագայում իրականացրել է տվյալ միջոցառումը, և դրա նկատմամբ բացակայել է դատական կամ այլ անկախ մարմնի վերահսկողությունը[2]: Գաղտնի միջոցառման նկատմամբ վերահսկողության կապակցությամբ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ դատական վերահսկողությունն առավել համապատասխան երաշխիք կարող է հանդիսանալ՝ այնուամենայնիվ նշելով, որ համապա-

[1] Տե՛ս *Ramanauskas v. Lithuania* գործով 05.02.2008 թ. վճիռը, գանգատ՝ թիվ 74420/01, կետեր 50-53:

[2] Տե՛ս *Vanyan v. Russia* գործով 15.12.2005 թ. վճիռ, գանգատ՝ թիվ 53203/99, կետեր 46-47, *Khudobin v. Russia* գործով 26.10.2006 թ. վճիռ, գանգատ՝ թիվ 59696/00, կետ 135, *Bannikova v. Russia* գործով 04.11.2010 թ. վճիռը, գանգատ՝ թիվ 18757/06, կետեր 49-50:

տասխան ընթացակարգերի և երաշխիքների առկայության դեպքում հսկողական այլ միջոցները, ինչպիսին է, օրինակ, դատախազական հսկողությունը, նույնպես կարող են կիրառվել[1]: Ի կատարումն Եվրոպական դատարանի վերոնշյալ դիրքորոշումների՝ որոշ երկրներ իրենց օրենսդրություններում նախատեսել են քննարկվող գործողությունների կատարման նկատմամբ նախնական դատական վերահսկողության համակարգ[2]:

Վերոնշյալի հաշվառմամբ գտնում ենք, որ կաշառքի նմանակում ՕՀՄ-ի ներառումը նախնական դատական վերահսկողության առարկայի շրջանակներում պայմանավորված է հնարավոր սադրանքի դեպքերի կանխման անհրաժեշտությամբ, որն ընդգրկվում է անձի արդար դատաքննության իրավունքի շրջանակում: Նման մոտեցումը միտված է Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված չափանիշներին:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Եվրոպական դատարանի դիրքորոշումներում որևէ տարբերակում չկա գաղտնի գործակալների մասնակցությամբ իրականացվող գաղտնի միջոցառման տեսակի կամ այն հանցագործության տեսակի վերաբերյալ, որի բացահայտման նպատակով դրանք իրականացվում են: Այլ խոսքով՝ Եվրոպական դատարանի ձևավորած չափանիշների տեսանկյունից նախնական դատական վերահսկողությունը որպես առավել ընդունելի երաշխիք է գնահատվում ինչպես կաշառքի նմանակում, այնպես էլ վերահսկելի մատակարարում և գնում, գաղտնի գործակալների ներդրում և նմանաբնույթ այլ գաղտնի միջոցառումների իրականացման դեպքում:

Հետաքրքրական է, որ ՌԴ «ՕՀԳ-ի մասին» օրենքով (8-րդ հոդվածի 2-րդ մաս) դատական վերահսկողության առարկայի շրջանակները սահմանափակված են անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության, ինչպես նաև բնակարանի անձեռնմխելիության իրավունքների սահմանափակմանը առնչվող ՕՀՄ-ներով: Ինչ վերաբերում է հսկիչ գնում (նմանաբովանդակ է «ՕՀԳ-ի մասին» ՀՀ օրեն-

[1] Տե՛ս *Milinienė v. Lithuania* գործով 24.06.2008 թ. վճիռը, գանգատ՝ թիվ 74355/01, կետ 39:

[2] Տե՛ս Committee of Ministers, Resolution ResDH(2001)12, 26 February 2001, Resolution CM/ResDH(2011)231, 1 October 2008:

քով նախատեսված վերահսկելի մատակարարում և գնում ՕՀՄ-ին[1]), օպերատիվ ներդրում, օպերատիվ փորձարարություն (ընդգրկում է նաև «ՕՀԳ-ի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կաշառք տալու և կաշառք ստանալու նմանակում ՕՀՄ-ն[2]) ՕՀՄ-ներին, ապա ՌԴ օրենսդիրը դրանց իրականացման համար բավարար է համարում ՕՀԳ իրականացնող մարմնի ղեկավարի կողմից հաստատված որոշումը՝ չնայած այն իրողությանը, որ Եվրոպական դատարանը Ռուսաստանի դեմ կայացված մի շարք որոշումներում[3] հատուկ ընդգծել է նշված ՕՀՄ-ների նկատմամբ դատական կամ այլ անկախ մարմնի վերահսկողության անհրաժեշտության մասին:

Վերոնշյալի հաշվառմամբ անհասկանալի է օրենսդրի և Նախագծի՝ վերահսկելի մատակարարում ու օպերատիվ ներդրում ՕՀՄ-ները նախնական դատական վերահսկողության առարկայի շրջանակներում չընդգրկելու տրամաբանությունը, այն դեպքում, երբ կաշառքի նմանակում ՕՀՄ-ն նախատեսված է այդ շրջանակներում: Այս կապակցությամբ *առաջարկում ենք դատական վերահսկողության առարկայի շրջանակներում ներառել նաև վերահսկելի մատակարարում և գնում, օպերատիվ ներդրում ՕՀՄ-ների իրականացումը, ինչպես նաև քննարկվող միջոցառումները նախատեսել որպես գաղտնի քննչական գործողություններ:*

ՕՀԳ-ի նկատմամբ դատական վերահսկողության հարաբերությունները կանոնակարգված են Օրենսգրքի և «ՕՀԳ-ի մասին» ՀՀ օրենքի նորմերով: Օրենսգրքի 281-րդ հոդվածի տառացի մեկնաբանումից հետևում է, որ դատական վերահսկողության առարկա են *միայն* այն ՕՀՄ-ները, որոնք կապված են քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հետ, իսկ դրանց տեսակները նախատեսված են «ՕՀԳ-ի մասին» ՀՀ օրենքով: «ՕՀԳ-ի մասին» ՀՀ օրենքի 34-

---

[1] Տե՛ս ***Алексеев А.И., Вагин О.А., Закаляпин Д.В.*** и др., Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности» (постатейный), под ред. ***А.И. Алексеева, В.С. Овчинского***, Москва, Проспект, 2011, էջ 38:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 47:

[3] Տե՛ս *Vanyan v. Russia, Khudobin v. Russia, Bannikova v. Russia* գործերով վկայակոչված որոշումները:

րդ հոդվածի համաձայն՝ դատական վերահսկողության առարկան են կազմում նաև ներքին դիտումը[1], ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը, ինչպես նաև արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումը, եթե արտաքին դիտման արդյունքների գրանցումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին: Այսինքն՝ դրանց շրջանակում ընդգրկված են նաև ՕՀՄ այնպիսի տեսակներ, որոնք, ինչպես նշեցինք, կապված չեն քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հետ: Միևնույն ժամանակ «ՕՀԳ-ի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ այդ միջոցառումների նկատմամբ դատական վերահսկողության վարույթի առանձին կարգ, այլ ընդամենը նախատեսված է, որ ՕՀԳ իրականացնող մարմնի ղեկավարը համապատասխան միջնորդությունը դատարան է ներկայացնում **Օրենսգրքով սահմանված կարգով** («ՕՀԳ-իմասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մաս):

Այսինքն՝ դատական վերահսկողության առարկա հանդիսացող ՕՀՄ-ների շրջանակի առնչությամբ Օրենսգրքի 281-րդ և «ՕՀԳ-ի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածների միջև առկա է հակասություն, որի արդյունքում բացակայում են «ՕՀԳ-ի մասին» ՀՀ օրենքով նախատեսված և անձանց հիմնարար իրավունքները սահմանափակող մի շարք ՕՀՄ-ներ իրականացնելու նկատմամբ նախնական դատական վերահսկողության ընթացակարգը սահմանող նորմեր, ինչն էականորեն վտանգում է անձանց իրավունքները՝ չհամապատասխանելով նաև այդպիսի գաղտնի գործողությունների իրականացման համար նախատեսված միջազգային չափանիշներին: Վերջինիս համատեքստում նշենք, որ դատարաններն են փաստացի քննարկում են նման միջնորդությունները, սակայն նման պրակտիկան չի համապատասխանում անձի իրավունքների

[1] Եթե կատարվում է առանց տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով դիտման արդյունքների գրանցման:

սահմանափակման օրինականության չափանիշին: Հիշյալ օրենսդրական հակասությունը ենթակա է հրատապ վերացման, քանի որ վտանգում է ինչպես անձանց հիմնարար իրավունքների պաշտպանությունը, այնպես էլ հանցավորության դեմ պայքարի պետության քաղաքականության արդյունավետությունը:

ОТДЕЛЬНЫЕ ВОПРОСЫ ПРЕДМЕТА ПРЕДВАРИТЕЛЬНОГО СУДЕБНОГО КОНТРОЛЯ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

Ани Даниелян
Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

В данной статье анализируется важность вопроса предмета первоначального судебного контроля, обусловленного несколькими ценностями и принципами, взаимодействующими с ним, такими как определения основных прав человека, необходимого уровня защиты прав человека, государственная политика и приоритеты в соответствующих областях, с одной стороны, и судебная нагрузка, степень процессуальной независимости следователя и недопустимость замены надзирающего прокурора, с другой стороны.

В этом контексте мы предложили критерии для определения надлежащего объема предмета первоначального судебного контроля, проанализировали существующий объем предмета и его соответствие разработанным критериям.

SOME ISSUES ON THE SCOPE OF SUBJECT OF INITIAL JUDICIAL CONTROL OVER PRE-TRIAL PROCEEDINGS IN THE RA CRIMINAL PROCESS

Ani Danielyan
PHD student of the YSU chair of Criminal procedure and Criminalistics

The importance of the issue of the scope of initial judicial control is conditioned by the several values and principals interacting with it, such as desision of the scpoe of the basic human rights, the neccessary level of the latters protection, state policy and priorities in the revelant fields, and judicial workload, the importance of investigator's procedural

independence and forbiddance of replacement of the supervising prosecutor, from the other hand.

In that context the auther has tried to suggest criteria for desiding the proper scope of the subject of the initial judicial control, analized the existing scope of subject and its fittnes to the elaborated criteria.

Բանալի բառեր՝ *նախնական դատական վերահսկողություն, առարկայի շրջանակ, միջազգային չափանիշներ, պետական քաղաքականություն, մարդու հիմնական իրավունքներ, գաղտնի քննչական գործողություններ:*

Ключевые слова: *первоначальный судебный контроль, предмет первоначального судебного контроля, международные стандарты, государственная политика, основные права человека, тайные следственные мероприятия.*

Key word: *initial judicial control, scope of subject, international standards, state policy, basic human rights, secret investigative measures.*

ԲԺՇԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Առնոլդ Վարդանյան[1]

Ելնելով քրեական օրենքով արգելված արարքի կատարման և անձի հոգեկան հիվանդության ծագման պահերի հարաբերակցությունից՝ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրքը տարբերում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հատուկ վարույթի երկու տեսակ՝ ա) անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ և բ) դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ։ Այսինքն՝ օրենսդիրը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հատուկ վարույթի վերոնշյալ տեսակների սահմանազատման հիմքում դնում է անձի՝ հոգեկան հիվանդությամբ հիվանդանալու պահը՝ ըստ այդմ նախատեսելով քրեական օրենքով արգելված արարքը կատարելու պահին մեղսունակությունը բացառող հոգեկան հիվանդությամբ տառապող կամ քրեական օրենքով արգելված արարքը կատարելուց հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթներ։

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի քրեադատավարական մոդելի պատմական զարգացման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ վարույթը, քրեական օրենքով արգելված արարքի կատարման և անձի հոգեկան հիվանդության ծագման պահերի հարաբերակցությունից կախված, սկսել է տարբերակվել ԱՊՀ անդամ պետությունների՝ 1996 թվականի փետրվարի 17-ի քրեական դատավարության մոդելային օրենսգրքի ընդունմամբ։ Մինչ այդ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հատուկ վարույթի առանձին տեսակներ չեն նախատեսվել։ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության՝ 1961 թվականի քրեական դատավարության

[1] ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Հ. Ղուկասյան։

օրենսգրքի 29-րդ գլխում[1] առաջին անգամ միասնական կարգավորում ստացան բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմանը առնչվող հարաբերությունները[2]: Նշված վարույթն օրենսգրքում ունիֆիկացված էր, և անձի հոգեկան հիվանդության ծագման պահը ոչ թե հատուկ վարույթի առանձին տեսակներ սահմանելու նախապայման էր, այլ ընդամենը հիմք էր, կախված հիվանդության ծագման պահից, հատուկ վարույթի սահմանները, ապացուցման առարկան տարբերակելու համար: Այնինչ մոդելային օրենսգրքի մշակմամբ հատուկ վարույթի առանձին տեսակների նախատեսման մոտեցումն ամրագրվեց ԱՊՀ երկրների՝ այդ ժամանակաշրջանում ընդունված քրեական դատավարության օրենսգրքերում և շարունակվում է պահպանվել միայն ԱՊՀ երկրների մակարդակով այդ ժամանակաշրջանից գործող օրենսգրքերում: Մինչդեռ ԱՊՀ տարածաշրջանից դուրս գտնվող այլ երկրներում, որպես կանոն, նախատեսված է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման ունիֆիկացված վարույթ[3]: Այդ ճանապարհով են գնում նաև վերջին տարիներին ԱՊՀ երկրների կողմից ընդունված նոր սերնդի քրեական դատավարության օրենսգրքերը[4]: Հետևաբար սույն հոդվածի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում բացահայտել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի առանձին տեսակների էությունն ու դրանց բնորոշ առանձնահատկությունները, ունեցած ընդհանրությունները և եզրահանգել, թե արդարացվա՞ծ է արդյոք քննարկվող տեսակների տարբերակումը:

---

[1] Տե՛ս ՀԽՍՀ՝ 1961 թվականի մարտի 7-ին ընդունված քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ գլուխը. հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.irtek.am/views/act.aspx?aid=343:

[2] Տե՛ս Курс уголовного процесса, под ред. Л.В. Головко, М., «Статут», 2016, էջ 1236:

[3] Տե՛ս, օրինակ, մայրցամաքային իրավական համակարգին պատկանող Գերմանիայի քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ բաժինը կամ Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ բաժինը. հասանելի են հետևյալ հղումով՝ https://www.legislationline.org/documents/section/criminal-codes:

[4] Տե՛ս, օրինակ, 2009 թվականին ընդունված՝ Վրաստանի, 2012 թվականին ընդունված՝ Ուկրաինայի, 2014 թվականին ընդունված՝ Ղազախստանի քրեական դատավարության օրենսգրքերը. հասանելի են նույն հղումով:

Անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ։ Նշված վարույթի հարուցման համար որպես ելակետ է ընդունվում քրեական օրենքով արգելված արարքը կատարելու պահին անձի հոգեկան վիճակը, որը ենթակա է գնահատման անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման հիմքերին և պայմաններին ներկայացվող պահանջների համատեքստում։

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին նվիրված տեսական գրականության հիմնական աղբյուրներում այդ վարույթի հարուցման հիմքերի և պայմանների շրջանակն ուսումնասիրված չէ, ինչը նաև պայմանավորված է օրենսդրական կարգավորումներով, որոնք, որպես կանոն, ամրագրում են միայն բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հիմքերը և պայմանները։ Այնինչ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման և այդ վարույթի հիման վրա բուն բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման հիմքերը և պայմանները չեն նույնանում։ Ուստի գործնական տեսանկյունից, կարծում ենք, առանցքային նշանակություն ունի հատուկ վարույթի հարուցման հիմքերի և պայմանների շրջանակի հստակեցումը։

Այսպես՝ անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման հիմքերն այն հանգամանքներն են, որոնց առկայության պարագայում առաջանում է այս տեսակի վարույթի հարուցման հարցը քննարկելու անհրաժեշտություն։ Որպես անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման հիմք հանդես է գալիս քրեական օրենքով արգելված արարքի կատարման պահին անմեղսունակության իրավավիճակում գտնվելը։ Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է, որ կատարված լինի քրեական օրենքով արգելված արարք, և այդ արարքը կատարելու պահին անձը գտնված լինի անմեղսունակության իրավավիճակում։

Քրեական օրենքով արգելված արարքը վերագրվում է քրեական օրենքով արգելված այն գործողությանը կամ անգործությանը, որը պետք է որոշվի՝ հիմք ընդունելով քրեական օրենսգրքով նա-

խատեսված կոնկրետ հանցակազմի օբյեկտի և օբյեկտիվ կողմի հատկանիշները[1]: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ անձի անմեղսունակությունը չեզոքացնում է հանրորեն վտանգավոր արարքի հոգեֆիզիոլոգիական հատկանիշները, այն է՝ գիտակցական և կամային հատկանիշները, որոնք անհրաժեշտ են հանցանքի սուբյեկտիվ կողմի և պատշաճ սուբյեկտի առկայությունը հաստատված համարելու համար:

Ինչ վերաբերում է անմեղսունակությանը, ապա դրա էությունը հաճախ բացահայտվում է՝ հիմք ընդունելով մեղսունակության բովանդակային հասկացությունը, ինչը, լինելով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման, գերմանական քրեական իրավունքի տեսական գրականության մեջ բնորոշվում է որպես անձի՝ կատարած արարքի համար մեղավոր լինելու և քրեահրավական նորմի նկատմամբ ինքնուրույնաբար վերաբերմունք ձևավորելու ունակություն[2]: Կարծում ենք՝ նշվածն առավել բովանդակային է արտացոլում մեղսունակության էությունը և ցույց տալիս, որ անմեղսունակության դեպքում բացառվում է անձին քրեական պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորությունը, քանի որ բացակայում է անձի՝ իր կատարած արարքի համար մեղավոր լինելու կարողությունը: Այսպես, կախված հոգեկան վիճակի բարդությունից, հոգեկան հիվանդության տեսակից և ծանրությունից[3], անմեղսունակության պարագայում անձը հիվանդագին վիճակի հետևանքով (բժշկական կամ կենսաբանական չափանիշ) չի կարողանում գիտակցել իր գործողության (անգործության) վտանգավորությունը (գիտակցական հատկանիշ) կամ ղեկավարել դա (կամային հատկանիշ, իրավաբանական կամ հոգեբանական չափանիշ):

---

[1] Տե՛ս Արա Շուշանյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0030/01/15 որոշման 19-րդ կետը:

[2] Տե՛ս **Гельмут Фристер,** Уголовное право Германии, Общая часть, Москва, «Инфотропик Медиа», 2013, էջ 342, 347:

[3] Հոգեկան հիվանդությունների դասակարգումը միջազգային հարթությունում սահմանված է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից (ICD-10). այդ մասին մանրամասն տե՛ս http://www.who.int/classifications/icd/ICD10Volume2_en_2010.pdf:

Վերոգրյալի հետ մեկտեղ պետք է նշել, որ անձի անմեղսունակության որոշման վերոնշյալ բանաձևը, որը, որպես կանոն, լայնորեն կիրառվում է նաև ռոմանագերմանական իրավական համակարգի այլ երկրներում, էականորեն տարբերվում է անմեղսունակության որոշման՝ անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներին բնորոշ բանաձևից: Հակիրճ անդրադարձ կատարելով այդ երկրներում կիրառվող անմեղսունակության բանաձևի էությանը՝ նշենք, որ այն պատմականորեն հիմնված է 1843 թվականին Անգլիայում Daniel M'Naghten-ի դատական գործով ձևավորված իրավական դոկտրինայի վրա: Նշված գործի հիման վրա անգլիական Լորդերի պալատը մշակեց անձի անմեղսունակության որոշման թեստ (առավել հայտնի որպես M'Naghten-ի կամ ճշտի և սխալի թեստ): Այն հիմնված էր անձի գիտակցական, այլ ոչ թե կամային հատկանիշի վրա, և անմեղսունակության հիմքով արդարացման դատավճռի կայացման համար անհրաժեշտ էր, որ անձը հանցանքը կատարելու պահին տառապի այնպիսի հոգեկան հիվանդությամբ, որի պարագայում նա չի գիտակցում իր վարքագծի հակաիրավական, այսինքն՝ ճիշտ կամ սխալ լինելը: Այդ իրավական համակարգում հայտնի են եղել նաև անհաղթահարելի իմպուլսի, մտավոր կարողության, Durham-ի գործով ձևավորված՝ պաշտպանական մարտավարություններով անձի անմեղսունակության որոշման տարբեր բանաձևեր, որոնցից ամենատարածվածն ու ամենակիրառելին անմեղսունակության պաշտպանության՝ M'Naghten-ի բանաձևով սահմանված մարտավարությունն է: Նշված բանաձևը կիրառվում էր նաև ԱՄՆ-ում, որտեղ John Hinckley-ի հանրաճանաչ գործից հետո 1984 թվականի անմեղսունակության պաշտպանության բարեփոխման ակտի ընդունմամբ ձևակերպվեց, որ անմեղսունակ է այն մեղադրյալը, ով ծանր հոգեկան հիվանդության կամ այլ մտավոր պակասության պատճառով չի կարող գնահատել իր գործողությունների բնույթն ու նշանակությունը, դրանց անօրինականությունը[1]: Այսինքն, ինչպես տեսնում ենք, կամային հատկանիշի բացակայությամբ անգլոսաքսոնական իրավական համակարգում անմեղսունակության որոշման

[1] Տե՛ս The insanity defence, The world over, R. Simon, H. Ahn-Redding, A division of Rowman & Littlefield Publishers, Inc., 2006, The United States of America, էջ 37:

բանաձևը տարբերվում է ռոմանագերմանական իրավական համակարգի երկրներում կիրառվող բանաձևից։

Դատավարական տեսանկյունից անմեղսունակության՝ որպես բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման հիմքի առկայությունը, մեր համոզմամբ, պետք է դիտարկել ոչ թե անմեղսունակության հանգամանքը փաստող փորձագիտական եզրակացության, այլ ցանկացած բժշկական փաստաթղթի համատեքստում, որը, վկայելով արարքը կատարելու ժամանակահատվածում անձի՝ հոգեկան հիվանդությամբ տառապելու հանգամանքի մասին, կարող է հիմք հանդիսանալ այդ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման անհրաժեշտությունը քննարկելու համար։ Այլ հարց է, որ գործող քրեադատավարական օրենսդրության, ինչպես նաև ձևավորված իրավակիրառ պրակտիկայի ուժով քրեական օրենքով արգելված արարքը կատարելու պահին անձի անմեղսունակության հանգամանքը հավաստող փորձագիտական եզրակացության առկայությունը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման պարտադիր պայման է, որին առավել մանրամասն անդրադարձ կկատարվի բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման պայմանների շրջանակը քննարկելիս։

Այսպիսով՝ վերոգրյալի հիման վրա արձանագրենք, որ, մեր համոզմամբ, անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման հիմքն է քրեական օրենքով արգելված արարքը կատարելու պահին անմեղսունակության կարգավիճակում գտնվելը։

Ինչ վերաբերում է անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման պայմաններին, նշենք, որ դրանք այն հանգամանքներն են, որոնց բացակայության պարագայում բացառվում է նշված վարույթի հարուցման իրավական հնարավորությունը։

Որպես առաջնային պայման հանդես է գալիս հարուցված քրեական գործի առկայությունը, այսինքն՝ արդեն իսկ ընդհանուր հիմունքներով սկսված վարույթը, որից կարող է անցում կատարվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հատուկ վարույթին։ Այսպես՝ քրեական օրենքով արգելված արարքի

կատարման մասին հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով չի կարող միանգամից որոշում կայացվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթ հարուցելու վերաբերյալ քրեական գործ հարուցելու մասին որոշման բացակայության պայմաններում, քանի որ նյութերի նախապատրաստման փուլը հետապնդում է քրեադատավարական այլ խնդիրների լուծման նպատակ: Մասնավորապես, այդ փուլի սահմաններն ընդգրկում են բացառապես քրեական գործ հարուցելու առիթի օրինականության և հիմքերի բավարարության ստուգումը[1]: Ուստի այդ փուլի սահմանները երբևէ չեն կարող ներառել նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման հիմքերի և պայմանների առկայության ստուգումը: Դա դժվար է պատկերացնել նաև գործնական տեսանկյունից, քանի որ մի կողմից բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթն իր բնույթով ածանցվում է ընդհանուր հիմունքներով սկսված վարույթից, մյուս կողմից բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթ հարուցելու ինչպես հիմքերը, այնպես էլ այլ պայմաններ կարող են ի հայտ գալ միայն քրեական գործի հարուցումից հետո կատարված նախաքննության շրջանակներում (ենթադրաբար անմեղսունակության կարգավիճակում լինելու դեպքում քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին վկայող բավարար փաստական տվյալները չեն կարող քրեադատավարական ճանապարհով ամբողջությամբ և լիարժեք հավաքվել նյութերի նախապատրաստման փուլում): Հետևաբար պետք է փաստել, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթ հարուցելու առանցքային պայմանն է, որի բացակայությունը բացառում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման իրավական հնարավորությունը:

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման հաջորդ պայմանն անձի մեղսունակությունը բացառող հոգեկան հիվանդության վերաբերյալ փորձագիտա-

[1] Տե՛ս Սիրվարդ Գևորգյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԼԴ/0018/11/16 որոշման 12-րդ կետը:

կան եզրակացության առկայությունն է: Այսպես՝ մինչև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցումը քրեական վարույթն իրականացնող մարմինն անձի՝ հոգեկան հիվանդությամբ տառապելու մասին կասկածներ ունենալու դեպքում գործող քրեադատավարական մոդելի պայմաններում պետք է միջոցներ ձեռնարկի անձի՝ հոգեկան առողջության վերաբերյալ փորձագիտական եզրակացություն ստանալու համար: Վերջինս այն ապացույցի տեսակն է, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով քննիչը պարտավոր է ստանալ և հետազոտել՝ անձի հոգեկան առողջության վերաբերյալ եզրահանգում կատարելու, դրանից բխող՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի կոնկրետ տեսակի ճիշտ ընտրություն կատարելու, ինչպես նաև այդ վարույթի հարուցմանը հաջորդող գործընթացների պատշաճ կազմակերպումն ապահովելու համար:

Անդրադառնալով հետաքրքրություն ներկայացնող այն հարցին, թե քննարկող վարույթի պայմանների շարքին արդյոք պե՞տք է դասել նաև մինչ վարույթի հարուցման պահը մեղսունակությունը բացառող հոգեկան հիվանդությամբ տառապելու և իրեն շրջապատող միջավայրի համար վտանգ ներկայացնելու շարունակականության հանգամանքները, մենք կարծում ենք, որ ոչ, և գտնում, որ նշված հանգամանքները միայն անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման պայմաններ են: Վերջինս ուղղակիորեն բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասի համադրված վերլուծությունից՝ նկատի ունենալով, որ նշված հանգամանքներն ըստ էության վկայակոչվում են որպես բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման պայմաններ: Այսինքն՝ քրեական օրենքով արգելված արարքը կատարելիս անմեղսունակության կարգավիճակում գտնվելու հանգամանքն առնվազն բավարար է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթ հարուցելու և այդ վարույթին բնորոշ ապացուցման հատուկ առարկա սահմանելու համար, որի շրջանակներում իրականացված քննությամբ հենց նաև պետք է պարզվեն և համարժեք իրավական գնահատականի արժանացվեն մինչև վարույթի ավարտը մեղսունակությունը բա-

ցառող հոգեկան հիվանդությամբ տառապելու և իրեն շրջապատող միջավայրի համար վտանգ ներկայացնելու շարունակականության հանգամանքները։ Իսկ դրանց հնարավոր բացակայության դեպքում քննիչը, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 460-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, պետք է որոշում կայացնի գործի վարույթը կարճելու մասին։

Այսպիսով՝ կարծում ենք, որ քննարկվող վարույթի հարուցման պայմանը քրեական գործ հարուցելու մասին որոշման և անձի անմեղսունակության վերաբերյալ փորձագիտական եզրակացության առկայությունն է։

Դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ: Նշված վարույթի կիրառման համար որպես ելակետ է ընդունվում քրեական օրենքով արգելված արարքը կատարելուց հետո անձի հոգեկան վիճակը։ Այս վարույթի հիմնական առանձնահատկությունն այն է, որ վարույթի վերջում հանցանք կատարած անձինք չեն ազատվում քրեական պատասխանատվությունից։ Նրանց նկատմամբ կարող են կիրառվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, իսկ առողջանալուց հետո նրանք կարող են ենթարկվել պատժի, եթե չեն լրացել համապատասխան վաղեմության ժամկետները[1]։ Այնուամենայնիվ, իրավական հետևանքների ծավալի առումով առկա այս առանձնահատկությունը չի ազդում քննարկվող վարույթի տեսակը հարուցելու հիմքերի և պայմանների վրա, որոնք էականորեն չեն տարբերվում անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման հիմքերից և պայմաններից։

Այսպես՝ դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման հիմքը որոշակի բովանդակային առանձնահատկությամբ ըստ էության նույնանում է անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման հիմքին։ Մասնա-

[1] Տե՛ս Հարություն Շուքուրյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մայիսի 4-ի թիվ ԵՔՐԴ/0350/01/08 որոշման 18-րդ կետը։

վորապես այն է՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարումից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդանալը։

Այստեղ քրեական օրենքով արգելված արարք կատարելու հանգամանքը նույնանում է անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման նույնանուն հանգամանքին, այն տարբերությամբ, որ տվյալ պարագայում արարքի հոգեֆիզիոլոգիական հատկանիշները չեզոքացված չեն լինում, և մեղսագրվող արարքը ենթակա է գնահատման՝ ըստ հանցակազմի բոլոր հատկանիշների առկայության։ Բացի այդ՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարման հանգամանքը կարող է լինել ոչ միայն դատական քննության առարկա, այլ նաև հաստատված փաստ՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով։ Վերջինս առավել փոխկապակցված է անձի հոգեկան հիվանդության ծագման կոնկրետ պահի հետ։

Այսպես՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարումից հետո, կախված հոգեկան հիվանդության ծագման կոնկրետ դատավարական փուլից, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման այս վարույթն իր հերթին պայմանականորեն կարող է տարբերակվել՝ ա) պատժի նշանակմանը խոչընդոտող հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթ, բ) պատիժը կրելուն խոչընդոտող հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթ, որը կարող է ի հայտ գալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության պայմաններում։ Այդպիսի սահմանազատման հիմքում ընկած է բժշկական բնույթի իրավական ներգործության միջոցների կիրառման որոշակիորեն տարբերակված իրավական ռեժիմների առկայությունը։ Այսպես, եթե առաջին դեպքում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառվում են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների հատուկ վարույթի իրավական ռեժիմով, ապա երկրորդ դեպքում՝ նշված հատուկ վարույթի կարգավորումների հաշվառմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխով նախատեսված՝ դատական որոշումներն ի կատար ածելուն առնչվող հարցերի լուծման իրավական ռեժիմով։ Ընդ որում՝ հարկ է փաս-

տել, որ երկրորդ տեսակի դեպքում նույնիսկ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթ չի հարուցվում, այլ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդագրի հիման վրա ընդհանուր հիմունքներով լուծվում է անձին պատժից ազատելու և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման քրեադատավարական կարգավորումների հաշվառմամբ բժշկական բնույթի իրավական ներգործության միջոցների նշանակման հարցը։

Դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի հարուցման հիմքի կապակցությամբ հարկ է անդրադառնալ նաև դրա որոշման բանաձևին։ Ի տարբերություն անմեղսունակության, որի դեպքում օրենսդիրը սահմանում է ինչպես բժշկական, այնպես էլ իրավաբանական չափանիշներ, դեպքից հետո ծագած հոգեկան հիվանդության դեպքում նախատեսել է միայն իրավաբանական չափանիշը, որին տրված բնութագիրը նույնանում է անձին անմեղսունակ ճանաչելու իրավաբանական չափանիշի բնութագրին։ Առաջ է գալիս այն մոտեցումը, թե քննարկվող վարույթի կիրառման համար դեպքից հետո հոգեկան հիվանդության պատճառով անձի մտավոր ունակությունները պետք է սահմանափակված լինեն այն նույն չափով, որն անհրաժեշտ է անձին քրեական օրենքով արգելված արարքը կատարելու պահի դրությամբ անմեղսունակ ճանաչելու համար։ Այնինչ նշված մոտեցումն ընդունելի համարվել չի կարող։

Այսպես՝ օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասում որպես պատժի ենթակա չլինելու չափանիշ մատնանշում է դեպքից հետո այնպիսի հոգեկան հիվանդությամբ հիվանդանալը, որն անձին կզրկի իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ այն ղեկավարելու հնարավորությունից։ Սակայն հարկ է փաստել, որ քրեական օրենքով արգելված արարքը կատարելուց հետո անորոշ է, թե ինչ գործողության (անգործության) մասին է խոսքը։ Այդպիսի դեպքերում նշված չափանիշի բովանդակային քննարկումը դառնում է առարկայազուրկ։ Ընդ որում՝ այդ չափանիշն առավել անհասկանալի է, երբ անհրաժեշտ է որոշել պատիժը կրելուն խոչընդոտող հոգեկան հիվանդության բնույթը։

Կարծում ենք, որ իրականում հայրենական օրենսդրությամբ, որտեղ շեշտը դրվում է անձի հոգեկան հիվանդության՝ պատիժը նշանակելուն կամ կրելուն խոչընդոտելու հանգամանքների վրա, դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի բովանդակությունն ամբողջությամբ չի արտացոլում դրա առանցքային էությունը: Այդ խնդիրն առկա է նաև ԱՊՀ այլ երկրների օրենսգրքերում[1]:

Քննարկվող վարույթի իրական էությունն առավել բովանդակային արտացոլում է ստացել անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում: Այսպես՝ այդ կապակցությամբ տեսական գրականության մի շարք աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ում դեպքից հետո ծագած հոգեկան հիվանդության պատճառով վրա հասնող իրավական հետևանքները պայմանավորվում են «դատարանի առջև կանգնելու կարողության» բացակայությամբ: Այլ կերպ ասած՝ հոգեկան հիվանդությունը դիտարկվում է որպես հանգամանք, որը կարող է հանգեցնել դատավարական անգործունակություն և սահմանափակել անձի՝ դատավարությանը մասնակցելու կարողությունը: Չնավորված մոտեցման համաձայն՝ մեղադրյալը չի կարող դատապարտվել «in absentia», երբ բացակայում են դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունները: Հետևաբար անձը կարող է և՛ քրեական օրենքով արգելված արարքը կատարելիս լինել անմեղսունակ, և՛ դեպքից հետո շարունակել տառապել հոգեկան հիվանդությամբ: Ընդ որում, եթե դատավարության ընթացքում դատարանը նույնիսկ սեփական նախաձեռնությամբ հայտնաբերում է, որ այդ պահին անձը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա միջոցներ են ձեռնարկվում՝ նրան բուժելու, հնարավորություն տալու կանգնելու դատարանի առջև և լիարժեք օգտվելու իր դատավարական իրավունքներից, այդ թվում՝ հիմնավորելու, որ արարքը կատարելիս գտնվել է անմեղսունակության կարգավիճա-

[1] Տե՛ս **Шагеева Р.М.,** Проблемы применения принудительных мер медицинского характера в уголовном процессе, Уфа, Российская государственная библиотека, электронный текст, 2005, էջ 119:

կում[1]: Նշված գաղափարն արտացոլվել է ԱՄՆ Գերագույն դատարանի՝ Pate v. Robinson և Drope v. Missouri գործերով կայացված որոշումներում:

Որպես այդպիսին, «դատարանի առջև կանգնելու կարողության» պատմական արմատները գալիս են անգլիական ընդհանուր իրավունքից, որոնք ԱՄՆ-ում զարգացում ապրեցին 1960-ական թվականներին՝ ԱՄՆ Գերագույն դատարանի՝ Dusky v. United States և Wieter v. Settle գործերի շուրջ կայացրած որոշումներով[2]: Այսպես՝ դրանցով բացահայտվեց, որ «դատարանի առջև կանգնելու կարողություն»-ը որոշելիս անհրաժեշտ է պարզել, թե արդյոք անձն ունի՞ բավարար կարողություն ռացիոնալ ընկալմամբ ա) խորհրդակցելու իր փաստաբանի հետ և բ) փաստացիորեն գիտակցելու իր դեմ ընթացող դատավարությունը[3]: Տվյալ պարագայում թեստը կոչված է որոշելու անձի մոտ ինչպես գիտակցական, այնպես էլ կամային հատկանիշների առկայությունը, այն է՝ իրավական գործընթացի էությունն ընկալելու և արդյունքը սեփական պաշտպանությունը կազմակերպելիս իրացնելու ունակությունը[4]: Ընդ որում՝ նշված թեստերում ներառվող հարցերի ամբողջական ցանկի ուսումնասիրությունը վկայում է, որ հոգեկան հիվանդության պատճառով «դատարանի առջև կանգնելու կարողության» բացակայության շեմը էականորեն բարձր է և կարող է համարվել չհաղթահարված, եթե, օրինակ, անձը հոգեկան հիվանդության պատճառով նույնիսկ չի ընկալում, որ իր առջև նստած է դատական իշխանությունը ներկայացնող դատավոր: Այսինքն՝ նշված կարողության առկայությունը պարզելու համար անհրաժեշտ է, որ անձն ունակ լինի ոչ թե առնվազն գիտակցելու իրեն առաջադրված մեղադրանքի էությունը, այլ ընդհանրապես պատկերացնելու ըն-

---

[1] Տե՛ս **Rosner R.**, Principles and practice of forensic psychiatry, second edition, The United Kingdom, 2003, էջ 187:

[2] Տե՛ս **Sanford L. Drob, Robert H. Berger, Henry C. Weinstein,** Competency to stand trial: A conceptual model for its proper assessment, Bull Am Acad Psychiatry Law, vol. 15, № 1, 1987, էջ 86:

[3] Տե՛ս **Alan M. Goldstein,** Handbook of psychology, volume 11-Forensic psychology, The United States of America, John Wiley & Sons, Inc., 2003, էջ 360-378:

[4] Տե՛ս **Rosner R.,** նշվ. աշխ., էջ 187:

թացող քրեական դատավարության էությունը՝ իր սուբյեկտային կազմով հանդերձ: Այդ համատեքստում այն փոխկապակցված է նաև անձի իրավագիտակցության մակարդակի հետ:

Այսինքն՝ քրեական օրենքով արգելված արարք կատարելուց հետո հոգեկան հիվանդության պատճառով գիտակցական կամ կամային կարողությունների սահմանափակման վերաբերյալ եզրահանգումը չպետք է լինի կոնկրետ պահին անձի կողմից իր գործողությունների (անգործության) բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ ղեկավարելու հնարավորության վերացական գնահատման արդյունք: Այն պետք է դիտարկվի անձի հոգեկան հիվանդության և քրեական վարույթի ընկալման հնարավորության հարաբերակցության բացահայտման միջոցով: Հակառակ պարագայում կստացվի, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելու համար անմեղսունակության և դեպքից հետո հոգեկան հիվանդության բնույթի որոշման բանաձևերը նույնանում են, ինչն անընդունելի է դրանց վերաբերյալ դատական հոգեբանության արտասահմանյան աղբյուրների շրջանակներում կատարված ուսումնասիրությունների տեսանկյունից[1]:

Անդրադառնալով դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի հարուցման պայմաններին՝ հարկ է նշել, որ, ըստ էության, դրանք ևս նույնանում են անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման պայմաններին: Դրանց շարքին է դասվում, օրինակ, հարուցված քրեական գործի և անձի հոգեկան առողջության վերաբերյալ փորձագիտական եզրակացության առկայությունը: Ընդամենը հարկ է փաստել, որ պատիժը կրելուն խոչընդոտող հոգեկան հիվանդությամբ տապառող անձանց դեպքում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման պարտադիր պայման է նաև օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պարզ է դառնում, որ դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատ-

[1] Տե՛ս **Bruce A.,** Arrigo, Introduction to Forensic Psychology, Issues and Controversies in Crime and Justice, The United States of America, Academic Press, 2003, էջ 122:

մամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման հիմքն ու պայմաններն էականորեն չեն տարբերվում անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման հիմքից ու պայմաններից: Նման պարագայում կարծում ենք, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթը ըստ վերը քննարկված երկու տեսակների տարբերակելու անհրաժեշտություն չկա: Ինչպես ցույց տվեց սույն հոդվածի շրջանակներում ներկայացված առանձնահատկությունների ուսումնասիրությունը, նշված երկու վարույթների միջև առկա տարբերություններն առավել բովանդակային են և առնչվում են ոչ թե այդ վարույթների սկզբնավորման դատավարական կարգին, այլ դրանց շրջանակներում պարզման ենթակա հանգամանքներին, այն է՝ ապացուցման առարկային և դրա շրջանակներում հաստատված փաստական հանգամանքներից բխող իրավական հետևանքների ծավալին:

Հետևաբար մենք հակված ենք այն համոզման, որ, կախված անձի հոգեկան հիվանդության ծագման պահից, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հատուկ վարույթի երկու տեսակների՝ անմեղսունակ և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթների տարբերակման վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով որդեգրված մոտեցումը կրում է ձևական բնույթ: Անհասկանալի է նաև, թե ինչու է օրենսդիրը քննարկվող վարույթների տարբերակման հիմքում որպես հիմնական չափանիշ դրել հենց դեպքի պահին և դեպքից հետո անձի հոգեկան առողջության վիճակը՝ այդ կերպ անտեսելով մինչև դեպքի պահն անձի՝ հոգեկան հիվանդությամբ տառապելը: Օրինակ՝ ենթադրենք՝ հոգեկան հիվանդությամբ տառապող անձը քրեական օրենքով արգելված արարք է կատարում ռեմիսիայի վիճակում[1], այսինքն՝ դեպքի պահին գտնվելով մեղսունա-

[1] Ռեմիսիան (լատ. remissio - թուլացում) ժամանակաշրջան է, որը հաճախ անվանում են նաև լուսավոր ժամանակաշրջան (լատ. lucida intervalla), որի ընթացքում հոգեկան հիվանդության ազդեցությունն անձի մտավոր ունակությունների վրա էականորեն թուլանում է: Հիվանդության սուբյեկտիվ և օբյեկտիվ հատկանիշների նվազման աստիճանից ելնելով՝ տարբե-

կության կարգավիճակում: Նման պայմաններում ակնհայտ է, որ թեև օրենսդիրն անձի հոգեկան հիվանդության ծագման պահը կապում է քրեական օրենքով արգելված արարքը կատարելուց հետո ընկած ժամանակաշրջանի հետ, սակայն, հաշվի առնելով, որ արարքը կատարելու պահին անձը գտնվել է մեղսունակության վիճակում, այլ ելք, քան դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցումն է, չկա: Այնինչ տվյալ դեպքում անձի հոգեկան հիվանդությունը ծագել էր ոչ թե դեպքից հետո, այլ դրանից առաջ:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ անմեղսունակ անձանց և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հատուկ վարույթների միջև, բացի ապացուցման առարկայից և վրա հասնող իրավական հետևանքների ծավալից, այն աստիճանի էական և կայուն տարբերություններ չկան, որոնք կարող էին հիմք հանդիսանալ դրանք միմյանցից առանձին վարույթների մակարդակով սահմանազատելու համար: Ուստի գտնում ենք, որ նշված վարույթների ունիֆիկացման մոտեցումը, որը նաև տեղ է գտել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում, արդարացված է:

րակում են ամբողջական (կայուն) ռեմիսիա և ոչ ամբողջական (անկայուն) ռեմիսիա: Ռեմիսիան կարող է արտահայտվել ժամանակային տարբեր սահմանափակումներով՝ ընդհուպ մինչև ամիսներ, նույնիսկ տարիներ: Աղբյուրը՝ Սովետական մեծ հանրագիտարան. տե՛ս http://bse.sci-lib.com/article096454.html հղմամբ, տե՛ս նաև **Спасенников Б.А.,** Принудительные меры медицинского характера, Санкт-Петербург, Юридический центр пресс, 2003, էջ 75:

ПРОБЛЕМЫ ДИФФЕРЕНЦИАЦИИ СПЕЦИАЛЬНЫХ ВИДОВ ПРОИЗВОДСТВ ПО ПРИМЕНЕНИЮ ПРИНУДИТЕЛЬНЫХ МЕР МЕДИЦИНСКОГО ХАРАКТЕРА

Арнольд Варданян
Аспират кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

В данной статье анализируются основные вопросы, возникающие при дифференциации специальных видов производств по применению принудительных мер медицинского характера как с точки зрения правовых норм, установленных законодателем, так и с точки зрения подходов, принятых в правоприменительной практике. Нами изучены сходства и различия производств невменяемых лиц и психически больных лиц, изложены причины необходимости присоединения производств по применению принудительных мер медицинского характера.

PROBLEMS OF DIFFERENTIATION OF SPECIAL TYPES OF PROCEEDINGS CONCERNED WITH ENFORCEMENT OF MEDICAL MEASURES

Arnold Vardanyan
PhD student at the YSU Chair of Criminal procedure and Criminalistics

In the submitted article, the author discusses the problems of differentiation of special types of proceedings concerned with enforcement of medical measures both from the perspective of legal norms as defined by the legislator and the perspective of approaches adopted in law enforcement practice. The author analyzes similarities and differences of proceedings of insane persons and persons who developed a medical disorder after the incident. The author describes the reasons for the need to join the special types of proceedings concerned with enforcement of medical measures.

Բանալի բառեր՝ *անմեղսունակ, դեպքից հետո առաջացած հոգեկան հիվանդություն, վարույթների ունիֆիկացում:*
Ключевые слова: *невменяемый, психическая болезнь после происшествия, унификация производств.*
Key words: *insane, a medical disorder after the incident, unification of proceedings.*

ՊԱՐՏԱՎՈՐԵՑՄԱՆ ԵՎ ՈՉ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՎԻՃԱՐԿՄԱՆ ՀԱՅՑԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Անի Չիլինգարյան[1]

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության առաջին օրենսգիրքն ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին և գործողության մեջ է դրվել 2008 թ. հունվարի 1-ից: Դրան հաջորդող տարիների ընթացքում այն ենթարկվել է գործնական կիրառման փորձությանը, ինչի հետևանքով բացահայտված խնդիրներն այնքան ծավալուն և ընդգրկուն էին, որ դա հանգեցրել են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության նոր օրենսգրքի մշակմանը (այսուհետ՝ Օրենսգիրք), որն ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին և ուժի մեջ մտել 2014 թվականի հունվարի 7-ին[2]:

Օրենսգրքի 65-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը վարչական հայցն է, իսկ հաջորդող հոդվածները սահմանում են հայցի տեսակները: Հայցատեսակների ամրագրման շնորհիվ դրանց ներկայացման պահից հստակ է դառնում դրանցում ամրագրված պահանջի էությունը, և դատարանի համար ի սկզբանե պարզ է լինում, թե արդյոք ներկայացվել է այն հայցը, որով հայցվորն ակնկալում է հասնել իր համար ցանկալի արդյունքի, քանի որ հակառակ դեպքում դատարանը պարտավոր է հայցվորին աջակցել, որպեսզի նա փոխի հայցատեսակը կամ ճշգրտի դրա բովանդակությունը: Օրենսգրքի 66-69-րդ հոդվածներում նախատեսված են հետևյալ 4 հայցատեսակները՝

1. վիճարկման հայց,
2. պարտավորեցման հայց,
3. գործողության կատարման հայց,
4. ճանաչման հայց:

Օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝*

[1] ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ի. գ. թ., դոցենտ Ս. Գ. Մեղրյան:

[2] Տե՛ս ՀՀՊՏ 2013.12.28/73 (1013).1, ՀՕ-139-Ն:

զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները): Ընդ որում, եթե հայցվորը մինչև դատարան դիմելն օգտվել է իր իրավունքների պաշտպանության վարչական եղանակից՝ վերադասության կարգով բողոքարկելով իր համար միջամտող վարչական ակտը, ապա դատարանը պարտավոր է անդրադառնալ նաև բողոքարկման հետևանքով կայացված վարչական ակտի վերացման հարցին: Հենց այդ նպատակով է օրենսդիրը հայցադիմումին ներկայացվող պահանջների մեջ ներառել հայցվորի պարտականությունը՝ հայցադիմումում նշելու վարչական ակտի՝ վերադասության կարգով բողոքարկման մասին[1]:

Ի տարբերություն վիճարկման հայցի՝ պարտավորեցման հայց ներկայացնելու իրավունք հայցվորը ձեռք է բերում միայն այն դեպքում, երբ հայցվորը, ունենալով որևէ սուբյեկտիվ իրավունք կամ առնվազն ենթադրելով նման իրավունքի առկայությունը, դիմել է համապատասխան վարչական մարմին այդ իրավունքն իրեն տրամադրելու կամ որևէ կերպ այդ իրավունքն առարկայացնելու պահանջով և մերժվել է: Փաստորեն, այս դեպքում առկա է վարչական մարմնի կողմից արդեն իսկ կայացված միջամտող վարչական ակտ, որով մերժվում է անձին իրավունքի տրամադրումը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե անձի համար պաշտպանության ճիշտ եղանակն այդ միջամտող վարչական ակտը վերացնելն է, ինչը կազմում է վիճարկման հայցի առարկան: Մինչդեռ իրավունքի պաշտպանության այդ ճանապարհին ընտրելով՝ անձը չի կարող հասնել իր համար ցանկալի արդյունքին: Օրինակ՝ անձը դիմել է Երևանի քաղաքապետին՝ իրեն շինարարության թույլտվություն տրամադրելու պահանջով, և մերժվել է: Այս դեպքում վիճարկելով շինարարության թույլտվության տրամադրումը մերժելու վերաբերյալ Երևանի քաղաքապետի վարչական ակտը՝ անձը որևէ շոշափելի արդյունք չի ստանա: Նրա վերջնական նպատակն ի վերջո որոշակի իրավունք ստանալն է, տվյալ դեպքում՝ շինարարություն իրականացնելու իրավունք ստանալը, ինչին նա չի կարող հասնել՝ ներկայացնելով վիճարկման հայց և վերացնելով վերոնշյալ վարչական ակտը:

[1] Տե՛ս Օրենսգիրք, հոդված 73, մաս 2, կետ 8:

Նմանատիպ դեպքերի համար Օրենսգիրքը նախատեսել է մեկ այլ հայցատեսակ՝ պարտավորեցման հայցը: Այսպես, Օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պարտավորեցման հայցով անձը պահանջում է պարտավորեցնել վարչական մարմնին ընդունել իր համար բարենպաստ վարչական ակտ, որի ընդունումը վարչական մարմինը մերժել էր: Այսինքն՝ օրենքը նախատեսում է պարտավորեցման հայցի թույլատրելիության նախապայման, այն է՝ նախապես նույն պահանջը ներկայացնել վարչական մարմնին և ստանալ վերջինիս մերժումը: Վերոնշյալ օրինակում անձը չի կարող առանց շինարարության թույլտվություն տրամադրելու պահանջը նախապես Երևանի քաղաքապետին ներկայացնելու և վերջինիս մերժումն ստանալու նույն պահանջով դիմել դատարան: Ընդ որում՝ անձի դիմումի վերաբերյալ վարչական մարմնի ցանկացած պատասխան չի կարող ինքնաբերաբար համարվել մերժում, եթե անգամ դրանով անձի պահանջը չի բավարարվում: Մերժում ասելով՝ հասկանում ենք վարչական մարմնի հստակ դիրքորոշումն առ այն, որ անձի կողմից ներկայացված դիմումը որոշակի հիմնավորմամբ չի կարող բավարարվել, այսինքն՝ վարչական մարմնի պատասխանից պետք է ակնհայտ լինի անձին համապատասխան իրավունքի տրամադրման ուղղակի մերժումը: Այսպես՝ թիվ ՎԴ/6169/05/15 վարչական գործով[1] Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը մերժել է հայցադիմումի վարույթի ընդունումը՝ դատարանին ենթակա չլինելու հիմքով[2]՝ նշելով, որ պարտավորեցման հայցի թույլատրելիության նախապայմանն առկա չէ հետևյալ հիմնավորմամբ. «….*Տվյալ դեպքում, Օրենսգրքի 67-րդ հոդվածի վկայակոչմամբ հայցվորը ներկայացրել է պարտավորեցման հայց, սակայն ինչպես հայցադիմումի բովանդակությունից, այնպես էլ դրան կից ներկայացված փաստաթղթերից ակնհայտ երևում է, որ հայցվորի մոտ չի ծագել պարտավորեցման հայցով դատարան դիմելու իրավունքը, քանի որ հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը վարչական մարմնի կողմից չի մերժվել: Այսպես, ինչպես հետևում է հայցադի-*

[1] Ըստ Յուրի Գոքորյանի հայցի ընդդեմ ՀՀ հանրապետական զորակոչային հանձնաժողովի Յուրի Գոքորյանին առողջական վիճակի պատճառով տարկետում տալու վերաբերյալ որոշում կայացնելու պահանջի մասին:

[2] Տե՛ս Օրենսգիրք, հոդված 96, մաս 1, կետ 1:

մումին կից ներկայացված փաստաթղթերից, Յուրի Գոքորյանը 13.10.2015 թվականին դիմում է ներկայացրել ՀՀ հանրապետական զորակոչային հանձնաժողովին՝ առողջական վիճակի պատճառով իրեն տարկետում տրամադրելու վերաբերյալ: Դրան ի պատասխան ՀՀ հանրապետական զորակոչային հանձնաժողովը 23.10.2015 թվականի թիվ ԲԲ/557 գրությամբ նրան հայտնել է. «Անհրաժեշտ է կազմակերպել Յու. Գոքորյանի հետազոտությունը «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոնում և ներկայացնել կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին զինվորական ծառայությանը պիտանիության վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու նպատակով»: Այսինքն, հայցվորի դիմումը ոչ թե մերժվել է, այլ այդ դիմումին ընթացք տալու համար անհրաժեշտ է համարվել հայցվորի հետազոտությունը կազմակերպել «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոնում»:

Մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, կրկին անդրադառնալով պարտավորեցման հայցի ընդունման համար հիմք հանդիսացող վարչական մարմնի մերժմանը, գտել է. «*....Հայցադիմումի և կից փաստաթղթերի բովանդակությունից պարզ է դառնում, որ հայցվորը 2015 թ. փետրվարի 10-ին դիմել է Փարաքարի գյուղապետարան՝ խնդրելով կիրառել գույքահարկի գծով արտոնություն, որին ի պատասխան, 16.02.2015 թ. թիվ 76 գրությամբ Փարաքար համայնքի ղեկավարը հայտնել է, որ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո հնարավոր կլինի ըստ էության քննարկել Ձեր դիմումը: 2015 թ. դեկտեմբերի 22-ին հայցվորը նշված պահանջով կրկին դիմում է ներկայացրել Փարաքարի գյուղապետարան, որին ի պատասխան 23.12.2015 թ. թիվ 676 գրությամբ համայնքի ղեկավարը պարզաբանել է, որ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արտոնությունը կիրառվում է ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 23.06.2003 թվականի թիվ 03/17-Ն հրամանով հաստատված «Գույքահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգով սահմանված փաստաթղթերը ներկայացվելու դեպքում: Տվյալ դեպքում, դատարանն արձանագրում է, որ Փարաքարի գյուղապետարանի 23.12.2015 թ. թիվ 676 գրությունը վարչական ակտ չի հանդիսանում: Նշված գրությունն ընդամենը պատասխանող վարչական մարմնին հասցեագրած հայցվորի դի-*

մումի հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացիկ փուլում կատարվող գործողություն է, որով վարույթն իրականացնող վարչական մարմինը, ապահովելով Օրենքի 32-րդ հոդվածի պահանջը, հայցվորին առաջարկել է համալրել դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկը: Ակնհայտ է, որ հայցվորի կողմից Փարաքարի գյուղապետարանին հասցեագրած 22.12.2015 թ. դիմումի հիմքով հարուցված վարչական վարույթը չի եզրափակվել հայցվորի իրավունքներին միջամտող վարչական ակտի ընդունմամբ, իսկ այդ գրությունը չի հանդիսանում միջամտող վարչական ակտ չէ»[1]:

Վերոնշյալ 2 գործերով էլ դատարանը պարտավորեցման հայցը թույլատրելի չի համարել, քանի որ առկա չի եղել վարչական մարմնի մերժումը՝ պահանջվող վարչական ակտն ընդունելու վերաբերյալ: Առաջին դեպքում պատասխանող ՀՀ հանրապետական զորակոչային հանձնաժողովը հայցվորին գրավոր տեղեկացրել է հետազոտություն անցկացնելու անհրաժեշտության մասին, որից հետո միայն հնարավոր կլիներ վերջնական որոշում կայացնել անձի դիմումի վերաբերյալ: Երկրորդ դեպքում Փարաքարի գյուղապետարանը ևս գրավոր պատասխանել է անձին, սակայն ոչ թե մերժել է գույքահարկի գծով արտոնություն ստանալու նրա պահանջը, այլ հայցվորին տեղեկացրել է, որ օրենքով պահանջվող փաստաթղթերի ներկայացումից հետո կկարողանա ըստ էության քննել անձի կողմից ներկայացված դիմումը:

Անդրադառնանք պարտավորեցման հայցի ու վիճարկման հայցի միջև առկա հարաբերակցությանը և փորձենք հասկանալ, թե արդյոք դատարանի կողմից պարտավորեցման հայցի բավարարումն ինքնին նշանակում է նաև վարչական մարմնի կողմից անձի պահանջի մերժման վերաբերյալ որոշման վերացում: Ակնհայտորեն այս հարցի պատասխանը բացասական է, քանի որ վարչական մարմնի մերժումն ինքնուրույն վարչական ակտ է, և անգամ այն պարագայում, երբ հետագայում վարչական մարմինը, դատական ակտի վրա հիմնվելով, ընդունի անձի համար բարե-

[1] ՎԴ/0389/05/16 վարչական գործն ըստ Խորեն Գասպարյանի հայցի ընդդեմ Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարանի՝ իր նկատմամբ օրենքով նախատեսված գույքահարկի գծով արտոնությունները կիրառելու վերաբերյալ ակտ ընդունելուն պարտավորեցնելու մասին:

նպաստ վարչական ակտ՝ նրան տրամադրելով համապատասխան իրավունքը, վարչական մարմնի նախնական մերժումը շարունակելու է գոյություն ունենալ իրավակարգում՝ որպես իրավաբանական ուժ ունեցող ինքնուրույն վարչական ակտ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ օրենսդիրը Օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրել է, որ պարտավորեցման հայց ներկայացնելու դեպքում հայցվորի պահանջը ներառում է նաև իր նկատմամբ կայացված միջամտող վարչական ակտի վերացման պահանջ, որը տեսական գրականության մեջ անվանվում է ոչ ինքնուրույն վիճարկման հայց[1]:

Այսպիսով՝ վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ պարտավորեցման և վիճարկման հայցերը փոխկապակցված են. պարտավորեցման հայցն ունի առաջնային նշանակություն, իսկ վարչական ակտի վերացման պահանջը քննվում է ոչ ինքնուրույն վիճարկման հայցի շրջանակներում[2]: Հարց է առաջանում, թե արդյոք հիմնական հանդիսացող պարտավորեցման հայցի առարկան կազմող պահանջի ելքը ինքնաբերաբար կանխորոշում է նաև ոչ ինքնուրույն վիճարկման հայցի ճակատագիրը: Առաջին հայացքից կարող է տրամաբանական թվալ, որ պարտավորեցման հայցի բավարարման դեպքում ոչ ինքնուրույն վիճարկման հայցի պահանջը ևս պետք է բավարարվի, և հակառակը՝ պարտավորեցման հայցի մերժման դեպքում մերժման վերաբերյալ վարչական ակտն անվավեր ճանաչվել չի կարող:

Այս հարցին պատասխանելու համար քննարկենք Օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված կարգավորումները, որոնք սահմանում են, թե համապատասխան հայցատեսակը քննելիս դատարանը ժամանակային առումով ո՛ր օրենքները և ժամանակի ո՛ր պահին ձեռք բերված ապացույցները պետք է հիմք ընդունի:

Նշված հոդվածի 3-րդ մասը, որը վերաբերում է պարտավորեցման հայցին, սահմանում է 2 կարևոր կանոն: Դատարանը հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը

---

[1] Տե՛ս **Friedhelm Hufen,** Verwaltungsprozessrecht. 5. Auflage, C. H. Beck München, 2003, էջ 306-307:

[2] Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք: Ընդհ. խմբ.՝ Վ. Պողոսյան և Ռ. Ռուբել, Երևան, 2011, էջ 384:

գնահատելիս հիմնվում է ***դատական ակտի կայացման դրությամբ*** ձեռք բերված ապացույցների և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների վրա։

Նշված հոդվածի 2-րդ մասը վիճարկվող վարչական ակտի իրավաչափության գնահատման համար հիմք է ընդունում ոչ թե դատական ակտի կայացման, այլ վարչական վարույթի իրականացման և վարչական ակտի կայացման պահը։ Այսպես՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս դատարանը հիմք է ընդունում՝

1. վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցները,

2. վիճարկվող վարչական ակտի ընդունման պահի դրությամբ գործող օրենքները։ Միաժամանակ այս կանոնից սահմանված է բացառություն այն դեպքերի համար, երբ հետագայում դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար բարենպաստ օրենք է ընդունվել, որին տրվել է հետադարձ ուժ։

Օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորեցման հայցատեսակի պարագայում ապացուցման բեռն ընկած է թե՛ հայցվորի, թե՛ պատասխանողի վրա. հայցվոր ֆիզիկական կամ իրավաբանական անձի վրա ընկած է այն փաստերի առնչությամբ, որոնցով հիմնավորվում է իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունումը, իսկ պատասխանող վարչական մարմնի վրա՝ հայցվող վարչական ակտի ընդունումը մերժելու հիմք հանդիսացած փաստերի առնչությամբ։ Այսինքն՝ հայցվորը պետք է հիմնավորի, որ իր կողմից ակնկալվող սուբյեկտիվ իրավունքի տրամադրումն իրավաչափ է, և իր կողմից կատարվել են դրա համար անհրաժեշտ բոլոր նախապայմանները։ Վարչական մարմինը պետք է հիմնավորի, որ իր կողմից մերժման վերաբերյալ կայացված վարչական ակտն իրավաչափ է։ Ենթադրենք՝ դատարանը գործի քննության ընթացքում հանգում է այն եզրակացության, որ առկա են հայցվորի համար բարենպաստ վարչական ակտ կայացնելու համար օրենքով նախատեսված բոլոր նախապայմանները. արդյոք դա ինքնըստինքյան նշանակո՞ւմ է, որ վարչական մարմինը, մերժելով անձի դիմումը, խախտել է վերջինիս սուբյեկտիվ իրավունքը։

Արդյոք հնարավո՞ր է իրավիճակ, երբ դատարանը պարտավորեցնի վարչական մարմնին ընդունել հայցվող բարենպաստ վարչական ակտը, սակայն անձի դիմումը մերժելու վերաբերյալ վարչական ակտն անվավեր չճանաչի՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վարչական վարույթի իրականացման ժամանակ գործող օրենքի կարգավորումների շրջանակում վարչական մարմինը ընդունել է իրավաչափ վարչական ակտ, հետևաբար այն վերացնելու հիմքերը բացակայում են, սակայն դատական ակտի կայացման պահին օրենքի փոփոխության հետևանքով հայցվող բարենպաստ վարչական ակտն ընդունելուն պարտավորեցնելը ևս իրավաչափ է: Հնարավոր է նաև հակառակ իրավիճակը. դատարանը կարող է անվավեր ճանաչել մերժման վերաբերյալ վարչական ակտը, քանի որ, վարչական ակտի ընդունման պահի դրությամբ գործող օրենքի համաձայն, անձն իրավունք ունի ստանալու համապատասխան իրավունքը, սակայն չպարտավորեցնել վարչական մարմնին ընդունելու հայցվող բարենպաստ վարչական ակտը, քանի որ օրենքի փոփոխության հետևանքով անձն այլևս նման սուբյեկտիվ իրավունք չունի:

Այս հարցերին պատասխանելու համար քննարկենք հետևյալ իրավիճակը: Անձը դիմել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն)՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու խնդրանքով: Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող խմբերից մեկը կազմում են հիպոֆիզարային թզուկությամբ հիվանդ անձինք են, ում 45 տարին լրացել է և ովքեր ունեն առնվազն 20 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ: Կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ անձի դիմումի հիման վրա իրականացվող վարչական վարույթի ընթացքում Ծառայությունը գործի հանգամանքների ուսումնասիրության հետևանքով պարզել է, որ դիմողի աշխատանքային ստաժը կազմում է 17 օրացուցային տարի, և այդ հիմքով մերժել է արտոնյալ պայմաններով վերջինիս կենսաթոշակ նշանակելու դիմումը: Մեկ ամիս անց անձը դիմել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել Ծառայությանն իրեն արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակել: Գործի քննության ընթացքում «Պետական

կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն է կատարվել, և սահմանվել է, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունքի ծագման համար անհրաժեշտ է 15 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ (նախկին 20 օրացուցային տարվա փոխարեն): Փաստորեն, կարգավորումը փոխվել է հօգուտ հայցվորի, բայց միևնույն ժամանակ նշված դրույթին հետադարձ ուժ չի տրվել:

Հիմք ընդունելով 124-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝ դատարանը, քննելով հայցվող բարենպաստ վարչական ակտի, այն է՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման իրավաչափությունը, պետք է առաջնորդվի դատական ակտի կայացման դրությամբ գործող օրենքով: Դա նշանակում է, որ տվյալ պարագայում պարտավորեցման հայցը պետք է բավարարվի, քանի որ դատական ակտի կայացման պահին գործում է օրենքի փոփոխված տարբերակը, որի համաձայն՝ պահանջվող աշխատանքային ստաժը 15 տարի է, և մյուս բոլոր պայմանների բավարարման դեպքում անձի մոտ ծագում է արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու սուբյեկտիվ իրավունք: Միևնույն ժամանակ դատարանը նաև պետք է անդրադառնա անձին արտոնյալ պայմաններով կենսաթոշակի տրամադրման մերժման որոշմանը և դրա իրավաչափությունը գնահատելու համար հիմք ընդունի վարչական ակտի կայացման պահին գործող իրավական կարգավորումը: Ճիշտ է, այս դեպքում վարչական ակտի կայացումից հետո ընդունվել է անձի համար առավել բարենպաստ կարգավորում, բայց այդ կարգավորմանն օրենքը հետադարձ ուժ չի տվել, հետևաբար դատարանը, ընդհանուր կանոնի համաձայն, մերժման իրավաչափությունը պետք է գնահատի՝ հիմք ընդունելով վարչական վարույթի իրականացման ժամանակ գործող օրենքը:

Ակնհայտ է, որ այս դեպքում վարչական մարմինն իրավաչափ է գործել՝ մերժելով արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ անձի դիմումը, քանի որ այդ պահանջի քննության պահին անձը չի բավարարել կենսաթոշակի տվյալ տեսակի նշանակման համար անհրաժեշտ բոլոր պայմանները, հետևաբար նա ձեռք չի բերել այդ կենսաթոշակը ստանալու սուբյեկտիվ իրավունք: Այսպիսով՝ դատարանը, առաջնորդվելով քննարկված կանոններով, պետք է բավարարի պարտավորեցման

հայցը՝ վարչական մարմնին պարտավորեցնելով անձին նշանակել արտոնյալ պայմաններով կենսաթոշակ, բայց միևնույն ժամանակ չի կարող վերացնել ժամանակին վարչական մարմնի կողմից նշված կենսաթոշակի նշանակումը մերժելու վարչական ակտը:

Այստեղ կարող է ծագել մեկ այլ հարց: Արդյոք նշված պայմաններում կարո՞ղ ենք համարել, որ պարտավորեցման հայցի թույլատրելիության նախապայմանը բավարարված է, այսինքն՝ արդյոք կարո՞ղ ենք համարել, որ պարտավորեցման հայցի առարկան կազմող պահանջի վերաբերյալ առկա է վարչական մարմնի մերժումը: Ճիշտ է, անձի կողմից ներկայացված պահանջը նույնն է, բայց վարչական մարմինը վարչական վարույթի իրականացման ժամանակ հիմնվել է լիովին այլ փաստական և իրավական հանգամանքների վրա, և վերջինիս մերժումը ևս հիմնված է եղել դրանց վրա: Եթե առաջնորդվենք այս դիրքորոշմամբ, ապա այս դեպքում դատարանը պետք է կարճի գործի վարույթը՝ դատարանին գործի քննությունը ենթակա չլինելու հիմքով՝ հնարավորություն տալով անձին նորից դիմելու վարչական մարմնին նույն պահանջով, բայց արդեն փոփոխված իրավական կարգավորումների շրջանակներում: Մեկ այլ տարբերակ է անմիջապես գործի քննության ընթացքում վարչական մարմնի դիրքորոշումը պարզելը, ինչի շնորհիվ ժամանակի և ռեսուրսների կուրուստ չի առաջանա: Այսինքն, եթե վարչական մարմինը չի ընդունում, որ նոր կարգավորման պայմաններում անձի մոտ արդեն ծագել է սուբյեկտիվ իրավունքը, ապա վարչական մարմնի այդ լռությունը կարող ենք համարել մերժում՝ այդպիսով պարտավորեցման հայցի թույլատրելիության պայմանը համարելով պահպանված:

Կարող է լինել նաև հակառակ իրավիճակը: Քննարկենք նույն օրինակը, բայց համարենք, որ այս անգամ անձը, ով դիմել է Ծառայություն՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու պահանջով, բավարարում է օրենքով սահմանված բոլոր պայմանները, սակայն Ծառայությունը, ոչ պատշաճ կերպով իրականացնելով գործի քննությունը, մերժում է նրա դիմումը՝ գտնելով, որ աշխատանաքային ստաժի վերաբերյալ պայմանը (առնվազն 20 օրացուցային տարին) բավարարված չէ: Դատարանում գործի քննության ժամանակ օրենքում փոփոխություն է կատարվում, և աշխատանքային ստաժի պահանջվող նվազագույն շեմը բարձ-

րացվում է՝ դարձնելով առնվազն 25 օրացուցային տարի: Այս իրավիճակում դատարանը բնականաբար չի կարող բավարարել պարտավորեցման հայցը, քանի որ դատական ակտի կայացման պահին անձը չի բավարարում օրենքով սահմանված պահանջները, հետևաբար նրա մոտ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու սուբյեկտիվ իրավունք չի ծագում: Միևնույն ժամանակ, քննարկելով Ծառայության կողմից կենսաթոշակի նշանակման մերժման իրավաչափությունը, վարչական դատարանը պարզում է, որ վարչական վարույթի իրականացման պահի դրությամբ անձը բավարարել է օրենքով սահմանված բոլոր պահանջները, հետևաբար Ծառայության մերժումը եղել է ոչ իրավաչափ, քանի որ վերջինս սխալ է հաշվարկել անձի աշխատանքային ստաժը: Այս դեպքում դատարանը մերժում է պարտավորեցման հայցը՝ միևնույն ժամանակ անվավեր ճանաչելով վարչական մարմնի՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու դիմումը մերժելու վերաբերյալ վարչական ակտը: Պարտավորեցման հայցի մերժման պարագայում ոչ ինքնուրույն վիճարկման հայցի բավարարումը, այն է՝ մերժման վերաբերյալ միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելն ինքնանպատակ չէ, քանի որ հետագայում անձը կարող է ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնել Ծառայությանը:

Այսպիսով՝ Օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցին զուգահեռ միշտ առկա է ոչ ինքնուրույն վիճարկման հայցը, որոնք սերտորեն փոխկապակցված են և գործնականում կարող են առաջացնել տարբեր խնդիրներ, որոնք ոչ բոլոր դեպքերում է հնարավոր կանոնակարգել օրենսդրական մակարդակով, այլ առավել նպատակահարմար է այդ հարցերի լուծումը թողնել դատական պրակտիկային:

ВЗАИМОСВЯЗЬ ИСКА О ПРИНУЖДЕНИИ И НЕСАМОСТОЯТЕЛЬНОГО ИСКА ОБ ОСПАРИВАНИИ

Ани Чилингарян
Аспирант кафедры гражданского процесса ЕГУ

В данной статье рассматривается взаимосвязь между двумя типами административных исков – иска о принуждении и несамостоятельного иска об оспаривании, который в силу закона включен в иск о принуждении.

В соответствии с Административно-процессуальным кодексом Республики Армения предметом иска о принуждении является принуждение административного органа к принятию благоприятного административного акта, который был отклонен административным органом. Он также включает в себя требование об оспаривании упомянутого отклонения административным органом как административного акта вмешательства. Основная цель статьи – поднять практические вопросы, с которыми можно столкнуться, когда речь идет об иске о принуждении и включенном в него иске об оспаривании. Один из таких вопросов заключается в том, что несамостоятельный иск об оспаривании автоматически не может иметь такого же результата, что и основной иск о принуждении. Административному суду необходимо отдельно оценивать правомерность как благоприятного административного акта, который требуется принять, так и отклонение административного органа в качестве административного акта вмешательства, поскольку законность этих административных актов оценивается на основании законов, действующих в разные периоды времени.

THE INTERCONNECTION BETWEEN OBLIGATORY AND DEPENDENT RESCISSORY ACTION

Ani Chilingaryan
PHD Student of the YSU Chair of Civil Procedure

The article discusses the interconnection between two types of administrative actions – obligatory action and the dependent rescissory action, meaning the one which is included in the obligatory action by virtue of law.

According to Administrative Proceedings Code of the Republic of Armenia, the subject of the obligatory claim is to compel the administrative body to adopt a favorable administrative act, which was denied by the administrative body. This includes also the claim of challenging the mentioned denial of the administrative body as an interfering administrative act. The main issue of the article is to raise practical issues which one might face when dealing with the obligatory action and the rescissory action included in it. One of such issues is that the dependent rescissory action does not automatically follow the same outcome as the main obligatory action. Instead, the Administrative Court needs to assess separately the lawfulness of both the favorable administrative act which is claimed to be adopted and the denial of the administrative body as an interfering administrative act, because the lawfulness of those administrative acts is assessed based on the laws existing at different time spots.

Բանալի բառեր՝ *պարտավորեցման հայց, ոչ ինքնուրույն վիճարկման հայց, ապացուցման բեռ, միջամտող վարչական ակտ, բարենպաստ վարչական ակտ, դիմումի մերժման վերաբերյալ վարչական մարմնի որոշում, վարչական ակտի կայացման պահին գործող օրենք, պարտավորեցման հայցի թույլատրելիություն:*

Ключевые слова: *иск о принуждении, несамостоятельный иск об оспаривании, обязанность доказания, благоприятный административный акт, административный акт вмешательства, решение об отклонении административным органом, действующий во время принятия административного акта закон, допустимость иска о принуждении.*

Keywords: *obligatory action, dependent rescissory action, burden of proof, interfering administrative act, denial of the administrative body, law existing at the moment of the adoption of the administrative act, permissibility of the obligatory action.*

«EX OFFICIO» ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Լիլիթ Պետրոսյան[1]

Հայաստանի Հանրապետությունում վարչական դատավարության սկզբնավորումից ի վեր ընդունված վարչական դատավարության երկու օրենսգրքերով էլ ամրագրվեց վարչական դատավարության առանձնահատկություններն առավելագույնս ընդգծող «ex officio» (ի պաշտոնե) սկզբունքը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը[2] (այսուհետ՝ Օրենսգիրք), ի տարբերություն ՀՀ վարչական դատավարության նախկին օրենսգրքի[3], որը «ex officio» սկզբունքի իրացումը վերապահել էր միայն վարչական դատարանին, այն նախատեսել է դատարանի համար, որն Օրենսգրքի իմաստով ներառում է ՀՀ վարչական դատարանը, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), ինչպես նաև Վճռաբեկ դատարանը:

«Ex officio» սկզբունքը վարչական դատավարության առանցքային սկզբունքներից է, որն օժտում է դատարանին ակտիվ դերակատարությամբ՝ վերացնելու ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները և ապահովելու ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործումը այդ սկզբունքի բովանդակությունը կազմող գործողությունների իրականացման միջոցով[4]: Ընդ որում՝ այս սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները չեն սահմանափակվում միայն գործի փաստական հանգամանքները պար-

---

[1] ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. թ., դոց. Ս. Մեղրյան:

[2] Ընդունվել է 05.12.2013 թվականին: Տե՛ս ՀՀՊՏ 2013.12.28/73 (1013).1, հոդ. 1186.1:

[3] Ընդունվել է 28.11.2007 թվականին: Տե՛ս ՀՀՊՏ 2007.12.19/64 (588), հոդ. 1300:

[4] Տե՛ս **Анатольевна Ш.Е.,** К вопросу о роли суда при реализации принципа состязательности и равноправия сторон в административном судопроизводстве // Бизнес в законе, 2011, №1, էջ 111:

զելով, այլ ընդգրկում են դատավարական գործողությունների մի ամբողջ շրջանակ:

Վարչական դատարանի դատական ակտերը վերաքննության կարգով վերանայելու փուլում «ex officio» սկզբունքի իրացման առանձնահատկությունները բացահայտելու համար անհրաժեշտ է նախևառաջ քննարկել վարչական դատավարությունում վերաքննության տեսակին և վերանայման սահմաններին առնչվող հարցերը:

Դատավարագիտության մեջ վերաքննության տեսակները դասակարգվում են ոչ լրիվ և լրիվ վերաքննությունների: Դեռևս հռոմեական իրավունքում հայտնի լրիվ վերաքննությունը անվանվում էր նաև «նոր քննություն» (judicium novum): Վերաքննության այս տեսակը ենթադրում է առաջին ատյանի կողմից քննված վեճի կրկնակի քննություն, որի ընթացքում գործին մասնակցող անձինք կարող են նոր ապացույցներ ներկայացնել, հայտնել նոր դիրքորոշում, իսկ վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ առաջին ատյանի դատարանի քննության արդյունքներով[1]: Ինչպես նշում է ռուս դատավարագետ Տ. Մ. Յաբլոչկովը, լրիվ վերաքննության նպատակը կողմերի թույլ տված սխալներն ուղղելն է[2]: Ե. Ա. Բորիսովայի կարծիքով՝ լրիվ վերաքննության դեպքում գործը ենթակա է օբյեկտիվ վերանայման, քանի որ ստուգվում է գործով հաստատված փաստական հանգամանքների համապատասխանությունը իրականությանը[3]: Լրիվ վերաքննությանը բնորոշ է նաև վերաքննիչ դատարանի կողմից հաստատված փաստերի հիման վրա նոր դատական ակտի կայացման հնարավորությունը[4]: Իրավաբանական

[1] Տե՛ս **Котлярова В.В.,** Полная и неполная апелляции в цивилистическом и судебном административном процессах //Lex Russica, 2018, № 6 (139), էջ 64:

[2] Տե՛ս **Яблочков Т.М.,** Учебник русского гражданского судопроизводства. 2-е изд., доп., Ярославль, Книгоиздательство Т. К. Гассанова, 1912, էջ 219:

[3] Տե՛ս **Борисова Е.А.,** Проверка судебных актов по гражданским делам, М., «Городец», 2005, էջ 157:

[4] Տե՛ս **Борисова Е.А.,** Апелляция, кассация, надзор по гражданским делам, М., «Норма», 2013, էջ 143:

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Հովհաննիսյանի կողմից առանձնացվել են լրիվ վերաքննության հետևյալ հատկանիշները[1].

1) Վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքով և գործում եղած, ինչպես նաև լրացուցիչ ներկայացված ապացույցներով կրկին քննում է գործը.

2) Վերաքննիչ դատարանն ընդունում է գործին մասնակցող անձանց ներկայացրած լրացուցիչ ապացույցները.

3) Վերաքննիչ դատարանը գործը կրկին քննող դատարան է.

4) Վերաքննիչ դատարանը գործի կրկնակի քննության արդյունքներով կայացնում է վճիռ, որտեղ նշվում են նաև գործի՝ վերաքննիչ դատարանի կողմից պարզված հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված էին այդ հանգամանքների մասին վերաքննիչ դատարանի հետևությունները և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում էր այս կամ այն ապացույցը, ինչպես նաև այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտեր, որոնցով ղեկավարվել էր դատարանը վճիռ կայացնելիս:

Ոչ լրիվ վերաքննության դեպքում կողմերը չեն կարող վկայակոչել նոր փաստեր կամ ներկայացնել նոր ապացույցներ: Ոչ լրիվ վերաքննության օբյեկտը ստորադաս դատարանի կողմից կայացված դատական ակտն է, այլ ոչ թե գործն ընդհանրապես, հետևաբար եթե ստորադաս դատարանը որևէ պահանջով վերջնական եզրահանգում չի կատարել, վերաքննության օբյեկտը բացակայում է[2]: Ինչպես նշում է Ե. Ա. Բորիսովան, եթե լրիվ վերաքննության նպատակը առաջին ատյանի կողմից իրականացված քննության «կատարելագործումն է», ապա ոչ լրիվ վերաքննության նպատակը ա-

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Վ.,** Վերաքննիչ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի հստակեցումը և վերաքննության տեսակի օբյեկտային սահմանների հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու» (գլխ. խմբագիր՝ Գ. Ս. Ղազինյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 167-185:

[2] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԱԴԴ/0976/02/08 քաղաքացիական գործով 26.12.2014 թ. որոշումը:

ռաջին ատյանի դատարանի կայացրած որոշման «կատարելագործումն է»[1]:

Հարկ է ընդգծել, որ վարչական դատավարությունը հետազոտող գիտնականները վերաքննությունը վարչական դատավարությունում հիմնականում բնորոշել են որպես լրիվ վերաքննություն կամ այս երկու տեսակների զուգակցմամբ գործող վերաքննություն:

Այսպես, ինչպես նշում է Տ. Ա. Կոմարովան, վերաքննիչ դատարանի կողմից վարչական դատարանի դատական ակտերի վերանայումը պետք է կատարվի ամբողջ ծավալով, և վերաքննիչ դատարանը չպետք է կաշկանդվի վերաքննիչ բողոքի հիմքերով ու հիմնավորումներով[2]:

Ռ. Մ. Մասալաջիուի կարծիքով՝ նյութական կամ դատավարական իրավունքի՝ վարչական դատարանի կողմից թույլ տրված խախտումների առկայությունը վերաքննիչ դատարանը պարզում է լրիվ ծավալով և կաշկանդված չէ վերաքննիչ բողոքի կամ բողոքի պատասխանի հիմքերով ու հիմնավորումներով[3]:

Տ. Դ. Ցուռգանը, առանձնացնելով քաղաքացիական և վարչական դատավարություններում վերաքննության ձևերի տարբերությունները, նշում է, որ վարչական գործերի լրիվ ծավալով վերանայումը վարչական դատավարությունում դատարանի ակտիվ դերակատարության («ex officio») սկզբունքի դրսևորումներից է[4]:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ վարչական դա-

---

[1] Տե՛ս **Борисова Е.А.,** Апелляция, кассация, надзор по гражданским делам, 2013, էջ 143:

[2] Տե՛ս **Комарова Т.А.,** К вопросу обжалования судебных актов в гражданском и административном судопроизводстве // Вестник сибирского института бизнеса и информационных технологий, 2015, № 4 (16), էջ 108-111:

[3] Տե՛ս **Масаладжиу Р.М.,** Апелляционное производство по административным делам: новые подходы и старые проблемы // Законы России: опыт, анализ, практика, 2016, № 5, էջ 31-37:

[4] Տե՛ս **Цурган Т.Д.,** Апелляционное обжалование по Кодексу административного судопроизводства Российской Федерации: преимущества новелл [Текст] // Право: современные тенденции: материалы IV Междунар. науч. конф. (г. Краснодар, февраль 2017 г.), Краснодар, «Новация», 2017, էջ 69-73:

տարանի դատական ակտերի վերանայումն իրականացվում է լրիվ վերաքննության կամ խառը վերաքննության ձևերով:

Այսպես, Գերմանիայի «Վարչական դատավարության մասին ակտի» 128-րդ հոդվածի համաձայն, վարչական վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված փաստական և իրավական հիմքերի սահմաններում նույն ծավալով, ինչ վարչական դատարանը: Դատարանը ընդունում է նաև նոր ներկայացված փաստերը և ապացույցները[1]:

Ռուսաստանի Դաշնության՝ 2015 թվականին ընդունված վարչական դատավարության օրենսգրքի 308-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վերաքննիչ դատարանը վարչական գործը վերանայում է լրիվ ծավալով և կաշկանդված չէ վերաքննիչ բողոքի կամ բողոքի պատասխանի հիմքերով ու հիմնավորումներով: Վերաքննիչ դատարանն ընդունում է նոր ապացույցներ, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է վարչական դատարանում դրանք ներկայացնելու անհնարինությունը: Վարչական դատարան չներկայացված նոր պահանջները չեն կարող ընդունվել և քննվել վերաքննիչ դատարանի կողմից[2]:

Հատկանշական է, որ ՌԴ Գերագույն դատարանը, անդրադառնալով վարչական դատավարության օրենսգրքի այս նորմի մեկնաբանությանը, որով ամրագրվել է լրիվ ծավալով վերաքննության իրականացում, նշել է, որ այդ նորմից չի բխում կրկնակի քննություն իրականացնելու լիազորություն, ամեն դեպքում, վարչական վերաքննիչ դատարանը վերանայումն իրականացնում է վերաքննիչ բողոքի և դրա պատասխանի սահմաններում[3]:

Ուկրաինայի վարչական դատավարության օրենսգրքի 195-րդ հոդվածից բխում է, որ վարչական վերաքննիչ դատարանը վարչական դատարանի դատական ակտերը վերանայում է ներկայաց-

---

[1] Տե՛ս Code of administrative court procedure, Germany, 19.03.1991 թ.: https://germanlawarchive.iuscomp.org/?p=292:

[2] Տե՛ս Кодекс административного судопроизводства Российской Федерации, от 08.03.2015 N 21-ФЗ (ред. от 29.07.2017): http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_176147/:

[3] Տե՛ս О некоторых вопросах применения судами Кодекса административного судопроизводства РФ: постановление Пленума Верховного суда РФ от 27.09.2016, № 36 // Рос. газета, 2016, № 222:

ված վերաքննիչ բողոքի սահմաններում, սակայն կարող է դուրս գալ վերաքննիչ բողոքի սահմաններից, եթե հայտնաբերում է դատարանի կողմից թույլ տրված այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Վերաքննիչ դատարանը կարող է ընդունել և հետազոտել ինչպես նոր ներկայացված, այնպես էլ դատարանի կողմից արդեն իսկ հետազոտված ապացույցները, եթե դրանց հետազոտումն իրականացվել է օրենսգրքի նորմերի խախտմամբ: Վերաքննիչ դատարանում չեն կարող ներկայացվել նոր հայցապահանջներ, որոնք վարչական դատարանում չեն ներկայացվել[1]:

Ամփոփելով վարչական դատավարությունում վերաքննության ձևի վերաբերյալ առկա տեսական մոտեցումները, ինչպես նաև միջազգային փորձը՝ կարելի է եզրահանգել, որ վարչական դատարանի դատական ակտերի վերանայումը, որպես կանոն, իրականացվում է լրիվ վերաքննության մոդելով կամ ոչ լրիվ և լրիվ վերաքննությունների տարրերի առկայությամբ՝ խառը վերաքննության միջոցով, որտեղ գերակայում են լրիվ վերաքննության տարրերը:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում վարչական դատարանի դատական ակտերի վերանայման մոդելին, ապա անհրաժեշտ է քննարկել Օրենսգրքի՝ վերաքննության սահմաններին վերաբերող դրույթները, որոնք հանգում են հետևյալին.

1) Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար (144-րդ հոդվածի 1-ին մաս):

2) Վերաքննիչ դատարանն ընդունում է Օրենսգրքով կամ վարչական դատարանի սահմանած ժամկետում դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքի, երբ համարում է, որ դրանք գործի լուծման համար էական նշանակություն չունեն: Եթե դատավարության մասնակիցը չի հիմնավորում, որ վարչական դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, ապա դատական

[1] Տե՛ս Кодекс административного судопроизводства Украины, (Відомості Верховної Ради України (ВВР), 2005, № 35-36, № 37, էջ 446): https://zakon.rada.gov.ua/laws/show/2747-15:

ծախսերը, անկախ գործի ելքից, սույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված չափով հոգում է դատավարության այդ մասնակիցը (144-րդ հոդվածի 2-րդ մաս):

3) Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ վարչական դատարանում հաստատված փաստն ընդունվում է որպես հիմք, եթե բողոքում այդ փաստը չի վիճարկվում, կամ վերաքննիչ դատարանն անհրաժեշտ չի համարում կրկին հետազոտել այն (144-րդ հոդվածի 3-րդ մաս):

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում ևս վարչական գործերով վերաքննության խառը տեսակն է գործում՝ լրիվ վերաքննության մոդելի հատկանիշների գերակայությամբ:

Միևնույն ժամանակ հատկանշական է Վճռաբեկ դատարանի կողմից վերոնշյալ դրույթների վերաբերյալ ձևավորված պրակտիկան: Այսպես՝ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վարչական դատավարությունում վերաքննության սահմաններին, արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ թեև վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար, սակայն չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ առաջին ատյանի դատարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել[1]:

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է հետևյալը. «Բողոքարկվող դատական ակտը բեկանելու և գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու, ինչպես նաև ստորադաս դատարանում գործի նոր քննության ծավալ սահմանելու վարչական վերաքննիչ դատարանի լիազորությունը բխում է Հայաստանի Հանրապետության դատավարական օրենսդրությամբ ամրագրված ոչ լրիվ վերաքննության հայեցակարգի բովանդակությունից. այն նպատակ ունի լրացնելու վերաքննության փուլում գործն ամբողջ ծավալով քննելու վարչական վերաքննիչ դատարանի

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/3271/05/12 վարչական գործով 18.07.2014 թ. որոշումը:

իրավազորության բացակայությունը, կանխելու վարչական վերաքննիչ դատարանի կողմից որպես առաջին ատյանի դատարան հանդես գալու հնարավորությունը, ապահովելու դատական ատյանների միջև գործառութային կապերի տրամաբանական բնույթը, երաշխավորելու դատավարության մասնակիցների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը»[1]:

Այսպիսով՝ քննարկվող որոշումների ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ «ex officio» սկզբունքի համատեքստում Վճռաբեկ դատարանի դիրքորոշումները խնդրահարույց են թվում:

Այս առումով՝ համակարծիք ենք այն գիտնականներին, ովքեր նշում են, որ Օրենսգրքում «ex officio» սկզբունքի ամրագրումն ինքնին ենթադրում է վարչական գործերով վերաքննության փուլում դատարանի ակտիվ դերակատարություն՝ լրիվ վերաքննության հատկանիշների առկայություն: Հակառակ դեպքում, իմաստազրկվում են այս սկզբունքի էությունը և դրա իրացումը վերաքննության փուլում:

Այժմ անդրադառնանք վերաքննության փուլում «ex officio» սկզբունքի՝ Օրենսգրքով ամրագրված դրսևորումներին առնչվող հիմնահարցերին:

Այդ սկզբունքի առաջին դրսևորումը Օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում վերանայելու՝ բողոքն ըստ էության քննելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու լիազորությունն է:

Նշված դրույթից կարելի է եզրահանգել, որ, ի տարբերություն քաղաքացիական դատավարության, տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով: Այնուամենայնիվ, վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում վերանայում իրականացնելը որոշակի մեկնաբանման կարիք ունի, մասնավորապես՝ արդյոք բողոքում ներկայացված պահանջը վերաբերո՞ւմ է Վերաքննիչ դատարանի կոնկրետ լիազորության իրականացման պահանջին, այն

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/0079/05/12 վարչական գործով 30.04.2015 թ. որոշումը:

է՝ դատական ակտը բեկանելու և փոփոխելու կամ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու և այլն:

Դատավարագետներ Է. Գ. Գամիդովայի և Ռ. Մ. Մասալաջիուի կարծիքով՝ վարչական վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում վերանայում իրականացնելու դրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին և անհասկանալի է դատարանի ու գործին մասնակցող անձանց համար: Սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ բողոքի հիմքերով և հիմնավորումներով կաշկանդված չլինելու պայմաններում էլ Վերաքննիչ դատարանը վերանայում է կոնկրետ գործը և չի կարող հանդիսանալ գործի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը հաստատող ու քննող դատարան, քանի որ այդ դեպքում Վերաքննիչ դատարանը կվերածվի առաջին ատյանի դատարանի[1]:

Հարկ է արձանագրել, որ Վճռաբեկ դատարանը ևս վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում վերանայում իրականացնելու դրույթին տվել է հակասական մեկնաբանություններ:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով դատական ակտը և գործն ուղարկելով նոր քննության, դուրս է եկել վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններից, քանի որ բողոքաբերը խնդրել է բեկանել դատական ակտը և փոփոխել այն[2]:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից վարչական դատարանի վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմնավորվածությանը և իր դատական ակտում վիճարկվող վարչական ակտի անվավերության ևս մի քանի հիմքեր նշելուն, որոնք, մասնավորապես, վերաբերում են վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում առերևույթ թույլ տրված ընթացակարգային խախտումներին, գտել է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը դուրս է ե-

---

[1] Տե՛ս **Гамидова Э.Г.,** Рассмотрение административных дел в порядке апелляции по кодексу административного судопроизводства Российской Федерации // Ленинградский юридический журнал, 2016, № 4 (46).

[2] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/4047/05/09 վարչական գործով 14.10.2011 թ. որոշումը:

կել վարչական դատարանի վճիռը վերաքննության կարգով վերանայման ենթարկելու օրենսդրորեն կանխորոշված սահմաններից, քանի որ իր դատական ակտի հիմքում դրել է այնպիսի իրավական և փաստական հանգամանքներ, որոնք Դատարանում քննության առարկա չեն դարձվել[1]:

Վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ Վերաքննիչ դատարանը՝ որպես վերաքննություն իրականացնող դատական ատյան, պարտավոր է համապատասխան դատական ակտը վերանայել վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ըստ էության քննություն իրականացնելիս չպետք է դուրս գա վարչական գործի հարուցման հիմք հանդիսացող հայցադիմումի շրջանակներից[2]:

Հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումները՝ կարծում ենք, որ Վճռաբեկ դատարանը վերաքննության սահմանները վարչական դատավարությունում բնորոշելիս հիմք է ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության մոտեցումները և հաշվի չի առել «ex officio» սկզբունքը: Ավելին՝ գտնում ենք, որ Վերաքննիչ դատարանին վերաքննիչ բողոքի հիմքերից ու հիմնավորումներից դուրս գալու հնարավորություն տալու պայմաններում այն չպետք է կաշկանդված լինի ներկայացված պահանջով և ինքնուրույն պետք է որոշի իր կողմից կիրառվող լիազորության տեսակը: Այս առումով տեղին է նշել, որ նույնիսկ քաղաքացիական դատավարությունում վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջը չունի որոշիչ նշանակություն:

Անդրադառնալով այս սկզբունքի իրացմանը վերաքննության փուլում՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները շարադրելու նորմը ոչ միայն նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը, ի պաշտոնե (ex officio) նշված հիմքերի շրջանակներում իրականաց-

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/9692/05/13 վարչական գործով 02.12.2016 թ. որոշումը:

[2] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/2540/05/10 վարչական գործով 27.04.2012 թ. որոշումը:

նել քննություն, իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտել ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ[1]:

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը, նշելով, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր կոնկրետ հանգամանքը պարզելու համար ձեռնարկել ողջամիտ միջոցներ, այսինքն՝ իրականացված քաղաքաշինական գործունեության նպատակների վերաբերյալ փաստերը պարզել ի պաշտոնե, գործն ուղարկել է վարչական դատարան նոր քննության[2]:

Հատկանշական է Վճռաբեկ դատարանի կողմից վերաքննության փուլում «ex officio» սկզբունքի իրացման կապակցությամբ արտահայտված այն դիրքորոշումը, համաձայն որի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքը վերաբերում է բացառապես գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելուն, այլ խոսքով՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելուն, և չի վերաբերում դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ հայցի իրավական հիմքերը լրացնելուն, դատարանի նախաձեռնությամբ վեճի սահմաններից դուրս գալուն, ինչպես նաև սույն սկզբունքը վերաքննիչ դատարանին հնարավորություն չի ընձեռում սեփական նախաձեռնությամբ և ինքնուրույն լրացնելու վերաքննիչ բողոքի իրավական հիմքերը: Մինչդեռ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վերաքննիչ դատարանի կողմից «ex officio» սկզբունքի իրացումը չի կարող ուղղված լինել բացառապես գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելուն, այլ ենթադրում է Վերաքննիչ դատարանի կողմից այս սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք իրենց էությամբ կիրառելի են նաև վերաքննության փուլում և չեն խաթարում վերաքննության էությունը: Ընդ որում՝ անհրաժեշտ ապացույցներ պահանջելը կարող է կիրառվել Վերաքննիչ դատարանի կողմից որպես «ex officio» լիազորություն, որի կապակցությամբ երկու մոտեցում է ենթա-

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/2540/05/10 վարչական գործով 27.04.2012 թ. որոշումը:

[2] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով 24.05.2013 թ. որոշումը:

դրվում՝ Վերաքննիչ դատարանը կարող է ինքնուրույն պահանջել անհրաժեշտ ապացույցները կամ վարչական դատարանի կողմից այն չպահանջելու հիմքով գործն ուղարկել նոր քննության:

Ամփոփելով հարկ է արձանագրել, որ Վճռաբեկ դատարանի որոշումներում վերաքննության սահմանների և «ex officio» սկզբունքի իրացման կապակցությամբ ձևավորվել են հետևյալ մոտեցումները.

1) Վերաքննիչ դատարանը կաշկանդված է ոչ միայն վերաքննիչ բողոքում նշված պահանջով, այլև վերաքննիչ բողոքի հիմքերով ու հիմնավորումներով:

2) Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի հիմքում չի կարող դնել այնպիսի իրավական և փաստական հանգամանքներ, որոնք վարչական դատարանում քննության առարկա չեն դարձվել:

3) Վերաքննիչ դատարանը չի կարող դուրս գալ հայցի շրջանակներից:

4) Վերաքննիչ դատարանի կողմից «ex officio» սկզբունքի իրացումն ուղղված է բացառապես գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելուն:

Կարծում ենք՝ վերոնշյալ եզրահանգումներին համաձայնելու պարագայում իմաստազրկվում են վարչական դատավարության՝ «ex officio» սկզբունքով պայմանավորված առանձնահատկությունները, և վարչական դատավարության նկատմամբ մեխանիկորեն կիրառելի են դառնում քաղաքացիադատավարական մոտեցումները: Այնուամենայնիվ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, Օրենսգիրքը Վերաքննիչ դատարանին կաշկանդել է միայն վերաքննիչ բողոքի պահանջով, մինչդեռ Վճռաբեկ դատարանի կողմից լայնացվել է այդ սահմանափակումների շրջանակը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ վերաքննության փուլում «ex officio» սկզբունքի իրացման առանձնահատկությունների վերաբերյալ կարելի է կատարել օրենսդրական փոփոխություններ ենթադրող հետևյալ մոտեցումները:

1) Վերաքննիչ դատարանը պետք է կաշկանդված լինի ոչ թե վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջով, այլ հայցապահանջով:

2) Վերաքննիչ բողոքում նշված հիմքերն ու հիմնավորումներն ունեն կողմնորոշող և ոչ կանխորոշող բնույթ:

3) Վերաքննիչ դատարանը, անկախ բողոքում նշված լինելու հանգամանքից, պետք է ունենա վարչական դատարանի կողմից «ex officio» սկզբունքի պահպանումը ստուգելու պարտականություն:

4) Վերաքննիչ դատարանը, անկախ բողոքում նշված լինելու հանգամանքից, պետք է ունենա դատական ակտի անվերապահ բեկանման, ինչպես նաև գործի վարույթը կարճելու հիմքերի առկայությունը ստուգելու պարտականություն:

ОСОБЕННОСТИ РЕАЛИЗАЦИИ ПРИНЦИПА «EX OFFICIO» НА ЭТАПЕ АПЕЛЛЯЦИИ

Лилит Петросян

Аспирант кафедры гражданского процесса ЕГУ

Статья посвящена вопросам, связанным с реализацией принципа «ex officio» на стадии апелляции. Для определения проявлений данного принципа в работе нами анализируются вопросы полной и неполной апелляции в административном производстве, каждая из которых имеет характерные черты, позволяющие отграничить одну от другой. Анализ норм административно-процессуального права свидетельствует о наличии и сочетании отличительных признаков двух видов апелляции, что позволяет говорить о смешанной модели апелляции в административном производстве. Нами проанализированы пределы апелляционного разбирательства с учетом проявления принципа «ex officio» и предлагаются новые подходы к реализации данного принципа.

PECULIARITIES OF EXCERCISING EX OFFICIO PRINCIPLE AT THE STAGE OF REVIEWING THE ACTS OF ADMINISTRATIVE COURT

Lilit Petrosyan
PHD Student of the YSU Chair of Civil Procedure

The article is devoted to the issues of excercising ex officio principle at the stage of reviewing the acts of administratve court. As a result, for defining the manifestations of the following principle, the questions related to the full and partial appeal in administrative proceedsing are being discussed, both of which have certain characteristics allowing to differentiate them. The analyze of the norms of administrative court procedure indicates that the combination of two types of appeal-the mixed model of appeal, exists in the administrative court procedure. Furthermore, the author analyzes the limits of review by the administrative court of appeals and the manifestation of the ex officio principle and proposes new approaches for amending the code of Administrative Court procedure of RA.

Բանալի բառեր՝ *«ex officio» սկզբունք, վերաքննություն, լրիվ վերաքննություն, վերաքննիչ վարչական դատարան, վերաքննության սահմաններ:*
Ключевые слова: *принцип «ex officio», апелляция, полная апелляция, административный апелляционный суд, пределы рассмотрения.*
Key words: *ex officio principle, appeal, full appeal, administrative court of appeals, limits of reviewing the decisions of the administrative court.*

ԸՆԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Անի Միքայելյան[1]

Իրավաբանական գրականության մեջ դատական պաշտպանության իրավունքի բովանդակության վերաբերյալ առկա է երկու մոտեցում: Առաջին մոտեցման համաձայն՝ դատական պաշտպանության իրավունքի բովանդակության մեջ առանձնանում են նյութական և դատավարական կողմերը: Նյութականը ներառում է քաղաքացու՝ խախտված իրավունքների վերականգնման իրավունքը, իսկ դատավարականը՝ դատարան դիմելու իրավունքը: Երկրորդ մոտեցման համաձայն՝ դատական պաշպանության իրավունքի բովանդակությունը ներառում է կոնկրետ լիազորություններ, որոնց թվին դասվում են իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, այն դատարանի և այն դատավորի կողմից գործի քննության իրավունքը, որոնց ընդդատությանը այն վերապահված է օրենքով[2]:

Այսինքն՝ ***դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը***[3]***:*** Դատական պաշտպանության իրավունքը, ի թիվս այլոց, ենթադրում է նաև, որ իրավաբանական գործերի քննությունը և լուծումը պետք է իրականացվեն օրենքով սահմանված, այլ ոչ թե կամայականորեն ընտրված դատարանի կազմի կողմից[4]:

Վերոշարադրյալի հիման վրա կարող ենք նշել, որ դատական պաշտպանության իրավունքի իրացումն ապահովվում է դատավարական այնպիսի կառուցակարգերի միջոցով, ինչպիսիք են ենթակայության և ընդդատության ինստիտուտները:

---

[1] ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Վ. Հովհաննիսյան:

[2] Տե՛ս Научно-практический комментарий к ГПК РСФСР, под ред. ***М.К. Треушникова***, М., Изд-во «Городец», 2000, էջ 161:

[3] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 փետրվարի 03-ի թիվ ՍԴՈ-787 որոշումը:

[4] Տե՛ս Определение Конституционного Суда РФ от 4 июня 1998 г. «По жалобе гражданина Генина А.И. на нарушение его конституционных прав пунктом 1 части 2, էջ 122, ГПК РСФСР» // С 3, 1998, № 30, էջ 3799:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ընդհանուր իրավասության դատարան դիմելու իրավունքի իրացման (հայցադիմում ներկայացնելու) համար նախատեսել է մի շարք ձևական և բովանդակային պահանջներ, որպիսիք անհրաժեշտ են դիմողի անձը (ներկայացուցչին) նույնականացնելու, դատարան ներկայացվող հայցադիմումը, այդ անձի իրավունքների ու ազատությունների խախտման փաստը, հանգամանքները, պատասխանողին ուղղված իրավական պահանջը մասնագիտորեն ձևակերպելու, առկա վեճի բնույթն ու բովանդակությունը դատարանի կողմից պարզելու և դրան իրավական գնահատական ու լուծում տալու նպատակով:

Նշվածի հիման վրա կարող ենք փաստել, որ ենթակայությունը և ընդդատությունը հանդես են գալիս որպես դատարան դիմելու իրավունքի իրացման պայմաններից մեկը:

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական արժեքը հենց այն է, որ ոչ ոք չպետք է զրկվի իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով: Միայն օրենքով պետք է սահմանվեն ընդդատության փոփոխման հստակ հիմքերը՝ բացառելով անորոշությունը, սուբյեկտիվիզմը, դատական կամայականությունները գործը մի դատարանից մեկ այլ դատարան հանձնելու հարցը լուծելիս[1]:

Դատական պաշտպանության սահմանադրորեն ամրագրված իրավունքի խախտման են հանգեցնում այն դեպքերը, երբ գործը քննում է այն դատարանը, որը տվյալ գործը քննելու իրավասություն չունի, կամ ընդհակառակը, երբ դատարանը, որը իրավասու է տվյալ գործը քննելու, հրաժարվում է այն քննության ընդունելուց:

Քաղաքացիական գործի ճիշտ ընդդատության որոշումն ունի գործնական կարևոր նշանակություն: Սխալ դատարան հայցի ներկայացումը, ոչ ընդդատյա դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելը և քննություն իրականացնելը հանգեցնում են

[1] Տե՛ս Постановление Конституционного Суда РФ от 16 марта 1998 г. «По делу о проверке конституционности статьи 44 УПК РСФСР и статьи 123 ГПК РСФСР в связи с жалобамиряда граждан» // С 3, 1998, № 12, էջ 1459; նաև Определения Конституционного Суда РФ от 4 июня 1998 г., 1 апреля 1999 г., 13 апреля 2000 г.:

ընդդատության կանոնների խախտման, որը քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում կարող է ունենալ իրավական տարբեր հետևանքներ՝ ընդհուպ դատական ակտի բեկանում:

Գործող ՀՀ ՔԴՕ-ն, ի տարբերություն նախկին ՀՀ ՔԴՕ-ի, հստակորեն տարբերակում է ենթակայության և ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքները:

Ըստ ՀՀ ՔԴՕ իրավակարգավորման՝ ընդդատության կանոնների խախտման հետևանքը հայցի հարուցման փուլում հայցադիմումը վերադարձնելն է, գործի նախապատրաստման, քննության փուլերում՝ գործի հանձնումը այլ դատարանի քննությանը՝ ըստ պատշաճ ընդդատության:

Բացի այս երկու հիմքերից՝ ՀՀ ՔԴՕ-ն նախատեսում է նաև հայցադիմումի ընդունման մերժումը (ՀՀ ՔԴՕ 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) և գործի վարույթի կարճումը (ՀՀ ՔԴՕ 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) այն դեպքերում, երբ գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Ենթակայության և ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքները կարելի է տարանջատել՝ ելնելով խախտման հայտնաբերման պահից:

Վերոշարադրյալի հիման վրա կարող ենք նշել, որ **ենթակայության (առարկայական ընդդատության) կանոնների խախտման իրավական հետևանքը** հայցի հարուցման փուլում հայցադիմումի ընդունումը մերժելն է, իսկ գործի նախապատրաստման, քննության փուլերում՝ գործի վարույթը կարճելը:

Տարածքային ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքը համապատասխանաբար հայցի հարուցման փուլում հայցադիմումը վերադարձնելն է, իսկ գործի նախապատրաստման, քննության փուլերում՝ գործի հանձնումը այլ դատարանի քննությանը՝ ըստ պատշաճ ընդդատության:

Սույն աշխատանքի շրջանակներում ուսումնասիրության առարկա են ենթակայության և ընդդատության կանոնների խախտման հետևանքները քաղաքացիական գործի հարուցման փուլում, որոնք են հայցադիմումը վերադարձնելը և հայցադիմումի ընդունումը մերժելը:

Հայցադիմումի վարույթ ընդունելու հարցը լուծելիս դատարանը նախ և առաջ պարզում է հայցադիմումի ընդունումը մերժե-

լու կամ այն վերադարձնելու հիմքերի առկայությունը և միայն այդ հիմքերի բացակայության պարագայում որոշում է կայացնում հայցադիմումի վարույթ ընդունելու մասին։

Ընդ որում՝ նշված հիմքերի առկայությունն ստուգելու համար դատարանը չպետք է կաշկանդվի հայցվորի կողմից հայցադիմումում ներկայացված պահանջի ձևակերպումից և պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում դրա բովանդակությունից հասկանալ վեճի բնույթն ու կիրառման ենթակա օրենսդրությունը, որպեսզի անսխալ որոշի նաև գործի ենթակայությունը։

Այլ կերպ ասած՝ հայցադիմումի վարույթ ընդունելու հարցը լուծելիս դատարանը նախ և առաջ պետք է որոշի՝ վեճը ենթակա՞ է արդյոք դատարանի քննությանը։ Եթե դատարանը պարզում է, որ վեճը դատարանի քննությանը ենթակա չէ, ապա մերժում է հայցադիմումի ընդունումը (ՀՀ ՔԴՕ 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ)։ Այսինքն՝ ընդհանուր իրավասության դատարանը հայցադիմումի վարույթ ընդունելու հարցը լուծելիս ստուգում է նաև գործի (վեճի)՝ իրեն ենթակա լինելու վեճի քաղաքացիաիրավական (մասնավոր իրավական) բնույթը և վարույթ է ընդունում այն հայցադիմումը, որը բխում է քաղաքացիաիրավական հարաբերությունից[1]։

Նման իրավակարգավորումը կոչված է բացառելու դատարանների իրավասությանը չհանձնված վեճերի քննությունը և լուծումը դատարանների կողմից։ Եթե գործը ենթակա չէ դատարանի քննությանը, ապա դատարան դիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի, իսկ դատարանն իրավասու չէ խախտելու այլ մարմինների իրավասությունը և լուծելու նրանց վերապահված գործերը։

Ենթակայության հարցը պարզելուց հետո դատարանը պետք է որոշի քաղաքացիական գործի ընդդատությունը, որը, ինչպես արդեն նշեցինք, տարանջատում է դատարանների իրավասությունը դատական համակարգի միևնույն օղակի ներսում։ Քաղաքացիական գործի դատական ենթակայությունը որոշելուց անմիջապես հետո հայցադիմումը (դիմումը) ընդունող դատավորը պետք է

[1] Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ թիվ ԵԿԴ/0745/02/11 քաղաքացիական գործով 31.08.2012 թ. որոշումը։

պարզի, թե տվյալ գործն ընդդատյա՞ է արդյոք այն դատարանին, որին սպասարկում է ինքը: Ընդդատության հարցը դատավորը լուծում է միանձնյա հայցադիմումն ընդունելու հարցը լուծելու հետ միաժամանակ: Եթե գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին, ապա դատավորը վերադարձնում է հայցադիմումը (ՀՀ ՔԴՕ 127 հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Առաջին ատյանի դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում է կայացնում՝ այն հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի հետ ուղարկելով հայցվորին (ՔԴՕ 127 հոդվ. 2-րդ մաս):

Հայցադիմումը վերադարձնելը քաղաքացիադատավարական պաշտպանության միջոց է: Որպես քաղաքացիադատավարական պաշտպանության միջոց՝ հայցադիմումը վերադարձնելը ներկայացնում է կոնկրետ պահանջներ, որոնք անհրաժեշտ է իրականացնել դատական պաշտպանության իրավունքի կենսագործման համար: Այդ պահանջները խոչընդոտում են անբարեխիղճ հայցվորի կողմից քաղաքացիական գործով վարույթի հարուցումը: Ընդ որում՝ անբարեխիղճ համարվում է այն կողմը, որը փորձում է կենսագործել դատական պաշտպանության իրավունքը՝ շրջանցելով օրենսդրությամբ ամրագրված կանոնները, որի հետևանքով կարող են խախտվել այլ անձանց իրավունքները:

Դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել՝ կապված հայցադիմում ներկայացնելիս կոնկրետ պայմանների չպահպանման հետ:

Սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ներառում է դատարանի կողմից որոշումների կայացում, ընդ որում՝ հայցադիմումի վերադարձման մասին որոշումը նպատակաուղղված է նրան, որ վերացվեն խոչընդոտները շահագրգիռ անձի կողմից դատական պաշտպանության իրավունքի կենսագործման ճանապարհին[1]:

Հետևաբար հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ դատարանը պետք է մատնանշի խոչընդոտների վերացման ուղիները: Օրինակ՝ ընդդատության կանոնների խախտման դեպքում,

[1] Տե՛ս **Соловьева Т.С.,** Возвращение искового заявления в гражданском судопроизводстве: Дисс. на соискание учёной степени кандидата юридических наук, Саратов, 2006, էջ 15-18:

կարծում ենք, դատարանը պետք է մատնանշի, թե ո՛ր դատարան պետք է դիմի հայցվորը՝ գործող օրենսդրության համաձայն:

Հայցադիմումը վերադարձնելու խնդրին անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործում[1]: Սույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ դատարան (այդ թվում՝ Սահմանադրական դատարան) դիմելուն առնչվող իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը ոչ միայն դիմումի բովանդակության վերաբերյալ պարտադիր պայմաններ սահմանելն է, այլև այն քննության ընդունելու (կամ չընդունելու) պատճառաբանման նորմատիվ պահանջի սահմանումը: Ի թիվս վերոնշյալի՝ դատարանը գտել է նաև, որ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ իրականացումը պայմանավորված է նաև օրենքներով նախատեսված ընթացակարգային պահանջների հստակ և միակերպ կատարմամբ, որպիսիք իրավական պայմաններ կստեղծեն մի կողմից՝ անձի՝ դատարան հասցեագրված դիմումի, դրանում բարձրացված հարցերի օբյեկտիվորեն գնահատմամբ, նաև նրա հիմնավոր ճանաչմամբ, մյուս կողմից՝ դատարանի կողմից այդ դիմումի քննությամբ (այդ թվում՝ նախնական) պատճառաբանված որոշում կայացնելու համար: Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսգրքով նախատեսված է կոնկրետ իրավական կառուցակարգ, որի շրջանակներում դատարանն իրավասու է գնահատելու հայցադիմումի ընդունելիությանն առնչվող պահանջների և պայմանների պահպանվածությունը:

Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ, *հայցադիմումը վերադարձնելու մասին միջանկյալ դատական ակտ կայացնելով, դատարանը պատշաճ հիմնավորմամբ պետք է մատնանշի*

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 17.04.2012 թ. թիվ ՍԴՈ-1022 որոշումը՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով»:

այն բոլոր առերևույթ թերությունները, որոնք թույլ են տրվել հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումում[1]:

ՀՀ ՔԴՕ 127-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են հայցադիմումը վերադարձնելու բոլոր հիմքերը: Սակայն ընդդատության կանոնների խախտման հիմքով հայցադիմումը վերադարձնելու դեպքում, նույնիսկ հայցադիմումի վերադարձման հիմքը նշելու պարագայում էլ հայցվորը պատշաճ ատյան որոշելու հարցում կարող է ընկնել անորոշության մեջ: *Մեր կարծիքով՝ նպատակահարմար կլիներ, եթե ՔԴՕ-ն նորմ սահմաներ այն մասին, որ եթե դատավորը գործն այդ դատարանին ընդդատյա չլինելու հիմքով վերադարձնում է հայցադիմումը, ապա պարտավոր է իր որոշման մեջ ցույց տալ, թե հայցվորը որ դատարանին պետք է դիմի*[2]: Այսպես, օրինակ, ՌԴ ՔԴՕ-ի 129-րդ հոդվածը, որը կարգավորում է հայցադիմումը վերադարձնելուն առնչվող հարցերը, պարունակում է նորմ, որի համաձայն, երբ դատավորը վերադարձնում է հայցադիմումը գործը տվյալ դատարանին ընդդատյա չլինելու հիմքով, հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման մեջ պետք է անպայման նշի այն դատարանը, որին կարող է դիմել հայցվորը:

ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը իր՝ 20.09.2005 թ.-ի թիվ 67 որոշմամբ[3] ևս անդրադարձել է ՀՀ ՔԴՕ-ով գործը տվյալ դատարանին ընդդատյա չլինելու հիմքով հայցադիմումը վերադարձնելու խնդրին՝ արձանագրելով, որ այն դեպքում, երբ դատավորը, ընդդատության կանոններին համապատասխան, պարզում է, որ գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին, կայացնում է հայցադիմումը վերադարձնելու մասին պատճառաբանված որոշում:

---

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի ապրիլի 14-ի թիվ ՍԴՈ-1022 որոշումը:

[2] Տե՛ս **Պետրոսյան Ռ. Գ.,** Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., Եր., Երևանի համալս. հրատ.., 2007, էջ 394-395:

[3] Տե՛ս ՀՀ Դատարանների նախագահների խորհրդի՝ 2005 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 61 որոշումը՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ և 85-րդ հոդվածների կիրառման դատական պրակտիկայի մասին»:

Սույնի հիման վրա կարող ենք նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ ներկայացված հայցադիմումի ընդդատությունը պատկանում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին, սակայն հայցադիմումը ներկայացնելիս խախտվել է տարածքային ընդդատության կանոնը, դատարանը վերադարձնում է հայցադիմումը:

Ենթակայության կանոնների խախտման պարագայում, այսինքն՝ այն դեպքերում, երբ գործը քաղաքացիական դատավարության կարգով ենթակա չէ քննության, դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը:

Մինչդեռ դատական պրակտիկայում հանդիպում է նաև, որ դատարանները ենթակայության (առարկայական ընդդատության) կանոնների խախտմամբ ներկայացված հայցադիմումները վերադարձնում են հայցադիմումի ընդունումը մերժելու փոխարեն:

Օրինակ՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵՄԴ/1047/02/12 քաղաքացիական գործով 15.12.2012 թ. որոշում է կայացրել հայցադրմումը վերադարձնելու մասին այն հիմքով, որ տվյալ վեճն ընդդատյա չէ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանին. այն ընդդատյա է վարչական դատարանին, ինչը պայմանավորված է վեճի հանրային իրավական բնույթով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն էլ իր հերթին նշված որոշումը համարել է իրավաչափ[1]:

Պրակտիկայում հանդիպող նման որոշումների պատճառը նախ և առաջ ՀՀ՝ 1998 թ. ընդունված ՔԴՕ-ով ենթակայության և ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքների չտարանջատումն էր:

ՀՀ գործող ՔԴՕ-ն արդեն հստակ տարանջատել է ենթակայության և ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքները:

Մինչդեռ ՀՀ գործող ՔԴՕ-ն չի տարանջատում այն հետևանքների տարբերությունները, որոնք կարող են վրա հասնել գործը

[1] Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ թիվ ԵՄԴ/1047/02/12 քաղաքացիական գործով 10.12.2012 թ. որոշումը:

ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին ենթակա չլինելու և գործն ընդհանրապես որևէ դատարանի ենթակա չլինելու դեպքում:

Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորման՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը տարբերակված մոտեցում է դրսևորել վեճը ՀՀ վարչական դատարանին ընդդատյա չլինելու և վեճը որևէ դատարանի ենթակա չլինելու հարցում՝ տարբերակված կերպով կարգավորելով նաև դրանցից բխող դատավարական հետևանքները (մի դեպքում սահմանելով վերահասցեագրման, մյուս դեպքում՝ հայցադիմումի ընդունման մերժումը և գործի վարույթի կարճումը), մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և՛ վեճն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին ենթակա չլինելու, և՛ ընդհանրապես որևէ դատարանի ենթակա չլինելու դեպքում նախատեսել է մեկ ընդհանուր դատավարական հետևանք՝ հայցադիմումի ընդունմանը մերժումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համաձայն՝ վարչական դատարանին որևէ գործի ընդդատյա չլինելու հանգամանքի՝ այդ գործի քննության ընթացքում պարզվելու իրավաբանական հետևանքն այն է, որ վարչական դատարանը պետք է որոշում կայացնի տվյալ գործն ըստ ընդդատության վերահասցեագրելու մասին:

Օրենսդիրը, նպատակ ունենալով վարչական արդարադատության համակարգում ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, նախատեսել է հայցադիմումի վերահասցեագրման ինստիտուտը: Ընդ որում՝ այս կառուցակարգը վարչական դատավարության համակարգ ներդրվեց ՀՀ՝ 05.12.2013 թվականին ընդունված և 07.01.2014 թվականին ուժի մեջ մտած վարչական դատավարության օրենսգրքով (մինչ այդ գործող՝ 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը նշված կանոնի խախտումը դիտում էր որպես գործի վարույթի կարճման հիմք): Հայցադիմումը վերահասցեագրելը սահմանելով որպես վարչական դատարանի պարտականություն՝ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է, որ վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզե-

լով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության: Այսպիսով՝ վարչական դատարանը, կաշկանդված լինելով արդարադատության պատշաճ իրականացման և անձանց իրավունքների ու ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանության ապահովման կոնվենցիոն կարգավորումներով, պարտավոր է պարզել՝ արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է վարչական դատարանին, թե՞ ոչ, և գործի՝ վարչական դատարանին ընդդատյա չլինելու դեպքում վերահասցեագրել այն ըստ ընդդատության՝ դրանով իսկ ապահովելով անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի գործնական իրականացման երաշխավորումը[1]:

Այսպիսի իրավակարգավորման ներմուծումը ՀՀ վարչադատավարական համակարգ կոչված է ապահովելու անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը. դատական պաշտպանության իրավունքի իրացումն անհնար է առանց համապատասխան կառուցակարգերի, իսկ այդ կառուցակարգերի արդյունավետության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ վերջիններս ապահովում են դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրանացումը: Որպես գործի քննության արդյունավետության հիմնական չափանիշներ առանձնացվում են գործի՝ ողջամիտ ժամկետում քննությունը, օրինական ու հիմնավորված դատական ակտի կայացումը, դատական խնայողությունը[2]: *Վերը շարադրվածից հետևում է, որ ոչ իրավասու դատարանին դիմելու հանգամանքը չպետք է խոչընդոտի անձի դատական պաշտպանության իրավունքը և անհարկի ծանրաբեռնի նույնաբնույթ գործողություններ իրականացնելու և լրացուցիչ ծախսեր կատարելու պարտավորություններով կամ ձգձգի վերջիններիս իրավունքի պաշտպանության գործընթացը[3]:*

---

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/7029/05/11 վարչական գործով 26.12.2016 թ. որոշումը:

[2] ***Цихоцкий А.В.,*** Теоретические проблемы эффективности правосудия по гражданским делам: Автореферат дис. .... докт. юрид. наук, www.dissercat.com/content/teoreticheskie-problemy-effektivnosti-provosudiya-po-grazhanskim-delam-0 www.dissercat.ru.

[3] Տե՛ս **Խունդկարյան Ե., Ղարսլյան Ա.,** Ընդդատության ինստիտուտի իրավակարգավորման որոշ հիմնախնդիրները ՀՀ վարչական և քաղաքա-

Փաստորեն, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում սահմանել է, որ վարչական դատարանին որևէ գործի ընդդատյա չլինելու հանգամանքն այդ գործի քննության ընթացքում պարզվելու իրավաբանական հետևանքն այն է, որ վարչական դատարանը որոշում է կայացնում տվյալ գործն ըստ ընդդատության վերահասցեագրելու մասին:

Միևնույն ժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը կարգավորել է նաև այն դեպքը, երբ վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության: Մասնավորապես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության: «Որևէ դատարան» եզրույթի ներքո օրենսդիրն ի նկատի է ունեցել, որ վեճը վերապահված չէ ՀՀ-ում գործող ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների քննությանը և լուծմանը: Նման իրավակարգավորումը կոչված է բացառելու դատարանների իրավասությանը չհանձնված վեճերի քննությունը և լուծումը դատարանների կողմից: Եթե գործը ենթակա չէ դատարանին, ապա դատարան դիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի, իսկ դատարանն իրավասու չէ խախտել այլ մարմինների իրավասությունը և լուծել նրանց վերապահված գործերը, հետևաբար գործի վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով հստակ կարգավորում տալ այն հարցին, թե քաղաքացիական գործի հարուցման փուլում որոնք են ենթակայության և ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքները:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է միասնական մոտեցում որդեգրել ՀՀ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերում ենթակայության և ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքների հարցում: Հետևաբար նպատակահարմար կլիներ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ևս սահմանել վերահասցեագրման ինստիտուտը՝ դրանով իսկ համա-

---

ցիական դատավարություններում: Դատական իշխանություն, օգոստոս-սեպտեմբեր 2016, 8-9 (206-207), էջ 76:

պատասխանեցնելով ՀՀ ՎԴՕ-ով և ՔԴՕ-ով սահմանված իրավակարգավորումները[1]:

Գործի՝ ընդհանուր իրավասության դատարանին ենթակա չլինելը կարող է բացահայտվել ինչպես քաղաքացիական գործի հարուցման (առանց քաղաքացիական գործով վարույթ հարուցելու ստացված հայցադիմումը վերհասցեագրելով իրավասու դատարանին), այնպես էլ գործի քննության և լուծման փուլերում՝ կողմերի ներկայացրած ապացույցների հետազոտության հիման վրա ձևավորված եզրահանգմամբ, այսինքն՝ դատարանի մոտ կարող է վերահասցեագրում իրականացնելու անհրաժեշտություն առաջանալ դատավարության ցանկացած փուլում:

Միևնույն ժամանակ գործնական հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, **թե ինչպես կարող է գործել վերահասցեագրման ինստիտուտը վերադաս դատական ատյաններում:**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան իրավակարգավորման տառացի մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ վերահասցեագրում կարող է իրականացնել միայն ՀՀ վարչական դատարանը: Վերադաս դատական ատյաններում վերահասցեագրման ընթացակարգի կիրառման հնարավորությանը պետք է անդրադառնալ դատական այս ատյանների լիազորությունների համատեքստում: Այսպես՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ ՀՀ ՎԴՕ համապատասխան հոդվածներում նախատեսված լիազորությունների բովանդակության վերլուծությունից հետևում է, որ դատական այս ատյանները բողոքների քննության շրջանակներում վերահասցեագրում իրականացնելու լիազորություն չունեն և կաշկանդված են միայն ուղղակիրեն իրենց վերապահված լիազորություններով:

---

[1] Հարկ է նշել, որ դատական պրակտիկայում նշված ինտիտուտը բավականին հաջող է գործում: Դրա օրինակ կարող են ծառայել ՀՀ վարչական դատարանի՝ գործը վերահասցեագրելու մասին մի շարք պատճառաբանված որոշումները. տե՛ս, օրինակ, ՀՀ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/1525/05/14 վարչական գործով 03.04.2014 թ. «Հայցադիմումը վերահասցեագրելու մասին» որոշումը, ՀՀ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/6236/05/14 վարչական գործով 01.09.2015 թ. որոշումը:

ՀՀ քաղաքացիական դատավարությունում ներմուծելով վերահասցեագրման ինստիտուտը՝ քննարկման առարկա պետք է դառնա նաև դրա կիրառման հարցը վերադաս դատական ատյաններում, որի պարագայում հնարավոր է երկու տարբերակ: Առաջին՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը և ՀՀ Վճռաբեկ դատարանը գործի վերահասցեագրման՝ հիմքերի առկայության դեպքում բեկանում են դատական ակտը՝ գործը ուղարկելով նոր քննության՝ հայցադիմումը վերահասցեագրելու համար: Երկրորդ՝ վերադաս դատարանները, դատական ակտը բեկանելով, իրենք են գործը վերահասցեագրում ըստ պատշաճ ընդդատության:

Առաջին տարբերակը համահունչ է օրենքի տառին, միաժամանակ համապատասխանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորմանը: Սակայն արդյունավետության առումով անշուշտ խոցելի է: Ուստի կարծում ենք՝ համանման լիազորություն վերադաս դատական ատյաններին տրամադրելը կբխի արդարադատության արդյունավետության շահերից, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի և դատական խնայողության սկզբունքի ապահովման անհրաժեշտությունից:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ, օրինակ, գործի վարույթի կարճման հիմքի առկայության դեպքում (վեճը ենթակա չէ դատարանում քննության) վերադաս դատական ատյանները անձամբ են կարճում քաղաքացիական գործի վարույթը (ՀՀ ՔԴՕ 380-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ):

Ասվածի հիման վրա առաջարկում ենք ՀՀ ՔԴՕ-ում նախատեսել վերահասցեագրման ինստիտուտը՝ այն ձևակերպելով հետևյալ կերպ.

«1. Դատարանը, դատավարության ցանկացած փուլում կողմերի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ենթակա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ենթակայության:

2. Պահանջն ըստ ենթակայության վերահասցեագրելու վերաբերյալ որոշումը դատարանը կայացնում է պահանջի՝ իրեն ենթակա չլինելու վերաբերյալ հանգամանքը պարզելուց հետո՝ եռօրյա ժամկետում՝ այն ուղարկելով դատավարության մասնակիցներին»:

Իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվում նաև այն մասին, որ առարկայական ընդդատության (ենթակայության) կանոնների խախտման հետևանք կարող է դիտարկվել նաև հայցադիմումը (բողոքը) **առանց քննության թողնելը**՝ պարտադիր նշելով այն դատական մարմինը, որին գործը ընդդատյա է օրենքով[1]:

Որպես դրա մասնավոր դեպք դիտարկվում է հետևյալը: Եթե շահագրգիռ անձը խախտում է գործի լուծման արդադատարանական կարգը, ապա շահագրգիռ անձի հայցը կարող է թողնվել առանց քննության, ինչը, սակայն, չի խոչընդոտում կրկին դիմել դատարան նույն պահանջով, եթե պահպանված լինի վեճի լուծման համաձայնեցված արտադատարանական կարգը[2]:

Հարկ է նշել, որ ՀՀ ՔԴՕ-ով ևս նախատեսվել է հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու նման հիմք: Այսպես՝ ՀՀ ՔԴՕ-ն սահմանում է, որ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե պատասխանողը մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը հղում է կատարում մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման՝ օրենքով կամ պայմանագրով նախատեսված արտադատական կարգը հայցվորի կողմից պահպանված չլինելու հանգամանքին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գտնում է, որ վեճի կարգավորման արտադատական կարգ սահմանող պայմանագիրն առ ոչինչ է, ուժը կորցրել է կամ ակնհայտորեն չի կարող կատարվել (ՀՀ ՔԴՕ 180-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ):

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք հայցի հարուցման փուլում, այլ կերպ ասած՝ հայցադիմումի ընդունելության հարցը որոշելիս ենթակայության կամ ընդդատության կանոնների պահպանված չլինելու դեպքում սահմանել ընդհանուր իրավասության դատարանի կողմից հետևյալ որոշումների կայացման հնարավորությունը.

---

[1] Տե՛ս **Осокина Г. Л.,** Курс гражданского судопроизводства России. Общая часть: Учебное пособие, Изд-во «Том», Ун-та, 2002, էջ 406:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 378:

1) Հայցադիմումի վերադարձման մասին, եթե գործն ընդդատյա չէ տվյալ առաջին ատյանի դատարանին.

2) Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, եթե գործը ենթակա չէ որևէ դատարանում քննության.

3) Հայցադիմումը վերահասցեագրելու մասին, եթե գործը քաղաքացիական դատավարության կարգով ենթակա չէ քննության.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ի վերջո հայցադիմումի վերադարձման մասին որոշումը նպատակաուղղված է նրան, որ վերացվեն խոչընդոտները շահագրգիռ անձի կողմից դատական պաշտպանության իրավունքի իրացման ճանապարհին[1], առաջարկում ենք սահմանել դատարանի պարտականությունը՝ գործի՝ տվյալ դատարանին ընդդատյա չլինելու հիմքով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ մատնանշելու, թե որ դատարան պետք է դիմի հայցվորը՝ գործող օրենսդրության համաձայն:

Քաղաքացիական դատավարությունում սահմանելով վերահասցեագրման ինստիտուտը՝ միաժամանակ վերադաս դատական ատյաններին ևս օժտել վերահասցեագրման լիազորությամբ:

НАРУШЕНИЕ ПРАВИЛ ПОДСУДНОСТИ НА СТАДИИ ВОЗБУЖДЕНИЯ ГРАЖДАНСКОГО ДЕЛА

Ани Микаелян

Аспирант кафедры гражданского процесса ЕГУ

В данной статье рассматриваются вопросы юридических последствий нарушения правил подсудности на стадии возбуждения гражданского дела. В статье нами предпринята попытка выделить правовые последствия предметной подсудности (подведомственности) и территориальной подсудности. Предметом изучения данной статьи являются вопросы о возвращении искового заявления и отказе в принятии искового заявления. В статье также затрагивается вопрос о переадресовании искового заявления и необходимости его введения в Гражданский процессуальный кодекс.

---

[1] Տե՛ս ***Соловьева Т.С.,*** Возвращение искового заявления в гражданском судопроизводстве: Дисс. на соискание ученой степени кандидата юридических наук, Саратов, 2006, էջ 15-18:

THE LEGAL CONSEQUENCES OF VIOLATION OF THE RULES OF JURISDICTION AT THE STAGE OF COMMENCEMENT OF THE CIVIL CASE

Ani Mikayelyan

Post-graduate student of the YSUChair of Civil Procedure

The article is devoted to the issues related to the legal consequences of violations of the rules of jurisdiction at the stage of commencement of the civil case. The author has made an attempt to distinguish the consequences of violation of the rules of objective jurisdiction and territorial jurisdiction. First of all the article discusses the institutes of the return of complaints and rejection of complaints. The article also touches upon the question of the redirecting of the complaints and the expending of its introduction into the Civil Procedure Code.

Բանալի բառեր՝ *ընդդատության կանոնների խախտում, ընդդատություն, ենթակայություն, առարկայական ընդդատության կանոնների խախտման իրավական հետևանքներ, տարածքային ընդդատության կանոնների խատման իրավական հետևանքներ, հայցադիմումի վերադարձ, հայցադիմումի ընդունումը մերժել:*

Ключевые слова: *нарушение правил подсудности, подсудность, подведомственность, правовые последствия нарушения правил предметной подсудности, правовые последствия нарушения правил территориальной подсудности, возвращение искового заявления, отказ в принятии искового заявления.*

Key words: *violation of the rules of jurisdiction, jurisdiction, jurisdiction, the legal consequences of violating the rules of objective jurisdiction, the legal consequences of violation of territorial jurisdiction, return of complaints, rejection of complaints.*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Տիգրան Դադունց[1]

Հողային իրավունքների դատական պաշտպանության ներքո հասկացվում է դատական իշխանության մարմինների՝ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված գործունեությունը՝ սահմանադրական սկզբունքների հիման վրա, օրենքով սահմանված միջոցներով և դատավարական կարգով հողային վեճերը քննելու, դատական հսկողություն իրականացնելու և հողային օրենսդրության նորմերի կիրառման միջոցով օրինական և հիմնավորված ակտ կայացնելու եղանակով[2]: Եթե հողային իրավունքների պաշտպանության խնդիրը դիտարկենք Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրության տեսանկյունից, ապա կնկատենք, որ Հայաստանի Հանրապետության գործող հողային օրենսգրքի[3] (այսուհետ՝ Հողային օրենսգիրք) 113-րդ հոդվածը սահմանում է հողային իրավունքների պաշտպանության եղանակները, իսկ 114-րդ հոդվածը նշում է, որ հողի նկատմամբ իրավունքների կենսագործման և հողային հարաբերությունների կարգավորման հարցերը՝ հողային վեճերը, կարող են լուծվել դատական կարգով: Այսպիսով՝ օրենսդիրը, որքան էլ որ վերոնշյալ ձևակերպումը կարող է լիարժեք չթվալ, հողային իրավունքների և հողային հարաբերություններում անձանց օրինական շահերի պաշտպանությանը՝ որպես մեծ սոցիալ-տնտեսական մեծ նշանակություն ունեցող հարցի տալով կարևոր նշանակություն, առաջնահերթությունը տվել է դրանց պաշտպանության դատական ձևին[4]՝ որպես իրավունքների դատական պաշտպանության

---

[1] ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. թ., պրոֆեսոր Ա. Իսկոյան:

[2] Տե՛ս **Андреев Ю.Н., Амаглобели Н.Д., Данилкин В.Н.**, Судебная защита земельных прав граждан России: учеб. пособие, ред. Ю.Н. Андреев, М., ЮНИТИ-ДАНА, 2015, էջ 11:

[3] Ընդունվել է 02.05.2001 թ., ուժի մեջ է մտել 15.06.2001 թ., ՀՀՊՏ 2001.06.15/17 (149), հոդ. 457:

[4] Հարկ է նշել, որ 1991 թ. հողային օրենսգիրքը հողային վեճերի լուծման հարցում առաջնահերթությունը տվել էր վարչական կարգին: Մասնավո-

սահմանադրական իրավունքից բխող՝ խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության ունիվերսալ (համընդհանուր) ձև:

Պետք է նշել, որ օտարերկրյա անձանց հողային իրավունքների դատական պաշտպանությունը առանձնահատուկ է և կարևորվում է նրանով, որ նախ հողամասը՝ որպես սեփականության և այլ գույքային իրավունքների օբյեկտ, օտարերկրյա անձանց մասնակցությամբ հարաբերություններում ունի օրենսդրորեն ապահովված հատուկ կարգավիճակ[1], և նման պայմաններում օտարերկրյա անձանց հողային իրավունքների պաշտպանությունը, հատկապես՝ դատական պաշտպանությունը, նույնպես ձեռք է բերում որոշակի առանձնահատկություններ՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը սահմանվել են՝ հողի կարևոր բնապահպանական, տնտեսական ու սոցիալական նշանակությունից ելնելով, որի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում հողն օգտագործվում և պահպանվում է որպես ժողովրդի կենսագործունեության պայման՝ վնաս չպատճառելով երկրի պաշտպանունակությանն ու անվտանգությանը[2]:

րապես 70-րդ հոդվածը սահմանում էր, որ հողային վեճերը լուծում են պատգամավորների տեղական խորհուրդները, դատարանը կամ պետական արբիտրաժը: Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների հողային վեճերը լուծվում են պատգամավորների այն խորհուրդների կողմից, որոնց տնօրինության տակ գտնվում է հողամասը: Պատգամավորների խորհրդի որոշման հետ համաձայն չլինելու դեպքում հողային վեճերը քննվում են դատական կարգով, իսկ միայն դատական կարգով էին լուծվում, համաձայն 57-րդ հոդվածի, վնասների հատուցման և դրանց չափերի որոշմանը առնչվող վեճերը:

[1] Սահմանադրության 60-րդ հոդվածը նախատեսում է, որ հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, իսկ ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածում էլ օրենսդիրը մանրամասնել է, որ այդ անձինք կարող են լինել միայն հողի օգտագործողներ՝ բացառություն սահմանելով միայն Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց համար:

[2] Տե՛ս Հողային օրենսգրքի նախաբանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն հոդվածում կքննարկվեն քաղաքացիական դատավարության շրջանակներում օտարերկրյա անձանց հողային իրավունքների դատական պաշտպանության մի շարք հարցեր՝ կապված օտարերկրյա անձանց մասնակցությամբ հողային հարաբերությունների նկատմամբ կիրառելի իրավունքին, օտարերկրյա անձանց մասնակցությամբ հողային վեճերի քննության իրավասությանը, ինչպես նաև օտարերկրյա պետությունների մասնակցությամբ վեճերում օտարերկրյա պետությունների դատական իմունիտետին առնչվող խնդիրներին:

Այսպես՝ օտարերկրյա անձանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունն առաջին հերթին կապված է այն հանգամանքի հետ, թե ինչ իրավունք է ենթակա կիրառման հողային իրավահարաբերությունների նկատմամբ: Այն դեպքում, երբ խոսքը քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող հողային իրավունքների իրացման ու պաշտպանության մասին է, այս հարցում օտարերկրյա անձինք ազատ գործելու հնարավորություն այնքան էլ չունեն, և այն պայմանագրերի նկատմամբ, որոնց առարկան կարող է հանդիսանալ հողամասը՝ որպես անշարժ գույք, օրենսդիրը խիստ պաշտպանություն է նախատեսել: Բանն այն է, որ օտարերկրյա անձանց մասնակցությամբ պայմանագրային հարաբերություններում կողմերը սահմանափակված են կիրառելի իրավունքի ընտրությամբ այն դեպքերում, երբ գործարքը տեղի է ունենում անշարժ գույքի, տվյալ դեպքում՝ հողամասի շուրջ, իսկ կիրառելի իրավունքի ընտրությունն ինքնին կանխորոշում է անձանց իրավունքների պաշտպանությունը, քանի որ հնարավոր վեճերի առկայության դեպքում դրանք լուծման են ենթակա հենց այն իրավունքով, որն ընտրել են կողմերը, կամ որը նախատեսված է կոլիզիոն նորմերով: Այսպես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի[1] (այսուհետ՝ Քաղաքացիական օրենսգիրք) 1276-րդ հոդվածի համաձայն, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ու այլ գույքային իրավունքների բովանդակությունը, դրանց իրացումը և պաշտպանությունը որոշվում են այն պետության իրավունքով, որտեղ

[1] Ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ., ՀՀՊՏ 1998.08.10/17 (50):

գտնվում է այդ գույքը: Մյուս կողմից, նույն օրենսգրքի 1285-րդ հոդվածի երկրորդ կետի համաձայն, կիրառվելիք իրավունքի վերաբերյալ պայմանագրի կողմերի համաձայնության բացակայության դեպքում այն պայմանագրի, որի առարկան անշարժ գույքն է, ինչպես նաև գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի նկատմամբ կիրառվում է այն պետության իրավունքը, որտեղ գտնվում է տվյալ գույքը: Ստացվում է, որ օտարերկրյա անձանց մասնակցությամբ հարաբերություններում անշարժ գույքի, տվյալ դեպքում՝ հողամասի նկատմամբ իրավունքների պաշտպանության, ինչպես նաև կողմերի համաձայնության բացակայության դեպքում այն պայմանագրերի նկատմամբ, որոնց առարկան հողամասն է, կիրառելի է «lex loci rei sitae»-ն կամ պարզապես «lex situs»-ը՝ հողամասի գտնվելու վայրի իրավունքը: Այս կանոնը նախասահմանում է կողմերի իրավունքները՝ կապված հողամասի ու դրան առնչվող իրավունքների պաշտպանության հետ, և դրանց դատական պաշտպանության ընթացքում դատարանի կողմից կիրառվելիք իրավունքը: Փաստորեն, Քաղաքացիական օրենսգրքի 1276-րդ հոդվածի համաձայն, բացառապես հողամասի գտնվելու վայրի իրավունքով պետք է որոշվեն հողամասի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների պաշտպանության եղանակները և ձևերը, իսկ 1285-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ հողամասի նկատմամբ ծագած պայմանագրային հարաբերությունների շրջանակներում կողմերի իրավունքները և պարտականությունները, որոնք ունեն նյութաիրավական բնույթ, կարող են որոշվել կողմերի ընտրած իրավունքով (lex voluntaris), իսկ նման ընտրություն չկատարելու դեպքում՝ հողամասի գտնվելու վայրի իրավունքով: Նման մոտեցումը միջազգային մասնավոր իրավունքի դոկտրինայում չի պաշտպանվում, և, ինչպես իրավացիորեն նշում է Ա. Հայկյանցը, պետության հանրային շահերից է բխում այն հանգամանքը, որ իր տարածքում գտնվող անշարժ գույքի գործարքների նկատմամբ պետք է կիրառվեն միայն ազգային օրենքները, և եթե նույնիսկ կողմերը Հայաստանի Հանրապետությունում գտնվող անշարժ գույքի[1] առնչությամբ կնքվող գործարքի նկատմամբ

[1] Մեր դեպքում՝ հողամասի:

ընտրեն որևէ այլ պետության իրավունք, այդ ընտրությունը անվավեր կհամարվի հանրային կարգի վերապահման (Քաղաքացիական օրենսգրքի 1258-րդ հոդված) և իմպերատիվ նորմերի (Քաղաքացիական օրենսգրքի 1259-րդ հոդված) ինստիտուտների ուժով[1]: Հետևաբար կարող ենք պնդել, որ օտարերկրյա անձանց մասնակցությամբ հողային իրավունքների դատական պաշտպանությունը կանխորոշված է հողամասի գտնվելու վայրի իրավունքի կիրառելիությամբ:

Քաղաքացիական դատավարության շրջանակներում օտարերկրյա անձանց հողային իրավունքների դատական պաշտպանության մասին խոսելիս հարկ է անդրադառնալ նաև հօտարերկրյա անձանց մասնակցությամբ հողային վեճերի քննության նկատմամբ Հայաստանի Հանրապետության դատարանների իրավասության հարցին: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի[2] (այսուհետ՝ ՔԴՕ) 430-րդ հոդվածը սահմանում է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության դատարաններին են ընդդատյա, ի թիվս այլոց, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների վերաբերյալ գործերը: Նշված հոդվածի իրավակարգավորումը կարելի է դիտարկել հողամասի՝ որպես անշարժ գույքի առնչությամբ ծագած և քննվող վեճերի լույսի ներքո:

Նախ և առաջ հարկ է նշել, որ անշարժ գույքի, ներառյալ՝ հողամասի նկատմամբ իրավունքներից բխող հայցերի նկատմամբ բացառիկ իրավասություն սահմանելը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնք, ըստ էության, ուղղված են դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ապահովելուն, դատական նվազագույն ծախսերով ողջամիտ ժամկետում խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելուն: Այդ գործոններից մեկն այն է, որ «forum rei sitae» սկզբունքի հիմքում ընկած են հողի և պետության տարածքի միասնականության

[1] Տե՛ս **Հայկյանց Ա. Մ.,** Միջազգային մասնավոր իրավունք: Դասագիրք: 2-րդ հրատարակություն (լրացումներով և փոփոխություններով), Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 211:

[2] Ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ., ՀՀՊՏ 2018.03.05/16 (1374), հոդ. 208:

սկզբունքը, պետության ինքնիշխանությունը իր տարածքի նկատմամբ[1]: Ինչպես նշում է Նեշատաևան, անշարժ գույքը կազմում է պետության մի մասը և սերտորեն կապված է նրա հետ, հետևաբար այդ պետությունում է գտնվում այդ գույքի նկատմամբ բոլոր իրավունքների համախմբման կենտրոնը[2]: Մյուս գործոնը, որով պայմանավորված է այս կատեգորիայի գործերի քննության նկատմամբ բացառիկ իրավասություն սահմանելը, դրանց քննության և լուծման մատչելիության ու հարմարավետության ապահովման անհրաժեշտությունն է՝ կապված, մասնավորապես, ապացույցների հավաքման, դատական ծախսերի և գործի քննության ժամկետների կրճատման հետ: Ապացույցների՝ գործի քննության վայրում գտնվելն իսկապես էական նշանակություն ունի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների վերաբերյալ գործերով բացառիկ իրավասություն սահմանելու հարցում՝ հաշվի առնելով հատկապես օտարերկրյա դատական հանձնարարությունների կատարման գործընթացի ծախսատարությունը և տևականությունը, ստացված ապացույցները թարգմանելու անհրաժեշտությունը, դեռ չենք խոսում այն դեպքերի մասին, երբ պետությունների միջև բացակայում են երկկողմանի իրավական օգնության մասին կնքված միջազգային պայմանագրերը, որի պարագայում գրեթե անհնար է ապահովել դատական հանձնարարությունների միջոցով ապացույցների ձեռքբերումը:

Օրենսդիրը անշարժ գույքի վերաբերյալ գործերով, ըստ էության, սահմանել է Հայաստանի Հանրապետության դատարանների լայն իրավասություն՝ սահմանելով «անշարժ գույքի նկատմամբ իրավունքների վերաբերյալ գործեր» լայն կատեգորիան և չսահմանափակվելով ՔԴՕ 24-րդ հոդվածով սահմանված բացառիկ տարածքային ընդդատության կանոններով[3]: Նման լայն

---

[1] Տե՛ս **Щукин А.И.,** Вопросы подсудности в международных договорах с участием России, дисс., М., 2013, էջ 162:

[2] Տե՛ս **Нешатаева Т.Н.,** О вопросах компетенции арбитражных судов в Российской Федерации по рассмотрению дел с участием иностранных лиц // Вестник ВАС РФ, 2004, № 12, էջ 92:

[3] Հոդվածի 1-ին մասը սահմանում է բացառիկ տարածքային ընդդատության ենթակա գործերի սպառիչ ցանկ՝ հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասերը,

կարգավորումը, իհարկե, բխում է պետության շահերից, քանի որ հնարավորություն է տալիս պետության դատարանների բացառիկ իրավասությունը տարածելու որքան հնարավոր է ավելի լայն կատեգորիայի գործերի նկատմամբ, սակայն «անշարժ գույքի նկատմամբ իրավունքների վերաբերյալ գործերի» չորոշակիացված շրջանակը կարող է ենթարկվել անհարկի լայն մեկնաբանությունների, և նման պարագայում կարող են «տուժել» ընդդատության մյուս տեսակներն ու դրանց հիման վրա իրենց իրավունքների պաշտպանությունը հայցող սուբյեկտները: Բացառիկ իրավասության համար, որպես սահմանված բացառություն ընդհանուր ընդդատությունից և, մասնավորապես, կողմերի իրավունքից՝ ինքնուրույն որոշելու իրենց վեճի ընդդատությունը, չպետք է սահմանվի առավել լայն կառուցակարգ, քան անհրաժեշտ է նրա կոնկրետ նպատակներն ապահովելու համար[1]: Իհարկե անհերքելի է, որ բացառիկ իրավասության սահմանման հիմքում առաջին հերթին դրված է դատարանի շահը: Այլ կերպ ասած՝ բացառիկ իրավասության սահմանման հիմնական նպատակը դատարանի համար մատչելիության ավելի բարձր աստիճան սահմանելն է, այն է՝ դատարանը գործը քննում է այն վայրում, որտեղ գտնվում է վեճի առարկան, տվյալ դեպքում՝ հողամասը: Դա հեշտացնում է դատարանի աշխատանքն ապացույցների հավաքման և հետազոտման ընթացքում և, օրենսդրի մոտեցմամբ, պետք է հանգեցնի գործի ավելի արագ և ճիշտ լուծմանը: Սակայն, հիմքում ունենալով դատարանի շահը, բացառիկ իրավասությունը վերջին հաշվով պետք է ուղղված լինի հենց դատավարության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանը և ոչ միայն հայցվորի համար, քանի որ, չնայած այն հանգամանքին, որ քաղաքացիական գործի հարուցման հիմքը հայցվորի կողմից ներկայացված հայցն է, քաղաքացիական գործով դատական պաշտպանություն տրվում է ոչ միայն հայցվորին, այլև

շենքերը, շինություններն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից զրկելուն առնչող իրավունքների խախտումները վերացնելու վերաբերյալ գործեր:

[1] Տե՛ս **Briggs A.**, Private International Law in English Courts, Oxford: Oxford University Press, 2014, էջ 214:

գործին մասնակցող մյուս անձանց: Դատարանի և գործին մասնակցող անձանց շահերի ճիշտ հավասարակշռման դեպքում միայն բացառիկ իրավասությունը կարող է ապահովել իր առջև դրված նպատակը, իսկ այդ նպատակի ապահովումը կարող է վտանգվել բացառիկ իրավասության՝ իր համար կանխորոշված շրջանակներից դուրս գալու դեպքում:

Եթե այս համատեքստում համեմատելու լինենք միջազգային աղբյուրները, ապա կնկատենք, որ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի կոնվենցիան[1] ևս կիրառում է բացառիկ իրավասության լայն հասկացություն՝ նշելով, որ «Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և այլ իրային իրավունքների վերաբերյալ հայցերով բացառապես իրավասու են այդ գույքի գտնվելու վայրի դատարանները»: «Քաղաքացիական և առևտրային գործերով իրավասության և դատական որոշումների ճանաչման և կատարման մասին» Բրյուսելի[2] և Լուգանոյի[3] կոնվենցիաները այդպիսի գործերի շրջանակին են դասում այն վեճերը, որոնց առարկան անշարժ գույքի նկատմամբ իրային (in rem) իրավունքներն են կամ վարձակալությունից բխող իրավունքները: Նման պայմաններում անհրաժեշտություն է առաջանում որոշակի մեկնաբանության ենթարկելու անշարժ գույքի վերաբերյալ գործերով միջազգային բացառիկ իրավասության կանոնները: Նախ և առաջ այս կատեգորիայի տակ անհրաժեշտ է դիտարկել անշարժ գույքի, ներառյալ՝ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, ուրիշի ապօրինի տիրապետումից այն հետ

---

[1] Տե՛ս «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի 2002 թ. կոնվենցիա (http://www.irtek.am/views/act.aspx?aid=52347), հոդված 22:

[2] Տե՛ս «Քաղաքացիական և առևտրային գործերով իրավասության և դատական որոշումների ճանաչման և կատարման մասին» Բրյուսելի 1968 թ. կոնվենցիա (https://curia.europa.eu/common/recdoc/convention/en/c-textes/brux-idx.htm), հոդված 16:

[3] Տե՛ս «Քաղաքացիական և առևտրային գործերով իրավասության և դատական որոշումների ճանաչման և կատարման մասին» Լուգանոյի 2007 թ. կոնվենցիա (https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:22007A1221(03)&from=EN), հոդված 22:

պահանջելու, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից զրկելուն չառնչվող իրավունքների խախտումները վերացնելու վերաբերյալ գործերը: Սակայն հարկ է նշել, որ բացառիկ իրավասությունն անշարժ գույքի հետ կապված առանձին պահանջների տեսակներով սահմանափակելը նեղացնում է այդ իրավասության շրջանակը, և ահա այստեղ է, որ «անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ» կատեգորիան ծառայում է իր նպատակին, քանի որ, օրինակ, տարածքային ընդդատության պայմաններում դատական պրակտիկայում հանդիպում են բազմաթիվ դեպքեր, երբ անշարժ գույքին վերաբերող մի շարք պահանջների դեպքում դատարանները չեն ճանաչում իրենց բացառիկ իրավասությունն այդ գործի նկատմամբ, այն պարագայում, երբ ակնհայտորեն առկա է դրա կիրառման նպատակահարմարությունը: Օրինակ՝ թիվ ԵՄԴ/2814/02/14 քաղաքացիական գործով 24.10.2014 թ. կայացրած որոշմամբ վերաքննիչ քաղաքացիական դատարանը փաստել է, որ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու պահանջն իր բովանդակությամբ չի կարող նույնացվել վինդիկացիոն, նեգատոր և սեփականության իրավունքի ճանաչման հայցերից և ոչ մեկին, ուստի ենթակա է հարուցման և քննության ՔԴՕ 82-րդ հոդվածով սահմանված տարածքային ընդդատության ընդհանուր կանոնով. տվյալ դեպքում հայցը հարուցելու բացառիկ ընդդատության կանոնը կիրառելի չէ: Թիվ ԵԱՆԴ/4477/02/16 քաղաքացիական գործով դատարանը նշել է, որ ՔԴՕ 85-րդ հոդվածում (բացառիկ ընդդատություն) խոսքը անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և ոչ թե վերականգնման ճանաչման մասին է: Դատարանը գտել է, որ այդ պահանջի դեպքում բացառիկ ընդդատությունը կիրառելի չէ[1]: Մինչդեռ մեկ այլ գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանն արձանագրել է, որ սեփականության իրավունքը դադարեցնելու պահանջը պետք է քննվի բացառիկ

[1] Տե՛ս Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԱՆԴ/4477/02/16 քաղաքացիական գործով 07.11.2016 թ. կայացրած «Հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ» որոշումը:

ընդդատության կանոններով[1]: Հարկ է նաև նշել, որ տարբեր պետություններում անշարժ գույքի վերաբերյալ գործերով դատարանների բացառիկ իրավասության կանոնը տարբեր կերպ է սահմանվում: Օրինակ, Ուկրաինայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, հայցերը, որոնք ծագում են անշարժ գույքի կապակցությամբ, հարուցվում են անշարժ գույքի կամ դրա հիմնական մասի գտնվելու վայրի դատարան[2], կամ, օրինակ, Ֆրանսիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն, անշարժ գույքի նկատմամբ գույքային հայցերը ընդդատյա են բացառապես այդ անշարժ գույքի գտնվելու վայրի դատարանին[3]: Նշված երկու դեպքում, ըստ էության, ընդունվել է «անշարժ գույքի նկատմամբ իրավունքների վերաբերյալ գործեր» լայն կատեգորիան, իսկ, օրինակ, Էստոնիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված են այն հայցերը, որոնց առարկան կազմում են անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքներին առնչվող վեճերը: Այդ հայցերի ընդդատությունը որոշվում է բացառիկ իրավասության կանոններով. դրանց թվին են դասվում այն հայցերը, որոնց առարկան կազմում են անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը կամ դրան վերաբերող այլ պահանջներ, անշարժ գույքի սահմանների որոշումը կամ դրա բաժանումը և այլն[4]:

Այսպիսով, ելնելով այն հանգամանքից, որ դատարանի բացառիկ իրավասությունը սահմանված է անշարժ գույքի, ներառյալ՝ հողամասերի նկատմամբ ծագող վեճերը առավել արագ և արդյունավետ լուծելու համար, պետք է նշել, որ «անշարժ գույքին վերաբերող վեճեր» կատեգորիան ներառում է ոչ միայն ՔԴՕ 24-րդ

[1] Տե՛ս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ թիվ ԵԱՆԴ/1635/02/10 քաղաքացիական գործով 16.12.2010 թ. կայացրած որոշումը:

[2] Տե՛ս Гражданский процессуальный кодекс Украины от 18 марта 2004 года № 1618-IV (с изменениями и дополнениями по состоянию на 18.01.2018 г. (https://online.zakon.kz/document/?doc_id=30418564):

[3] Տե՛ս France, Code of Civil Procedure (https://www.legifrance.gouv.fr/content/location/1745):

[4] Տե՛ս Estonia, Code of Civil Procedure (consolidated text of January 7, 2017, http://www.wipo.int/wipolex/ru/text.jsp?file_id=432542):

հոդվածում սահմանված պահանջների տեսակները, այլ նաև անշարժ գույքի, այդ թվում՝ հողամասի նկատմամբ այլ գույքային իրավունքների վերաբերյալ վեճերը, օրինակ՝ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարեցնելը, հողամասի նկատմամբ սահմանվող սերվիտուտները, հողամասի անժամկետ օգտագործման իրավունքը, հողամասի օգտագործման իրավունք ձեռք բերելը և այլն:

Որոշակի առանձնահատկություններ են առկա այն դեպքում, երբ որպես հողային իրավահարաբերությունների սուբյեկտներ հանդես են գալիս օտարերկրյա պետությունները: Հարկ է նշել, որ օտարերկրյա պետությունների՝ Հայաստանի Հանրապետությունում հողային իրավահարաբերություններին մասնակցությունը խնդրահարույց է թվում այն տեսանկյունից, որ օտարերկրյա պետությունների նկատմամբ ՔԴՕ 432-րդ հոդվածի ուժով տարածվում է դատական անձեռնմխելիությունը, այդ թվում՝ այն դեպքերում, երբ խոսքը հողային վեճերի մասին է, քանի որ ՔԴՕ 432-րդ հոդվածը անշարժ գույքի վերաբերյալ գործերով որևէ բացառություն չի նախատեսում: Այնինչ գտնում ենք, որ պետությունը, ելնելով հանրային շահից, պարտավոր է հատուկ պաշտպանության ենթարկել իր տարածքում գտնվող անշարժ գույքը, հատկապես՝ հողամասը, ինչպես, օրինակ, հողամասերի շուրջ ծագած վեճերի նկատմամբ դատարանների իրավասության դեպքում էր, երբ օրենսդիրը անշարժ գույքի վերաբերյալ վեճերը դիտարկել է պետության դատարանների բացառիկ իրավասության ներքո: Այսինքն՝ օրենսդիրը անշարժ գույքին, տվյալ դեպքում՝ հողամասին առնչվող վեճերի դեպքում օտարերկրյա պետությանը օժտել է բացարձակ դատական անձեռնմխելիությամբ, ինչը կարող է խնդրահարույց լինել հողային ֆոնդի պաշտպանության տեսանկյունից: Օտարերկրյա պետության կողմից հողամասը իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու իրավունքների կենսագործման հետևանքով շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց իրավունքները, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու դեպքում նշված

շահերի պաշտպանությունը գործող օրենսդրությամբ, փաստորեն, կասկածի տակ կարող է դրվել[1]:

Ասվածը հատկապես արդիական է դառնում պայմանագրային հարաբերություններում և դրանցից բխող վեճերում պետության մասնակցության բնույթի հարցը քննարկելիս: Բանն այն է, որ պայմանագրային հարաբերություններում պետությունը չի իրականացնում իշխանական գործողություններ, այլ մտնում է մասնավոր իրավահարաբերությունների դաշտ, կատարում է մասնավոր իրավական գործողություններ (ներդրումային գործունեություն, միջազգային առևտուր, կառուցապատում և այլն)՝ հանդես գալով որպես մասնավոր սուբյեկտ: Մյուս կողմից պետությունների դատական անձեռնմխելիության հարցը պետք է քննարկել՝ հաշվի առնելով նաև իրավահարաբերությունների ծագման համար հիմք հանդիսացող փաստերի բնույթը, որոնց մասնակցում է պետությունը. եթե իրավահարաբերության ծագման հիմք հանդիսացող փաստերը հանրային իրավական բնույթի են, ապա դատական իմունիտետի սահմանափակման մասին ճիշտ չի լինի խոսել: Այլ է պատկերը մասնավոր իրավական բնույթի փաստերի և դրանց հիման վրա ծագած իրավահարաբերությունների դեպքում, որոնց պարագայում դրանց մասնակիցը հանդիսացող պետությունը չպետք է օգտվի դատական անձեռնմխելիությունից:

Հետևաբար թե՛ պայմանագրային հարաբերությունների շրջանակում և թե՛ այլ մասնավոր իրավական բնույթի իրավաբանական փաստերի հիման վրա ծագած հողային իրավահարաբերություններում ու դրանցից բխող վեճերում օտարերկրյա պետության՝ դատական իմունիտետից օգտվելու իրավունքն արդարացված չի թվում:

Այս առումով հատկանշական է արտասահմանյան պրակտիկան: Օրինակ, «Ռուսաստանի Դաշնությունում օտարերկրյա պետության և այդ պետության գույքի իրավազորության իմունիտետի

[1] Դեռևս 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 31-րդ հոդվածը սահմանում էր, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի կենսագործումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

մասին» դաշնային օրենքի[1] 10-րդ հոդվածի համաձայն, օտարերկրյա պետությունը ՌԴ-ում դատական իմունիտետից չի օգտվում այն վեճերի դեպքում, որոնք վերաբերում են, մասնավորապես, ՌԴ-ում գտնվող անշարժ գույքի նկատմամբ օտարերկրյա պետության իրավունքներին և պարտականություններին[2]: Նման բացառություն սահմանված է նաև Բազելի «Պետությունների անձեռնմխելիության մասին եվրոպական կոնվենցիայի»[3] 9-րդ հոդվածում, որը սահմանում է այն դեպքերի սպառիչ ցանկը, որոնց առկայության դեպքում օտարերկրյա պետությունն իր գործունեության կամ իր մասնակցությամբ գործարքի ուժով չի օգտվում անձեռնմխելիությունից: Այսպես՝ օտարերկրյա պետությանը չի տրամադրվում անձեռնմխելիություն.

ա) եթե դատական վեճն առնչվում է անշարժ գույքի նկատմամբ պետության իրավունքին, պետության կողմից այդպիսի անշարժ գույք տիրապետելուն կամ օգտագործելուն.

բ) եթե դատական վեճն առնչվում է պետության՝ որպես անշարժ գույքի նկատմամբ իրավունքի կամ այդ գույքի սեփականատիրոջ կամ օգտագործողի վրա դրված պարտականությանը.

գ) եթե գույքը գտնվում է այն պետությունում, որտեղ տեղի է ունենում դատավարությունը:

---

[1] Տե՛ս Федеральный закон «О юрисдикционных иммунитетах иностранного государства и имущества иностранного государства в Российской Федерации», принят Государственной Думой 23 октября 2015 года, одобрен Советом Федерации 28 октября 2015 года (http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_188328):

[2] Մանրամասն տե՛ս **Хлестова И.О.,** Новый закон «О юрисдикционных иммунитетах иностранного государства и имущества иностранного государства» // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения, 2016, №2 (57) (https://cyberleninka.ru/article/n/novyy-zakon-o-yurisdiktsionnyh-immunitetah-inostrannogo-gosudarstva-i-imuschestva-inostrannogo-gosudarstva):

[3] Տե՛ս European Convention on State Immunity, Basle, 16.V.1972 (https://www.wipo.int/edocs/trtdocs/en/ce-csi1/trt_ce_csi1.pdf):

Նման կարգավորում նախատեսված է նաև «Պետությունների դատական անձեռնմխելիությունների և սեփականության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում[1]:

Հետևաբար օտարերկրյա պետությունների դատական անձեռնմխելիության վերաբերյալ ՔԴՕ-ով նախատեսված կարգավորումների շրջանակներում անհրաժեշտ է սահմանել բացառություն պետությունների բացարձակ դատական անձեռնմխելիությունից անշարժ գույքի, ներառյալ՝ հողամասի նկատմամբ պետության իրավունքներին և պարտականություններին առնչվող վեճերի դեպքում՝ հաշվի առնելով օտարերկրյա պետությունների մասնակցությամբ հարաբերություններում իրավական պաշտպանության կառուցակարգերի սահմանման անհրաժեշտությունը՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական և հանրային շահերի:

Այսպիսով՝ կատարված հետևությունները հանգում են հետևյալին.

- **Քաղաքացիական դատավարության շրջանակներում օտարերկրյա անձանց մասնակցությամբ հողային իրավունքների դատական պաշտպանությունն էապես կապված է հողամասի շուրջ ծագած քաղաքացիաիրավական հարաբերությունների նկատմամբ կիրառելի իրավունքի հետ, ընդ որում՝ Քաղաքացիական օրենսգրքի 1276-րդ հոդվածի ուժով հողամասի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների պաշտպանությունը որոշվում է բացառապես հողամասի գտնվելու վայրի իրավունքով:**
- **Օտարերկրյա անձանց մասնակցությամբ ծագած հողային վեճերի քննության նկատմամբ Հայաստանի Հանրապետության դատարանների բացառիկ իրավասության շրջանակներում ՔԴՕ 430-րդ հոդվածի իմաստով «անշարժ գույքին վերաբերող վեճեր» կատեգորիան ներառում է ոչ միայն ՔԴՕ 24-րդ հոդվածում սահմանված պահանջների տեսակները, այլ նաև հողամասի նկատմամբ այլ գույքային իրավունքների վերաբերյալ վեճերը, օրինակ՝ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարեցնելը, հողամասի նկատմամբ սահմանվող սերվիտուտները, հողամա-**

[1] Տե՛ս United Nations Convention on Jurisdictional Immunities of States and Their Property, 59/38, 2 December 2004 (https://treaties.un.org/doc/source/recenttexts/english_3_13.pdf), հոդված 13:

սի անժամկետ օգտագործման իրավունքը, հողամասի օգտագործման իրավունք ձեռք բերելը և այլն:

- Անհրաժեշտ է հրաժարվել հողամասի նկատմամբ օտարերկրյա պետության իրավունքներին և պարտականություններին առնչվող վեճերի դեպքում պետությունների բացարձակ անձեռնմխելիության սկզբունքից՝ անշարժ գույքի վերաբերյալ գործերով սահմանելով բացառություններ պետությունների դատական անձեռնմխելիությանը վերաբերող իրավակարգավորումներում:

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ СУДЕБНОЙ ЗАЩИТЫ ЗЕМЕЛЬНЫХ ПРАВ ИНОСТРАННЫХ ЛИЦ В РАМКАХ ГРАЖДАНСКОГО ПРОЦЕССА

Тигран Дадунц
Аспирант юридического факультета ЕГУ

Данная статья посвящена изучению вопросов судебной защиты земельных прав иностранных лиц как одного из способов судебной защиты прав, осуществляемых в рамках гражданского процесса. Нами выделен ряд вопросов защиты земельных прав иностранных лиц, которые обусловлены особенностями участия последних в земельных отношениях. В частности, в статье рассматривается понятие «судебная защита земельных прав», анализируются вопросы взаимосвязи применимых к заключаемой с иностранным лицом сделке прав и судебной защиты, а также недостатки правового регулирования исключительной юрисдикции судов РА и судебного иммунитета иностранных государств по спорам о земельных участках с участием иностранных лиц.

SOME PROBLEMS OF JUDICIAL PROTECTION OF LAND RIGHTS OF FOREIGN PERSONS IN THE FRAMEWORK OF CIVIL PROCEDURE

Tigran Dadunts
YSU Faculty of Law, PhD Student

The article is devoted to the judicial protection of land rights of foreign persons as one of the methods of judicial protection of rights exercised in the framework of a civil process, and highlights a number of issues of judicial protection of land rights of foreign persons, due to

the peculiarities of their participation in land relations. In particular, the article presents the notion of judicial protection of land rights, discusses the relationship of the applicable law and judicial protection and also the deficiencies of legal regulation of the exclusive jurisdiction of the courts of the Republic of Armenia and the judicial immunity of foreign states on land disputes with the participation of foreign persons.

Բանալի բառեր՝ *հողային իրավունքներ, հողային իրավունքների դատական պաշտպանություն, հողային վեճեր, հողամաս, օտարերկրյա անձինք, կիրառելի իրավունք, բացառիկ իրավասություն, օտարերկրյա պետությունների դատական իմունիտետ:*

Ключевые слова: *земельные права, судебная защита земельных прав, земельные споры, земельный участок, иностранцы, применимое право, исключительная юрисдикция, судебный иммунитет иностранных государств.*

Keywords: *land rights, judicial protection of land rights, land disputes, land, foreigners, applicable law, exclusive jurisdiction, judicial immunity of foreign states.*

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տաթևիկ Սարուխանյան[1]

Իրավունքը մարդկային մշակույթի կարևորագույն ձևերից մեկն է, որը ստեղծվել է վեճերի կարգավորման նպատակով[2]:

Վ. Ս. Ներսեսյանցը իրավական միջոցներով (ի տարբերություն համաձայնության հասնելու մի շարք այլ միջոցների) վեճերի լուծման սոցիալական նշանակությունը տեսնում է «իրավունքի տարբեր սուբյեկտների տարբեր շահերի պահպանման, այլ ոչ թե դրանց ժխտման և վերացման մեջ»[3]:

Հաշտարարության՝ որպես հաշտեցման հատուկ ընթացակարգի էությունն այն է, որ այն հնարավորություն է ընձեռում խուսափելու տարաձայնություններից, հանրությանը բարձրացնելու ժողովրդավարության, իրավական պետության և քաղաքացիական հասարակության նոր մակադակի[4]:

Հաշտարարությունը, անկասկած, քաղաքակիրթ և ներդաշնակ զարգացմանը և կենսագործունեության տարբեր ոլորտներում հասարակական հարաբերությունների կարգավորմանն ուղղված ժամանակակից ինստիտուտ է: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ հաշտարարությունը դեռևս ձեռք չի բերել «սոցիալական գործունեության կայուն ձևի» հատկանիշներ[5]:

Հաշտեցման՝ որպես վեճի լուծման միջոցի սոցիալական դերը ոչ միայն հասարակական համաձայնության վերականգնումը և

---

[1] ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Ս. Մեղրյան:

[2] Տե՛ս **Шумова К.А.,** Принципы медиации, *Дисс. …. канд. юрид. наук, Саратов*, 2015, էջ 24, աղբյուրը՝ http://test.ssla.ru/dissertation/dissert/23-11-2015-1d.pdf, 25.12.2018 թվականի դրությամբ:

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 24:

[4] Տե՛ս **Мурзанова Е.А.,** Медиация – способы и задачи урегулирования споров: опыт зарубежных стран, Вестник Волжского университета им. В.Н. Татищева, № 1.4, 2016, էջ 10, աղբյուրը՝ https://cyberleninka.ru, 25.12.2018 թվականի դրությամբ:

[5] Տե՛ս **Минкина Н.И.,** Медиация: обзор подходов в исследовании и правовая основа, Евразийская адвокатура, № 4 (11), 2014, էջ 44-45:

պահպանումն է, այլև «գործող իրավակարգում հասարակական հարաբերությունների մասնակիցների մեջ կայունության և վստահության զգացողության սերմանումը»[1]:

Իրավաբանական գրականության մեջ հաշտեցումը դիտարկվում է մի կողմից որպես համալիր ինստիտուտ, որը միավորում է գործող օրենսդրությամբ նախատեսված հաշտեցման տարբեր ընթացակարգերը, մյուս կողմից՝ որպես հասարակական հարաբերությունների վրա ներգործության հատուկ միջոց, որն ընդգրկում է հոգեբանական, իրավաբանական և այլ տարրեր[2]:

Այլ կերպ ասած՝ հաշտեցման ընթացակարգերը հասարակական հարաբերությունների կազմակերպման առումով կարելի է դիտարկել որպես միջոցների ամբողջություն, որոնք պետք է լուծեն սոցիալական հակասությունը կողմերի կամավոր ձեռք բերված համաձայնությամբ՝ վարքագծի փոխադարձաբար ընդունելի տարբերակների վերաբերյալ, որը նախատեսում է տարաձայնության վերացման հիմքերը[3]:

Իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն արտահայտվում է տեսակետ, համաձայն որի՝ մարդու իրավունքների և ազատությունների ապահովման մեխանիզմի արդյունավետության բարձրացումը չի կարող տեղի ունենալ բացառապես իրավական կարգավորման իմպերատիվ մեթոդների կիրառմամբ: Այս հիմնավորմամբ նշվում է «ինքնակարգավորման» մեխանիզմների - գործադրման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման անհրաժեշտության մասին[4]: Բացառություն չէ նաև դատական գործունեությունը, որի իրականացման ընթացքում հաշտեցման գործառույթը պետք է իրականացվի առավել ակտիվորեն[5]:

Բազմաթիվ հեղինակներ բարձրացնում են դատական գործունեության ընթացքում հաշտեցման գործառույթի իրականացման

---

[1] Տե՛ս **Шумова К.А.,** նշված աշխատությունը, էջ 25:

[2] Տե՛ս նույն տեղը:

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] Տե՛ս **Семеняко М.Е.,** Участие адвоката в альтернативном разрешении споров и примирительных процедурах: Дис. …. канд. юрид. наук, М., 2010, էջ 8-9:

[5] Տե՛ս **Павликов С.Г., Наталья Б.Ф.**, О примирении как функции судебной деятельности, Общество и право, № 1 (51), 2015, էջ 238:

հարցը: Նրանք գտնում են, որ «Հիմնական գործառույթի՝ վեճերի լուծման հետ մեկտեղ դատարանին անհրաժեշտ է վերապահել կողմերի հաշտեցմանն առնչվող լրացուցիչ գործառույթ: Խորհուրդ չի տրվում դատարանի վրա դնելու կողմերի հաշտեցման պարտականություն, քանի որ այն կհանգեցնի դատավորի ու հաշտարարի գործառույթների՝ մեկ սուբյեկտի մեջ միավորման և հաշտեցման գործառույթին կհաղորդի ոչ թե օժանդակող, այլ ինքնուրույն նշանակություն: Հաշտեցման առումով դատարանի գործառույթը պետք է սահմանափակվի կողմերին իրենց իրավունքների պարզաբանմամբ՝ կապված միջնորդի (այդ թվում՝ հաշտարարի) օժանդակությամբ, հաշտությամբ վեճի կարգավորման և հաշտության համաձայնության կնքման իրավական հետևանքների հետ: Կողմերին անհրաժեշտ է պարզաբանել այն պահանջները, որոնք օրենքով ներկայացվում են հաշտության համաձայնությանը, դրա կնքման կարգին, դատարանի կողմից դրա հաստատմանը և հաշտության համաձայնության կատարմանը, ինչպես նաև միջնորդին (այդ թվում՝ հաշտարարին) դիմելու կարգը»[1]:

«Հաշտարարություն» տերմինի առավել հստակ իմաստաբանական բնորոշման համար անհրաժեշտ է հասկանալ դրա մեկնաբանությունը: «Հաշտարարություն» եզրույթը ծագում է լատիներեն «mediare» բառից, որը թարգմանաբար նշանակում է «միջնորդել»: Սակայն հաշտարարության հետ առնչվող իրավաբանների, հոգեբանների, սոցիոլոգների և այլ մասնագետների շրջանում «հաշտարարություն» հասկացության բնորոշման վերաբերյալ առկա չէ միասնական կարծիք կամ մոտեցում: Այսպես՝ Բեսեմերը գտնում է, որ «հաշտարարությունը վեճերի լուծման տեխնոլոգիա է՝ երրորդ՝ չեզոք անձի մասնակցությամբ»: Երրորդ անձը հաշտարարության ընթացակարգում ունի ոչ պակաս հիմնական դերակատարում, քան դատարանը: Հաշտարարի դերակատարումը շատ ավելի բարդ է. նա պետք է օգնի վեճի կողմերին ինքնուրույն գտնել վիճելի հարցի լուծումը[2]: Վիշնևսկայան նկատում է, որ հաշտարարությունը ընթացակարգ է, որտեղ երրորդ՝ չեզոք անձը՝ հաշտարարը, օգնում է լուծել վեճը, իր գործողություններով օժանդակում է

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 238:

[2] Տե՛ս **Бесемер Х.,** Медиация, Посредничество в конфликтах, Калуга: Духов. познание, 2004, էջ 3:

կողմերի միջև կամավոր կերպով վեճի լուծմանը, դիրքորոշումների և շահերի ընկալմանը, հեշտացնում է փոխադարձ շփումների ընթացակարգը, կողմերին ուղղորդում է դեպի իրենց շահերը և փնտրում խնդրի արդյունավետ լուծում՝ կողմերին հնարավորություն ընձեռելով գալու համաձայնության[1]: Մեկ այլ իրավաբան, գիտնական Ալավերդովան հաշտարարությունը դիտարկում է որպես սոցիալ-հոգեբանական բանակցային, փոխգործակցային հատուկ ընթացակարգ երկու (և ավելի) կողմերի միջև, որոնք միմյանց նկատմամբ գտնվում են հուզական հակասության մեջ և ի վիճակի չեն ինքնուրույն իրականացնելու կառուցողական հաղորդակցություն[2]: Ըստ Բեսոնովայի՝ հաշտարարությունը ընթացակարգ է՝ ընթացակարգ չշահագրգռված, վեճի կողմերի համար հեղինակավոր չեզոք անձի ակտիվ մասնակցությամբ, որը ձեռնարկում է ակտիվ միջոցներ (ջանքեր) վեճի փոխշահավետ լուծման նպատակով: Նման պայմաններում, ինչպես նշում է Բեսոնովան, վեճի կողմերը դադարում են վեճի մեջ մեղավոր կողմին որոնելուց և միասին փորձում են կայացնել մի որոշում, որն ամբողջությամբ կբավարարի կողմերին[3]:

Շամլիկաշվիլին առաջարկում է հաշտարարության հետևյալ բնորոշումը. «Հաշտարարությունը վեճի լուծման այլընտրանքային ձև է, որը թույլ է տալիս գտնել վեճի կողմերի պահանջները առավելագույնս բավարարող կենսունակ որոշում»: Շամլիկաշվիլին ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ հաշտարարության ընթացքը կարող է փոխվել կողմերի պահանջների հետ միաժամանակ[4]:

---

[1] Տե՛ս **Вишневская А.В.,** Медиация как технология регулирования конфликта, Медиация, Новый подход к разрешению конфликтов, Дайджест, 2009, էջ 10:

[2] Տե՛ս **Аллахвердова О.В.**, Медиация как социально-психологический феномен, աղբյուրը՝ http://www.psicheya.ru, 25.12.2018 թվականի դրությամբ:

[3] Տե՛ս **Бессонова Е.Н.,** Поле «брани» пора превратить в поле сотрудничества, աղբյուրը՝ http://www.zabaykal.net, 25.12.2018 թվականի դրությամբ:

[4] Տե՛ս **Шамликашвили Ц.А.,** Медиация как альтернативная процедура урегулирования споров: что необходимо знать судье, чтобы компетентно предложить сторонам обращение к процедуре медиации: Учебное пособие

Ուշագրավ է, որ որոշ հեղինակներ, ովքեր խորությամբ ուսումնասիրել են հաշտարարությունը՝ որպես համաձայնեցման ընթացակարգ, միավորում են վերը նշված մոտեցումները: Առավել օրինակելի է Ալավերդովայի և Կարպենկոյի աշխատությունը, որում հեղինակները հաշտարարությունը բնորոշում են որպես հստակ կազմակերպված ալգորիթմով ձև, ընթացակարգ, մեթոդ, միջոց[1]:

Թեև «հաշտարարություն» հասկացության վերաբերյալ առկա են տարաբնույթ մեկնաբանություններ, այնուամենայնիվ, հեղինակների կողմից հաշտարարը բնութագրվում է որպես երրորդ՝ չեզոք կողմ, որն օժանդակում է վեճի կողմերին հասնել համաձայնության՝ նրանց միջև առկա վեճը լուծելու նպատակով: Ինչպես արդարացիորեն նկատում են «Հաշտարարությունը նոտարական պրակտիկայում (վեճերի լուծման այլընտրանքային միջոցները)» գրքի հեղինակները, հաշտարարը «միայն «ուղղորդում է» կողմերին ճիշտ որոշման հասնելու հարցում»[2]:

Հաշտարարությունը ենթադրում է կողմերի փորձ՝ կարգավորելու իրենց միջև առկա վեճը չեզոք և անաչառ երրորդ կողմի՝ հաշտարարի ներգրավման միջոցով: Ընդ որում, երրորդ՝ չեզոք կողմը՝ հաշտարարը, կարող է նշանակվել դատարանի կողմից, կամ վերջինիս կարող են ընտրել վեճի կողմերը[3]: «Հաշտարարության մասին» Հայաստանի Հանրապետության՝ 2018 թվականի հունիսի 13-ին ընդունված ՀՕ-351-Ն օրենքի (այսուհետ՝ «Հաշտարարության մասին» օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

для вузов, обучающихся по специальности «Юриспруденция», М., Межрегиональный центр управленческого и политического консультирования, 2010, էջ 49:

[1] Տե՛ս **Аллахвердова О.В., Карпенко А.Д.**, Медиация-переговоры в ситуации конфликта, Учебное пособие, Спб., 2010, էջ 6, 47-51, 61-62:

[2] Տե՛ս **Графин фон Шлиффен К., Вегманн Б, Фар П.**, Медиация в нотариальной практике (Альтернативные способы разрешения конфликтов), М., 2005, էջ 8:

[3] Տե՛ս Dispute resolution around the world, USA, 2011, Baker McKenzie, էջ 61-62, աղբյուրը՝ http://www.bakermckenzie.com/-/media/files/insight/publications/2016/10/dratw/dratw_usa_2011.pdf?la=en, 25.12.2018 թվականի դրությամբ:

հաշտարարն անկախ, անկողմնակալ, գործի ելքով շահագրգռվածություն չունեցող ֆիզիկական անձ է, որն իրականացնում է հաշտարարություն՝ կողմերի միջև առկա վեճը հաշտությամբ լուծելու նպատակով:

Հաշտարարի դերը բազմաֆունկցիոնալ է: Հաշտարարը պետք է խթանի ու խրախուսի կողմերի միջև երկխոսությունը և նվազագույնի հասցնի գոյություն ունեցող տարաձայնություններն այնպես, որ կողմերի միջև ընթանա բովանդակալից և արդյունավետ երկխոսություն: Գործելով նման կերպ՝ հաշտարարը կողմերին թույլ է տալիս և խրախուսում է վեր հանել այնպիսի հարցեր, որոնք նրանք նախկինում չէին դիտարկել: Հաշտարարի դերը նաև կողմերի միջև քննարկվող հարցերի շրջանակը ներացնելն է երկրորդային կամ լրացուցիչ հարցերի շուրջ պահանջները նվազեցնելու և կողմերի՝ միայն առավել կարևոր և էական հարցերի վրա կենտրոնացումն ապահովելու համար: Վերջապես, հաշտարարը հարցերի շուրջ հարցումների և հստակեցումների հիման վրա օժանդակում է կողմերին՝ միմյանց դիրքորոշումները հասկանալու համար: Սա էլ իր հերթին խթանում է կողմերի միջև համաձայնեցմանն ուղղված բանակցությունները[1]:

«Հաշտարարության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշտարարությունը գործընթաց է, որն ուղղված է կողմերի համաձայնությամբ իրենց միջև առկա վեճն անկողմնակալ երրորդ անձի՝ հաշտարարի օգնությամբ հաշտությամբ լուծելուն:

Եթե փորձենք ընդհանրացնել հաշտարարության էությունը, ապա այն կարելի է բնութագրել հետևյալ ձևով. հաշտարարությունը բանակցային գործընթաց է, որտեղ հաշտարարը (միջնորդը) հանդես է գալիս որպես կազմակերպիչ և ղեկավարում է բանակցություններն այնպես, որ կողմերը կայացնեն առավել շահավետ, իրատեսական և փոխադարձ պահանջները բավարարող համաձայնություն, որի կատարման շնորհիվ կողմերի միջև առկա տարաձայնությունը կկարգավորվի: Որպես ընթացակարգային գործունեության տեսակ՝ հաշտեցման գործընթացը չի կարող կազմա-

[1] Տե՛ս Dispute resolution around the world, USA, 2011, Baker McKenzie, աղբյուրը՝ http://www.bakermckenzie.com/-/media/files/insight/publications/2016/10/dratw/dratw_usa_2011.pdf?la=en, 25.12.2018 թվականի դրությամբ:

կերպվել և հաջողությամբ իրականացվել առանց որոշակի սկզբունքների առկայության ու պահպանման, որոնք արտահայտում են հանրության պատկերացումները և հաշտարարի օժանդակությամբ վեճի լուծման կազմակերպմանն ու իրականացմանը առնչվող պահանջները (ստանդարտները)[1]:

«Հաշտարարության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշտարարությունն իրականացվում է կամավորության, գաղտնիության, կողմերի հավասարության, հաշտարարի անկախության և անկողմնակալության սկզբունքների հիման վրա:

Ի տարբերություն դատական վարույթի, որտեղ վեճի բոլոր կողմերը ներգրավվում են գործընթացում, հաշտարարության գործընթացը կամավոր է, իսկ հաշտարարը՝ ազատորեն ընտրված: **Կամավորությունը** նշանակում է, որ կողմերը առանց որևէ արտաքին միջամտության, փոխադարձ համաձայնությամբ հաշտեցման վարույթի ընթացքում ընդունում են որոշումներ, և ինչպես հաշտարարը, այնպես էլ կողմերը կարող են ցանկացած պահի հրաժարվել հաշտարարությանը մասնակցելուց՝ դադարեցնելով այն: Կողմերի հարաբերություններում կամավորության սկզբունքի գործողությունը շարունակվում է նաև հաշտարարության գործընթացի ավարտից հետո՝ հաշտության համաձայնության կատարման փուլում[2]:

Հաշտարարության ընթացքում հայտնի դարձած տեղեկատվության **գաղտնիությունը** եթադրում է, որ հաշտարարության ընթացքում բացահայտված տեղեկությունները գաղտնի են և կարող են հրապարակվել կողմերի գրավոր համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում: Հաշտարարը, կողմերը և հաշտարարությանը մասնակցած կամ մասնակցող յուրաքանչյուր անձ չեն կարող հարցաքննվել որպես վկա այն տեղեկությունների առնչությամբ, որոնք իրենց հայտնի են դարձել հաշտարարության ընթացքում՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի

---

[1] Տե՛ս **Сухова Н.В.,** Принципы процесса медиации, Вестник Тюменского государственного университета. Социально-экономические и правовые исследования, № 3, 2013, էջ 155:

[2] Տե՛ս նույն տեղը:

(«Հաշտարարության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր):

Գաղտնիությունը լայն իմաստով կանոն է, որի ուժով հաշտարարության անցկացման փաստը, ինչպես նաև կողմերի բացատրությունները, այդ թվում՝ բանավոր տեղեկությունները և փաստաթղթերը, որոնք օգտագործվել են հաշտարարության գործընթացում, ենթակա չեն բացահայտման, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ: Ցանկացած տեղեկություն, որը հաշտարարին հայտնի է դառնում կողմերից մեկից, գաղտնիության սկզբունքի ուժով չի կարող բացահայտվել մյուս կողմին՝ առանց հայտնող կողմի համաձայնության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջվում է օրենքով («Հաշտարարության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մաս):

Գաղտնիության մասին ուղղակիորեն մատնանշված է Հաշտարարների վարքագծի եվրոպական կանոնագրքում[1]: Գաղտնիության պահպանումը, համաձայն կանոնագրքի, հաշտարարի մասնագիտական պարտականությունն է: Եվրոպական խորհրդարանի և խորհրդի՝ «Քաղաքացիական և առևտրային հարցերով հաշտարարության որոշ հարցերի վերաբերյալ» 2008 թվականի մայիսի 21-ին ընդունված թիվ 2008/52/EC դիրեկտիվի (այսուհետ՝ Դիրեկտիվ) 7-րդ հոդվածը սահմանում է, որ, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը կայացրել են այլ համաձայնություն, հաշտարարը չի կարող հարկադրվել ցուցմունք տալու այն տեղեկությունների վերաբերյալ, որոնք իրեն հայտնի են դարձել հաշտարարության ընթացքում: Դիրեկտիվում չի խոսվում հաշտարարի «ինքնավար», այսինքն՝ կողմերի կամքից անկախ պարտականության մասին՝ պահպանելու գաղտնիությունը: Ենթադրվում է, որ հաշտարարները չպետք է օգտագործեն ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը սեփական շահերի պաշտպանության նպատակով (ընդհանուր կանոնի համաձայն՝ կողմերի կամ երրորդ անձանց դեմ) նույնիսկ այն դեպքերում, երբ կողմերն արդեն իսկ սահմանված կարգով հրաժարվել են գաղտնիությունից[2]:

---

[1] Հաշտարարների վարքագծի եվրոպական կանոնագիրքը մշակվել է հաշտարարների նախաձեռնությամբ ու Եվրոպական հանձնաժողովի աջակցությամբ և ընդունվել Բրյուսելում 2004 թվականի հունիսի 2-ին:

[2] Տե՛ս **Сухова Н.В.,** նշված աշխատությունը, էջ 157:

Դիրեկտիվի 7-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որ եթե կողմերն այլ համաձայնություն չեն կայացրել, ո՛չ հաշտարարը, ո՛չ էլ հաշտարարության իրականացման գործընթացում ընդգրկված անձինք չեն կարող հարկադրվել քաղաքացիական կամ առևտրային գործերով դատական կամ արբիտրաժային վարույթի ընթացքում ցուցմունք տալու հաշտարարության գործընթացի կամ դրանից ծագող տեղեկատվության առնչությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ.

ա) դա անհրաժեշտ է ԵՄ անդամ պետության հանրային քաղաքականության վերապահումների հաշվառման համար, մասնավորապես, երբ անհրաժեշտ է երաշխավորել երեխայի լավագույն շահերի պաշտպանությունը կամ կանխել անձի ֆիզիկական կամ հոգեկան ամբողջականությանը սպառնացող վտանգը.

բ) հաշտարարության միջոցով կայացված համաձայնության բովանդակության բացահայտումն անհրաժեշտ է համաձայնության կատարման համար:

Հայաստանի Հանրապետությունում որպես գաղտնիության սկզբունքի ապահովման երաշխիք քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ որպես վկա չեն կարող հարցաքննվել դատավորը, արբիտրը կամ հաշտարարը՝ իր կողմից կամ իր մասնակցությամբ քննված որևէ գործի վերաբերող քննարկումների առնչությամբ:

Համագործակցության և կողմերի հավասարության սկզբունքները ենթադրում են գործողությունների համատեղ բնույթ, որպեսզի գործընթացին մասնակցեն բոլորը: Ընդ որում՝ կողմերից որևէ մեկին չի կարող իրավունք ընձեռվել իր համար ընդունելի համարելու միայն մեկ արդյունք (արդյունքների համար բաց լինելը): Հարկ է նկատի ունենալ, որ հաշտարարությունը հիմնվում է հիմնականում բանակցության և համապատասխանաբար համագործակցության վրա՝ ունենալով հաղթող-հաղթող արդյունքի հասնելու կողմնորոշում: Կողմերի հավասարությունն իր հերթին նշանակում է, որ կողմերից որևէ մեկը չունի գործընթացին առնչվող որևէ արտոնություն: Նրանց ընձեռվում են հավասար հնարավորություններ՝ արտահայտելու իրենց կարծիքը, որոշելու բանակցությունների օրակարգը, գնահատելու ներկայացված առաջարկների

ու համաձայնության պայմանների ընդունելիությունը և ունենալու հաշտարարի հետ անհատապես աշխատելու նույն ժամանակը[1]:

Հաշտարարի անկախության և անկողմնակալության սկզբունքի հետևողական պահպանումը պարտադիր է հաշտարարության գործընթացում: Այն նշանակում է, որ հաշտարարը չունի գործի ելքի կամ հաշտարարության կողմերի հետ կապված որևէ շահագրգռվածություն: Անկախության (չեզոքության) սկզբունքը պահանջում է, որ հաշտարարը պատկերացում ունենա մասնակիցներից յուրաքանչյուրի դիրքորոշման վերաբերյալ, ինչը երաշխավորում է բազմակողմանիությունը: Այս իմաստով չեզոքությունը մեկնաբանվում է որպես հաշտարարի օբյեկտիվություն, արդարություն և գործընթացի անցկացում՝ առանց կողմերից մեկին նախապատվություն կամ որևէ արտոնություն տալու: Այս իմաստով Բեսեմերն օգտագործում է «անկողմնակալություն» տերմինը[2]: Անկողմնակալության «միջոցը» տվյալ դեպքում ոչ այնքան հաշտարարի սուբյեկտիվ պատկերացումն է, որքան կողմերի ընկալումը: Այդ մասին վկայում է այն կանոնը, համաձայն որի՝ հաշտարարը պարտավոր է կողմերին հայտնել ցանկացած հանգամանքի մասին, որը կարող է հիմնավոր կասկած առաջացնել իր անկողմնակալության և անկախության վերաբերյալ: Եվ եթե գործընթացի բոլոր մասնակիցները համաձայն են, հաշտարարության գործընթացը շարունակվում է[3]:

Հաշտարարների վարքագծի եվրոպական կանոնագրքում տարբերակված են մի կողմից՝ անկախությունը (կետ 2.1), մյուս կողմից՝ անաչառությունը (կետ 2.2):

Այսպես՝ անկախությունը ենթադրում է, որ եթե առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են ազդել կամ կարող են դիտարկվել որպես ազդեցություն հաշտարարի անկախության վրա կամ առաջացնել շահերի բախում, հաշտարարը պետք է բացահայտի այդ հանգամանքները կողմերին նախքան գործելը կամ գործել շարունակելը:

Այդպիսի հանգամանքներն են՝

---

[1] Տե՛ս **Сухова Н.В.,** նշված աշխատությունը, էջ 156:

[2] Տե՛ս **Бесемер Х.,** նշված աշխատությունը, էջ 43:

[3] Տե՛ս **Сухова Н.В.,** նշված աշխատությունը, էջ 156:

- ցանկացած անձնական կամ գործնական հարաբերությունը կողմերի կամ նրանցից մեկի հետ,

- հաշտարարության արդյունքներով ուղղակի կամ անուղղակի ֆինանսական կամ այլ շահագրգռվածությունը,

- հաշտարարի կամ նրա կազմակերպության որևէ աշխատակցի՝ կողմերի կամ նրանցից մեկի համար գործելու փաստի առկայությունը հաշտարարությունից տարբերվող այլ գործընթացում:

Այդպիսի հանգամանքների առկայության պարագայում հաշտարարը կարող է համաձայնել գործել կամ շարունակել գործել միայն այն դեպքում, երբ համոզված է, որ կարող է հաշտարարություն իրականացնելիս պահպանել լիարժեք անկախություն, որպեսզի երաշխավորի լիարժեք անաչառություն, և կողմերը անվերապահորեն համաձայն են: Նմանատիպ հանգամանքների բացահայտումը հաշտարարի համար շարունակական պարտականություն է հաշտարարության ամբողջ գործընթացի ընթացքում[1]:

Հաշտարարի անկախության և անկողմնակալության պահանջներն ամրագրված են նաև Յունսիտրալի՝ «Միջազգային առևտրային համաձայնեցման ընթացակարգի մասին» տիպային օրենքում (Հոդված 12):

Վեճերի կարգավորման այլընտրանքային եղանակները ընդհանուր առմամբ նվազ ձևական են, քան դատական ընթացակարգերը: Հաշտարարությունը նույնիսկ առավել նվազ ձևական է, քան արբիտրաժը: Չեզոք հաշտարարը, ի տարբերություն արբիտրի կամ արբիտրաժային տրիբունալի, չի կարող կայացնել պարտավորեցնող և կատարման ենթակա որոշում: Արբիտրը վարում է համատեղ լսումներ, որոնց ընթացքում լսում է ցուցմունքներ և ստանում ապացույցներ: Մինչդեռ հաշտարարը կողմերի հետ վարում է ոչ պաշտոնական համատեղ և առանձին հանդիպումներ՝ հասկանալու համար կողմերի հարցերը, փաստարկները և դիրքորոշումները[2]:

---

[1] Աղբյուրը՝ http://ec.europa.eu/civiljustice/adr/adr_ec_code_conduct_en.pdf, 25.12.2018 թվականի դրությամբ:

[2] Տե՛ս Dispute resolution around the world, USA, 2011, Baker McKenzie, էջ 61-62, աղբյուրը՝ http://www.bakermckenzie.com/-/media/files/insight/publications/2016/10/dratw/dratw_usa_2011.pdf?la=en, 25.12.2018 թվականի դրությամբ:

Հաշտարարության միջոցով վեճն ըստ էության չի լուծվում, ինչպես, օրինակ, դատական քննության ընթացքում: Դատարանը որոշում է կայացնում օրենսդրության գործող նորմերին համապատասխան, իսկ հաշտարարի խնդիրը միայն կողմերին օժանդակելն է և փոխադարձաբար ընդունելի որոշում կայացնելը: Հետևաբար հաշտարարի խնդիրը ոչ թե օրենքի տառին համապատասխան վեճի լուծումն է, այլ անմիջականորեն վեճի կողմերի առաջադրած կառուցակարգին համապատասխան վեճի կարգավորումը[1]: Հետևաբար հաշտարարության արդյունավետությունն առավելապես կախված է կողմերի նախաձեռնողականությունից և ակտիվությունից:

Հաշտարարությունը ձևավորվել է որպես դատավարական իրավունքի ինստիտուտ, սակայն որոշիչ է նաև այն փաստը, որ այդ ընթացակարգը միաժամանակ ուղեկցվում է մի շարք համաձայնությունների ձևակերպմամբ, որոնք կրում են առավելապես նյութահիրավական բնույթ, թեև կարող են ունենալ նաև ընթացակարգային բնույթ: Ուստի հաշտարարությունն ունի խառը իրավական բնույթ, քանի որ այդ ինստիտուտի իրավական կարգավորումն իրականացվում է իրավունքի տարբեր ճյուղերի նորմերով, և գործնականում անհրաժեշտ է այն մեկնաբանել և կիրառել տարբեր նորմատիվ իրավական ակտերի համակցությամբ[2]:

Անդրադառնալով հաշտարարության ինստիտուտի կիրառման դատավարական հիմքերին՝ հարկ է նշել, որ դրանք ամենից առաջ բխում են քաղաքացիադատավարական օրենսդրության սկզբունքներից, մասնավորապես՝ տնօրինչականության սկզբունքից, որը, ի թիվս այլ տնօրինչական լիազորությունների, կողմերին հնարավորություն է ընձեռում սկսելու արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց և վեճը լուծելու հաշտության համաձայնությամբ:

Հաշտարարության նյութահիրավական բնույթն արտահայտվում է հաշտարարության վերաբերյալ համաձայնության պայմանագրային ձևով: Հաշտարարության վերաբերյալ համաձայնությունը բնորոշվում է որպես պայմանագրային կամ ոչ պայմանագրա-

[1] Տե՛ս **Минкина Н.И.,** նշված աշխատությունը, էջ 44-45:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 44-45:

յին որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված համաձայնություն՝ իրենց միջև առկա կամ հնարավոր որոշակի վեճը հաշտարարությամբ լուծելու վերաբերյալ: Հաշտարարության վերաբերյալ համաձայնությունը կարող է կնքվել ինչպես պայմանագրում համապատասխան վերապահում (հաշտարարության վերաբերյալ վերապահում) կատարելու, այնպես էլ առանձին պայմանագրի (հաշտարարության վերաբերյալ համաձայնագրի) ձևով («Հաշտարարության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մաս): Բացի այդ՝ հաշտարարության ինստիտուտի նյութահիրավական բնույթն արտահայտվում է նաև նրանում, որ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պայմանագրով կարող է նախատեսվել կողմերի միջև վեճի կարգավորում, որն իրականացվում է մինչև դատարան դիմելը: Հետևաբար հաշտարարության կիրառման իրավական հիմքերը նախատեսված են նաև նյութահիրավական օրենսդրությամբ:

Տեսական գրականության մեջ անդրադարձ է կատարվում հաշտարարության ոչ լայն կիրառությանը, և որպես պատճառներ նշվում են, մասնավորապես, «ընթացակարգի՝ հարաբերականորեն նոր լինելը, հասարակության բարձր կոնֆլիկտայնությունը, բանակցությունների անցկացման ավանդույթների բացակայությունը: Նշված խոչընդոտների հաղթահարումը մեծ աշխատանք է, որը պահանջում է տարբեր հասարակական ինստիտուտների ակտիվ մասնակցություն՝ կրթական համակարգից մինչև դատական համակարգ: Անհրաժեշտ է գործարարների աջակցությունը, որոնց դեպքում հաշտարարության զարգացմանն օժանդակելը պահանջում է ոչ միայն կրել սոցիալական պատասխանատվություն, այլև հոգ տանել բիզնեսի անվտանգության մասին»[1]:

Հաշտարարության կիրառությանը խոչընդոտում են նաև օրենսդրական կարգավորումներում առկա բացերը: Այսպես՝ Դիրեկտիվի 8-րդ հոդվածը երաշխավորում է, որ հաշտարարության դիմելը չի կարող խոչընդոտել դատական պաշտպանության իրավունքի իրացումը՝ հաշտարարության իրականացման ընթացքում հայցային վաղեմության ժամկետներն անցնելու պատճառաբա-

[1] Տե՛ս **Мурзанова Е.А.,** նշված աշխատությունը, աղբյուրը՝ https://cyberleninka.ru, 25.12.2018 թվականի դրությամբ:

նությամբ: Համաձայն 8-րդ հոդվածի՝ անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որ եթե կողմերն իրենց միջև առկա վեճի կարգավորման նպատակով դիմում են հաշտարարության, նրանց համար չպետք է խոչընդոտներ ստեղծվեն վեճի առնչությամբ դատական կամ արբիտրաժային վարույթ նախաձեռնելու համար՝ կապված հաշտարարության գործընթացի իրականացման ընթացքում հայցային վաղեմության ժամկետների լրանալու հետ:

Հենց նշված պահանջի իրացման համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը սահմանում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե հաշտարարության մասին համաձայնության հիման վրա սկսվել է հաշտարարության գործընթաց՝ ընդգրկելով այն սկսելու պահից մինչև հաշտարարության ավարտն ընկած ժամանակահատվածը:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշտարարության գործընթացն ավարտվում է, երբ.

1) կողմերի միջև կնքվում է վեճը հաշտությամբ լուծելու վերաբերյալ համաձայնություն՝ այդ համաձայնությունն ստորագրվելու օրվանից.

2) հաշտարարը հայտարարում է այնպիսի հանգամանքների առկայության մասին, որոնք բացառում են վեճը հաշտարարության միջոցով լուծելու հնարավորությունը՝ հայտարարությունն անելու օրվանից.

3) կողմերի միջև կնքվում է վեճը հաշտարարության միջոցով լուծելուց հրաժարվելու մասին համաձայնություն՝ այդ համաձայնությունն ստորագրվելու օրվանից.

4) կողմերից մեկը հաշտարարին գրավոր հայտնում է հաշտարարության գործընթացը շարունակելուց հրաժարվելու մասին՝ այդ հայտարարությունը հաշտարարին ուղարկելու օրվանից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հաշտարարությունն սկսելու վերաբերյալ գրավոր առաջարկ ներկայացնելու օրվանից հետո՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, մյուս կողմից համաձայնություն չստանալու դեպքում հաշտարարությունն սկսելու վերաբերյալ առաջարկը համարվում է մերժված, իսկ հաշտարարությունը՝ ավարտված:

Քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ դրույթը չի ներառում այն դեպքերը, երբ կողմերից մեկը ներկայացնում է հաշտարարությունն սկսելու վերաբերյալ գրավոր առաջարկ և ներկայացնելու օրվանից հետո՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, մյուս կողմից չի ստանում համաձայնություն: Քաղաքացիական օրենսգիրքը հայցային վաղեմության ժամկետի կասեցման սկիզբ է համարում հաշտարարության մասին համաձայնության հիման վրա հաշտարարության գործընթաց սկսելու պահը, մինչդեռ «Հաշտարարության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ այդ դեպքում հաշտարարությունը համարվում է ավարտված: Այնինչ այդ դեպքում հաշտարարության գործընթացը չի էլ սկսվել, քանի որ հաշտարարությունն սկսելու վերաբերյալ առաջարկը համարվում է մերժված: Օրենքով նախատեսված 20-օրյա ժամկետի ընթացքում հաշտարարության կիրառման վերաբերյալ առաջարկ ներկայացնող կողմը կարող է ողջամտորեն ակնկալել, որ մյուս կողմը կտա իր համաձայնությունը՝ հաշտարարություն սկսելու վերաբերյալ, և չպետք է կրի վերջինիս անբարեխիղճ վարքագծի անբարենպաստ հետևանքները: Հետևաբար հայցային վաղեմության ժամկետի ընթացքի կասեցումը, մեր կարծիքով, պետք է ներառի նաև հաշտարարությունն սկսելու վերաբերյալ գրավոր առաջարկ ներկայացնելու օրվանից հաշվարկված 20-օրյա ժամկետն այն դեպքում, երբ 20 օրացուցային օրվա ընթացքում մյուս կողմից համաձայնություն չի ստացվում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «հաշտարարության ավարտը» բառերից հետո ավելացնել «ինչպես նաև այն դեպքում, երբ հաշտարարությունն սկսելու վերաբերյալ գրավոր առաջարկ ներկայացնելուց հետո մյուս կողմից հաշտարարությունն սկսելու վերաբերյալ համաձայնություն չի ստացվում՝ գրավոր առաջարկ ներկայացնելու օրվանից մինչև 20 օրացուցային օրը լրանալը» մասը:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից բխում է, որ առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ

մտած եզրափակիչ դատական ակտ: Նույն օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատվելու դեպքում դատարանը կայացնում է վճիռ: Նույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե հաշտարարության արդյունքով կողմերը կնքել են հաշտության համաձայնություն, որտեղ նշել են առանց հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու գործի վարույթը կարճելու մասին: Նույն օրենսգրքի 183-րդ հոդվածի 8-րդ մասից բխում է, որ գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 186-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե հաշտության համաձայնությունում առկա է գաղտնիության վերաբերյալ պայման, որով հաշտարարության կողմերը համաձայնել են առանց հաշտության համաձայնությունը հաստատելու գործը կարճելու վերաբերյալ, ապա արտոնագրված հաշտարարը կողմերի համաձայնությամբ հաշտության համաձայնությունն ստորագրելու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է դատարանին վեճը հաշտարարությամբ լուծելու և գաղտնիության պայմանի մասին: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ստանալով հաշտարարի ծանուցումը վեճը հաշտարարությամբ լուծելու մասին՝ սեղմ, բայց ոչ ուշ, քան երկշաբաթյա ժամկետում դատարանը, սույն օրենսգրքի 151-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, հաստատում կամ մերժում է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը կամ կարճում է գործի վարույթը՝ ապահովելով հաշտարարության գաղտնիությունը:

Վերոհիշյալ հոդվածների համակարգային վերլուծությունից բխում է, որ հաշտարարության միջոցով կնքված հաշտության համաձայնության՝ դատարանի կողմից հաստատվելու պարագայում դատարանը կայացնում է վճիռ, ինչը հետագայում դառնում է հայց հարուցելու բացասական նախադրյալ՝ կողմերին զրկելով հետագայում նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով կրկին հայց ներկայացնելու հնարավորությունից: Եթե հաշտութ-

յան համաձայնության՝ դատարանի կողմից հաստատվելու դեպքում դատարանի կողմից ստուգվում են դրա համապատասխանությունն օրենքին կամ այլ իրավական ակտերին, ազդեցությունն այլ անձի իրավունքների կամ օրինական շահերի վրա և համաձայնության բովանդակությունը կազմող մի շարք այլ պայմաններ, ապա գաղտնիության վերաբերյալ պայմանի առկայության դեպքում գործի վարույթը կարճվում է առանց հաշտության համաձայնությունը հաստատելու: Այս դեպքում առանձնակի կարևոր է հաշտարարի դերակատարումը, քանի որ նախ՝ վերջինս հանդիսանում է ինչպես հաշտարարության գործընթացի, այնպես էլ դրա արդյունքի՝ հաշտության համաձայնության օրինականության երաշխավոր, երկրորդ՝ առկա է կողմերին իրենց գործողությունների իրավական հետևանքները պարզաբանելու անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ հաշտարարը ոչ միայն պետք է իրականացնի հաշտարարության գործընթացի ընդհանուր ընթացակարգային ղեկավարումը, այլև ապահովի գործընթացի օրինականությունը՝ օրենսդրության պահանջներին համապատասխան: Հետևաբար հաշտարարը, բացի միջնորդական գործունեություն իրականացնելուց, պետք է հանդես գա նաև որպես գործընթացի օրինականության երաշխավոր: Հարկ է նկատի ունենալ, որ այս գործառույթի դերը հատկապես կարևորվում է այն վեճերում, որոնց դեպքում գործն ավարտվում է առանց հաշտության համաձայնությունը հաստատելու: Եթե մյուս դեպքերում դատարանի կողմից ստուգվում է հաշտարարության միջոցով կնքված հաշտության համաձայնության օրինականությունը, ապա կողմերի՝ առանց հաշտության համաձայնությունը հաստատելու գործը կարճելու վերաբերյալ միջնորդության՝ դատարանի կողմից բավարարվելու պարագայում հաշտության համաձայնության օրինականությունը դատարանի կողմից չի ստուգվում, և դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով չի փաստվում հաշտության համաձայնության համապատասխանությունն օրենքի պահանջներին: Տվյալ դեպքում հարկ է արժևորել հաշտարարի՝ որպես հաշտեցման գործընթացի և դրա արդյունքի օրինականության երաշխավորի դերակատարումը: Ամփոփելով կարելի է փաստել, որ կողմերի՝ առանց հաշտության համաձայնությունը հաստատելու գործը կարճելու վերաբերյալ միջնորդության՝ դա-

տարանի կողմից բավարարվելու դեպքում հաշտարարը հանդես է գալիս որպես հաշտարարության արդյունքն է կնքված հաշտության համաձայնության օրինականության պատասխանատու և երաշխավոր:

Կարծում ենք՝ գաղտնիության վերաբերյալ պայմանի առկայության դեպքում գործի վարույթն առանց հաշտության համաձայնությունը հաստատելու կարճելու դեպքերում անհրաժեշտ է հաշտարարի համար սահմանել օրենսդրական պարտականություն՝ ստուգելու հաշտության համաձայնության համապատասխանությունն օրենքին կամ այլ իրավական ակտերին, ազդեցությունն այլ անձի իրավունքների կամ օրինական շահերի վրա և համաձայնությամբ նախատեսված պայմանների կատարելիությունը: Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գաղտնիության վերաբերյալ պայմանի առկայության պարագայում գործի վարույթը կարճելու մասին վճիռ կայացնելու դեպքում դատարանի վճիռը ձեռք է բերում հայց հարուցելու բացասական նախադրյալի հատկանիշներ, ակնհայտ է, որ գաղտնիության վերաբերյալ պայմանի առկայության դեպքում հաշտարարը պետք է ստանձնի որոշակի դերակատարում՝ կապված կողմերին դատավարական գործողությունների իրավական հետևանքերի պարզաբանման հետ: Ուստի, կարծում ենք, անհրաժեշտ է հաշտարարի համար սահմանել օրենսդրական պարտականություն՝ գաղտնիության վերաբերյալ պայմանի առկայության հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում կողմերին պարզաբանելու իրենց իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնելու համապատասխան գործողությունների կատարման կամ չկատարման հնարավոր հետևանքների մասին, օժանդակելու նրանց իրավունքների իրացմանը, միջոցներ ձեռնարկելու օրենսդրության ճիշտ կիրառման համար:

ПОНЯТИЕ И СУЩНОСТЬ МЕДИАЦИИ КАК АЛЬТЕРНАТИВНОГО СПОСОБА УРЕГУЛИРОВАНИЯ СПОРОВ

Татевик Саруханян

Аспирант кафедры гражданского процессуального права ЕГУ

Данная статья посвящена некоторым проблемам, связанным с применением медиации. В статье анализируется понятие медиации, выявляются преимущества медиации. Нами установлено, что медиация как процедура является процессуальным институтом, имеющим смешанную правовую природу. В статье также определяется роль посредников при разрешении конфликтов и заключении медиативного соглашения.

THE ESSENCE AND CHARACTERISTICS OF MEDIATION AS AN ALTERNATIVE DISPUTE RESOLUTION FORM

Tatevik Sarukhanyan

PhD student of the YSU Chair of Civic procedure

This article dealas with some issues connected with the application of mediation. In this article the author analyzes definition of mediation, reveals the adwantages of its application. The author makes a conclusion that mediation is a procedural institute which at the same time has mixed legal nature. In the article it`s defined the role of the mediator during the process of conflict resolution and while concluding a mediation agreement.

Բանալի բառեր՝ *հաշտարարություն, վեճերի կարգավորում, հաշտեցման ընթացակարգեր, հաշտարար, վեճերի լուծման այլընտրանքային ձև:*

Ключевые слова: *медиация, урегулирование споров, примирительные процедуры, медиатор, альтернативная форма разрешения споров.*

Key words: *mediation, dispute resolution, settlement procedure, mediator, alternative dispute resolution form.*

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԼՈԲԱԼԻԶԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Գրիգոր Չոբանյան[1]

Ժամանակակից աշխարհում հայտնի փաստ է, որ ինքնիշխանությունը (սուվերենություն) պետության անբաժանելի (*sine qua non*) բաղադրիչն է, և պատմականորեն չի եղել ավելի բարձր լիազորություններով օժտված մարմին, քան պետությունն է[2]: Ինքնիշխանությունը միշտ եղել է իրավաբանների միջև վեճերի և հակասությունների առարկա հանդիսացող հայեցակարգ: Տարակարծությունների պատճառները ինքնիշխանության հայեցակարգի ընդարձակ բնույթն ու տարաբնույթ մեկնություններն են, որոնք տրվել են ժամանակի և տարածության մեջ տարբեր իրավիճակներում, թե՛ պետական և թե՛ միջպետական մակարդակներում: Այս հետազոտությունը միտված է վեր հանելու և ուսումնասիրելու պետությունների ինքնիշխանությանն առնչվող մի շարք խնդիրներ, որոնք մասնավորապես հետազոտողների համար հետաքրքրություն են առաջացնում, ժամանակակից աշխարհում միջազգային տնտեսական ինտեգրացիաների համատեքստում:

Միջազգային իրավունքի հանձնաժողովի կողմից Պետությունների իրավունքների և պարտականությունների հռչակագրի նախագծում (1949 թ.) սահմանվել է, որ պետության բացառիկ հատկանիշն իր անկախությունը կամ ինքնիշխանությունն է, որը պետության կարողությունն է՝ ապահովելու իր բարեկեցությունը և զարգացումը՝ այլ պետության գերիշխանությունից անկախ, պայմանով, որ նա չի խոչընդոտի կամ խախտի այլոց իրավաչափ իրավունքները[3]: ՄԱԿ-ի 1970 թ. հռչակագիրը սահմանում է ինքնիշխանության հիմնական բաղկացուցիչ մասերը՝ բոլոր պետությունները իրավահավասար են, յուրաքանչյուր պետություն օժտված է ինքնիշխանության անկապտելի իրավունքով, յուրաքանչյուր պետություն իրավունք ունի ազատորեն ընտրելու և զարգացնելու իր

---

[1] ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտական ղեկավար՝ ի. գ. թ. Վ. Վարդանյան:

[2] Տե՛ս **Christopher L. Blakesley**, The International Legal System: Cases and Materials (University Casebooks) (5th Edition), 1.505, 2006, էջ 79:

[3] Տե՛ս Միջազգային իրավունքի հանձնաժողովի տարեգիրք, 1949, էջ 286:

քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային համակարգը:

Ներկայիս գլոբալիզացման պայմաններում ավելի է կարևորվում ժամանակակից իրողությունների լույսի ներքո ինքնիշխանության հայեցակարգի, ինչպես նաև ինքնիշխանության նշված բաղկացուցիչ մասերի վերագնահատման անհրաժեշտությունը: Սակայն մինչ ինքնիշխանության ժամանակակից մարտահրավերները դիտարկելը հարկ է հետադարձ հայացք նետել ինքնիշխանության գաղափարի առաջացման պատմական ակունքներին:

Պատմական ակնարկ: Կարելի է ասել, որ ինքնիշխանության դոկտրինան, ըստ էության, ի հայտ եկավ ժամանակակից պետության և միջպետական հարաբերությունների ծագմամբ[1]:

Որպես պետության տարր՝ ինքնիշխանությունը ծագել է իբրև աբսոլյուտիզմի դոկտրինալ արդարացում[2]: Այսպես՝ Արևմտյան Եվրոպայում՝ արտաքին հարաբերությունների տիրույթում, ինքնիշխանությունը դիմակայում էր միապետության գերակայության ձգտող պապականությանը և կայսրությանը[3]: Ներքին հարաբերություններում ինքնիշխանությունը փորձում էր դիմակայել ֆեոդալ կազմակերպությունների սփռված և ինքնավար իշխանությանը[4]:

Ինքնիշխանության հայեցակարգը, որպես այդպիսին, առաջ եկավ դեռևս տասնվեցերորդ դարում: Այդ հայեցակարգին անդրադառնալիս քաղաքագետները սովորաբար հղում են կատարում Մաքիավելիի (1469-1527), Ժան Բոդենի (1530-96) և Թոմաս Հոբսի (1588-1679) աշխատանքներին[5]: Մաքիավելին առաջ քաշեց այն թեզը, որ պետության լիարժեքությունը պայմանավորված է զինուժի առկայությամբ և պետության ինքնապաշտպանության կարողությամբ: Զարգացնելով այս թեզը՝ նա սահմանեց, որ պետությունն

---

[1] Տե՛ս **Shaw M. N.**, International law. Cambridge, UK, Cambridge University Press, 2008, էջ 21:

[2] Տե՛ս **Miguel de la Madrid H.**, National Sovereignty and Globalization, Houston Journal of International Law, Volume 19, 1997, էջ 554:

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] Տե՛ս նույն տեղը:

[5] Տե՛ս **Sabine G.H., Thorson T.L.**, A history of political theory, Dryden Press, 1973 (4th edition), էջ 557:

օժտված է ինքնիշխանությամբ, ինչը թույլ է տալիս պետությանը դառնալ իր տարածքում բացարձակ որոշումներ կայացնող[1]: Իր «Լևիաթան» ստեղծագործության մեջ Հոբսը նշում էր, որ «Սուվերենը պետք է դատավոր լինի թե՛ խաղաղության և թե՛ պաշտպանության, ինչպես նաև.... կարող է անել այն ամենը, ինչ նա նպատակահարմար կգտնի անելու համար....»[2]:

Ինքնիշխանության գաղափարն առաջին անգամ համակարգված կերպով վերլուծվեց Ժան Բոդենի «Վեց գիրք պետության մասին» (1576 թ.) երկում[3]: Բոդենը նշում էր հիմնական «ինքնիշխանության նշանները», որոնք էին իրավաստեղծությունը, պատերազմ և խաղաղություն հայտարարելը, դատավորներ նշանակելը, ներում շնորհելը, դրամ հատելը, հարկեր սահմանելը[4]: Բոդենը, ով առաձնակի ընդգծում էր պետությունում սուվերեն իշխանության անհրաժեշտությունը, պնդում էր, որ սուվերենը չի կարող կաշկանդվել իր կողմից ստեղծված օրենքներով. նա ենթակա է բնական օրենքներին[5]: Այստեղ հարկ է նշել այն փաստը, որ սեփական օրենքներով չկաշկանդվելը դեռևս չի նշանակում, որ օրենք սահմանողը կարող է անել այն ամենը, ինչ կկամենա անել այլ պետություններին՝ թ՛ե իրավունքի և թ՛ե քաղաքականության տեսանկյունից: Երբ միջազգայնագետներն ասում են, որ պետությունն ինքնիշխան է, այն, ինչ նրանք իսկապես նկատի ունեն, անկախությունն է, այն է՝ այլ պետությունից կախվածության բացակայությունը[6]:

---

[1] Տե՛ս նաև **Ronald A. Brand**, External Sovereignty and International Law, Fordham International Law Journal, Volume 18, Issue 5, 1994, էջ 1689:

[2] Տե՛ս **Hobbes T. & Curley E. M.** (1994), Leviathan: With selected variants from the Latin edition of 1668, Indianapolis: Hackett Pub. Co.:

[3] Տե՛ս **Shaw M. N.**, International law, Cambridge University Press, 2003, էջ 21:

[4] Տե՛ս նաև **Thomas Hobbes,** Leviathan, ed. Richard Tuck, Cambridge: Cambridge University Press, 1996, ch. 18:

[5] Տե՛ս **Gardot A.**, "Jean Bodin – Sa Place Parmi les Fondateurs du Droit International," 50 HR, 1934, էջ 549: Տե՛ս նաև **Meron T.**, The Authority to Make Treaties in the Late Middle Ages, 89 AJIL, 1995, էջ 1:

[6] Տե՛ս նաև **Lauterpacht H.**, Recognition of States in International Law', 53 Yale Law Journal, 1944, էջ 389. հասանելի է հետևյալ հղումով՝ http://digitalcommons.law.yale.edu/ylj/vol53/iss3/1:

16-րդ դարի վերջում եկեղեցու հեղինակությունն անկում ապրեց, ինչը հանգեցրեց աշխարհիկության բացարձակությանը: Եվրոպայում արյունալի Երեսնամյա պատերազմը ավարտվեց 1648 թ. Վեսթֆալյան համաձայնագրով, որով ճանաչվեց պետության ինքնիշխանությունը[1]: Սակայն Վեսթֆալյան համաձայնագրի շրջանակներում ճանաչված պետությունների ինքնիշխանության էությունը, ինչպես ներկայացվում է սույն հոդվածում, էական փոփոխությունների ենթարկվեց ժամանակի ընթացքում:

Լիբերալ և ժողովրդական հեղափոխությունները, որոնք տեղի ունեցան տասնութերորդ դարում՝ ոգեշնչված հիմնականում Անգլիական սահմանադրական համակարգից, քաղաքական լեգիտիմության աղբյուրը դարձրին մարդկանց կամ ժողովրդին՝ սահմանելով, որ միայն ժողովրդական կամքը կամ համաժողովրդական կոնսենսուսը կարող է սահմանել օրինական քաղաքական իշխանություն[2]: Իր «Հասարակական դաշինք»[3] աշխատության մեջ Ռուսոն առաջ է քաշում այն գաղափարը, որ ժողովուրդն ինքնիշխան է, նրա իշխանությունն անօտարելի ու անբաժանելի է, օրենսդիր իշխանությունը պատկանում է և կարող է պատկանել միայն ժողովրդին: ԱՄՆ-ի Սահմանադրության հիմնադիրները, որոնք առաջնորդվում էին համանման մոտեցմամբ, հանդես եկան առաջարկությամբ, որի համաձայն՝ վերջնական ինքնիշխանությունը պատկանում է ժողովրդին, իսկ վերջինս էլ տարբեր պարտականություններ է պատվիրակում այլ մարմինների, այդ թվում՝ ֆեդերալ և նահանգային իշխանություններին[4]: Ֆեդերալ և նահանգային իշխանություններն իրենց հերթին, ինչպես նշվում էր դատավոր

---

[1] Տե՛ս **Watson A.,** "Westphalia: an Anti-Hcgimonial Commonwealth of States" in The Evolution of International Society. A Comparative and Historical Analysis, 1992, էջ 188:

[2] Տե՛ս **Edmund S. Morgan**, Inventing the People: The Rise of Popular Sovereignty in England and America 17, 1988, էջ 39, 47, 49:

[3] Տե՛ս **Rousseau, Jean-Jacques**, The Essential Rousseau: The Social Contract, Discourse on the Origin of Inequality, Discourse on the Arts and Sciences, The Creed of a Savoyard Priest, New York, New American Library, 1974:

[4] Տե՛ս ԱՄՆ Սահմանադրություն, հոդված I, § 8: Տե՛ս նաև **James Madison**, Federalist No. 39, titled "The conformity of the Plan to Republican Principles", the thirty-ninth of The Federalist Papers, published on January 18 1788:

Քենեդիի կողմից «The U.S. Term Limits» գործում, «կիսում են ինքնիշխանության ատոմները» նահանգային և պետական կառավարությունների միջև[1]: Այս գաղափարն արտացոլվեց ԱՄՆ-ի Սահմանադրությունում[2]:

Շվեյցարացի իրավաբան Վատելը (1714-67) իր «Մարդու իրավունքներ» (Droit des Gens) աշխատության մեջ, անդրադառնալով պետությունների իրավահավասարության տեսությանը, հռչակեց, որ փոքր հանրապետությունը պակաս ինքնիշխան չէ, քան ամենահզոր թագավորությունը, ինչպես թզուկը նույնքան մարդ է, որքան հսկան[3]: Սակայն պետք է նկատել, որ ժողովրդական ինքնիշխանության (popular sovereignty), պետությունների իրավահավասարության և չմիջամտելու սկզբունքները գործնականում հաճախ խախտվում են պետությունների կողմից: Այստեղ հարկ է հիշել օրուելյան արտահայտությունից այն, որ «չնայած որ բոլոր կենդանիները հավասար են, կան կենդանիներ, որոնք ավելի հավասար են, քան մնացածը»[4]:

Քսաներորդ դարի քաղաքական նոր մարտահրավերների հետևանքով ի հայտ եկավ մի նոր քաղաքական միավոր, այն է՝ Եվրոպական միությունը, որը նույնպես ձևափոխեց ինքնիշխանությանը վերաբերող ավանդական պատկերացումները: Ինչպես նշում են շատ հեղինակներ, եվրոպական համայնքի պետությունները փոխանակեցին ավելի քիչ ինքնիշխանություն ավելի մեծ անվտանգության և բարգավաճման համար: Ինքնիշխանությանը վերաբերող մոտեցումները լայն քննարկումների առարկա դարձան քսաներորդ դարում Սակագների և առևտրի մասին ընդհանուր համաձայնագրի (GATT), ՄԱԿ-ի՝ Տնտեսության և զարգացման կոնֆերանսի, Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի հիմնման շրջանակներում:

---

[1] Տե՛ս U.S. *Term Limits, Inc. v. Thornton*, 514 U.S. 779, 838 (1995) (Kennedy, J., concurring):

[2] Տե՛ս, օրինակ, ԱՄՆ-ի Սահմանադրություն, հոդվ. I, § 8, 10:

[3] Տե՛ս **Nussbaum A.**, A Concise History of the Law of Nations Pp. xi, 361, New York, The Macmillan Company, 1947, էջ 156–64: Տե՛ս նաև **Onuf N.**, Civitas Maxima: Wolff, Vattel and the Fate of Republicanism, 88 AJIL, 1994, էջ 280:

[4] Տե՛ս **Griffin John and George Orwell**, Animal Farm, George Orwell. Harlow: Longman, 1989, Print., Ch. 10, էջ 112:

Քսաներորդ դարում՝ Վերսալյան հաշտության պայմանագրի համաձայն ստեղծված համակարգի ձախողումից հետո ի հայտ եկած տնտեսական և քաղաքական միավորների ստեղծմամբ ավելի հաճախ էին վեր հանվում հետևյալ հարցադրումները. միանալով որոշակի տնտեսական կամ քաղաքական միավորի՝ պետությունը չի՞ զիջում իր ինքնիշխանությունը, և սա ինքնին չի՞ հանգեցնում ինքնիշխանության քայքայմանը: Այս կապակցությամբ հարկ է հիշել 1923 թ.-ին Ուիմբլդոնի գործը, որտեղ Միջազգային արդարադատության մշտական պալատը (PCIJ) նշեց հետևյալը. «Դատարանը բացառում է որևէ պայմանագրի կնքում, որով պետությունը կատարել կամ խուսափել է որևէ արարքի կատարումից, որը կմերժի իր ինքնիշխանությունը….: Միջազգային կապերին ներգրավվելու իրավունքը ինքնիշխանության տարր է»[1]:

Քսանմեկերորդ դարում աշխարհաքաղաքական զարգացումները հանգեցրին նրան, որ պետության գործողություններն այլևս անձեռնմխելի չեն միջազգային հսկողությունից կամ անգամ սանկցիաներից: Մեխանիզմներ են ստեղծվել, որոնց միջոցով սուվերենն իր գործողությամբ պիտի հաշվետու լինի միջազգային նորմերին՝ առանց այդ նորմերին ուղղակի համաձայնություն չտալու միջոցով պատասխանատվությունից խուսափելու հնարավորության:

Ոմանք վախեցած են այս զարգացումներից, և նրանք այս ամենն անվանում են «ինքնիշխանության զիջում»[2]: ԱՄՆ-ում նշվածի առնչությամբ վեճ տեղի ունեցավ ոչ վաղ անցյալում Ուրուգվայի շրջանի համաձայնագրերը իմպլեմենտացնելու որոշման շրջանակներում: Իսկ բոլորովին վերջերս՝ 25.10.2018 թ.-ին, ԱՄՆ-ի նախագահ Դոնալթ Թրամփը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում իր ունեցած ելույթի ժամանակ նշեց հետևյալը. «Մենք մերժում ենք գլոբալիզմի գաղափարը և ընդունում ենք պատրիոտիզմի (հայրենասիրության) դոկտրինան»[3]:

---

[1] Տե՛ս *Wimbledon case*, PCIJ, series A, № 1, 25: Տե՛ս *I. v. Münch*, The Wimbledon, EPIL 2, 1981, էջ 293-6:

[2] Տե՛ս, օրինակ, **Malcolm Rifkind**, Britain and Europe: Conceding Sovereignty, The Round Table, 2013, 102:3, էջ 291-293:

[3] Տե՛ս **Alex Ward**, We reject the ideology of globalism and accept the doctrine of patriotism. հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.vox.com/2018/9/25/17901082/trump-un-2018-speech-full-text :

Պետության ինքնիշխանության մարտահրավերները: Ներկայումս շատ խնդիրներ կան, որոնք մարտահրավեր են նետում պետության ինքնիշխանությանը: Հենց այս խնդիրներն էլ ստիպում են մտորել այն հարցի շուրջ, թե արդյոք ժամանակակից պետությունները ներկայիս համաշխարհային գլոբալիզացման պայմաններում կանգնե՞լ են ինքնիշխանության կորստի ռիսկի առջև:

Այսպես, օգտվելով նաև ինքնիշխանության մարտահրավերների՝ Դավիթ Հելդի[1] կատարած դասակարգումից, կարելի է առանձնացնել հատկապես ինքնիշխանությանն առնչվող հետևյալ հիմնախնդիրները՝ ա) համաշխարհային տնտեսությունը, բ) համաշխարհային քաղաքականությունը, գ) միջազգային կազմակերպությունները, դ) ներքին քաղաքականության ավարտը (the end of domestic policy):

Համաշխարհային տնտեսությունը: Տրանսպորտի և կապի ոլորտներում գրանցված տեխնոլոգիական զարգացումները քայքայում են պետությունների տարածքների սահմանագծերը, որոնք պարտադիր պայման են ինքնավար ազգային քաղաքականություն ունենալու համար: Պետություններն այժմ ավելի են մտահոգված իրենց դերով՝ որպես գլոբալ շուկայի դերակատարներ, որպեսզի պաշտպանեն իրենց ազգային տնտեսական բարեկեցությունը: Նրանք ավելի քիչ են մտահոգվում քաղաքական ինքնիշխանությամբ և պաշտպանությամբ, քան ավելի վաղ ժամանակներում: Անգամ այն դեպքում, երբ կորպորացիաներն ունենում են հստակ ազգային հիմք, նրանց շահը նախ և առաջ գլոբալ շահութաբերությունն է: Բազմաթիվ գործոններ կան, որոնք դժվարացնում են սեփական տնտեսական կարգի հաստատումը, հատկապես՝ տնտեսապես թույլ պետությունների համար: Օրինակ՝ Արժույթի միջազգային հիմնադրամն իր կառուցակարգային կարգավորիչ ծրագրերով իր կողմից տրամադրված վարկերի համար պետությանը պարտադրում է որոշակի պայմաններ, մասնավորապես՝ պետական ծախսերի կրճատում, սոցիալական ծրագրերի սուբսիդավո-

[1] Տե՛ս **Held David**, Political Theory of Modern State, Polity Press in association Blackwill Publishers Limited, 1995, Cambridge, էջ 228-237:

րում և արժույթի արժեզրկում՝ այդպիսով վերահսկելով տնտեսապես թույլ պետությունների քաղաքականությունը[1]:

Չնայած նրան, որ պետական մարմինների գործունեության ավանդական բաժանումը դժվարությամբ է դիմակայում գլոբալիզացման, ինչպես նաև աշխատանքի և կապիտալի շարժունակության մարտահրավերներին, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ վերոնշյալ մարտահրավերներից ոչ մեկը պետականորեն թերևս չի ազդարարում տնտեսական կարգավորումների ավարտը[2]:

Համաշխարհային քաղաքականությունը: Ինքնիշխանությանն առնչվող հիմնախնդիրները դիտարկելիս չենք կարող անմասն մնալ համաշխարհային քաղաքականությունից և պետությունների ինքնիշխանության վրա քաղաքական ազդեցություններից: Այսպես՝ Սառը պատերազմի տարիներից, երբ աշխարհում էլ ավելի ընդգծվեց քաղաքական բևեռացումը, ավելի ակնհայտ էր դառնում իրենց քաղաքական խմբավորումներում ընդգրկված պետությունների որոշումների վրա ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի ունեցած ազդեցությունը: Չնայած նրան, որ Սառը պատերազմից մինչև այժմ աշխարհը շատ ավելի բազմաբևեռ է դարձել, և երբեմնի հեգեմոն պետությունները այլևս ունեն ծանրակշիռ մրցակիցներ, հարկ է նշել, որ այդ պետությունների և վերջիններիս կողմից ստեղծված քաղաքական խմբավորումների որոշումներն էապես ազդում են տնտեսապես ավելի թույլ զարգացած պետությունների քաղաքական որոշումների վրա[3]: Այս իրողությունը, իհարկե, չի կարող իր ազդեցությունը չունենալ պետությունների ինքնիշխանության վրա:

Միջազգային կազմակերպությունները: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպությունները՝ որպես վերազգային կազմակերպություններ, նոր դեր ունեն՝ ուղղակիորեն և նշանակալիորեն ներգործելով անձանց, կազմակերպությունների և այլ մարմինների իրավունքների ու պարտականությունների

---

[1] Տե՛ս **Camilleri J. A. and Falk J.**, The End of Sovereignty: The Politics of a Shrinking and Fragmentary World, Edward Elgar, England, 1992, էջ 148:

[2] Տե՛ս **Trachtman Joel P.,** Cyberspace, Sovereignty, Jurisdiction, and Modernism, Indiana Journal of Global Legal Studies, vol. 5, № 2, 1998, էջ 564:

[3] Տե՛ս **Adrian Kuah**, Sovereignty and The Politics of Identity in International Relations, Institute of Defence and Strategic Studies Singapore, 2003, էջ 15:

վրա[1]: Թվում է, թե քաղաքակրթությունը այժմ մուտք է գործում մի ժամանակաշրջան, որում պետությունները միջազգային իրավունքի միակ հիմնական սուբյեկտները չեն և այլևս ամբողջությամբ սուվերեն չեն[2]: Բազմազգ կազմակերպությունների նոր ձևերի ստեղծմամբ, այդ կազմակերպությունների գործունեության շրջանակներում կոլեկտիվ որոշումների կայացմանը պետությունների միջկառավարական և այլ մարմինների ներգրավմամբ նույնպես ձևափոխվել է պետության ինքնիշխանության գաղափարը: Եվրոպական միությունը այս իրողության վառ պատկերն է: Եվրոպական միությունը դասական միջազգային կազմակերպություն է, կամ, ինչպես նշվել է Սաբին Սորուգերի կողմից, «Եվրոպան ո՛չ պետություն է, ո՛չ միջազգային կազմակերպություն, ո՛չ էլ կայսրություն»[3]:

Ներքին քաղաքականության ավարտը: Ժամանակակից աշխարհում ներքին և արտաքին քաղաքականության միջև տարբերակումը երբեմն դժվար է դառնում: Այսպես՝ Սառը պատերազմի բարձրացրած քաղաքական սպառնալիքների ալիքը չէր ճանաչում տարածքային սահմաններ: ՆԱՏՕ-ի շրջանակներում յուրաքանչյուր անդամ-պետության ներքին կայունությունը դարձել է բոլոր անդամ-պետությունների մտահոգությունը. այն համարվում է դաշինքի քաղաքական և ռազմական համախմբվածության կենսական պայման:

Տնտեսական գլոբալիզացման ուժերն[4] իրենց հերթին նույնպես մարտահրավեր են նետում սուվերեն պետությունների շրջանում պետության լիազորությունների ավանդական բաշխմանը: Ավանդաբար պետությանն ընձեռված կարգավորիչ լիազորությունները

---

[1] Տե՛ս **Christopher L. Blakesley**, The International Legal System: Cases and Materials (University Casebooks) (5th Edition), 2006, էջ 79:

[2] Տե՛ս նույն տեղը:

[3] Տե՛ս **Sabine Saurugger and Fre´de´ric Me´rand**, Does European Integration Theory Need Sociology?, Institut d'e´tudes politiques de Grenoble, Institut universitaire de France, BP 48, F-38040 Grenoble, Cedex 9, France, էջ 319-320:

[4] Ընդհանուր տեղեկության համար տե՛ս **David Held, Anthony McGrew, David Goldblatt Jonathan Perraton,** Global Transformations. Politics, Economics and Culture, Cambridge, Polity Press, 1999:

փոխանցվում են այլ մակարդակների[1]: Որոշ լիազորություններ փոխանցվում են վերազգային մակարդակի, քանի որ պետությունները միացել են միջազգային պայմանագրերի, որոնք միտված էին անդրազգային գործունեությանն անդրադառնալուն[2]: Որոշ լիազորություններ էլ շնորհվել են մասնավոր կազմակերպությունների[3] և տարբեր երկրներում պետական մակարդակով ստորաբաժանումների միջև ձևավորված ոչ պաշտոնական ցանցերի[4]:

Ժամանակակից ինքնիշխանությունը Եվրոպական միության շրջանակներում: Սպասելի է, որ վերպետական կազմակերպության, օրինակ՝ ԵՄ-ին անդամակցելուց հետո պետության ինքնիշխանության հարցը դրվում է լուրջ քննարկումների հարթակ և տարբեր հակասական եզրահանգումների տեղիք է տալիս:

Եվրոպական տնտեսական համագործակցության դիրքորոշումը ազգային ինքնիշխանության հարցում ձևավորվեց 1963 թ. փետրվարի 15-ին Եվրոպական համագործակցության արդարադատության դատարանի (Court of Justice of the European Communities) կայացրած որոշմամբ. «Եվրոպական տնտեսական համագործակցությունը նոր իրավակարգ (legal order) է սահմանում միջազգային իրավունքում, որի օգտին պետությունները սահմանափակում են իրենց ինքնիշխան իրավունքները, սակայն սահմանափակ ոլորտներում, և որի առարկան ներառում է ոչ միայն անդամ պետությունները, այլև նրա քաղաքացիներն»[5]: Նշված մեկնաբանությունը ընդունվել է անդամ պետությունների կողմից:

---

[1] Ընդհանուր տեղեկության համար տե՛ս **Jessica T. Mathews**, Power Shift, Foreign Affairs, Jan./Feb. 1997:

[2] Տե՛ս **Paul B. Stephan**, The New International Law-Legitimacy, Accountability, Authority, and Freedom in the New Global Order, 70 U. COLO. L. REV. 1555, էջ 1556-61 (1999):

[3] Տե՛ս **Trachtman Joel P.,** Cyberspace, Sovereignty, Jurisdiction, and Modernism, Indiana Journal of Global Legal Studies, vol. 5, № 2, 1998, էջ 580:

[4] Տե՛ս **David Zaring**, International Law by Other Means: The Twilight Existence of International Financial Regulatory Organizations, 33 TEX. INT'L L. J. 281, 1998:

[5] Տե՛ս Judgment of the Court of 5 February 1963. NV Algemene Transport- en Expeditie Onderneming van Gend & Loos v Netherlands Inland Revenue Administration. Reference for a preliminary ruling: Tariefcommissie - Netherlands. Case 26-62:

Պետք է նկատել, որ նշված որոշմամբ խոսվում է ոչ թե ինքնիշխանության սահմանափակման, այլ «ինքնիշխան իրավունքների» սահմանափակման մասին:

Նեիլ մակ Քորմիքը պնդում էր, որ Եվրոպական տնտեսական համագործակցությունում ոչ մի պետություն չունի այնպիսի դիրք, որով կկարողանա թե՛ քաղաքական և թե՛ իրավական առումով ինքնուրույն իրացնել ցանկացած լիազորություն, հետևապես անդամ պետությունները «չեն կարող այլևս համարվել սուվերեն պետություններ»[1]: Զարգացնելով իր պնդումը՝ նա նշում է, որ բացարձակ կամ միատարր ինքնիշխանությունն ամբողջովին բացակայում է Եվրոպական տնտեսական համագործակցության իրավական և քաղաքական տիրույթում՝ պայմանավորված այն բանով, որ ո՛չ քաղաքականապես և ո՛չ էլ իրավական առումով որևէ անդամ պետություն իր ներքին գործերում չունի բացարձակ իշխանություն[2]:

Արձագանքելով վերջին պնդումներին՝ **անհրաժեշտ է հստակ տարբերակում մտցնել իրավասության և ինքնիշխանության միջև**: Իրավասությունը կարող է սահմանափակվել, ինքնիշխանությունը՝ ոչ: Ինքնիշխան լիազորությունները պատկանում են բնակչության բացարձակ իշխանությանը, և հենց այս սուվերեն իշխանության շնորհիվ անդամ պետությունը կարող է դուս գալ ԵՄ-ի կազմից: Ինչպես ասվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության դատարանի վճիռներից մեկում, անդամ պետության ինքնիշխանությունն է, որ սահմանում է ԵՄ-ի իրավասությունները[3]:

Ինքնիշխանության քայքայման դեմ փաստարկներ կարող են գտնվել ազգային սահմանադրական դատարանների որոշումներում: Չնայած նրան, որ ազգային դատարանները հիմնականում ընդունում են ԵՄ-ի իրավունքի գերակայության սկզբունքը[4],

---

[1] Տե՛ս **Neil MacCormick**, Beyond the Sovereign State, Modern Law Review 56 (1993), էջ 16:

[2] Տե՛ս **Neil MacCormick**, Questioning Sovereignty: Law, State, and Nation in the European Commonwealth, Oxford, Oxford University Press, 1999, էջ 132:

[3] Տե՛ս *BVerfG*, Judgment of the Second Senate of 30 June 2009 - 2 BvE 2/08 - paras. (1-421):

[4] Սա Իտալիայի Սահմանադրական դատարանի՝ Costa v. ENEL գործով կատարած եզրահանգումն է, երբ դատարանը մերժեց ԵՄ-ի իրավունքի

նրանք պահում են հիմնական սահմանադրական իրավունքների պահպանման անհրաժեշտության տեսանկյունից ԵՄ-ի իրավասության սահմանները որոշելու կարողությունը[1]: Այս առումով ամենաակտիվը եղել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրական դատարանը, որը 1970 թ.-ից սկսած սահմանել է, որ ԵՄ-ը սուվերեն պետությունների կոնֆեդերացիա է և հետևապես ինստիտուտ է, որի կառավարական կարգավորումները չեն ազդում ինքնիշխանության վրա[2]: Գերմանիայի սահմանադրությունը սահմանում է, որ Դաշնային Հանրապետությունը «ժողովրդավարական և սոցիալական դաշնային պետություն է», որում «բոլոր պետական իշխանությունները բխում են ժողովրդից», և իշխանությունն իրականացվում է ընտրությունների միջոցով[3]:

ՀՀ Սահմանադրական դատարանը նույնպես անդրադարձ է կատարել վերպետական միջազգային կազմակերպությանն անդամակցելու հետևանքով պետության ինքնիշխանությանն առնչվող հիմնախնդրին: Այսպես՝ ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ Մինսկում ստորագրված «ՀՀ՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2014 թվականի հոկտեմբերի 10-ին կայացրած որոշմամբ անդրադարձ է կատարել, ի թիվս այլոց, միջազգային համագործակցության ձևերի ու մեխանիզմների համապատասխանությանը մասնակից պետությունների ինքնիշխանության, իրավահավասարության և գործակցության փոխշա-

---

առաջնայնության սկզբունքը (principle of priority of EU law): Սակայն Արդարադատության եվրոպական դատարանի (European Court of Justice) որոշմամբ Իտալիայի ՍԴ-ն վերանայեց իր որոշումը:

[1] Տե՛ս **Monica Claes**, The National Courts' Mandate in the European Constitution, Oxford, Hart, 2006:

[2] Տե՛ս, օրինակ, *IHT v. Einfuhr und Vorratsstelle far Getreide aund Futtermittel* [1974] 2 CMLR 540: Տե՛ս նաև **Dieter Grimm**, The Role of National Constitutions in a United Europe, in Grimm, Constitutionalism: Past, Present and Future, Oxford, Oxford University Press, 2016, ch.13:

[3] Տե՛ս Գերմանիայի Սահմանադրություն, հոդվ. 20:

հավետության սկզբունքներին[1]: Այսպես՝ ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է, որ պետական ինքնիշխանությունը չի ենթադրում իշխանության բացարձակ անսահմանափակություն, և, ՀՀ Սահմանադրության նախաբանում հավաստելով իր հավատարմությունը համամարդկային արժեքներին, սահմանադրական կարգի հիմունքներով արտաքին քաղաքականության իրականացման հիմքում դնելով միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը, իրավական, ժողովրդավարական պետության կայացման գործում գերակայությունը վերապահելով միջազգային իրավունքին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում միջազգային ու տարածաշրջանային համագործակցության և այն ապահովող կառույցների իրավաչափ գործունակության ապահովման հարցերում:

Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ որևէ վերպետական մարմնի կողմից ընդունված ցանկացած որոշում, որը չի համապատասխանում սահմանադրական հստակ պահանջներին, կիրառելի չէ Հայաստանի Հանրապետությունում, իսկ այդ պահանջների պահպանման պարագայում Հայաստանի Հանրապետության կողմից այս կամ այն տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպության հետ գործակցությունը սահմանադրականության խնդիր չի կարող առաջացնել:

Անկախ ինտեգրացիոն գործընթացների շրջանակներում ինքնիշխանությանն առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ տարաբնույթ մեկնաբանություններից՝ պետք է նշել, որ պետությունները համաձայնում են պատվիրակել իրենց համապատասխան լիազորությունների մի մասը միայն այն դեպքում, երբ հանգում են այն եզրակացությանը, որ դա շահավետ և անհրաժեշտ կլինի իրենց ազգային (պետական) շահերին:

Ամփոփելով հարկ է նշել, որ ինքնիշխանության գաղափարը զարգացել է պետությունների և միջազգային հարաբերությունների զարգացման հետ, և այն պետք է հարմարեցվի տարբեր մակարդակներում ծագող ժամանակակից մարտահրավերներին: Միջազգային իրավունքի զարգացումը 21-րդ դարում պետք է բնորոշվի

[1] Տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=93758:

ինքնիշխանության գաղափարի զարգացման շարունակականությամբ: Ինքնիշխանության հայեցակարգի փոփոխությունները վերլուծելու համար հարկ է վերանայել հայեցակարգը և նրա փոփոխությունները ժամանակի ընթացքում: Այս վերանայմամբ և 21-րդ դարի միջազգային իրավունքում կարևոր զարգացումների ուսումնասիրությամբ ինքնիշխանության ժամանակակից հասկացության վերաձևակերպման անհրաժեշտություն է առաջանում, ինչն էլ իր հերթին վերահաստատում է այն գաղափարը, որ միջազգային իրավունքը պետք է լինի այնքան ժամանակակից, որքան այն փոփոխական աշխարհը, որում ապրում ենք:

СУВЕРЕНИТЕТ ГОСУДАРСТВ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОЙ ГЛОБАЛИЗАЦИИ

Григор Чобанян
Аспирант юридического факультета ЕГУ

Данная статья посвящена определению понятия «государственный суверенитет» в контексте современных интеграционных процессов. В статье рассматривается историческая эволюция государственного суверенитета. Мы предприняли попытку показать изменение концепции в разные исторические периоды, рассмотреть современные вызовы государственного суверенитета, проанализировать опыт Европейского Союза в контексте концепции современного государственного суверенитета, указать различия между понятиями «суверенитет» и «суверенные полномочия». В частности, в результате исследования мы пришли к выводу, что суверенные полномочия могут быть делегированы наднациональным организациям, но суверенитет не может быть делегирован. Сделанные нами выводы подтверждаются решениями суда.

THE SOVEREIGNTY OF STATES IN THE CONTEXT OF MODERN GLOBALIZATION

Grigor Chobanyan,
YSU Faculty of Law, PhD Student

The article is devoted to the concept of state sovereignty in the light of contemporary integration processes. The article discusses the historical evolution of the state sovereignty. It tries to show the modification of the concept during the different historical periods. The article addresses the contemporary challenges of state sovereignty and highlights the example of European Union in the contexts of modern state sovereignty concept. The article stresses that there is an important difference between the notions of sovereignty and sovereign powers. Particularly, it is underlined in this article that sovereign powers may be derogated to supernational organizations, nevertheless, sovereignty may not be derogating. The article proves this conclusion among others by judicial decisions.

Բանալի բառեր ՝ *պետությունների ինքնիշխանություն, գլոբալիզացիա, ինքնիշխանության մարտահրավերները, ինքնիշխանության էվոլյուցիա, ինքնիշխան լիազորություններ, ինքնիշխան լիազորությունների պատվիրակում, պետության ժամանակակից ինքնիշխանություն:*

Ключевые слова: *государственный суверенитет, глобализация, вызовы суверенитета, эволюция суверенитета, суверенные полномочия, делегирование суверенных полномочий, суверенитет современного государства.*

Keywords: *state sovereignty, globalization, challenges of sovereignty, evolution of sovereignty, sovereign powers, delegation of sovereign powers, contemporary state sovereignty.*

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու

2(2) 2018

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Մ. Կեսոյանի

Տպագրված է «Քոփի փրինթ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Ստորագրված է տպագրության՝ 02.05.2019:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 26,25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am